34-8
F-89

1761
1762

1902
1849

ВОЗВРАТИТЕ КНИГУ НЕ ПОЗЖЕ
обозначенного здесь срока

2011

1248
10958

Նրա ամուսինը, որ աւելի զգայուն էր դարձել Աննիի մահուանից ի վեր, խանդաղատում էր.

—Նայիր նրանց. փեսան աւելի մեծ, աւելի թուխ է, իսկ հարսնացուն չէկ է: Լաւ զոյգ են կազմում:

—Այո, ճշմարիտ է, հաստատեց կինը առանց աչքերը բարձրացնելու:

Եւ մի հարուածով նա կարեց մի ճիւղ:

Սակայն Լիւսիէնը Մէրաննների դեղեցիկ կալուածի պատճառով, որից անցնում էին, ասում էր իր ջահիլ նշանածին.

—Դուք պիտէք ժաննի, իմ բոլոր ունեցածս Ամիւլլինէ:

Նա կարեց նրա խօսքը.

—Երբէք այդ տեսակ բաների մասին չը խօսենք: Աննին ասում էր թէ հարստութիւնը մի առիթ է աւելի բարիք գործելու համար:

Երբ բոլորովին մօտեցան, տիկին Մէրանը առաջացաւ դէպի երիտասարդը, առանց զարմացքի, իր կարիչը ձեռքին.

—Օ՜հ, պարո՛ն Հալանդ, ես միշտ մտածել էի, որ դուք կամուտանանաք աղջիկներիս մէկի հետ:

Գ. Մէրանը սեղմեց նրա ձեռքը և նրա աչքերը արտայայտում էին նրա համակրութիւնը:

—Այժմ, ես այլ ևս չեմ վախում տարիներից. ես կը յետնեմ ձեր երիտասարդութեան վրայ:

—Այո՛, ասաց Լիւսիէնը: Ճշմարիտ է, ես երիտասարդ եմ երջանկութիւնն է այդ:

Ծերունին աւելացրեց ծանրախոհ.

—Հայրենի հողը եւ ցիշում էք հակայ Անտէյի, երկնքի և երկրի որդու լեգենդի մասին: Նա կռւում էր Հերկուլի դէմ: Ամեն անգամ որ ոտքը դիպչում էր Հողին, իր մօրը, նա իր մէջ մի նոր ոյժ էր զգում: Մարդիկ այդպէս էին: Վերադառնալով հայրենի հողի վրայ, նրանք ստանում են անցեալ գանձերը և հատատ՝ ապագայի մէջ, որովհետև նրանք այդտեղ գտնում են նախնիքների ոգին և նրանք հասկանում են, որ ամեն մի տեսական գործ անցնում է մի մարդի կեանքից...:

Վ. Ե Ր Ջ

ԼԻՒՆ ՄՐՆՈՒԼԵՆՑ

# ԽՈՐՏԱԿԱԾ ԿԵԱՆՔ

## Վ Է Պ

—

1302

(Արտատպած «ՄՈՒՐՃ» ամսագրից)

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
*C.C.C.P.A Публичная Библиотека*
7/31. 1922
Инвент. №
*Ա. ՍՅԱՆ*

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մ. Դ. Ռոտինեանցի
Типогр. М. Д. Ротиніанца, Гол пр. д. № 11.
1899

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ

891.542-31
Մ-30

# ԽՈՐՏԱԿԻԱՑ ԿԵԱՆՔ

## ՎԷՊ

(Արտատպած «ՄՈՒՐՃ» ամսագրից)

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մ. Դ. Ռօտինեանցի
Типогр. М. Д. Ротиніанца, Гол. пр. д. № 11.
1897

398
8

Дозволено Цензурою. Тифлисъ, 28 Апрѣля, 1897 года.

# ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

## ՅՈՅՍԵՐ ԵՒ ԵՐԱԶՆԵՐ

### I

—Երկու տոմսակ մի մանէթ քսան կոպէկանոց։
—Չկայ։
—Առաջին կարգերից տէք։
—Չկայ։
—Ապա ինչ գնանոց կայ?
—Տոմսակները սպառուած են։
—Սպառուած են? Չկայ և ոչ մի հատ?
—Ոչ մի հատ!

Ահա այսպիսի լակոնական հարց ու պատասխան էր կրկնւում նախկին Արծրունու թատրոնի կասսայի առջև հինգշաբթի երեկոյեան ժամի մօտ ութին 188* թ. գարնան։

Թատրոնի դահլիճը լցւած էր հանդիսականներով։ Անհնարին է նկարագրել այս խառնիճաղանճ բազմութիւնը։ Պարտէրում տեղաւորւած էր գլխաւորապէս Թիֆլիսի հայ ինտելլիգենցիան, մոքի և գրչի մարդիկ՝ զանազան հրապարակախօսներ, գրականագէտներ, ուսուցիչներ և այլն։ Օթեակների մէջ փառաւորապէս բազմած էին հարուստ մեծատուները իրանց ընտանիքներով։ Վերևից ջահի համասփիւռ շառաւիղները, զարնելով ականակուռ օղերին և ապարանջաններին, ոսկեայ շղթաներին և դիտակներին, շողշողում բեկւում էին և ջրէժի նման չորս կողմը թաւալում լուսոյ փայլուն

շիթերը։ Խռնութեամբ լցւած էր նաև վերնայարկը, ջահել էնթուզիաստների սովորական տեղը թատրոնում։

Ամենքին գրաւել էր այստեղ ամենամեծ հայ արտիստը, որը պիտի ներկայացնէր այդ երեկոյ հիւսիսային հանճարի հոյակապ գործերից մէկը։

Հանդիսականները լուռ էին և ուրաքանչիւր վայրկեան սպասում էին վարագոյրի բարձրանալուն։

Յանկարծ դահլիճի դուռը բացւեց, և ներս մտաւ մօտ 21 տարեկան մի երիտասարդ, հասակը բարձր ու վայելուչ, հայեացքը համարձակ և մտախոհ։ Սև մազերի գանգուրները պէսպէս ֆանտաստիկական ձևեր և օղակներ էին կազմել նորա կանոնաւոր գլխին և դուրս ընկած լայն ճակատի վրայ։ Հեռւից նա գեղեցիկ էր երևում, որովհետև չէին նկատւում նորա ծաղկատար երեսի խորշոմները։ Նա հագած էր մուգ-կապոյտ պիջակ, և կրծքի վրայ անփոյթ կերպով թափւած էին երկնագոյն փողպատի երկայն ծայրերը։

Աչքերը դէպի վեր բարձրացնելով, օթեակներից մէկի մէջ նա տեսաւ մի օրիորդի դէմքը en face և իսկոյն գլուխը խոնարհեց, երբ զգաց, որ նորա ձեռքի դիտակը իւր վրայ է ուղղւած։ «Ուրեմն նա էլ այստեղ է», մտածեց երիտասարդը և իւր քայլերը ուղղեց դէպի ութերորդ կարգը։

Արտաշէս Ոսկերչեանը (այսպէս էր երիտասարդի անունը և ազգանունը), նիւթական միջոցների սղուպատճառով, միշտ գալերէի տոմսակ էր վերցնում։ Բայց երբ պիեսը կամ արտիստը մի արտակարգ հետաքրքրութիւն էին ներկայացնում, նա բացառութիւն էր անում։ Գալով այս անգամւայ ներկայացմանը, պարտէրի մէջ տեղ գտնելու համար նա իւր վերջին կոպէկը չէր խնայիլ, եթէ նոյն իսկ հաւատացած լինէր, որ վաղը կարող է առանց ճաշի մնալ։



Նստելով իւր տեղը, ծոցի գրպանից հանեց «Համլէտի» էժանագին հրատարակութիւնը, բաց արեց առաջին արարւածի երկրորդ տեսարանը, մի քիչ կարդաց, յետոյ գրքոյկը բաց դրեց ծնկան վրայ, գլուխը բարձրացրեց, աչքերը յառեց դէպի ջահը և նորա պայծառ լուսաւորութեան մէջ Աստւած գիտէ թէ ինչ երազներ էր տեսնում...

Նշանակւած ժամից անցել էր արդէն տասներկու րոպէ, բայց բեմը դեռ ևս ծածկւած էր։ Այդ պատճառով վերնայարկը, որը թատրոնական դահլիճի ամենաանզուսպ մասն է համարւում, անհամբեր թխկթխկացնում էր յատակը և աղաղակում—

—Время, время!... ժամանակ է!...

Վերջապէս բարձրացաւ վարագոյրը, և Էլսինորի դղեակի առջև ճեմելիքի վրայ լուսնկայ կէս գիշերին երևացին երկու զինւած պահապաններ՝ Բեռնարդօ և Ֆրանսիսկօ։ Բեռնարդօն ճօճւում էր շարունակ, կարծես ոտների տակ փշեր լինէին. Ֆրանսիսկօն անշարժ էր և ապուշի պէս նայում էր խօսակցի երեսին։ Բեռնարդօն խօսելիս աջ ձեռքը անդադար վեր ու վար էր շարժում. Ֆրանսիսկօն երբեմն շփոթւում էր, ինչպէս ծոյլ աշակերտը, որը լաւ չէ սովորել իւր դասը։ Նոցա բռնած դիրքը, նոցա ձայնը, նոցա արտասանութեան ձևը—ոչ մէկը համապատասխան չէր գիշերւայ խորհրդաւոր լռութեանը։

Դերակատարները ջահել երիտասարդներ էին, երկուսն էլ անփորձ և թերուս։

Ութսունական թւականների սկզբումը, յայտնի է, մենք ունէինք մի փառաւոր դերասանական խումբ, ճոխ և հարուստ ականաւոր տաղանդներով, մի խումբ, որի եռամեայ գործունէութիւնը դարագլուխ է կազմում մեր թատրոնի պատմութեան մէջ։ Այդ շրջանը անցաւ, ոչ-

ժերը ցիր ու ցան եղան, սկսեցին գործել իրարից անջատ, միմեանցից հեռու։ Սակայն խմբի յաջող ներկայացումները և վաստակած փառքի դափնիքը արձագանք գտան գեղարեստասէր պատանիների սրտերում, և հին խմբի տեղը բռնեց, այսպէս ասած, բեմական գործիչների նոր սերունդը, անպատրաստ և անփորձ։ Նախկին խմբի անդամներից մի քանիսը երբեմն ձեռք էին մեկնում այդ նոր սերնդին՝ օգնելու և ղեկավարելու ցանկութեամբ. բայց այդ պատահական մի բան էր և մի առանձին օգուտ չուեց նոր ոյժերին։ Չկար առաջնորդ, չկար ղեկավար, և սկսնակներին վիճակւած էր բոլոր յոյսը դնել միայն սեփական ճաշակի, սեփական բարեհայեցողութեան վրայ։ Հասարակութիւնը էսթետիկական զարճութիւնների համը ճաշակած լինելով, պահանջներ էր առաջադրում խմբին, իսկ նոր խումբը այդ պահանջներին բաւարարութիւն տալու կարողութիւն չունէր։

Երբ հետևեալ տեսարանում արքայական պալատի մէջ երևացին ժտերես Թագաւորը և Թագուհին և գոյնզգոյն շորերով մերձաւորները, շքախումբը և ամենից վերջը ինքը Համլէտը՝ սգաւոր, ոտից ց'գլուխ սև հագած, գեղեցիկ գանգուրները ուսերին թափած, կորագլուխ, թախծալի աչքերը գետնին խոնարհած և ձեռքերը վշտով կրծքին ծալած,—դահլիճը դղրդաց ծափահարութիւններից։ Իսկ երբ գործողութեան վերջումը Համլէտի սարսափած աչքին երևաց սպանւած հօր ուրւականը, և նորա արիւնը կարծես կանգ առաւ սրտի մէջ, կուրծքը և կրծքի վրայ դրած ձախ ձեռքը սկսեցին բարձրանալ և իջնել ծանր շնչառութիւնից, և ապա դողդոջաց խորին վշտի ձայնը, հանդիսականները, բոլոր էութեամբ ուշադրութիւն դարձած, աշխատում էին նոյն իսկ իրանց շունչը զսպել, որպէս զի ոչինչ չկարողանար վրիպել նոցա աչքից և լսողութիւնից։



Իսկ Ոսկերչեանը... Մազերի արմատից սկսած սարսուռ անցաւ մէջքի վրայով ամբողջ մարմնի մէջ, քթի նուրբ ռնգերի մէջ կսկիծ զգաց, աչքերը ջրակալեցին, և արտասուքի կաթիլները, երեսի խորշոմները թրջելով, ցած էին գլորւում իրար ետևից։ Անտրակտի ժամանակ հասարակութիւնը լցրել էր ֆոյէն։ Հանճարաւոր խաղի թարմ տպաւորութեան ներքոյ՝ խօսակցութիւնը հանգիսականների մէջ մի առանձին կենդանութիւն էր ստացել։ Ամեն կողմից յաճախ լսւում էր արտիստի անունը և գովեստը։

Արտաշէս Ոսկերչեանը համարեա ամենից ուշ դուրս եկաւ թատրոնի դահլիճից, որտեղ նա՝ միացած ուրիշ տաք էնթուզիաստների խմբին, առաջ էր գնացել դէպի բեմի կողմը, օրկեստրի մօտ, և անընդհատ ծափահարում գոռում էր։

—Ադամեան! Ադամեան!... Bravo! bravo!...

Մտնելով ֆոյէն, նա սկսեց խօսակից որոնել և տեսնելով, որ հեռու պատի մօտ ծանօթների մի խումբ է կանգնած, սորան նորան հրելով, մէկից և միւսից ներողութիւն խնդրելով, վերջապէս դուրս եկաւ բազմութեան միջից։

Ես հէնց ձեզ էի փնտռում, բարե՛,—ասաց նա, ձախ ձեռքում բռնած թաշկինակով սրբելով ճակատի քրտինքը և աջը մեկնելով ծանօթներին։—Էը, ինչպէս էր? հարցրեց նա, դիմելով Գարեգին Զառիկեանին

—Շատ գեղեցիկ, իհարկէ,—պատասխանեց բարեկամը։—Ինչ է? Առաջին անգամն ես տեսնում Ադամեանին?

—Այո, առաջին անգամ։ Բայց այնքան հիացած եմ, այնքան հիացած!...

—Այո, տեսնում եմ, դու սաստիկ յափշտակւած ես, —նկատեց Զառիկեանը, համակրութեամբ նայելով խօսակցի երեսին։

Այդ րոպէին երևաց օր. Աշխէնը, Գարեգին Զառիկեանի քոյրը, որը մի ուրիշ օրիորդի հետ թևանցուկ արած՝ անց ու դարձ էր անում փոյէի երկարութեամբ։ Երբ նա տեսաւ իւր եղբօրը, մօտեցաւ նորան օրիորդի հետ, բարևեց Ոսկերչեանին և մի երկու բերան խօսելուց յետոյ ասաց.

—Խնդրեմ ծանօթանաք. օրիորդ Մարիամ Վարթուհեան, ընկերուհիս։ Սա եղբայրս է։

—Շատ ուրախ եմ. Գարեգին Զառիկեան։

Օր. Մարիամի սիրով լի աչքերը, առաջին անգամ այնքան մօտ հանդիպելով Զառիկեանի բարի և խելօք աչքերին, մի տեսակ անորոշ, բայց քաղցր զգացմունք զարթեցրին երկու մատղաշ սրտերի մէջ. այդ հայեացքները միայն մի վայրկեան կարծես բարեկամական մտերմութեամբ ձուլուեցին իրար հետ, և այնուհետև նորա այլևս չկարողացան միմեանց վրայ համարձակ նայել, այնպէս որ, երբ օրիորդը խօսում էր Գարեգինի հետ, նորա քրոջն էր նայում ժպտալով, իսկ երբ ինքը Զառիկեանն էր խօսում, աչքը ձգում էր յատակին կամ այլուր, բայց ոչ նորա երեսին։

Օրիորդ Աշխէնը իւր ընկերուհու հետ ծանօթացրեց նոյնպէս Արտաշէս Ոսկերչեանին, որը վաղուց ի վեր փափագ ունէր նորա հետ ծանօթանալու։

—Մենք հարևաններ ենք,—ասաց Արտաշէսը, օրիորդի սպիտակ և քնքշիկ ձեռքը սեղմելով իւր վտիտ ու ոսկրոտ ձեռքի մէջ։

—Դուք հարևաններ էք? Ես այդ չգիտէի, խօսում էր օրիորդ Աշխէնը, նայելով մերթ Ոսկերչեանի, մերթ օր. Վարթուհեանի աչքերին։

—Այո, ինչպէս չէ։ Պարոն Ոսկերչեանը երբեմն ջուրթակ է ածում, և ես լսում եմ մեր տան պատուհանից։

—Արտաշէսը նուագում է? զարմանքով հարցրեց օր. Աշխէնը, դիմելով եղբօրը. կարծես ցանկանում էր իմանալ, թէ ինչու Գարեգինը այդ մասին իրան ոչինչ չէ յայտնել։

Երբ օր. Մարիամը ասաց, թէ ականջ է դրել Ոսկերչեանի նուագածութեանը, վերջինը սկսեց մտածել երկմտութեամբ. ինչ էին նշանակում օրիորդի խօսքերը? դա հեգնութիւն էր թէ գովեստ? Յետոյ համեստութիւնից դրդուած, նա ասաց հետևեալը.

—Մի գուցէ Աշխէնը, իրաւ, կարծէ, որ ես իսկապէս մի երաժիշտ եմ եղած։ Բայց ես, կարող եմ հաւատացնել, բոլորովին ածել չգիտեմ։ Աղնիւ խօսք։ Ձշմարիտ է. ես ունիմ մի ջուրթակ և գնել եմ շուկայում հինգ մանէթով։ Այդ գործիքի վրայ ես մի քանի ամիս չարչարել եմ և այժմ ես համոզուած եմ, որ զուրկ եմ երաժշտական ընդունակութիւններից։ Ես զարմանում եմ, որ օրիորդը, փոխանակ մի վերստ հեռու փախչելու իմ ջուրթակի քրքրուած ձայնից, դեռ համբերութիւն է ունեցել ինձ ականջ դնելու։

—Լաւ, լաւ, համեստութիւնդ թող,—նկատեց օրիորդ Աշխէնը կատակով։—Վաղը երեկոյեան ջուրթակդ կը վերցնես և շնորհ կը բերես մեզ մօտ։ Ես կը լինեմ քո դատաւորը, կամ քննադատը, ինչպէս կ'ուզես։

Դահլիճում երաժշտութեան ձայնը լռեց։ Լսեց վերջին զանգը։ Ֆոյէն արդէն դատարկուել էր։ Ոսկերչեանը իւր տեղումը նստած էր։ Օր. Աշխէնը իւր եղբօր հետ, իրանց տեղերը բռնած, նայում էին վերև՝ այն օթեակին, որտեղ օր. Վարթուհեանը պիտի երևար։ Ցածր ձայնով քոյրը պատմում էր, ըստ երևոյթին, մեծ բանականութեամբ և աչքը չէր հեռացնում օթեակից, թէև նա թափուր էր այդ միջոցին։ Վերջապէս այնտեղ երեւացին նախ մի հասակաւոր կին, օրիորդի մօրաքոյրը, որի ճակատանոցին խրած ադամանդեայ քորոցը չահի-

ճառագայթնեվյճ իսկոյն փայլփլեց, յետոյ ինքը օրիորդը և ապա նորա ետևից մաքուր և կոկ հագնւած մի սիրուն պատանի։

Երբ վարագոյրը բարձրանում էր, օր. Մարիամը, օգուտ քաղելով պատեհ վայրկենից, դիտակը ուղղեց ներքև Գարեգին Զաւրիկեանի վրայ, որը մեքենաբար գլուխը վեր բարձրացրեց և նկատեց նորան։

Բեմի վրայ երկու հոգի կային միայն՝ Համլէտը և Պոլոնիուսը։ Առաջինը իրան խենթ էր ձևացնում, որպես զի աւելի լաւ յիմարացնէ ծերունուն. երկրորդը աւելի յիմար էր ձևանում և թոյլ էր տալիս երիտասարդ արքայազնին իրան ծաղրի առարկայ դարձնել, ինչպես պապը ներողամտութեամբ թոյլ կը տայ իւր չարաճճի թոռան իւր սպիտակ մօրուքի թելերը քաշքշել և փետել։ Խօսակցութիւնը բարձր ձայնով չէր կատարւում, այնպէս որ այդ տեսարանի բոլոր նրբութիւնները ըմբռնելու համար հանդիսականներից պահանջւում էր ուշադրութիւն և անպայման լռութիւն։ Բայց թատրոնում միշտ պատահում են այնպիսի տարօրինակ անձինք, որոնք իրանց ուշադրութիւնը դարձնում են դէպի բեմը միայն պաթետիկական վայրկեաններում կամ այն րոպէներին, երբ դերասանները գոռում գոչում են և սրեր շողշողացնում. իսկ երբ հարկաւոր է լինում ուշի ուշով հետևել արտիստի խաղին, որպես զի կարելի լինի ճիշտ հասկանալ այս կամ այն տիպը, այն ժամանակ այդպիսի պարոնները յօրանջում են, գլուխները դէս ու դէն շրջում, հարևանների հետ խօսում և քիթները կոխում թաշկինակի մէջ։

Ներաշէս Ոսկերչեանը ցնցւում էր բարկութիւնից ամեն անգամ, երբ մի շշուկ կամ շշնջիւն էր լսւում դահլիճի այս կամ այն ծայրից։ Նա զարձնում էր երեսը և մի յանդուգն և արհամարհոտ հայեացք նետում դէպի



այն կողմը, որտեղից խանգարողի ձայն էր լսում։ Նորա կատաղութիւնը գալիս էր, երբ հետաքրքրական վայրկեաններում տեսնում էր, որ այնտեղ կանգնեա են որոճում, այստեղ փսփսում են իրար ականջի և ժպտում։

Այդ գործողութիւնից լետոյ Ոսկերչեանը աւելի զայրոյթ էր յայտնում ծանօթների մօտ անքաղաքավար հանդիսատեսների նկատմամբ, քան թէ հրճւանք՝ Ադամեանի խաղի առիթով։

Սակայն երրորդ արարւածը ամեն բան մոռացնել տւեց։ Ոսկերչեանը այժմ դեռ նոր զգաց արտիստի տաղանդի բոլոր կորովը, նորա ձայնի անուշ ելևէջները, նորա բերնից հնչող մայրենի լեզւի քաղցրութիւնը, նորա նուրբ-հոգեբանական հոտառութիւնը, նորա խելացի դիմախաղը և խորամիտ շարժուձևերը։ Երբ նա արտասանում էր «լինել թէ չլինել» յայտնի մենախօսութիւնը, և կարծես կապանքից ազատւած հոգին վերանում էր դէպի երկինք և ապա իջնում երկիրը, անվերջ տանջանքների այս միջավայրը,—կամ երբ Օֆելիային հանդիպած րոպէին նա կարծես շիկնած երկաթով հանում է սէրը սրտի խորքիցը, յետոյ ոտի տակը տալիս և ապա կրկին վերցնում և համբուրում,—կամ այն ժամանակ, երբ նա Օֆելիայի մօտ յատակի վրայ տարածւած, աչքերը նետած թագաւորի հայեացքի մէջ, սողում է զգուշութեամբ, ինչպես զոհի վրայ ոստում գործելու պատրաստւող մի վագր, և ասես ճիզ է թափում, որպես զի, յարմար առիթ որսալով, մտնէ նորա աչքերի մէջ, հոգու խորքերը թափանցէ և ճանկռտէ այնտեղ նորա նեխւած անկիւնները,—այդ րոպէներին հասարակութիւնը կատարեալ պատրանքի մէջ էր։ Կարծես կախարդական գաւազանի նշանով հարիւրաւոր սրտեր բաբախում էին համաչափ զարկերով, և ամենքը, առանց բացառութեան, մեծ թէ փոքր, այր թէ կին, զգում էին

իրանց վրայ հանճարաւոր արտիստի հոգու հսկայական զօրութիւնը։

Վարագոյրը իջաւ։ Դահլիճը դղրդում է։ Ծափահարութիւններ, կեցցէներ, ոտների դոփիւն... Վարագոյրը նորից բացւում է, և էլի ծածկւում, և կրկին բացւում։ Արտիստը յոգնած է, բայց նորան դարձեալ բեմ են կանչում և անվերջ կանչում են։ Բեմի առաստաղից, կողքի օթեակներից, օրկեստրի միջից, պարտէրից, ամեն կողմից տեղում են պսակներ, ծաղիկներ, փնջեր, թափւում են արտիստի գլխին, նորա ոտների տակ, նորա չորս բոլորքը։ Թանկագին ընծաներ է որ մատուցւում են։ Օթեակների մէջ տիկիններըը և օրիորդներըը սիրաժպիտ ծածանում են թաշկինակները։ Վերնայարկը խենթացել է. գոռում են, ոտներով յատակը դոփում։ Ջահի լոյսը դողդողում է դահլիճի վրիժառութիւնից և թնդիւնից։ Պարտէրի առաջին կարգում, փորները յենած օրկեստրի պատնէշին, կուրծքները առաջ թեքած, ծափահարութեամբ և կեցցէներով իրանց գոհունակութիւնն են յայտնում արտիստին, որը՝ ձեռքը կրծքին՝ շնորհակալութեան զգացմունքով լցւած, գլուխը շրջում է աջ ու ձախ, վերև ու ներքև և ետ-ետ է գնում՝ դադրած և ուժասպառ, բայց էլի ուրախ և ժպտերես։

Հասարակութիւնը ֆոյէի մէջ չափազանց աշխոյժ տրամադրութեան մէջ էր։ Իւրաքանչիւրը յայտնում էր իւր ցնծութիւնը զանազան բացականչութիւններով։

—Ա՛խ, սքանչելի էր!...

—Հիանալի էր!...

—Աննման էր!...

Մի տեղ Ադամեանի նախկին արւեստակից ընկերներից մի քանիսը կանգնած խօսում էին։ Մէկը ասում էր.

—Դու յիշում ես? Ադամեանը մի ժամանակ իրան բեմի վրայ պահել չգիտէր։ Մենք ենք, որ նորան Ադամեան



դարձրինք! Բայց անպիտանը հիմա շատ լաւ է խաղում։

—Այո՛, շատ լաւ է, գեղեցիկ է,—նկատում էր միւսը, որի աչքերը նախանձից այրւում էին, և նորա ձայնի մէջ սրտագիտը խոյն կը նշմարէր զսպւած զայրոյթի մի հնչիւն,—շատ լաւ է. բայց ես կարծում եմ, բոլորովին պատճառ չկար խելագարւելու, ինչպէս հասարակութիւնն էր խելագարւում։ Զարմանալի բան է! Համակրական ցոյցերին էլ մի չափ ու սահման կը լինի թէ ոչ?

Դահլիճի դրան մօտ, որտեղից անմիջապէս պարտէրի առաջին կարգը կարելի է դուրս գալ, հաւաքւած էին մի խումբ երիտասարդներ և լսում էին երկու պարոնների, որոնք վէճի էին բռնւած Ադամեանի խաղի մի կէտի առիթով։ Այդ երկու պարոնները, մէկը Սևումեան, միւսը Ազատեան, միևնոյն լրագրի աշխատակիցներ էին։ Վէճի առարկան այն դանակն էր, որ Ադամեանը ձեռքումը բռնած էր «լինել թէ չլինելը» արտասանելու միջոցին։ Սևումեանը պնդում էր, որ այդ դանակը ամենևին աւելորդ մի բան է, որովհետև նա կը սազէր աւելի աւանդութեան Համլէտին, քան թէ Շէքսպիրի Համլետին։ Միւսը արդարացնում էր Ադամեանին, զանազան պատճառներ առարկելով։ Այդ խմբիցը ոչ այնքան հեռու կանգնած լսում էին վիճողներին օր. Աշխէնը և օր. Մարիամը։ Առաջինը առանձնապէս լարում էր իւր ուշադրութիւնը այն րոպէներին, երբ սկսում էր խօսել Սևումեանը և, ըստ երևոյթին, հակւած էր նորա կողմը։ Իսկ օր. Վարթումեանին հետաքրքրում էր այդ երիտասարդների անձնաւորութիւնը։ Օր. Զառիկեանը, պատասխանելով ընկերուհու հարցումներին, ասում էր.

—Ահա այն մէկը, որը արծւաքիթ է և թաւ յօնքեր ունի. այ, նա, որ հիմա սկսեց խօսել, դա Սևումեանն է։ Իսկ միւս պարոնը Ազատեանն է։ Երկուսն էլ «Ճառագայթ» լրագրի գլխաւոր աշխատակիցներից են և

շատ սուր գրիչ ունէին։ Միայն ինձ աւելի դուր են գալիս Սևուէեանի գրածները։ Նա յաճախ լինում է մեր տանը։ Վերին աստիճանի համոզչաճ, սկզբունքների տէր և աղնիւ երիտասարդ է։—Եթէ դու կամենաս, ես կարող եմ ձեզ ծանօթացնել, մանաւանդ, որ անցեալ անտարակոյս ժամանակ Ազատեանը ինձ հարցրեց քո մասին։

Զառիկեանը գնացել էր դուրս ծխելու։ Երբ նա եկաւ օրիորդների մօտ, տեսաւ, որ Սևուէեանը և Ազատեանը ծանօթանում էին օր. Վարթուհեանի հետ։ Խօսքը բացուեց Ադամեանի խաղի մասին։ Գարեգինը ապշեց, լսելով օր. Մարիամի առողջ դատողութիւնը պիեսի և արտիստի նկատմամբ։ Առաջ օրիորդը միայն գեղեցիկ և համեստ աղջկայ տպաւորութիւն էր գործել Զառիկեանի վրայ։ Այժմ երևաց, որ օր. Վարթուհեանը նաև շատ կարդացած է և խելօք գլուխ ունի։

Առաջին զանգահարութիւնից յետոյ մի քանի րոպէ անցած, շտապով մտեցաւ այդ խմբին Արտաշէս Ոսկերչեանը։ Նա ուրախ էր, ժպտում էր, և աչքերը փայլում էին։

—Այս որտեղ ես, Արտաշէս, չէիր երևում? հարցրեց Գարեգինը իւր բարեկամին։—Կարծեցի բուֆետն ես գնացել գարեջուր խմելու։ Բայց այնտեղ քեզ չտեսայ։

—Ի՛նչ բուֆետ, ինչ գարեջուր, Ադամեանի մօտն էի, Ադամեանի մօտ!

—Ադամեանի մօտ էիր? Ուրիշն բեմն էիր գնացել? հարցրեց օր. Աշխէնը, ընդհատելով Ազատեանին, որը մի կատարեալ ճառ էր սկսել «Ժամանակ» լրագրի դէմ։

—Այո՛,—պատասխանեց Ոսկերչեանը,—գնացի, ծանօթացայ Ադամեանի հետ, ձեռքը սեղմեցի, հազար անգամ շնորհակալութիւնս յայտնեցի և եկայ!... Բայց ես ոչոքի խորհուրդ չեմ տալ բեմ գնալ, որովհետև, երևակայեցէք, այն Օֆելիան, որը բեմի վրայ հրեշտակի էր



նմանուում, կուլիսների եաև ուրիշ բան չէր, եթէ ոչ մի քսաած աղջիկ։

Ոսկերչեանը իւր սրամիտ զարմանալիութիւններով ծիծաղեցնում էր լսողներին, իսկ վերջին զանգը լսելուն պէս, նա կիսատ թողեց իւր խօսքը, իսկոյն իրան նետեց բազմութեան հոսանքի մէջ և, երբ վարագոյրը բարձրանում էր, նա արդէն իւր տեղը բռնած էր։

Մինչև ներկայացման վերջը Ոսկերչեանը լարած ուշադրութեամբ հետևում էր Ադամեանի խաղին և շատերի հետ միասին մասնակցում էր բուռն ծափահարութիւններին և կեցցէներին։ Նոյն իսկ այն ժամին, երբ հասարակութիւնը ցրւել էր, և դահլիճը դատարկւել, և բեմի առջև մի խումբ գիմնազիստներ և այլ պատանիներ խզաած ձայնով և անվերջանալի ծափահարութիւններով տաներորդ անգամ դուրս էին կանչում Ադամեանին, Ոսկերչեանը ոչ ոքից ետ չէր մնում, չնայած, որ բոլորովին քրտնած էր, ջուր կորած և աղաղակելիս բուկը քերւում էր և ցաւ պատճառում։

Նա մասնակից եղաւ նմանապէս և այն ովացիանեերին, որոնք աեղի ունեցան փողոցում, ուր բանը այնտեղ էր հասել, որ տաքարիւն չահել թատրոնասէրները կամենում էին ետ անել լծած ձիաներին, որպէս զի իրանք քաշէին կառքի մէջ նստած երկրպագելի արտիստին!. .

## II

Գիշերւայ ժամի մէկն էր, երբ Ոսկերչեանը հասաւ տուն։ Մօտ տասը րոպէ վայրկենական ընդհատումներով նա բաղխում էր դարպասը, ոչ մի ձայն։ Համբերութիւնը հատած՝ նա սկսեց ուժով ցնցել դուռը։ Վերջապէս ներքևի յարկից պատուոյ բանալիքի ձայն եկաւ, լսեց քնահար տանտիրոջ փնթփնթոցը։ Դանդաղ քայլերով նա մո-

տեցաւ և բաց արեց դուռը: Նա շապիկով էր, ուսերին մի ինչ որ ծածկոյթ ձգած:

—Օնանճի վուրդի, չիս կանա քիչ վաղ էիր տուն էկի?

Ոսկերչեանը ներողութիւն խնդրեց պատճառած նեղութեան համար, յետոյ արագ բարձրացաւ փայտեայ սանդուխներով և ներս մտաւ իւր սենեակը: Վայր դնելով գլխարկը սնդուկի վրայ, ձեռափայտը անկիւնում, նա վառեց լամպարը և պառկեց հանգստանալու:

Կանաչ լուսամփոփը դրած էր մի կողմ, այնպէս որ սենեկի աղքատիկ, բայց բնորոշ կահաւորութիւնը պարզ երևում էր: Պատուհանի առջև մահճակալի մի ծայրին կանգնած էր փոքրիկ փայտեայ սեղանը, աններկ և անզարդ: Նորա վրայ եղած թանաքի սև բծերը և այրուածքի հետքերը սկզբում Ոսկերչեանի համար սաստիկ անախորժ էին. «աչք էին ծակում», «ջղեր էին գրգռում»: Դորանից աւելի լաւ կարասիք տալ իւր կենդղին տանտէրը, երևի, աւելորդ շռայլութիւն էր համարել: Նըր բաճաշակ երիտասարդը շուտով ֆահմեց ազատել իրան այդ անյարմարութիւնից: Իւր սուղ միջոցներից մի փոքրիկ գումար խնայելով, սեղանի համար մի օր մի գողտրիկ ծածկոց գնեց, որով անճոռնի սեղանը սքողեց իւր տգեղութիւնը: Նորա վրայ հասարակ շրջանակների մէջ երկու պատկեր կար՝ մէկը Գարեգին Զարիկեանի լուսանկարը, միւսը՝ մի հայ գրականական գործիչի: Սեղանի երկու կողմում խնամքով իրար վրայ դասսւած էին զանազան դասագրքեր և ընթերցանութեան գրքեր: Նայողի աչքին կը զարնէին իսկոյն Բայրնի հեղինակութիւնների առաջին հատորը, ուսս ամսագրից պոկուած մի յօդուած „Сальвини въ роли Отелло“ և „Тальма о сценическомъ искусствѣ“—վերնագրով բրոշիւրը, որ ձեռք էր բերուած բուկինիստների մօտ էժան գնով: Սեղանի



դլխին պատի վրայ քաշ արած հին ձևի և մի քանի տեղ լաժւարդը քերուած հայելու մէջ անդրադարձել էին դիմացի պատին կպցրած Շէքսպիրի պատկերը, առանց շըրջանակի, և նորա կողքին մեխից կախուած ջութակը: Զմռռանամ այստեղ յիշել նաև երկու դեղին ներկուած հասարակ աթոռներ, որոնցից մէկը, աւելի նորը, սեղանի առջև էր դրուած, իսկ միւսը, որը խախուտ էր և լըխլըխում էր, անկողնակալի մօտ:

Ահաւասիկ Ոսկերչեանի կացարանը:

Ոսկերչեանը վերին աստիճանի վառ ու բանուկ երևակայութիւն ունէր: Փնելու մասին նա ամենևին չէր հոգում: Իւր բոլոր հոլթեամբ նա անձնատուր էր եղած մտորումներին և ստացած տպաւորութիւնների անխոնջ գործունէութեանը: Այն ամենը, ինչ որ նա տեսել և լսել էր այդ երեկոյ, երկրորդ անգամ և երրորդ անգամ և կարծես անվերջ շարունակւում էր կրկնուել նորա աչքի առջև:

Նորա ականջին դեռ ևս հնչում է երաժշտութեան ձայները: Նա դեռ լսում է ծափահարութիւնների և յաուտակի թխկթխկոցի աղմուկը, կեցցէների աղաղակը և հարիւրաւոր մարդկանց խօսակցութիւններից ու ծիծաղից գոյացած ահագին ժխորը: Նորա աչքի առջև է Համլէտը այս կամ այն դիրքի մէջ՝ մահուան բոպէին, Լաէրտի հետ մենամարտելիս, գերեզմանատանը՝ գանգը ձեռքին, Օֆելիայի ոտների մօտ, ուրուականի հանդէպ:

Ահա ծաղկաւինջների անձրևը, ահա ծածանուող թաշկինակներ, ահա ոգևորութիւնից փայլող աչքեր, ահա ժպտուն երեսներ... Այս հարուստ տպաւորութիւնների ճնշման ներքոյ Ոսկերչեանի կամքը բնաւին կորցրել էր իւր ոյժը, և նա իւր միտքը չէր կարողանում կենդրոնացնել մի որոշ առարկայի վրայ: Քանի անգամ նա փորձ արեց հետ մղել իրանից այդ տպաւորութիւնները, որոնք

1001
1302

միայն սկզբում քաղցր ու գրաւիչ էին երևակայութեան համար, բայց յետոյ, նոցա փայլը նսեմանալով, խռնուեցին իրար և խաւսի նմանութիւն ստացան: Անախորժ զգացմունքից կծկւում էր դէմքը, բերնի ծայրերը վեր քաշւում, և նա մի ձեռքը ամուր ետ ու առաջ էր տանում ակօսած ճակատի և խփւած կոպերի վրայով: Բայց իզուր. ամեն անգամ մտապատկերների բազմութիւնը, մեղուների խառնափնթոր երամի պէս, մի վայրկեան հեռանում էր և էլի նորից ետ էր գալիս, ղժվժում, գլխի շուրջը պտտւում:

Բայց այդ բոլորի մէջ երկու առարկաներ կային, որոնցով միայն նա կը ցանկար իւր ուղեղը զբաղեցնել, երազել մինչև լոյս և էլի չհշտանալ: Մէկը՝ նորա ապագայի փառքն էր, որի պսակը երևում էր աչքին վարդագոյն շողերի բազով շրջապատւած, միւսը՝ օթեակի մէջ բազմած այն գեղաչեայ օրիորդն էր, որը պիտի լրացնէր նորա երջանկութիւնը:

Սակաւ հանգիստ առնելուց յետոյ, երբ Ոսկերչեանը կարողացաւ իւր մտքերը ուզածի պէս կառավարել, քնից արթնացածի նման վեր թռաւ տեղիցը և, օդի խեղդիչ ծանրութիւնը զգալով, բաց արեց պատուհանի փեղկերը: Հայեացքը ընկաւ հանդիպակաց տան լուսամուտներին. նոքա բոլորն էլ գոց էին, և վարագոյրները իջեցրած: Անամպ երկնքին նայեց. այնտեղ մի առանձին պայծառ փայլով ցոլում էին, ադամանդների նման, անթիւ անհամար մեծ ու փոքր աստղեր:

Մի քանի վայրկեան դրսից մաքուր օդ շնչելուց յետոյ, նա նստեց սեղանի առջև, մի գիրք առաւ ձեռքը, որպէս զի կարդայ. բայց տեսնելով, որ աչքերը տողերին են նայում, իսկ միտքը հեռու է, իսկոյն ծալեց գիրքը, վեր կացաւ և լամպայի վրայ մի պապիրոս կպցնելով, սկսեց ծխելով անց ու դարձ անել սենեկի մէջ: Ներս էր



քաշում ծուխը, մեքենաբար և արագ փչում էր կրակի վրայ, առանց սպասելու, որ ծխախոտիցը մոխիր գոյանար: Ամբողջ գլանակը մինչև տակը ծծելուց յետոյ, նա կրկին պառկեց անկողնակալի վրայ, երկու ձեռքը դրեց գլխատակին, ոտը ոտի վրայ, և, ակնապիշ առաստաղին նայելով, բոլոր հոգովը խորասուզւեց ոսկի երազների աշխարհը: Դա այն եղեմն է, ուր շատերը եղած են պատանեկան հասակում վառվռուն երևակայութեան շըրջանի մէջ:

Ոսկերչեանը հռչակաւոր և մեծ արտիստ է: Նա իշխում է բեմիցը հարիւրաւոր մարդկանց սրտերի վրայ: Երբ նա երևում է Համլէտի կամ Լիր թագաւորի դերում, դահլիճի մէջ խլացնող աղաղակ է բարձրանում: Նորա խաղը նուրբ է, խորիմաստ և խիտ ազդու, այնքան ազդու, որ նոյն իսկ ուշաթափութեան դէպքեր են պատահում ներկայացման միջոցին: Իսկ ովացիաները ինչ հակայական ծաւալ են ստանում! Դա մի հասարակ համակրական ցոյց չէ, այլ մի ճարանք, աստւածացում: Լրագրական յօդւածների մէջ համեմատում են նորան Ռոսմերթևսի հետ, որովհետև նա սուրբը կրակ է յափշտակում երկնքիցը և այդ հրով բորբոքում մինչև անգամ առնարիւն, անզգայ սրտերը: Ամենուրեք Ոսկերչեանի անունը բերանից բերան է անցնում:

Ընկերներից շատերը աշխատում են նորան նմանուել, իւրացնելով նորա խաղի բոլոր առանձնայատկութիւնները, դիրքը, շարժուձևերը: Իսկ ոմանք նախանձում են նորա փառքին: Բայց նա մեծահոգի կը լինի այդպիսիների վերաբերմամբ, որովհետև ինքը քաջ գիտէ, որ Թոյլերին յատուկ է նախանձը:

Օրիորդները ամեն կերպ ճիգ են թափում Ոսկերչեանին հաճոյանալու և սրտին տիրանալու՝ մէկը՝ իւր գեղեցկութեամբ, միւսը՝ իւր խելքով, երրորդը՝ շոյական

դրւատումներով։ Բայց սիրոյ այդ բոլոր ջանքերը իզուր են։ Նորա սիրտը արդէն պատկանում է օր. Մարիամին։

Նա կ'ունենայ սեփական տուն, բնակարանը շքեղ և ճաշակով կահաւորւած։ Տան դռները միշտ բաց կը լինեն հիւրերի առաջ։ Նորա տան դահլիճը կը դառնայ սալոն, ուր կը հաւաքւեն ընտիր երիտասարդներ, գրական և հասարակական լաւագոյն գործիչները, հաղար ու մէկ խնդիրներ կը ծագեն, ծրագիրներ կը մշակւեն։ Նա կը լինի այդ շրջանի հոգին, և այդ շրջանը փոխադարձաբար միշտ վառ կը պահէ նորա եռանդը, թարմ կը պահէ նորա զգացումները։ Տաղանդին միացած պիտի լինի և հեզահամբոյր բնաւորութիւնը, որպէս զի ոչ մէկը իրաւունք չունենայ ասելու, թէ Ոսկերչեանը հպարտ է, գլուխը բարձր է պահում։

Նա իւր անձը պիտի դնէ գեղարւեստի համար, նա պիտի բարձրացնէ հայկական գեղարւեստը, պիտի ազնըւացնէ հայի էսթետիկական ճաշակը։ Նա այդ կարող է անել, նա իւր մէջ ոյժ է զգում, իրան կոչւած է զգում այդ սուրբ գործի համար։

Այսպէս ահա Ոսկերչեանը իւր անզուսպ երևակայութեան մէջ կարծես կանգնած լինէր մի կախարդական հայելու առջև, ուր նա, որպէս մի բաց դրքի մէջ, կարդում էր իւր ապագայի փառքը և մեծութիւնը...

Նա հաւատում է իւր բախտաւոր աստղին, նա վստահ է իւր ոյժերի վրայ, նորա խղճերը անիրագործելի ցնորքներ չեն։

Լինել մեծ մարդ և մեծ տաղանդ—այդ էր Ոսկերչեանի կեանքի բնաբանը և դորա շուրջն էին պտտւում այդ գիշեր նորա բոլոր մտքերը։

Կից սենեկի մէջ պատի ժամացոյցը փշշալով զարկեց երկու անգամ։ Այդ երկու չափական զարկերից սթափւեց



երիտասարդը, դուրս ելաւ երազների աշխարհից և իրան զգաց իւր անշուք բնակարանի չորս պատերի մէջ։

Այդ րոպէին նորա աչքին դիպաւ պատից կախած ջուլհակը։ Ջուլհակի տեսքը յիշեցրեց նորան այդ օրւայ ծանօթութիւնը օր. Մարիամի հետ, որի կենդանի պատկերը իսկոյն ներկայացաւ նորա աչքի առաջ։

Ինչ սիրուն էր նա մանաւանդ այդ երեկոյ! Ինչ սազում էր նորա շուշանագոյն մարմնին եասամանի գոյնի զգեստը! Երբէք նորան յաջողւած չէր այդքան մօտւստա դիտել այն չնաշխարհիկ դէմքի նուրբ գծագրութիւնները՝ նորա ձւաձև երեսի կապտագոյն երակները, աչքերի ամբիծ սպիտակուցը, բիբերի մաքուր պարզութիւնը։ Տեսնել այդպիսի աչքեր և նոցա մասին չերազել ժամերով—դա կարելի բան է? Այդպիսի աչքեր ստեղծում է բնութիւնը կարծես միմիայն նորա համար, որ Ոսկերչեանի նման երիտասարդին խելքից հանեն։

Նա աշխատում է բառացի կրկնել այն խօսքերը, որ ասաց օրիորդը ծանօթանալու րոպէին։ «Պարոն Ոսկերչեանը երբեմն նւագում է ջուլհակի վրայ, և ես լսում եմ մեր պատուհանից։ Ինչ էին նշանակում այդ խօսքերը?

Նա վերցրեց ջուլհակը և սկսեց մի մեղմ եղանակ ածել, կարծես ցանկանում էր համոզւել, թէ որքան ախորժելի կարող է լինել նորա ջուլհակի ձայնը մի օրիորդի, որը ինքը լաւ նւագում է դաշնամուրի վրայ և, ուրեմն, երաժշտական ճաշակ ունի։ Բայց նա տհաճուեցաւ թեամբ ձգեց իւր ձեռքին բռնած գործիքը, մտածելով. «Ոչ, նորա ասածը գովասանք չէր պարունակում իւր մէջ, այլ դա, երևի, սիրոյ, կամ գոնէ համակրութեան մի արտայայտութիւն էր, և ուրիշ ոչինչ»։

Ինչ որ մի զօրութիւն Ոսկերչեանին քարշեց յանկարծ սեղանի մօտ. նա կանգնեց հայելու առաջ և հայ-

եացքը բևեռեց իւր սեփական աչքերի մէջ։ Այն ինչ էր արդեօք, որ նա փնտռում էր այնտեղ?

«Ոչինչ, այս դատարկ բան է։ Այն, ինչ որ նա չի գտնիլ այստեղ, իմ դէմքի վրայ, կրկնապատիկը կը գտնէ սրտիս մէջ։ Աղջկան հրապուրում է ոչ միայն արտաքին գեղեցկութիւնը, այլ և ներքին արժանաւորութիւնները, տաղանդը, փառքը... Բայց այնուամենայնիւ ինչ լաւ կը լինէր, որ ես Պարիսի գեղեցկութիւնը ունենայի»։

Այսպէս էր մտածում Ոսկերչեանը. և որքան շատ էր խորհում, այնքան առաւել մեծ պահանջ էր զգում շուտ ասպարէզ դուրս գալ, համբաւ, անուն վաստակել։

Նա դարձեալ մտաբերեց Ադամեանին և այս անգամ մի անդիմադրելի ցանկութիւն զգաց իւր ոյժը, իւր ձայնը փորձելու համար արտասանել Համլէտի լինել թէ չլինելը»։ Կանգնեց սենեկի մէջտեղը, Ադամեանի նման վեհ դիրք ընդունեց. բիբերը թռցրեց վերև և սկսեց արտասանել, բայց աւելի բարձր ձայնով, քան այդ թոյլ էր տալիս գիշերւայ խաղաղութիւնը և հարևանների հանգիստը։

Մենախօսութեան կիսումը սենեկի պատը թըխկթըխկացրին, և Ոսկերչեանը պարզ որոշեց իւր դրացի պառաւ կնոջ դժգոհութեամբ աւաճ հեռևեալ խօսքերը

—Ինչ խաբար է, վուրդի, հերիք չելաւ քի?

Այս ձայնը լսելուն պէս՝ նա իսկոյն և եթ լեզուն կծեց, լուռ և ամենայն զգուշութեամբ ոտի մատների վրայ մօտեցաւ անկողնակալին, գրքոյկը կամացուկ դրեց աթոռի վրայ և կռնակը յենելով բարձին, մտախոհ իւր գլուխը խոնարհեց դէպի յատակը։

Ոսկերչեանը ինքն իրան յանդիմանում էր իւր անքաղաքավարութեան համար ։ Նա յիշեց իւր բարեկամ Ջաւիկեանի այն խօսքերը, որ սիրում էր գործ ածել ամեն անգամ, երբ մի գործի մէջ անհեռատեսութիւն էր



նշմարում. «պէտք է շրջանկատ լինել և իրան չմոռանալ նոյն իսկ ոգևորութեան րոպէին»։ Նա վճռեց առաւօտեան ներողութիւն խնդրել իւր հարևանից։

Բայց լուսամուտից ներս թափանցեց սենեկի մէջ մաքուր օդի հոսանքը։ Ոսկերչեանը լի կրծքով երկար շունչ քաշեց և մի ախորժելի թեթևութիւն զգաց մարմնի մէջ։ «Արժէ հիմա փոքր ինչ զբօսնել», մտածեց նա և հագնելով անմիջապէս դուրս եկաւ տնից, բայց այնպէս զգոյշ, որ շարժելուց մի փոքրիկ շշուկ անգամ չլսւէր։

Նա գնաց Ալեքսանդրեան այգին։

Արևելեան հորիզոնը բոլորովին պարզ ու պայծառ էր և փայլում էր յղկած արծաթի նման։ Ոսկերչեանը նստեց իշատիկի վրայ մեծ շատրւանի առաջ, որի շիթերը, երկու երեք սաժէն բարձր խփելով, ցայտեցնում էին չորս կողմը բիւրաւոր մարգարտեայ կաթիլներ և անուշ զովութիւն տարածում օդի մէջ։ Մի քանի րոպէից յետոյ, երբ նա վերև նայեց, ծառերի կատարները արդէն շողում էր վարդագոյն արևը։ Բայց նա երկար չկարողացաւ մնալ այդտեղ, որքան էլ դուրեկան լիներ բնութիւնը. գեհինը թաց էր, օդը թարմ և խոնաւ։ Մէջքի և ոտների վրայ սառնութիւն զգալով, նա վեր կացաւ գնաց մօտակայ կաթնատունը, մի բաժակ թէյ խմեց և ուղևորւեց դէպի իւր բնակարանը։

Տան դարպասի առաջ, դեռ ևս փողոցումը, նորա ականջին հասաւ հարևան պառաւի ձայնը, որը պատմում էր ներքև բակումը կանգնած տանտիրոջ հետ և Ոսկերչեանիցը գանգատւում, տանտէրն էլ հանգստացնում էր կնոջին, յայտնելով, թէ այն տեսակ «շառլատանին» իւր տանը պահելու չէ և շուտով պիտի «դուրս անէ»։

Տանտէրը մուշտակ կարող էր, կարճահասակ և հաս-

տափորի մեկը, որի ծոծրակի վրայ մի մեծ կարմիր ուռույցք էր երևում, իսկ ալտի վրայ ցցել էր մի մազոտ ևս բշտիկ։ Դա մի անհաշտ բնաւորութիւն էր, և համբերութիւն էր հարկաւոր, որպէս զի մարդ կարողանար գլուխ դնել հետը։ Երբ գալիս են նորա մօտ բնակարան վարձելու, ամենից առաջ նա պիտի սկսէ հարց ու փորձ անել. «քանի հոգով են, երեխաներ ունէին թէ ոչ, որտեղ են ծառայում», մի խօսքով, մանրամասն տեղեկութիւններ է հաւաքում վարձողի նիւթական և ընտանեկան հանգամանքների մասին և վերջումը աւելացնում, որ «փողը էս գլխից կը տանայ»։ Հեշտ է երևակայել նորա չարութիւնը, հայհոյանքը և յիշողները այն դէպքում, երբ կենողը բնակարանի քրեհը ուշացնում է, այսօր չէ վաղը ասելով, կամ երբ նա բացարձակապէս անկարող է լինում փողը վճարել։ Բայց այդպիսիները ոչ մի հնար չեն կարող գտնել նորա ձեռքից պրծնելու։ Նա կը թողնէ, որ մի կոպեկը ճնայ ուրիշի վրայ? Ո՛չ մի կերպ։ Փող չունի, կարասիքը կը տայ։ Կարասիք չունի, ժամացոյցը կը տայ։ Իսկ եթէ ժամացոյց էլ չունի կենողը, նա մի բան կը գտնէ։

Ոսկերչեանը այդ մարդուն դուր չեկաւ հէնց առաջին օրւանից։ Սկզբումը նա վարանում էր, այդ անտէր անտիրական տղին սենեակ տալ թէ ոչ։ Բայց մտածելով, որ սենեակը երկար ժամանակ դատարկ էր ճնացել, ինչ դժւարութեամբ վերջապէս համաձայնուեց։ Մի շաբաթ չանցաւ, նա զղջաց իւր թուլութեան վրայ։ Այդ չահէլ պարոնը, նորա ասելով, «շառլատանի մեկը դուրս եկաւ»։ Նա ծխում էր, մի անգամ նորան տեսել է հարբած, գիշերները ուշ է տուն գալիս, մի օր էլ նա խանութի մօտից անցաւ մի աղջկայ հետ, «տրոտան» էլ հօ շարունակ ձեռքումը բռնած ունի—Ոսկերչեանը էլ ինչ պիտ անէր աւելի, որ ընկներ իւր տանտիրոջ աչքումը?



Ոսկերչեանն էլ իւր կողմից, ինչպէս ասում են, աչք չունէր նորա երեսին նայելու։ Նա ուրախութեամբ կը թողնէր այդ անտանելի արարածի տունը, բայց կար մի հանգամանք, որի պատճառով նա հանդուրժում էր տեղի մարդու ներկայութեանը։ Չէ որ օր. Մարիամը այնքան մօտիկ է ապրում? Ամեն օր նա տեսնում է օրիորդին՝ պատուհանից գլուխը հանած, ականջ է դնում, երբ նա նւագում է. վերջապէս հէնց միայն այն գիտակցութիւնը, որ օրիորդը իւր հարևանուհին է, նորա սիրտը լցնում է մի անհուն բերկրութեամբ։ Բախտը բերել է նոցա միմեանց աչքի առաջ դրել, խենթութիւն չէ յօժարակամ թողնել մի այդպիսի յարմարութիւն?

Ոսկերչեանը դերադասեց ետ դառնալ եկած ճանապարհով. եթէ այդ րոպէին ներս մտներ բակը, նա առիթ պիտի տար, ով գիտէ, ինչ անախորժ տեսարանի։ Նա վերադարձաւ այն ժամանակ միայն, երբ հաւատացած էր, որ չար սատանան իւր խանութի մէջ նստած կը լինի։ Պատշգամբումը նա տեսաւ գանգատաւոր պառաւին, որը՝ թևերը կշտած՝ կեղտոտ դոյլով կեղտոտ ջուր էր թափում բակը իջնող խողովակի մէջ։

—Հազար ներողութիւն եմ խնդրում, մայրիկ,—ասաց նա խոստովանող մեղաւորի ժպիտով,—այս գիշեր ես ձեզ բաւական անհանգստութիւն պատճառեցի։ Ես մի անիծեալ բնութիւն ունիմ. երբ հրապուրւում եմ, ամեն բան մոռանում եմ։

Երիտասարդի մեղանչական խօսքերը փափկացրին հարևանուհու սիրտը, և նա ներողամտութեամբ պատասխանեց.

—Ես քի համա իմ ասում, վուրթի, դուն էլ միղք իս. ապա քունդ սկի չի տանում?

Ոսկերչեանը շտապով բաց արեց սենեկի դուռը, ներս մտաւ և դուռը բանալիքով ամրացրեց։ Առանց երկար ու

ձիգ մտածելու, նա ետ արեց փողպատը, պիջակը հանեց և, ընկնելով մահճակալի վրայ, ինքն էլ չիմացաւ, ինչպէս քնեց։

## III

Արտաշէս Ոսկերչեանը այն տեսակ անձերից է, որոնք բարեկեցիկ պայմանների մէջ առաջ են գնում, մի որոշ դիրք ձեռք բերում և անուն վաստակում, բայց աննպաստ հանգամանքների մէջ ընկճւում և համարեա անհետ կորչում են։ Ուստի ես կարևոր եմ համարում ծանօթացնել ընթերցողիս իմ հերոսի անցեալին։ Չէ որ մարդու բնաւորութիւնը և հասկացողութիւնները ուրիշ բան չեն, եթէ ոչ բնածին ժառանգական յատկութիւնների և կեանքի մէջ ստացած տպաւորութիւնների մի համագումար։ Թէև քաջ յայտնի է ինձ, թէ որքան դժւար է որոշել արդէն կազմակերպւած անձնաւորութեան մէջ որն է բնածին և որը ստացական, բայց ես մտադիր եմ այստեղ, մի կողմ թողնելով այն, ինչ ենթադրական է, շեշտել միմիայն այն, ինչ որ ինձ անվիճելի է թւում։

Ոսկերչեանի հայրը Երևանի նահանգի մի գիւղաքաղաքի բնակիչ էր։ Դա մի շատ կենսուրախ, առողջ մարդ էր. անհոգ և զւարճասէր, բարեկամի համար կրակից անցնող։ Նա արբեցող չէր, բայց ընկերների շրջանում, քէֆերի ժամանակ, դատարկացած գինու շիշերը չէր սիրում հաշւել։ Նա յայտնի էր ամենքին, իբրև լաւ թառ ածող։ Քանի անգամ հասակակից երեխաների մէջ փոքրիկ Արտաշէսը մի առանձին պարծանքով յիշել է. «իմ հօր նման լաւ թառ ածող չկայ։ Եւ ընկերներից ոչ մէկը այդ մասին վիճելու ցանկութիւն չէ ղգացել, որովհետև որդին ամենայն իրաւունքով հպարտանում էր իւր հօր շնորքով։ Եւ հայրը ինչպիսի ղգացմունքով էր ածում, իւր թառը! Ձունդը ամուր զարնում էր լարերին, թառի



կոթը ձեռքին դողդողացնում էր, գլուխը խոնարհում, աչքերը փակում, կարծես հոգով սրտով հնչիւնների հետ ձուլւում էր, և յետոյ աչքերը լայն բաց անում և բարեկամի երեսին նայելով ժպտում և շարունակում էր ածել։ Նա շատ սիրում էր իւր Արտաշէսին։ Երբ վերջինս դեռ երեք չորս տարեկան էր, նա նստեցնում էր որդուն իւր ծնկան վրայ, ածում էր թառը, և երեխան ականջ էր դնում ամենայն ուշադրութեամբ։ Նա մատները շարժում էր լարերի վրայ և որդուն պատւիրում էր ածել, և երբ երկու յաջող հնչիւններ էին լսւում, երեխան խնդում էր, կարծելով թէ ինքն է ածում, և ուրախանում էր հայրը և համբուրում էր նորա ճակատը, ասելով. «բալա ջան, եթէ ես ուրիշ բան չթողնեմ, այս թառս էլ է կը թողնեմ քեզ համար ժառանգութիւն»։

Ահաւասիկ ուշից և ինչպէս էր ստացել Ոսկերչեանը գեղարւեստի անհուն սէրը։ Թառ չլինի, գիտար լինի— միևնոյն է։

Ուրիշ բնաւորութիւն էր նորա մայրը։ Դա մի զգայուն և թուլասիրտ, բեկուն և դիւրավհատ կին էր։ Բաւական էր մի փոքրիկ անյաջողութիւն, որ նա իրան կորցնէր։ Մարդը հիւանդանար, նա համարեա սգի մէջ էր արդէն, որդին տկարանար, նա ձեռքերը ծնկներին կը խփէր, կը հեծէր։

Հաստատ կարելի է ասել, որ Արտաշէս Ոսկերչեանը իւր վաւվռուն բնաւորութիւնը ստացել էր իւր հօրից, իսկ շուտ հանդչող և ընկճւող յատկութիւնը՝ իւր մօրից։

Մանկական խաղերի և զանազան զւարճութիւնների մէջ նա սիրում էր առաջնակարգ տեղ բռնել։ Եթէ հայրը առաջին թառ ածողն էր գիւղի մէջ, շատ բնական էր որդու ցանկութիւնը լինել առաջինը՝ լողորդների մէջ, առաջինը՝ գնդակախաղի մէջ և առաջինը՝ ըմբշամարտի մէջ։ Նորան յատուկ էր մի տեսակ կենդրոնաձիգ զօրու-

թիւն, որով նա խմբում էր իւր շուրջը համատի ընկերներին։ Վերջիններս, այս կամ այն խաղի ժամանակ, դէս ու դէն չէին ընկնում իրանց գլխաւորը ընտրելու համար. «Արտաշէսը մեր գեներալն է», միաձայն վճռում էին երեխաները։ Նա ժիր և վառվռուն մի տղայ էր, այն տղաներից, որոնց մասին ծնողները ասում են. «կատարեալ կրակ է», «տեղումը տիտիկ անել չգիտէ», «իրան մի վնաս չպատճառի, լաւ է»։ Նա օրնիբուն վազվզում էր փողոցներում, խաղում մանուկների հետ, լացացնում, ծիծաղեցնում և երեկոները յոգնած գալիս տուն և քնում մեռածի պէս։

Հայրը, որ բաւական ազատ էր պահում որդուն, նորա բնաւորութեան մէջ մի ճիշտ գիծ էր նկատել։ Նա ասում էր, թէ «Արտաշէսը լաւ տղայ է, բայց մի քիչ գովք վերցնող է. եթէ նորան գովես, կարիցը իրան կը գցի տակը». գովք վերցնելը ուրիշ բան չէ նշանակում, եթէ ոչ փառասիրութիւն։

Գիւղի դպրոցական կեանքից մի բան միայն անջնջելի հետք էր թողել նորա մտքի մէջ, այն է, թատրոնական ներկայացումները, որոնք տեղի էին ունենում ուսումնարանի դահլիճում տարին մի երկու անգամ ուսուցիչների նախաձեռնութեամբ։ Այդ ներկայացումները մտաբերելիս Ոսկերչեանի յիշողութեան մէջ վերականգնում էին փայլուն վահաններ և նիզակներ, փետրաւոր սաղաւարտներ, խմբական երգեր, աղմուկ և շղթաների ձայն։ Ատածուն է յայտնի, թէ մեր պատմական դրամաներից որն էր այդպիսի տպաւորութիւն գործել նորա վրայ։ Նորան շատ դուր էին եկել մանաւանդ սատանաները «Օսկան Պետրովիչը դժոխքում» պիեսի մէջ։ Այնպէս որ մի կերպ կարողացաւ ձեռք բերել սատանայի շոր։ Շատ անգամ նա հագնում էր այդ շորը և, ինչ ասել կ'ուզէ, ոտից ց'գլուխ սև սատանայ էր դառնում, այնքան ահ-



ելի կերպարանք էր ստանում։ Այդպէս կերպարանափոխած նա դուրս էր գալիս երեխաների առաջը և մեծ սարսափ փոքրիկ մանուկների և մեծ զարմանք հասկացող տղաների։ Նա պար էր գալիս, եղջիւրաւոր գլուխը տմբտմբացնում, ահագին երկայն քիթը օրօրում, խաղում պոչի հետ, ծուռում էր, ոռնում էր, ընկերների վրայ յարձակւում, և, Աստուած, ինչ աղմուկ, ինչ կենդանի ծիծաղ էր բարձրանում այն ուրախ, աշխոյժ երեխաների շրջանում!

Մանկութեան օրերում Ոսկերչեանին մի անբախտութիւն պատահեց, որը անհետևանք չանցաւ նորա բնաւորութեան նկատմամբ։ Տասն և մէկ տարեկան հասակում նա կրկին անգամ ծաղիկ հանեց, երեք առաջին անգամ ծաղիկը լաւ պատւաստած չլինելու պատճառով, և վտանգաւոր կերպով հիւանդացաւ։ Կլոր բշտիկները ապականեցին նորա սիրուն երեսը, քիթը, ճակատը։ Ծնողների ասելով, Աստծոյ ողորմութեամբ էր, որ աչքերը չվնասուեցին։ Երբ առողջանալուց յետոյ մի օր նա տեսաւ հայելու մէջ իւր դէմքը, որի վրայ կաշին այնքան կծկւել, այլանդակւել էր, որ դժւարանում էր այդ երեսը իրանը համարել, նա առաջին անգամ զգաց խորին վիշտ, յաւիտեան անբուժելի մի ցաւ։ Թէպէտ ծնողները միշտ նորան մխիթարում էին, ասելով թէ մարդու բնութիւնն է գովելի, ոչ թէ գեղեցկութիւնը, և նա ինքն էլ իրան մխիթարում էր այդ մտքով, բայց այնուամենայնիւ այդ փորձանքը իւր անջնջելի հետքը թողեց նորա բնաւորութեան վրայ։ Նա մասամբ կորցրեց իւր նախկին աշխուժութիւնը, լրջացաւ, և նորա ձայնի մէջ լսւում էր արդէն մի ինչ որ մելամաղձոտ հնչիւն։ Այսպէս անցաւ Ոսկերչեանի մանկութիւնը։

Երբ Ոսկերչեանը տասներեք տարեկան էր, հայրը ուղարկեց նորան Թիֆլիս՝ ուսման։ Նորա մօրեղբայրը,

որը այդ միջոցին առևտրական գործեր ունէր այդ քաղաքում, Արտաշէսին տեղաւորեց Զառիկեաններէի ընտանիքի մէջ. վեցերորդ դասարանի մի գիմնազիստ նորան սիրտի պատրաստակեր գիմնազիոնի առաջին դասարանի համար: Ամսավճարը ընդամենը քսան և հինգ մանէթ էր, որից 15-ը ուղարկելու էր հայրը, իսկ մնացածը սիրտի լրացնէր քեռին իւր պարտքի փոխարէն: Մի տարուց յետո, հետևեալ սեպտեմբերին բաւականին յաջող քննութիւն տալուց յետոյ, նա համազգեստը հագած արդէն յաճախում էր գիմնազիոն:

Շնորհիւ իւր կցլող և շուտ ընկերացող բնաւորութեանը, Ռակերչեանը այնքան էլ օտար չէր զգում իրան կեանքի բոլորովին փոխուած պայմանների մէջ: Մի երկու ամսից յետ նա ընտելացաւ իւր ընկերներին, ուսուցիչներին և ուսումնարանի կարգ ու կանոնին:

Զարմանալի բան. դիւղի ծխական դպրոցում նա ծոյլ էր վերին աստիճանի: Դասատուները նորա մէջ մի առանձին ընդունակութիւն չտեսան: Նա անհանգիստ էր, չար էր և դասատան «ցեղն» էր համարում: Համբերութիւնից հանում էր նամանաւանդ թւաբանութեան ուսուցչին, որը մի այնպիսի կարծիք էր կազմել և յաճախ յայտնել մանկավարժական ժողովում, թէ «այդ չար պատուհասը մտածելու բոլորովին անընդունակ է»: Բայց եթէ նա ետինն էր ուսման մէջ, առաջինն էր խաղերի մէջ: Այժմ երբ նորա միտքը փոքր ինչ բացւել է, և նա կարծես սկսել է հասկանալ ուսման նշանակութիւնը, երբ առաւել մեծ պարծանք է համարում ուսման մէջ առաջինը լինել, քան թէ զանազան չարութիւնների մէջ, նա նոյն տաքութեամբ, որով առաջ անձնատուր էր լինում խաղերին, այժմ իրան նւիրել է ուսման: Սենեկի մէջ առանձնացած՝ նա կարդում էր, գրում էր, անգիր էր անում, նստում էր մինչև կէս գիշեր, այնպէս որ



«մայրիկը» շատ անգամ ստիպւած էր լինում գալ և հանգցնել ճրագը, յիշեցնելով, որ բաւական է, ինչքան պարապեց, հիմա քնելու ժամանակ է: Դորա փոխարէն, նա առաւօտները շատ կանուխ վեր էր կենում և էլի կպչում իւր դասերից: Առանձին սիրով նա անգիր էր անում ոտանաւորները: Ահագին ժամանակ էր կորցնում թւաբանութեան վրայ, որպէս զի միաւոր կամ երկու չստանար, և շարունակում էր առել այդ առարկան և առաջի դասատուին: Այն օրը, երբ թւաբանութեան դաս էր լինում, նորա օրը սեւանում էր, իսկ երբ դասը անցնում էր, սիրտը հանգստանում էր: Երրորդ և չորրորդ դասարաններում նա շատ սիրում էր լատիներէնը և յունարէնը, անգիր էր անում ամբողջ գլուխներ Յուլիոս Կեսարի „De bello Gallico" յիշատակարանից, յետոյ Քսենոփոնի «Նահանջից»: Այդ բոլորի մէջ երևում էր նաև անափառութիւն—դուր գալ ուսուցիչներին և պարծենալ ընկերների առաջ: Շնորհիւ իւր ընդունակութեան և ջանասիրութեան, նա մասամբ կարողացաւ հասնել իւր նպատակին, այսինքն, ընկնել առաջին աշակերտների շարքը: Ամենից առաջինը լինել, սակայն, նորան չյաջողեց: Մի երկամեակում միայն թւաբանները բաժանելիս դասախարակը նորան անւանեց առաջին աշակերտ, գովեց վարքը, և երբ թերթիկը յանձնեց Ռակերչեանին, վերջինիս աչքերը փայլեցին ուրախութիւնից, և նա մի քանի օր իրան «եօթներորդ երկնքում» էր զգում. բացի թւաբանութիւնից և աշխարհագրութիւնից, որոնցից չորսեր էին, բոլոր առարկաներից հնգեր ունէր: Երրորդ դասարանից չորրորդը փոխադրւելիս նա արժանացաւ առաջին աստիճանի պարգևի—դա Վերմոնտովի փառաւոր հատորն էր: Չորրորդից հինգերորդը անցաւ միայն գովասանական ոսկետառ թերթով: Եթէ բանը այսպէս շարունակւէր, հաւանական է, որ նա շատ լաւ աւարտ

տէր միջնակարդ դպրոցը: Բայց մօտաւորապէս հինգերորդ դասարանում գայթակղութեան քարեր են ընկնում հրապուրող պատանիների առաջ, ոմանք սայթաքում և ընկնում են, շատերը հաղիւհազ կարողանում են հասնել նուիրեան վկայական ստանալ, քչերը միայն չեն գայթակղւում և, ընդհակառակը, կրկնապատկում են իրանց եռանդը և աշխատասիրութիւնը: Ոսկերչեանը չհասցաւ հասնել նուիրեան վկայական, որովհետև ժամանակից շատ վաղ հասունացաւ: Եւ ահա այդ ինչպէս եղաւ:

Չորրորդ դասարանում նա մտերմացաւ մի քանի ընկերների հետ, որոնց մասին այն կարծիքն էր տիրում դասատանը, թէ «շատ զարգացած են»: Նոքա յաճախ հաւաքւում էին մէկի տանը, և էլ ինչ փիլիսոփայական հարցեր ասես չէին շօշափում: Նոքա աւելի մօտեցան իրար մանաւանդ հինգերորդում:

—Մթթէ արժէր այնքան ժամանակ կորցնել դասերի վրայ, որ մենք էինք կորցնում, ասում էր մէկը: Ինչ յիմար էինք: Եւ ոչ ոք մեզ չէր հասկացնում, թէ այն ամենը, ինչ սովորում ենք, շուտով պիտի մոռանանք, զարգացումն է, որ մեզ պէտք է գալիս: Հօ երէկներով կարելի է փոխադրւել? и баста! Մնացած ժամանակը նուիրել ընթերցանութեան!

—Իհարկէ, պէտք է զարգանալ, կրկնում էր երկրորդը:

Եւ ինչ մեծ-մեծ մարդկանց անուններ էին յիշում— Դարւին, Ռնան, Հումբոլդտ, Կոնտ, Կանտ!.. Ինչպիսի խորհրդաւոր վկայութիւններ էին բերում այդ գիտնականների գրքերից!

Ոսկերչեանը իրան ոչնչացած էր զգում նոցա առաջ: Ընկերները ինչեր են կարդացել, իսկ ինքը... Եւ նա սիրում էր և վճռում այդ փիլիսոփայութեան համը առնել:



—Ափսոս այն ժամանակ, որ մենք կորցրել ենք մեծաճ լեզուների վրայ! Դորա փոխարէնը եթէ մենք բնական գիտութիւններ սովորած լինէինք, այն ժամանակ— ուրիշ բան է!...

—Իմ եղբայրը երկու տարի չհայ աւարտել է, հիմա աստմ է, որ յունարէն հոլովելը նոյն իսկ մոռացել է!...

—Նու, տեսնում ես, արժէ ուրեմն?...

Խօսք էր բացւում գիտութեան և գեղարւեստի մասին: Խնկարկւում էր գիտութիւնը, իսկ շատ սուր դասւում գեղարւեստը: Այդ տաք գլուխներից մէկը պարծենալով ասում էր.

—Մի տարի է ես այլ ևս չեմ կարդում ոչ վէպեր, ոչ բանաստեղծութիւններ: Ինչ են տալիս մեզ այդ տեսակ գրւածները? Ոչինչ, համարեա ոչինչ! Աւելի լաւ չէ զարգանալ, ծանօթանալ փիլիսոփայութեան, ուսումնասիրել բնական գիտութիւնները?

—Այ, օրինակ, Պուշկինը: Այնքան կարդացել, վերլուծել, անդիր ենք արել, որ ինչ? Նա մեզ ինչ տւեց?

—Կարդացել էք Պիսարևի քննադատութիւնը Պուշկինի մասին? Ո՞չ? Ափսոս! Ապա մի կարդացէք, տեսէք, ինչպես խիստ քննադատում, ոչնչացնում է նորան! Նա ուղղակի նորան անւանում է „нашъ миленькій Пушкинъ!“

Այդ պատանիներից մէկը այնքան հեռու էր գնում, որ ժխտում էր նոյն իսկ Թատրոնի նշանակութիւնը:

—Ջոն Ստիւարտ Միլլի մի երեսը, ասում էր նա, աւելի զարգացուցիչ և աւելի թանկ արժէ ինձ համար, քան թէ Թատրոնը իւր բոլոր բէպերտուարով: Նա միայն ջղեր է գրգռում, զգացմունքների վրայ ազդում, իսկ մտքի հետ ոչ մի գործ չունի!...

Յաւալի էր տեսնել, թէ ինչպէս այս ազնիւ, մաքուր պատանիների հոգին, որը համբում էր զարգանալու գովելի ցանկութեամբ, շնորհիւ անկանոն ընթերցանու-

թեան և ղեկավարի բացակայութեան, իւր ոտը դնում էր
միակողմանի և ուրեմն ծուռ ճանապարհի վրայ!
Այդ շրջանը, ճիշտ է, մասամբ լաւ ազդեցութիւն արեց
Ոսկերչեանի վրայ: Նորա շնորհիւ էր, որ վերջինը սկսեց
աւելի լաւ զգալ զարգանալու պահանջը, և սիրեց ընթեր-
ցանութիւնը: Բայց լաւ ճանաչելով դիւրագրաւ պատա-
նու բնաւորութիւնը, վաղօրօք կարելի էր գուշակել, որ
նա, իւբ բոլոր էութեամբ անձնատուր լինելով գրքերի
ընթերցանութեանը, մոռացութեան պիտի տար իւր
աշակերտական պարտաւորութիւնները, մի հանգամանք,
որի հետևանքը պիտի լինէր ետադիմութիւն առարկա-
ների ուսման մէջ: Այդպէս էլ եղաւ, մանաւանդ, որ
բացի այդ, նորա գլխի մէջ նստեցրել էին այն միտքը,
թէ բաւական է երեքներով փոխադրուել և դպրոցը աւար-
տել: Այնուհետև նա սկսեց թոյլ վերաբերել դասերին,
և նորա ծուլանալը պարզ նկատեցին շատ ուսուցիչներ,
այնպէս որ այդ մասին մինչև անգամ խօսք եղաւ և ցաւ
յայտնեց մանկավարժական ժողովի նիստում: Առաջին
նստարանից նա ետ-ետ գնաց և վեցերորդ դասատանը նա
նստում էր ամենավերջին կարգում: Դասերի ժամանակ
աչքը գրքից չէր հեռացնում, այնպէս որ ուսուցիչները
քանի անգամ բռնել են նորան և գիրքը ձեռքից խլել:
Լատիներէնի դասատուն մանաւանդ շատ էր ափսոսում
նորա ծուլանալու վրայ:
—Эхъ, Воскерчьянъ, вы совсѣмъ излѣнились!
ասում էր նա և գլուխը դժկոհութեամբ շարժում:
Չնայած տեսչի և ուսուցիչների նկատողութիւն-
ներին և խրատներին, նա խելքի չեկաւ և երբէք չկա-
րողացաւ համոզուել, որ հարկաւոր է հաւասարակշռու-
թիւն պահպանել ընթերցանութեան և առարկաների
ուսման մէջ, և ոչ մի կերպ չպէտք է մէկը զոհել միւսին:
Նա կարդում էր դասերի ժամանակ, դասամիջոց-



ներին, կարդում էր տանը: Աշխատասէր աշակերտներին,
որոնք նոյն իսկ դասամիջոցներին նորից և նորից կրկնում
էին տանը սերտած դասերը, նա կնքում էր „зубрякъ“
անունով:
Երբ նա տեսնում էր, որ ընկերը դասամիջոցին անց
ու դարձ է անում դասարանի մէջ և ինչ որ մի բան մի
քանի անգամ կրկնում անգիր էր անում, նա գլուխը
բարձրացնում էր գրքից և ներողամիտ ժպիտով արտա-
սանում.
—Вотъ зубрякъ! և էլի գլուխը կոխում էր գրքի
մէջ:
Վերև յիշուած շրջանը, սակայն, մի նշանաւոր կէտի
մէջ, անկարող եղաւ ազդել Ոսկերչեանի վրայ: Նորա
սէրը դէպի գեղարուեստը ոչ միայն չհանգաւ, այլ գնա-
լով, աւելի և աւելի զարգանում էր նորա մէջ և կլա-
նում ուշ ու միտքը, նորա բոլոր էութիւնը: Ընթերցանու-
թեան գրքերի ընտրութեան մէջ նա առաջնորդւում էր
ոչ թէ իւր ընկերների ցուցմունքներով, այլ իւր սեփա-
կան հակումներով: Սկզբում, իրաւ է, նա, իւր շրջանի
օրինակին հետևելով, ձեռք բերեց մի քանի փիլիսոփա-
յական և լուրջ գիտական շարադրութիւններ, օրինակ,
Սպենսէրի «Հասարակագիտութիւնը», Դարւինի «Տեսակ-
ների ծագումը», Ռընանի «Ինչ է ազգութիւնը» և այլն:
Բայց այդ տեսակ գրքերը, որոնց բովանդակութիւնը նա
կիսատ պռատ էր հասկանում, որովհետև նորա հասակին
և հասկացողութիւններին դեռ ևս անմատչելի էին նոքա,
նա շուտով ծալեց մի կողմ դրեց, առանց մի որ և է
ափսոսանք զգալու, և յետոյ վրայ պրծաւ Շէքսպիրի,
Շիլլէրի, Գէօթէի, Բայրնի վրայ: Մանաւանդ առաջինը
դարձաւ նորա իդէալը: Նա համարեա աստուածացնում
էր Շէքսպիրին: Պուշկինի և Լերմոնտովի բանաստեղ-
ծութիւններից շատերը և մի քանի պօէմները անգիր

գիտէր։ Անգիր արտասանում էր մենախօսութիւններ Գրիբօեդովի «Խելքից պատուհասից», Պուշկինի «Բորիս Գոդունովից» ամբողջ տեսարաններ և այլն։ Նորա սիրելի քննադատներն էին Բէլինսկին և Գերւինուս։ Դոբրօլիւբովից օգտւում էր։ Պիսարևին ատում էր ի բոլոր սրտէ, այնպէս որ, երբ նա իւր ընկերների շրջանում դատապարտում էր այդ քննադատին, որ նա յարգանք չէ տածում դէպի գեղարւեստը, վերջինների մազերը համարեա բիզ-բիզ էին կանգնում, նոքա կատաղում էին, տաքանում, ձեռքները խփում սեղանին և յաճախ կրկնում. «ես համոզւած եմ, որ...»։

Նա հաճութեամբ կարդում էր մեծ գրողների կենսագրութիւնները, միևնոյն ժամանակ միշտ համանման գծեր էր գտնում իւր և այն հանճարի բնաւորութեան մէջ, որի կեանքի պատմութիւնը կարդում էր։ «Բայրնը շատ անհանգիստ բնաւորութիւն ունէր», կարդում էր նա։ «Ես էլ իսկ և իսկ այդպէս եմ», մտածում էր նա։ «Շիլլերը հրապուրող և իդէալական անձնաւորութիւն էր», կարդում էր նա։ «Ինչքան նման է եղել իմ բնաւորութեանը», մտածում էր նա։ Իւր մէջ նա որոնում էր մեծութեան նշաններ, և նա այդ գտնում էր մեծ մարդկանց կենսագրութիւնների մէջ։ Ինչ բան է տաղանդը? Նա պիտի դառնայ հանճար, և մեծ հանճար! Եւ այսպէս ահա մեծ լինելու փափաքը դարձաւ Ոսկերչեանի հոգու հիւանդ կողմը, աւելի լաւ, մի մեծ մոլութիւն, մի տեսակ mania grandiosa։

Գեղարւեստի բոլոր ճիւղերից նա ամենից շատ սիրում էր թատրոնը և ամենից բարձր դասում։ Նա այն կարծիքի էր, որ ներկայացումներով կարելի է հրաշքներ գործել վարք ու բարքի բարեփոխման վերաբերմամբ։ Այդ կարծիքը նորա մէջ արմատացրել էին նախ էկկարդը, որ ասում է թէ դրամատիկական բանաստեղծութիւնը և



բեմը գեղարւեստների սպասն է, որովհետև թատրոնը ամփոփում է իւր մէջ գեղարւեստի բոլոր ճիւղերը—պօյէզիան, երաժշտութիւնը, ճարտարապետութիւնը, նկարչութիւնը և արձանագործութիւնը, և յետոյ Շիլլերը, որը իւր թատրոնի մասին գրած դատողութեան մէջ մեծ կրթիչ նշանակութիւն է տալիս այդ հիմնարկութեանը։

Թատրոնի այն տեսակ սիրահարներից էր Ոսկերչեանը, որ, եթէ մէկը վատ խօսէր թատրոնի մասին, միևնոյն է թէ խորին վիրաւորանք հասցնէր նորա անձնաւորութեանը։ Երբ գրպանում փող էր լինում, նա ներկայացում բայ չէր թողնում։

Իւր բեմական ընդունակութիւնների մասին նա ոչ մի կասկած չ'ունէր։ Մանաւանդ սաստիկ շոյական էին նորա համար գրականութեան ուսուցչի (միակը, որին սիրում էր և որի տաճ դասերը մինչև վերջ սիրով պատրաստում) այն խօսքերը, որ նա ասաց Ոսկերչեանին, երբ վերջինը հինգերորդ դասարանում զգացմունքով և խելացի շեշտադրութեամբ արտասանեց Շիլլերի բալլադը («Իբիկոսի կռունկները»)։

—Воскерчьянъ читаетъ стихи, какъ настоящій артистъ! Այնուհետև ընկերները նորա անունը դրին—„настоящій артистъ“.

Ադամեանի «Համլէտի» ներկայացմանը, որի մասին ընթերցողը կարդաց վէպի առաջին գլխում, Ոսկերչեանը միայն անունով էր ճօթներորդ դասարանի գիմնազիստ։ Աշակերտական ոչինչ չէր ճնացել նորա վրայ։ Ուսումնարանում երկու օրը մի անգամ էին նորա երեսը տեսնում Համազգեսաի տեղ պուրսը հագնում էր պիջակ։ Ծխում էր։ Նա լուրջ մտածում էր ուսումը թողնելու մասին։ Շուտ ասպարէզ դուրս գալ, փայլել, անուն հանել—այսպիսի ցանկութիւններ եռում էին նորա մէջ, և նա մի ամենա ընչին համբերութիւն չունէր այլ ևս լոգարիթմային

խնդիրների և սինուս ու տանգենսների վրայ գլուխ կոտրելու։ Նորա սինուսն էլ, տանգենսն էլ, լոգարիթմն էլ օդը ցնդեցին, և տեղը մնաց միայն զործունէութեան և փառքի անհուն տենչանքը։ Սորան աւելացան մի քանի այլ հանգամանքներ, որոնք ազատեցին նորան տատա-նումներից։ Նորա հայրը, որի միսը և արիւնը ծծել էր մի վաշխառու, աղքատացել էր, և վերջին ամիսները այլևս ոչ մի կոպեկ չէր կարողանում ուղարկել իր որդուսման համար։ Այնպէս որ սա ստիպւած էր դասերով ապրել։ Նորա դասն էլ համարեա քաղաքի ծայրումն էր, ուր ամեն օր գնալ գալով մի քանի ժամ կորցնում էր։ Բացի այդ, նա համոզւած էր, որ պիտի մնայ դասատանը։ «Ուրեմն աւելի լաւ չի լինիլ, մտածում էր նա, եթէ ես ինքս պատուով թողնեմ և դուրս գամ?

Արտաշէս Ոսկերչեանի անցեալի մասին այսքանը բաւական է։

Այժմ շարունակենք մեր ընդհատած պատմութիւնը։

## IV

Ճաշից յետոյ Ոսկերչեանը սխուր անց ու դարձ էր անում իր սենեկի մէջ։

Յանկարծ դուռը բացւում է, և ներս է մտնում Գարեգին Զառիկեանը։ Նա հագած էր դեղնագոյն նուրբ չեսունչա. ուսին ձգաց էր սև վերարկուն. ձախ ձեռքումը հովանոցն էր բռնած, իսկ աջ ձեռքի ցուցամատի և մեծ մատի արանքում՝ վառ պապիրոսը շիրազի մունդշտուկի մէջ։

Դա մի իսկական տղամարդ էր՝ իր վայելուչ հասակով, դիմագծերի գեղեցիկ համաչափութեամբ և արտայայտիչ աչքերով։

—Դէհ, Արտաշէս, պատրաստւիր գնանք,—ասաց նա՝ դրան մօտ կանգնելով։



—Ուր? հարցրեց Ոսկերչեանը, արձանանալով իր բարեկամի հանդէպ և ճպճպացնելով կիսախուփ աչքերը։

—Ինչպէս թէ ուր? Դու մոռացել ես, որ մենք բուաբանական այգին պիտի գնանք թէյի?

—Ախ, իրաւ, իրաւ, ես այդ ամենևին մոռացել էի,—պատասխանեց Ոսկերչեանը մի այնպիսի անտարբերութեամբ, որ Գարեգինը զարմացաւ։ Է՛հ, լաւ, դեռ նամիր մի քիչ հանգստացիր, այգին չի փախչում։

Այդ ասելով նա առօք փառօք տարածւեց իր անկողնակալի վրայ։

Այդ գործողութիւնը խիստ տարօրինակ երևաց Զառիկեանին, և նա մտածեց, մի գուցէ իր բարեկամին մի բան է անախորժ դէպք է պատահել։ Մի վայրկեան խորհրդաւոր լռութեան հայեացքով նա դիտեց Արտաշէսին և ապա մոտեցաւ քայլեց դէպի սեղանի կողմը։ Նստելով աթոռի վրայ, նա դիմեց Ոսկերչեանին և հարցրեց հետաքրքրութեամբ.

—Արտաշէս, ինչ է պատահել?

Ոսկերչեանը պատմեց իր տանտիրոջ հետ ունեցած կռւի մասին։

Հնչեց Զառիկեանի առողջ ծիծաղը։

—Եւ դու այդ դատարկ բանի համար ես տխրել? նկատեց նա, թափ տալով մոխիրը պապիրոսի վրայից։ Տանտէրը հրամայել է բարեկամիս մի ուրիշ բնակարան վարձել—սարսափելի դժբախտութիւն!...

—Երևակայիր, Գարեգին, որ դա ինձ համար մի դժբախտութիւն է։

—Ինչպէս թէ դժբախտութիւն? Բացատրիր, տեսնեմ։ Ես քեզ չեմ հասկանում, Արտաշէս։ Բնակարան փոխելը դժբախտութիւն է?

Ոսկերչեանը ժպտաց և ձեռքով խորհրդաւոր շարժում արեց դէպի վարժուհեանների տան կողմը։

Նոյն ուշգուշթեամբ Գարեգինը դարձրեց իւր երեսը և, ձեւանալով, իբր թէ նորան չհասկացաւ, ասաց.

—Ինչ կայ այնտեղ?

—Ինչ կայ այնտեղ? Այնտեղ կայ մի կենդանի մազնիս, որը միշտ քաշում է դեպի իրան իմ ուշ ու միտքը, իմ բոլոր էութիւնը! Եւ հիմա ես պէտք է հեռանամ նորանից!

Ոսկերչեանը այդ խօսքերը արտասանեց այնպիսի ողբերգական եղանակով, որ Զառիկեանի ժպիտը սառեց շրթունքի վրայ: Նա մի հատ բառ չգտաւ պատասխանելու իւր բարեկամին ոչ լուրջ կերպով, ոչ կատակով: Օտարոտի էր և այն զգացումը, որ խաղաց նորա սրտի մէջ:

Երկուսն էլ լուռ էին: Ոսկերչեանը նայում էր առաստաղին:

Զառիկեանը մտամոլոր՝ ճկոյտի մաքուր եղունգն էր կրծոտում: «Ահա թէ որն է իսկական անբախտութիւնը, մտածում էր Գարեգինը: Անմտութիւն համարենք թէ այլ բան, բայց Արտաշէսը սիրում է նորան: Բայց ինքը? Ինքը անտարբեր է? Եթէ անտարբեր է, ապա ինչու երէկւանից դէս օրիորդի պատկերը չէ հեռանում նորա մտքից? Ինչու երազի մէջ տեսաւ նորան? Ինչու առաւօտեան, երբ արթնացաւ և յիշեց, որ ծանօթացել է օր. Վարթուհեանի հետ, նա այնքան ուրախացաւ և կարծեց, թէ մի գանձ է գտել... Ահա ուրեմն ինչ էին նշանակում այն գովասանական խօսքերը, որ Արտաշէսը շռայլում էր «գեղեցիկ հարևանուհու» հասցէին: Ուրեմն այն կատակ չէր: Ուրեմն այն մի պատանեկան վաղանցիկ հրապոյր չէր»:

—Վեր կաց գնանք, Արտաշէս, մենք ուշանում ենք: Մերոնք արդէն այնտեղ են,—խօսեց Զառիկեանը, սթափվելով մտածմունքից և ոտի կանգնելով:



—Թէև տրամադիր չեմ, Գարեգին, բայց... լաւ, գնանք:

Ոսկերչեանը պատրաստուեց, և երկու բարեկամները անմիջապէս ճանապարհ ընկան դէպի Բուսաբանական այգին:

Օրը պղտոր էր: Արեգակը մերթ թագնուում էր գորշագոյն ամպի կտորի ետև, մերթ դուրս էր գալիս նորա տակից և կրկին փայլփլուում երկնքում, և ամպի ու արեգակի այդ չարաճճի խաղերից կամ պայծառանում էր օրը կամ մթնանում, ինչպէս թատրոնի մէջ, երբ գաղի անկանոն վառելուց լուսաւորութիւնը և խաւարում է դահլիճը:

Ոսկերչեանը պատսպարուած էր Զառիկեանի բաց հովանոցի տակ, և երկուսն էլ գլխիկոր մտաղբաղ գնում էին թուրքի թաղով: Նոքա լուռ էին: Երբեմն միայն հատու կտոր հարց ու պատասխանով սահմանափակւում էր նոցա խօսակցութիւնը: Բայց քիչ յետոյ, նոցա զրոյցը կենտրոնացաւ, ըստ երևութին, մի կարևոր առարկայի վրայ, որովհետև Զառիկեանի դէմքը պարզ հետաքրքրութիւն էր արտայայտում: Երբեմն նա կանգ էր առնում, զարմացած հայեացքը գամում բարեկամի աչքերի մէջ, մի բացականչութիւն անում, և էլի շարունակում էին առաջ գնալ:

Վերջապէս նոքա տեղ հասան: Ոսկերչեանը իւր գաւազանով բաղխեց այգու վանդակապատ ահագին դուռը, որ շուտով բաց արին, և նոքա ներս մտան:

Ցանկարծ մի ախորժելի զովութիւն փչեց նոցա երեսին: Մաքուր օդը լցւած էր անուշահոտ բուրմունքով: Նոցա առջև բարձրանում էր դէպի վեր հիւրընկալ ծառուղին, որի աջակողմեան ծառերը իրանց սաղարթախիտ ու կանաչ կատարներով մի այնպիսի թանձր ստուեր էին ձգել ճանապարհի վրայ, որ այդ ստուերը նման էր աւելի մթութեան, բայց դուրեկան մթութեան:

Ցափշտակիչ բնութեան վրայ հիացած, բարեկամ-

ները կանգ առան, երկար շունչով կենդանարար օդ ծծեցին, և մի առժամանակ ընդհատուեց նոցա վէճը։

Զառիկեանը վերցրեց գլխարկը, ճակատի քրտինքը սրբեց և մատներով գլխի երկայն մազերը սանրելով,

—Աքանչելի է! բացականչեց։

—Ափսոս չէ Բուսաբանական այգին! Ինչ բան է Մուշտայիդը սորա հետ համեմատած?

Երբ նոքա հասան ծաղկանոցի դրանը, Զառիկեանը հանգիստ առաւ ծառի տակ նստարանի վրայ։

—Ի՛նչ ես նստում, Գարեգին,—խօսեց Ոսկերչեանը, բարձրանանք վերև և այնտեղ ձերոնց մօտ կը նստենք կը հանգստանանք։

—Ես յոգնած եմ։ Եւ բացի այդ, ես ցանկանում եմ քեզ հետ առանձին խօսել քո ապագայի մասին։ Դու հօ ինձ քո բարեկամն ես համարում, և մտերիմ բարեկամը? Ուստի ես իրաւունք ունիմ պահանջելու, որ դու մի կողմ դնես կատակը և լուրջ խօսես ինձ հետ, քանի որ այն, ինչ որ դու վճռել ես քո վիճակի վերաբերմամբ, ծանր ու բարակ մտածելու բան է.

Այդպէս ուրեմն դու վճռել ես թողնել ուսումդ?

—Այո։

—Բոլորովին?

—Բո-լո-րո-վին!

—Եւ այդ կատակ չէ?

—Ինչ կատակի բան կայ այստեղ?

—Բայց մի տարի է մնում, Արտաշէս, մէկ հատ տարի, և դու կ'աւարտես։

—Մի տարի առաջ, մի տարի յետ—միևնոյնը չէ?

—Իհարկէ ոչ! Եթէ ուսումդ չ'աւարտես, դու կը մնաս թերուս։

—Թերուս? հեգնեց Ոսկերչեանը։ Ուրեմն ով աւարտման վկայական չունի, նա թերուս է?



—Այո, թերուս է։

—Օհօ, ես այդ չդիտէի,—կրկին հեգնեց Ոսկերչեանը։ Մինչ օրս ինձ թւում էր, որ թերուսը այն մարդն է, որ անզարգացած է։ Ես կարծում էի, թէ նոյն իսկ համալսարանաւարտը, եթէ անզարգացած է, այնուամենայնիւ թերուս է!

—Դու ինձ լաւ չհասկացար, Արտաշէս։ Որքան կ'ուզես, դու քեզ զարգացած կարծիր, բայց այն հասարակութեան մէջ, որի հետ պիտի շփուես, և առհասարակ ամեն տեղ, ուր գործ պիտի ունենաս, քեզ այդպէս պիտի համարեն—թերուս։

—Թող համարեն։

—Բայց յետոյ կը զղջաս։ Եթէ աւարտման վկայականը քեզ ուրիշ օգուտ չտայ, գոնէ քո օրեայ հացը կը տայ։

—Օրեայ հացը? Եաին մշակը հայթհայթում է իւր օրեայ հացը—ես միայն քաղցած պիտի մեռնեմ?

—Բայց համալսարանը, բարձրագոյն կրթութիւնը...

—Է՛հ, այդ բոլորը շատ լաւ է, շատ գեղեցիկ է։ Բայց եթէ էլ ուսման ցանկութիւն չկայ, միջոց չկայ?

—Ես քեզ ճանաչում եմ, Արտաշէս։ Դու գիտես սաստիկ հրապուրել նոր մտքերով, նոր գաղափարներով։ Եւ այդ քո բնութիւնը կարող է քեզ վնասել, եթէ վաղօրօք չ'աշխատես չափաւորել այդ յատկութիւնը։ Ես դարձեալ պնդում եմ. յետոյ դու պիտի զղջաս, որ ուսումդ կիսատ թողիր։

—Ո՛չ, այդ անկարելի է։ Իմ կրթութեան հիմքը արդէն դրւած է։ Եթէ մնացել է մի թերի բան, ես ինքս ինքնաշխատութեամբ կը լրացնեմ պակասը։ Ձևական ուսման ես մեծ կարևորութիւն չեմ տալիս, Գարեգին։ Իսւական է, եթէ մարդ գոնէ ինքնակրթութեան և առհասարակ յառաջդիմութեան ճանապարհը. այնու-

հետև հեշտ է. ընթերցանութիւնը կը լինի մեր իմաստուն առաջնորդը։

Սա խնդրեմ, Շէքսպիրը բարձրագոյն կրթութիւն էր ստացել? Ռուսսօն մեծ ուսում ունէր? Դիկկենսը նոյն իսկ միջնակարգ կրթութիւն ստացել էր? Ադամեանը սինուս ու տանգենս է սովորել?

—Օ, դու շատ հեռու ես գնում, Արտաշէս։ Ամեն մի բանաստեղծ Շէքսպիր չի դառնալ և ամեն մի դերասան Ադամեան չի լինիլ։ Մեր խօսքը հանճարների մասին չէ, այլ մեզ պէս թոյլ և հասարակ մահկանացուների մասին։

Ոսկերչեանը ոչինչ չպատասխանեց։ Նորան տհաճութիւն պատճառեցին Զառիկեանի վերջին խօսքերը։ Նա վիրաւորուած էր։ Որտեղից գիտէ Գարեգինը, որ Արտաշէս Ոսկերչեանը «մի թոյլ և հասարակ մահկանացու է»? Իր դժգոհութիւնը նա արտայայտեց միայն լռութեամբ։ Այդ հանգամանքը մտածել տւեց Զառիկեանին, և սա կամեցաւ իմանալ իր բարեկամի հոգու տրամադրութեան փոխելու պատճառը։ Բայց Ոսկերչեանը նորա հարցման հետևեալ խորհրդաւոր պատասխանը տւեց.

—Այստեղ բաներ շատ կան, Գարեգին, և դու միայն ժամանակով այդ կ'իմանաս։

«Այստեղ» ասելով, նա ձեռքը դրեց կրծքի ձախ կողմի վրայ։

Զառիկեանը սակայն դորանով չբաւականացաւ։ Նա ուզեց աւելին իմանալ կամ գոնէ պարզել այդ պիւթիական խօսքերի իմաստը։ Ոսկերչեանը բացատրեց իր միտքը, ասելով.

—Ես սիրում եմ թատրոնը և գրականութիւնը, ընդհանրապէս գեղարուեստը։ Ես իմ մէջ զգում եմ մեծ ոյժ և մեծ եռանդ գեղարուեստի ասպարիզում գործելու, և այսուհետև ես իմ անձը պիտի նուիրեմ այդ բուրը գործին։



Զառիկեանը ոչինչ չխօսեց և սկսեց խաղալ իր գողտրիկ մօրուքի հետ և հետաքրքիր աչքերով զննել մազերի ճայրերը, թէև այնտեղ ոչ մի զննելու բան չկար։ Նորա մտածմունքի առարկան Ոսկերչեանի վիճակն էր։ Նա ուրքան լաւ կարծիք էր կազմել Արտաշէսի մասին, և միշտ համարել է նորան խելօք և ընդունակ։ Նա բանաստեղծական աւիւն էր նշմարում նորա ոտանաւորների մէջ։ Նա հիանում էր նորա կանոնաւոր և ազդու դեկլամացիայի վրայ, երբ նա արտասանում էր հատուածներ Շէքսպիրի տրագեդիաներից։ Եւ նա չէր թագցնում իր հիացումը, այլ բացէիբաց Ոսկերչեանի երեսին գովում էր նորա տաղանդը, իհարկէ, առանց շողոքորթութեան, և նորա ապագայի նկատմամբ ինչպիսի յոյսեր էր յայտնում։ Բայց ահա Արտաշէսը իր ցնորական քայլով ասիպում է Զառիկեանին զղջալ իր անզգոյշ, անհեռատես խրախուսանքի համար, որովհետև գովաբանութիւնը, ինչպէս երևում է այժմ, թև է տւել հրապուրուղ երիտասարդին, զարգացրել է նորա մէջ ինքնավստահութիւնը և սաստկացրել փառքի ծառաը։ Այդ, ասենք դեռ ոչինչ։ Վատահ լինել իր սեփական ոյժերի վրայ և փառքի ձգտել—այդ դեռ արատ չէ. դա նոյն իսկ առաւելութիւն է այն դէպքում, երբ զուգակից է իսկական տաղանդի և համբերութեան հետ։ Բայց ցաւը հէնց այն է, որ Ոսկերչեանը իր ուժերի վերաբերմամբ տոկունութեան նշոյլ անգամ չէ կամենում ցոյց տալ։ Եթէ հիմա այդպէս է նա, ինչ կը լինի յետոյ, երբ ոտը կը դնէ փշոտ ասպարիզի վրայ?...

Զառիկեանը կրկին փորձեց համոզել իր բարեկամին, որ նա թողնի իր անմիտ դիտաւորութիւնը։ Բայց իզուր. Ոսկերչեանը այնքան ամուր էր երևում իր որոշման մէջ, որ կարծես ոչ մի ոյժ չէր կարող նորա վճիռը բեկանել։

Կարճատև լռութիւնից յետոյ նորա սկսեցին բարձրանալ վերև։ Ոսկերչեանը առաջ էր ընկել և ինչ որ մի երգի եղանակ էր սուլում հազիւ լսելի ձայնով, իսկ Գարեգինը գնում էր նորա ետևից կորագլուխ և բեկը մտախոհ ոլորելով։

Մինչդեռ երկու բարեկամները ներքև տաքացած վիճում էին, վերև, աւազանի գլխին, ընկուզենու ստւերի տակ սեղանի շուրջը բոլորել էին Զառիկեանի մայրը, օր. Աշխէնը, նորա փոքրիկ եղբայրը և Սևումեանը։ Օր. Աշխէնը նստած էր ինքնաեռի մօտ, որը տաբուրետի վրայ դրւած՝ եռում խլթխլթում էր։ Նա լւանում և մաքրում էր բաժակները։ Սևումեանը կարդում էր «ժամանակի» վերջին համարը և մի յօդւածի առիթով իր զայրոյթն էր յայտնում հեղինակի դէմ։ Նա կծու ծաղրով դատապետում էր յօդւածի իւրաքանչիւր տողը և իւրաքանչիւր բառը։ Օր. Աշխէնը ուշադրութեամբ լսում էր և, ըստ երևութին, համաձայն էր Սևումեանի կարծիքների հետ։

Սևումեանը «ժամանակ» լրագրի ամենաոխերիմ թշնամիներից էր։ Առանց բարկութեան, առանց դէմքի ծամածռութեան նա չէր կարող խօսել այդ օրգանի մասին։ Նորա խմբագիր-հրատարակիչը, բոլոր աշխատակիցները, համակրող ընթերցողները—իւրաքանչիւրը առանձին և ամենքը միասին շարունակ նորա ծաղրի առարկան էին լինում։ Ընտանիքում խօսք բացւէր նորա մասին թէ հասարակական հաստատութեան մէջ, փողոցում թէ ընկերական շրջանում—միշտ կարելի էր լսել Սևումեանի ֆիլիպիկանները այդ թերթի գեկավարների և ուղղութեան դէմ։ Նոյնը անում էր նա հրապարակով։ «Ձառագայթի» վերջին տարիների համարների մէջ ընթերցողները յաճախ կարդում էին նորա նամակները և յօդւածները, որոնք կամ անտորագիր էին լինում կամ



ստորագրութեան տեղ, ունենում էին որ և ծածկանուն կամ երեք աստղ. պատահում էր սակայն և իսկական ստորագրութիւն։ Եւ ինչ անարգ անուններ ու աճականներ ասես նա չէր յատկացնում իւր հակառակորդներին՝ եզուիտներ, կեղծաւոր փարիսեցիներ, բծախնդիրը, շահամոլ, ստրկահոգի, ստորաքարշ, սրբութիւն չճանաչող, անգոյն և այլն և այլն։

Օր. Աշխէնը Սևումեանի մէջ ոյժ էր տեսնում և երկրպագում էր այդ ոյժի առաջ։ Նորա աչքում այդ երիտասարդը և ազնիւ էր, և անկեղծ, և զարգացած, և ընդունակ, և հաստատ համոզմունքի տէր։ Նա ևս անձամբ «ժամանակ» լրագրի համակրողներից չէր։ Բայց երբ նորա ուղղութեան մասին խօսում էր Սևումեանը, այն ժամանակ օրիորդը խորին ատելութեամբ էր զինւում այդ թերթի դէմ։

Ոսկերչեանը և Զառիկեանը վերջապէս եկան։

—Աշխէն, թէյ,—ասաց Գարեգինը, իւր գլխարկը և հովանոցը մի կողմ դնելով։—Իսկ ուր է Ազատեանը? դիմեց նա Սևումեանին. չէ որ երէկ նա ևս խոստացաւ այստեղ լինել?

—Նա գուցէ չգայ,—պատասխանեց Սևումեանը։ Խմբագիրը նորան յանձնարարականով ուղարկեց մի պարոնի մօտ, այնպէս որ դժւար թէ յաջողւի գալ։

Օր. Աշխէնը հարցրեց Ոսկերչեանի առողջութիւնը, եղբօրից ցանկացաւ իմանալ ուշանալու պատճառը և ինքը իւր կողմից կարծիք յայտնեց, թէ, երևի, յարմար ժամանակ չեն ընտրել Բուսաբանական այգի գնալու, որովհետև երկինքը ամպամած է, երբեմն կայծակ է խփում, և կարող է անձրև գալ։

Գարեգինը նկատեց, որ այդ դատարկ բան է, անձրևից պատըսպարւելու տեղ կայ, և այդ տեղը պատրաստել է ինքը բնութիւնը, պատառելով ժայռի կուրծքը

և մի դահլիճի չափ ապաստանարան կերտելով նորա մէջ։

Զառիկեանը յոյս ունէր, որ օր. Վարթուհեանն էլ այնտեղ կը լինէր։ Գոնէ այդպէս հաւատացրել էր նորան քոյրը, հիմնուելով իւր ընկերուհու երկչոտ խոստման վրայ։ Բայց նորա յոյսը ի դերև ելաւ, և նա ցաւ զգաց։ Օր. Մարիամը չէր երևում ճեմող հասարակութեան մէջ, թէև Գարեգինը անդադար դէս ու դէն էր շրջում իւր աչքերը և նորան որոնում։

Բայց շուտով ընդհանուր խօսակցութիւն սկսւեց, և Զառիկեանի միտքը սիրոյ առարկայից տեղափոխուեց ուրիշ առարկայի վրայ։

—Այսօրւայ «ժամանակը» կարդացել ես, Գարեգին? հարցրեց Սևումեանը, ընդունելով թէյի բաժակը օր. Աշխէնի ձեռքից։

—Իրաւ, ախր նա չէ կարդացել,—նկատեց օրիորդը և սկսեց փնտռել լրագրի մէջ այն յօդւածը, որը վերաբերում էր Զառիկեանին։ Հիմա հերթը մեզ է հասել, Գարեգին։

—Ինչ կայ, բան կայ իմ մասին? հարցրեց Զառիկեանը։

—Ոտնձգութիւն և անխիղճ զրպարտութիւններ! գոչեց օր. Աշխէնը և, մատնացոյց անելով ուղած տեղի վրայ, թերթը առաջարկեց իւր եղբօր կարդալու։

—Էլ ուրիշ ինչ կարող է լինել, ասա, խնդրեմ, այս գարշելի աղբակոյտի մէջ? բացականչեց Սևումեանը, ըզզուանք արտայայտելով դէմքի վրայ։

—Կարդա, տես, ինչպէս են հայհոյել մեզ։

Գարեգինը աչքի տակովը անցկացրեց յօդւածը և ապա, դէն շպրտելով թերթը, նողկանքով արտասանեց.

—Կատաբեալ ցեղ! Տեղովը սուտ է և զրպարտութիւն! Ես գիտեմ, ով է սորա հեղինակը։

—Ի հարկ է պարզ է,—ասաց օր. Աշխէնը,—էլ ով պէտք է լինի? Մեր սևահոգին!



Զառիկեանը աւագ ուսուցիչ էր քաղաքի հայոց եկեղեցական-ծխական դպրոցներից մէկի մէջ, ուր վարժուհու պաշտօն ունէր և նորա քոյրը։ Ուսուցչական խումբը կարելի կը լինէր համարել շատ համերաշխ, եթէ միայն նորա մէջ չլինէր մի պաշտօնակից, որը շնորհիւ իւր բանսարկու, դաւասէր բնաւորութեան, դիսսոնանս էր առաջացնում մանկավարժական կազմի մէջ։ Դորան էին անւանում «սևահոգի»։ Եւ օր. Աշխէնի կասկածը անտեղի չէր, որովհետև չարամիտ յօդւածագիրը հէնց նոյն այդ պարոնն էր որ կար։ Տարին վերջանալու վրայ էր, և՝ նա, մեծ փափագ ունենալով Զառիկեանի տեղը գրաւել, այսինքն վռնտել նորան խմբի հետ և աւագ ուսուցիչ դառնալ նոյն դպրոցում, լրագրական թերթի միջոցով ծպտի արշաւանք էր սկսել իւր թշնամիների դէմ։ Նա իւր բոլոր յոյսը դրել էր հոգաբարձուներից մէկի վրայ, որի համակրութեան արժանացել էր, շնորհիւ իւր շողոքորթ լեզուի և քծնի բնաւորութեան։

Սակայն ով ճանաչում էր Զառիկեանին և գիտէր, թէ որպիսի բարեխղճութեամբ ու եռանդով էր վարում նա իւր պաշտօնը, ով ծանօթ էր նորա խմբի գործունէութեան և առհասարակ ուսումնարանի ներքին և արտաքին բարեկարգութեան, նա, անտարակոյս, արդար զայրոյթի պիտի զգար, կարդալով այն բոլոր նենգամիտ զրպարտութիւնները, որոնցով յօդւածը լեցուն էր։ Բանից դուրս էր գալիս, որ Զառիկեանը առաւօտները ուշ է գնում դպրոց, աշակերտներին դասերից արձակում է ժամանակից առաջ, դասարաններում գրատախտակների մօտ երկու երեք փունտանոց փալաններ են թափթփւած, բակը կեղտոտ է, դասատուները տգէտ են, իրանց աւանդելի առարկաները չգիտեն, ծեծը դարձրել են մանկավարժական սիստեմ...

Այստեղ հարկաւոր է նկատել հետևեալը։ Այն ժա-

մանակաց լրագիրների մէջ յաճախ պատահում էր, որ միևնոյն դպրոցի պաշտօնեաները, միմեանց հետ թշնամանալով, իրար դէմ էին դուրս գալիս և մամուլի մէջ հրապարակով իրար հայհոյում, իրար մրոտում, իրար վրայ սուր ու մեղադրանք բարձում, և ընթերցողը միտում էր շլարած, շատ անգամ դժուարանում կամ բոլորովին չէր կարողանում որոշել, թէ ով է մեղաւոր, ով արդար, որն է սուտ և որը՝ ճշմարիտ: Ամենքը խօսում էին յանուն ազնուութեան, յանուն ընդհանուր շահերի, և այն էլ ինչպիսի ոճով!

Ահա որպիսի անարժան բանակռիւների շնորհիւ է, որ մեր ձեռքերը վարժուեցին անընդհատ գրիչ շարժելու: Սեղանի շուրջը նստողները տաքացած խօսում էին յօդուածի առիթով: Օր. Աշխէնը սպառնում էր անանուն հեղինակին, որ մի րոպէ պիտի պատրաստէ նորա դէմ իւր բոլոր պաշտօնակիցների ստորագրութեամբ:

—Բարեբախտաբար, հոգաբարձուներից այն մէկը, որի վրայ է դրել իւր յոյսը այդ թշուառականը, ինձ շատ մօտ է, իմ բարեկամն է,—խօսում էր Սևումեանը, գդալով խառնելով թէյը: Ես կը խօսեմ նորա հետ: Այդ լերբը իզուր է աշխատում ձեր ոտի տակը փորել և ձեզ տապալել: Նորան այդ չի յաջողուիլ: Ընդհակառակը, նա ինքը չափաք է մնայ ձեր խմբի մէջ: Միւս տարւայ համար դուք առաջարկեցէք հոգաբարձութեան ուլտիմատում, և նա ձեզ կը յարգէ: Կամ նա, կամ դուք:

—Ի հարկէ,—միաբերան գոչեցին Գարեգինը և օր. Աշխէնը:

—Անպատճառ հարկաւոր է մի հերքում գրել և անխնայ հարուածել այդ գաղտագողի սղոսկումները,—աւելացրեց Սևումեանը: Եթէ Գարեգինը զլանայ այդ անել իւր ծուլութեան շնորհիւ, այն ժամանակ դուք կարող էք գրել, օր Աշխէն:



Փիչ յետոյ խօսակցութեան առարկան փոխուեց: Սևումեանը հաղորդեց մի նորութիւն, այն է, որ նա արդէն թոյլտուութիւն է ստացել կառավարութիւնից «մատենադարան» բանալու: Զառիկեանը իւր ուրախութիւնը յայտնեց այդ առիթով և սեղմելով նորա ձեռքը, շնորհաւորեց նորան օգտակար ձեռնարկութեան համար»

—Գրադարանը,—շարունակեց նա իւր խօսքը,—ինչ ասել կուզէ, շատ լաւ միջոց է ընթերցասիրութիւն տարածելու ժողովրդի մէջ: Բայց որպէս զի նա կարող լինի իւր նպատակին ծառայել, անհրաժեշտ է, որ գները շատ էժան լինին:

—Անկասկած! բացականչեց Սևումեանը: Այլապէս գրադարանը իւր նպատակից կը հեռանայ: Այն ժամանակ էլ ինչ տարբերութիւն կը լինի մի առևտրական ձեռնարկութեան և մի մատենադարանի մէջ?

—Դորա պահանջը վաղուց է զգացւում է այստեղ, նկատեց օր. Աշխէնը: Այնպէս որ շատ ուրախալի լուր հաղորդեցիք մեզ, պարոն Սևումեան: Շնորհաւորում եմ:

Ոսկերչեանը առաջին բաժակ թէյը ըմպելուց յետոյ, գնացել էր զբօսնելու: Յանկարծ արագ քայլերով մօտեցաւ նա սեղանին և ժպտալով ասաց.

—Գիտէք, Վարթումեանները այստեղ են:

—Այստեղ են? դուրս թռաւ Գարեգինի բերանից, և, զարմանալի բան, վախեցած մարդու պէս, նա զգաց, որ սիրտը սկսեց թրթռալ:

Քարայրի կողմից թմփերի մօտ երևացին իսկոյն օր. Մարիամը և մօրաքոյրը: Ընկերուհու անունը լսելուն պէս՝ օր. Աշխէնը շտապով վեր ցատկեց և վազեց նորա ընդ առաջ: Երբ նոքա մօտեցան, Գարեգինը բաժակը կիսատ դրեց սեղանի վրայ, այլայլուած վերկացաւ տեղից: Ոսկերչեանը աթոռի թիկունքից բռնած՝ սրտա-

տրոփ սպասում էր այն վայրկենին, երբ օրիորդի թաթիկը կը սեղմէ իւր ձեռքի մէջ։

Օր. Աշխէնը ծանօթացրեց հիւրերին իւր մօր հետ և առաջարկեց նստել։ Օր. Վարթուհեանը, երևի, ուրախութեամբ կը ցօժարէր սեղանակից լինել այդ շրջանին։ Բայց նորա մօրաքոյրը Թիֆլիսի բարբառով յայտնեց, թէ իրանք երկար ժամանակ նստած են եղել, այժմ կամենում են մանգալ։ Օր. Աշխէնը խնդրեց գոնէ մի-մի բաժակ թէյ ըմպել և կանչեց ծառային, որպէս զի պատրիրէ նորոգել ինքնաեռը։ Բայց հիւրերից թէ մէկը և թէ միւսը հրաժարուեցին։ Օր. Վարթուհեանի մօրաքոյրը, որը արտաքուստ հպարտ կնոջ տպաւորութիւն էր գործում, դէմի ծանր, բայց խիստ քաղաքավարի շարժումով իւր շնորհակալութիւնը յայտնեց։

Իսկ օր. Վարթուհեանը ասաց.

—Շնորհակալ եմ, Աշխէն, խնդրում եմ նեղութիւն չքաշես, մենք արդէն խմել ենք։

—Դուք արդէն խմել էք? հարցրեց օր. Աշխէնը զարմացած ։ Այստէղ թէ ձեր տանը?

—Ոչ, այստեղ։

—Ուրեմն դուք այստեղ էիք? Ապա ինչպէս է մենք ձեղ չենք նկատել?

—Մենք զրոտի մէջ էինք նստած։

—Դուք այրի մէջ էիք նստած?

Օր. Վարթուհեանի երեսը յանկարծակի շառագունեց, և նա աչքերը խոնարհեց դեռին, որպէս զի այդ աչքերը չմատնէին նորա վայրկենական ներքին յոյզը, եթէ դէմքի վրայ արդէն նա չէր արտայայտել։

Որքան դիւթիչ էր նա այդ րոպէին!

Ոսկերչեանը հոգեզմայլ նայում էր նորա կիսախուփ աչքերի երկայն թարթիչներին, և չէր կշտանում նայելուց!



Իսկ Զառիկեանը, նոյնքան յափշտակուած, մտածում էր. «եթէ օրիորդը կարմրում է իւր մայրենի լեզուն լաւ չիմանալու համար, դա լաւ նշան է»։

Փիչ յետոյ երկու ընկերուհիները ձեռք ձեռքի տուած՝ զրոյց անելով և ուրախ ծիծաղելով սկսեցին անց ու դարձ անել ծառուղու երկայնութեամբ։

Նոքա աւարտել են իտալան գիմնազիոնը մի տարի առաջ։ Դասարանում նոքա միշտ իրար մօտ էին նստում և միշտ սիրով էին միմեանց հետ։ Բաւական մեծ տարբերութիւն կար նոցա արտաքինի և բնաւորութեան մէջ։

Օր. Աշխէնը հասակով փոքր ինչ աւելի բարձր էր օր. Վարթուհեանից, բայց նորանից աւելի նիհար։ Երեսը թուխ, աչքերը՝ սև ածուխ, քիթը սուր, արծւի կտուցի նման, վերևի շրթունքի անկիւններում հազիւ նշմարելի ազատազ, գլխի կարած մազերը կոկ սանրած և դէպի ետ տարած այնպէս, որ լայն, փառահեղ ճակատը նայողի աչքին կը զարնէր իսկոյն։

Օր. Վարթուհեանի երեսը ընդհակառակը, չափազանց ալիտակ էր. խոշոր աչքերը ձիգ ընկած և կապոյտ, բիբերը մի քիչ վերև թռած, կզմուածքը աւելի սիրուն և համաչափ, իրանը աւելի կանացի և նուրբ։

Օր. Զառիկեանի հայեացքը՝ համարձակ, շարժուածքը՝ ազատարդու շարժուձեւերի պէս՝ ազատ, ինքը աւելի դիւրաշարժ և կենդանի, կոկետութեան մի նշոյլ անգամ, այն ինչ օր. Մարիամը գիտէր խօսելու կամ լսելու ժամանակ գլուխը դէպի մի ուսը թեքել և քաղցր ժպտալով իւր հանդարտ բիբերը խօսակցի աչքերին բևեռել։

Օր. Աշխէնը հետևում էր գրականութեանը, լրագրութեանը, սիրում էր վիճել, հետաքրքրուում էր հասարակական խնդիրներով, անդամ էր «Բարեգործական» և «Հրատարակչական» ընկերութիւնների, մի խօսքով, տո-

գործած էր իդեալներով, զեղեցիկ միտումներով։ Օր. Վարթումեանը, հասարակական իդեալների նկատմամբ, մեծացել էր համեմատաբար աւելի ձախորդ հանգամանքների մէջ։ Ամենալաւ բանը, որ նա սովորել էր իւր միջավայրից, ընտանեկան առաքինութիւնն էր։ Ընտանիքից դուրս նա շատ աղօտ հասկացողութիւն ունէր այն բոլորի մասին, ինչ որ կատարւում էր մեր հասարակական և գրական կեանքում. Բայց չպէտք է ուրանալ մի բան. նա հաճոյք էր զգում գաղափարի մարդկանց շրջանում լինել և ձգտում էր ցոյց տալիս աւելի մօտ յարաբերութիւն ստեղծել այդպիսի հասարակութեան հետ։ Դա արդէն առաջդիմութեան սկզբի քայլն է։

Նոյն իսկ այդ օր Բուսաբանական այգում նոցա միմեանց հանդիպելը մի պատահական զուգադիպութիւն չէր, այլ վաղօրօք մտածւած նախավճիռ։ Երկի թատրոնում օր. Աշխէնը իւր ընկերուհուն յայտնել էր, որ հետևեալ օրը պիտի գնան Բուսաբանական այգին թէյ խմելու։ Օր. Վարթումեանը ասել էր թէ գուցէ ինքն էլ իւր մի քանի ազգականների հետ այնտեղ լինի վաղը, որովհետև, ինչ գարունը բացւել է, դեռ ոչ մի անգամ այնտեղ եղած չէ և որ այդ նորա վաղուցւայ ցանկութիւնն էր, բայց չէր յաջողւում։

Իւր տեղումը իմ ընթերցողը կ'իմանայ, թէ ինչու այդ ընկերուհիները դեռ նոր են ձգտում իրար հետ ընտանեկան մօտ յարաբերութիւն սկսել։

Օրիորդները, ինչպէս ասացի, ճեմելով զրոյց էին անում։ Նոքա մտաբերում էին զանազան դէպքեր դպրոցական կեանքից, յիշում էին իրանց ուսուցիչներին, ընկերուհիներին։ Օր. Աշխէնը գիտէր համով պատմել։ Երբ նա մի ծիծաղաշարժ պատմութիւն էր անում, օր. Վարթումեանի քրքիջը բռնում էր, աչքերը ջրակալում էին, և նա ամուր հուպ էր տալիս ընկերուհու թևը, կարծես



ցանկանում էր ասել. «հերիք է, խնայիր ինձ»։ Օր. Զաւրիկեանը աւելի ևս ոգևորւում էր, ժպիտը հեռանում էր երեսից, օր. Մարիամի ծիծաղը էլ աւելի բռնկում էր, և նա կրծում էր շրթունքը և թաշկինակը սեղմում բերնին։

Օր. Վարթումեանի մօրաքոյրը, որ առաջ արիստոկրատական բարձրութիւնից էր նայում տիկին Զաւրիկեանի վրայ, այժմ կարծես մտերմական զգացմունքով էր համակւած դէպի նա։ Նորա հպարտութիւնը խորտակւել էր վերջինիս խոնարհութեան, բայց միևնոյն ժամանակ և անձնապաշտութեան առաջ։ Նոքա դանդաղ քայլելով խօսում էին, հարց ու փորձ անում միմեանց, թէ քանի որդի ունին, որտեղ են բնակւում, որտեղացի են, ամարանոց պիտի գնան թէ ոչ, որ ամարանոցն են գնում սովորաբար։

Ոակերչեանը կանգնած էր ընկուզենու բնի մօտ, աչքերը յառած աւազանին, որի մէջ քչքչալով թափւում էր ջուրը, հոսելով վերևի մաքուր առւակից։ Երբեմն նա երեսը դարձնում էր դէպի այն կողմը, ուր շրջում էին օր. Աշխէնը և օր. Վարթումեանը, գլխաբաց, ուրախ, ժպտերես։ Մի անգամ նորա հայեացքը հանդիպեց օր. Մարիամի հայեացքին, և նա մտածեց. «ինչու նա ետ նայեց? նա ում էր փնտռում իւր աչքերով?»

Գարեգինը և Սևումեանը, մի քիչ զբօսնելուց յետոյ, կրկին նստեցին սեղանի մօտ։ Սևումեանը մի ինչոր պատմութիւն էր անում։ Զաւրիկեանը պատարկում էր թէյի չորրորդ բաժակը և իրան ձևացնում էր, իբր թէ լսում է ընկերոջը։ Իւր անուշադրութիւնը չմատնելու համար, ստէպ նա բարձրացնում էր գլուխը, խօսակցի երեսին նայում և «այո» ու «հա» ասելով հաւանութեան նշաններ ցոյց տալիս։ Բայց նորա միտքը կողմնակի առարկայով էր զբաղւած։ Յարմար առիթներից օգտւելով,

նա իւր գողունի հայեացքը նետում էր դէպի այն կողմը, որտեղ ճեմում էին օրիորդը և Աշխէնը, որտեղից նոցա ձայնն էր գալիս:

Ամենքը կարծում էին, թէ այլ ևս անձրև չի գալ, որովհետև այն ամպը, որը նոցա անհանգստացնում էր, արդէն քաշուել էր, և երկինքը պարզել: Բայց շուտով հիւսիսային կողմից սարի գլխին երևաց փոթորկալից թուխպը, որը ծանր շարժուելով կամաց-կամաց մեծացաու երկնքի երեսը պատեց: Օրը արևի մայր մտնելուց առանց այն էլ սկսել էր մթնանալ, իսկ սևաթոյր ամպիցը աւելի ևս մռայլեց: Մանուշակագոյն կայծակին յաջորդեց որոտումը, և ապա, մի քանի վայրկեան անցած, ծառերի մէջ լսուեց խշշոց, և տերևները դողդողացին անձրևի կաթիլների ծանր հարուածներից:

Հասարակութեան մէջ իրարանցում ընկաւ: Իւրաքանչիւր ոք վրայ պրծաւ իւր գլխարկը, կամ վերարկուն, կամ հովանոցը վերցնելու: Պատսպարուելու համար բոլորեքեան վազեցին դէպի քարայրը, որը շուտով լցուեց մարդկանցով:

Այստեղ Ոսկերչեանը կանգնած էր օր. Վարթուհեանի կողքին:

—Ես շատ սիրում եմ փոթորիկը,—ասաց նա, երեսը դարձրած դէպի յորդ անձրևը: Հիանալի է!

—Իսկ ես,—պատասխանեց օրիորդը,—սաստիկ վախենում եմ կայծակից:

Ոսկերչեանի անբախտութիւնից, փոթորիկը շատ շուտ անցաւ, անձրևը դադարեց, և թրջուելու այլ ևս ոչ մի երկիւղ չկար: Զառիկեանը շտապեց իւր հաշիւը վերջացնել բուֆէտի տիրոջ հետ: Երբ նա վերադարձաւ, օր. Վարթուհեանը և նորա ազգականները, Զառիկեաններից հետ միասին ճանապարհ ընկան դէպի իրանց տները:

Ամենքը ուրախ տրամադրութեան մէջ էին: Բայց



Ոսկերչեանը աւելի ևս ուրախ կը լինէր, եթէ անձրևը երկար տևէր, և ինքը նորա հետ լինէր, նորա հետ զրոյց անէր ամբողջ ժամերով—և էլի չյագենար...

## V

Երեկոյեան օր. Աշխէնը շարադրեց «Ժամանակի» մէջ եղած յարձակողական յօդուածի պատասխանը: Իւր գրածը նա կարդաց Գարեգինին, որը մի քանի կրճատումներ արաւ և մեղմացրեց ոճը:

Հետևեալ օրը այդ գրութիւնը առաջարկուեց ըմպրոցի ուսուցիչներին և վարժուհիներին կարդալու և ստորագրելու:

Զառիկեանի պաշտօնակիցները, ինչպէս երևաց, սաստիկ զայրացած էին իրանց գաղտնի թշնամու վրայ: Ամենքը համարեա հաւատացած էին, որ յօդուածի հեղինակը իրանց անարժան պաշտօնակիցն է: Դա մի մուրթ անձնաւորութիւն էր և ծոցի գրպանում միշտ պահում էր մի յուշատետր, ուր նա արձանագրում էր դպրոցի մէջ պատահած զանազան դէպքեր, ուսուցիչների պատմած անեկդոտներ, անմեղ զրոյց և կատակներ, և նա այդ անում էր, իհարկէ, ոչ բարի դիտումներով, ինչպէս այդ ապացուցեց լրագրական նենգամիտ յօդուածով:

Դասամիջոցներին ուսուցչական սենեկի մէջ ահագին աղմուկ էր բարձրանում: Ամեն մէկի դէմքը արտայայտում էր բարկութիւն կամ զզուանք: Կասկածը աւելանում էր շնորհիւ այն հանգամանքի, որ այդ օր «սևա հոգին» շարունակ խուսափում էր պաշտօնակիցներին հանդիպելուց: Հէնց որ դասը վերջանում էր, նա իսկոյն վազում էր բակը սանների և սանուհիների վրայ հսկելու պատրուակով:

Ստորագրելուց առաջ ուսուցիչները մի քանի փոփոխութիւնների ենթարկեցին օր. Աշխէնի ներկայացրած

դրութիւնը, և պատասխանի ոճը առաջւանից աւելի խիստ ու կծու դարձաւ։ Բացի այդ, թէև մի քանիսը դէմ էին, բայց այնուամենայնիւ ձայների մեծամասնութեամբ վճռեցին առաջարկել այդ պատասխանին ստորագրելու նաև կասկածելի պարոնին։ Դա, իհարկէ, միայն մի խորամանկ միջոց էր յանցաւորին մերկացնելու, որովհետև նա կամ պիտի ստորագրէր, որ նշանակում է երկրորդ խաչտառակութիւն գործել, կամ պիտի հրաժարւէր ստորագրելուց և այդպիսով ինքն իրան ակամայից մատնէր։

Ուսուցչանոցից նորան կանչեցին, և նա եկաւ։

Օր. Աշխէնը նորա առաջ դրեց ստորագրւած թերթը և ասաց.

—«Ժամանակին» երէկւայ համարի մէջ դուք անշուշտ կարդացած կ'լինէք այն յօդւածը, որի մէջ անյայտ հեղինակը հազար ու մէկ զրպարտութիւններով շօշափում է ուղղակի մեր ուսուցչական խմբի պատիւը։ Այն ստերը հերքելու համար մենք պատրաստել ենք ահա այս պատասխանը, ամենքս ստորագրել ենք և խնդրում ենք, որ դուք էլ ստորագրէք։

Նա վերցրեց դրութիւնը և սկսեց մոքրումը կարդալ։ Նա սպրդնած էր։ Թուղթը ձեռքին դողդողում էր։ Զորս կողմից սլաքների պէս աչքեր էին ուղղւած նորա դէմքի վրայ և ուշի ուշով հետևում էին նորա շարժումներին։ Երևի թշւառականը բան չհասկացաւ կարդացածից, որովհետև նորա ուղեղը զբաղւած էր այն մտքով, թէ ինչպէս պէտք է դուրս գալ տրագիկոմիկական դրութիւնից։

—Ես հիմա գնում եմ դասի, արտասանեց նա, դնելով թերթիկը սեղանի վրայ։—Յետոյ մի անգամ էլ կը կարդամ...

—Ո՛չ, պարոն,—վրայ բերեց ուսուցիչներից մէկը,—



այստեղ փիլիսոփայական խոր մտքեր չկան, որ ասենք, դուք չհասկացաք գրւածի իմաստը։ Սորա մէջ բոլորը պարզ է։ Եթէ ցանկութիւն ունիք ստորագրելու, բարեհաճեցէք ստորագրել, իսկ եթէ ոչ...

—Ես ասացի, մի անգամ էլ պիտի կարդամ,—կրկնեց պարոնը. կան մի քանի վրիպելի կէտեր...

Եւ խօսքը կիսատ՝ նա առաւ ցուցակը և դուրս եկաւ ուսուցչանոցից։

— Ստոր արարած! գոչեց մէկը նորա ետևից։

—Սպասեցէք, պարոններ, նա դեռ ստորագրելու է,—հեգնեց երկրորդը։

—Ցիմար հո չէ, որ ինքը վեր կենայ իւր գրածի դէմ բողոքի,—նկատեց երրորդը։

—Չիմա հո պարզ է, պարոններ, որ այն յօդւածի հեղինակը մեր այս լիրբն է?

—Մ'թէ դուք մի րոպէ կասկածել էք?

—Այնքան էլ ցածութիւն!

—Եւ այս դծուծը մեր պաշտօնակիցն է!

—Կատարեալ անպատուութիւն է մեզ համար այս խաչտառակ մարդու հետ միասին ծառայելը!

—Խնդրում եմ, պարոններ, կամաց խօսեցէք,—նկատեց Զաւրիկեանը։—Երեխաները կը լսեն, լաւ չէ։ Եւ վերջապէս զանգը արդէն տւել են, և դասի գնալու ժամանակ է։ Տեսաք, նա ինչքան ճշտապահ է. իսկոյն շտապեց դասի, չուզեց նոյն իսկ մի վայրկեան կորցնել ստորագրութեան համար։

Աւազ ուսուցչի այս խօսքերի վրայ ուրախ քրքիջ բարձրացաւ խմբի մէջ։ Շուտով ուսուցիչները գնացին դասի, և դպրոցում վերականգնեց խաղաղութիւն։

Զաւրիկեանը այդ ժամին ազատ էր։ Նա ճեաց միայնակ և խորասուզւեց մտածմունքի մէջ։ «Վատ մարդիկ լինում են ամեն տեղ և ամեն ժամանակ։ Բայց ինչու

մամուլը, որ իրան հասարակաց մտքի ղեկավար է յայտարարում, ինչու մամուլը թոյլ է տալիս այդ վատ մարդկանց ասպարէզ գալ և անգութ արշաւանք գործել բարեխիղճ աշխատաւորների դէմ? Ինչու մարդ չպէտք է կարողանայ հանգիստ սրտով իւր սիրած գործով պարապել? Միթէ դա մի անէծք չէ մեր ժամանակի համար, որ մեզանից ոչոք իւր պատիւը ապահով չէ կարող համարել լրագիրների մէջ վխտող զեռունների կողմից? Եղիր պարտաճանաչ, որքան կ'ուզես, եղիր շիտակ և գործունեայ, դարձեալ քեզ չեն խնայիլ, և հէնց վաղը և եթ զանազան գրչակներ ինչ տեսակ սև բծեր ասես չեն դրոշմիլ անարատ անունիդ վրայ!...»

Այսպէս էր մտածում Զաւրիկեանը։ Աննկատելի կերպով ժամն անցաւ։ Լսեց զանգի ձայնը, և ճիչերով ու աղաղակներով դուրս թափեցին աշակերտները և աշակերտուհիները իրանց դասարաններից։

Վերջին դասամիջոցին ուսուցիչները շրջապատեցին տխրահաչակ պաշտօնակցին, բայց սա այժմ բացէիբաց հրաժարւեց ստորագրութիւն տալուց, առարկելով, որ ինքը վճռել է չխառնւել լրագրական բանակռիւների մէջ։ Ներկայ եղողների միահամուռ, սպանիչ քրքիջը եղաւ այդ խօսքերի պատասխանը։ Այնուհետև էլ հանգիստ չտւին խեղճին։ Նորան հալածում էին ակնարկներով, չար կատակներով, ծաղրով և արհամարհական նշաններով։ Նա շատ նման էր գամփռներից հալածւած գայլի։

Զաւրիկեանը, տեսնելով որ ուսուցչական ամբողջ խումբը մէկի դէմ է կանգնած և մեծահոգութեան նշոյլ անգամ չէ կամենում ցոյց տալ յանցաւորի վերաբերմամբ, սաստիկ խղճահարւեց։ Նա ստիպւած եղաւ նոյն իսկ մօտենալ մի քանիսին և նկատողութիւն անել, ասելով.

—Պարոններ, անգթութեան էլ չափ ու սահման կը լինի թէ ոչ?



Բայց ով կը լսէր։

Այդ օրը ուսուցչական խմբի «պատասխանը» տարան յանձնեցին «Ճառագայթի» խմբագրութեանը, որը խոստացաւ զետեղել նորան լրագրի առաջիկայ համարներից մէկում։

## VI

Երբ Ոսկերչեանի ծանօթներից մի քանիսը իմացան, որ նա վճռել է թողնել ուսումը, սկսեցին նորան զանազան խորհուրդներ տալ։ Մէկը ցանկութիւն էր յայտնում, որ նա գոնէ գիմնազիոնը աւարտի և ապա միայն ձեռնամուխ լինի որ և է գործի։ Միւսը յորդորում էր նորան ետ կենալ արտիստ դառնալու դիտաւորութիւնից, համարելով այդ միտքը անմտութիւն, քանի որ հայ դերասանի վիճակը խախուտ է և անապահով։ Մի ուրիշը ջանք էր գործ դնում համոզել, որ նա գնայ Մոսկւայ կամ Պետերբուրգ և մտնի մի որ և է դրամատիկական ուսումնարան։

Այս բոլորը լսում էր Ոսկերչեանը և գլուխը շարժելով բացականչում.

—Ա՜խ, բարեկամներիս խորհուրդներից իմ գլուխը պտոյտ է գալիս! Նա այդ ասում էր, ինչպէս մի մարդ, որ դերազանց կերպով կշռադատել է իւր անելիքը։

Վերջին անգամ տեսնելուց մի երկու օր անցել էր, և Զաւրիկեանը նորից եկաւ Արտաշէսի մօտ՝ նորա ապագայի մասին յատուկ խորհրդակցելու նպատակով։ Բայց արդէն ուշ էր։ Ոսկերչեանը յայտնեց, որ նա ետ է վերցրել իւր ծննդականը և ծաղկի վկայականը, որ իւր անուն ազգանունը ջնջւած է VII-դ դասատան ցուցակից։

—Ինչ ես ասում, Արտաշէս? Արդէն վերցրել ես թղթերդ? հարցրեց Գարեգինը զարմանքով և յանկարծակի վեր ցատկելով նստած տեղիցը։

—Ա՛յ, եթէ չես հաւատում, աչքովդ տես,—ասաց Ոսկերչեանը՝ւ, բերելով վկայականները, ցոյց տուց նորան։

Զառիկեանը ապշած հայեացքով մի քանի անգամ ոտից գ՝գլուխ չափեց իւր բարեկամին, անբաւականութեամբ գլուխը շարժեց և հազիւ զսպած վրդովմունքով արտասանեց.

—Արտաշէս, դու խելագարւել ես!

Բայց Արտաշէսը ուրախ էր և ինքնագոհ ժպիտով նայում էր Գարեգինի երեսին, որի վրայ այդ միջոցին լրջութեան դրոշմ էր երևում։

—Սիրելիս,—խօսեց նա,—արդէն բանը բանից անցել է։ Ես այրել եմ նաւը իմ եռևից, և էլ անկարելի է վերադառնալ։ Հաշտւիր իմ մտքի հետ, Գարեգին։ Նօտիր, խնդրում եմ, և լսիր ինձ։ Ես քեզ կը պատմեմ, թէ ինչ պէտք է անեմ այսուհետև։

Զառիկեանը նստեց և, հոգոց հանելով, ասաց.

—Պատմի՛ր, տեսնենք, ինչ ես պատմում։

—Դու գիտես, Գարեգին, որ Ադամեանը շուտով պիտի տայ իւր վերջին ներկայացումը և յետոյ ուղևորւի Ռուսաստան զանազան քաղաքներում ներկայացումներ տալու?

—Լաւ, յետոյ?

—Ես էլ պիտի գնամ նորա հետ։

—Բայց նա համաձայն է քեզ վերցնել իւր հետ?

—Ինչու պէտք է չհամաձայնւի?

—Դու իրան տեսել ես?

—Երէկ ես նորա մօտ էի։ Ճիշտ է, այդ մասին ես չկարողացայ նորա հետ առանձին խօսել, որովհետև նորա մօտ շատ մարդիկ կային։ Բայց ինձ թւում է, որ նա ուրախ կը լինի մինչև անգամ այդ բանի համար։

—Այդ հարց է։ Դէ՛ ես, ընդհակառակը, կարծում եմ, որ նա քեզ չի առնիլ իւր հետ։ Եւ ահա ինչու։



Եթէ նա ընկերակցի կարիք զգայ, յամենայն դէպս չի ցանկանալ մի անփորձ երիտասարդի վերցնել իւր հետ, այլ եղած ոյժերից լաւագոյնին կ՝ընտրէ։

—Տեսնենք։ Ես յոյս ունիմ։ Այս օրերս նորան դարձնել պիտի տեսնեմ։ Ես խնդրել եմ, որ նա կարդայ իմ պիեսը...

—Որը?

—Վերջինը, «Ընտանիքի բաղդը»...

—Լաւ, լաւ, յետոյ?

—Նա պիտի կարդայ և կարծիք յայտնէ։ Նորա կարծիքը ինձ շատ հետաքրքրում է։ Երևակայիր. յանկարծ բանից դուրս գայ, որ Ադամեանը հաւանել է իմ դրաման, և մի գեղեցիկ օր հասարակութիւնը կարդում է աֆիշաների վրայ. «Հայոց դերասանական խումբը մասնակցութեամբ պ. Ադամեանի առաջին անգամ կը ներկայացնէ «Ընտանիքի բաղդը», դրամա հինգ գործողութեամբ, հեղինակութիւն Արտաշէս Ոսկերչեանի»։ Օհ, այն ժամանակ... Սպասիր, սպասիր, Գարեգին։

—Այո, սպասենք, տեսնենք,—խօսեց Զառիկեանը քիչ մտածելուց յետոյ։ Ես տեսնում եմ, որ դու կատակ չես անում. վճիռդ վճիռ է։ Յաջողութիւն եմ ցանկանում, Արտաշէս։ Երանի մինչև կեանքիդ վերջը երբէք չընկճւես և միատ հաստատակամ այնպէս, ինչպէս այժմ քեզ ցոյց տւիր! Յ՝տեսութիւն։

Մի քանի օրից յետոյ Ոսկերչեանին յաջողւեց այն այցելութիւնը, որին նա վաղուց է փափագում էր։ Նա շատ ուրախացաւ, երբ տեսաւ, որ արտիստը միայնակ է։ Ադամեանը հագած էր կապտագոյն վենգերկա։ Նա նստած էր աթոռի վրայ և փոքրիկ վրձինով իւր նոր պատրաստած նկարն էր ուղղում։

—Ներեցէք, պարոն Ադամեան, ես ձեզ, կարծեմ, խանգարեցի,—ասաց Ոսկերչեանը՝ բանալով սենեկի դուռը և շեմքի վրայ կանգնելով։

—Խնդրեմ, խնդրեմ, ներս եկէք,—պատասխանեց նկարիչը, վայրկենական հայեացք ձգելով այցելուի վրայ։ Ինչու կանգնած էք? Նստեցէք, խնդրեմ։ Ես այս րոպէիս գործս կը վերջացնեմ, այս րոպէիս։

Ոսկերչեանը նստեց Աղամեանից ոչ այնքան հեռու և սկսեց դիտել նկարը և հետևել վրձինի շարժումներին։ Արտիստը աշխատում էր լուիկ։ Մերթ գլուխն էր մօտեցնում իւղանկարին և զգուշաբար ուղղում նորա վրայ մի որ և է բան, մերթ աթոռի թիկունքին յենելով ուսերը, նայում էր ակնապիշ, և այդ րոպէներին աչքերի կոպերը իրար մօտենալով դողդողում էին և կրկին լայն բացւում։

—Առայժմ այսքան,—խօսեց վերջապէս նկարիչը, բաւականութեան շարժում անելով և վերկենալով տեղից։ Փիչ էլ սպասեցէք, ես իսկոյն կը գամ։

Այդ ասելով նա շփեց ձեռքերը և մտաւ իւր ննջարանը, որը բաժանուած էր ընդունարանից փայտեայ շագանակագոյն պատնէշով, ու սկսեց այնտեղ լուացւել։

Ոսկերչեանը երկու քայլ առաջ գնաց և սկսեց մօտիկից նայել պատկերին։ Դա մի փոքրիկ իւղանկար էր և ներկայացնում էր բազմանիստ բաժակ, գդալը միջին և մինչև կէսը մոյգ թէյ լցրած։ Գողարիկ բան էր, աչքի ախորժելի։ «Ահա ինչ է նշանակում հարուստ ընդունակութիւններ ունենալ», անցաւ Ոսկերչեանի մտքով. «հանճարաւոր դերասան և շնորհալի նկարիչ... բայց ինչ եմ ասում. նա բանաստեղծ էլ է»!

Եւ ապա, երբ նա երեսը դարձրեց դէպի հակառակ կողմը, նորա հայեացքը կանգ առաւ պատից կախած երկու դափնեայ պսակների վրայ, որ ստացել էր արտիստը իւր վերջընթեր ներկայացմանը. նոքա դեռ թարմ էին և երկար ժամանակ թարմ ճնալու յոյսեր էին տալիս։



Իրան Աղամեանի հետ համեմատելու միտքը ինքն իրան ծագեց Ոսկերչեանի գլխումը։ Բայց ինչ համեմատութիւն!... Նա ինքն էլ չհմացաւ թէ ինչու յանկարծ տխրեց, բայց սաստիկ տխրեց։ Մնկները մեքենաբար կռացան, նա ընկաւ բազկաթոռի վրայ. արմունկը կրթնեց կլոր սեղանի եզրին, գլուխը հանգստացաւ ձեռքի ափի վրայ, և մատները կորան գեղեցիկ սև գանգուրների մէջ։

Արտիստը երևաց վերջապէս։ Սիրալիր ժպիտով կըրկին բարևեց երիտասարդ հիւրին, սեղմեց ձեռքը և, ներողութիւն խնդրելով սպասել տալուն համար, նստեց նորա կողքին բազմոցի վրայ։

—Ձեր այս նկարը ինչ աքանչելի է, պարոն Աղամեան,—խօսեց հիւրը։ Մանաւանդ թէյը ճրքան բնական է!

—Իսկ բաժակը? մանկան պարզութեամբ հարցրեց արտիստը։

—Բաժակն էլ շատ սիրուն է։

—Գիտէք, պարոն Ոսկերչեան, այնքան էլ դիւրին բան չկարծէք բաժակին իսկական գոյն տալը։ Սպակին օդի գոյն ունի, իսկ ներկերով օդի գոյն պատրաստելը բաւական դժւար է։ Այժմ, եթէ՛ուզէք, ես ձեզ ցոյց տամ իմ մի ուրիշ իւղանկարս, տեսնեմ այնել կը հաւանէք։

—Խնդրում եմ։

Մի խճճայ մոխրաման, վրան՝ պապիրոս, պապիրոսի ծայրին մոխիր, մոխրի տակից երևում է մարող կրակը. ծուխն էլ իւր կարգով—ահա այն մանրանկարի բովանդակութիւնը, որ ցոյց տւեց Աղամեանը հիւրին։ Վերջինս յայտնեց իւր հիացքը։

—Այդ էլ սիրուն է,—ասաց նկարիչը. հա, ես է հաւանում եմ։ Բայց մենք ինչ նկարիչներ ենք? նկարը պէտք է այնքան բնական լինի, որ մենք խաբւենք, շփոթենք իսկականին հետ և էլ չասենք թէ ինման է բնա-

կանին», այլ որ «սա ինքը բնութիւնն է»։ Ջևկսիսը մի ողկոյզ նկարեց, և թռչունները խաբեցին, որովհետև, իսկական խաղող կարծելով, նկան պատուղները կոցահարելու։ Ահա ինչպէս պիտի լինի նկարը։ Գեղարուեստը որ կայ, երկրորդ բնութիւնն է։ Տարբերութիւնը այն է միայն, որ բնութիւնը Աստծոյ ստեղծագործութիւնն է, իսկ գեղարուեստը՝ մարդու ստեղծագործութիւնը. առաջինի մէջ արտափայլում է երկնային հանճարը, իսկ երկրորդի մէջ՝ մարդկային հանճարը։

Ինչ արտիստ է այն դերասանը, որը չգիտէ իլլիւզիոն, պատրանք առաջ բերել։ Նոյնպէս և բանաստեղծութիւնը. եթէ նա անզօր է յափշտակելու մեր հոգին մինչ այն աստիճան, որ մենք ամեն ինչ մոռանանք և մի վայրկեան ապրենք նորա գործած տպաւորութեամբ, էլ ինչ բանաստեղծութիւն է այն բանաստեղծութիւնը...

Նա այդ րոպէին ոգևորուած էր։ Աչքերը լայն բացուում էին, և բիբերը արագ շարժում սպիտակուցի հետ։ Իւրաքանչիւր նոր միտք, նոր զգացմունք ցոլանում էր նորա դէմքին, ձայնի և ձևերի վրայ։ Խօսքերը թափուում էին կարկուտի պէս։ Գալիս էր րոպէ, որ կարծես ուրիշի ներկայութիւնը չէր զգում և մենախօսում էր։ Նա շարունակ օդի մէջն էր նայում, երբեմն միայն վառվռուն հայեացքը սահում էր Ոսկերչեանի դէմքի վրայով։

Ոսկերչեանը ձայն ծպտուն չէր հանում։ Այդ միջոցին Ադամեանը նորա համար մի կենդանի նկար էր, որին հարկ էր միայն լսել, վրան նայել և հիանալ։

Կարճատև ընդհատումից յետ՝ արտիստը շարունակեց.

— Գանք այժմ ձեր թատերգութեան։ Կարդացի, մինչև վերջ համբերութիւն ունեցայ կարդալու։ Բայց այդ ինչ բան է, թոյլ տուէք ինձ ձեզ հարցնել, պարոն Ոսկերչեան? Եթէ ողբերգութիւն է, ապա ուր է գործո-



ղութիւնը? Եթէ վէպ է, ապա ինչու նման է ողբերգութեան? Ես ձեզ անկեղծ ասեմ, և խնդրեմ չնեղանաք. ձեր գրածը անյաջող բան է։

— Ես ինքս այդ զգում էի, պարոն Ադամեան։ Բայց դա իմ առաջին...

— Այո, գիտեմ, ինչ կ'ուզէք ասել։ Թոյլ է, շատ թոյլ է։ Եւ ինչ շատ սիրում էք դուք բարոյական խրատներ կարդալ գործող, կամ, աւելի ճիշտ, խօսող անձանց բերնով։ Բայց դրամաները մոռալ չեն վերցնում։ Մոռալը մեռցնում է ողբերգութիւնը։ Այնտեղ բոլորը պիտի բնական լինի, կենդանի լինի, շարժուն լինի։ Արդարև, պիեսի մէջ կան տեսարաններ, որ իրականութիւն են յիշեցնում։ Բայց գեղարուեստական տեսակէտից նայելով, ընդհանուր առմամբ գործողութիւնները և տիպերը միմեանց հետ թոյլ կապրած են. միմեանցից չեն բղխում, կան երևոյթներ, որ աւելորդ են և նպատակին չեն ծառայում։ Ինչ որ իրական է, դուք կարծում էք, պէտք է անպատճառ մտցնել հեղինակութեան մէջ? Ո՛չ, հազար անգամ ո՛չ։ Այլ ամեն բան հարկաւոր է գեղարուեստօրէն մշակել, ընտրել կարևորագոյն դիպուածները, պատահականը դուրս վռնտել, այնուհետև բոլորը խելացի կերպով դասաւորել և հոգեբանական կապերով շղթայել իրար հետ այնպէս, որ միացած՝ սիրուն ամբողջութիւն կազմեն։ Զգիտեմ, պարոն Ոսկերչեան, ես ձեզ կարո ղացայ հասկացնել իմ միտքը?

— Հասկացայ, պարոն Ադամեան, դուք ասում էք, որ անհրաժեշտ է կարևոր դէպքերի մի այնպիսի կոմբինացիա...

— Այո, այո, ճիշտ այդպէս. կոմբինէզոն։ Այդ լաւ ասացիք։ Այդպէս ինձ օգնեցէք։ Դէպքերի խելացի կոմբինէզոն...

Ոսկերչեանը կամեցաւ խօսել, բայց խօսքը լեզուի

ծայրին ճնաց, որովհետև արտիստը, վայրկենական լռութիւնից յետոյ՝ իսկոյն շարունակեց.

—Ներողութիւն։ Արդարութիւնը չմոռանալու համար, ես ձեզ մի բան պէտք է ասեմ։ Որքան էլ անյաջող լինի ձեր այս առաջին անարւեստ փորձը, այնուամենայնիւ նորա մէջ տաղանդի նշաններ ես նշմարում եմ։ Դուք ապագայում կարող պիտի լինիք յօրինել բեմական գործեր։ Աշխատեցէք. դուք դեռ շատ երիտասարդ էք։ Բայց իմացէք, որ ձեր առաջին յաջողած ողբերգութիւնը ես կը փայլեցնեմ բեմի վրայ։

Շուտով խօսակցութեան առարկան փոխուեց։ Ոսկերչեանը յայտնեց թէ ինքը սիրում է թատրոնը և վճռել է իրան նուիրել բեմին, միայն ցանկանում է լսել նորա կարծիքը և հետևել նորա խորհուրդներին։ Այդ առիթով Ադամեանը գլխի խորհրդաւոր շարժումով ասաց.

—Բեմը վտանգի ասպարէզ է այն մարդու համար, որին Աստուած ի բնէ օժտել է ընդունակութեամբ. բայց միևնոյն ժամանակ նա թշուառութիւնների և անկման ասպարէզ է այն անձանց համար, որոնք այտեղ սէր ունէին, իսկ այնտեղից բան ստացած չէին։

Վերջին խօսքերը արտասանելիս՝ նա ձախ ձեռքը դրեց կրծքի վրայ, իսկ աջը պարզեց դէպի երկինք։

—Եթէ,—շարունակեց նա,—դուք ձեր մէջ զգում էք սէր և կարողութիւն, ելէք բեմ և այդ մասին մի հարցրէք ոչոքի։ Բայց դուք բեմ ելած էք երբ և իցէ?

—Այո, սիրողների հետ։ Բայց կատարածս դերերը այնքան չնչին դերեր են եղած, որ...

—Այդ ոչինչ։ Գլխաւորը սէրն է, ձիրքը և աշխատանքը, մնանաւանդ այս վերջինը։ Այդ չմոռանաք երբէք։ Եթէ դերասանը ինքը իւր վրայ երկար ժամանակ չաշխատեց, իմացէք, որ նորա տաղանդը կը խեղդւի սաղմի մէջ։

—Բայց բեմական ուսումը անհրաժեշտ է դերասանի համար?

—Բեմական ուսում? Չը՛։ Ինչ ասել է բեմական ուսում? Մեր ուսումնարանը բեմն է և մեր առանձնասենեակը. մեր ուսուցիչը մենք ինքներս և կենդանի օրինակները։ Դերասանը տանը պիտի կարդայ իւր դերը, մտածէ, ուսումնասիրէ։ Մի այսպիսի տրիւմֆի առջև նա պիտի ձևէ չափէ իւր շարժուձևերը, դիտէ իւր հայեացքը, դիմագծերի փոփոխութիւնները նկատէ։ Եւ շիտակ այնպէս, ինչպէս մի կէս ժամ առաջ ես ուղղում էի իմ իւզանկարը, դերասանն էլ հայելու առջև կանգնած՝ պիտի ջանայ գեղեցիկ դարձնել իւր ձևերը, եթէ տգեղ են, շահել, եթէ խորտ ու բորտ են։ Ահաւասիկ մեր դպրոցը։ Ապա թէ ոչ, ինչ անէ բեմական ուսումը, եթէ մարդ ի բնէ անտի զուրկ է տաղանդից? Ասացէք, տեսնեմ, Ադամեանը որտեղ է բեմական ուսում առել? Բայց Ադամեաններ շատ ունին հայերը?

Մեծ արտիստի այս միակողմանի, բայց օրիգինալ կարծիքը դերասանի ուսման մասին խիստ հաճոյ թւաց Ոսկերչեանին։

Յարմար վայրկեան ներկայացաւ երիտասարդի համար իւր այցելութեան բուն նպատակին դիմելու։ Առիթը բաց չթողեց նա և ասաց.

—Պարոն Ադամեան, ես լսել եմ, որ «Օթէլլօն» ներկայացնելուց յետոյ՝ դուք մտադիր էք ուղևորել Ռուսաստան և զանազան քաղաքներում ներկայացումներ տալ։ Ես խնդրում եմ, եթէ հնարաւոր է, ինձ էլ վերցնէք ձեզ հետ։ Ադամեանը ցաւելով յայտնեց, որ այդ խնդիրքը նա անկարող է կատարել, պատճառ բերելով մի կողմից՝ իւր նիւթական ազատութիւնը, միւս կողմից՝ սկսնակի

անկորձութիւնը։ Այդ բանը ապագային յանձնելով, նա խորհուրդ տւեց Ոսկերչեանին վարժւել՝ տեղական խմբի հետ ներկայացումներ տալով։

Երիտասարդ հիւրը կամեցաւ մի քանի առարկութիւններ անել նորա խօսքերի հակառակ, բայց արտիստը ընդհատեց նորան, ասելով.

—Զգիտեմ, գուցէ ես սխալւում եմ, բայց այս իմ կարծիքս է։ Այդ երեք նախապատրաստութիւնները մի այնպիսի շեշտով, այնպիսի հաստատամտութեամբ արտասանուեցին, որ ապագայ դերասանին ճնաց միայն լռել և գլուխը տխուր խոնարհել։

Արտիստը նկատելի կերպով սկսել էր յոգնածութիւն զգալ։ Վերջումը նա սակաւ էր խօսում և այնքան էլ ուշադրութեամբ չէր լսում իւր հիւրին։ Ակնյայտնի էր, որ նա ձանձրացել է կամ որ և է պատճառով ցանկանում է մենակ լինել։ Ոսկերչեանը ուշ հասկացաւ նորա անհանգստութեան պատճառը։ Արտիստը սկսեց զանգատւել իւր գլխացաւից։ Երիտասարդը վեր կացաւ։

—Ինչու շտապում էք? հարցրեց հիւրընկալը, իւր քաղաքավարական պարտքը կատարելով։

—Ժամանակ է,—պատասխանեց Ոսկերչեանը ժպտալով։

—Ա՛խ, գլուխս, անպիտան գլուխս ինչքան տանջում է ինձ!

Ոսկերչեանը գլխարկը ձեռքումը բռնած՝ սպասում էր, որ արտիստը ձեռքը հեռացնի ճակատի վրայից, որպէս զի ինքը «մնաք բարով» ասի և մեկնի։ Ագամեանը խնդրեց հիւրին սպասել մի րոպէ՝ ասելով.

—Ես կամենում եմ յիշատակի համար ձեզ ընծայել իմ լուսանկարս։

Նա առաւ իւր փոքրագիր պատկերներից մէկը և



վրան մակագրեց. «Պ. Ագամեանից պ. Ոսկերչեանին»։

Ոսկերչեանը շնորհակալութեամբ ընդունեց այդ «թանկագին ընծան» և անմիջապէս դուրս եկաւ սենեկից։

Ագամեանի մօտ նա եկել էր ուրախ, բայց հեռանում էր ժժգոհ և տրտում։ Կարծես մէկը վիրաւորած լինէր նորա ինքնասիրութիւնը։ Բայց ինչ էր այդ օտարոտի զգացման շարժառիթը—նա այդ չկարողացաւ հասկանալ։ Դորա պատճառը գուցէ այն էր մասամբ, որ նա երբէք իւր կեանքի մէջ այնքան խորը չէր զգացել իւր ազգութիւնը, ինչպէս պոլսեցիք կ'ասէին, որքան նա այդ զգաց այսօր, մեծ արտիստի բնակարանում։

Ոսկերչեանը այդտեղից դնաց Զաւրիկեանների տունը և բոլորը պատմեց իւր բարեկամին։

—Ես քեզ չասացի,—նկատեց Գարեգինը,—չասացի, որ նա քեզ չի վերցնիլ իւր հետ?

—Ախտոս, ես մեծ յոյս ունէի!... Հիմա չգիտեմ, որն է լաւ. մտնել դերասանական խմբի մէջ թէ նորանից անկախ գործել։

Զաւրիկեանը ոչինչ չպատասխանեց։

—Դու ինչ խորհուրդ կը տաս, Գարեգին? հարցրեց Արտաշէսը՝ իւր բարեկամի լռութեան վրայ զարմացած։

—Սիրելիս,—խօսեց Զաւրիկեանը,—ես տեսնում եմ, որ իմ խորհուրդները բանի տեղ չեն անցնում։ Ինչիդ է պէտք իմ կարծիքը այդ մասին? Ես միայն այսքանը կ'ասեմ. այն ճանապարհը, որ դու ընտրել ես, շատ նեղ է և տատանոտ։ Դու արդէն ոտդ դրել ես այդ ճանապարհի վրայ։ Յարդարիր ուրեմն դու ինքդ քո շաւիղը։

—Հարկաւոր է լաւ մտածել,—ասաց Ոսկերչեանը և գլխարկն առնելով, կամեցաւ մեկնել։

Դրան մօտ հանդիպեց օր. Աշխէնին։ Սա յայտնեց, որ վաղը չէ, միւս օրը իւր տարեդարձն է, և խնդրեց նորան շնորհ բերել իրանց մօտ։

—Անպատճառ,—պատասխանեց Ոսկերչեանը շեշտով և սեղմելով օրիորդի ձեռքը, շտապեց իւր բնակարանը։ Նա մեծ կարիք էր զգում առանձնանալու, իւր ցրուած մտքերը ամփոփելու, և այդ ներքին պահանջը, ինչպէս մի խթան, կարծես աշտանակում էր նորան, և նա արագ քայլում էր՝ առանց դէս ու դէն նայելու։

## VII

Օր. Աշխէնի տարեդարձի օրն էր։ Զառիկեանները վճռել էին այս անգամ մեծ շուքով կատարել այդ տօնախմբութիւնը, որովհետև անցեալ տարի, մօր տկարութեան պատճառով, հանդէսը շատ անշուք անցաւ։

Տիկին Զառիկեանը վեր էր կացել առաւօտեան կանուխ և թևերը կշտած՝ հաւաքում էր սենեակները, տունը-տեղը մաքրում կարգի բերում, և հասարակ տնային զգեստով օր. Աշխէնը օգնում էր իւր մօրը։ Աշխատանքի մի մասը կատարուած էր արդէն նախընթաց երեկոյ. մշակը թափ տուել, փայտով ծեծել էր գորգերը և կապերտները. ծառան աւլել էր բակը, սանդուխքները, իսկ դահլիճի պարկէտը այն աստիճան խստակած մոմած էր, որ նա փայլում էր նոր յղկած սեղանի երեսի պէս։ Առաստաղից կախուած ջահի մոմակալների մէջ շրջանաձև տնկուած էին մոմեր. անկիւններում կլոր սեղանների վրայ շքեղ ծաղկամանների մէջ դրուած էին վարդեայ փնջեր։ Պատերի մօտ երկու տեղ թախտեր կային՝ ծածկուած պարսկական թանկագին գորգերով, և նոցա վրայ ճաշակով դարսուած էին թաւշեայ ալ մութաքաներ և ոսկեթել բարձեր—օր. Աշխէնի ձեռագործը։

Առաւօտեան շնորհաւորութիւնները տևեցին մինչև ճաշը։ Եկողներին հիւրասիրում էին ղաֆէով և զանազան խմորեղէններով, և իւրաքանչիւրին առանձնապէս խնդրում էին շնորհ բերել երեկոյեան ժամանակն անցկացնելու։ Օրիորդ Աշխէնը բաւական ընծաներ ստացաւ այդօր։ Օր. Վարթումեանը տուեց նորան իւր լուսանկարը՝ սիրուն քանդակներով զարդարուած սպիտակ մարմարեայ շրջանակի մէջ։ Հասկանալի է, թէ որպիսի հաճոյք պատճառեց այդ լուսանկարը յատկապէս Գարեգինին, որը օգուտ էր քաղում ամեն մի առիթից քրոջ սենեակը մտնելու և նորա գրասեղանի վրայ դրած պատկերի վրայ զմայլելու։ Մօրեղբայրը ընծայեց մի փառահեղ ալբոմ՝ կազմը բոցագոյն պլիւշ և պլիւշի վրայ ոսկեձոյլ ռելիէֆ։ Սեւումեանից ստացաւ Նադսոնի «Բանաստեղծութիւնների» փառակազմ հատորը, մի գիրք, որ այն ժամանակ շատ էր կարդացւում, նորութիւն լինելով ընթերցողների համար։ Ոսկերչեանը մատուցեց մի գեղեցիկ ծաղկափունջ՝ մէջը իւր բանաստեղծական «Նուէրը»։ Բացի այդ բոլորից, օրիորդը ստացաւ նաև մի քանի այլ երկրորդական ընծաներ։



Երեկոյեան, մութը ընկնելուն պէս, Զառիկեանների տունը լուսաւորուեց։ Փողոցի անցորդները անշուշտ պիտի մտածէին, որ այնտեղ հարսանիք կամ մի ուրիշ հանդէս կայ։ Երկայն պատշգամբում երկու տեղ վառւում էին լապտերներ՝ լուցուած մաքրուած ապակիներով, և լուսոյ ճառագայթները խաղում էին բակի մէջ բարձրացած երկու ակացիաների կատարների վրայ։

Դահլիճի լուսաւորութիւնը այնքան առատ էր, որ հեռուից նշմարւում էին այնտեղ ջահը, կանդելաբրը և երթևեկող անձանց դէմքերը պրոֆիլ և en face.

Չէր անցնում մի երկու-երեք րոպէ, որ դրան զանգը չքաշէին։ Օրիորդ Աշխէնը՝ իւր կրեմի գոյն շրջազգեստը ֆրֆռացնելով վազեվազ շտապում էր դէպի սանդուխքների գլուխը՝ հիւրերին դիմաւորելու։ Քչքչում, ընկերուհիների հետ համբուրւում էր, սիրալիր ողջոյնով թօթւում էր պարոնների ձեռքը և առաջնորդում դէպի

դահլիճը։ Ներս գնալով, նա ծանօթացնում էր անծանօթներին և իւրաքանչիւրի բնաւորութեան համեմատ մի խօսք էր գտնում ասելու։ Նստելով մէկի կողքին՝ առողջութիւնից էր տեղեկանում, միւսին՝ օրւայ նորութիւններից էր հարցնում. երբ նկատում էր, որ հիւրերից մէկնումէկը կղզիացած է և լուռ է, նա սթափեցնում էր նորան, ժպտում երեսին, բարձր ձայնով հետը խօսում, բայց հէնց որ զանգը հնչում էր, նա հապճեպ դուրս էր վազում սեղանից։

Օր. Աշխէնի առանց այն էլ կենդանի բնաւորութիւնը այժմ, ուրախ տրամադրութեան շնորհիւ, մի արտասովոր զրաւչութիւն ու փայլ էր ստացել։

Մարդկանց հետ վարւելու շնորքը, որ ամեն մարդ չունի, օրիորդի մէջ մի տաղանդ էր։ Հիւրերի թիւը երեսունից անց էր, բայց նա այդ տարբեր հասակների, սեռերի և բնաւորութեանց խառնակութեան մէջ իրան բնաւ չէր կորցնում։ Նա գիտէր զբաղեցնել թախտի վրայ ծալապատիկ նստած պառաւին, ոչ պակաս սրախօսութեամբ պատասխանել սրամիտ պարոնի նկատողութեանը և ընկերուհու վրայ կատակով մատը թափ տալ, ասելով. «էյ, օրիորդ, նայիր, ինձ հո ճանաչում եսդ» և այսպէս ամեն մէկի հետ։

Համարեա բոլոր հիւրերը ժողովւած են, և դահլիճը ծայրէիծայր լիքն է։ Բռնւած էր նոյն իսկ ընդունարանը, որը դահլիճի կից մի ամփոփ սենեակ էր։

Այնտեղ դիւանի բարձին կռնակը յենած՝ թեք էր ընկել Ազատեանը մի այնպիսի հպարտութեամբ, որ կարծես Ռոշիլդի գանձերի տէրը նա լիներ։ Նորա մի կողմում բազկաթոռի մէջ ընկղմած էր Սևումեանը, իսկ սորա դիմաց նստած էր Զառիկեանը։ Այնտեղ էին և մի քանիսը վերջինիս պաշտօնակիցներից։

Խօսք ու զրոյց էր բացւել երիտասարդների մէջ։



Զառիկեանի հարցին՝ ստո՞յգ է այն լուրը, իբր թէ «Ճառագայթի» խմբագիրը գնում է Եւրոպա, Սևումեանը պատասխանեց գլխի բացասական շարժումով.

—Ո՛չ, եթէ այդպիսի մտադրութիւն ունենար, նա մեզ յայտնած կը լիներ այդ մասին,—ասաց և նայեց իր քարեկամ Ազատեանի երեսին։

Ազատեանի դէմքին խաղաց խորամանկ ժպիտ, որի խորհուրդը ոչ ոք չհասկացաւ։

—Զարմանալի է,—մէջ մտաւ «Ճառագայթի» աշխատակիցը,—ինչպէս արագ տարածւում են լուրերը. իրաւ է, մի այդպիսի բան նա ինձ ասաց երէկ։

—Երէկ երեկոյեան ես խմբագրատանն էի, ապա այդ մասին ինձ ոչինչ չյայտնեցիք,—այդ խօսքերը արտասանելիս՝ Սևումեանը հետաքրքիր աչքով զննում էր Ազատեանի դէմքը։

—Ներեցէք, այդ ինչպէս է պատահել, որ դուք չեսք իմացել,—ասաց Ազատեանը, աշխատելով զսպել իր նախկին խորհրդաւոր ժպիտը։

Սևումեանի սիրտը կասկած ընկաւ, և նա մտածեց. «ուրեմն «Ճառագայթի» խմբագրատան մէջ ինձնից բաներ են թագցնում?»

Ազատեանը կարծես հասկացաւ թէ ինչ կատարւեց քարեկամի գլխումը, ուստի շտապեց խօսակցութեան առարկան փոխել և, դիմելով Զառիկեանին և նորա պաշտօնակիցներին, խօսեց.

—Ձեր «պատասխանը» հո արդէն տալել էք։ Հիմա պատրաստ կացէք. «ժամանակի» ճանկերից էլ չէք պրծնիլ։

—Ինչ ուզում են, թող գրեն,—անտարբերութեամբ նկատեց Զառիկեանը։

Մի քանիսը ներկայ եղողներից կարծիք յայտնեցին, թէ հակաճառելու բան չեն գտնիլ, քանի որ իրանց «պատասխանը» հիմնւած է փաստերի վրայ։

—Այդ նշանակութիւն չունի դոցա համար,—վրայ բերաց Ազատեանը,—բան չգանեն, կը հնարեն, ինչպէս միշտ անում են։

—Աւելի վատ թերթի համար,—սկսեց Սևումեանը, ընդհանրացնելով խօսքը։ Երբ բանակութիւնների հիմքը ոչ թէ փաստն է, այլ լոկ զրպարտութիւնը, սուտը, ենթադրութիւնը, երբ բանակութիւները, բացի հայհոյանքից և փուճ փրազներից, ուրիշ բան չեն պարունակում իրանց մէջ, այն ժամանակ վայ այդպիսի թերթին. անկումը անխուսափելի է!

—Ասում են, «ժամանակի» բաժանորդագրութիւնը այս տարի սաստիկ նւազել է,—յայտնեց Զաւիկեանի պաշտօնակիցներից մէկը, շեշտելով «սաստիկ» բառը։

—Դա բնական հետևանք է այդ թերթի վատ ուղղութեան,—բացատրեց Ազատեանը։

—Ինձ թւում է,—մէջ մտաւ Զաւիկեանը,—որ թերթի յաջողութիւնը կամ անկումը պայմանաւորւում է ոչ միայն այս կամ այն ուղղութեամբ, այլ և մի քանի ուրիշ հանգամանքներով։ Եթէ թերթի ներկայացուցիչները իրանց գործը վարեն տաղանդով և բազմաթիւ փաստերով ապացուցեն իրանց շիտակութիւնը, ես կարծում եմ, մի այդպիսի թերթ երկար ժամանակ կարող է կանգուն մնալ, բոլորովին անկախ այս կամ այն ուղղութիւնից։

Այդ նիւթի մասին դարձեալ մտքերի փոխանակութիւն եղաւ։

Յետոյ Սևումեանը անցաւ իւր «մատենադարանին» խնդրին և սկսեց տրտունջ յայտնել, որ գործը խիստ դանդաղ է առաջ ընթանում, որովհետև, բացի Ազատեանից և Զաւիկեանից, ուրիշ ոչոք իրան չէ կամենում օգնել։ Նպատակ տուողներ քիչ կան, մի տնային հարուստ գրադարան գնելու համար սակաւած է պարտք վերցնել և այլն։



Սևումեանը դեռ չէր աւարտած իւր խօսքը, յանկարծ ներս եկաւ օր. Աշխէնը և յանդիմանութեամբ դիմելով եղբօրը, ասաց.

—Գարեգին, այդ անքաղաքավարութիւն է քո կողմից։ Մայրիկը լոհանոցումն է։ Այնքան հիւրերին զբաղեցնողը միայն ես եմ։ Ոչ փանտն է յաջողում, ոչ պարերը։ Խնդրում եմ, պարոններ, եկէք դահլիճ։

Պարոնները ներողութիւն խնդրեցին և, անցնելով դահլիճը, խառնուեցին բազմութեան հետ։

Օրիորդը մտաւ իւր մօրեղբօրը և խնդրեց նւագել։

—Ուրախութեամբ,—պատասխանեց քեռին և իսկոյն նստեց դաշնամուրի առաջ։

Դա հասակն առած և ազդու կերպարանքով մի ողամարդ էր. հագնւած ճաշակով. Եւրոպա պտտած, վարժ Ֆրանսերէնին. հայերէն գեղեցիկ խօսում էր. կեանքի աշունը անցրած և դարձեալ ամուրի, բայց միշտ ուրախ, միշտ զւարթ և աշխոյժ։

Յարմարեցրեց իւր տեղը, սրբեց իւր մնալի ձեռքերի քրտինքը և ճակատը և թաշկինակը եռւի գրպանը խոթելուց յետոյ՝ թխլիկ մատները վազեցրեց մի անգամ տուզանունքի վրայով. դահլիճը դղրդաց. դաշնակահարը ևս ընկաւ աթոռի թիկունքի վրայ։

Մատնաւոր խօսակցութիւնները ընդհատուեցին։ Ամեն մէկը իւր տեղը բռնեց։

Վայրկենական դադար, և դաշնամուրը նորից հնչեց։ Պարողները վեր կացան։ Սևումեանը գիտէր լաւ վալս պարել։ Նա մտաւ օր. Աշխէնին, որը երիտասարդի թևի տակ մտաւ իսկոյն, և երկոքեան թև առած պէս սահեցին միասին։ Նոցա հետևեց պարողների երկրորդ զոյգը, յետոյ երրորդը, չորրորդը։ Զաւիկեանը ուզում էր մօտենալ օր. Վարթուհեանին, բայց մինչև նա իւր տեղիցը ծանր ու բարակ շարժւէր, մի աւելի յաջողակը նո-

րան կանխեց և օրիորդի սեղմ իրանը իւր կրծքին հպած՝ թռան անցան նորա մօտից, և շրջագծեսի երկայն ծալքերը քսեցին նորա ոտներին։ «Աշխարհը ճարպիկ մարդկանցն է», մտածեց Գարեգինը և անյապաղ մի այլ պարընկերուհի վերցրեց, իւր դպրոցի վարժուհիներից մէկին։

Օր. Աշխէնը պարելուց դադրած՝ հանգստանում էր։ Նորա մօտ երկուսկ կանգնած էր Սևումեանը։ Այդ րոպէին եւեաց Ոսկերչեանը։

—Օհօ, եկար վերջապէս! բացականչեց օր. Աշխէնը։ Հէնց քո մասին էինք խօսում պ. Սևումեանի հետ։ Այս որտեղ ես? Ինչու այսքան ուշացար? Սպասում էիր մարդ ուղարկենք եաևիցդ?

Ոսկերչեանը բացատրեց իւր ուշանալու պատճառը։ Նորա խօսքերից երևաց, որ նա գնացած է եղել իւր հիւանդ ընկերոջ տեսնելու և այնտեղ նորա մօտ է ուշացել։

—Խեղճը,—շարունակեց նա,—ընկած է անտէր, անխնամ մի փոքրիկ և մութ սենեկի մէջ։ Նայող չկայ։ Ինքը գաւառացի է և իմ նախկին դասընկերներից։ Սաստիկ տաքութիւն ունէր։ Գնացի բժիշկ բերի, դեղ գրեց։ Ցետոյ դեղատուն վազեցի...

—Ուրեմն դու բարի գործ ես կատարել, և քեզ ներում եմ ուշանալուդ համար,—ասաց օր. Աշխէնը։

—Է՛հ, սա ինչ բարի գործ է. մի հասարակ ընկերական պարտք, ուրիշ ոչինչ,—պատասխանեց Ոսկերչեանը։

—Ձես կամենում պարել?

—Ինչպէս չէ, պարելու մեծ ախորժակով եմ եկել այստեղ։

Եւ Ոսկերչեանը օր. Աշխէնի հետ սլացան իսկոյն։ Մի երկու շրջան անելուց յետո՝ նա պարընկերուհուն իւր տեղը նստեցրեց, շնորհակալութիւն առաւ և վազեց



դէպի օր. Վարթուհեանը։ Բայց սա յոդնած էր. շնչառութիւնից հասուն կուրծքը բարձրանում ցածանում էր։ Այնուամենայնիւ նա չմերժեց Ոսկերչեանին, որի սև աչքերը աւելի ևս սևացած էին այդ րոպէին, և վայելը կրկնապատկել էր։ Երբ նա մի փոքր կորացած՝ սպասողական դիրքի մէջ նայում էր օրիորդի դէմքին, նորա աչքերը կարծես շողեր էին արձակում, և այդ շողերը շեշտակի ցոլացել էին օրիորդի ծովի նման կապոյտ աչքերի մակերևոյթի վրայ։ Նոքա սկսեցին պարել։ Ոսկերչեանը թռցնում էր օրիորդին այնպէս թեթև և արագ, որ կօշիկների ծայրերը հազիւ դիպչում էին յատակին։ Մինչդեռ երիտասարդը զոհ ժպիտով իւր աչքը չէր կարողանում հեռացնել պարընկերուհու երեսից, սորա հայեացքը համեստաբար ներքև էր խոնարհած, իսկ երբ նա օրիորդին իւր տեղը տարաւ և խորին շնորհակալութիւն յայտնեց։

—Շատ ուրախ եմ,—պատասխանեց օրիորդը,—որ ես ձեզ հետ պարեցի։

Այդ խօսքերը լոկ քաղաքավարական խօսքեր չէին, այլ այդ րոպէին կրած զգացման անկեղծ արտայայտութիւն, որովհետև օր. Վարթուհեանը իրօք հիացած էր Ոսկերչեանի հմտութեան վրայ. այն աստիճան գրացիոզ և սահուն գիտէր նա պարել։

Արտաշէսը պատուեց բոլոր օրիորդների հետ, չարհամարհեց նոյն իսկ մի տգեղի, որի մօտից յաճախ անցնում էին երիտասարդները՝ առանց ուշադրութիւն դարձնելու վրան հէնց միմիայն այն պատճառով, որ նա տգեղ էր։

Փոքրիկ ընդհատումից յետոյ՝ նորից սկսեցին պարերը։ Այս անգամ նւագում էր օր. Վարթուհեանը։ Ոսկերչեանը դարձեալ փայլում էր իւր արուեստի հմտութեամբ։ Օր. Աշխէնը ոչոքից ևս չէր ճնշում։ Նա մի եր-

կու շրջան անցաւ նաև իւր մօրեղբօր հետ։ Նա տաքացած էր, ինչպէս և ամենքը, և Թուխ երեսի այտերը կարմրին էին տալիս։ Սևուհեանը նորա մօտից չէր հեռանում։ Երբ նա պարում էր, հովհարն էր պահում. երբ օրիորդի ձեռքից ընկնում էր թաշկինակը, թաշկինակն էր բարձրացնում յատակից, մի խօսքով, մատուցանում էր օր. Աշխէնին զանազան ծառայութիւններ։

Երբ պարերը վերջացան, և օր. Վարթուհեանը վեր կացաւ իւր տեղից, իսկոյն աչքին դիպաւ Զառիկեանը։ Դաշնամուրի կողքին կանգնած՝ բոլոր ժամանակ զմայլուած հետևում էր նա օրիորդի երկայն սպիտակ մատներին, որոնք արագութեամբ ետ ու առաջ էին վազվզում ստեղնաունքի վրայ։ Երկուսն էլ ժպտացին։

—Դուք չէք պարում, պ. Զառիկեան? հարցրեց օրիորդը, ուղղելով դաստակի վրայ բրասլէտը։

—Ո՛չ, օրիորդ,—պատասխանեց Գարեգինը,—ես լսում էի ձեր նուագը։ Երաժշտութիւնը ինձ աւելի մեծ հաճոյք է պատճառում, քան թէ պարը։

Օրիորդը յայտնեց, որ ինքն էլ սիրահար է երաժշտութեան։ Նոցա մօտ եկաւ Զառիկեանի մօրեղբայրը։ Եւ որովհետև երիքն էլ երկրպագու էին երաժշտութեան, ուստի չընդհատուեց խօսքը սկսած նիւթի մասին։ Օր. Վարթուհեանը հրապուրած խօսում էր իւր սիրած կոմպոզիտորներից և օպերաներից։ Գարեգինի յայտնած կարծիքներից երևում էր, որ նա մի պրոֆան չէ դեղարուեստի այդ ճիւղի մէջ։ Իսկ նորա մօրեղբայրը իւր երկայն փառաւոր մօրուքը շփելով պատմում էր Եւրոպայում լսած երգիչներից և երգչուհիներից։

Օր. Աշխէնը, նկատելով, որ Ազատեանը աչքի չէ ընկնում հիւրերի մէջ, հետաքրքրուեց իմանալ, որտեղ է նա, և գնաց ընդունարանը։ Նա այնտեղ նստած էր մի ուսուցչի հետ, և միասին ծխում խօսում էին։



—Ինչու դուք չէիք պարում, պ. Ազատեան? հարցրեց օրիորդ Աշխէնը։

—Ես պարել չգիտեմ, օրիորդ,—պատասխանեց նա,—և, իսկն ասած, չեմ էլ սիրում պարել։

Օր. Աշխէնին թւաց թէ Ազատեանը դժգոհ է, բայց ինչ բանից, չկարողացաւ հասկանալ։

—Շուտով սկսելու ենք ֆանտեր խաղալ, դուք էլ կը մասնակցէք, պ. Ազատեան?

—Ինչու չէ, ուրախութեամբ։

Օր. Աշխէնը գնաց Ոսկերչեանին փնտռելու։

Նա չսխալուեց Ազատեանի վերաբերմամբ։ Սա անբաւական էր, որ իւր ներկայութիւնը կամ բացակայութիւնը ոչնչ չէր նկատում։ Ինչ բան է պարը? Բայց Ոսկերչեանի պարելու վրայ ամենքը հիացած են։ Նա այդ երեկոյի հերոսն է, օրիորդների ուշադրութեան առարկան։ Մինչդեռ ինքը, «ճառագայթի» գլխաւոր աշխատակիցներից մէկը, որի անունը հասել է մինչև հայաբնակ ամենաետնկած անկիւնները, ինքը աննկատելի է այդքան բազմութեան մէջ։ Թող նա վէճի բռնի մէկի հետ, թող լսեն նորա պերճախօսութիւնը, տեսնենք այն ժամանակ, թէ որ անկիւնը կը մնայ Ոսկերչեանը...

Շուտով սկսեցին ֆանտերը։ Բայց «նամակներ» խաղալու ժամանակ տեղի ունեցաւ մի մեծ անախորժութիւն։ Ոսկերչեանը Ազատեանի հետ ընդհարուեցին։ Եւ ահա այդ ինչպէս պատահեց։

Խաղացողները միմեանց նամակներ էին գրում անստորագիր և առանց ստորագրելու պատասխանում ստացած գրութիւններին։ Ոսկերչեանը իւր հասցէով մի նամակ ստացաւ։ Կարդալուց յետոյ յանկարծ նա վեր կացաւ տեղից, ստամիկ զայրացած և նամակը բռունցքի մէջ ճմլելով, գոչեց.

—Ով ինձ գրել է այս նամակը, նա անազնիւ է, որովհետև, որովհետև!...

—Ինչ կայ? Ինչ է գրած? Ինչ է պատահել?... լսեցին ձայներ այս ու այն կողմից:

—Մի մարդ, որ խաղի ժամանակ իրան թոյլ է տալիս մի այսպիսի կոպիտ վիրաւորանք!... լսեցէք խնդրեմ «Պարոն տանուտէր! ես լսել եմ, որ դուք թողել էք բանաստեղծութիւնը և այժմ կամենում էք ղեկասան դառնալ: Ի սէր Աստծոյ, Գամառ-Քաթիպայի հացը կարեցիք, հիմա էլ Ադամեանի հացը չկարէք!» Սա ինչ բան է? Սա ծաղր չէ? Ինչ իրաւունքով ինձ ծաղրում է սորա հեղինակը? Նա երբ է տեսել իմ խաղը? Երբ է կարդացել իմ բանաստեղծութիւնը?...

—Պարոն Ոսկերչեան, դա կատակ է,—կամեցաւ հանգստացնել Սեւումեանը:

—Ո՛չ, սա կատակ չէ, այլ ես գիտեմ թէ սա ինչ բան է! Ես գիտեմ, ինչպիսի աղբիւրից է բղխել այս կեղտոտ!...

—Դուք ձեզ մոռանում էք, պարոն! խօսեց Ազատեանը, տեղից բարձրանալով:—Ես եմ գրել այդ նամակը!...

—Ա, ես այդ գիտէի! Լաւ է, որ ինքներդ խոստովանեցիք!... Կարելի է երևակայել, թէ ինչ մեծ աղմուկ պիտի ծագէր այս դէպքի պատճառով, եթէ չմիջամտէին օր. Աշխէնը, Գարեգինը, Սեւումեանը և վերջ չտային անտեղի ընդհարման:

Ոսկերչեանը վրդովւած էր: Երբ յուզումը նստեց, նա ներողութիւն խնդրեց հիւրերից, որ իւր պատճառով խաղերը խանգարուեցին, և ապա դուրս եկաւ պատշգամբ, ուր սկսեց ծխել և անց ու դարձ անել:

Նորանից յետոյ ֆանտերը շարունակուեցին, բայց աշխոյժ չկար խաղի մէջ: Ազատեանը իրան ձևացնում էր



ուրախ, ծիծաղում էր, ժպտում էր, կատակ էր անում: Թող իմանան ամենքը, որ նա Ոսկերչեանի վարմունքը համարում է տղայական, ուստի և վիրաւորւած չէ զգում իրան: Բայց պարզ էր շատերի համար, որ նա կեղծում էր:

Ոսկերչեանը և Ազատեանը առհասարակ միմեանց չէին սիրում: Նոքա իրար համարում էին մեծամիտ և հպարտ, և, ի հարկէ, չէին սխալւում: Ներկայ դէպքից յետոյ՝ նոքա ոխերիմ թշնամիներ դարձան:

Շուտով հիւրերը նստեցին ընթրիքի: Դահլիճի երկարութեամբ մի պատից մինչև միւս պատը բաց էին արւած սեղանները՝ ծանրաբեռնւած գինու շիշերով, բազմատեսակ ուտելեղէններով, նարինջներով լցւած ափսեաց մեծ վազերով և ծաղկամաններով՝ կարմիր ու դեղին վարդի փնջերով պճնւած: Ձառիկեանների առատաձեռնութիւնը ոչինչ չէր խնայել հիւրերին արժանի կերպով պատուելու համար: Ամենալաւ տեսակից էին հոլլանդական և օսի պանիրները, խաւեարը, շամայինն, սարդինեան, զուրգելը, կարագը և ընդհանրապէս բոլոր միս ուտեստները:

Սեղանի վերի ճակատին բազմել էր օր. Աշխէնի մօրեղբայրը, իսկ սորա հանդէպ՝ հակառակ ծայրին՝ Ոսկերչեանը: Սեղանի մէկ թևի վրայ տեղաւորւել էին օրիորդներ և տիկիննները, իսկ միւս շարքը բռնել էին պարոնները, այնպէս որ, օրինակ, Գարեգինի դիմաց՝ օր. Վարթուհեանն էր նստած, Սեւումեանի դիմաց՝ օր. Աշխէնը, Ազատեանի դիմաց՝ Ձառիկեանի պաշտօնակից վարժուհիներից մէկը և այսպէս մի ծայրից մինչև միւս ծայրը:

Սեւումեանի առաջարկութեամբ և ընդհանուրի հաւանութեամբ թամադա ընտրեց Ձառիկեանի մօրեղբայրը, որը առանց նազ անելու անմիջապէս ստանձնեց

իւր պաշտօնը։ Թամադան օգնական նշանակեց Ոսկերչեանին։ Սա կամեցաւ հրաժարուել։ Բայց ամեն կողմից ստիպեցին, և նա զիջեց։

Թամադան պատուիրեց լցնել բաժակները և ինքը կարմիր գինով լցուն բաժակը բարձրացնելով՝ սկսեց այսպէս.

—Այսօր լրանում է օր. Աշխէնի քսան տարին, և նա մտնում է քսան մէկի մէջ։ Միայն մէկ հատ տարի է, որ օրիորդը ուսուցչական ասպարէզ է եկած, չնայած դորան, այդքան կարճ ժամանակուայ ընթացքում, նորան յաջողուել է արդէն հմուտ մանկավարժուհու անուն վաստակել...

—Խնդրեմ, առանց կոմպլիմենտների,—ընդհատեց օրիորդը դժգոհ եղանակով։

—Որովհետև օրիորդ Աշխէնը,—շարունակեց Թամադան անվրդով, բայց խրոխտ ձայնով,—ընդհատեց իմ խօսքը, ուստի ես իմ պարտքս եմ համարում առաջարկել, երբ տուգանք, մի բաժակ ջրախառն գինի, որ նա պիտի ըմպէ մինչև վերջին կաթիլը։ Օր. Աշխէնը կատարեց մօրեղբօր պատուէրը չարաճճի մանկան ժպիտով և յատակն ի վեր պարանելով բաժակը՝ ցոյց տուեց նորան։

—Այո,—խօսեց կրկին Թամադան,—հմուտ մանկավարժուհու անուն է ձեռք բերել։ Գրաւել է աշակերտուհիների մատղաշ սրտերը, հոգաբարձուների ուշադրութեան և գովասանքի առարկայ է դարձել և արժանացել իւր բոլոր պաշտօնակիցների խորին յարգանքին, բացի, ի հարկէ, մէկից, որը իւր սրիկայական մի արարքի համար այս նորերս վայելեց տասը ձեռքերով ապտակներ...

Հոմերեան քրքիջ բարձրացաւ սեղանակիցների մէջ այս վերջին խօսքերի վրայ, որոնց ակնարկը պարզ էր գրեթէ ամենքի համար։

Թամադան շարունակեց.



—Եւ այս բոլորը, ի հարկէ, շնորհիւ օրիորդի պարզ, անկեղծ և անարատ բնաւորութեան և այն խոր գիտակցութեան, որով նա ձեռնամուխ է լինում իւր գործին։ Ուրեմն այս բաժակով նախ շնորհաւորենք օրիորդ Աշխէնի տարեդարձը և ապա ցանկանանք նորան երկար կեանք, կատարեալ առողջութիւն և անսպառ եռանդ, որպէս զի առանց թուլանալու, առանց վհատելու խոչնդոտների առաջ, միշտ ուրախ, միշտ ոգևորուած՝ շարունակէ բարւոյ և գեղեցկի սերմեր ցանել իւր սանուհիների ամբիծ սրտերի մէջ և, վերջապէս, կարողութիւն ունենայ մարմնացնելու իւր բոլոր նուիրական գաղափարները!

Ծառին հետևեցին կեցցէներ և բաժակների չխկչխկոցը։

Օր. Աշխէնը անհուն ցնծութեամբ և բարի ժպիտով ընդունում էր շնորհաւորութիւնները։

Ոսկերչեանը թոյլտուութիւն խնդրեց Թամադայից, որպէս զի կարդայ օր. Աշխէնի տարեդարձի առիթով յօրինած իւր բանաստեղծութիւնը։

—Սպասում ենք,—ասաց Թամադան՝ նայելով Ոսկերչեանի երեսին։

Օր. Աշխէնը ձեռքը մեկնեց և սեղանի վրայ դրած ծաղկափնջի միջից հանեց գեղանկար թղթի վրայ մաքուր գրած ոտանաւորը և յանձնեց Արտաշէսին։

Ոսկերչեանը ոտի ելաւ և դեկլամացիայով կարդաց իւր «նուէրը»։ Արտասանութիւնը յստակ էր, շեշտաւոր և ազդու, այնպէս որ շատ նպաստաւոր տպաւորութիւն գործեց բոլոր սեղանակիցների վրայ, որոնք իսկոյն վարձատրեցին հեղինակին ծափահարութիւններով և էքըստորաներով։ Միայն Ազատեանն էր, որ բանաստեղծութեան ընթերցման ժամանակ անտարբերութեամբ խաղում էր իւր պատառաքաղի հետ, և դէմքը արտայայտում էր ծաղր ու հեգնութիւն։

Գինու ազդեցութեան տակ Գարեգին Զաւիկեանի գլուխը սկսել էր տաքանալ։ Լաւ տրամադրութեան մէջ էր, շարունակ խօսում և կատակում էր հարևանների հետ, ժպիտը բերնից չէր հեռանում, և յաճախ ոլորում էր բեխերը։

Թամադան առաջարկեց Զաւիկեանների մօր կենացը։ Բայց նա ներկայ չէր։ Կանչեցին, եկաւ։

Թամադան մի երկու խօսքով շնորհակալութիւն յայտնեց այն բոլոր նեղութիւնների համար, որ նա սիրով յանձն է առել այդ երեկոյ հիւրերին պատասխանելու։ Տիկին Զաւիկեանը նոյնպէս շնորհակալութիւն յայտնեց և, Ոսկերչեանի ձեռքով մատուցած լի բաժակը վերցնելով, շնորհաւորեց պատիւ տարեդարձը, բարեմաղթութիւններ արաւ, աջ ու ձախ գլուխ տւեց և գուրս եկաւ դահլիճից։

Տիկին Զաւիկեանը մայր և տնտեսուհի էր բառիս բուն նշանակութեամբ և իր անձը դրած էր սիրելի որդոց համար։

Ցետոյ խմեցին բոլոր հիւրերի կենացները զոյգ-զոյգ, և կենացներին յաջորդում էին խմբերգ կամ solo։ Երբ հերթը հասաւ օր. Վարթումեանին, օր. Աշխէնը խնդրեց իւր եղբօրը երգել։

—Իսկոյն, ուրախութեամբ,—ասաց Գարեգինը, կոկորդը մաքրեց և ախորժալուր բասսով սկսեց «Զմյն սուր, ով Ծովակը»։ Վիթխարի և լիքը ձայն էր Զաւիկեանի ձայնը, այնպէս որ ունկնդիրը կարծես զգում էր հնչիւնների ալիքները օդի մէջ։

Օր. Վարթումեանը հիացած և ակնապիշ նայում էր երգչի երեսին։ Աչքերը գամած էին նորա դէմքին, և նա այդ միջոցին նման էր սուրբ պատկերի առջև աղօթող կոյսի։ Նորա մտքովն անդամ չէր անցել երբէք, որ Զաւիկեանի նման համեստ երիտասարդի մէջ թագնւած



կարող է լինել մի այնպիսի տաղանդ, որով այդժամ նա փայլում էր։ Նա զմայլած էր, և, ինչպէս ջերմաչափի անդիկը եռուն ջրի մէջ սկսում է արագ վեր ու վեր բարձրանալ, այնպէս արագ բարձրացաւ օրիորդի սրտի մէջ համակրութիւնը դէպի Աշխէնի եղբայրը։ Յաճախ նա խոստովանել է իւր ընկերուհիների առաջ, որ իրան շատ երջանիկ կը համարէր, եթէ իւր ամուսինը լինէր մի նշանաւոր երգիչ։ Եւ ահա, թէև անյայտ, բայց կորովի երգիչը նորա առջևն է և իւր ձայնով տիրապետում է բոլորի սրտերին!...

Զաւիկեանը գլխի ամենախոնարհ շարժումով իւր շնորհակալութիւնը յայտնեց՝ կեցցէների, ծափահարութիւնների և էքսպրոմտների համար։ Սևումեանը մօտեցաւ և խմեց նորա հետ բրուդերշաֆտ։

Մանաւանդ կենացներին յաջորդեցին դաղափարական կենացները՝ ճառախօսութիւններով հանդերձ, և այդ ժամանակ միայն սկսեց լաւ զգալ իրան Ազատեանը, որով հետև առիթ ունեցաւ իւր ճարտար լեզուի բոլոր հնարտութիւնը երևցնելու՝ գեղեցիկ բառերով և գեղեցիկ ֆրազներով։

Արդէն շատ ուշ էր, երեքից անց։ Սեղանից վերկենալու պահանջը ընդհանուր էր։ Գոհունակութեան բուռն ցոյցերով խմեցին Թամադայի կենացը և ամենքը բարձրացան տեղներից։

Կամաց կամաց ցրւեցին հիւրերը՝ չափազանց ուրախ տրամադրութեան մէջ։ Իսկ թէ ինչ զգացումներ տարան իրանց հետ օր. Վարթումեանը, Արտաշէս Ոսկերչեանը, Ազատեանը և Սևումեանը, այդ թողնում եմ իրան ընթերցողին երևակայել։

---

## VIII

Ամառուայ սկիզբն էր։

Զառիկեանին յանձնուած ուսումնարանում քննութիւնները արդէն վերջացած էին։ Գարեգինը և քոյրը դպրոցական աշխատանքից բոլորովին ազատ էին և հանգստանում էին։

Զրպարտիչը արձակուեց, և նորան չկարողացան պաշտպանել ոչ «ծամանակիս» մի շարք փաստաբանութիւնները, ոչ հոգաբարձուներից մէկի յամառութիւնը։ Հետևեալ տարուայ համար ուսուցչական խումբը պիտի ճնար անփոփոխ։ Հարկաւոր էր միայն հրաւիրել մի ուրիշին՝ հրաժարեցրածի փոխարէն։

Միակ հոգսը, որ զբաղեցնում էր այժմ Զառիկեաններին, ամարանոցի խնդիրն էր։ Այդ հարցն էլ շուտով իւր լուծումը ստացաւ՝ շնորհիւ օր. Աշխէնի, որը առհասարակ չէր սիրում յոգնեցնել իւր ուղեղը անվճռական, երերուն դրութեան մէջ։

Տարեզարձի երեկոյից յետոյ, օր. Զառիկեանի և օր. Վարթուհեանի մէջ եղած բարեկամութիւնը աւելի ջերմութիւն ստացաւ։ Գարեգինի քոյրը սիրեց իւր ընկերուհուն։ Կարծես նորա սիրտը վկայում էր, որ նա մի ժամանակ ուրախութիւն պիտի բերէ Զառիկեանների ընտանիքին։ Նա յաճախ երթևեկում էր Վարթուհեանների մօտ։ Օր. Մարիամի համար շարունակ ընթերցանութեան գրքեր էր տանում կարդալու։ Այդպիսի ծառայութեան համար պատրաստ էր տնային համեստ դրադարանը—քրոջ և եղբօր վաստակի արդիւնքը։

Մի օր էլ նա գնաց իւր ընկերուհու մօտ՝ յատկապէս մի նպատակով՝ խորհրդակցելու այն մասին, թէ որ ամառանոցը գնան, որպէս զի միասին անցկացնեն ամառը։

Նախասենեակում նորա առաջ դուրս եկաւ Սերեժան, Մարիամի եղբայրը, և Սուսաննան, նորա քոյրը, չորս



հինգ տարեկան մի աղջիկ, որը կուկլայի պէս գուգուած էր և կուկլայի պէս սանրուած։ Սերեժան տասը տարեկան կը լինէր։ Գիմնազիստի շորով էր։ Գրաւիչ երես ունէր, որ աւելի գրաւիչ էին դարձնում երկու սև խալ՝ մէկը՝ վերի շրթունքին, միւսը՝ այտի վրայ։ Արագաշարժ թարթիչներից և վազվզող պսպղուն բիբերից երևում էր, որ դա մի ժիր տղայ էր։

—Մարիամը տանն է՞ հարցրեց Աշխէնը բարևելով թէ մէկին և թէ միւսին։

—Մարուսեան տանը չէ,—պատասխանեց գիմնազիստը ռուսերէն և բաց արեց դահլիճի դուռը։

—Իսկ մայրիկդ?

—Մայրիկը տանն է։ Ես իսկոյն...

Եւ խօսքը չաւարտած՝ նա վազեց մօրը կանչելու։ Սուսաննան էլ ուզեց վազել եղբօր եաևից, բայց Աշխէնը պահեց նորան։ Գնալով դահլիճ, նստեց, իւր մօտ քաշեց երեխային և սկսեց փայփայել նորան, շոյել գլուխը և ուսերին թափուած ապրեշումեայ մազերը։ Նա խօսեցնում էր երեխային և զարմանում։

Եկաւ տիկին Վարթուհեանը՝ գլուխը կապած տեղական տարազով և հագած միապաղաղ սև զգեստ։ Նա ազատուր էր. ամուսինը վախճանուել էր 7—8 ամիս առաջ։

Օր. Վարթուհեանի հայրը հարուստ գաւառացի էր. պահել էր Թիֆլիսում և վերջնականապէս հաստատուել այնտեղ։ Նորա կենդանութեան օրով՝ այդ ընտանիքում տիրապետում էր բուրժուազական ոգի։ Էգոիզմը նորա բնորոշ գիծն էր։ Ընդեղ զարդարել տունը տեղը, տարազին հետևել, լաւ ուտել, լաւ խմել մի խօսքով, լաւ ապրել—այդ էր ահա ընտանիքի իդէալը։ Մերձաւորների և մօտ ծանօթների շրջանը նոյն նեղ և սահմանափակ հասկացողութիւններով էր սնուած, մեծացած։ Ընդհանուր բարօրութեան, հասարակական շահերի մասին ոչոք երբէք

չէր խօսում այնտեղ: Ընդհանուր քաղօրութիւն ասած խօսքը ժպիտ կը յարուցանէր այդ շրջանում, որ գիտէր ապրել միայն իւր վայելչութեան համար և ոչ մի առնչութիւն չունէր այն քաղաքակիրթ, իսկական լուսաւորութիւնը իւրացրած ընտիր դասակարգի հետ, որը, տիտանի նման, իւր ուսին դրած տանում է առաջդիմութեան ծանր, բայց ազնիւ և վսեմ գործը: Մարիամը դեռ ևս իսպառ ձուլուած չէր իւր միջավայրի հետ: Չէ կարելի ասել, որ նորա հոգու լաւագոյն ձգտումները խեղդուած լինէին, ոչ. բայց այդ շրջանը, ինչպէս պատւար, ձգուած էր նոցա շուրջը և կաշկանդում, խափանում էր նոցա ազատ ելքն ու թռիչքը: Չոր մահը կործանեց պատնէշը, և նա իրան աւելի ազատ զգաց իւր տան մէջ: Մայրը հասկացող կին էր և չէր կարող չգնահատել իւր աղջկայ խելքը և առողջ դատողութիւնը: Նա չկամեցաւ արգելք լինել Մարիամի առաջ, որը ձգտում էր այժմ դէպի մի ուրիշ, նոր շրջան, թէև այդ այնքան էլ հաճելի չէր ինքնագոհ և հպարտ ազգականներին:

Մինչև որ տիկինը և օրիորդը երկու բերան կը լսում էին իրար հետ, Մարիամն էլ եկաւ: Իւր ընկերուհուն նկատեց թէ չէ, շտապով նոտաները ձգեց դաշնամուրի վրայ և բացականչելով.

—Օ, Աշխէնը այստեղ է? վազեց նորա մօտ և երկու ձեռքի մէջ առնելով նորա մատները՝ նստեց կողքին: Այս քանի օր է չես երևում? շարունակեց նա: Որտեղ էիր? Ինչու չէիր գալիս?

Եւ ընկերուհիները ուրախ ժպիտով նայում էին իրար երեսին:

—Ջննութիւններով էի զբաղուած,—պատասխանեց օր. Զառիկեանը:

—Ջննութիւններով? Երբ կը վերջանան ձեր քննութիւնները?



—Արդէն վերջացել են: Այժմ մենք ազատ ենք և ամառանոց գնալու մասին ենք մտածում:

—Որ ամառանոցը պիտի գնաք?

—Հէնց բանն էլ այդ է—որ ամառանոցը? Իսկն ասած, մենք էլ չգիտենք, որը ընտրենք: Դուք որտեղ պիտի լինիք ամառը?

Օր. Մարիամը ասաց, որ ամառը սովորաբար անց էին կացնում Կոջորում: Օր. Աշխէնը նկատեց, թէ այդ տեղը իրան շատ էլ դուր չէ գալիս: Ցետոյ սկսեցին զանազան ամառանոցների անուններ յիշել. Բելէյ Կլիւչ, Մանդլիս, Բորժոմ, Աբասթումանի և այլն. ցոյց էին տալիս մէկի յարմարութիւնները, միւսի պակասութիւնները: Տիկին Վարթուհեանը հեռացաւ: Օր. Աշխէնը իրան աւելի ազատ զգաց և, առանց խօսակցութիւնը երկարացնելու, դիմեց ուղղակի իւր գալու նպատակին:

—Գիտես ինչ կայ, Մարիամ? Լաւ չէր լինիլ, եթէ մենք ամառը միասին անց կացնէինք?

Օր. Վարթուհեանը յայտնեց, որ այդ մասին ինքն էլ մտածել է և ուրախ կը լինի, եթէ այդ յաջողի: Ընկերուհիները կանգ առան ամառանոցներից մէկի վրայ և վճռեցին անպատճառ միասին լինել այնտեղ ամառը:

Երբ օր. Զառիկեանը կամենում էր մեկնել, Մարիամը ասաց.

—Ձո բերած գիրքը շատ լաւն է: Հաւանեցիր: Միայն մի քանի դժւար բառեր կան, ես չհասկացայ:

Պատուհանի վրայից վերցրեց «Ոսկի աքաղաղը», բաց արեց գիրքը, միջից հանեց մի թղթի կտոր, որտեղ նշանակուած էին չհասկացած բառերը: Օր. Աշխէնը իւրաքանչիւր բառի դիմաց գրեց ռուսերէն թարգմանութիւնը. միայն մի հատ բառ իրան էլ անծանօթ էր, այն էլ խոստացաւ եղբօրից հարցնել:

Օր. Վարթումեանը շնորհակալութիւն առաւ ընկերուհուց կրած ներողութեան համար, յետոյ ճանապարհեց նորան մինչև սանդուխքների գլուխը, և, երբ նա իջաւ և, բաց անելով դուռը, ուզում էր դուրս գալ փողոց, ընկերուհին գոչեց վերևից.

—Բարեւիր մայրիկիդ և պարոն Գարեգինին։

—Աչքիս վրան,—պատասխանեց մեկնողը ժպտալով և, դուրս գալով փողոց, դուռը շրխկացրեց ետևից։

Այդ տեղից նա շտապեց դէպի տուն։

Գարեգինը, օգուտ քաղելով քրոջ և մօր բացակայութիւնից, գնացել էր Աշխէնի սենեակը, վերցրել էր գրասեղանի վրայից օր. Վարթումեանի լուսանկարը և աչքը դէմ արած նորա պատկերին՝ նայում էր և հիանում։ Նորա սրտում յանկարծ մի ցանկութիւն յղացաւ—համբուրել այն սիրուն դէմքը։ Բայց կարծես ինքն իրանից ամաչեց, և ետ տարաւ լուսանկարը։ Սակայն իւր փափագին դիմադրելու ոյժ չունեցաւ։ Մի երկու քայլ արեց դէպի լուսամուտը, նայեց չորս կողմը, ականջ դրեց—ոչ մի ձայն, ոչ մի շշուկ։ Եւ ապա ետ գալով, սենեկի խորքում մօտեցրեց շրթունքին անկենդան պատկերը և նետեց երկարատև համբոյրի մէջ...

Այդ րոպէին մէկը արագ-արագ սկսեց բարձրանալ աստիճաններով։ Գարեգինը ճանաչեց քրոջ ոտնաձայնը։ Շփոթուած յանցաւորի պէս՝ նա տեղը դրեց լուսանկարը և շտապով դուրս ելաւ սենեկից։

Դահլիճում նա հանդիպեց Աշխէնին, որի հայեացքը նորան խիստ կասկածելի թւաց։ Միթէ քոյրը տեսած կը լինէր նորա գաղտագողի համբոյրը, որ նա դրոշմեց շրջանակի սառ ապակու վրայ?...

—Ուրախացիր, Գարեգին,—խօսեց քոյրը,—Վարթումեաններից հետ միասին պիտի անց կացնենք այս ամառը։



—Ի՛նչ ես ասում, Աշխէն? բացականչեց եղբայրը՝ չկարողանալով զսպել իւր ներքին գոհունակութիւնը։

Քոյրը հաւատացրեց եղբօրը, որ իւր ասածը ճիշտ է, ու քայլեց դէպի իւր սենեակը։ Բայց դրան մօտ յանկարծ նա կանգնեց, կարծես մի բան յիշեց, և, երեսը ետ դարձնելով եղբօր կողմը, ասաց.

—Հա՛, մոռացայ ասել. Մարիամը քեզ բարևում է։

Ու մտաւ իւր սենեակը։

Գարեգինը դուրս եկաւ պատշգամբ և, անց ու դարձ անելով, սկսեց պատկերացնել երևակայութեան մէջ այն բոլոր զբօսանքները, քէֆերը և վայելչութիւնները, որ սպասում են իրան մօտ ապագայում։ Բայց մտքերի թելը կտրեց իսկոյն, երբ երևաց Սևումեանը։ Նորա քայլածքը ոլոր-մոլոր և ծոյլ էր այդ րոպէին. ինչ օտարոտի բան. նորա աչքերում յոգնածութիւն, իսկ ճակատի ակօսների մէջ այնպիսի թախիծ էր նշմարւում, որ Գարեգինը միանգամայն զարմացաւ և ինքն իրան հարց տւեց. «ինչ է պատահել այս մարդուն? կարծես մի բանից դժգոհ էր, կարծես, ինչ անում էր, ակամայ էր, ինչ խօսում էր, ակամայ էր»։

—Հը, ինչ է պատահել? Շատ տխուր ես երևում,—հարցրեց Զաւիկեանը և, առանց սպասելու պատասխանի՝ գնաց դահլիճ և, դուրս բերելով այնտեղից երկու աթոռ, առաջարկեց նորան նստել, ինքն էլ նստեց։

—Զգիտեմ, ճշմարիտ,—խօսեց Սևումեանը՝ մէջքը դէմ տալով աթոռի թիկունքին և անթարթ հայացքը նետելով դէպի ծառերի կատարները։ Ապա երկար շունչ քաշեց և րոպէական լռութիւնից յետոյ՝ շարունակեց.

—Մի տեսակ ապաթիա է եկել վրաս. չեմ հասկանում ինչ բան է։

—Հո տկար չես?

—Ո՛չ, բայց թոյլ եմ, թոյլ. շատ թոյլ եմ։

—Ուրեմն այս շոգերին է. խեղճիկ է օդը!

—Այո, սարսափելի ոօթ է անում։

—Մենք շուտով կ'ազատենք այս տապ ու կրակից։

—Երբ էք գնում ամարանոց?

—Օրը դեռ որոշած չէ։ Բայց շատ շուտով։

—Գնացէք, գնացէք, քէֆ արէք, զբաղացէք!... Իսկ ես կը մնամ այստեղ և թոքերս փոշիով կը լցնեմ...

—Հա, մի բան էլ ուզում իմանալ։ «Ճառագայթի» խմբագիրը երբ է գնում արտասահման?

—Կարծեմ, միւս շաբաթ։

—Երկար պիտի մնայ այնտեղ?

—Կարծեմ, երեք ամիս։

—Իսկ խմբագրութիւնը ում է յանձնելու?

—Այդ չգիտեմ։

—Ինձ թւում է—քեզ կը յանձնէ։

—Տեսնենք... բայց Ազատեանը?

—Ա—զա—տեանը?

—Այո։ Այդ զարմանալի է թւում?

—Միթէ այդքան պատասխանատու մի գործ նա կարող է յանձնել Ազատեանին?

—Ինչու չէ? Վերջին ժամանակներս նա շատ էր սիրում Ազատեանին։ Իսկ Ազատեանը լաւ ուսումնասիրել է հաճոյանալու, մարդու սիրտ մտնելու բոլոր հնարները։ Խմբագրի թոյլ տամարը նա գտել է և օգտւում է նորա թուլութիւնից։ Նա իրան այնքան էլ լաւ չէ պահում...

—Ինչպէս թէ?... հարցրեց Զաւիկեանը, աչքերը չռելով զարմանքից։

Բայց իզուր. աւելին իմանալ նորան չյաջողուեց։ Սևումեանը չուզեց իւր միտքը պարզել։ Կարծես սրտումը շատ բան կար պիզուած, բայց առայժմ թագուն էր պահում։ Մերթ ակնարկներով էր նա խօսում, մերթ աչքերի բիբերը բարկութեամբ ոլորում յատակին, մերթ շըր-



թունքը և այտերն էր ուռցնում և, ամեն ինչ ապագային թողնելով, կրկնում էր.

—Տեսնենք, տեսնենք։

Գարեգինը երկմտութեան և տարակուսանքի մէջ էր։ Նորան թւաց, որ Սևումեանի և «Ճառագայթի» խմբագրութեան միջև մի բան անցել է, բայց ինչ բան, այդ չկարողացաւ հասկանալ։ Ուզեց հարց ու փորձ անել նորան իւր կասկածների մասին. բայց քոյրը այդ միջոցին եկաւ, և խօսակցութեան առարկան փոխուեց։ Հիւրին բարևելուց յետոյ՝ նա ասաց.

—Գիտէք, պարոն Սևումեան, մենք այս քանի օրս պիտի մեկնենք ամարանոց։

—Ինչ կայ որ. շատ լաւ էք անում,—պատասխանեց Սևումեանը, աշխատելով իրան ուրախ ձևացնել, որպէս զի աչքի չզարնէր իւր վշտի և օրիորդի ուրախութեան հակադրութիւնը։

—Իսկ դուք պիտի մնաք այստեղ? հարցրեց օրիորդը։

—Այո, կը մնամ։

—Ո՛հ, ինչեր պիտի անեմ այնտեղ, եթէ իմանաք!...

—Օ՛, ինչ ասել է հարկաւոր,—կատակեց եղբայրը։ Սարեր պիտի շարժես տեղիցը!... Ընթերցանութեան համար տասնեակ հատ ու բարակ հատորներ է վերցնում հետը, և միամտաբար կարծում է, թէ պիտի կարողանայ կարդալ։ Եթէ ծրագրիդ մի երրորդ մասն էլ իրագործես, Աշխէն, ես քեզ այն ժամանակ բրաւո կ'ասեմ։

—Ա՛յ, կը տեսնենք։ Դու կարծում ես, քեզ նման ծոյլ եմ։ Ո՛չ, ներեցէք, ես քեզ պէս չեմ։ Ես մի բան որ սկսեցի, պէտք է վերջացնեմ. կիսատ թողնելը ինձ համար մահ է։ Գիտէք, պարոն Սևումեան, ժողովրդական ընթերցանութեան համար սա մի բան է սկսել, վէպ է, հեքեաթ է, ինչ է, չգիտեմ. և ահա մի տարի է...

—Այդ ինձ յայտնի է, ժպտալով պատասխանեց Սևումեանը։

—Մի ամբողջ տարի է,—շարունակեց օրիորդը աւելի տաքացած,—չարչարւում է վրան, շաբաթներով ձդում, և այսպիսով մինչ օրս դեռ չէ աւարտել։ Կարծում էք, ժամանակ չունի? Այդ ծիծաղելի կը լինէր։ Ոչ, ծուլութիւնից է, ծուլութիւնից!

—Ինչ կայ շտապելու? Փլեգմատիկաբար ասաց եղբայրը։—Աշխարհին պիտի զարմացնեմ իմ դրւածքով, ինչ է?

—Օրիորդ Աշխէնը շատ իրաւացի է,—խօսեց Սևումեանը։ Եթէ ամարանոցային կեանքի ամենանպաստաւոր պայմանների մէջ, բնութեան գեղեցիկ տեսարանների առաջ չկարողանաս վերջացնել քո երկասիրութիւնը, աւելի լաւ է ուրեմն գրիչդ վայր դնես և ոչինչ չգրես այլ ևս!

—Աչքիս վրան,—պատասխանեց Գարեգինը կատակով։

—Նայիր, Գարեգին,—շարունակեց Սևումեանը,—երբ դուք ամարանոցից վերադառնաք, ես պիտի գամ քո հեղինակութիւնդ լսելու։ Մի լաւ կոթող էլ պիտի գրեմ «Ճառագայթի» մէջ։

—Խօսք եմ տալիս,—նորից կատակեց Զառիկեանը, դլխի խոնարհ շարժումով։

«Ճառագայթի» անունը յիշեցրեց օրիորդին մի յօդւածի, որ նա կարդացել էր վերջընթեր համարում։ Յօդւածի հեղինակը Ազատեանն էր և կրում էր հետևեալ վերնագիրը. «Կինը Եւրոպայում և կինը Ասիայում»։ Դորա առիթով օրիորդը յայտնեց իւր հիացքը Սևումեանի դէմքին հեգնական ժպիտ երևաց։

—Այդ յօդւածը,—ասաց նա,—ինքնուրոյն չէ, այլ քաղւածք է մի օտար ամսագրից։

—Միթէ? Ես կարծեցի Ազատեանի սեփական մտքերն



են։ Բայց հարկաւոր էր մատնանիշ անել այն հեղինակի վրայ, ումից օգտւել է։

—Իհարկէ,—նկատեց եղբայրը։ Դա մի տեսակ օյինքաղութիւն է, որ մեր մամուլի մէջ յաճախ կըրկնւում է։ Դա վատ բան է և ցոյց է տալիս ոչ միայն մարդու անբարեխղճութիւնը և շիտակութեան բացակայութիւնը, այլ և նորա ողորմելի սնափառութիւնը։ Դա մի ծաղր է հրապարակախօսութեան վրայ!...

Այդ նիւթի վրայ դեռ էլի երկար խօսեցին։ Սևումեանի թախիծը ցրւեց, և նա հեռացաւ Զառիկեաններից մօտից թեթևացած սրտով։

Երեկոյեան նոցա մօտ եկաւ Ոսկերչեանը։ Իոլորեքեան սեղանատանը նատած՝ խորհուրդ էին անում իրանց անելիքի մասին՝ երբ ճանապարհ ընկնեն, ինչ իրեղէններ վերցնեն հետները ամարանոց տանելու համար, ինչ չվերցնեն, քանի կառք վարձեն, և այլն և այլն։

—Կը ներէք ինձ տարաժամ այցելութեանս համար,—ասաց Արտաշէսը և ձեռք տւեց իւրաքանչիւրին, սկսած տիկին Զառիկեանից մինչև փոքրիկ Երւանդը։ Ես եկել եմ ձեզ տեսնելու, որովհետև վաղը ես գնում եմ։

—Այդ ուր? հարցրին քոյր ու եղբայր համարեա միաբերան։

—Իմ Ծննդավայրը։

—Այդ ինչ անսպասելի և շուտափոյթ վճիռ է! Նկատեց օրիորդը ծիծաղելով։

—Հօրիցս երէկ նամակ ստացայ,—պատասխանեց Ոսկերչեանը, նայելով օրիորդի երեսին և ձեռքով շոյելով Երւանդի գլուխը։ Գրում է, որ անպատճառ գնամ։ Դէ, ի հարկէ, ձեր մարդ է. քանի տարի է չէ տեսած որդուն. բնական է, որ կարօտած լինի ինձ։

—Բայց նայիր,—ասաց օրիորդը կատակելով և

մատը թափ տալով Արտաշէսի վրայ. չմոռանաս մեզ համար չոր միրգ բերել հետդ! Դու գիտես, որ քո հայրենիքի չոր միրգը ես շատ սիրում եմ:

—Օ, անպատճառ, անպատճառ! Այն էլ մեր այգու ամենալաւտիր պտուղներից:

—Ի հարկէ, մեզ նամակ կը գրես? հարցրեց Գարեգինը:

—Իսկ ձեր հասցէն?

—Դեռ չեմ կարող ասել: Բայց տեղ հասնենք թէ չէ, ամարանոցից մի քաց նամակ կ'ուղարկեմ անմիջապէս և հասցէս կը հաղորդեմ:

—Շատ լաւ... Բայց գիտէք, ես այնքան ուրախ եմ, որ պիտի գնամ! Երբ մարդ տարիներով իւր ծննդավայրը չէ տեսնում, կարօտում է: Իսկն ասած, հօրս էլ սաստիկ ուզում եմ տեսնել: Օ, նա հիմա, ով գիտէ, ինչ քան ծերացած կը լինի! Հա. մէկ կամ երկու ներկայացում էլ կը տամ այնտեղ, ոչ ժերս կը փորձեմ...

—Գիտես, Արտաշէս, Վարթուհեանները էլ մեզ հետ միևնոյն ամարանոցն են գնալու:

—Ինչ ես ասում, Աշխէն? հիացմունքով բացականչեց Ոսկերչեանը: Երանի ձեզ! Լաւ ժամանակ կ'անցկացնէք այնտեղ. ես երևակայում եմ...

—Օհօ, այս ինչ բաներ է գնել Արտաշէսը? գոչեց օր. Աշխէնը, բաց անելով թղթի մէջ փաթթած մի պարիկ և մի մօրուք:

Ամենքը ծիծաղեցին: Իսկ երբ Ոսկերչեանը յարմարեցրեց իւր գլխին կեղծամը և ծնօտին՝ մօրուքը և կերպարանափոխուած սենեկի մէջտեղը կանգնեց, ընդհանուր քրքիջ բարձրացաւ: Երեանդը սըրտանց քէֆ էր անում:

Արտաշէսը բացատրեց, թէ ինչի համար, որտեղ և քանիսով է գնել այն դերասանական պարագաները: Մի ուրիշ փաթթոցի մէջ էլ քթախոտ էր, որ նա առել էր հօր համար տանելու իւր հետ:



Կէս ժամից աւելի Ոսկերչեանը ծնաց Զառիկեաններին մօտ: Ցետոյ վեր կացաւ, որպէս զի հրաժեշտ տայ:

—Ընթրիքը շուտով պատրաստ կը լինի, որդիս,— ասաց տիկին Զառիկեանը, տեղից բարձրանալով: Միասին ընթրիք կ'անենք, յետոյ կը գնաս:

—Ես ուրախութեամբ կը սպասէի: Բայց, գիտէք, իրեղէններս պիտի դարսեմ, չեմոդանս կարգի բերեմ...

—Ինչ մեծ բան էդ! կէս ժամայ գործ է! ասաց օրիորդը:

—Նստիր,—բարեկամաբար հրամայեց Գարեգինը: Դատարկ բաներ ես խօսում:

Երեանդն էլ այդ րոպէին Արտաշէսի ծնկներից կպած՝ թախանձում էր, որ մնայ:

Ոսկերչեանը գլխարկը շպրտեց պատուհանի վրայ, նստեց տեղը և արտասանեց.

—Գրողը տանի չեմոդանն էլ, իրեղէններն էլ! Ես մնացի: Դէ բերէք, բերէք ընթրիքը, մի լաւ քէֆ սարքենք! Գինին չմոռանաք! Ձեզ էլ, ինձ էլ բարի ճանապարհ պիտի մաղթենք!...

Այդ երեկոյ նոքա միասին ուրախ ժամանակ անցկացրին: Ոսկերչեանը գլուխը տաքացրեց, շաղակրատեց օրիորդի հետ, որովհետև երկուսն էլ շատախօսներ էին. յետոյ վեր կացաւ, հրաժեշտ տուեց և մեկնեց:

Գարեգինը և քոյրը խոստացան հետևեալ օրը գնալ նորան ճանապարհ դնել, և կատարեցին իրանց խոստումը:

Շուտով Զառիկեաններն էլ պատրաստուեցին և ճանապարհ ընկան դէպի ամարանոց:

## IX

Ամարանոցում Գարեգին Զառիկեանը մի նամակ ստացաւ Ոսկերչեանից:

Ահաւասիկ այդ նամակը բառ առ բառ։

«Սիրելի Գարեգին! Արդէն մի ամիս է ես այստեղ եմ։ Հայրս առողջ է, բայց բաւական ծերացել է։ Ժամանակս ընդհանրապէս վատ չէ անցնում։ Բայց աւելի լաւ է բոլորը հանգամանօրէն պատմեմ։ Դու էլ, խնդրեմ, համբերութիւն ունեցիր իմ երկար ու ձիգ գրութիւնը մինչև վերջ կարդալու։

Այո՛, հայրս շատ ծերացել է։ Իւր հասակից աւելի մեծ է երևում։ Մազերը ճերմակել են, մարմինը նիհարել, մկջքը փոքր ինչ կռացել է։ Երբ կառքիցը իջայ մեր տան դարպասի առջև և հօրս տեսայ այնքան փոխուած, սիրտս այնպէս վատացաւ, որ նկարագրել չեմ կարող։ Ինչպիսի բուռն կարօտով նա ինձ իւր գիրկն առաւ, կրծքին սեղմեց, համբուրեց և, առանց մի բառ արտասանելու, սկսեց մղկտալ!... Ես ինձ չկարողացայ զսպել, ես էլ արտասուեցի։ Դա առաջին անգամն էր, որ իմ հօր աչքին արտասուք էի նշմարում։ Նա ցաւ չէր տեսել և լաց լինելու սովոր չէր։ Ուրեմն ծրքան խորը պիտի լինէին վերջին տարիներում կրած վշտերը, որ օտարութիւնից վերադարձած որդուն դիմաւորելիս՝ նա բոլոր էութեամբ սուգ ու ողբ դառնար! Անհուն ցնծութիւնը միացած էր այդ րոպէին ամենադառը կսկիծի հետ։ Միայն երեկոյեան, ընթրիքի ժամանակ, երբ հայրս սկսեց մի առ մի պատմել այն ամենը, ինչ որ կատարել է մեր տանը իմ բացակայութեան միջոցին, ինձ այլ ևս հանելուկ չթւաց այն հանգամանքը, որ նա մտատանջութեան, վշտերի և զրկանքների պատճառով այնքան արագ ծերացել և ընկել էր։ Նախ՝ մօրս մահը հիմնովին ցնցել և թուլացրել է նորա մարմնի ամբողջ շինուածքը. յետոյ՝ մենակութիւնը, սրտամաշուկ, անափոփ մենակութիւնը, և, վերջապէս, այն բոլոր նեղութիւնները, որոնք կապւած են աղքատութեան և մենակութեան հետ։ Փիչ



չէ տանջել նորան և այն միտքը, որ նա այլ ևս ոչ մի հնար չէ գտնում միջոց տալու իւր որդուն, որպէս զի կարողանայ իւր ուսումը աւարտել։

Դու չես կարող երևակայել, սիրելի Գարեգին, թէ մինչ որ աստիճան խոցեց իմ սիրտը հօրս պատմած իրողութիւնը։ Հայրս բոլորովին աղքատացել է։ Փիչ է ճնում խելագարւեմ, երբ մտածում եմ, որ այդ թշուառութեան պատճառը մասամբ ես եմ։ Այո, ես ինքս։ Քաղաքում նստած՝ ուրախ, անհոգ ապրում էի ինձ համար, երգում էի, պարում էի, եա չէի ճնում ընկերական քէֆերից, թատրոնից և այլ զւարճութիւններից, և, թեթևամտութեանս նայիր, գլխովս անգամ չէր անցնում, որ նոյն այդ ժամանակ իմ խեղճ հայրը իւր դողդոջուն ձեռքը պարզում է մի վաշխառուի առաջ, պարտք է վերցնում ահագին տոկոսներով, որպէս զի փող ուղարկի Թիֆլիս իմ վայելքների համար։ Քեզ էլ յայտնի է, բարեկամս, որ շատյ սահականերից չեմ։ Բայց այժմ, ծերունու դրութիւնը տեսնելուց յետոյ՝ ես անիծում եմ այն բոլոր զւարճութիւնները, որ ես ինձ թոյլ եմ տւել վայելել իմ հօր դառն հոգսերի և զրկանքի հաշւով!

Իւր վաստակածը հայրս համարեա բոլորը ինձ վրայ է ծախսել։ Բայց այս դեռ բաւական չէ։ Մենք ունէինք մի այգի, որ, իրաւ, արժէր տեսնել։ Նորանից սաացած եկամուտը բաւական էր լինում մեր ընտանիքի տարեկան ապրուստի համար։ Բայց ահա մի տարի է, որ այն այգին այլ ևս մերը չէ։ Հիմա նորա մէջ առօք փառօք շրջում է մի ուռած արշած սարդ, մի այնպիսի սարդ, որ սատանայի ցանց է հիւսել գիւղի շատ տների և այգիների վրայ և այդ ցանցի մէջ անկուշտ ծծում է խեղճ գիւղացիների արիւնը, քրտինքը և արտասուքը։ Երբ ես հօրս զարմանք յայտնեցի, թէ ինչու նա ինձ ոչինչ չէր գրել այդ մասին, նա պատասխանեց.

— Որդի ջան, ես քեզ չուզեցի վշտացնել։ Պիտի մտածէիր, ուսումդ մոռանայիր։ Իմ ցաւը ինձ հերիք էր։

Վերջապէս, ինչ գլուխդ ցաւացնեմ, սիրելի Գարեգին, մենք այժմ եռին չքաւորութեան մէջ ենք։

Դէ արի այսուհետև ուսումդ շարունակիր։ Հեշտ է ասել. «ուսումդ շարունակիր»։ Բայց ինչ հողը տայ գըլխին այն խեղճ կարօտեալը, որը չգիտէ թէ ինչ փողով և որտեղ պիտի ճաշէ վաղը? Իմ ուսման խնդիրը, բարեկամ, ընդ միշտ փակուած է, և այժմ աւելի, քան երբ և իցէ, ես ինձ բարոյապէս պարտաւոր եմ զգում հօրս առաջ նորան շուտափոյթ օգնութեան հասնելու և սիրտը շահելու։ Անհրաժեշտ է, որ ես մի գործի կըպչեմ։ Իսկ այդ գործը, ի հարկէ, ինչպէս քեզ էլ յայտնի է, թատրոնն է։ Ես սիրում եմ թատրոնը այնքան, որքան մարդ ընդունակ է սիրել մի ամենաթանկագին բան աշխարհիս երեսին։ Ես սիրում եմ թատրոնը աւելի, քան թէ կարող էի սիրել մի... հէնց թէկուզ օրիորդի։ Մի յաջող ներկայացումից առացած էսթետիկական զարմանութիւնը ինձ համար աւելի բարձր գին ունի, քան թէ պատանեկան բոլոր վայելքները, երազները, անուրջները։ Դա այն ասպարէզն է, որի վրայ ես իմ կեանքս, հոգիս պիտի դնեմ։ Ես ինձ կոչուած եմ զգում դէպի այդ ասպարէզը։ Ես իմ մէջ զգում եմ... ոյժ, կարողութիւն։ Ես դեռ աւելին կ'ասեմ։ Բայց խընդրում եմ, յանուն մեր բարեկամութեան, ոչոքի ոչինչ չես ասիլ այս մասին։ Իմ արտիստական ընդունակութեանց մասին ես մեծ կարծիք ունիմ, և չեմ կամենում, մարդիկ այդ իմանան։ Աւելի լաւ է, որ ինքները տեսնեն։ Թող չասեն թէ ես անհամեստ եմ։ Անհամեստ եմ թէ ոչ, այդ յետոյ երևայ։ Ես իմ մէջ տեսնում եմ հանճարաւոր արտիստի բոլոր նշանները։ Ինձ թուում է, թէ ինձ փայլուն ապագայ է սպասում, և ես պիտի հրա-



չակեմ մի ժամանակ, իբր հանճարեղ դերասան։ Ես այս էլ միայն ցանկանում յայտնել։ Բայց նորից կրկնում եմ, այդ մասին ոչոքի ոչ մի խօսք!

Ես որքան կ'ուզէի նիւթապէս ապահովուած լինել! Դա շատ կարևոր պայման է տաղանդի կանոնաւոր զարգացման համար։ Բայց ինչ կարող եմ անել? կամայ-ակամայ ես պիտի կրեմ վշիս մետաղի ծանր լուծը։

Միւս շաբաթ ես մի ներկայացում պիտի տամ այստեղ։ Տեսնենք որքան արդիւնք կը լինի։ Բայց սորանից, ի սէր Աստծոյ, դու չեզրակացնես, որ փողի հաշիւն է դրդել ինձ այս ներկայացումը կազմակերպելու։ Իհարկէ, այդ էլ կայ։ Բայց առանց դորան էլ ներկայացումը պիտի կայանար։ Ես կամենում եմ իմ ոյժերս առաջ այստեղ փորձել։

Ընտրել ենք «Ողբազործի ընտանիքը»։ Կոռեադոն, ինչ ասել կ'ուզէ, ես կը լինեմ։ Ներկայացման մասնակցում են տեղիս ծխական դպրոցի ուսուցիչները, մի վարժուհի և ուրիշները։

Օգուտ եմ քաղում հանգամանքից, որպէս զի մի քանի տեղեկութիւններ հաղորդեմ տեղիս երկսեռ դըպրոցի ուսուցչական խմբի մասին։

Աւագ ուսուցիչը մի համակրելի անձնաւորութիւն է. ազնիւ, եռանդոտ, բայց քիչ թեթև մտածող։ Ուշիուշով հետևում է լրագրութեանը և հասարակական կեանքում պատահող անցքերին։ Այստեղից նա միշտ լուրեր և զանազան թղթակցութիւններ է մատակարարում «Ճառագայթ» լրագրին. նկարագրում է գիւղական համայնքը, կենցաղը, նիստ ու կացը, զայրոյթ է յայտնում անհաւասար ամուսնութեան դէպքերի առիթով, շանթեր է արձակում վաշխառուների վրայ, ողբում է ժողովրդի տգիտութիւնը, մարակում է նորա պակասութիւնները, նախապաշարմունքը և հրաւիրում է համալսարանական-

ներին դէպի գաւառները, աւելացնելով, թէ «հունձը շատ է, հնձւորները—սակաւ»:

Վարժուհին մի գրաւիչ օրիորդ էր: Նա լաւ ճանաչում է Աշխէնին: Եթէ նորան յիշեցնես օր. Շուշանիկ Մակարեանի անունը, անշուշտ նա կը մտաբերէ իւր նախկին ընկերուհուն:

Աւագ ուսուցիչը, կարծեմ, սիրահարւած է նորա վրայ: Այդ երեւում է այն մեծ ուշադրութիւնից, որով նա հետամուտ է լինում օրիորդի ամեն մի խօսքին և շարժւածքին, նորա յանկարծական գունաթափութիւնից, որ իսկոյն արտայայտւում է երեսին նոցա անակնկալ հանդիպումներից, ձայնի եղանակից, որով նա խօսում է նորա հետ, քնքոյշ հայեացքներից, որ նա ձգում է օրիորդի վրայ՝ հետը զրոյց անելիս:

Բայց ինձ թւում է, երիտասարդ պարոնը կասկածներից շատ է տանջւում: Կարծես նա ինքը հաւատում չէ օրիորդի փոխադարձ սիրոյ մասին: Մի օր նորան կը տեսնես տասիկ ուրախ, մի ուրիշ անգամ՝ խիստ տխուր: Երբեմն խօսք չէ կարողանում գտնել նորան ըստ արժանւոյն գնահատելու համար, մի այլ անգամ վշտացած յայտնում է թէ՝

—Այդ օրիորդը մի հանելուկ է. նորա բնաւորութիւնից ես ոչինչ չեմ հասկանում!

Ինձ համար, սակայն, գրեթէ միանգամայն պարզ է խեղճ սիրահարի մտատանջութեան իսկական պատճառը: Բանը այն է, որ օրիորդը՝ ինչպէս ես նկատում եմ, վերին աստիճանի փոփոխամիտ է սիրոյ մէջ: Նա մի զարմանալի յատկութիւն ունի՝ հրապուրել ամենքին, ամենքին հաւասար յոյսեր տալ, բայց վերջնական յոյս և վերջնական սէր—ոչոքի: Այսօր նա մօտ է մէկի հետ, վաղը մի ուրիշի հետ: Այժմ նա ինձ հետ կամենում է խաղալ նոյն խաղը, ինչ որ միւսների հետ: Բայց ես



միշտ ինձ այնպէս եմ պահում, որ նա շատ հեռու չգնայ, որովհետև իմ սրտի մէջ նստած է արդէն մի աննման էակ, և կրծքիս տակ ազատ անկիւն չկայ ուրիշի համար, թէկուզ այդ ուրիշը լինէր մի նոր Հեղինէ: Մի խօսքով, այդ աղջիկը կամ սիրելու բնաւ ընդունակ չէ, կամ, ընդհակառակը, սիրելու սաստիկ մեծ պահանջ է զգում, բայց իւր սիրոյ արժանի առարկայ չէ կարողանում գտնել: Երկուսից մէկը: Ես կարծում եմ, երկրորդ ենթադրութիւնը աւելի ճիշտ է: Անկարելի բան է, որ մի մատղաշ աղջիկ՝ վառվռուն հասակի մէջ, մի օրիորդ, որի անունը այնքան սիրով են արտասանում աշակերտուհիները, որը միշտ շրջապատւած է գզուղ մանուկներով, անկարելի բան է, ասում եմ, որ մի այդպիսի հարուստ սիրտ սիրելու, յափշտակւելու ընդունակ չլինի: Ես համոզւած եմ, որ եթէ նա կամենայ թողնել տեղիս դըպրոցը և հեռանալ, տանուտիրները լացով կը ճանապարհեն նորան, իսկ մայրերը՝ ափսոսանքով:

Ահա այս օրիորդը պիտի կատարէ Ռոզալիայի դերը: Իսկ բժիշկ Պալմիերին կը լինի աւագ ուսուցիչը: Կարծեմ, չեն փչացնիլ դերերը: Ինչ վերաբերում է իմ դերակատարութեան, ամենքը հիացած են. մանաւանդ օրիորդը և իւր երկրպագուն: Նոքա ինձ հաւատացնում են, որ իւրաքանչիւր փորձ միևնոյնն է թէ մի ներկայացում: Ներկայացումը չկայացած՝ գլուխս արդէն պոռոտ է գալիս ծափահարութիւններից: Գովասանք է, որ լսում եմ: Այս բոլորը, իհարկէ, շոյում է իմ ինքնասիրութիւնը, բայց ես գիշեր ցերեկ աշխատում եմ, որպէս զի սպասածից էլ լաւ դուրս գայ խաղս: Փորձերին միշտ ներկայ են լինում նաև կողմնակի անձինք: Ամենքը գոհ են ճոխ, ամենքից հիացման բացականչութիւններ եմ լսում:

Ներկայացումը պիտի լինի դպրոցի դահլիճում: Բեմը արդէն պատրաստ է: Դեկորացիաների համար

շատ գլուխ չպիտի ցաւացնենք։ Վաթսունական թուականներից ճնացել են մի քանիսը՝ մի «Արքայական պալատ», մի «Մասիս» և մի «Դժոխք»։ Արքայական պալատը բաւական է մեզ համար։ Շատ շատ մի քանի ծառեր կը նկարենք. այդ էլ կը լինի մեր «պարտէզը»։

Բայց եթէ կ'ուզես, Գարեգին, մի քանի դիտողութիւններ հաղորդեմ քեզ բեմական պարագաների առիթով։ Երբ ես խնդրեցի աւագ ուսուցչին, որ ցոյց տայ ինձ այն տեղը, ուր պահւում են դեկորացիաները, նա ինձ տարաւ մի ցածր և մութ սենեակ, որտեղ անխնամ կերպով թափթփւած էին միմեանց վրայ զանազան պատմական զգեստներ, սաղաւարտներ, փայտեայ նիզակներ, վահաններ, փայտեայ սրեր և այլն։ Ժամանակը մաշել էր այդ բոլոր պարագաները. ծիրանիների զառերը պոկոտւած, սաղաւարտների փայլը՝ կորած, սրերի ոսկեզարդը՝ գնացած, նիզակների գլուխները՝ կոտրտած... մի ողբալի տեսարան։ Ես այնպէս ախրեցի, կարծես մի հոյակապ քաղաքի աւերակների մօտ էի կանգնած։ Երբ ես զարմացած հարցրի, թէ ինչու այսքան ողորմելի դրութեան մէջ են այս առարկաները, աւագ ուսուցիչը պատասխանեց.

—Էհ, բան չունիք, հիմա ով է այդ տեսակ բաների վրա ուշադրութիւն դարձնում? Պատմական ողբերգութիւնների ժամանակը անցել է, այժմ էլ չեն ներկայացնում։ Իսկ ժամանակակից կեանքին վերաբերեալ պիեսների համար հարկաւոր չեն ոչ սաղաւարտներ, ոչ նիզակներ, ոչ վահաններ։

—Այդ սխալ միտք է,—նկատեցի ես,—գեղարւեստը չէ հասել այդպիսի սահմանափակութեան։ Նա ունի իւր որոշ և խիստ պահանջները, բայց այդ պահանջների մէջ ինձ յայտնի չէ այն, ինչ որ դուք էք ասում։ Ինչու պէտք է անցած լինի պատմական ողբերգութիւնների ժամանակը, քանի որ նոցա մէջ էլ կարող են լինել գաղափարներ, տիպեր, իդէալներ, հոգեբանական վերլուծութիւն և այլն? Եթէ դուք չընդհանրացնէիք ձեր խօսքը առհասարակ պատմական սիւժէտների մասին, էլի ձեզ հետ կարելի էր համաձայնուել։ Ձիշտ է, մեր պատմական ողբերգութիւնները շատ անարւեստ, թոյլ բաներ են։

Ցետոյ ես երկար մտածեցի այն մասին, թէ ինչ է եղել պատճառը, որ բեմի պարագաները այնքան ողորմելի կերպարանք են ստացել և տարիների ընթացքում մատնւած են եղել անուշադրութեան և արհամարանքի? Ուսուցչական խմբեր են փոխւել, ներկայացուցիչներ են տրւել, բայց այն պարագաները չեն փոխւել, չեն նորոգւել, այլ կոտրւել, պատառոտւել, փճացել են։ Շատերը այն երիտասարդներից, որոնց ձեռքերը աշխատել են այն ծիրանիների և փայտեայ զէնքերի վրայ, այժմ չկան։ Նոցա կենդանի ներկայացուցիչը գիւղում այժմ, կարծեմ, միակ քահանան է. նորա մի ոտն էլ արդէն գերեզմանումն է։ Նոքա հին սերնդին էին պատկանում. իսկ մենք նոր սերնդի մարդիկ ենք։ Նոքա ամեն բանով ետ պիտի լինէին մեզանից։ Ոչ մեր ուսումն ունէին, ոչ մեր հասկացողութիւնները։ Ընայած դորան, ինչպիսի եռանդով և սիրով, ինչպիսի մի ոգևորութեամբ կապած են եղել թատրոնի գործին և ինչ զարմանալի հմտութեամբ այն բոլորը կարել, կպցրել, տաշել, յղկել են! Այն ինչպէս է պատահել, որ նոցանից յետոյ մեծ թւով նորանոր մարդիկ են եկել գնացել, բայց ոչոքի մտքովը չէ անցել գոնէ մարդավարի պահպանել նոցա ոգևորութեան և հաւաքական աշխատանքի արդիւնքը? Եւ ահա այժմ, 25—30 տարի անցած, մենք, նոր երիտասարդներս, ստիպւած են բաւականանալ այս հնամաշ ցնցոտիներով ու կարկատաններով։ Չէ որ նոքա էլի երբեմն հարկաւոր են գալիս?



Արդեօք այս անփոյթ վերաբերմունքը դէպի բեմը

մի ապացոյց չէ, որ գեղարուեստի սէրը աւելի վառ էր վաթսունական թուականների երիտասարդութեան մէջ, քան թէ այժմ մեր մէջ, որ նա աւելի նախանձախնդիր էր գեղարուեստի ծաղկման, քան թէ մենք? Արդեօք այս հանգամանքից մենք իրաւունք չունինք եզրափակելու, որ մեր ներկայ յառաջադէմ երիտասարդութիւնը պղծել և անտարբեր է դարձել դէպի գեղարուեստը?

Ես կ'ուզէի այդ մասին քո կարծիքը լսել, Գարեգին։ Դա ինձ շատ հետաքրքրում է։

Էլ ինչ գրեմ, սիրելիս? Կարծեմ այսքանն էլ բաւական է։ Երևի ես առիթ կ'ունենամ մի անգամ էլ գրելու։ Իսկ եթէ ոչ, անձամբ կը պատմեմ շատ ուրիշ բաներ, երբ աշնանը, Աստծով, մենք իրար նորից կը տեսնենք։

Բարևիր իմ կողմից մայրիկին և քոյր Աշխէնին։

Սպասում եմ նամակիս պատասխանին։ Հա, չմոռանամ. Աշխէնին ասա, որ խոստացածս չոր մրգերը անպատճառ կը բերեմ հետս, չնայած, որ մենք այլ ևս սեփական այգի չունինք։

Մնամ քեզ միշտ սիրող և յարգող
քո բարեկամ Արտաշէս Ոսկերչեան։

## X

Այն ամարանոցը, ուր կենում էին Զառիկեաններըը, գտնուում էր Թիֆլիսից մօտ վաթսուն վերստ հեռաւորութեան վրայ. դիրքը բարձր, շրջապատուած չորս կողմից անտառներով, որոնք ծածկել էին տափաստանը, հովիտները, բլուր ու բլրակները և հեռու ընկած լեռնաշղթաները։

Զառիկեանների կացարանը բաղկացած էր երեք փոքրիկ, բայց մաքուր սենեակներից. մէկը ընդունարանի տեղ էր ծառայում, միւս երկուսը ննջարաններ էին։ Ճաշում և թէյ էին խմում համարեա միշտ դուրսը, պատշգամբում, որի առջև կար մի պարտէզ։ Մեծ բան չհասկանաք այդ պարտէզը։ Դա մի երկու—երեք քառակուսի սաժենանոց տարածութիւն էր, շրջապատուած նիզակաձև փայտերի կանաչադոյն ցանկապատով. գետինը միշտ դալար ու թարմ։ Ծառեր շատ սակաւ կային այնտեղ. մի քանի կարճահասակ և սուերով աղքատ սալորենիներ, մի երկու բալի ծառեր, որոնց ճիւղերը ներս էին մտել պատշգամբը վերևի կողմից։ Միակ զարդը վարդենին էր, բայց այնքան ճոխ ու փարթամ, որ, եթէ երեկոյեան քաղէիր վրայից բոլոր ծաղիկները, հետևեալ առաւօտ կը տեսնէիր դարձեալ վարդերով կարմրատակած։ Ամեն երեկոյ տիկին Զառիկեանը լցնում էր մատուցարանը վարդի թերթիկներով, որպէս զի, բաւականաչափ հաւաքելուց յետոյ, քաղցրաւենի պատրաստէր. իսկ օր. Աշխէնը փինջեր էր շինում և դնում բաժակների մէջ։

Ժամանակը անցնում էր խաղաղ և ուրախ։ Գարեգինը հրբեմն գրում և կարդում էր. Աշխէնը՝ նոյնպէս։ Բայց ամենից շատ սիրում էին զբօսանել սոճիների անտառում, որը նոցա տան եւս բանջարանոցին կպած էր։ Յաճախ գնում էին պուրակը, ուր խռնուած ճեմում էր ամարանոցի հասարակութիւնը, լսում էին այնտեղ զինուորական երաժշտութիւնը, պատահում էին ծանօթներին, խօսում, ծիծաղում, զարմանում էին։ Երեկոները, երբ դադարում էին զօրքի զինավարժութիւնները, նոքա դուրս էին գալիս երբեմն պլացը և սիզապատ լայնատարած հարթութեան վրայ երկար զբօսնում։ Շատ անգամ գիշերը վրայ էր հասնում, բայց ոչքի սիրտը չէր տալիս տուն վերադառնալ. այնքան դուրեկան, մաքուր էր այնտեղ օդը. այնքան սիրուն էր բնութիւնը աստղալից երկնքի տակ! Հրապարակի այս ու այն ծայրից լսւում էին երգի ձայներ, բայց հէնց որ սկսում էր Գարեգինը, ամեն ինչ լռում էր, ամեն ինչ լսողութիւն էր դառնում...

Վարթումեանների ընտանիքը նոյն ամարանոցումն էր ապրում։ Նոցա բնակարանը Զառիկեանների տան կից մի շինութիւն էր, նոյնանման մի բան. համարեա նոյն ցանկապատ պարտէզը, նոյն տնակը իւր պատշգամբով, նոյն բանջարանոցը տան ետև և նոյն անտառը՝ բանջարանոցին կպած։

Շնորհիւ այդպիսի հարևանութեան, այդ երկու ընտանիքները աւելի և աւելի մօտեցան իրար։ Օր չէր անցնիլ, որ օրիորդները միմեանց թև առած՝ չթափառէին անտառում և կուշտ չծիծաղէին զանազան պատմութիւններ ու կատակներ անելով։ Իրիկնադէմին թէյի ժամանակ յաճախ հաւաքւում էին մէկի կամ միւսի տունը և ամեն անգամ առարկայ էին գտնում խօսելու և վիճելու։ Բարեկամական շրջանին կենդանութիւն էին տալիս մանաւանդ Գարեգինը իւր սրտառուչ երգերով և Աշխէնը իւր աշխուժութեամբ և զւարճախօսութիւններով։

Գարեգինը և օր. Վարթումեանը որքան էլ կամենային խնամքով թագցնել իրանց զգացմունքները, այնուամենայնիւ նոցա նայւացքների խորհուրդը, նոցա խօսքերի և ակնարկների այլաբանութիւնը չէին կարող վրիպել ոչ օր. Աշխէնի սրատես աչքերից, ոչ մայրերի սրտագիտութիւնից։

Այո՛, Զառիկեանը և օր. Մարիամը միմեանց սիրում էին, և այդ գիտէին թէ մէկ և թէ միւս ընտանիքի մէջ. գիտէին, բայց միամիտ էին ձևանում, իբր թէ իրանց ոչինչ յայտնի չէ երիտասարդների փոխադարձ համակրութեան մասին։

Ամենաբուռն սիրոյ զգացմունքից անգամ յաճախ անբաժան է լինում կասկածը։ Եւ սակաւ չէր պատահում, որ երկու սիրահարները տանջւէին կասկածներից։ «Արդեօք նա իսկապէս սիրում է ինձ, թէ միայն իմ



երևակայութեանս մէջն է այդ սէրը՞»—Ահա այն հարցը, որ շատ անգամ տալիս էր ինքն իրան Գարեգինը կամ օրիորդը։ Երբեմն, մի կողմնակի պատճառով, Զառիկեանը տխուր էր լինում, չէր խօսում և, երբ օրիորդը խնդրում էր երգել, ներողութիւն էր խնդրում, որ չէ կարող, տրամադիր չէ։ Այդ մերժումը բաւական էր, որ նորա ժպիտը հեռանար, գլուխը խոնարհէր, և ինքը ընկնէր մտատանջութեան մէջ։ Պատահում էր և հակառակը։ Այդ դէպքում Գարեգինն էր մռայլում. սիրտը լցւում էր դառնութեամբ, և կուրծքը ծանրանում էր՝ զսպած հառաչներից։

«Գուցէ նա սառել է, անտարբեր է դարձել. գուցէ նա հիասթափւել է. գուցէ նորան հրապուրել է մի ուրիշ անձնաւորութիւն. գուցէ նորան տհաճութիւն պատճառեց իմ այս ինչ արարքը, իմ անտեղի ծիծաղը, իմ յիմար սրախօսութիւնը...» Այսպիսի մտքեր էին պաշարում սիրահարներին կասկածի րոպէներում։ Դա մի տանջանք էր, որ բանաստեղծական լեզւով «սիրոյ թոյն» են անւանում, բայց մի թոյն, որ, գուցէ, աւելի քաղցր, աւելի գրաւիչ է դարձնում սէրը և սիրոյ առարկան։

Սակայն այդ թերահաւատութեան և վարանման սառը աճիւնի տակ՝ նոցա սրտի խորքումը սիրոյ հուրը իւր գործը տեսնում էր և երբէք չէր մարում։ Թէ մէկը և թէ միւսը աշխարհի առաջ կարող էին երդւել և ասել. «ես սորա հետ կարող եմ ապրել և երջանիկ լինել»։

Բայց փոխարէնը, երբ նոցա սրտերը ազատ էին լինում կասկածներից, ինչպիսի անյագ և խորին բերկրութեամբ նւիրւում էին նոքա սիրոյ երազներին! Ինչ զարմանալի թեթևութիւն էր գալիս նոցա հոգու վրայ, որքան պարզւում էին նոցա մտքերը!...

Գարեգինը մտնում էր անտառի խորքը, շրջում էր այնտեղ մենակ՝ անձնատուր եղած իւր ցնորքներին

Ոռճինների շնչառութեան մէջ զուտաճ օդը կենդանացնում էր նորան, և նա իրան կրկնակի բախտաւոր էր զգում։ Քանի՛ քանի տեղ ծառերի կեղևի վրայ քանդել է նա իւր գրչահատով Մարիամ Վարթուհեանի անուան սկզբնատառերը! Քանի՛ անգամ լոտի վրայ նա գուշակութիւններ էր արել իւր բախտի նկատմամբ, առանց, սակայն, հաւատալու այդ սնապաշտութեան! Նա անում էր այն բոլոր յիմարութիւնները, որ միայն սիրահարուածն է գլուխը կարող են գալ։ Ծառերի թաւուտից կամ հեռաւոր թփի միջից լսւում էր թռչունների դայլայլիկը, որի պատասխանը հնչում էր անտառի մի ուրիշ անկիւնից. սիրոյ և երանութեան այդ երգերի մէջ նա իւր սրտի արձագանքն էր լսում։ Նա իրան ձուլուած էր տեսնում բնութեան հետ իւր հոգով և մարմնով։

Իսկ այն գիշերները միթէ նա կարող է մոռանալ երբ և իցէ? Օրիորդը մէջտեղ՝ գլուխը քնքշաբար կրթնած Աշխէնի գլխին և նորա իրանը բռնած, քոյրը՝ համարեա գիրկն առած ընկերուհուն, ինքը՝ փոքր ինչ առաջ ընկած, քայլում էին փողոցի երկարութեամբ, քայլում էին անխօս, բայց երջանիկ՝ այն լռութեան մէջ։ Օդը անշարժ, բայց դուրեկան։ Երկինքը միանգամայն յստակ։ Պայծառ լուսնի շուրջը, ահագին տարածութեան վրայ, ոչ մի ամպ չէ համարձակւում իւր դէմքը երևցնել։ Կաթնեղէն մեղմ լուսաւորութեան մէջ նիրհում են արահետը, երկշար խրճիթները՝ թաղնուած ծառերի ետև, անտառները, որոնք կամ իջնում կորչում են խորունկ ձորերի մէջ կամ կրկին բարձրանալով՝ սևին են տալիս հեռու-հեռու ընկած լեռների գագաթներին...

Անմոռանալի, կախարդական գիշերներ!...

Իսկ այնուհետև, երբ, միմեանց բարի գիշեր ասելով, բաժանւում էին իրարից, Գարեգինը դեռ երկար ժամանակ մնում էր նստած փողոցում ցանկապատի մօտ



դրած նստարանի վրայ. կամացուկ մրմնջում էր օրիորդի սիրած երգերը, և նա լսում էր՝ կանգնած պատշգամբումը, գլուխը դէմ տուած սեանը, լսում էր, և սիրտը չէր տալիս ներս գնալ. միայն երբ մայրը կանչում էր նորան ընթրիքի, նա հեռանում էր՝ մի կերպ հրաժեշտի նշան տալով երիտասարդին։

Եւ Գարեգինը իսկոյն մենկնում էր. պատշգամբի դրան ճռնչիւնը վերջին ձայնն էր, որ կարող էր խանգարել գիշերւայ անդորրութիւնը։ Դօրանից յետոյ ամեն ինչ հանդարտւում, խաղաղւում էր։

Առաւօտները Զառիկեանը վեր էր կենում շատ կանուխ։ Ամենքը դեռ ևս քնած էին լինում, բացի տանտէրերից, որոնցից մեկը կոշիկ էր կարում, միւսը սայլն էր կարգի բերում, երրորդը ձիաներն էր տանում ջրելու։ Երեսսրբիչը ուսին ձգած՝ նա գնում էր մօտակայ աղբիւրը, լուացւում սառը ջրով, սանրւում. յետոյ անցնում էր անտառը, շրջում, զուարճանում էր այնտեղ և ապա բանջարանոցի միջով վերադառնում էր տուն։

Ծառան, իւր պարոնի ոտաձայնը լսելուն պէս, արդէն ոտքի է. ինքնաեռը գէզւում է և շուտով կ'եռայ։

Գարեգինը զգուշաբար բաց է անում պատշգամբի դուռը. աչքերը մեքենաբար դարձնում է դէպի աջ, դէպի այն կողմը, ուր Վարթուհեանների բնակարանն է. յետոյ՝ մուհաջարների վրայից կռանալով՝ ձեռքը տանում է դէպի վարդենին, ընտրում է վարդերից ամենաճոխը, կարում, հոտ քաշում, ամրացնում է կրծքին և սկսում անց ու դարձ անել պատշգամբի երկարութեամբ։ Եւ երթևեկում է նա այնքան, մինչև տանեցիք զարթնում են, պատրաստւում են, և սեղանի շուրջը հաւաքւելով, նստում են թէյի։

Թէյից յետոյ ամեն մեկը զբաղւում էր իւր գործով։

Վերջին ժամանակները օր. Վարթուհեանը մի ա-

ռանձին սիրով էր սկսել պարապել հայերէնով և հայերէն ընթերցանութեամբ։ Գրականական լեզուի նրբութիւններին նա դեռ բոլորովին անտեղեակ էր։ Նա սովորում էր մեծ եռանդով, և նորան քիչ չէր օգնում օր. Աշխէնը։ Պատկանեան, Ռաֆֆի և ուրիշները նորա համար այլևս անյայտ անուններ չէին։ Նոցա ընտիր երկասիրութիւններին նա կամ արդէն ծանօթացել էր կամ նոր նոր սկսում էր ծանօթանալ։ Նա կարդում էր նաև լրագիրներ՝ «Ճառագայթը», «Ժամանակը», «Մանկական թերթը»։ Նորա համար գնալով աւելի և աւելի պարզւում էր եղած կուսակցութիւններից իւրաքանչիւրի գոյնը։ Նա գիտէր, թէ ովքեր են նոցա ներկայացուցիչները։ Նա յայտնում էր իւր համակրութիւնը և հակակրութիւնը այս կամ այն գործիչի վերաբերմամբ։ Նա յատկապէս կարդում էր «Ճառագայթի» առաջնորդողները և ֆելիէտոնները, խիստ քննադատութեան էր ենթարկում «Ժամանակի» մէջ յայտնած մտքերը։ «Մանկական թերթի» մէջ երբեմն երևում էին օր. Աշխէնի թարգմանած պատմուածքները, և նա մեծ փափագ էր յայտնում թարգմանութիւններ անելու, բայց ափսոսում էր, որ դորա համար բաւականաչափ վարժ չէ մայրենի լեզուին։ Մի խօսքով, օր Վարթուհեանը ամեն կերպ աշխատում էր համակերպել նոր շրջանի հայեացքներին ու ձգտումներին, և այդ ձուլման գործը, շնորհիւ օրիորդի ընդունակութեան և բնական խելքին, առաջ էր գնում չափազանց արագ։ Ես ասացի, որ օր. Աշխէնը օգնում էր իւր ընկերուհուն հայերէնի ուսման մէջ։ Նա աւելի էր անում. պարապում էր հետը, ինչպէս վարժուհին աշակերտուհու հետ՝ թելադրում էր, ուղղում էր գրածը, բացատրում էր ուղղագրութեան կանոնները, մեկնութիւն էր տալիս չհասկացած բառերին, պարզաբանում էր դժուար ըմբռնելի տեղերը, երբեմն հարկ



էր լինում Գարեգինին դիմելու, որը բաւականութեամբ յանձն էր առնում կատարելու նոցա խնդիրքը։

Տիկիններ՝ Ջառիկեան և Վարթուհեանը, որդոց օրինակին հետևելով, նոյնպէս մտերմացել էին իրար հետ։ Նոքա յաճախ պատմում էին միմեանց իրանց անցեալից. այնպէս որ այդ երկու ընտանիքների պատմութիւնը քաջ յայտնի էր թէ մէկին և թէ միւսին։ Տիկին Վարթուհեանը խելօք և ծանրաբարոյ կին էր, քիչ թէ շատ ուսում ունէր. տիկին Ջառիկեանը, երևի, զգում էր նորա այդ առաւելութիւնները, ուստի և խորին յարգանք էր մատուցանում նորան առհասարակ։ Իսկ տիկին Վարթուհեանին շատ դուր էր գալիս Գարեգինի մօր պարզութիւնը և բարի, մաքուր սիրտը։

Մի օր իրիկնադէմին Ջառիկեանները և Վարթուհեանները գնացել էին մօտակայ անտառը՝ միասին թէյ խմելու։ Բարձրահասակ և ստուերաշատ սոճու տակ խոտի վրայ փռւած էր մեծ կապերտ։ Մի ծայրին նըստած էին մայրերը և հանդարտ զրոյց անելով զբաղւած էին ձեռագործով։ Նոցա հանդէպ ծառի բնի մօտ Աշխէնը և Մարիամը խորասուզած էին ընթերցանութեան մէջ։ Կարդում էր օր. Ջառիկեանը, և ուշադրութեամբ լսում էր ընկերուհին։ Ռաֆֆու նոր լոյս տեսած վէպերից մէկն էր։ Ընթերցումը ընդհատւում էր ժամանակ առ ժամանակ երբ այս կամ այն բառը կամ նախադասութիւնը հարկաւոր էր լինում բացատրել օր. Վարթուհեանին։

Երեխաները վազվզում, խաղում էին նոցա մօտ։ Երբ նոքա իրանց մանկական զիլ ձիչերով և անհոգ քրքջիկով խանգարում էին ընթերցումը, օրիորդներից մէկը կամ միւսը երեսը դարձնում էր և յանդիմանութեամբ գոչում.

—Երանդ, մի խանգարիլ!

— Сережа! Сусанна! не мѣшайте намъ!

—Գնացէք հեռու և այնտեղ խաղացէք!...

Կայտառուն մանուկները հեռանում էին, և հեռուից կրկին լսելի էին լինում նոցա առողջ, սուր ձայները, նոցա կենդանի ծիծաղը:

Գարեգինը գնացել էր պուտատուն: Ահա նա վերադառնում է: Ձեռքին մի ինչ որ լրագիր կայ: Դա «Ճառագայթն» է: Ճանապարհից չէ խոսորւում. բայց քայլում է դանդաղ և մտամոլոր: Կարդում է, երբեմն աչքերը հեռացնում թերթից, կանգ առնում, մօրուքը շփում, հայեացքը մի կէտի վրայ յառում—և էլի քայլերը փոխում առաջ դէպի իւրայիններն կողմը:

Օր. Վարթուհեանը նորան նկատեց և ասաց ընկերուհուն.

—Պարոն Գարեգինը գալիս է:

Օր. Աշխէնը խնդոյն ծալեց գրքի կարդացած երեսի անկիւնը, վայր դրեց գիրքը և վազեց եղբօր ընդ առաջ:

—Նամակ? հարցրեց քոյրը:

—Չկայ,—պատասխանեց եղբայրը:

—Դու, երևի, արդէն վերջացրել ես «Ճառագայթը». տուր այժմ մենք կարդանք:

—Մի հետաքրքրական բան կայ այսօրւայ համարում...

—Ապա մի տեսնեմ,—այդ ասելով քոյրը խլեց եղբօր ձեռքից լրագիրը և սկսեց աչքերը արագ վազեցնել թերթի վրայ, կարծես ցանկանում էր շուտ գտնել այն «հետաքրքրական բանը» և շուտով գոհացում տալ իւր կանացի հարցասիրութեանը:

—Կարդացէք ահա այս թղթակցութիւնը, ասաց Գարեգինը, երբ քրոջ հետ մօտեցան օր. Վարթուհեանին: Թղթակցութիւնը գրւած էր Ոսկերչեանի ծննդավայրից, և նորա հեղինակն էր այն աւագ ուսուցիչը, որի



մասին գրել էր Արտաշէսը Ջաւիկեանին: Նամակը կազմւած էր ոգևորութեամբ, որից կարելի էր եզրափակել, թէ սկսնակ արտիստը որքան մեծ տպաւորութիւն էր գործել հայրենակիցների վրայ իւր բեմական ձիրքով: «Հաստարակութիւնը հիացած էր»,—ասւած էր թղթակցութեան մէջ. «հանդիսականներից շատերը լաց եղան Կոռնադօյի ինքնասպանութեան տեսարանի ժամանակ. այնքան ազդու և սիրտ շարժող էր երիտասարդ դերասանի խաղը... Ծափահարութիւններից մի քանի րոպէ շարունակ թնդում էր դահլիճը... Ծողովուրդը առաջին անգամ զգաց թատրոնական ներկայացման հմայիչ ազդեցութիւնը... Տաղանդաւոր արտիստին մեծ և փայլուն ապագայ է սպասում բեմական ասպարիզում... Դահլիճում այնքան շատ բազմութիւն էր հաւաքւել, որ ասեղ ձգելու տեղ չկար... Տեղ չլինելու պատճառով շատերը զուրկ մնացին այն էսթետիկական զւարճութիւնից, որի համար բոլոր հանդիսատեսները շնորհակալութեամբ պարտական են պ. Արտաշես Ոսկերչեանին» և այլն, և այլն, և այլն:

Ահաւասիկ ինչպիսի գովասանական բառեր էին շռայլւած մի յայտնի լրագրում երիտասարդ սկսնակի հասցէին, բառեր, որոնք գործ են ածւում սովորաբար ամենքից տաղանդ ճանաչւած համբաւաւոր անձանց մասին, բառեր եմ ասում, որոնք ընդունակ են ոչ միայն Ոսկերչեանի, այլ նոյն իսկ իւրաքանչիւր երևակայող պատանու գլուխը պտտեցնել և ուղեղի մէջ ամուր բևեռել այն անձնապաստան համոզմունքը, որ նա իրօք մի մեծ, մի անզուգական տաղանդ է որ կայ!...

Օր. Աշխէնը կարդում էր այդ ներբողականը և զանազան բացականչութիւններով արտայայտում էր իւր կրած զգացմունքները: Երբ նա վերջացրեց գաւառական նամակի ընթերցումը,

—Տեսնում էք? ասաց՝ նայելով մերթ եղբօր մերթ ընկերուհու երեսին: Բանից դուրս է գալիս, որ մեր Արտաշէսը մի թագնւած տաղանդ է եղել!... Երբ նամակ գրես, Գարեգին, չմոռանաս իմ կողմից բարևել նորան և շնորհաւորել:

—Իմ կողմից ևս,—խնդրեց օր. Վարթուհեանը:

—Ուրախութեամբ: Թէև այս բոլորը, իհարկէ, չափազանցութիւն է, բայց և այնպէս հարկաւոր է շնորհաւորել: Ի դէպ եղաւ այս. հէնց այս օրերս ես պիտի պատասխանէի նորա նամակին:

—Դու ինչ ասացիր, Գարեգին? Չափազանցութիւն? Ինչու ես այդպէս կարծում?

—Իհարկէ, չափազանցութիւն է: Արտաշէսը դեռ այնքան անփորձ է... Բոյր ու եղբայր վէճի բռնուեցին այդ առիթով: Սկզբում խօսքը յատկապէս Ոսկերչեանին էր վերաբերում. յետոյ նա ընդհանրացաւ: Տաղանդը բնածին է թէ ստացական? Ինչ նշանակութիւն ունի փորձառութիւնը ընդունակութիւնների զարգացման նկատմամբ?—Ահա այն խնդիրները, որոնց շուրջը պտտւում էին նոցա յայտնած մտքերը, ինչպէս անիւը պտտւում է իւր առանցքի շուրջը: Օր Աշխէնի կրակոտ բնաւորութիւնը երևում էր վէճի ժամանակ: Նա տաքացած էր. աչքերը մեծանում և փայլփլում էին: Քրոջը չբարկացնելու համար Գարեգինը խօսում էր շատ հանդարտ:

—Ես համաձայն եմ քեզ հետ,—ասում էր նա,—որ ընդունակութիւնը բնածին է, և եթէ մարդ ի բնէ զուրկ է տաղանդից, ոչինչ չեն կարող անել ուսումը և փորձառութիւնը: Բայց միևնոյն ժամանակ ես պնդում եմ, որ առանց ուսման կամ փորձառութեան՝ տաղանդը չէ կարող ունենալ ոչ զեղեցկութիւն, ոչ փայլ, ոչ վեհութիւն: Արտաշէսը, եթէ ձիրք ունի, դեռ ևս բովից անցած չէ, դեռ բոլորովին անփորձ է: Ուրեմն ինչպէս



կարող էր նա այնքան մեծ տպաւորութիւն գործել? Ահա ինչու ես կարծում եմ, որ այս թղթակցութեան միտքը ամբողջովին մի չափազանցութիւն է:

—Բայց դուք, պարոն Գարեգին,—մէջ մտաւ օր. Վարթուհեանը,—երևի, յիշում էք Պուշկինի այն խօսքերը, որ նա ասում է «Բորիս Գոդունովի» մէջ, այն է թէ՝ „Наука сокращаетъ опыты быстротекущей жизни?“

—Այդ ճշմարիտ է: Բայց դորանով վերջնականապէս չէ հերքւում փորձառութեան նշանակութիւնը:

Վիճողները իրար չկարողացան համոզել: Օրիորդները հաստատ մնացին իրանց կարծիքների մէջ: Խիստ ամուր էր այն հաւատը, որ նոքա ունէին դէպի լրագրական խօսքը, մանաւանդ, եթէ այդ խօսքը «Ճառագայթն» է ասում:

Յետոյ օր. Ջաւիկեանը սկսեց բարձր ձայնով կարդալ: Թերթը ծայրէիծայր կարդալուց յետոյ, նա դարձաւ եղբօրը և ասաց.

—Դու չես զարմանում, Գարեգին, որ Սևումեանը ահա այս երկու ամիս է ոչինչ չէ գրում այստեղ? Չը? Մի հատ տող էլ չկայ! Այս ինչ է նշանակում?

—Այո, մի քիչ օտարոտի է թւում: Այդ նորանից չէ...

—Հրապարակը մնացել է Ազատեանին! Խմբագիր է դարձել մարդը: Եւ ինչքան էլ գրում է!...

—Օ, նա մի ուրիշ տեսակն է... Առաջ կը գնայ!...

Այնտեղ նոքա ուրախ ժամանակ անցկացրին: Մութը վրայ հասաւ: Անտառի մէջ օդը խոնաւացաւ: Այլ ևս հնար անկարելի էր, և նոքա քաշուեցին իրանց բնակարաններր:

Նոյն երեկոյեան Գարեգինը պատրաստեց մի նամակ Ոսկերչեանի անունով և հետևեալ առաւօտ տարաւ ձգեց

պոստարկղը։ Իր գրութեան մէջ Զառիկեանը նկարագրել էր ամարանոցը, ամարանոցային կեանքը, մի քանի տեղեկութիւններ էր հաղորդել Վարթումեաններին մասին, որոնց նկատմամբ գրել էր թէ. «Ո՛ նախկին հարեւանները այժմ ինձ են հարեւան դարձել»։ Իր սիրոյ պատմութիւնը, ի հարկէ, խնամքով թագցրել էր իր բարեկամից։ Գալով այն յաջողութեան, որ Արտաշէսը ունեցել էր գաւառական բեմի վրայ, նա գրել էր հետեւեալը. «Ո՛ ներկայացման մասին մենք կարդացինք «Ճառագայթի» մէջ, ինչ ասել կուզէ, մեծ բարեկանութեամբ։ Ամենքս ուրախացանք ի սրտէ։ Ընդունիր շնորհաւորութիւններ թէ իմ, թէ Աշխէնի և թէ օր. Վարթումեանի կողմից։ Մենք այժմ սաստիկ հետաքրքրուած ենք քեզանով և անհամբեր սպասում ենք այն ժամանակին, երբ քեզ առաջին անգամ կը տեսնենք այստեղի թատրոնի բեմի վրայ։ Ինչ վերաբերում է Ոսկերչեանի տուած հարցին՝ ժամանակից հայոց գեղարուեստի նկատմամբ՝ Զառիկեանը խուսափել էր կարծիք յայտնելուց այն հիման վրայ, որ դա մի լուրջ խնդիր է, նորա մասին արժէ մտածել և որ մի որոշ պատասխան տալու համար հարկաւոր կը լինի ուսումնասիրել 60-ական և 80-ական թուականների գործիչներին, համեմատել այդ երկու սերունդները, մամուլը, գրականութիւնը և այլն, մի գործ, որ դեռ կատարուած չէ։

---

Ոսկերչեանը իւր ժամանակին ստացաւ Գարեգինի նամակը։ Կարդաց, և ուրախութիւնից չգիտէր ինչ անէր։ Աչքերը լցուեցին արտասուքով։ Կարդաց նորից, կարդաց երրորդ անգամ։ Օր. Վարթումեանի շնորհաւորութիւնը մանաւանդ նորան խենթացրել էր։ Նա համբուրում էր այն տողը, ուր յիշուած էր նորա անունը։ Նա սեղմում



էր կրծքին այն նամակը, որ պարունակում էր իւր մէջ օր. Վարթումեանի անունը։

Երիտասարդ արտիստը ստացաւ նաև ուրիշ նամակներ իւր բարեկամներից, որոնք նոյնպէս շնորհաւորում էին նորան և քաջալերում։

Անասելի ուրախութիւն պատճառեց նորան և այն, ինչ որ տպուած էր «Ճառագայթի» մէջ նորա յաջող ներկայացման մասին։ «Մանկական Թերթի» մէջ էլ երեւացին շոյական խօսքեր, որոնք վերաբերում էին Ոսկերչեանի տաղանդի բնորոշման։ «Ժամանակի» գաւառական թղթակցութեան մէջ էս, ի միջի այլոց, յիշուած էր ներկայացման մասին, թէև Ոսկերչեանի անունը չկար այնտեղ։

Նա ինքը իւր աչքում կարծես բարձրացել էր այդ բոլոր հրապարակական և մասնաւոր շնորհաւորութիւններից և գովաբանութիւններից յետոյ։ Նորան թւում էր, որ շրջապատող հասարակութիւնը, մանաւանդ երիտասարդները, սկսել են նորա հետ աւելի մեծ յարգանքով վարուել։ Վերջին ժամանակները նա այնքան լաւատես էր դարձել, որ չէր ուզում հաւատալ նոյն իսկ չարի գոյութեանը։ Մարդիկ գիտեն գնահատել բարին և գեղեցիկը. հետեւաբար իրանք էլ պիտի լինին հոգով բարի և գեղեցիկ։ Եթէ մարդկութիւնը մարմնաւոր մի անձնաւորութեան մէջ, նա կը սեղմէր նորան իւր գրկի մէջ, ինչպէս սեղմում են սրտակից բարեկամին։

Գործելու և փառքի դափնիք քաղելու տենչանքը նորա մէջ աճելով աճում էր։ Նա համարում էր շաբաթներ և օրերը. նա անհամբեր սպասում էր այն ժամին, երբ կը թողնէ վերջապէս աշխարհի ծայրում կորած այն անկիւնը, որտեղ ժողովրդի ծափահարութիւնները աւելի գրգռեցին նորա փառասիրական ախորժակը, քան թէ չաղուրդ տէրն հոգուն։

Ինչպէս մեկնելու պատրաստ շոգեկառքը՝ սեղմ գո-

լորշու առատութիւնից անհանգիստ և դողդոջ սպասում է նշանի, որպես զի շարժւի հեւալով և հանգիստ գտնի հսկայական թռիչքի մէջ, նոյն քան անհամբեր սպասում էր և Ոսկերչեանը իւր մեկնելու օրին, մեկնելու վայրկենին։

Եկաւ վերջապէս և այն օրը։

Կառքը սպասում էր փողոցում։ Ոսկերչեանը իւր հօր հետ կանգնած էր տան դարպասի շեմքին։ Լայնեզր գլխարկի վրայ փաթաթած էր սպիտակ թանձիքի, որի երկայն ծայրերը թափւել էին ուսերին և մէջքին։ Ձախ կողքին ձգւած էր սակվօյաժը։ Ոտերին հագած էր ճանապարհորդական կօշիկներ, որոնց վզերը ծնկներից շատ վեր էին։

Կառքի շուրջը սպասում էին մի խումբ երիտասարդներ՝ ձիաները հեծած։ Մեծ մասը դպրոցի ուսուցիչներից էին։ Նոքա պատրաստւել էին ճանապարհ դնելու «համակրելի երիտասարդին և քանքարաւոր արտիստին»։

Արտաշէսը գլխարկը վերցրեց և կամեցաւ հրաժեշտ տալ հօրը. բայց Ծերունին ձեռքով նշան արեց կառապանին, և կառքը շարժւեց։ Ձիաները առաջ ընկան։ Կառքը կամաց-կամաց գնում էր նոցա եռւից։ Իսկ կառքին հետևում էին հայրը և որդին։

Ահա դուրս եկան գիւղաքաղաքից։ Այգեստանն էլ մնաց նոցա եռւ։ Բայց Ծերունին չէր կամենում վերադառնալ, չնայած, որ Արտաշէսը թախանձում էր նորան ետ գնալ և իրան չյոգնեցնել։ Մօրուքը տմբտմբացնելով, գաւազանը խփելով քար ու կաշկառին՝ ալեւորը շարունակում էր առաջ գնալ, առանց ուշադրութիւն դարձնելու ոչ իւր յոգնածութեան, ոչ քրտինքի, ոչ իւր գաւակի խնդիրքի վրայ։

Ճանապարհի աջ կողմում կար մի քարաժայռ։ Նորա ստորոտում Արտաշէսը հրամայեց կառապանին պահել կառքը։



Բաւական սրտաշարժ էր հրաժեշտը։ Ծերունու աչքերի կոպերը կսկիծով ամուր գոցւեցին, վշտալի դէմքը կնճռոտեց, անհուն կարօտով իւր գիրկն առաւ սիրելի որդուն և սկսեց հեկեկալ։ Ոսկերչեանը համբուրեց հօր հետ. երկար, կարօտալի համբոյր։ Յետոյ թանձիքի ծայրով սրբեց աչքերը, որոնք շարունակ թրջւում էին արտասուքից, և ճարպիկութեամբ կառքի վրայ ցատկելով, նստեց ուղեկցի կողքին։ Ձիաները քայլեցին։

Ծերունին կրկին պահել տւեց կառքը, իբր թէ բան էր մոռացել ասելու։ Նա առաջ գնաց, կիսաբերան մի երկու խօսք մրմնջաց, կրկին համբուրւեց։

Կառապանը, որի համբերութիւնը հատել էր շատ սպասելուց, մտրակը ֆրռացրեց օդում, և ձիաները սլացան։

Ոսկերչեանը անդադար ետ-ետ էր նայում և գլխարկով վերջին բարևներ ուղարկում հօրը։

Ծերունին մենակ, գլխիկոր և գաւազանը ձեռքին՝ քարացածի պէս մնաց կանգնած տեղում։

Կառքը անհետացաւ մի բլուրի եռւ։ Ծերունին գրեթէ մոռացելով վեր ելաւ քարաժայռի բարձրութիւննեերից մէկի վրայ և այնտեղից սկսեց նայել հեռու։ Մի անգամ էլ տեսաւ Արտաշէսին, յետոյ նա նորից ծածկւեց, էլի երևաց և ապա կարծես խորխորատ իջաւ. և այնուհետ բոլորովին անհետացան ձիաւոր երիտասարդներն էլ, կառքն էլ, Արտաշէսն էլ և ամեն ինչ. միայն փոշու պտտուղ սիւնն էր, որ երևաց նոցա եռւից. այն էլ շուտով մշուշի պէս բարձրացաւ, օդը ցնդեց։

Եօթը վերստ հեռաւորութեան վրայ գտնւում էր մի սիրուն աղբիւր՝ շրջապատած մի քանի պատկառելի գեղեցիկ սօսիներով։ Թանձր ստւեր էին ձգում այդ ծառերը աղբիւրի անապական ջրի վրայ և նորա չորս կողմը, և երբէք արեգակի ոչ մի ճառագայթը չէր համարձակ-

ւում լայնատերև ճիւղերի միջից թափանցել ներքև և մարգարտեայ շիթերի վրայ կայտռել ու շողալ։ Սառնորակ, վճիտ և անուշ էր այդ աղբիւրի ջուրը։

Ահա այս աքանչելի վայրում իջան երիտասարդները կառքից և ձիաներից։

Աղբիւրի մօտ ձգեցին սփռոցը, խուրջիններից հանեցին գինու շիշերը և ուտելեղէնի պաշարը—և նախաճաշիկը պատրաստ էր։

Քէֆով, երգերով և ճառախօսութիւններով կերան ու խմեցին, և հազար ու մի բարի ցանկութիւններ մաղթեցին ապագայ գործիչին։

Ոսկերչեանը՝ գինու բաժակը ձեռքին՝ շնորհակալութիւն առաւ և մի երկու խօսք ասաց։ Նա ուխտեց հաւատարիմ մնալ իւր կոչման, գործել անխոնջ և շունչը փչել հասարակական ասպարիզի վրայ։

Բուռն կեցցէներով թնդացրին օդը։ Յետոյ Ոսկերչեանը համբուրեց ամենքի հետ և բարձրացաւ իւր տեղը։

Երիտասարդները իրանց ձիանները հնձան։

—Դէհ, պարոններ, կրկին անգամ մնաք բարե! ասաց Արտաշէսը, գլխարկը ձեռքին բռնած։

—Բարի ճանապարհ!... Յաջողութիւն!... Բարի ճանապարհ!... գոչեց երիտասարդների խումբը։

Կառապանի մտրակի ուժգին հարւածից կառքի ձիանները՝ ականջները սրած՝ թև առածի պէս սլացան։ Քամին զգւում էր և ձիանների բաշը ծածանում օդի մէջ։ Ոսկերչեանի գլխարկի թանձիփը փրփռում էր հողմի առաջ և զարնւում նորա մէջքին, ուսերին և ուղեկցի երեսին։

Ոսկերչեանը թռչում էր իւր յոյսերի և երազների հետ...

*Վերջ առաջին մասի*

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## ՀԻԱՄԹԱՓՈՒՈՂԵՐ

### I

Ամառը վերջանալու վրայ էր։

Արտիստ Մուրադեանի մօտ նշանակւած էր դերասանների ժողով, որը պիտի զբաղւէր առաջիկայ թատրոնական սեզոնին վերաբերեալ զանազան խնդիրներով։ Հարկաւոր էր խումբ կազմակերպել, ռեպերտուարի մասին մտածել, կատարել մի քանի ընտրութիւններ՝ ռեժիսորի և միւս վարիչների և, վերջապէս, ընդունել ընկերութեան մէջ երկու նոր անդամներ, որոնք ներկայացուցիչներին մասնակցելու փափագ էին յայտնել։

Այդ նոր անդամներից մէկը Արտաշէս Ոսկերչեանն էր, իսկ միւսը՝ Զիլչագեանը։

Վերջինը երկար ժամանակ ուսուցչութեամբ էր պարապում գաւառների խուլ անկիւններում։ Զանձրացել էր նա երեխաների վրայ գոռգոռալուց, այլ ևս չէր կամենում թմրել անյայտութեան մէջ և «ջղերը փչացնել»։ Նա գիտէր, որ մարդ պիտի ընարէ գործունէութեան այն ասպարէզը, որ աւելի համապատասխան է իւր ընդունակութիւններին։ Նորա սիրտը չկպաւ դպրոցին, բայց քեմը սիրում էր։ Ուրեմն ինչ է խանգարում, որ նա դերասան դառնայ? Նա հաւատացած էր, որ ինքը զուրկ չէ արտիստական ձիրքից։ Չէ որ հինգ վեց անգամ նա

յաջողութեամբ կատարել է իւր դերերը գաւառական բեմի վրայ, ընկերները հաւանել են, հասարակութեանը դուր է եկել նորա խաղը, և մի անգամ էլ գովել էր նորան «Ժամանակ» լրագիրը մի գաւառական թղթակցութեան մէջ? Էլ երկար չմտածեց. վճռեց լինել դերասան, ձգեց իւր աղքատ ընտանիքը, խոստանալով միշտ փող ուղարկել քաղաքից, դարսեց խնամքով իւր հնամաշ շորերը մի խարխուլ փոքրիկ մնդուկի մէջ, կապկապեց պարանով, որովհետև կողպել անկարելի էր, քանի որ ոչ բանալիք կար, ոչ բանալիքի տեղ, այլ սորա փոխարէն բացուել էր մի այնպիսի խորշ, որ նորա մէջ ծխաը հեշտութեամբ կարող էր մտնել:

Եւ այսպէս ճանապարհ ընկաւ ուղիղ դէպի Թիֆլիս:

Մուրադեանի սենեկում չկար դեռ և ոչ մէկը դերասաններից:

Բայց Զիչագեանը զարմանալի ճշտապահութեամբ ներկայ էր այնտեղ նշանակուած ժամին:

Դիւանի կլոր սեղանից քիչ հեռու պատի մօտ նըստած էր նա աթոռի վրայ անշարժ և ուղիղ. խորին յարգանքով, գրեթէ երկիւղածութեամբ լսում էր արտիստին, որը, իւր ժամացոյցի շղթայի հետ խաղալով, հարց ու փորձ էր անում նորան. ո՞րտեղացի է, ի՞նչով էր պարապում առաջ, ի՞նչու այնքան ուշ է սկսում դերասանութիւնը, և այլն:

Սկզբում Մուրադեանը բարի և քաղաքավարի մարդու տպաւորութիւն գործեց Զիչագեանի վրայ, և սա, խրախուսուած արտիստի վարմունքից, աւելի համարձակ դարձաւ և նոյն իսկ թոյլ տւեց իրան մի անգամ չհամաձայնել նորա մի կարծիքին: Բայց երբ նա հարցրեց նորեկի ամպլուայի մասին, ցանկանալով իմանալ, թէ ինչպիսի դերեր կարող է կատարել, և ապագայ դերասանը այլևայլ դերերի թւում յիշեց նաև Համլէտի անունը,



արտիստի դէմքի արտայայտութիւնը յանկարծ փոխուեց, արհամարական ժպիտ խաղաց երեսին, և նա մի ճնշող հայեացքով չափեց նորան՝ սկսած գլխից, որի երկայն մազերի մէջ սպիտակին տւող թելերը մատնում էին նորա հասակը, մինչև կօշիկները, որոնք իրանց կարկատաններով հանդերձ աւելի էին պսպղում, քան թէ սերթուկի օձիքը կամ վզին փաթթած լաստիկի կտորը, այսինքն՝ փողպատը: Խեղճը զգաց իւր մարմնի վրայ այդ նայուածքի ամբողջ ծանրութիւնը, մեքենաբար եւ տարաւ աթոռի տակ կարկատած կօշիկները, և գլուխը կորացաւ:

Տիրեց րոպէական լռութիւն, և, ով գիտէ, որքան պիտի տևէր այդ լռութիւնը, եթէ նորան չընդհատէին Մուրադեանի ընկերները, որոնք շուտով սկսեցին երևալ մէկը միւսի հետևից, աղմուկով, ուրախ ծիծաղով և բարեկամական ողջոյններով:

Հէնց որ մէկը ներս էր մտնում, Զիչագեանը իւր պարտքն էր համարում իսկոյն վեր կենալ տեղիցը և այդպիսով իւր յարգանքը մատուցանել ապագայ արիւստակցին: Մուրադեանը ծանօթացնում էր նորան իւրաքանչիւրի հետ, և նա խոնարհութեամբ ձեռք էր տալիս ծանօթացողին և էլի նստում իւր տեղը:

Հաւաքուել էին մօտ տասնևհինգ հոգի, որոնց թւում և մի քանի դերասանուհիներ, բոլորն էլ երիտասարդներ՝ 18-ից մինչև 30 տարեկան: Մուրադեանը ծխելով կամացուկ խօսում էր ռուսերէն մի դերասանուհու հետ, որը նստած էր կողքին դիւանի վրայ և ուշիուշով դիտում էր Զիչագեանին, կարծես ցանկանում էր գուշակել նորա դէմքից, թէ ինչ է խոստանում նա, որ յաւակնութիւն ունի Համլէտի դերը կատարելու: Ջամբազեանը մի այլ դերասանուհու իրանը բռնած իւր աջ ձեռքով՝ անցու դարձ էր անում, զրոյց անելով հետը վրացերէն, ու եր-

կուսան էլ յաճախ նայում էին Զիլչագեանին և ժպտում կիսաարհամարհական և կիսաներողամիտ ժպիտով։ Դրան մօտ խմբուած էին մի քանի հոգի և վիճում էին. այն կողմից երբեմն լսւում էր Ոսկերչեանի անունը։ Մի ուրիշը նստած էր Զիլչագեանի հանդէպ, արմունկները յենած ծնկներին, գլուխը քաշ արած և մռայլոտ ծխում էր։ Իսկ Զիլչագեանի վրայից իւր աչքը չէր հեռացնում ամենաջահելը դերասաններից, որը՝ մէջքը պատին տուած՝ նայում էր ապագայ արուեստակցին այնպէս, ինչպէս երեխան նայում է զարմանքով մի գազանի վրայ, որին առաջին անգամն է տեսնում։

Ապագայ արտիստը, տեսնելով, որ ինքը ընդհանուրի ուշադրութեան առարկայ է դարձել, իրան խիստ ճըն. շուած էր զգում։ Նա անհանգիստ էր. կամ ձեռքը տանում էր ծոցը և հայեացքը բևեռում յատակի մի կէտի վրայ կամ դողդոջ մատներով ոլորում մօրուքի ծայրերը, կամ շինծու համարձակութեամբ վեր էր կենում տեղից, մի երկու անվստահ քայլ անում դէպի այս կողմ, դէպի այն կողմ և կրկին վերադառնում իւր նախկին տեղը։ Ողորմելի էր նա այդ ժամին!

Հատուկտոր խօսակցութիւնների միջից որոշուեց յանկարծ Զամբազեանի ձայնը, որ գոչեց սենեկի մի ծայրից.

—Մուրադեան, չսկսենք? ժամանակ է!

—Ոսկերչեանին չսպասենք? պատասխանեց Մուրադեանը։

—Ոչ, ոչ, սկսենք, նա ուշացաւ!... Լսուեցին ձայներ այս ու այն կողմից, և շուտով սեղանի շուրջը խմբուեցին ամենքը։

Դատարուեցին ընտրութիւնները։ Մուրադեանը ընտրուեց ռեժիսոր, Զամբազեանը՝ գանձապահ։ Սցենարիուսը և յուշարարը որոշուած էին առանց ընտրութեան։ Նշանակուեցին, բացի այդ, և երկու վերատուգողներ և մի



հաշուապահ։ Մուրադեանը կամեցաւ առաջարկել խորհրդածութեան առաջին ներկայացման հարցը, որով պէտք էր բաց անել սեզոնը։ Բայց Զամբազեանը մէջ մտաւ, ասելով հետեւեալը.

—Մեր խմբի մէջ երկու նոր անդամներ են աւելանում, և մենք չգիտենք, թէ ինչպիսի դերեր կարող են կատարել։ Ուստի լաւ կը լինի առաջ մի տեսնենք, թէ որպիսի դերեր կատարելու շնորհք ունին։ Այ, օրի նակ, պ. Զիլչագեանը։ Նա ինչ տեսակ դերերի համար է? Ծերերի, սիրահարի, ֆատի? կամ կոմիկ է, տրագիկ է, ինչ է?

—Ուզում էք, մի բան կարդայ տեսնենք,—ասաց Մուրադեանը։

Ինչ վերաբերում է ամպլուային, կարծում եմ, նա աւելի յաջող կը կատարէ թեթեւ կոմիկական դերեր...

—Ընդհակառակը, ինձ թւում է, որ պ. Զիլչագեանը աւելի դրամատիկական դերերի համար է,—հակաճառեց Զամբազեանը։

Վճռեցին քննել Զիլչագեանին, փորձելու համար նրա ձայնը, դիկցիան, ինտոնացիան և միմիկան։

Մուրադեանը բերից «Համլէտը», ընտրեց մենախօսութիւններից մէկը և կամեցաւ առաջարկել սկսնակին՝ արտասանելու։

—Որ մոնոլոգն է, Մուրադեան? հարցրեց Զամբազեանը, մօտենալով նորընտիր ռեժիսորին և նայելով գըրքոյկի բացած էջի վրայ։

Այդ լաւ չէ։ Թող այս մէկը կարդայ։

Այդ ասելով, նա խլեց Մուրադեանի ձեռքից պիեսը, արագ թերթեց երեսները եա ու առաջ և, երբ գտաւ իւր ցանկացած տեղը, գոչեց, մատը դնելով այն տեղի վրայ։

—Ա՛յ, այս, այս մոնոլոգը թող կարդայ։

Եւ յանձնելով գրքոյկը ռեժիսորին, նստեց իւր տեղը և սպասողական դիրք ընդունեց։

Ռեժիսորը չհակաճառեց. գրքոյկը տւեց Զիլչագեանին և առաջարկեց կարդալ «Ո՛հ, եթէ դուք, իմ հոգու ամուր շղթաներ» յայտնի մենախօսութիւնը։

Ամեն մէկը իւր տեղը բռնեց, իսկ Զիլչագեանը հետց կանգնած սեղանի մօտ, լամպայի առջև, և սկսեց աչքի տակով անցկացնել արտասանելիք մոնոլոգը։

Նորա սիրտը թփթփում էր։ Դողդողում էր թերթիկը, որ բռնած էր իւր ցուցամատով և բութ մատով։ Տառերը աչքի առջև խժռըժում էին, սև միջատների երամի պէս։ Տաներկուսից աւելի դատաւորների ներկայութեամբ նա պիտի ցոյց տար իւր բոլոր կարողութիւնը։

Նորա բախտիցը, այդ րոպէին եկաւ Ոսկերչեանը, և նա մի պահ ազատ շունչ քաշեց ու միջոց ունեցաւ ոյժերը կառավարելու։

Ոսկերչեանը ծանօթ էր ոմանց հետ. ուր չէր ճանապարհ, ծանօթացաւ և նստեց Մուրադեանի մօտ, դիւանի վրայ։ Ռեժիսորը ասաց նորան, որ Զիլչագեանն էլ նոր է, և փորձի համար մի բան պիտի կարդայ Համլէտից։

Զիլչագեանը սկսեց. ձայնը դողում էր և գնալով բարձրանում էր crescendo։ Բիբերը թաւած էին վերև դէպի ճակատը, և համարեա միայն ապիտակուցն էր երեում։ Գրեթէ ամեն մի բառը աշխատում էր արտայայտել համապատասխան ձևերով. օրինակ, երկու ամիս բառերը արտասանելիս՝ երկու մատները ցցում էր վերև, ինչպէս քահանան, երբ վճաշաղութիւն ամենեցուն» է ասում։

Ոսկերչեանը ժպտում էր ներողամիտ ժպիտով. միւսները իրար երեսի էին նայում և հազիւ պահում իրանց ծիծաղը։ Մուրադեանը երկու ձեռքով ծածկել էր աչքերը, որպէս զի դէմքի ծիծաղկոտ արտայայտութիւնը



չերևայ։ Մէկը քիթն էր հուպ տալիս, միւսը շրթունքն էր կրծում։ Ամենից լուրջը Ջամբազեանն էր երևում, ապշութիւնից բերանը բաց էր արած, աչքերը յառած Զիլչագեանին և հետևում էր շարժուն բիբերով նորա իւրաքանչիւր շարժուածքին. շատերը ծիծաղում էին նորա այդ կոմիկական լրջութիւնը տեսնելով։ Մէկն էլ իրան չկարողացաւ զսպել, փըրթկացրեց, դուրս վազեց սենեկից, և դրան ետևից լսեց նորա բարձրաձայն քրքիջը։

Ոսկերչեանին դիւր չեկաւ արւեստակիցների այդ վիրաւորական, անխիղճ վերաբերմունքը դէպի սկսնակը. նորա դէմքը լրջացաւ, և իւր լուռ կշտամբանքով նա աշխատում էր զսպել ոմանց անքաղաքավարութիւնը։

Զիլչագեանը՝ իւր մենախօսութիւնը չաւարտած՝ գիրքը դրեց սեղանի վրայ, և բոլորովին կարմրած ամօթից, քրտնած՝ խզճալի ձայնով մրմնջաց.

—Այժմ ես չեմ կարողանում.. ձայնս խզած է... եթէ կ'ուզէք, մի ուրիշ անգամ...

—Բաւական է, բաւական է,—ասաց Ջամբազեանը, վեր կացաւ տեղիցը և գնաց դէպի դուռը։ Նորա ետևից գնացին շատերը դերասաններից և, խմբւելով նորա շուրջը, սկսեցին քննադատել Զիլչագեանին։ Մէկը ասում էր, թէ ծիծաղալի է, միւսը թէ բոլորովին անընդունակ է, երրորդը՝ թէ ձայն չունի և այլն։ Ջամբազեանը ասաց, թէ Համլէտի դերը չէ կարող կատարել, բայց անխօս դերեր կամ սակաւախօս ծառաների դերեր լաւ կը կատարէ։

Այնուամենայնիւ Զիլչագեանը ընդունւեց խմբի մէջ։ Նա ուրախացաւ և շնորհակալութիւն յայտնեց։

Երբ խօսք բացւեց Ոսկերչեանի մասին, սա ասաց.

—Պարոններ, իհարկէ, ձեզ յայտնի է, պ. Մուրադեանն էլ ձեզ ասած կը լինի, որ ես կամենում եմ լինել ձեր խմբի մէջ։

—Մենք ձեզ ընդունում ենք գրկաբաց,—ասաց ռեժիսորը ի դիմաց խմբի։ Ցույս ունիմ, որ դուք կը լինէք մեր լաւ ոյժերից մէկը։

—Մենք կարդացինք ձեր մասին լրագիրներում,—նկատեց Ջամբազեանը։ Շատ գովել էին։

—Իհարկէ, մենք ձեռք ձեռքի տուած պիտի գործենք,—շարունակեց Ոսկերչեանը։ Մենք պիտի աշխատենք բարձրացնել թատրոնը, որը, դժբախտաբար, վերջին տարիները կորցրել էր իւր նախկին հրապոյրը և փայլը և սկսել էր դիմել դէպի անկում...

Դերասանների մէջ փսփսոց ընկաւ։ Շատերի դէմքը հեգնութիւն էր արտայայտում։ Ոմանք բարկացան Ոսկերչեանի այս խօսքերի վրայ, բայց զսպեցին իրանց զգացմունքը։ «Ինչպէս թէ թատրոնը դիմում էր դէպի անկում, և մենք պիտի աշխատենք բարձրացնել» մտածում էր իւրաքանչիւրը այդ րոպէին։

—Սա իրան ինչ է երեւակայում? շշնջաց մէկը ընկերոջ ականջին։

Ամենից համարձակը Ջամբազեանը եղաւ, որ ասաց.

—Ուրեմն մենք էինք պատճառը, որ թատրոնը դիմում էր դէպի անկում?

Ոսկերչեանը ուզեց արդարանալ, չկարողացաւ։ Նորա մեծամտութիւնը և անձնապաստան ոճը խիստ վատ տպաւորութիւն գործեցին ամենքի վրայ։ Նոյն իսկ Մուրադեանը, որ առաջ մեծ յարգանքով էր վերաբերում դէպի Ոսկերչեանը, նա էլ իւր երեսը թըթաւցրեց և դժգոհութեամբ քորեց ծոծրակը։ Իւր խօսքերի գործած ազդեցութիւնը դերասանների վրայ Ոսկերչեանը չէր կարող չտեսնել։ Նա ղղջաց իւր անզգուշութեան համար, բայց ուշ էր։ Նա իւր բարի ցանկութիւնները մի կողմ դրեց և դիմեց աւելի գործնականին։

—Պարոններ,—ասաց նա,—ես ձեզանից մի դերբիւտ



պիտի խնդրեմ, և միայն այս պայմանով կարող եմ հաշուել ձեր ընկերութեան անդամ։ Զգիտեմ, կը համաձայնէք ինձ դերբիւտ տալ թէ ոչ։

Մուրադեանը դէմ չէր այդ պայմանին։ Ջամբազեանը հակառակ էր դորան։ Խնդիրը վճռուեց քուէարկութեամբ, և ձայների մեծամասնութեամբ հարցը վճռուեց յօգուտ Ոսկերչեանի։

Շատերը իրանց ձայնը տուին ոչ թէ բարի ցանկութիւնից դրդուած, այլ նորա համար, որ սաստիկ հետաքրքրուած էին Ոսկերչեանի անձով։ Նոքա ուզում էին տեսնել, թէ այս ինչ տեսակ նոր հաւ է դուրս եկել, որ երկաթէ ձւաներ պիտի ածէ։

Ոսկերչեանը կամենում էր, որ սեզոնը բացւէր իւր դերբիւտով. բայց այդ առաջարկութիւնը հանդիպեց դերասանների միահամուռ մերժման, թէև համաձայնեցին առաջին ներկայացումներից մէկը յատկացնել նորա դերբիւտին։

Ցետոյ խօսք բացւեց սեզոնի առաջին ներկայացման և ապա ընդհանրապէս ռեպերտուարի մասին։ Երկրորդ խնդրի վերաբերմամբ ամեն կողմից լսւում էին գանգատներ, թէ յարմար պիեսների կատարեալ սով է տիրում, եղածներից հասարակութիւնը ձանձրացել է, նորերի մեծ պահանջ կայ։ Ոսկերչեանը այն կարծիքի էր, որ քանի որ մեր ինքնուրոյն դրամատ աղքատ է, ուստի անհրաժեշտ է ոյժ տալ թարգմանութիւններին։ Ջամբազեանը առարկեց, թէ նոյն իսկ թարգմանութեան դործը մեծամեծ դժւարութիւնների է հանդիպում, և այդ այնքան էլ հեշտ չէ, ինչպէս թւում է, որովհետև եւրոպական բազմակողմանի ռեպերտուարից հարկաւոր է ընտրել մեր կեանքի համար յարմարագոյնը և յանձնել թարգմանելու ձեռնհաս անձանց։ Դժւար է ընտրութիւն անելը, դժւար է լաւ թարգմանիչներ գտնելը և աւելի դժւար

թարգմանիչներին վարձատրելը։ Ոսկերչեանը պատասխանեց, թէ բոլորը կախւած է նորանից՝ ինչպէս կը վերաբերւի խումբը ռեպերտուարի խնդրին. եթէ նա կամենայ այդ խնդիրը դարձնել իւր կարեւոր գործերից մէկը, գործը անշուշտ գլուխ կը գայ։ Եւ ահա ինչպիսի հիմունքներով էր հաստատում նա իւր կարծիքը։ Նախ՝ եւրոպական դրամատիկական գրականութիւնը շատ հարուստ է։ (Եւ նա թւեց մի շարք հեղինակների և պիեսների անուններ թէ կլասիկական, թէ ռոմանտիկական, թէ նորագոյն ռեպերտուարից)։ Երկրորդ՝ ընտրութիւն անելը այնքան դժւար չէ, ինչպէս թւում է. նոյն իսկ ինքը խումբը այդ կարող է անել. դորա համար հարկաւոր է միայն ռեպերտուարի խնդիրը մշակել խմբի կանոնաւոր նիստերի մէջ։ Երրորդ՝ չափազանցութիւն է ասել, թէ թարգմանիչներ չկան։ (Եւ նա թւեց մի քանի անուններ, որոնք կարող էին այդ գործը կատարել)։ Գալով թարգմանիչների վարձատրութեան, նա ասաց, որ դորա համար հարկ կը լինի տարին մէկ կամ երկու ներկայացում տալ և արդիւնքը յատկացնել այդ նպատակին, առարկելով, որ այդպիսով ոչ թէ կը նւազի ընկերութեան տարեկան հասոյթը, այլ, ընդհակառակը, կը մեծանայ, որովհետև ռեպերտուարի թարմութիւնը գրաւական կարող է լինել ներկայացումների մշտական յաջողութեան։ Ջամբազեանը նորան պատասխանեց, թէ խնդիրը դորանով չէ վերջանում. կայ դեռ մի այնպիսի դժւարութիւն, որի առաջ խումբը անզօր է, այն է, որ ամեն մի նոյն իսկ յարմար պիեսի համար համապատասխան ոյժեր չկան խմբի մէջ. օրինակ, ինչպէս ներկայացնեն «Մակբեթը», երբ ոչ Մակբեթի դերակատար, ոչ լէդի Մակբեթի դերակատար չկան խմբի մէջ? Ինչպէս ներկայացնեն «Օրլեանի կոյսը», երբ Ժաննա դ'Արկի դերակատար չկայ խմբի մէջ? Այդ ասելով Ջամբազեանը դիմեց դերասանուհիներին և հարցրեց.



—Օրիորդ, դուք կը կատարէք Ժաննա դ'Արկի դերը?

—Ո՛չ, ո՛չ, ո՛չ, այդ իմ բանը չէ! պատասխանեց նա, գլխով և ձեռքով բացասական շարժում անելով։

—Իսկ դուք, տիկին, կը կատարէք լէդի Մակբեթի դերը?

—Ներեցէք. ես այդքան անհամեստ չեմ! պատասխանեց տիկինը՝ խորհրդաւոր հայեացք ձգելով Ոսկերչեանի երեսին։

Դերասանուհիների այդ համեստ պատասխանի վրայ դերասաններից ոմանք ծիծաղեցին։ Ոսկերչեանին թւաց, որ այդ ծիծաղը վիրաւորական էր և վերաբերում էր իրան։ Նա սկսեց հասկանալ, որ այդ խումբը, որին նա մօտենում էր բարեկամական զգացմունքով, յոյսերով և զանազան ծրագիրներով, այնքան էլ լաւ չէ տրամադրւած դէպի նա. երբ նա խօսում է, դերասանները իրար երեսի են նայում, հեգնաբար ժպտում, իրար ականջի փսփսում։ Եւ ինչու? Չէ որ նա նոցա ընկերն է? Չէ որ նա խօսում է յանուն ընկերութեան շահերի? Եթէ նորա կարծիքները սխալ են, թող ցոյց տան այդ սխալը! Նա անկեղծ է խմբի հետ, ինչու խումբը անկեղծ չէ նորա հետ? Միթէ մարդուն այնպէս են ընդունում գրկաբաց?

Համարեա արդէն կէս գիշեր էր, երբ նիստը փակւեց։ Դորանից յետոյ դերասանները խմբով (բացի դերասանուհիներից) գնացին մի ասիական ճաշարան, նստեցին քէֆի։ Կերան, խմեցին և շատ ուշ դուրս եկան ճաշտեղից ու ցրւեցին։ Ոսկերչեանն էլ միւսների պէս գլուխը տաքացրել էր, հաշիւ տեսնելիս թափ տւեց պորտմոնէն ճաշարանի տիրոջ առաջ և լիքը փորով, բայց դատարկ գրպանով վերադարձաւ տուն։

Հետևեալ օրը Ոսկերչեանը ճաշելու փող չունէր։ Հարկաւոր էր պարտք վերցնել մէկից։ Բայց ումից? Գնալ Զաւրիկեանի մօտ? Բայց չէ որ մի շաբաթ չկայ, նորանից

առաւ հինգ ռուբլի։ Նորից ձեռքը մեկնել նորա առաջ։ Նա ինչ կը մտածէ? Ի հարկէ, նա առաջին անգամ դըժ-գոհութեան նշոյլ անգամ չերևցրեց։ Նա հաւատացած է, որ բարեկամը առանց դժւարութեան այս անգամ էլ ձեռքը կը տանի գրպանը և կը հանի այնքան, որքան դուրս կը գայ գրպանից։ Բայց ամօթը, ամօթը նորան կաշկանդում է։

Նա վճռեց սպասել, չնայած, որ քաղցից նեղուում էր։ Սպասեց մի ժամ, երկու ժամ, երեք ժամ, բայց երեկոյեան այլ ևս չկարողացաւ դիմանալ և դիմեց ուղիղ դէպի Զառիկեանի բնակարանը։

## II

Նոյն այդ երեկոյ Զառիկեանների տանն էր և Սևուէանը։ Դա առաջին անգամն է, որ նա այցելութեան էր գնացել այդ ընտանիքին՝ ամառանոցից վերադառնալուց յետոյ։

Դեռ ևս կարդին չբարևած, նա սկսեց ներողութիւնից, որ այնքան ուշ է եկել այցելելու իր ամենաանկեղծ բարեկամներին։ Օր. Աշխէնը կամեցաւ իմանալ, թէ ինչու նա այնքան ուշ է մոռացել իր ամենաանկեղծ բարեկամներին։ Հիւրի ուաճ պատասխանից երեւաց, որ նա այժմ սաստիկ ծանրաբեռնուած է պարապմունքներով։

Եւ իրաւ, նա ծանրաբեռնուած էր։ Ճիշտ է, Ազատեանի ժամանակաւոր խմբագրութեան միջոցին նա ոչ մի տող չգրեց «Ճառագայթի» մէջ, բայց փոխարէնը նա ուրիշ գործ կատարեց։ Նա յաջողեցրեց մի առևտրական տան գրասենեակում բաւականին արդիւնաւոր պաշտօն գտնել։ Եւ ահա այդ ինչպէս եղաւ։ Նա ծանօթ էր այդ առևտրական տան գլխաւոր կառավարչի հետ։ Ամառը աւելի մօտեցաւ հետը։ Ինքը մի քանի անգամ այցելեց



նորան, մի անգամ էլ ընդունեց նորան իր մօտ։ Կառավարիչը «ժամանակ» լրագրի ջերմ համակրողներից էր և ոչերիմ հակառակորդ «Ճառագայթի»։ Իսկ առևտրական տան գլուխը, որ մի հարուստ վաճառական էր, «ժամանակի» խմբագրի մօտիկ բարեկամներից էր։ Սևուէանին շատ պարտաւորեցրեց կառավարիչը. նորա միջոցով էր, որ նա ստացաւ իր պաշտօնը, նա էր, որ ծանօթացրեց նորան «ժամանակի» խմբագրի և խմբագրութեան մի քանի ուրիշ անձանց հետ։

Օրւայ տաղտկալի խօսակցութիւններից յետոյ, Սևուէանը ասաց Գարեգինին.

—Դէհ, սիրելիս, հիմա հաշիւ տուր ինձ. հեղինակութիւնդ ստարտել ես թէ ոչ?

Գարեգինը պատասխանեց թէ ստարտել է։ Սևուէանը խնդրեց, որ կարդայ։ Գարեգինը ասաց, որ նա ցանկանում է մի քանի անձանց կարծիքներ ևս լսել, ուստի լաւ է սպասել, որ նա նշանակի մի երեկոյ յատկապէս երկասիրութիւնը կարդալու համար։ Սևուէանը նկատեց, որ մի ուրիշ անգամ նա կարող է միջոց չունենալ, և կրկնեց իր խնդիրքը, ասելով.

—Եթէ իմ կարծիքը մի բան արժէ քեզ համար, և ինձ ևս բարեկամ ես համարում, կատարիր խնդիրքս. բեր և կարդա։

Գարեգինը զիջում արաւ Սևուէանի թախանձանքին, մանաւանդ, որ քոյրն էլ մէջ մտաւ իր յորդորներով։

Շուտով երեքն էլ տեղաւորուեցին դահլիճում սեղանի շուրջը՝ Գարեգինը բազմոցի վրայ, իսկ Սևուէանը և Աշխէնը հանդիպակաց բազկաթոռների վրայ։

Զառիկեանը սկսեց կարդալ իր վէպը, որի վերնագիրն էր «Վարժապետը»։ Վերնագրից երևում է, որ հերոսը մի ուսուցիչ է. նա գործում էր ժողովրդի մէջ այնպէս, ինչպէս միսիոնարը կիսավայրենի մարդկանց

մէջ. ամանք հեռևում են նորա քարոզներին, ոմանք անտարբեր են, ոմանք հալածում են։ Գրածքը պարունակում էր իւր մէջ առաջին փորձի բոլոր թերութիւնները, թէև մէջը պատահում էին յաջող մտքեր, յաջող նկարագրութիւններ և հոգեբանական մի քանի հատուն դիտողութիւններ։ Ջառիկեանը կարդալիս բաց թողեց մի քանի գլուխներ և բաւականացաւ նոցա բովանդակութիւնը պատմելով, որպէս զի պատմութեան թելը չկտրւէր լսողների համար։

Երբ վերջացաւ ընթերցումը, Սևումեանը ասաց.

—Գարեգին, շնորհաւորում եմ. շատ յաջող է, և մեզ իսկական զարմուհի պատճառեց քո գրածքը։

Այդ ասելով, նա սեղմեց բարեկամի ձեռքը, և երկար ժամանակ կարծես ափսոսում էր բաց թողնել նորան, որովհետև այդ ձեռքն էր շարժել դիւթական գրիչը և ստեղծել հրաշալի էջերը. լուռ հիացմունքով նայում էր նա հեղինակի աչքերի խորութեան մէջ։

Աշխէնը, թէև ընթերցման միջոցին մի առանձին զարմուհի չստացաւ եղբօր երկասիրութիւնից, բայց Սևումեանի հիացմունքը տեսնելով, կարծեց, թէ իրաւ որ հիանալի բան էր լսածը, ուստի և ասաց.

—Շատ, շատ լաւ է, Գարեգին! Սքանչելի է! Ես բոլորովին չէի սպասում, որ այդքան յաջող կը լինի։

Քոյրը աւելացրեց, թէ այնուամենայնիւ մի քանի հակասութիւններ է նշմարել գործող անձանց բնաւորութեան մէջ և ցոյց տւեց հեղինակի սխալները, որոնցից միայն մէկին համաձայնեց եղբայրը։ Սևումեանն էլ իւր նկատողութիւնները արաւ։ Գարեգինը խոստացաւ աչքի առաջ ունենալ յայտնւած նկատողութիւնները՝ գրածքը ուղղելու ժամանակ։

—«Ճառագայթի» մէջ պիտի տպես, այնպէս չէ, Գարեգին? հարցրեց քոյրը։



—«Ճառագայթի» մէջ? զարմանքով գոչեց Սևումեանը։

—Այո, պատասխանեց օրիորդը, աչքերը լայն բանալով։ Միթէ անյարմար է այնտեղ?

—Ես կարծում եմ,—վրայ բերաւ Սևումեանը խորհրդաւոր եղանակով։

—Բայց ինչու, պարոն Սևումեան? Միթէ «Ճառագայթը» այժմ այն չէ, ինչ որ առաջ էր?

—Իհարկէ, ոչ!

Նա բացատրեց իւր միտքը, յայտնելով, որ իւր ասածը վերաբերում է «Ճառագայթի» ներկայ խմբագրութեան, և աւելացրեց.

—Ազատեանը, իմ կարծիքով, արատաւորեց այդ պատուաւոր թերթի անունը, և Ազատեանի ժամանակաւոր խմբագրութեան օրերը այդ լրագրի պատմութեան ամենասև էջերը պիտի կազմեն։

Սևումեանի այդ խօսքերի վրայ քոյր ու եղբայր իրար երեսի նայեցին, կարծես երկուսն էլ չանկարծ մի բան յիշեցին։ Ամարանոցից վերադառնալուց յետոյ, Գարեգինը և Աշխէնը իրանց ծանօթներից մի քանի վատ բաներ էին լսել Սևումեանի մասին, իբր թէ նա և Ազատեանը իրար հետ ընդհարում են ունեցել, կռւել, բաժանւել են, միմեանց այլ ևս չեն բարևում. իբր թէ Սևումեանը բարեկամացել է այնպիսի անձանց հետ, որոնց առաջ չէր արժանացնիլ իւր բարևին. իբր թէ նա յարել է «Ժամանակ» լրագրին, ամեն տեղ բամբասում է Ազատեանին, նորա ընկերներին և մինչև անգամ սկսել է վատաբանել «Ճառագայթը» և ամեն տեղ գոռգոռալով գուշակութիւններ անել նորա մօտալուտ անկման մասին։ Ջառիկեանը դեռ ևս չէր ուզում հաւատալ իւր բոլոր լսածներին, և ամեն անգամ, երբ քոյրը մի նոր լուր էր հաղորդում Սևումեանի վերաբերմամբ, նկատում էր նորան սկեպտիկաբար։

—Դեռ սպասիր, Աշխէն. audiatur et altera pars —պէտք է լսել և հակառակորդին! Ազատեանն էլ մի գովելի պտուղ չէ! Երբ հարկաւոր է մի բան ստուգել, և այդ դժւար չէ, պէտք է ստուգել։

Օր. Աշխէնը այժմ ուրախ էր, որ Սևումեանը ներկայ էր և նորա մասին լսածները մասամբ կարելի էր ստուգել։ Եւ ահա սկսեց նա իւր հարց ու փորձը, իսկական քննիչի հարցուփորձ։ Բայց չնայած բոլոր կանացի խորամանկութեան, որ նա աշխատում էր գործ դնել Սևումեանի հետ խօսելիս, վերջինս շուտ հասկացաւ նորան և իսկոյն յարմար զէնք ու դիրք ընտրեց իւր ցանկացած տպաւորութիւնը գործելու համար։

—Միթէ, ճշմարիտ, Ազատեանը այդչափ վատ էր տանում իւր խմբագրական գործը, ինչպէս դուք էք ասում? Ասաց օրիորդը, ցանկանալով դիպչել խօսակցի սրտի նուրբ լարին։ Ճիշտ է, առաջնորդողները թոյլ էին, բայց, ընդհանրապէս վատ չէր...

—Իսկ ես ասում եմ. անտանելի էր «Ճառագայթը» այս երեք ամսւայ ընթացքում! Պատասխանեց Սևումեանը համարեա բարկացած։ Սխալներով, հակասութիւններով, անհամ յօդւածներով—լիքն էր «Ճառագայթը»! Եւ զարմանալի բան էլ չէ այդ! Այդպէս էլ սպասում էի! Ապա ինչ պիտի լինէր?...

—Ես զարմանում եմ,—ասաց Աշխէնը,—որ դուք, պարոն Սևումեան, այդպէս էք խօսում ձեր սրտակից բարեկամի մասին։

—Ազատեանը—իմ սրտակից բարեկամ? Գոչեց Սևումեանը և սկսեց ծիծաղել, շարունակ կրկնելով. «Ազատեանը—իմ սրտակից բարեկամ!»..

Այդ անտեղի ծիծաղը վիրաւորեց օրիորդին, և նա ասաց արհնեղութեամբ.



—Այո, այդ դուք ինքներդ էք ասել! Այժմ ուրանում էք ձեր ասածը!

—Օրիորդ, ես և Ազատեանը ընկեր ենք եղել, իրար մօտ ենք եղել, բայց որ ես ասած լինեմ, թէ նա իմ սրտակից բարեկամն է, այդ անկարելի է, այդ անհնար է!

Աշխէնը լաւ յիշում էր, որ Սևումեանը այդ խօսքերը ասել է. և այժմ, երբ տեսաւ, որ նա աշկարա ուրանում է իւր խօսքը, մի վայրկենի մէջ կորաւ նորա այն մեծ յարգանքը, որ տածում էր առաջ դէպի այդ երիտասարդը։

—Բայց այդ կարևոր չէ, թէ ես ինչ եմ ասել նորա մասին։ Ճակտը այս է, որ Ազատեանը այժմ իմ թշնամին է!

Քոյր ու եղբայր նորից իրար երեսի նայեցին, բայց այս անգամ երկուսի դէմքին էլ հեգնական ժպիտ խաղաց, կարծես այդ ժպիտով իրար ուզեցին հասկացնել, թէ իրանց լսածները անհիմն չէին։ Օրիորդի ընդհատած հարց ու փորձը շարունակեց եղբայրը, ասելով.

—Բայց ինչ պատահեց, ինչ կարող էր պատահել ձեր մէջ? Ահա ինչն է անբացատրելի!

—Ինչու միամիտ էք ձևանում, պարոններ? գոչեց Սևումեանը՝ համբերութիւնը հատած։ Միթէ դուք չգիտէք բոլորը? Միթէ ոչինչ չէք լսել մեր ընդհարման մասին?

Գարեգինը լուռ էր և նայում էր դէմադէմ պատից կախած նկարին, ոսկեփայլ շրջանակի մէջ, որ մեր յայտնի նկարիչներից մէկի գործն էր և ներկայացնում էր ձորի մէջ հոսող մի գետ լուսնկայ գիշերով։ Աշխէնը նոյնպէս անձայն՝ աչքերը յառած էր լամպայի կարմիր լուսամփոփի վրայ դրած հակայական թիթեռին։

Այդ լռութիւնը ճնշող ազդեցութիւն գործեց Սևումեանի վրայ, և սա, կարծես սարսափած այդ լռութիւնից,

վեր թռաւ տեղիցը, երկու ձեռքով բռնեց Զառիկեանի ուսերից և ցնցելով նորան՝ գոչեց.

—Յանուն մեր բարեկամութեան, Գարեգին, ասա՛, ինչ են խօսում իմ մասին? ու նայեց շեշտակի նորա աչքերի մէջ:

—Քո՛ մասին? հարցրեց Զառիկեանը անվստահ եղանակով, կարծես դժւարանում էր իսկոյն պատասխանել տւած հարցին:

—Այո՛, իմ, իմ մասին!

Գարեգինը պատմեց իւր լսածներից: Սեւումեանը չգոհացաւ, բայց, երբ աւելին իմանալ չյաջողւեց, նա բեմական հերոսի դիրք ընդունեց, բռնեց բազկաթոռի թիկունքից, և պսպղուն բիբերը դարձնելով մերթ դէպի Գարեգինը, մերթ դէպի նորա քոյրը, գլուխը թափահարելով սկսեց.

—Այժմ պարզ է, որ դուք ինձ խնայում էք: Կամ դուցէ մոռացել էք, թէ ինչ են խօսում իմ մասին հասարակութեան մէջ? Թողէք ուրեմն, ես ձեզ յիշեցնեմ: Անշուշտ ձեզ ասաց կը լինեն, թէ Սեւումեանը անհաշտ բնաւորութիւն է, Սեւումեանը երկդիմի է և փոփոխամիտ, Սեւումեանը քամբասում է Ազատեանին, Սեւումեանը պախարակում է «Ճառագայթի» խմբագրութիւնը, դաւ է սարքում ընկերների դէմ, Սեւումեանը, մի խօսքով, մի հրէշ է, որ կայ!... Բայց թոյլ տւէք ինձ, օրիորդ, որ ես ծանօթացնեմ ձեզ, ներեցէք խօսքիս համար, այն կեղտոտ աղբիւրի հետ, որից բղխում են այդ բոլոր գարշելի և անխիղճ զրպարտութիւնները: Այդ աղբիւրի անունն է—Ա.զա.տեան!

Վերջին բառը արտասանեց Սեւումեանը խորին զզւանքով յամառ սեղմած ատամների երկու շարքերը: Օր. Աշխէնը առաջին անգամն էր տեսնում Սեւումեանին այնչափ կատաղի դրութեան մէջ:



Սեւումեանի սիրտը լցւած էր և անդիմադրելի պահանջ էր զգում սիրտը թափելու, ուստի և շարունակեց, առանց հերթ տալու ուրիշին:

—Այդ ապերախտը!... Ա՛խ, դուք չգիտէք, չգիտէք! Երանի թէ բոլորը իմանայիք!... Դուք կը հաւատաք? Ես էի, որ նորան առաջին անգամ ներկայացրի «Ճառագայթի» խմբագրութեան, ծանօթացրի խմբագրի հետ, գովեցի նորան. ես էի պատճառը, որ նա մի բան դարձաւ այդ լրագրի մէջ! Սկզբում նորա յօդւածները համարեա ես էի թելադրում, ես էի ուղղում... Բայց ով կը մտածէր այն ժամանակ, որ ես այնքան աշխատում էի մի անարժան գրչակի համար? Մի մարդու համար, որ ոտից մինչև գլուխը մարմնացած ապերախտութիւն է?... Այդ դեռ մի կողմ: Դուք տեսէք, թէ ինչ շողոքորթ միջոցներով, ինչ քսու ստորաքարշութեամբ նա կարողացաւ այն մարդու աչքը մտնել, որին ապաւինած էր! Ինչ եագոյական զալարումներով, երկդիմի ակնարկներով և զարմանալի խորամանկութեամբ ճիգ էր թափում իջեցնել մեզ, իւր ընկերներին, այն բարձրութիւնից, որի վրայ կանգնած էինք մենք! Եւ ինչի համար? Որպէս զի, ուրիշներին ստորացնելով, ինքը բարձրանայ!...

Սեւումեանը երկար խօսում էր այս ոգով, բայց այնուամենայնիւ նա չյայտնեց իւր անբաւականութեան իսկական պատճառը:

Բանը այն է, որ երբ երեք ամիս առաջ «Ճառագայթի» խմբագիրը պատրաստւում էր մեկնել արտասահման, առողջութիւնը կազդուրելու համար, Սեւումեանը և Ազատեանը, այդ լրագրի գլխաւոր աշխատակիցները, ակնդէտ սպասում էին, թէ իրանցից որին պիտի յանձնէ թերթի ժամանակաւոր խմբագրութիւնը: Սեւումեանը, իբրև աւելի հպարտ և պատւասէր, վերջին օրերը աւելի սակաւ սկսեց յաճախել խմբագրատուն, որպէս զի տնօրէնը կարծէք

չտանէր նորա մասին, թէ նա աչք է ածում տեղապահութեան վրայ։ Ազատեանը, ընդհակառակը, գրեթէ հաւատի լինելով, որ ինքն է նշանակւելու թերթի վարիչ, իւր հովանաւորողի քթի տակից չէր հեռանում երբէք և ամեն տեսակ ծառայութիւններ էր մատուցանում նորան։ Չմոռանամ այստեղ յիշել նաև այն, որ տեղապահութեան հետ կապւած էր ամսական ռոճիկ, և այդ հանգամանքը աւելի գրաւիչ էր դարձնում առժամանակեայ պաշտօնը։

Երբ Սևումեանը իմացաւ վերջապէս, որ գերապատւութիւնը տրւած է իւր ախոյեանին, զայրոյթից և վիրաւորւած ինքնասիրութիւնից քթածակերը դողալով լայնացան, ծանրացաւ շնչառութիւնը, կարծես շնչափողի մէջ մի օձ կծկւեց, և նա կարողացաւ արտասանել մի բառ միայն.

—Լաւ!... և ուրիշ ոչինչ։

Այդ օրից Սևումեանի սիրտը լցւած էր վրէժխնդրութեան թոյնով։ Իւր դժգոհութիւնը ցոյց տալու համար, նա չգնաց վակզալ խմբագրին ճանապարհ դնելու, մինչդեռ Ազատեանը, մի քանի այլ աշխատակիցներ և համակրող երիտասարդների ու օրիորդների մի խումբ ճանապարհորդից առաջ էին հասել կայարան։ Երբ խմբագիրը հարցրեց, թէ «ուր է Սևումեանը? Միթէ այստեղ չէ?» Ազատեանը խորամանկ ժպիտով պատասխանեց.

—Սևումեանը հիւանդ է։

Դորանից յետոյ Սևումեանը մի երկու շաբաթ չերևաց «Ճառագայթի» խմբագրատանը։ Ազատեանի և նորա փոխադարձ դժգոհութիւնը դեռ խուլ էր, դեռ չէր արտայայտւած։ Բայց շուտով մի դիպւած տեղի ունեցաւ, որ երևան հանեց երկուսի սրտումը թաղնւած ատելութիւնը և անբաւականութիւնը։ Մի օր Սևումեանը տարաւ «Ճառագայթի» խմբագրատուն մի յօդւած



և առաջարկեց տպել։ Ազատեանը, յօդւածը կարդալուց յետոյ, պատասխանեց, թէ զարմանում է, որ Սևումեանը այդպիսի մի բան առաջարկում է տպել «Ճառագայթի» մէջ, քանի որ այնտեղ համակրական բառեր կան «Ժամանակ» լրագրի հասցէին։ Սևումեանը նկատեց, թէ այդպիսի նեղ կուսակցութիւն նա չէ հասկանում։ Ազատեանը ասաց, թէ նա առաջին անգամն է լսում Սևումեանից այնպիսի խօսքեր։ Վերջինս հարցրեց նորից. «ուզում է տպել թէ ոչ?» Ազատեանը պատասխանեց. «երբէք!» Սևումեանը շտապով ծոցի գրպանը դրեց յօդւածը և լուռ դուրս եկաւ Ազատեանի մօտից։ Այն գնալն է, որ գնաց։

Այժմ շարունակենք մեր ընդհատած պատմութիւնը։

Սևումեանի աչքերը վառւում էին ազնիւ զայրոյթով. գոնէ այդպիսի տպաւորութիւն էին գործում նայողի վրայ։ Նորա շրթունքով կարծես խօսում էր ինքը արդարութիւնը, անիրաւաբար վիրաւորւած արդարութիւնը։ Նորա բարկութեան սլաքները ուղղւած էին այժմ «Ճառագայթի» խմբագրի դէմ։

—Ես շատ վեր եմ դասում,—ասում էր նա,—այդ պաշտելի մարդու տաղանդը, հոգեկան կարողութիւնը և կամքը։ Բայց ես միանգամայն դատապարտում եմ նորան, որ նա չգիտէ մարդ ճանաչել, գնահատել մարդուն, և այդ պատճառով շատ անգամ հալածում է արժանաւորին, իսկ անարժան արարածներին առաջ քաշում, երես տալիս և դարձնում յանդուգն ու անտանելի!..

Սևումեանի այս կրակոտ ճառը ընդհատւեց նոյն այն րոպէին, երբ Ոսկերչեանը երևաց դահլիճի դրան շեմքին։

—Այժմ ինձ կարող էք շնորհաւորել,—խօսեց նա, ուրախութեամբ սեղմելով Աշխէնի և Գարեգինի ձեռքը։ Ա, դուք էլ այստեղ էք, պարոն Սևումեան? Բարև!

—Այս լաւ արիր, որ եկար,—ասաց Զաւիկեանը,—

ես հէնց այսօր կամ վաղը ուզում էի քեզ տեսնել մի հարկաւոր գործի համար։

—Բայց թող վերջացնի իւր խօսքը, Գարեգին,— նկատեց քոյրը և, բռնելով Արտաշէսի ձեռքից, նստեցրեց իւր մօտ բազմոցի վրայ, և հարցրեց. «Ինչի համար քեզ շնորհաւորինք?»

—Ես արդէն խմբի մէջ եմ,—պատասխանեց Ոսկերչեանը,—և շուտով կը լինի իմ դեբիւտը։

—Յաջողութիւն եմ ցանկանում, բարեմաղթեց Գարեգինը։

—Չիչագեանին էլ ընդունեցիք խմբի մէջ? հարցրեց Սևումեանը։

—Այո՛, այո՛։

—Ծիծաղելի է, այնպէս չէ? լսեցի, ուզում է Համլէտի դերը կատարել, Ինձ Զամբազեանը ասաց։

—Ցետոյ, խումբը լաւ է կազմուած? հարցրեց Գարեգինը։

—Յոյս ունիմ,—պատասխանեց Ոսկերչեանը,—որ այս տարւայ մեր խմբից հասարակութիւնը շատ գոհ պիտի մնայ։

—Բայց ափսոս որ Ադամեանը չի լինիլ! բացականչեց օր. Աշխէնը։

—Նա այժմ ճանապարհորդում է։ Թիֆլիսը նորան չէ բաւականացնում։ Եւ այդ, իհարկէ, հասկանալի է։ Նա մի հանճարեղ արտիստ է։ Եւ որքան մեծ է մէկի տաղանդը, այնքան առաւել մեծ է նորա փառքի ծարաւը։ Կէտ ձուկը ովկիանոսի մէջ միայն իրան լաւ կը զգայ։ Թող գնայ և աշխարհի չորս կողմը տարածէ իւր փառքն ու համբաւը։ Իսկ մենք, փոքրիկ ձկնիկներս, կը լողանք փոքրիկ աւազանում։

—Բայց դու չես վախենում, Արտաշէս,—ասաց Գարեգինը կատակով,—որ փոքրիկ աւազանը քեզ համար էլ շատ նեղ լինի?



—Այդ կ'երևայ ապագայում,—պատասխանեց Ոսկերչեանը կատակի ձևով։

—Իսկ ինչ էք ընտրել ձեր դեբիւտի համար? հարցրեց Սևումեանը։

—Երկուսից մէկը,—պատասխանեց արտիստը, Սիւլլիւան կամ Կոռնուդօ։

Սևումեանի դէմքին հեգնական ժպիտ երևաց, և Ոսկերչեանը այդ նկատելով, հարցրեց.

—Ինչու էք ծիծաղում?

—Ես չեմ ծիծաղում,—պատասխանեց Սևումեանը։ Բայց կարծում եմ, հրաշք պէտք է համարել, եթէ դերասանը, գրեթէ առաջին անգամ բեմ դուրս գալով, կարողանայ յաջողութեամբ կատարել մի այնպիսի պատասխանատու դեր, որպիսին է Կոռնուդօն կամ նոյն իսկ Սիւլլիւանը։

—Իրաւունք ունիք,—ասաց Ոսկերչեանը հեգնութեամբ և իսկոյն, երեսը դարձնելով դէպի Աշխէնը, խօսեց բոլորովին կողմնակի առարկայի մասին։

Այն անտարբերութիւնը, նոյն իսկ արհամարանքը, որ ցոյց տւեց սկսնակը մի անձի վերաբերմամբ, որ տարիներով գործում էր մամուլի մէջ և իրան կարող էր զգում գրչի մի շարժումով Ոսկերչեանի նման տասին տապալելու, դիպաւ Սևումեանի սրտի ամենանուրբ տեղից, և սա լռեց ու Գարեգինի հետ սկսեց նոյնպէս օտար առարկայի մասին խօսել։

Սևումեանը շուտով գնաց և, հրաժեշտ տալիս, Ոսկերչեանին հազիւ արժանացրեց իւր ճնաս բարևին։

Գարեգինը մի դաս առաջարկեց Արտաշէսին։ Ոսկերչեանի ուրախութեանը չափ չկար, երբ նա իմացաւ, թէ այն աշակերտը, որի հետ պիտի պարապէր, օր. Վարթուհեանի եղբայրն է։

—Ինչ վերաբերում է պայմաններին, աւելացրեց

Զառիկեանը, այդ մասին դու պէտք է գնաս նոցա մօտ և անձամբ խօսես մօր հետ։

—Իսկ երբ գնամ?

—Երբ կամենաս։ Օրինակ, հէնց վաղը։ Որքան շուտ, այնքան լաւ, որովհետև ուսումը արդէն սկսած է։

Ոսկերչեանը վեր կացաւ, որ գնայ։ Նորան խնդրեցին ճաշել ընթրիքի։ Նա պատասխանեց, որ չէ կարող։ Մինչև մեկնելու րոպէն, նա մի քանի անգամ պատրաստուեց Գարեգինից փող խնդրել, բայց ամօթից լեզուն կապ էր ընկնում. այնպէս որ նա վճռել էր լռել այդ մասին։ Սակայն, երբ նա, ցտեսութիւնից յետոյ մի երկու քայլ արաւ դէպի դուռը, կարծես մի անտեսանելի ձեռք ետ մղեց նորան, և նա, երեսը դարձնելով դէպի Գարեգինը, կամացուկ յայտնեց իր ցանկացածը։ Ուզածը ստացաւ և հեռացաւ անմիջապէս։ Ճանապարհին գնեց մի գրաւնքայ կալբաս և հաց և շտապեց դէպի „Россія“ հիւրանոցը, որտեղ նորա բնակարանն էր։

## III

Հետևեալ օրը Ոսկերչեանը գնաց Վարթուհեանների մօտ։ Երբ, դրան առջև կանգնած, մատով հուպ էր տալիս էլեկտրական զանգի կոճակը, նորա մօտից փողոցով անցան երկու ֆայտոն. մէկի մէջ նստած էր «Ճառագայթի» խմբագիրը իւր կնոջ և աղջկայ հետ, իսկ միւս կառքի մէջ Ազատեանը, որը մի կերպ տեղաւորուած էր ճանապարհորդների իրերէնների մէջտեղը։

Ուրեմն, արդէն վերադարձել է «Ճառագայթի» խմբագիրը?» մտածեց Ոսկերչեանը, որի առջև իսկոյն դուռը բացուեց, և նա ներս մտաւ։

Նորան ընդունեց դահլիճում օր. Մարիամը սիրալիր կերպով և քաղցր ժպիտով։ Ոսկերչեանը զարմացաւ, մի տեսակ փոփոխութիւն նշմարելով նորա դէմքի վրայ։ Նա



գուշակեց էր—այդ մէկ։ Ցետոյ կրկին մի ինչ որ փոփոխութիւն աչքերի արտայայտութեան մէջ. հայեացքը կարծես առաջւանից աւելի հանդարտ էր և աւելի մտախոհ։ Բայց և այնպէս այժմ Ոսկերչեանին նա աւելի գրաւիչ երևաց իւր սև շրջազգեստի և վարդագոյն բլուզի մէջ, որի տակից որոշւում էր հասուն կուրծքը իւր զոյգ բլրակներով։ Հազիւ մի երկու բերան կարողացան խօսել իրար հետ, եկաւ տիկին Վարթուհեանը։ Ոսկերչեանը յայտնեց իւր այցելութեան նպատակը և աւելացրեց, որ իրան ուղարկել է Գարեգին Զառիկեանը։ Նա համաձայնեց իրան առաջարկած բոլոր պայմաններին։ Երբ վարձատրութեան մասին էր խօսքը, օրիորդը շտապ հեռացաւ միւս սենեակը, որովհետև իրան անյարմար զգաց ներկայ լինել։

Երբ Ոսկերչեանը դուրս եկաւ Վարթուհեաններից մօտից, նա իրան ամենաբաղդաւորն էր զգում աշխարհիս երեսին։ Ամեն օր նա պիտի յաճախէ Վարթուհեանների բնակարանը, ամեն օր մօտիկից պիտի տեսնէ օրիորդ Մարիամի երեսը և գուցէ ամեն օր առիթ ունենայ նորա հետ խօսելու!

Դեռ վարձատրութիւնը մի կողմ։ Նա ուրեմն ապահով է! եթէ նոյն իսկ ներկայացուցիչներից նա մի կոպէկ չստանայ, դարձեալ իրան կարող է ապահով համարել! Նա ուրեմն ստիպւած չի լինիլ, իւր ապրուստի համար, ամեն անգամ հազար ու մէկ տատանումներից յետոյ, ամօթով իւր ձեռքը մեկնել ուրիշներին պարտքեր անելու համար!...

Եւ Ոսկերչեանի աչքի առջև բացուեց մի գեղեցիկ պերսպեկտիւ, որ աւելի գրաւիչ էր, քան անցած օրերի բոլոր պատրանքը, քանի որ նախկին ցնորքները, իրականութիւնից հեռու, օդի մէջ էին ճախրում, մինչդեռ ներկայ յոյսերը իրական հողի վրայ էին կանգնած։

Ոսկերչեանը տեսնում էր, որ կամաց կամաց մօտենում է իւր նպատակին: Բայց ահա մի հանգամանք էլ աւելի մեծ փայլ տւեց նորա երջանկութեանը: «Մանկական թերթի» մէջ լոյս տեսաւ մի բանաստեղծութիւն Արտաշէս Ոսկերչեանի ստորագրութեամբ, և վերնագիրն էր «*Վերան ծաղիկը*»: Նիւթը վերցրել էր հեղինակը մի ժողովրդական աւանդութիւնից, որ պատմել էր նորան հայրը՝ ծննդավայրում եղած ժամանակ: Ահաւասիկ բովանդակութիւնը: Պարսկաստանում կայ մի բարձր սար, և այն սարի գագաթին կայ մի ծաղիկ, որ հրաշալի զօրութիւն ունի. ով կարողանայ բարձրանալ լերան ծայրը և այն ծաղիկը կտրել, նա ձեռք կը բերի անմահութիւն: Բայց այնտեղ հասնելը շատ դժւար է. ծաղիկը պահպանում են լերան չար ոգիները, և գնացողը էլ եւս չէ գալիս: Մի անգամ մի քաջասիրտ պատանի, որի աչքերը աւելի գեղեցիկ էին, քան թէ չէյրանի աչքերը, և որի գեղեցկութեան առաջ ամեն մի չարութիւն վայր կը դնէր իւր զէնքը, խիզախում է բռնել սարի կատարը, ուխտելով—կամ վերադառնալ անմահութեան ծաղիկը ձեռին, կամ այլ ևս երբէք չվերադառնալ: Նա յաղթում է բոլոր արգելքներին. նա տեսնում է այն ծաղիկը, որի թերթիկները ոսկի գոյն ունէին. նա ուրախութիւնից այնպէս չփոթւում է, որ այն րոպէին, երբ ձեռքը ծաղկի ցողունին է հասցնում, որ կտրի, ոտը սլկւում է, և պատանին գլխիվայր ընկնում է անդունդը:

Այս ոտանաւորը ընդունելութիւն գտաւ հասարակութեան մէջ: Գարեգինը այնքան հաւանեց, որ համբուրեց իւր «*Թանկագին բարեկամի*» ճակատը: Օր. Աշխէնը ամուր սեղմեց նորա ձեռքը և ասաց. «*Շնորհաւորում եմ. կեցցէ Արտաշէսը!*» Յայտնի վիպասաններից մէկը ծանօթացաւ նորա հետ փողոցում և յայտնեց իւր հրճւանքը նորա բանաստեղծութեան առիթով: Մի ուրիշը ժամանակակից



հեղինակներից, որը, առաջինի նման, 60-ական թւականների երիտասարդներից էր, խորհուրդ տւեց Ոսկերչեանին թողնել դերասանութիւնը և նւիրւել գրականութեան: Գրականագէտների մի որոշ շրջանում նորա մասին կարծիք կազմւեց, թէ «Ոսկերչեանը ապագայ է խոստանում»:

Բայց ինքը Արտաշէսը ինչպէս ուրախացաւ! Անդրանիկ գործը միշտ քաղցր է լինում, և Ոսկերչեանը խենթ լազարի էր նման: Նա կարդում էր, և չէր կշտանում: Թէև նա անգիր գիտէր իւր բանաստեղծութիւնը, բայց եթէ ասեմ, տասը անգամ իրար վրայ կարդաց, դեռ էլի քիչ համարեցէք:

Ոսկերչեանի համար սկսւել էր կեանքի բախտաւոր շրջանը: Նա ոտը դրել էր արդէն բեմական և դրական ասպարիզի վրայ, և առաջի քայլը աւելի քան յաջող էր: Ահա ինչու նորա սիրտը լցւած է անասելի բերկրութեամբ, իսկ դէմքին հոգսերի հետք, թախծութեան նշոյլ անգամ չկայ: Նա գոհ է իւր վիճակից և առայժմ աւելի ոչինչ չէ ցանկանում: Երբեմն նորան այցելում է ոգևորութիւն, որից աւելի վեհ և երանելի դրութիւն չկայ մարդու համար, և նա զգում էր իւր մէջ ոգու բարձրանալը: Այդպիսի րոպէներին նա իրան կարծես առւծ է զգում, մի կորովի և հպարտ առւծ, որին տապալելու համար շատ զօրեղ թշնամիներ են հարկաւոր: Եւ մեծութեան փափաքը նորոգւած ոյժով լցնում է նորա հոգին:

Բազմաթիւ ընկերների մէջ նա հեշտ որոշւում էր իւր արտաքին կերպարանքով: Քայլերը համարձակ են, լայն ճակատը միշտ բաց, գլուխը բարձր պահած. երբ խօսում կամ ծիծաղում է փողոցում, ծանօթներին հանդիպելիս, անցորդների ուշադրութիւնն է գրաւում նորա արտի խորքից բղխող առողջ, մաքուր, դուրեկան բարիտոնը:

Ըստ երևութին, նա թողել է այն ամենը, ինչ որ կրում էր պատանեկան հասակի դրոշմ: Նա այժմ կատարեալ երիտասարդ էր, լուրջ և խոհուն: Նա էլ չէ աշխատում իր փողպատը կապել անպատճառ Բայրնի նման և ոչ ջանք է դնում իր դլխի մազերը Բայրնի գանգուրներին նմանեցնել, թեև այդ գանգուրները առանց արհեստական միջոցների էլ, անչափ դեղեցիկ են: Ընկերական անխորհուրդ քէֆեր այլևս չեն գրաւում: Փողոցներում թափառելու կարիք չէր զգում նա և ոչ էլ ժամանակ ունէր դորա համար:

Երեկոները նա գնում էր Վարթուհեաններին մօտ և սովորցնում օր. Մարիամի եղբօր Սերեժային դասերը: Պարապում էր նորա հետ սիրով և եռանդով և աւելի ժամանակ էր գործ դնում, քան պարտաւոր էր գործ դնել ըստ պայմանին: Ժամացոյցին նայում էր միայն այն ժամանակ, երբ փողոց էր դուրս գալիս:

Իբրև վերին աստիճանի պարտաճանաչ ռեպետիտոր, նա չէր կարող Վարթուհեաններին համակրութիւնը չգրաւել, և Գարեգինին մի քանի անգամ առիթ են ունեցել իրանց շնորհակալութիւնը յայտնելու թէ օր. Մարիամը, թէ նորա մայրը՝ Զառիկեանի յանձնարարած ուսուցչի համար:

Հակառակ սպասածին, Ոսկերչեանին միշտ չէր յաջողւում տեսնել իր աշակերտի քրոջ հետ, և, երբ չէր տեսնում նորան, տխուր էր դուրս գալիս Վարթուհեանների տանից: Բայց փոխարէնը, երբ դասից առաջ կամ դասից յետոյ նա հանդիպում էր օրիորդին, որը ոչ մի անգամ առանց սիրալիր ժպիտի չէր ողջունում նորան, և մի քանի րոպէ խօսում էր հետը, այն ժամանակ Ոսկերչեանի ուրախութեանը ուրախութիւն չէր հասնիլ:

Ոսկերչեանը հաւատացած էր, որ օր. Մարիամը իրան յարգում է և համակրում: Համակրութեան ապացոյցներ



նա շարունակ որոնում էր և միշտ գտնում՝ թէ անցեալի յիշողութիւնների մէջ թէ ներկայում: Նորա ժըպիտը, նայուածքը, ձեռք սեղմելու ձևը, այն հանգամանքը, որ նա հետաքրքրւում է Ոսկերչեանի անձով, հարցնում է դերիւտի մասին, գովում է նորան Զառիկեանների միջոցով —այս բոլորը նորա համար համակրութեան մի-մի ապացոյցներ էին: Օրիորդի համար մի գաղտնիք չէր, որ այդ երիտասարդը անտարբեր չէ դէպի նա, և այդ նորան շոյում էր: Նա պարզ տեսնում էր, որ՝ իրան հանդիպելիս՝ Ոսկերչեանը ուրախանում էր. ձեռքը սեղմում էր ամուր. աչքերի մէջ նայում էր երկար. ցոյց էր տալիս իր պատրաստականութիւնը՝ ծառայութիւն մատուցանելու նորան. ընթերցանութեան գրքեր էր ընծայում եղբօրը. ընկած ձեռնոցը իսկոյն վերցնում էր յատակից... Բայց օրիորդը իր կանացի անհետաքրքրութեամբ կամ, գուցէ, շնորհիւ իր կանացի թուլութեան, փոխանակ սիրահարի անմիտ ցնորքը խորտակելու, միշտ բորբոքած դրութեան մէջ էր պահում նորա երևակայութիւնը և թոյլ էր տալիս նորան ապրել անիրագործելի յոյսերով:

Ոսկերչեանը, ինչպէս ասացի, սակաւ էր դուրս գալիս զբօսնելու: Տուաւօտները նա իրան հնթարկում էր կամաւոր բանտարկութեան և փակւած սենեկի մէջ՝ պատրաստւում էր իր դերիւտի համար. անդիր էր անում դերը, արտասանում էր կամ ցածր, նւագած ձայնով, կամ գոռում էր այնպէս, որ հարևանները նորան խելագարի տեղ էին ընդունում: Հայելու մէջ դիտում էր իր դիմագծերի փոփոխութիւնը, հայեացքը, մօտեցնում էր շրթունքին փոքրիկ սրւակը, իբր թէ թոյն է ընդունում, յետոյ ընկնում էր յատակի վրայ և ցնցուծներով մեռնում:

Ճաշից յետոյ, ժամը 4-ից մինչև 7-ը նա թատրոնումն էր բեմի վերայ և մասնակցում էր փորձերին:

Մուրադեանը, Զամբազեանը և առհասարակ Ոսկերչեանի բոլոր ընկերակիցները ուշիուշով հետևում էին նորա խաղին, ցանկանալով գոնէ մի աղօտ գաղափար կազմել նորա ընդունակութեան մասին, որը խօսակցութեան առարկայ էր դարձել դերասանների և թատրոնասէրների շրջանում:

Բայց իզուր. Ոսկերչեանը արտասանում էր դերը հազիւ լսելի ձայնով և արագ. ոչ մի շարժում չէր գործում ձեռքերով. մի խօսքով, նա չէր կատարում դերը, այլ ասում էր միայն ստուգելու համար, լաւ գիտէ թէ ոչ: Դորանից եզրակացնում էին դերասանները, որ այդ սկսնակը այնքան մեծամիտն է, որ իրան մեծ արուեստ է երևակայում և նկատողութիւնների կարիք չէ զգում: Եւ այդ կատաղեցնում էր ամենքին. մանաւանդ Զամբազեանին համբերութիւնից հանում էր նորա այդ անձնատաստան բնութիւնը: Այդ պատճառով փորձի ժամանակ մի անգամ մի անախորժ դէպք տեղի ունեցաւ:

Եւ ահա այդ ինչպէս եղաւ:

Ոսկերչեանը, ըստ իւր սովորութեան, արտասանում էր դերը ցածր ձայնով: Յանկարծ բեմի հեռաւոր և մթին անկիւնից դերասաններից մէկը գոչեց.

— Բարձր! Ոչինչ չէ լսւում!

Ոսկերչեանը լուռ բարկութեամբ եռ նայեց դէպի այն կողմը և րոպէական ընդհատումից յետոյ՝ շարունակեց արտասանել, բայց այժմ աւելի և ցածր ձայնով:

Սկսնակի այդ յանդուգն և արհամարհական հայեացքը, որ նա ձգեց իւր արուեստակից ընկերոջ վրայ, շատերի զայրոյթը գրգռեց, և Զամբազեանը, իբրև ընդհանուր տրամադրութեան թարգման, վրդովուած նկատեց.

— Ոսկերչեան! Պանտոմիմա հո չէք կատարում? Մի քիչ բարձր ասացէք էլի!

Ոսկերչեանը զայրոյթով պատասխանեց.



— Պարոններ, ես չեմ կարող, ձեր հաճոյքի համար, կոկորդս պատռել! Առանց այն էլ այնքան գոռգոռացել եմ սենեկում, որ ձայնս կորել է: Եթէ հիմա էլ սկսեմ աղաղակել, էլ ինչ ձայն կը մնայ ներկայացման համար? Վերջապէս մենք ունինք ռեժիսոր. թող նա նկատողութիւններ անէ, եթէ հարկաւոր է գտնում:

Զամբազեանը ձեռքերը խոթեց շալւարի գրպանների մէջ և շտապ հեռացաւ դէպի բեմի մի կողմը, ուր դերասանները խմբւած՝ կամաց խօսում էին: Այն խմբից շուտով մէկը բաժանուեց և գալով բեմի առաջնակողմը, ուր սեղանի առաջ նստած էր ռեժիսորը, ասաց վերջինի ականջին.

— Ինչու նկատողութիւններ չես անում?

Ռեժիսորը պատասխանեց, ուսերը ցնցելով.

— Ինչ կարող եմ անել, պարոններ? Մարդը կատարելագործել է իւր արուեստը և նկատողութիւնների կարօտ չէ:

Մուրադեանն էլ գնաց միացաւ խմբի հետ. ձեռքերի շարժուձեներից և վեր քաշած յոնքերից երևում էր, որ նա աշխատում էր պաշտպանել ընկերների յանդիմանութիւններից:

Ոսկերչեանը մնաց մենակ: Նորա մօտ կանգնած էր միայն Զիչագեանը և սովորում էր իւր դերը, ձեռքին բռնած մի քառածալ թերթիկ: Երբ Ոսկերչեանը վերջացրեց իւր մենախօսութիւնը, մօտեցաւ Զիչագեանին և գլխի նշանով ցոյց տալով խմբի վրայ, ասաց.

— Տեսնում էք, ինչպէս են վարւում ինձ հետ?

Այսպէս ահա, մի կողմից Ոսկերչեանի մեծամտութիւնը, որի զարգանալուն քիչ չէին նպաստում ծանօթների և ընկերների շնորհաւորութիւնները, ձեռքի սեղմուձները և շոյական գովասանքները, միւս կողմից՝ այն բնական նախանձը, որ ծագել էր արուեստակիցների մէջ, մի՛ գուցէ այդ նորելուկը յաջողութիւն գտնի, համակ-

բութիւն ձեւք բերի հասարակութեան մէջ և մոռացնել տայ շատերի անուններըը, որոնք այժմ, առանց ականաւոր ոյժերի, էլի մի բանի տեղ են անցնում,—այդ երկու հանգամանքներըը, ասում եմ, միացան և սկզբից արդէն մի թշնամական պատնէշ ձգեցին Ոսկերչեանի և խմբի միջև։

Ընկերակիցների շրջանը խեթ աչքով էր նայում նոր և վտանգաւոր ախոյեանի վրայ։ Ոսկերչեանը այդ պարզ տեսնում էր և լուրջ մտածում իւր դրութեան մասին։ Բայց նա դեռ ամեն բան չդիտէր։ Նորան յայտնի չէր, որ այդ շրջանից դուրս էլ կան մարդիկ, որոնք անտարբեր չեն դէպի նորա փառքը, և հեռու կանգնած՝ սպասում են... Այդ էր պատճառը, որ նա միամտաբար բարի ցանկութիւնների տեղ էր ընդունում այն անձանց խօսքերըը, որոնք կանգնեցնում էին նորան փողոցում, սեղմում ձեռքը և ասում։

—Շնորհաւորում եմ, պարոն Ոսկերչեան! Ուրեմն մեր բեմի վրայ մի նոր աստղ է ծագում? Շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ! Ցաջողութիւն!...

Այդպիսիներից սրտանց շնորհակալութիւն էր առնում Ոսկերչեանը և հեռանում։

Դեբիւտի օրը մօտենում էր։ Ոսկերչեանը այլ էլ շատ չէր զբաղւում իւր դերով, որովհետև արդէն ուսումնասիրել էր, ինչպէս ինքն էր ասում։

Նորա միակ հոգսը այժմ տոմսակներ վաճառելն էր։

Օր. Աշխէնը սիրով յանձն էր առել տոմսակներ տարածել իւր շրջանում։ Օր. Վարթուհեանը նոյնպէս։ Բացի այդ, նորան օգնում էին տոմսակներ ցրւելու գործում և նախկին դասընկերներից մի քանիսը։ Սակաւ էր պատահում, որ առաջարկւած տոմսակը ետ ուղարկւէր։ Մերժեցին միայն մի երկու ընտանիք հարուստ մեծատուններից, որոնք Ազամեանից յետոյ այլ էլ լայեղ չէին անում հայոց թատրոն յաճախել։



Ներկայացման հասոյթը խոստանում էր շատ յաջող լինել, և այդ սաստիկ ուրախացնում էր Ոսկերչեանին։

Ներկայացումից մի քանի օր առաջ, թատրոնի պատերին կպցրած էին թերթիկներ, որոնք ազդարարում էին հետևեալը. «Հոկտեմբերի 6-ին, երեքշաբթի օրը, Արտաշէս Ոսկերչեանը առաջին անգամ պիտի դուրս գայ բեմ Կոռեադօի դերում։ Մանրամասնութիւնները ապիշաներում»։

Այդպիսի թերթիկներ ցրւած էին նաև մագազիններում, որոնց ահագին ապակիների առջև կանգնում էին անցորդները և կարդում երիտասարդ սկսնակի այդ անհամեստ ռեկլամը։

Շուտով լուրերի բաժնում լրագիրներն էլ յայտարարեցին նորա դեբիւտի մասին։

Վերջապէս դուրս եկան և ապիշանները, որոնց վրայ ահագին տառերով խրոխտանում էր Արտաշէս Ոսկերչեանի անունը։

## IV

Դեբիւտի օրը, ներկայացումից երկու ժամ առաջ, Ոսկերչեանը հագաւ շորերը հագաւ և ածապարեց դէպի թատրոն։ Իւր ծանօթներից Պրոսպէկտում նա հանդիպեց Սևումեանին, որի երեսին նայեց ցրւածութեամբ և շտապ անցաւ մօտովը։ Սևումեանը զարմացած ետ նայեց։ «Ինչու սա ինձ չպիտի բարևէր», մտածեց նա. «չվաստակած և ենթադրական փառքո՞ւն է հպարտացել? Թէ իմ նախկին ծանօթներին է հետևում, որոնք այլ էլ չեն բարեհաճում արժանացնել ինձ իրանց ողջունին?...»

Եւ նա ծիծաղեց սարդոնական կծու քրքիջով ու, գլուխը թափահարելով, խօսեց քթի տակից.

—Դեռ սպասեցէք. ես ձեզ հետ հաշիւներ ունիմ!...

Ինչպէս օձը, որը վշում է և կարծես տանջող պա-

հանջ է զգում շանթել իւր ոտնահարողին, այնպէս էր Սևումեանը իւր թշնամիների վերաբերմամբ, մանաւանդ այդ երեկոյ։ Երկար տատանումներից յետոյ նա վճռել էր այդ օր գնալ այցելութեան «Ճառագայթի» խմբագրին։ Բայց խմբագրութեան բացած դուռը նոյն րոպէին գոցել էր նորա առաջ սրբագրիչի լակոնական պատասխանով.

—Նա չէ կարող ընդունել։

Սևումեանը տեսաւ իրան ոչնչացած, զգաց, որ ամեն բան վերջացաւ, մարեց յուսոյ վերջին ճառագայթը, կորցրեց այդ խմբագրութեան հետ ունեցած վերջին կապը։ Բայց այդ խմբագրութիւնը մի ահագին բանակ էր, և այդ բանակի առաջ նա տեսաւ իրան դէմ յանդիման կանգնած... Բեմի ետև գնալուց առաջ Ոսկերչեանը լինքն էլ չ'իմացաւ, ինչու, քայլերը ծռեց դէպի հանդիսարանը, որ այդ րոպէին բոլորովին մութ էր և դատարկ։ Կարծես տեղումը գամուած՝ յառած աչքերը դարձրել էր նա դէպի վարագուրած բեմը և աշխատում էր երևակայել իրան միևնոյն ժամանակ երկու դերի մէջ՝ Ոսկերչեանը բեմի վրայ, Ոսկերչեանը հանդիսատես։

Յետոյ նա դահլիճից դուրս եկաւ և գնաց բեմի ետև։ Նեղլիկ նրբանցքի մէջ նա պատահեց Զիլչագեանին, որը՝ ձեռքերը ետևին դրած և սուլելով անց ու դարձ էր անում։

—Ա, դու այստեղ ես, Զիլչագեան? ասաց Ոսկերչեանը բարևելով։

—Այո, բաւական ժամանակ է, որ եկել եմ։

—Ուրիշ ոչոք չկայ?

—Ո՛չոք։

Բայց շուտով կուլիսների կողմը սկսեց կենդանանալ։ Մէկը միւսի ետևից երևում էին դերասանները և դերասանուհիները։ Իրարանցում և շարժում նրբանցքից դէպի կուլիսները, բեմից դէպի նրբանցքը, մի սենեակից դէպի



միւս սենեակը։ Որը զգեստի հոգսն է քաշում, որը շտապեցնում է վարսաւիրին։ Մէկը սպիտակ ու վարդագոյն սնգուրով ներկում է ճակատը, այտերը և շրթունքը, միւսը զգեստաւորած և փողպատը կապելով սիրունանում է հայելու առաջ, մի երրորդը իւր օտարոտի շորի վրայ է սրախօսութիւններ անում։ Ոմանք վարագոյրի ծակոտիքից հետաքրքիր աչքով նայում են դէպի դահլիճը և, շտապելով ընկերների մօտ, գոչում են.

—Պարոններ, շտապեցէք. դահլիճը լցւում է!

Երկրորդ զանգը տրւած էր։ Բայց հանդիսականների մի մասը դեռ ճեմում էր ֆոյէում։ Գարեգին Զաւիկեանը անց ու դարձ էր անում այնտեղ օր. Վարթումեանի հետ, և երջանիկ ժպիտը չէր հեռանում ոչ մէկի, ոչ միւսի շրթունքից։ Օր. Աշխէնը երթևեկում էր Ազատեանի հետ, և դէսից դէնից զրոյց էին անում։ Դրան մօտ երևաց այդ ժամանակ Սևումեանը, որը, տեսնելով օր. Զաւիկեանին իւր ոխերիմ թշնամու հետ, ձևացաւ, թէ նորան չկատեց, և առանց բարևելու անցաւ կողքից։ Օր. Աշխէնը, նորան տեսնելուն պէս, դարձաւ խօսակցին և ասաց.

—Պարոն Ազատեան, ձեր բարեկամը։

—Ասացէք «նախկին բարեկամը», որովհետև այժմ— հօ դուք գիտէք?...

Երբ օրիորդը յայտնեց իւր զարմանքը Սևումեանի վերաբերմամբ, որ նա այնքան կարճ միջոցում կարողացաւ այն աստիճան փոխուել, որ գրեթէ անճանաչելի է դարձել, Ազատեանը նկատեց.

—Դուք սպասեցէք, օրիորդ. յետոյ աւելի լաւ կը ճանաչէք այդ մարդուն։ Ես կը պատռեմ այն դիմակը, որ նա կրում է երեսին, և դուք կը տեսնէք նորա իսկական կերպարանքը։

Յետոյ նա հարցրեց.

—Դուք չիշում էք, օրիորդ, որ Սևումեանը մի քանի ամիս առաջ ինչպիսի եռանդով էր աշխատում իւր մատենադարանի համար?

—Այո, այո, ի հարկէ։

—Լաւ է, մի չէք հետաքրքրւում իմանալ, թէ ինչ եղաւ այդ խնդիրը?

—Ես մի քանի անգամ հարցրել եմ այդ մասին, նա միշտ ինձ պատասխանում էր, թէ դա իւր նուիրական գաղափարն է, որ վաղ թէ ուշ պիտի իրագործի։

—Բայց եթէ ես ձեզ յայտնեմ, որ այդ խնդիրը նա ձգել է Լեոտա գետը, այն ժամանակ?

—Ինչպէս թէ?...

—Ինչ որ նա ասում էր, բոլորը բառեր, բառեր, բառեր էին։

—Ուրեմն նա չպիտի բանայ?

—Երբէք։

—Բայց ինչու? Չէ որ նա մի գումար էր ժողովել դրա համար?

Ազատեանը պատմեց իւր գիտցածը մատենադարանի մասին և աւելացրեց վերջումը։

—Սևումեանը կարծում է, թէ այդ խնդիրը ձգձգելով մի բան կարող է վաստակել։ Բայց ոչ. ես այդ բոլորը հրապարակ պիտի հանեմ!

—Եւ այդ բոլորը անում է Սևումեանը, նա, որի ազնուութեան մասին ես այնքան մեծ կարծիք ունէի... Ասաց օր. Աշխէնը, անցողակի հայեացք նետելով Սևումեանի վրայ, որը այդ րոպէին թատրոնասէրների մի խմբի մէջ կանգնած՝ խօսում լսում էր և երբեմն կասկածոտ աչքով երեսը դարձնում Ազատեանի և օր. Զաւրիկեանի կողմը։

Նոյն այդ խմբի մէջ մի քանի պարոններ դուշակութիւններ էին անում Ոսկերչեանի դեբիւտի անյաջողութեան նկատմամբ։



—Անկարելի բան է,—խօսում էր թատրոնասէրներից մէկը՝ մեծ ու կլոր աչքերով և դլուխը թափահարում այնպէս, որ լերկ կատարը, պղնձեայ գաւաթի պէս, փայլփլում էր գազի լուսոյ ճառագայթներից,—անկարելի բան է, որ այդ Ոսկերչեանը, չեմ ասում յաջողի, գոնէ փոքր ինչ տանելի կերպով կարողանայ իւր դերը կատարել։

—Ինչ նրա բանն էր Կոռոդոն? Նկատեց մի այլ պարոն խռպոտ ու հաստ ձայնով.

—Ասում են, իբրեն շատ երևակայում է։

—Այո, իբրեն մի երևելի արտիստ է կարծում։

—Նորա հախիցը պէտք է դալ!

—Դեռ մի տեսնենք, ինչպէս կը լինի։

Այդ չկաճներից մէկը կամ միւսը, խմբից հեռանալով և հանդիպելով այս կամ այն ծանօթին, խօսք էր բաց անում Ոսկերչեանի մասին և վաղօրօք մարգարէանում նորա կրելիք ֆիասկոն։ Այդպիսիները կարծես դիտմամբ աշխատում էին բարձրաձայն խօսել, որպէս զի կողմնակի անձինք էլ իմանան, թէ ինչ կարծիք ունին նոքա նոր դերասանի մասին։ Դոցա շնորհիւ, հասարակութեան մի մասը ոչ բարի զգացմունքներով էր տոգորւած Ոսկերչեանի վերաբերմամբ։ Իսկ մի անբախտութիւն է արտիստի համար, երբ նա երևում է բեմի վրայ դեր կատարելու այնպիսի հանդիսականների առաջ, որոնք եկել են թատրոն կանխակալ կարծիքներով և նախապաշարւած նորա դէմ։ Դահլիճի տրամադրութիւնը մի անհասկանալի զօրութեամբ իսկոյն հաղորդւում է դերասանին, և եթէ լաւ է այդ տրամադրութիւնը, նա ոգևորւում է, նորա վստահութիւնը մեծանում է, աւելի համարձակ է փոխում քայլերը, իսկ եթէ վատ, այն ժամանակ սորա հոդին ընկճւում է, սիրտը ճնշւում, նա կորցնում է իւր ինքնավստահութիւնը, որ այնքան կարևոր պայման է

յաջողութեան, նորա ներշնչման թևերը կորատուում են, լեզուն կապ է ընկնում, շարժուձևերը կաշկանդւում են:

Առաջին արարւածում Ոսկերչեանը դեր չ'ունէր: Այդ միջոցին նա խնամքով պատրաստում էր իւր գրիմը վարսաւիրի օգնութեամբ:

Շուտով պիտի սկսւէր երկրորդ արարւածը, որի մէջ առաջին անգամ պիտի երևար Ոսկերչեանը: Վերջին զանգը տրւած էր: Բեմի վրայից դերասանները շտապով հեռացան: Սցենարիուսը կամենում էր նշան տալ, որ վարագոյրը բարձրացնեն: Բայց նոյն վայրկենին Ոսկերչեանը արագութեամբ իրան ձգեց բեմը, ձեռքը սրտի վրայ և քիչ կռացած ձախ կողմի վրայ, նետւեց բազկաթոռի մէջ և ասաց սցենարիուսին.

—Փիչ սպասիր...

Նորա սիրտը ուժգնապէս բաղխում էր: Աչքերը սևանում էին: Դլուխը պտոյտ էր գալիս: Նորան թւաց, որ այդ րոպէին մոռացել էր դերը սկզբից մինչև վերջ: Բայց կարճատև հանգստութիւն, բոլորը անցաւ:

—Դէ, այժմ կարող ես,—ասաց նա և շտապեց ծածկւել կուլիսի ետև:

Վարագոյրը բարձրացաւ:

Փիչ յետոյ երևաց Ոսկերչեանը:

Հէնց որ մոնսինեօրի հարցուձևերին հետևեցին կոռռաւօյի լակոնական պատասխանները, հանդիսարանի առաջի շարքերից լսեցին ձայներ.

—Բարձր! բարձր!

Այդպէս գոչեցին այն պարոնները, որոնք ներկայացումից առաջ խմբւած էին փոյէում և խօսում էին Ոսկերչեանի դէմ:

Ոսկերչեանը, իւր անփորձութեան պատճառով, դեռ անծանօթ էր թատրոնի ակուստիկային պայմաններին, և նորա արտասանած բառերը սկզբում չհասան մինչև դահլիճի ծայրը: Բայց ուշադրութեան արժանին այն հանգամանքն է, որ «բարձր, բարձր» կանչողները ոչ թէ նորա էին, որ չլսեցին Կոռռաւօյի խօսքերը, այլ նորա, որոնք պարզ լսեցին և հասկացան, թէ ինչ ասաց արտիստը:

Ինչ և իցէ:

Ոսկերչեանը շփոթւեց այդ խօսքերի վրայ: Նորան թւաց, որ այդ նկատողութիւնը մի թշնամական ցոյց էր: Նա խօսում էր մոնսինեօրի հետ, բայց միևնոյն ժամանակ նորա ուղեղի մէջ ուրիշ բան էր կատարւում: «Ովքեր կը լինէին այն պարոնները», մտածում էր նա, «որոնք գոչեցին. «բարձր, բարձր»: Եթէ դա պատահէր փորձի ժամանակ, նա կ'ընդհատէր խաղը, աչքերը կ'ողորէր յանդուգն թշնամու վրայ, իսկ այժմ...» Նա խօսում էր մոնսինեօրի հետ, լսում էր նորան, շարժում էր գլուխը և ձեռքերը, նա կատարում էր դերը, բայց մինչև դործողութեան վերջը նորա ականջին շարունակ հնչում էր ատելի ձայնը. «բարձր! բարձր!»

Երբ Ոսկերչեանը դուրս եկաւ բեմից, նա իրան զգաց այնպէս ոչնչացած, կարծես մէկը ապտակ էր զարկել երեսին, և ինքը չէր կարողացել պատասխանել զարկողին: Ընկերներից ոչ մէկի երեսին չնայեց, ոչ մէկի կարծիքը չ'ուզեց իմանալ: Ինքը իրանից զժգոհ էր, ինքը իրանից ամաչում էր: Միթէ այդ բաւական չէր? Մռայլած դէմքով նա շտապեց դէպի իւր նկուղը, ձեռքի ափով ետ հրեց սենեկի միափեղկ դուռը այնքան ամուր, որ նա պատին զարնւելով ինքն իրան գոցւեց նորա ետևից: Սրատեղութեամբ ընկաւ աթոռի վրայ, բռնեց ձեռքով իւր գլուխը և բռունցքի մէջ այնպէս պինդ ոլորեց մազերը, որ արմատները ցաւեցին, և գանգի մաշկը տեղից շարժըւեց:

Ֆոյէում հաւաքւել էին մեզ ծանօթ թատրոնասէր պարոնները, տաքացած խօսում վիճում էին, և, ըստ

երևութին, Ոսկերչեանի անունը մեծ զայրոյթով էր արտասանւում:

—Ո՛չ, պարոններ, սա յանդգնութիւն է! խօսում էր թատրոնի մոլեռանդ երկրպագուներից մէկը:—Ինչպէս է համարձակւել այդ թշւառականը բեմ դուրս գալ ահագին հասարակութեան առաջ և այն էլ Կոռռադօյի պատասխանատու դերի մէջ!

—Նորան հարկաւոր է խայտառակել լրագիրներում! կրակի վրայ կրակ էր աւելացնում մի ուրիշ պարոն, և ակնոցների տակից պսպղում էին աչքերը:

—Այո՛, չպէտք է խնայել! գոչում էր մի երրորդը:

—Ես նորանից լաւ կարող եմ կատարել այդ դերը!

—Դու նորանից հազար անգամ լաւ կը կատարես!

—Բայց ես ոչ մի կերպ չէի համարձակւիլ!

—Նա մինչև անգամ իրան պահել չգիտէր բեմի վրայ!

—Իսկ զգացմունքից—բոլորովին զուրկ է!

—Ձայն—ամենևին չունի!

—Այո՛, բեմական չէ!

Թատրոնասէրների մի այլ խմբի մէջ, որը աւելի ներողամիտ էր երևում սկսնակի վերաբերմամբ, աւելի մեղմ կարծիքներ էին յայտնում Ոսկերչեանի մասին:

—Երևում է իսկոյն, որ դեռ անփորձ է,—ասում էր մէկը:

—Եւ պահանջել աւելի մի նոր սկսող դերասանից—անկարելի է,—նկատում էր երկրորդը:

—Ձայնը բաւական լաւ է և բեմական:

—Բայց երբեմն շատ ցածր է խօսում:

—Ո՛չ, այնուամենայնիւ շնորհք երևում էր: Ապագայի յոյսեր տալիս է:

—Գրիմը լաւ չէր:

—Դէ գրիմը—դժւար բան է: Դա մի արւեստ է,



որ դերասանը միայն կամաց-կամաց կարող է սովորել և կատարելագործել:

—Ես դժւարանում եմ առայժմ իմ կարծիքը յայտնել: Արտիստը իւր կարողութիւնը ցոյց կը տայ միայն այն ժամանակ, երբ կլանւած է իւր դերով: Ոսկերչեանը կարծես իւր դերի մէջ չէր...

Երրորդ արարւածի մէջ Ոսկերչեանը համեմատաբար աւելի լաւ էր: Նորա խաղի մէջ երևում էր ջերմութիւն և կենդանութիւն: Երկու բաժակ գինին էր արդեօք պատճառը, թէ այն բարկութիւնը, որով նա այս անգամ ոտ դրեց բեմի վրայ, նա ոգևորւած էր: Ինչպէս մարդ յուսահատական կռւի մէջ, իւր մօտալուտ անկումը գուշակելով, լարում է իւր բոլոր ոյժերը և տաքանում, այնպէս էր Ոսկերչեանը երրորդ գործողութեան մէջ: Նա սկսել էր տպաւորութիւն գործել, այնպէս որ դահլիճում տիրում էր կատարեալ լռութիւն՝ դադարել էր չկամութեան ձայնը: Զառիկեանները և օր. Վարթումեանը նըստած էին միևնոյն կարգում իրար մօտ, և նոքա հրճւանքով հաղորդեցին միմեանց իրանց կրած զգացմունքները:

—Հիմա լաւ է, այնպէս չէ?

—Այո՛, գեղեցիկ է:

—Այսուհետև լաւ կը գնայ:

Բայց շուտով խաղը կրկին թուլացաւ, և ահա ինչու: Յուշարարը, սխալմամբ, թէ դիտմամբ, Աստուած է յայտնի, երկու թերթը միասին է շուռ տալիս և յուշարարում է բոլորովին ուրիշ բան, այնպէս որ, եթէ իւր դերը լաւ չիմանար Ոսկերչեանը և կրկնէր յուշարարի խօսքերը, դուրս կ՚գար մի անհեթեթ բան, մի կատարեալ խայտառակութիւն Ոսկերչեանի համար: Թէև նա անգիր գիտէր իւր դերը և շարունակեց անսայթաք արտասանել, բայց այդ հանգամանքը փոխեց նորա տրամադրութիւնը, նա զայրացաւ, և քիչ էր մնում հեռանար

բեմից և հրամայէր իսկոյն վարագոյրը իջեցնել։ Ոսկերչեանի սրտի մէջ վախ ու կասկած էր ընկել։ Նորան թւում էր, որ շատերը իւր ընկերներից դատադրութիւն են կազմել իւր դէմ և ուրախ կը լինեն, եթէ նա տապալւի։ Յուշարարի սխալը դատադրութեան մի ապացոյց էր, նորա կարծիքով, և այդ բանի մէջ նա տեսաւ չար դիտաւորութիւն։ Արաբացի վերջը բոլորովին փճացաւ, ի մեծ ցնծութիւն նորա չարակամների։

Երբ վարագոյրը իջաւ, Ոսկերչեանը բարկութեամբ գոչեց յուշարարի վրայ, ասելով.

—Ինչու կամեցաք ինձ սխալի մէջ ձգել?.

—Ներողութիւն, պարոն Ոսկերչեան։ Ի հարկէ, հօ դիտմամբ չէր? Ես սխալւեցի և փոխանակ...

—Դուք սխալւեցիք?!...

—Ապա ինչ էք կարծում?

Քանի որ անկարելի էր ապացուցանել, թէ յուշարարի արածը մի սխալմունք էր թէ չար դիտաւորութեան գործ, ուստի Ոսկերչեանին մնում էր միայն իւր զայրոյթի կրակը հանգցնել և շտապ հեռանալ նորա մօտից։ Նորա աչքին դիպաւ յանկարծ Ջամբազեանի երեսը, և նա պարզ նկատեց նորա դէմքին հազիւ զսպւած բաւականութեան չարանշաց ժպիտը։ Նա տեսաւ իւր ընկերներին, որոնք կուլիսների եաև նրբանցքի ծայրում կանգնած էին և կամաց խօսում։ Նա լսեց մէկի ձայնը, որ ասում էր.

—Հաւարակութիւնը գժգոհ է...

«Բայց ահա և Սևումեանը։ Նա ինչի համար է եկել բեմի եաև դերասանների մօտ։ Արդեօք նա չէ այդ լուրը բերել դահլիճից? Ահա Մուրադեանը մօտեցաւ և բարևեց։ Նորա խօսում են և, ինչ տարակոյս, Ոսկերչեանի խաղն են դատափետում։ Ջամբազեանն էլ գնաց նորա մօտ։ Եաշօ, Եաշօ! Այն ինչ ժպիտ է նորա դէմքին!... Իսկ Զիչագեանը, Աստւած, ինչպէս քծնում է Սևումեանին! Չէ որ Սևումեանը-բեցենզենտ է!... Այսպէս էր մտածում Ոսկերչեանը, նայելով շուրջը, և իզուր էր որոնում մէկին, որ մօտ գար, խրախուսէր, սիրտ տար նորան։

Ոսկերչեանը մտաւ սենեակը և մենակ սկսեց անց ու դարձ անել այնտեղ՝ ձեռքերը կրծքին ծալած, տխուր, կորագլուխ։

Այդ ժամանակ դրան մէջ երևաց բարձրահասակ մի պարոն և, Ոսկերչեանի անունը տալով, մօտեցաւ նորան և ձեռք տւեց։ Դա ծանօթ բժիշկ էր։

—Դուք տկար էք, պարոն Ոսկերչեան? հարցրեց նա, ակնոցի միջից նայելով նորա երեսին,

—Ես—տկար? եղաւ Ոսկերչեանի զարմացական պատասխանը։

—Այո, ինձ ուղարկեցին այստեղ։ Ուրեմն դուք առողջ էք? Ոչինչ չէ պատահել?

—Կատարեալ առողջ։

—Ներողութիւն, պարոն Ոսկերչեան։ Շատ ուրախ եմ, որ առողջ էք,—ասաց բժիշկը և իսկոյն դուրս եկաւ գնաց։

«Այս ինչ հանելուկ էր?» մտածեց Ոսկերչեանը և զարմանքով նայեց բժշկի եաևից։ Բայց հանելուկը առայժմ ճնաց հանելուկ։ Չնայած որ նա գրեթէ իւր բոլոր աբեսատակիցներին հարցրեց այդ մասին։ Ոչ ոք չկարողացաւ կամ չկամեցաւ ասել, թէ ով կամ ինչ նպատակով էր բժիշկ ուղարկել Ոսկերչեանի մօտ.

Վերջին արարւածում, ինչպէս յայտնի է, կոռոդոծն մեռնում է։ Եւ Ոսկերչեանը սրւակով թոյն ընդունեց և չզաձգութեան ցնցումներով մեռաւ։ Նորա մեռնելը, ինչպէս երևաց, շատերին դուր եկաւ, որովհետև, վարագոյրը իջնելուց յետոյ, անմիջապէս հետևեցին ծափահարութիւնները, և սկսեցին կանչել Ոսկերչեանին։

թատրոնում միշտ պատահում են ներողամիտ հանդիսատեսներ, որոնք շատ բան չեն պահանջում դերասանից ծափահարելու համար: Նոքա գոհ են, որ արտիստը իրանց զբաղմունքեան համար թոյլ է խմում և մեռնում: Այդպիսի ծափահարութիւնների Ոսկերչեանը այդ երեկոյ արժանացել էր մի քանի անգամ: Բայց այդ ցոյցը նորան ամենևին չուրախացրեց:

Դեբիւտը անցաւ անշուք: Ինչ որ երազում էր, չիրականացաւ: Ո՛չ աղմուկ, ո՛չ բուռն կեցցէներ, ո՛չ տեղացող ծաղիկներ, ոչ ծածանուղ թաշկինակներ... Այդ բոլորից և ոչ մէկը չտեսաւ Ոսկերչեանը: Եւ ահա նա պիտի դնար իւր կացարանը մեն-մենակ, սիրտը կոտրուած, տխուր, նա պիտի տանէր իւր հետ անփառունակ, անշուք դեբիւտի գերեզմանաքարի պէս կուրծքը ճնշող ծանր տպաւորութիւնը:

—Իմ դեբիւտը իմ փայփայած երազներից մէկն էր, և նա օդը ցնդեց! մրմնջաց Ոսկերչեանը, դուրս գալով թատրոնից:

## V

—Ա՛խ, մի հանգիստ քուն, մի ինքնամոռացում! ասաց նա, մտնելով իւր սենեակը:

Եւ անմիջապէս հանեց շորերը ու պառկեց:

Առաւօտեան արթնացաւ շատ վաղ, չնայած որ քնել էր շատ ուշ: Հէնց որ աչքերը բաց արաւ, նոյն ակնթարթում անցած երեկոն, որի հերոսն էր նա, պատկերացաւ նորա առաջ: Զարմանալի բան. կարծես սկի քնած չլինէր այդ գիշեր. այնքան թոյլ էր, յոգնած էր, այնպէս ճնշւում էր կուրծքը, այնպէս ծանր էր շնչառութիւնը: Սառած աչքերը առաստաղի վրայ բևեռած՝ նա ընկած էր անշարժ, և միտքն էր միայն, որ շարժւում էր ուղեղի մէջ և կրկնապատկում հոգեկան ցաւը:



Ինչ յոյսեր էր դրել նա իւր դեբիւտի վրայ, և ինչ դուրս եկաւ? Զարաթախտ երեկոյ! Զորս ժամ շարունակ նա տանջեց նորան, չարչարեց, սպանեց և կիսամեռ կիսակենդան դիակի պէս ձգեց նորան մահճի մէջ!...

Դեբիւտ! Դա այն անխիղճ, անողոքելի դատաւորն է, որ յաճախ որոշում է սկսնակների վիճակը, խորտակում է յոյսերը, սևացնում ապագան և կեանքի վերջակէտը դնում!

Այս ինչ տեղը նա բոլորովին փչացրեց: Այն ինչ տեղը նա կատարեց սովորածի հակառակ: Մի գործողութեան մէջ նա երկու անգամ շփոթեց: Մի տեսարանում նա բաց թողեց մի քանի կարևոր խօսքեր: Մի անգամ նա մոռաւ բեմ մի քիչ աւելի ուշ: Այդ բոլորը անփորձութեան հետևանք էր:

Բայց ինչու շրջապատողներն էլ վիրաւորել էին այն չար ոգու հետ, որը կարծես վճռել էր միանգամից տապալել ջահել դերասանին?

Այն ով էր, որ հասարակութեան մէջից գոչեց. «բարձր, բարձր?» Ինչու յուշարարը կամեցաւ նորան շփոթեցնել և ծիծաղելի դարձնել հանդիսականների առաջ? Իսկ ընկերները, ընկերները... Նոքա ինչու էին ուրախացել? Իսկ քժկին ով էր ուղարկել և ինչ նպատակով էին ուղարկել?... Այդ պէտք է իմանալ, անպատճառ պէտք է իմանալ!

Բայց այնուամենայնիւ հետաքրքրական է ինչ տպաւորութիւն է գործել նա հասարակութեան վրայ: Կարելի է, իւր սեփական անձի ամենախիստ դատաւորը հէնց ինքն է, որ կայ? Գուցէ հանդիսականներից շատերը գոհ են մնացել?

Երեկոյեան, երբ դասի գնայ Վարթուհեանների մօտ, նա կարող է հանդիպել օրիորդին: Ա՛խ, նա, նա ինչ կ'ասէ? Արդեօք չհիասթափեց? Արդեօք չփոխեց իւր կարծիքը Ոսկերչեանի մասին?

Դասից յետոյ նա կ'երթայ Զառիկեաններին մօտ։ Այնտեղ նա կարծիքներ կը լսէ, կարծիքներ առանց շողոքորթութեան, առանց չափազանցութիւնների։ Նա կ'իմանայ այնտեղ, թէ ինչ էին խօսում հասարակութեան մէջ իր խաղի և ընդունակութիւնների մասին։ Այնտեղ նորան կը խրախուսեն, կը միխիթարեն։ Ամենից շատ այժմ նա քաջալերութեան է կարօտ։

Բայց այդ բոլորը—երեկոյեան։ Իսկ այժմ? Ինչպէս համբերել մինչև երեկոյ? Արդեօք մի չ'անցնել Պրոսպեկտով? Այո, այո, այդ լաւ կը լինի։

Ոսկերչեանը վերկացաւ, հագնուեց, խմեց թէյը և պապիրոսը կպցնելով դուրս եկաւ փողոց։ Երկինքը ամպած էր, անձրև էր գալիս, փողոցներում ցեխ և վազող առուակներ։ Իւր ծանօթներից նա ոչ մէկին չպատահեց։ Ով պիտի ախորժէր զբօսնելու այդ անպիտան եղանակին?

Նա վերադարձաւ իւր բնակարանը։ Սենեկի դրան մօտ նա դրեց չորանալու բաց հովանոցը, ինքը մտաւ ներս, և մահճակալի վրայ ձգուելով՝ կրկին խորասուզուեց մտածմունքի մէջ...

Երեկոյեան նա գնաց Վարթումեանների տունը։ Նախասենեակում զիլ մետաղաձայն հաչոցով նորա առաջ դուրս եկաւ փոքրիկ շնիկը, որին այնքան սիրում փայփայում էր օրիորդը, որը իրան այնքան լաւ էր զգում օրիորդի գրկում և նորա համար մի կենդանի խաղալիք էր։ Իսկոյն նա ճանաչեց սովորական հիւրին և ուրախ-ուրախ պոչը շարժելով առաջ ընկաւ և կանգնեց դրան մօտ, կարծես ուզում էր նորան դահլիճ հրաւիրել։ Ոսկերչեանը, ներս մտնելուց առաջ, վերցրեց շնիկին, շոյեց գլուխը և վիզը, համբուրեց նորա մաքուր-սպիտակ դանդուրները, որոնց, ով գիտէ, քանի անգամ է դիպել նորա շրթունքը, յետոյ վայր դրեց յատակի վրայ և, երբ կամենում էր դուռը բաց անել, երգի ձայն լսեց դահլիճից։



—Վա՜հ, Գարեգինն է!... Ուրեմն նա այստեղ է?... Այս լաւ է!

Ասաց ու գնաց ներս։

Դաշնամուրի առաջ նստած էր օր. Վարթումեանը և դաշնակցելով երգչին՝ նւագում էր, և նորա կողքին կանգնած էր Գարեգինը այնքան մօտ, որ նորա թեւը կիպ կպած էր օրիորդի ուսին. նա երգում էր «Ո՛հ, ինչ անուշ և ինչպէս զով»։

Իսկոյն ընդհատուեց նւագը և երգը։

—Շարունակեցէք, շարունակեցէք, խնդրեմ,—ասաց Ոսկերչեանը՝ տեղումը կանգնելով։

Գարեգինը մեքենաբար ետ քաշուեց օրիորդի մօտից, օրիորդը ետ ընկաւ աթոռի թիկունքի վրայ։ Երկուսն էլ կարծես շփոթուեցին, կարծես այդ րոպէին ոչոքի չէին սպասում, կարծես ուրիշի ներկայութիւնը նոցա անհաճոյ երեւաց։

Ոսկերչեանը գիտէր, որ Զառիկեանները և Վարթումեանները միմեանց մօտ գնալ գալ ունին, ինչպէս ծաղիկները։ Բայց նա չէր սպասում, որ մի այսպիսի տեսարանի կարող է հանդիպել։ Գարեգինը և Մարիամը մենակ դահլիճում։ Մէկը երգում է, միւսը նւագում։ Երջանիկ զոյգ! Բախտաւոր ժամ!

Բայց ինչու Ոսկերչեանին տեսնելուն պէս՝ երկուսն էլ շփոթուեցին? Ինչ շփոթուելու բան կար?

Դա առաջին անգամն էր, որ կասկած ընկաւ նորա սրտի մէջ իւր բարեկամի և իւր սիրոյ առարկայի փոխադարձ համակրութեան մասին։ Ինչ զարմանալու բան կը լինի, եթէ ստուգուի, որ նորա դէպի իրար անտարբեր չենն? Երկուսն էլ դեղեցիկ, առողջակազմ, երկուսն էլ խենթի պէս սիրում են երաժշտութիւնը, երկուսն էլ ունեւոր։ Բայց ո՛չ. եթէ այդպիսի բան լինէր, Գարեգինը անշուշտ չէր ծածկիլ իւր սրտակից բարեկամից. չէ որ

սա համարեա ոչ մի գաղտնիք չգիտէ, որ թագցրած լինէր նորանից?

Բայց... բայց ինչու՞ չփոթուեցին?

Այս բոլոր հարցերը արագութեամբ անցան նորա մտքով այնքան կարճ ժամանակամիջոցում, որքան հարկաւոր էր մօտենալու և երկուսին էլ բարևելու համար:

Օրիորդը խնդրեց, որ նստի: Բայց նա ասաց, թէ պէտք է պարապի Սերեօժայի հետ: Օրիորդը կրկնեց խնդիրքը, նա նստեց:

Վայրկենական լռութիւն, որի միջոցին երեքն էլ ժպտում էին և իրար երեսի նայում:

Առաջինը սկսեց Գարեգինը.

—Չը՛, Արտաշէս, ինչպէս ես երեկւանից դէսը?

—Փառք Աստծուն, ապրում ենք,—պատասխանեց Ոսկերչեանը:

Կրկին լռութիւն:

—Դուք բաւական լաւ կատարեցիք ձեր դերը,—լռութիւնը խանգարեց այս անգամ օրիորդը:

—Շնորհակալ եմ,—գլուխ տալով ասաց Ոսկերչեանը և ինքն էլ զարմացաւ, որ մի այսպիսի սառը, պաշտօնական խօսակցութիւն է սկսել:

Գարեգինը, իբրև մի անձ, որ լաւ ճանաչում էր Արտաշէսին և գիտէր, որ նա փափագում էր կարծիքներ լսելու, ասաց.

—Ի հարկէ, քո խաղի մասին մենք կը խօսենք: Բայց ասա առաջ. գուտ արդիւնք որքան եղաւ?

—Դեռ յայտնի չէ:

—Մօտաւորապէս?

—Լաւ էր: Ես գոհ եմ:

Այդ խօսքի վրայ սեղանատան դուռը բացուեց և շէմքին երեւաց Աշխէնը: Ոսկերչեանին տեսնելուն պէս՝ նա իսկոյն կանգ առաւ դրան մօտ, մոռայլ յոգնածութիւն շինեց դէմքի վրայ, երկարամեայ տանջանքներ կրած մարդու պէս գլուխը թեքեց դէպի մի ուսը և աշխատելով նմանեցնել իր ձայնը երէկւայ Կոռռադօյի ձայնին, արտասանեց.

—Մոնսէյնեօր!

—Bravo, bravo! ծափահարեց Գարեգինը, և բոլոքեքեան ծիծաղեցին Աշխէնի այս կատակի վրայ:

Իսկոյն խօսակցութիւն բացուեց Ոսկերչեանի դերի մասին, այդ խօսք ու զրոյցը գնալով տաքացաւ և վիճաբանութեան կերպարանք ստացաւ: Օրիորդներից մէկը հաւանել էր այս ինչ տեղը, միւսը, ընդհակառակը, այդ տեղը չէր հաւանել, այլ ուրիշ տեսարան էր հաւանել: Միայն երրորդ արարուածն էր, այն էլ սկիզբը, որ երկուսին էլ հաւասարապէս դուր էր եկել: Դերիւտանտը կամեցաւ իմանալ, թէ ընդհանրապէս ինչպէս անցաւ իր խաղը: Օրիորդ Աշխէնը պատասխանեց, թէ բաւական լաւ էր, ոչինչ:

—Իսկ հասարակութիւնը? հետաքրքրութեամբ հարցրեց Ոսկերչեանը:—Ասում են, շատ դժգոհ է մնացել, հա?

—Մինչև անգամ շատ? մէջ մտաւ Գարեգինը, որը մինչ այդ ժամանակ լուռ էր և կարծես հերթի էր սպասում խօսելու:—Այդ ով ասաց? Հասարակութեան անունով մենք կարող ենք խօսել միայն այն դէպքում, երբ մի քան կամ բացարձակ լաւ է ամենքի համար, կամ բացարձակ վատ: Քանի որ այդ չի կարելի ասել երէկւայ ներկայացման մասին, ուստի և ոչինչ չի կարելի ասել հասարակութեան կարծիքի մասին: Յունաստանում, երբ կամենում էին պարգևատրել մրցող հեղինակներին, ներկայացումից յետոյ ժողովրդի միջից ընտրում էին հասկացող մարդիկ, որոնք վճռում էին այն՝ թէ ումն է պատկանում առաջին մրցանակը և ումն՝ երկրորդը: Մեր մէջ այդ չկայ: Ուրեմն ոչինչ չենք կարող ասել, գոհ թէ դժ-

գոհ ձեաց հասարակութեան մեծ մասը կամ ինքը հասարակութիւնը: Չո ձայներ չհաւաքեցինք? Այսքանը միայն հաստատ է, որ Արտաշէսի մասին լսւում էին երկու իրար հակառակ կարծիքներ՝ ոմանք քո մէջ տեսնում էին տղանդ, որ դեռ սաղմի մէջ է, իսկ միւսները ափաշկարա ամեն բան ուրանում էին և ոչինչ չէին կամենում լսել քո ընդունակութեան մասին: Հասարակութեան անունով թող լսեն այն բեղենզենտները, որոնք ամեն անգամ իրանց քմահաճոյ կարծիքը ուզում են կապել հասարակութեան շլինքին!

Արտաշէսը ցանկացաւ լսել յատկապէս իւր բարեկամի կարծիքը, և Գարեգինը քննադատութեան ենթարկեց նորա խաղը. ցոյց տւեց այն բոլոր տեղերը, որոնք լաւ չէին մտածւած, թոյլ անցան, տպաւորութիւն չգործեցին: Բայց միևնոյն ժամանակ յիշեց ուշադրութեան արժանի այն տեսարանները, որոնց մէջ երևաց ջերմութիւն, մինչև անգամ կրակ ու ոգևորութիւն:

—Մի խօսքով,—շարունակեց նա,—ակներև էր, որ դու ունես բեմական ձիրք. բայց այս էլ պարզ էր, որ քեզ պակասում էր փորձառութիւն: Ոսկերչեանին թւում էր, թէ բարեկամը դիտմամբ մեղմ ոճ էր գործածում և խնայում էր իրան, ուսաի և ասաց՝ հոգոց քաշելով.

—Ո՛չ, ես փճացրի իմ դերը, բոլորովին փճացրի! Ես կարող էի շատ աւելի լաւ կատարել, եթէ ինձ հանդիստ թողնէին:

Եւ նա սկսեց գանգատւել հասարակութեան այն մասից, որը իրան պահել չգիտէ թատրոնում և արդէն սկզբից սառը ջուր է ածում դերասանի վրայ և հանգստնում է կրակը, իւր արւեստակից ընկերներից, որոնք խնդում էին նորա անյաջողութեան վրայ, յուշարարից, որը կարծես միացել էր նոցա դաւադրութեան և աշխատում էր նորան շփոթեցնել ամեն անգամ, հէնց որ



նա սկսում էր ոգևորւել և տպաւորութիւն գործել: Յետոյ նա պատմեց բժշկի խորհրդաւոր երևալու մասին և հարցրեց.

—Դուք դահլիճումն էիք, դուք, կարելի է, գիտէք. ասացէք ինձ, խնդրեմ, այդ ինչ հանելուկ էր?

Գարեգինը ոչինչ չգիտեր այդ մասին. նա, երևի, բուֆետն է գնացած եղել: Իսկ օրիորդներին յայտնի էր միայն այսքանը, թէ դերասաններից մէկը յանկարծ ուշաթափւել է, բժիշկ են ուղարկել, որը ուշքի է բերել նորան: Ոսկերչեանի համար հանելուկը ճնաց կրկին հանելուկ, և նա վճռեց այդ մասին տեղեկանալ բժշկից:

Յետոյ նա գնաց պարապելու իւր աշակերտի հետ: Պարապմունքը վերջացնելուց յետոյ նա եկաւ դահլիճ: Այնտեղ նստած էին տիկին Վարթուհեանը, օր. Աշխէնը և Գարեգինը. օր. Մարիամը չկար: Նա հեռացաւ դահլիճից նոյն այն րոպէին, երբ Արտաշէսը դուրը բաց արաւ, որ մտնի: «Այս ինչ է նշանակում?» մտածեց Ոսկերչեանը. «գուցէ իմ ներկայութիւնը նորա համար արդէն սկսել է անտանելի դառնալ?» Արդէն կասկած էր ընկել նորա սիրտը, և նա օրիորդի իւրաքանչիւր անմեղ շարժւածքի մէջ սկսել էր նախատակ տեսնել: Առանց ձեռք տալու, նա դլուխը խոնարհելով ց'աեսութիւն ասաց, որ մեկնի: Տիկին Վարթուհեանը խնդրեց, որ ճնայ և միասին ուրախ ժամանակ անց կացնեն: Ոսկերչեանը տրամադիր էր ճնալու: Բայց երբ Գարեգինն էլ սկսեց խնդրել, որ ճնայ, նա սրտումը բարկացաւ և ասաց կտրակի.

—Ո՛չ, չեմ կարող! ու հեռացաւ անմիջապէս:

Գարեգինը, մնաւանդ տիկինը և օրիորդը, քիչ չզարմացան Ոսկերչեանի այս կոպիտ պատասխանի վրայ:

## VI

Ոսկերչեանը կարծում էր, որ իւր դեբիւտի իսկական գնահատութիւնը գտնելու է լրագրական ռեցենզիաների մէջ։ Նա մտածում էր. «քննադատները ցոյց կը տան, անշուշտ, իմ բոլոր պակասութիւնները, չեն զլանալ ի հարկէ, իրանց բարի խորհուրդները տալ սկսնակին, և՝ եթէ նշմարել են տաղանդի գէթ մի նշոյլ, երևի, քաջալերութեան մի խօսք էլ է կ՚ասեն»։

Ահա այսպիսի յոյսերով առաւօտեան կանուխ նա դուրս եկաւ բնակարանից և գնաց առնելու այն օրաթերթերը, որոնց մէջ, իւր հաշւով, այսօր պիտի երևային վերջին ներկայացման զեկուցումները։ Գնեց «Ճառագայթի», «Ժամանակի» համարները և շտապեց իսկոյն վերադառնալ իւր սենեակը։ Փողոցում անցնելիս նա անհամբերութեամբ բաց արաւ «Ճառագայթը», որ կարդայ, բայց, տեսնելով, որ կառքերի դղրդոցը և երթևեկող մարդկանց աղմուկը չեն թողնում իրան ուշադրութիւնը կենտրոնացնել կարդացածի վրայ, բարւոք համարեց ծալել լրագիրը և, գրպանը դնելով, քայլերը արագացնել։

«Ճառագայթի» կարծիքը ամենից թանկ էր նորա համար, ուստի սենեակը մտնելուն պէս՝ առաջին գործը եղաւ կարդալ նախ այդ թերթի ռեցենզիան։

Բայց ինչ ռեցենզիա, ինչ բան! Դորա փոխարէն, ներքին լուրերի բաժնում մի ութը-տասը տող էր միայն զետեղւած, որ անցած ներկայացման էր վերաբերում։ Այնտեղ ասւած էր, թէ այս ինչ օրը կայացաւ այս ինչ ներկայացումը, և Կոռաադօյի դերը կատարում էր պ. Ոսկերչեանը։ Եւ յետոյ թէ՝ ժողովուրդ շատ կար թատրոնում, բայց ներկայացումը այնքան էլ յաջող չէ կարելի համարել։ Ոսկերչեանը կատարում էր դերը անգոյն և ոչ



մի տպաւորութիւն չգործեց հանդիսականների վրայ. Նա լաւ կ՚անի, եթէ սկսի ցածրից և կամաց-կամաց բարձրանայ, որպէս զի ստիպւած չլինի յետոյ կամաց-կամաց ցած իջնել։ Մի քանի դերակատարների մասին ասւած էր թէ՝ այս մէկը լաւ էր, այն մէկը վատ էր, այն երրորդն էլ միջակ էր։

—Եւ այսքան միայն? Գոչեց նա զարմանքով. արի ու բան հասկացիր այս չոր ու ցամաք զեկուցումից! Իւրաքանչիւր բառից սառը անտարբերութիւն է փչում, իսկ քաջալերական—և ոչ մի խօսք!...

Յոյսը կտրած «Ճառագայթից», նա ձեռքն առաւ «Ժամանակը»։ Սորա ռեցենզիան մի ընդարձակ բան էր և բռնել էր ամբողջ երկու սիւնեակ ու կէս տեղ։ Երբ նա ուզում էր կարդալ յօդւածը, նորան թւաց, թէ իւր բոլոր էութիւնը բռնկեց մի օտարոտի զգացմունքով, որը ոչ ուրախութիւն էր, ոչ վատ նախազգացում, ոչ երկիւղ, այլ այդ զգացմունքների մի տարօրինակ խառնուրդ։ Սրտի զարկերը արագացան, այնպէս որ նա ստիպւած էր մի պահ դադար առնել՝ կազդուրւելու համար։

Յետոյ շարունակեց ընթերցումը՝ թեք ընկած մահճակալի վրայ և արմունկը յենած բարձին։ Յանկարծ, կարծես մեծ գնդասեղի ծակոց զգալով մարմի վրայ, սթափեց և ուղղւեց նստած տեղում։ Ամեն մի վայրկենից յետ նորա դէմքը աւելի և աւելի լուրջ կերպարանք էր ստանում։ Երեսի և ճակատի կաշին գնալով ակօսւում կծկւում էր, այտերը տաքանում էին, և աչքերը կուչ գալիս։ Քթի վերևում եղած խորշը լցւել էր ճակատի իջած կնճիռներով, որոնք երբեմն դողում էին ջղային ցնցումներից։ Սկզբում նորա սրտի խորքից զայրոյթով դուրս էին թռչում զանազան բացականչութիւններ, և ներքին յուզմունքը աստիճանաբար աճում ու աճում էր։ Բայց յետոյ, երբ գրւածքի ոճը դարձաւ խիստ կծու և

արդէն անտանելի, նորա ձեռքը, բազէի ճանկերի պէս, կծկւեց յանկարծ, թերթը ճմլւեց ամուր սղմած բռունցքի մէջ, և բարկութեամբ լցւած՝ նա վեր թռաւ ու տեղումը կանգնեց։

—Դո՛ւ, դու ես կամենում խեղդել իմ տաղանդը? Գոչեց նա բարձր ձայնով, կրճտացնելով ատամները և աչքերը յառելով ճմլւած թերթի վրայ։ Ես քեզ այսպէս պիտի խեղդեմ, այսպէս պիտի խեղդեմ!... Այդ ասելով՝ նա աւելի սաստիկ էր սեղմում իւր բռունցքը և բաց ու խուփ անում ձեռքի թերթը։

Բայց տեսնենք, թէ այն ինչ հրէշ էր նստած յօդւածի մէջ, որ կարողացաւ այն աստիճան ցնցել, տակնուվրայ անել դիւրաբորբոք երիտասարդի հոգին։

Քննադատութիւնը սկսւում էր այն բանից, որ ներկայացումը շատ անյաջող էր, Ոսկերչեանի խաղը ոչ մի տպաւորութիւն չգործեց, և հասարակութիւնը, ափսոսալով իւր կորցրած ժամանակը և փողը, խիստ դժգոհ հեռացաւ թատրոնից։ Ցետոյ բացատրւում է պատճառը, թէ ինչու այդ այդպէս եղաւ։ Դորա պատճառը, բեցենզենտի կարծիքով, նախ այն էր, որ գլխաւոր դերակատարը, այսինքն Ոսկերչեանը, չէր հասկացել իւր դերը և, երկրորդ այն, որ նա չունի բեմական ձիրք և զուրկ է աստւածային կրակից։

Բայց այս չէր, ի հարկէ, որից Ոսկերչեանի զայրոյթը բռնկեց։

Ով ինչ կարող է ասել, եթէ քննադատը չէ հաւատում սորան կամ նորան?

Բանը այն է, որ այդ մեզմ նախաբանից ցետոյ զալիս կիտւում էին իրար վրայ հայհոյանք, ատեր և զրպարտութիւններ, որոնք վերաբերում էին ուղղակի Ոսկերչեանի անձին, նորա բնաւորութեանը, նորա պատւին։



յօդւածի անւանարկու ոգին էր այն հրէշը, որ սատանեց սկսնակ դերձիչի բոլոր էութիւնը։

«Ինչպէս երեւում է,— ասւած էր յօդւածի մէջ,— այդ պարոնը մի չափազանց յանդուգն և փառամոլ պատանի պէտք է լինի, որ համարձակւել է մի ինտելիգենտ հասարակութեան առաջ բեմ դուրս գալ, այն էլ այնպիսի պատասխանատու դերի մէջ, որպիսին է Կոռոգոլի դերը։ Դպրոցական նստարանի վրայ, ի հարկէ, փառքի դափնիք չեն բաժանում, և ահա նա կարծել է, թէ այնքան հեշտ է բեմի վրայ քաղել այդ դափնիքը։ Եւ նա պատժւեց իւր յանդգնութեան համար, որովհետև կրեց մի սարսափելի ֆիասկո»։

Ոսկերչեանի ընկերներից մի քանիսը փող էին հաւաքել և գնել մի ընծայ (ժամացոյց), որ և մատուցին նորան ներկայացման ժամանակ։ Այդ առիթով բեցենզենտը ասում է հետևեալը.

«Մենք կասկածում ենք, թէ հանդիսականների միջից գտնւէին գէթ մի հինգ հոգի այն աստիճան միամիտ, որ, չնայելով իրանց փողը, ախորժէին ընծայ գնել և մատուցանել մի դերասանի, որը ոչինչով չարժանացաւ որևէ ընծայի։ Բայց, ի հարկէ, հանելուկը կը պարզւի, եթէ յայտնենք, որ պարոնի երկրպագուները հետևեալ օրը պիտի շտապեն վերադարձնել ընծան ժամագործի սիրոյ, որից վերցրած էին մի երեկոյի համար։

Իւր տեղումը ասւած էր, թէ դերասանը արժանացաւ ծափահարութիւնների մի քանի անգամ։ Այդ մասին բեցենզենտը գրել էր հետևեալը.

«Եթէ կամենայ արտիստը անպատճառ ծափահարութիւններ լսել, շատ հեշտ կարող է հասնել այդ նպատակին։ Դորա համար հարկաւոր է վարել այնպէս, ինչպէս պ. դերասանը—ծրի տոմսակները բաժանել ընկերների և ծանօթների մէջ և այնուհետև համարձակ դուրս գալ բեմ...»

Մի քիչ յետոյ քննադատը շարունակում է.

«Բայց, ի հարկէ, փողով գնուած ծափահարութիւնները չէին խանգարում խելքը գլխին և ճաշակի տէր մարդկանց սուլոցներով դիմաւորել և սուլոցներով ճանապարհ դնել բազմաչարչար Կոռեադոյին»:

Գրւածքի իւրաքանչիւր բառի համար, ինչպէս տեսնում է ընթերցողը, հեղինակը մի մի ծանր պատասխանատուութիւն է առնում իւր վրայ, և այդ բոլորի տակ— ո՛չ անուն, ո՛չ ազգանուն!

Ոսկերչեանը զայրացած էր նոյնչափ այս գաղտագողի յարձակման, որչափ և յօդւածի բովանդակութեան վրայ, և արագ անց ու դարձ անելով սենեկի մէջ, կրկնում էր շարունակ.

—Ա՛խ, մի իմանամ, թէ ով է սորա հեղինակը, մի իմանամ ով է!... ես գիտեմ, թէ ինչ կանեմ!...

Այդ խօսքերը ասում էր նա, քանի որ դեռ ևս լարւած դրութեան մէջ էին ջղերը, և սրտի մէջ արիւնը կարծես եռում էր:

Բայց յետոյ կամաց-կամաց նորա զայրոյթը սկսեց իջնել, և նա զգաց, թէ ինչ սպանիչ վհատութիւն է գալիս իւր վրայ:

Եւ նա պառկեց:

Մի թէ նա այնքան փոքրոգի է և թուլասիրտ, որ առաջին անյաջողութիւնից յետոյ այն աստիճան կարող էր վհատել? կամ նշանաւոր մարդկանց օրինակները միթէ այնքան անզօր են, որ չկարողանան նորան ոտի կանգնեցնել, ոյժ տալ, եռանդ ներշնչել հոգուն? Միթէ ամօթ չէ նորա համար, որ նա, փոխանակ արհամարհանքով և հպարտութեամբ սլանալու իւր թշնամիների գլխի վրայից, անդամալուծի պէս ընկած՝ հառաչներ է արձակում և գալարում ձեռքերը? Չէ որ Տալմային սուլեցին, երբ առաջին անգամ նա բեմ դուրս եկաւ? Բայց նա



չվհատեց, այլ կրկնապատկեց ոյժերը և դարձաւ հռչակաւոր Տալմա! Չէ որ Դեմոսթենէսին սուլեցին, երբ նա առաջին անգամ ամբիոն բարձրացաւ? Բայց նա չվհատեց, այլ իւր հանճարի և քրտնաջան աշխատանքի օգնութեամբ տիեզերական անուն վաստակեց և դարձաւ Յունաստանի պարծանքը! Չէ որ Բայրնի առաջին գրական դեբիւտը ծաղրի մատնեցին, և կրիտիկանների վոհմակը խորհուրդ տւեց, որ նա վայր դնի իւր գրիչը? Բայց նա չվհատեց, այլ իւր հանճարի զօրութեամբ դարձաւ բանաստեղծների թագաւոր!...

Այսպէս էր մտածում Ոսկերչեանը: Բայց նորան, ի հարկէ, յայտնի չէր, որ մինչդեռ մեծ բոցը էլ աւելի սաստկանում է փչող հողմերից, փոքրիկ բոցը ամենաթոյլ հողմից էլ հանգչում է: Տալմա, Դեմոսթենէս, Բայրն մեծ բոցեր էին, որոնց համար թշնամիների յարձակումները հրանիւթ առարկաների նշանակութիւն ունեցան, և այդ պատճառով աւելի մեծ ոյժով բռնկեցին. բայց Ոսկերչեանը — արդեօք նա էլ մեծ բոց էր?...

Ինչ և իցէ: Այսպիսի մտածմունքից, ըստ երևութին, խրախոյս և դրդում ստանալով, Ոսկերչեանը վեր կացաւ տեղից և, գլխարկը ծածկելով, ասաց.

—Ես պէտք է հաստատ իմանամ, թէ ով է այն թշնամին, որ իմ պատիւը ոտի տակ է տւել ամբողջ հասարակութեան առաջ!

Այդ ասելով նա դուրս եկաւ սենեկից:

## VII

Այդ օրը Ոսկերչեանը ոչինչ հաստատ բան չկարողացաւ իմանալ:

Հետևեալ օրը գնաց ուղղակի «ժամանակի» խմբագրատունը: Այնտեղ նորան բաւարարութիւն չտւին. դա մի խմբագրական գաղտնիք է, որ ուրիշներին հաղորդելու հարկ չէին համարում:

—Բացի այդ,—աւելացրեց խմբագիրը,—ինչ գործ ունիք դուք իսկապէս հեղինակի անուան հետ? Եթէ բան ունիք յօդուածի դէմ, ներկայացրէք պատասխանը. եթէ յարմար լինի, կը տպենք:

Ոսկերչեանը աւարկեց հետևեալը.

Քանի որ յօդուածագիրը դիպել է իմ անձնաւորութեանը, ուստի ինձ էլ անհրաժեշտ է ճանաչել այդ անձին: Ինձ պէտք է յայտնի լինին իմ բարեկամները և իմ թշնամիները:

Խմբագիրը յամառութեամբ գաղտնի պահեց բեցենզենտի անունը, և Ոսկերչեանը, ճարը կտրած, դուրս եկաւ նորա մօտից, խոստանալով շուտով ներկայացնել նորան զրպարտութիւնների հերքումը: Ինչ վերաբերում է ծպտի թշնամուն, նա այդ մի կերպ պէտք է իմանայ:

Այնտեղից նա վերադարձաւ իւր բնակարանը: Հիւրանոցի շէֆյարը յայտնեց, որ նա նամակ ունի:

Նամակը հօրիցն էր: Ծերունին նկարագրում է իւր նիւթական դժւար կացութիւնը և խնդրում է որդուցը շուտով փող հասցնել իրան, եթէ կարող է:

Այդ գրութիւնը լաւ ժամանակին էր հասել: Ոսկերչեանը իւր դերիւտից բաւական խոշոր եկամուտ էր ստացել, թէև արդէն քառասուն և հինգ մանէթ մսխել էր նոր շորերի և նոր գրքերի վրայ: Մնացել էր հարիւր քսան, որից հարկաւոր էր բաժին հանել ծերունուն: Վճռեց նախ ուղարկել մի երեսուն, մտածելով, որ գիւղում կեանքը շատ էժան է նստում, և այդքան փողով հայրը կարող է մի քանի ամիս անպակաս ապրել: Բայց խիղճը իսկոյն բողոքեց: «Ինչպէս, գոչեց նա, հայրս գրեթէ իւր բոլոր ունեցածը դրել է ինձ և իմ ուսման վրայ, և այժմ ես այսպէս պիտի հատուցանեմ նորան? Լաւ որդիական երախտիք էլ!...» Վճռեց հալալ կէս անել և, անմիջապէս պատրաստելով երկտող նամակը, դրամական ծրարը տարաւ պոստատուն և գցեց հօր հասցէով:



Երեկոյեան թէյի ժամանակ նա գնաց Զաւիկեաններից մօտ իւր գրած պատասխանը կարդալու:

Գարեգինը նստած էր իւր կաբինէտում սեղանի առաջ և զբաղուած էր մի ինչ գրաւոր աշխատանքով: Դա մի կարճ ատենախօսութիւն էր, որ նա պիտի կարդար դպրոցի տարեկան հաշուետուութեան հետ ուսումնարանի տարեդարձի հանդիսին:

Օր. Աշխէնը տանը չէր: Նա գնացել էր իւր պաշտօնակից վարժուհիներից մէկի մօտ, որպէս զի միասին սովորցնեն աշակերտուհիներին մի քանի ոտանաւորներ՝ տարեդարձի օրը արտասանելու համար:

—Դարձեալ եկայ քեզ խանգարելու, Գարեգին,—ասաց Արտաշէսը, սեղմելով բարեկամի ձեռքը: Այդ ինչ ես գրում?

Գարեգինը բաւարարութիւն տուեց նորա հարցին և ասաց.

—Ի հարկէ, այդ օրը դու ևս ներկայ կը լինես մեր դպրոցում?

—Անպատճառ,—պատասխանեց Ոսկերչեանը և խօսքն անցաւ իւր գործին:

Երբ նա վերջացրեց իւր ասելիքը և ապա կարդաց իւր պատասխանը «Ժամանակին» անյայտ բեցենզենտին, Գարեգինը նկատեց հետևեալը.

—Լրագրական բանակռիւը, իմ կարծիքով, օգտաւէտ բան է, բայց մի պայմանով, որ նա պատշաճ ձևով կատարուի: Նա պիտի ունենայ, օրինակ, նոյն ձևը, ինչ ձևով կատարուում է վէճը երկու միմեանց յարգող բարեկամների միջև, և պէտք է հիմնուած լինի փաստերի և գաղափարական հողի վրայ. այդպիսով խնդիրներ կարելի է պարզել: Մինչդեռ բանակռիւը մեր ժամանակակից մամուլի մէջ ոչ մի բանի նման չէ: Նա աւելի ապացոյց

է այն տխրալի իրողութեան, որ մեր վարք ու բարքերը վայրենացել են, որովհետև նորա ֆակտերը շինծու, հնարովի են, նորա աստառը—անձնասիրութիւնն է, նորա դրդիչը կիրքը։ Այդ տեսակ բանակռիւը, բացի մարքեր պղտորելուց և անհանգստութիւնից, ուրիշ ոչ մի օգուտ չէ բերում ոչ հեղինակին, ոչ հասարակութեանը։ Դա մի ցաւ է, որի դէմ պէտք է մաքառեն նոքա, որոնք խորապէս գիտակցում և զգում են այդ ցաւը։ Ֆո պատասխանը իւր ձևով շատ չէ տարբերւում քո հակառակորդի դրածից։ Նա ֆակտեր է հնարել, բարդել է սուտ սոի վրայ, լուտանք լուտանքի վրայ, իսկ դու, փոխանակ հերքելու, հայհոյում ես։ Փորձիր ջնջել այն ամենը, ինչ որ գործին չէ վերաբերում, և պահիր միայն այն, ինչ քեզ հարկաւոր է հերքելու համար, և տեսնենք, թէ ինչպէս աւելի յարմար է տպել. նախկին ձևով, թէ ինչպէս ես եմ ասում։

Գարեգինը թաթախեց գրիչը և սկսեց թեք ու հորիզոնական գծերով ջնջել Ոսկերչեանի գրութեան մեծ մասը, իւր կողմից աւելացրեց մի երկու բառ, նախադասութիւնները կապելու համար, և ապա կարդաց այն, ինչ որ ճնացել էր կատարած աւերումից յետոյ։

—Հը, այսպէս լաւ չէ, Արտաշէս? Կարճ և ազդու։

—Լաւ է,—պատասխանեց Ոսկերչեանը,—բայց այսպիսով զրպարտիչը ճեռմ է անպատիժ։

—Հաւատա՛ ինձ, որ նորան աւելի կ՚ամաչացնես այս փոքրիկ պատասխանով, քան եթէ մի քանի սիւնեակներ լցնէիր յիշոցներով և անպատիւ խօսքերով։

Երբ Ոսկերչեանը կամենում էր հեռանալ Ջառիկեանի մօտից, յանկարծ յիշեց իւր պարտքի մասին։ Վճարեց ու մեկնեց։

Այդտեղից նա գնաց դասի։ Աշակերտի հետ պարապմունքը վերջացրած, ուզում էր դուրս գալ, եկաւ տիկին



Վարթուհեանը և յուեց նորան քսան մանէթ—ամսավճարը։ Ոսկերչեանը շնորհակալութիւն առաւ և գնաց։ Որտեղ էր օրիորդը, որ մինչև անգամ ձայնն էլ չլսեց? Էլ չի հետաքրքրւում Ոսկերչեանի անձով։ Ա՛խ, երանի կարելի լինէր ստուգել, որքան իրաւացի է նորա կասկածը!... Գուցէ նորա առաջին սէրն էլ նոյն ելքը պիտի ստանայ, ինչ որ ստացաւ նորա փայփայած ցնորքներից մէկը, դերիւտը? Ափսո՛ս երազներ. նոքա սկսում են կորցնել իրանց հրապոյրը!

Ճանապարհին, մի նեղ փողոցով անցնելու ժամանակ, նորա առաջ բուսաւ Զիլչագեանը։ Սա ոտից ցգլուխ նորոգւել էր և կարգին մարդու էր նմանւում։ Նորան խորհուրդ էր տւել նոր շորեր առնելու Զամբազեանը, որը շեշտել էր քանիցս, թէ կեանքում առաջ գնալու առաջին պայմանն է—լաւ հագնւելը։

—Արտաշէս? գոչեց Զիլչագեանը, կանգ առնելով։

—Զիլչագեան? ձայն տւեց Ոսկերչեանը։ Վա՛հ, ինչ ֆրանտն ես դարձել! Հազիւ քեզ ճանաչեցի։

—Հը, որտեղից որտեղ?

—Դասից տուն։ Իսկ դու?

—Ճաշարան՝ ընթրիք անելու. սաստիկ քաղցած եմ։ Գնա՞ս գալ?

—Գնանք։

Ու երկու արւեստակիցները քայլերը ուղղեցին դէպի «Պուր-Ղւինօ»։

Նոքա պատւիրեցին մի-մի բաժին անտրկոտ և մի շիշ գինի ու նստեցին սեղանի մօտ, որը բռնել էր սենեակի ամբողջ երկարութիւնը։

Սեղանի ճակատին բազմած էր մի ապա՛յ, երեսը մաքուր ածիլած և հաստ ու երկայն շէկ բեխերով. նա էլ շուտով վերջացրեց ընթրիքը և հեռացաւ, այնպէս որ սենեկում, բացի երկու դերասաններից, ուրիշ ոչ ոք չկար։

Նոքա սկսեցին զրոյց անել դէսից դէնից, մինչև որ օֆիցեանտը բերաւ պատւիրած կերակուրը և խմիչքը։

Ոսկերչեանը լցրեց բաժակները, իւրաքանչիւրը ձեռքն առաւ իւր բաժակը և, իրար զարկելով, խմեցին։

Մի քանի թիթեղ լուռ ու մունջ կերան, և ապա Ոսկերչեանը նորից գինի ածեց, մէջքը դէմ տւեց աթոռի թիկունքին և Զիլչագեանի երեսին նայելով, խօսեց.

—Զիլչագեան, ես քեզնից մի բան պիտի հարցնեմ։

—Հարցրու երկուսը.

—Եթէ դու գիտես, ինձ պէտք է յայտնես, թէ իմ ներկայացման ժամանակ, ով էր մեր ընկերներից բժիշկ ուղարկել ինձ համար և ինչ նպատակով էր այդ արել?

Զիլչագեանը լուռ ժպտում էր։ Ոսկերչեանը շարունակեց.

—Իսկոյն երևում է աչքերիդ արտայայտութիւնից, որ այդ բանը քեզ յայտնի է։ Ասա ուրեմն։ Եթէ չասես, դու վատ մարդ ես։

—Լաւ, ես կը յայտնեմ, բայց այն պայմանով, որ, իբրև անցած գնացած բան, մոռացութեան տաս այդ և դորանից աղմուկ չհանես։

—Ես քեզ ազնիւ խօսք եմ տալիս։

Ու Զիլչագեանը պատմեց իւր գիտցածը։ Ոսկերչեանը շատ չզարմացաւ։

—Ես կարող եմ երդւել, ինչով կամենաս,—ասաց նա,—որ հէնց Զամբազեանին էլ կասկածում էին։ Ահա ինչ միջոցների էին դիմել այդ պարոնները, իրանց ընկերոջը տապալելու համար! Ես վատ մարդիկ տեսել եմ, բայց դորա նմանը առաջին անգամն եմ տեսնում... Ուրեմն այդպէս, հա? Ուրեմն այդ նա էր?... Սրիկայ, կատարեալ սրիկայ!...

—Բայց, ի սէր Աստծոյ, այս մնասին!...

—Միամիտ կնոջ. խօսքս խօսք է։



Նոքա ըմպեցին երկրորդ և քիչ յետոյ՝ երրորդ բաժակը։ Գինին թունդ էր և երկուսի վրայ էլ ազդել էր։ Գերազանց էր մանաւանդ Ոսկերչեանի տրամադրութիւնը։ Նա իրան շատ թեթև էր զգում։ Գլուխը ազատ էր ծանր մտածմունքից։ Նա սկսեց խօսել իւր անձի դէմ գրած բեցենզիայի և իւր պատասխանի մասին։ Կարդաց սևագրութիւնը և հարցրեց Զիլչագեանի կարծիքը։

—Է՛հ, բան չունես? ասաց նա։ Արժէ մի թեթ գլուխ դնել?...

—Իսկ իմ պատիւը ով պիտի վերականգնի? պատասխանեց Ոսկերչեանը, ծծելով բաժակի վերջին կաթիլը և բաժակը ամուր խփելով սեղանին։

—Է՛հ, ինչ պատիւ, ինչ բան?... Մարդ պէտք է գործը բանի հեռատեսութեամբ։

—Ձշմարիտ, ես քեզ չեմ հասկանում, վրայ բերեց Արտաշէսը համարեա բարկացած։

—Գիտես, ինչ կայ, Արտաշէս? պարզեց իւր միտքը նորա արեւստակիցը. մենք պէտք է աշխատենք հաշտ լինել խմբագրութիւնների հետ։ Թշնամութիւնը մեզ, բացի վնասից, օգուտ չի բերիլ։ Նոքա են ստեղծում հասարակաց կարծիք։ Եթէ լրագիրը մէկի մասին գրեց. «լաւ էր», հասարակութիւնը կամ նորա մի մասը պիտի կրկնէ. «լաւ էր»։ Եթէ գրեց. «վատ էր», պիտի կրկնեն ամենքը. «վատ էր»։

—Օհո! Զարմանքով բացականչեց Ոսկերչեանը։ Ուրեմն թողլ տանք, ինչ կամենում են, գրեն մեր մասին? Ուրեմն լռենք, եթէ նոյնիսկ թքում են մեր երեսին?

—Ո՛չ, դու ինձ լաւ չհասկացար։ Ես ասում եմ, թէ մեր յաջողութեան համար, մեր այսպէս ասած, հասկանում ես էլի, մեր ապագայի համար ձեռնտու է մեզ այս կամ այն թերթի հետ բարեկամ լինել...

—Այդ լաւ խրատներ ես տալիս ինձ, Զիլչագեան!

—Ես ճիշտ եմ ասում։ Ուրիշ կերպ անկարելի է։

Գիտես, ես ինչպէս արի։ Ես նախ ծանօթացայ այն բոլոր անձանց հետ, որոնք սովորաբար ռեցենզիաներ են գրում։ Մի որև է պատրուակով այցելեցի բոլոր խմբագրատները։ Հող պատրաստեցի ինձ համար և ապա միայն բեմ դուրս եկայ։

—Եւ դու պարծենում ես դորանով? Հարցրեց Ոսկերչեանը արհամարհանքով։

—Ես չեմ պարծենում, բայց ճշմարիտ բան եմ ասում։ Հասարակական գործիչը պէտք է կապեր ունենայ լրագիրների հետ։

—Եւ դու չես ամաչում, Զիչագեան, այդ ասում ես՞

—Ինչ արած, եղբայրս, կեանքը այդ է պահանջում։ Ուրիշ կերպ դժւար է առաջ գնալ, հասկանում ես, մինչև անգամ անկարելի է!

—Շնորհակալ եմ, շատ շնորհակալ եմ ուսածդ դասի համար։ Բայց իմ բոլոր էութիւնը բողոքում է դորա դէմ! Այդպիսով դու սովորած կը լինես շատ հեռու գնալ և խորը խրւել ցեխի մէջ։ Դու պիտի շողոքորթես, քծնես, քարշ գաս գետնի վրայ, թէ ինչ է՛ յաջողութիւն և ապագայ!

Այս ոգով տաքացած խօսում էր Ոսկերչեանը, բայց Զիչագեանը լաւ գիտէր, թէ ինքը ինչ էր ասում։ Յարմարւելու արւեստը նա գերազանց ուսել էր և նոյնիսկ զարմանում էր, որ իւր ընկերակիցը մի այդքան հասարակ բան չէր կարողանում հասկանալ։ Մինչև անգամ նա թոյլ տւեց իրան կշտամբել Ոսկերչեանին այն բանի համար, որ նա իրան հպարտ էր պահում խմբի հետ, մանաւանդ Զամբազեանի հետ, և աւելացրեց, թէ այդպիսի վերաբերմունքըդէպի ընկերները նորան կարող է վնասել։

—Ո՛չ, ո՛չ, Զիչագեան! Բացականչեց Ոսկերչեանը։ Ես չգիտեմ յարմարւելու արւեստը և չպիտի աշխատեմ իմանալ! Դա ստորացնում է մարդուն։ Ես չեմ կարող թաքցնել իմ համոզմունքը, չեմ կարող կեղծել, չեմ կարող տանել անպատւութիւնը! Ասում ես, այդ վատ է ապագայի համար։ Վնաս չունի. թող վատ լինի! Ես չեմ կամենում այն յաջողութիւնը, որ ձեռք է բերւում ոչ ուղիղ ճանապարհով!



—Համբերութիւն է հարկաւոր, եղբա՛յր, համբերութիւն! Ժամանակով մենք էլ բարձր կը պահենք մեր գլուխները...

Ոսկերչեանը ապշած նայում էր խօսակցի երեսին։ Նա իրան ստորացած զգաց, որ մի այնպիսի գձուծ մարդու հետ սեղանակից էր։ Զիչագեանի անձնաւորութեան մէջ նա մարմնացած տեսաւ կեանքի ամենագձուծ կողմերը։ «Ահա նա, ինքը իրականութիւնը!» Մտածեց նա և, ընթրիքի փողը վճարելով, կամենում էր շուտ հեռանալ այդ ողորմելի արարածից։ Զիչագեանը կանչեց նորա ետեւից.

—Ոսկերչեան, սպասի՛ր, ես էլ եմ գալիս։

—Ես շտապում եմ, պատասխանեց Ոսկերչեանը և անհետացաւ Զիչագեանի աչքից։

## VIII

Հետեւեալ օրը Ոսկերչեանը իւր պատասխանը տարաւ «Ժամանակի» խմբագրատունը։ Խմբագիրը ներկայ չէր, և գրութիւնը ընդունեց արծւաքիթ մի պարոն, որին նա չէր ճանաչում։ Ոսկերչեանի հարցին, թէ երբ կը տպւի, պարոնը պատասխանեց, թէ այդ կախւած է խմբագրից։ Այդ պատասխանը սակայն երբէք դուրս չեկաւ լրագրի մէջ, Ոսկերչեանն էլ չհետաքրքրւեց դորանով, չմտածեց գրաքննիչի դիմել ստիպմամբ տպել տալու համար։

Բայց դորա փոխարէն նորա թշնամին յայտնել էր. «Ժամանակի» խմբագրութեան մօտ անձերից մէկը այդ

հաղորդել էր, իբրև գաղտնիք, մի այլ աշխատակից. վերջինս, կրկին իբրև գաղտնիք, յայտնել էր այդ մասին Զաւիկեանի ծանօթներից մէկին. սա էլ իբրև հետաքրքրական նորութիւն, յայտնել էր Գարեգինի քրոջը, ո՞րից լսեց այդ լուրը ինքը Ոսկերչեանը:

Սորա զարմանքին չափ չկար: Նա ապշած էր, թէ ինչպէս եղաւ, որ այդ մարդը այդ աստիճան թշնամական զգացմունքով է համակուել դէպի նա: Ինչով է առիթ տուել? Երբ է նորան մի վատութիւն արել?

Բայց նա նոյնչափ կատաղած էր: Նա փնտռում էր նորան, ինչպէս փնտռում են գազանին, որը՝ մէկին ճնշած տալուց յետոյ՝ թողնում փախչում է: Նա վճռել էր պատիւ պահանջել նորանից, որտեղ էլ նորան հանդիպելու լինի: Եւ ընդհարումը տեղի ունեցաւ Վանքի գաւթումը:

Վախճանուել էր հասարակական-գրական գործիչներից մէկը, որի մասին յայտարարուել էր բոլոր հայ լրագիրներում: Նորա թաղման առիթով, գլխաւորապէս ինտելիգենտներից բաղկացած մի խուռն բազմութիւն էր ժողովուել եկեղեցու գաւիթը:

Տաճարի դրան առաջ կանգնած էին Զաւիկեաններ՝ Գարեգինը և Աշխէնը և խօսք ու զրոյց էին անում Ազատեանի հետ հանդուցեալ գործիչի մասին:

Այդ ժամանակ մէկը սրընթաց անց կացաւ նոցա մօտով և ուղիղ—դէպի աւազանի կողմը: Գարեգինը կանչեց Ոսկերչեանի եռեւից, բայց նա ետ չնայեց. կամ չլսեց կամ չուզեց պատասխանել:

Աւազանի մօտ կանգնած էին մի քանի երիտասարդ պարոններ, որոնց մէջ և Սեւումեանն էր: Նոքա երեսները դարձրել էին դէպի գետի կողմը և խօսում էին:

Յանկարծ Սեւումեանի եռևից մէկը ձայն տուեց.

—Պարոն Սեւումեան!



Սեւումեանը ետ նայեց և տեսաւ—Ոսկերչեանը:

Նա խոժոռեց դէմքը, և հակառակորդները իրար հանդիպ արձանացան:

Ոսկերչեանը յուզուած էր, հազիւ կարողանում էր զսպել բարկութիւնը, շրթունքը դողում էր: Սեւումեանը լուռ էր և սպասողական դիրք էր բռնել:

—Ես լսել եմ,—խօսեց Ոսկերչեանը զսպուած ձայրոյթով,—ես լսել եմ... որ... որ «ժամանակի» մէջ... իմ մասին գրուած... քննադատութեան հեղինակը... դուք էք: Այդ ճիշտ է?

Այն ձայնը, որով նա խօսում էր, այն հայեացքը, որով նա նայում էր Թշնամու երեսին, վերին աստիճան յանդուգն ու լկտի երևացին վերջինիս: Իր կատարեալ արհամարհանքը ցոյց տալու համար Սեւումեանը պատասխանեց շեշտով և հպարտութեամբ.

—Այո, պարոն, այդ հեղինակը—ես եմ!

—Դուք?... Ուրեմն դուք էք, որ ինձ զրպարտել էք?!...

—Սառկացնեմ այս մժղուկին, տեղը չէ? Գոչեց Սեւումեանը, ոլորելով պսպղուն բիբերը և նայելով մերթ Թշնամու աչքերին, մերթ իւր ծանօթների երեսին:

Ոսկերչեանի սիրտը թրթռում էր, ինչպէս ճանապարհից յոգնած մէկը: Նա երկու խիզախ քայլեր արաւ դէպի հակառակորդը, որը՝ կիսադէմ կանգնած նորա հանդէպ՝ մի բռունցքը ամուր սղմած էր, իսկ մեւս ձեռքը, վահանի պէս, պահել էր կրծքի մօտ: Հէնց այն է, որ նոքա պիտի բռնէին իրար օձիքից, մէջ տեղ ընկան մի քանի ծանօթ և անծանօթ երիտասարդներ և կռուողներին բաժանեցին միմեանցից:

Ոսկերչեանը, առանց դիմադրելու իւր ձեռքերը պահած պարոններին, բարձրաձայն գոռում էր.

—Ես պահանջում եմ, որ դուք հրապարակով ետ

վերցնէք ձեր զրպարտութիւնները, ապա թէ ոչ՝ ես ամէն տեղ պիտի գոչեմ և ասեմ. «Սևուէմեանը զրպարտիչ է և ստախօս!...

—Լիրբ!... որոտաց Սևուէմեանը, աշխատելով ազատել իրան խանգարող ձեռքերից։

—Ամօթ է, ամօթ է, պարոններ!... Մի մոռացեցէք, թէ որտեղ էք սարքել այս խայտառակ տեսարանը! յանդիմանում էր Զառիկեանը, որը, Ոսկերչեանի ձայնը լսելուն պէս, շտապել էր կառողների մօտ և գիրկն առել իր բարեկամին։

Նոցա հետացրին. Սևուէմեանին քաշեցին մի կողմ, իսկ Ոսկերչեանին Գարեգինը տարաւ Աշխէնի և Ազատեանի մօտ։

Ազատեանը ուրախ խնդում էր։ Այ լաւ առիթ Սևուէմեանի վրայ ծիծաղելու մանր լուրերի մէջ! Մինչև այդ օրը Ազատեանը շարունակ խօսել կուիւ էր մղում Սևուէմեանի դէմ, անունը չէր յիշում, բայց նորա ակնարկութիւնները թափանցիկ էին։ Կուիւը, այսպէս ասած, պարտիզանական էր. այսուհետև նա կը կատարի արձակ տեղում, երես առ երես։

Այս սկանդալը մեծ նշանակութիւն ունեցաւ Սևուէմեանի հասար։ Նա ինքը խոստովանեց, որ յարել է «ժամանակին»։ Նորա անունը շուտով խօսակցութեան և ծաղրի առարկայ դարձաւ երիտասարդների շրջանում։ Նորան պախարակում էին փոփոխամտութեան համար։ Ասում էին, թէ նա իր սկզբունքներին դաւաճանեց, ուրացաւ բարեկամներին, թողեց իր բանակը և անցաւ թշնամիների կողմը։ Օգուտ քաղելով նորա բարոյական թուլութիւնից, չար լեզուները զանազան անեկդոտներ հնարեցին նորա մասին և տարածեցին ամէն տեղ։ Նորա անունը օժտեցին հազար ու մէկ անպատուաբեր ածականներով և էպիտէտներով։ Նորան վերագրեցին և այնպիսի



արարքներ, որոնցից նա ազատ էր։ Նորանից կամեցան խլել և այն արժանաւորութիւնները, որ նա ունէր։ Նորա խօսքերը, գործերը, անհատական կեանքը ծաղրի և սրախօսութիւնների առարկայ շինեցին նաև այն տեսակ անձինք, որոնք անհամեմատ ստոր էին կանգնած Սևուէմեանից թէ իրանց խելքով, թէ զարգացողութեամբ, թէ ընդունակութիւններով։

Սևուէմեանը վճռել էր միաժամանակ incognito մտքառել իւր թշնամիների դէմ։ Բայց ներկայ դէպքը քակտեց նորա վճիռը։ Էլ ինչ միտք ունէր ծպտի թշնամանքը։ Սևուէմեանը այժմ տեսաւ, որ ինքը իւր ձեռքով կրակ է տուել իւր եաև բոլոր նաւերը, և նահանջել անկարելի է։ Նորան հիմա էր ընտրել երկուսից մէկը՝ կամ, ընկճելով հասարակաց կարծիքի ծանրութեան տակ, վայր դնել գրիչը և հեռանալ լրագրական ասպարիզից, կամ, հաւաքելով ոյժերը, թօթափել այդ բեռը, ամուր դիրք բռնել և դէմ յանդիման կանգնել իւր նախկին ծանօթներին, ընկերների և բարեկամների առաջ։

Սևուէմեանը, իբրև փառասէր, անհանգիստ և տոկուն բնաւորութիւն, անյաջողութեան մէջ թմրելուց նախապատիւ համարեց կեանքի փոթորիկը և, առանց վարանելու, առաւ գրիչը, իւր միակ զէնքը, թաթախեց նորան թոյնի և մաղձի մէջ, և այսպէս զինուած՝ հրապարակ ելաւ և կռիւ յայտարարեց այն ամէնքին, որոնք իւր անունը ծաղր ու ծանակ էին կամենում դարձնել հասարակութեան առաջ։

## IX

Սևուէմեանի ոտը կոխեց Զառիկեանների դրան շեմքից։ Բայց նորա տեղ Ազատեանը դարձաւ նոցա տան մշտական յաճախորդը։ Դորա պատճառը մասամբ Աշխէնն էր։ Նա սիրում էր գաղափարական երիտասարդների շրջ-

ջան։ Երբ նա կորցրեց իւր հաւատը դէպի Սևումեանը, նորա համակրութիւնը դէպի Ազատեանը մի առանձին ջերմութիւն ստացաւ։

Ազատեանն էլ զարմանալի հոտառութեամբ կարողանում էր հասկանալ մարդկանց հոգու կրած փոփոխութիւնները։ Եւ ահա, օգուտ քաղելով օրիորդի նոր տրամադրութիւնից, գործ դրեց իւր բոլոր ճարպկութիւնը՝ նորա աչքում աստիճանաբար բարձրանալու նպատակով։

Նայած, թէ ինչ էր պահանջում րոպէն, նա համապատասխան դիրք ու կերպարանք էր ընդունում։ Մերթ ներկայացնում էր իրան մեծահոգի և փակում էր այն լպիրշ մարդկանց անզուսպ բերանները, որոնք թոյլ էին տալիս իրանց անվայել ակնարկներ անել Սևումեանի վերաբերմամբ և շատ հեռու գնալ իրանց բամբասանքներով, մերթ, ազնիւ զայրոյթով լցուած, երիտասարդների փոփոխամտութիւնն էր դատափետում. մերթ համեստ էր ձևանում, ասելով. «մենք, թոյլ մահկանացուներս», «մենք մեր թոյլ գրչով կ'աշխատենք հերքել». մերթ, իրան զարգացած ցոյց տալու համար, բերում էր վկայութիւններ մեծ մարդկանց ասածներից և երբեմն թոյլ տալիս իրան չհամաձայնել նոցա հետ. մերթ պարզ ու միամիտ ձևանալով, իւր կեանքից զանազան դէպքեր էր պատմում, բայց այնպէս, որ լսողը մտածէր ինքն իրան. «ա՜յ քեզ քաջութիւն, ա՜յ քեզ ազնւութիւն, ա՜յ քեզ սրամտութիւն». մերթ անխնայ քննադատում էր իւր սեփական թերութիւնները և վատ սովորութիւնները։ Մի խօսքով, մի կատարեալ simulator ac dissimulator.

Ազատեանը արտաքին տեսքով աւելի գրաւիչ էր Սևումեանից։ Երկայն ու փափուկ մազերը, կողքից սանրուած, աւելի ևս սիրուն էին դարձնում նորա կլոր գլուխը և կամարաձև գծով բաժանում էին գլուխը լայն և մաքուր ճակատից։ Նուրբ յօնքերի տակ, կանոնաւոր քթի



երկու կողմերում, հանդարտ շարժւում էին սպիտակուցի հետ շագանակագոյն բիբերը։ Ցասակ և քիչ կարմրին տւող այտերը բոլորովին ազատ էին մազերից, և կոկ մօրուքը, խառնելով իւր մէջ բարակ ընչացքը, առանց սուր ծայրի, հազիւ ծածկում էր փողպատի վերի մասը։ Նա հագնում էր ճաշակով և այդ լրացնում էր նորա համաչափ և վայելուչ կազմւածքի գեղեցկութիւնը։

Մինչդեռ Սևումեանի կերպարանքը Ազատեանի կատարեալ հակապատկերն էր։ Որքան մեղմ ու քնքոյշ էին առաջինի դիմագծերը, այնքան աւելի կտրուկ և ազդու էին երկրորդինը։ Նորա կոշտ ու կուպրի պէս սև մազերը դէպի վեր ցցուած, կարճ, բայց թաւամազ յօնքերը, որոնք բաժանւում էին իրարից կարծես լարուած աղեղով, խոր ընկած աչքերը, իրանց սև, արագաշարժ փայլուն բիբերով, արծւային սրածայր քիթը և սրածայր նիզակաձև մօրուքը—բոլորը արտայայտում էր անհանգիստ, կտրուկ բնաւորութիւն և անծայրածիր վճռողականութիւն։

Այս պատերազմիկ և առնական պատկերից հիասթափելով, օր. Աշխէնը այլուր սկսեց որոնել իւր իդէալը և կարծեց, թէ գտաւ իւր ցանկացածը։ Եւ իսկապէս. Ազատեանը դարձաւ նորա համար մի տեսակ կատարելատիպ։ Նա հրապուրուեց այնչափ, որ քիչ էր մնում երդուէր նորա անունով։ Եւ որքան ընկնում էր Սևումեանը, այնքան աւելի բարձրանում էր նորա աչքում Ազատեանը։

Գուցէ այս գործում նշանակութիւն ունեցաւ և մի ուրիշ հանգամանք։ Բանը այն է, որ Ազատեանը «Ճառագայթի» վերջին համարում, նկարագրելով դպրոցի տարեդարձը և հանդէսը, հրապարակով դրւատել էր օր. Աշխէն Զաւրիկեանին, որի անձով իբր թէ կարող է պարծենալ այն հիմնարկութիւնը, ուր նա ծառայում է, և որի օրինակին հետևելու հրաւէր էր կարդում օրիորդներին։

Բայց ահա տաք բանակռիւ բացւեց երկու օրգանների միջև։

Մարտնչում էին երկու հերոսներ՝ մի բանակի կողմից Ազատեանն էր, իսկ հակառակ կողմից—Սևումեանը։

Օր. Աշխէնը ուշի ուշով հետևում էր այդ պոլեմիկային, որովհետև «Ճառագայթի» իւրաքանչիւր համարը, օրիորդի ասելով, մի նոր յաղթութիւն էր բերում Ազատեանի համար, իսկ «Ժամանակի» ամեն մի համարը մի նոր պարտութիւն—Սևումեանի համար։

Արժէ ծանօթանալ այս բանակռւին։

Ոսկերչեանի և Սևումեանի ընդհարման մասին մի հումորիստական նկատողութիւն երևաց «Ճառագայթի» մանր լուրերի բաժնում։ Նոյն այդ համարում զետեղած էր մի առաջնորդող հետեւեալ վերնագրով. «Փոփոխամտութիւնը մեր երիտասարդների մէջ»։ Յօդւածը գրած էր խիստ կծու ոճով։ Սևումեանի անունը չէր յիշւած այնտեղ. բայց ամենքի համար պարզ էր, որ խօսքը նորա մասին է։

«Վերջին տարիները սկսել է կազմակերպւել մեր մէջ փոփոխամիտ երիտասարդի այլանդակ տիպը։ Այդպիսի երիտասարդները սրտով չեն կպչում մի որ և է դաւանանքի և, իրանց ձևացնելով հաստատ սկզբունքների տէր, գործով ապացուցում են, որ միանգամայն զուրկ են այդ բանից։ Այսօրւայ քարոզածը պատրաստ են վաղը ուրանալ, այսօրւայ կուռքը, որին երկրպագութիւն էին տալիս, վաղը կարող են խորտակել և ծուներ դնել այն կուռքի առաջ, որին հայհոյում էին։ Դրքա կամքից զուրկ էգոիստներ են, որովհետև լսում են ոչ թէ սկզբունքների ձայնին, այլ իրանց կրքերի թելադրութեան։ Դրքա միևնոյն ժամանակ վատ տեսակի փառասէրներ են. երբ մի կուսակցութիւն, մի շրջան չադուրդ չէ տալիս նոցա փառասիրական տենչանքին, նոքա, առանց խղճի խայթոցի, թողնում են նախկին դաւանանքը, նախկին շրջանը, դաւաճանում են բարեկամներին և անամօթ կերպով անցնում ոսերիմ թշնամիների բանակը։ Դրքա մոքի ռենեգատներ են»։

Միևնոյնն է թէ շինած երկաթով զաղէիր Սևումեանի սիրտը. այդչափ սաստիկ էր յօդւածի ազդեցութիւնը նորա վրայ։ Նորա մռայլած դէմքին և չարութեամբ լցւած աչքերին նայողը իսկոյն պիտի մտածէր, որ այդ մարդը մի ոխ է անուցանում իւր մէջ։ Նա վիրաւորւած գազանի էր նման։ Փողոցներով անցնում էր արագ, շարժուձևերը չզայլին և հայեացքը յանդուգն ու կասկածոտ։

Մի քանի օրւայ լռութիւնից յետոյ, նա, կարծես սթափելով շշմած դրութիւնից, կրծքի տակ հաւաքած բոլոր մաղձն ու թոյնը թափեց մի պաճուճւի մէջ, որը տպւեց «Ժամանակի» մէջ և բռնեց Փելիէտոնի ամբողջ բաժինը, և դորանով խօսակցութեան նիւթ տւեց ընթերցողներից շատերին։

Իւր պարսաւագրութեան մէջ Սևումեանը ծազրի էր մատնել «Ճառագայթի» ամբողջ խմբագրութիւնը՝ սկսած հրատարակչից մինչև ետին աշխատակիցը. չէր մոռացել անցողաբար դիպչել և այդ թերթի համակրողներից ոմանց։ Թէև ներկայացրած անձերից ամեն մէկը մի ծաղրանկար էր, բայց ընթերցողի համար շատ դիւրին բան էր գտնել իւրաքանչիւրի օրիգինալը։ Ամենքի դէմքերը, շորերի տարազը, առանձնայատկութիւնները — բոլորը դուրս էր բերած այնտեղ։ Պասկիլեանը իւր հերոսներին օժտել էր անվայել ածականներով։ Այդ բաւական չէր։ Նա հարկաւոր էր համարել իւրաքանչիւրի անցեալը քրքրել և այդ անցեալից հրապարակ հանել զանազան անեկդոտային դէպքեր, որոնք, անւանարկութեան համար, հեշտութեամբ կարող էին զէնք ծառայել բան-

սարկու և բամբասասէր մարդկանց ձեռքին։ Այդ լկտիութեան չափ ու աստիճանը հասկանալու համար, բաւական է ասել, որ հեղինակը ծաղրաբանութեան նիւթ էր շինել իւր հին բարեկամներից մի քանիսի նոյն իսկ ֆիզիկական պակասութիւնները. այնպէս որ այդ բարեկամներից մէկը նորա գրչի տակ դարձել էր «քօռ բուն», միւսը՝ «ծուռ քթանի», երրորդը՝ «կաղ դև»։ Բայց կիզտի ամենամեծ քանակութիւնը Ազատեանի գլխին էր թափւած։ Նորա վերաբերմամբ, ի միջի այլոց, գրւած էր հետեւեալը. «ամեն առաւօտ նա պարտաւոր էր տարածւել յատակի վրայ, իւր լեզուով մաքրել իւր տիրոջ կօշիկների երեսը և լիզելով փայլեցնել նորա կօշիկները»։ Գրւածքը վերջանում էր հետեւեալ տողերով. «աղնիւ մարդը չէ կարող ճնալ այդ միջնորտի մէջ, որովհետև նա վարակւած է շողոքորթութեան, սուորաքարշութեան և անձնագովութեան բացիլներով։ Ով կամենում է ճնալ այդ միջնորտի մէջ, նա սոխրւած է դէն դնել իւր արժանապատւութիւնը, ամօթը և բարոյական մաքրութիւնը»։

Այս պակուիլի առիթով ոչ մի խօսք չասաց «ճառագայթը»։ Նա, երևի, կամ անարժան էր համարել ուշադրութիւն դարձնել մի այնքան սանձարձակ շարայարութեան վրայ, կամ լռել էր դիտմամբ, որպէս զի չմոռանէին, թէ «ճառագայթը» իւր վրայ է առել այդ պարտաւորութիւնը։

Բայց նորա փոխարէն Ազատեանի սուորդրութեամբ երևաց աշնտեղ մի յօդւած «Թէ ո՞վ է Սեւումեանը»։ Եւ դա եղաւ ազդանշան երկու հերոսների կուի բռնւելու։

Իւր գրւածքի մէջ Ազատեանը աշխատում է պարզել Սեւումեանի իսկական պատկերը և ցոյց տալ, թէ ինչ է նշանակում քարոյական մաքրութիւն, երբ այդ խօսքերը արտասանում է Սեւումեանի նման մէկը։ Այդ դիտաւորութեամբ նա կենսագրութեան ձևով ներկայացնում է Սեւումեանի անցեալը՝ սկսած իւր ծանօթութիւնից մինչև վերջին օրերը։ Երևան է հանում նորա բոլոր ֆիլիպիկաները, որ նա ասել և գրել է «փամնակի» դէմ, նորա դրւատումները «ճառագայթի» ուղղութեան, նորա դերը կուսակցական պայքարների մէջ, նորա գրած նամակները այն անձանց մասին, որոնց հետ այժմ նա դարձել է «մի հոգի»։

Ինչ որ արել էր Սեւումեանը, արել էր բացարձակ, այսպէս ասած, օրը ցերեկով։ Եթէ դա ամօթ է և անպատւութիւն, նա չանձն է առնում այդ ամօթը և անպատւութիւնը. այնպէս որ Ազատեանի գրութիւնը մի առանձին նշանակութիւն ունեցող նորութիւն չէր պարունակում իւր մէջ, որ յայտնի չլիներ ընթերցողներին Սեւումեանի նկատմամբ։

Բայց արդէն մի կատարեալ նորութիւն, մի սկանդալ էր Ազատեանի վերաբերմամբ այն ամենը, ինչ որ գրեց Սեւումեանը նորա մասին իւր պատասխանի մէջ, որի վերնագիրը նորա յօդւածի վերնագրի ընդօրինակումն էր— «*Թէ ո՞վ է Ազատեանը*»։

Այս վերջինս իւր գրւածքի մէջ պարծենալով յայտնել էր, թէ «ճառագայթի» քարոզած սկզբունքները իւր համար սուրբ դատաստանքի նշանակութիւն է ունեցել, թէ «ճառագայթի» գծած ճանապարհից նա երբէք չէ շեղւել, թէ նա, հետևելով «ճառագայթի» սուորութեան, խարազանը ձեռքին մտրակել է հասարակութեան այլանդակ թերութիւնները և միշտ լաւին լաւ է ասել, վատին—վատ։

Սեւումեանը իւր պատասխանի մէջ աշխատում է փորփորել այն, ինչով պարծենում էր հակառակորդը, և այդ կէտի վրայ է դնում ողջ իւր մերկացումների բոլոր ծանրութեամբ։

Ի հաստատութիւն իւր ասածների, նա բերում է

քաղուածքներ նորա նամակներից և մատնացոյց անում
զանազան վկաների վրայ։

Եւ ինչ է դուրս գալիս բանից?

Բանից դուրս է գալիս այն, որ Ազատեանը, տարի-
ներ առաջ, «Ճառագայթին» մօտ աշխատակից լինելու
անյաջող փորձեր անելուց յետոյ, սկսել է ամեն տեղ
դժգոհութիւն յայտնել այդ թերթից, որ նա այլ ևս չէ
գոհացնում, որ նա գնալով անհետաքրքրական և ձանձ-
րալի է դառնում, որ, շնորհիւ նորա ղեկավարի բռնակա-
բնաւորութեան և մի քանի ուրիշ վատ յատկութիւն-
ների, լռութեան և անգործութեան են մատնւել շա-
տերը, որոնց եռանդը զուր տեղը կորչում է և ույժերը
անօգուտ սպառւում. մի քանի անձանց ներկայութեամբ
յայտնել է կարծիք, թէ լաւ կը լինէր ունենալ մի աւելի
լաւ օրգան, որպէս զի նա կարողանար լինել լաւագոյն
ձգտումների թարգման, լաւագոյն իղձերի արտայայտիչ և
առաջդիմութեան ղեկավար. այդ նպատակով նա նոյն իսկ
փորձեր է արել ջլատելու նորա ույժերը և վերջնակա-
նապէս տապալելու այդ օրգանը։

Այս բոլոր մերկացումները անելուց յետոյ, Սևու-
մեանը բացականչում է. «Դէ այժմ թող տեսնէ հասա-
րակութիւնը այդ մարդու բոլոր կեղծիքը!» Այս բոլորը»
ի հարկէ, համեմուած էր ամենաընտիր յիշոցներով։

Ազատեանը շտապեց պատասխանել «Ճառագայթին»
հետևեալ համարում։ Նա ճիգ է թափում մի կերպ
դուրս գալ այս մեղադրանքների ծանրութեան տակից. և
այդ անում է զանազան միջոցներով՝ կամ ուղղակի ու-
րանում է շատ բան, կամ իւր ժամանակներում գրած-
ներին ուրիշ մեկնութիւններ է տալիս, կամ յայտնում է,
թէ Սևումեանը աղաւաղել է իւր ասածը և գրածը, կամ
հաւատացնում է, որ նա հնարել է շատ բաներ։ Դորա-
նից յետոյ նա գնում է մատենադարանի խնդիրը և հարց-



նում. «ինչ եղան այն պարտքերը, որ նա անում էր իւր
ձեռնարկութեան համար?»

Այս հարցը առաջարկելով, Ազատեանը անշուշտ
կարծել է, թէ շատ նեղը պիտի գցէր Սևումեանին։

Բայց շուտով երևաց և դորա պատասխանը։ Սևու-
մեանը յայտնում է, թէ փողը ամբողջապէս իւր ձեռքին
է, և Ազատեանը թող այդ մասին շատ հոգս չանի, որով-
հետև հէնց նոյն օրը, երբ կը թողնէ իւր դիտաւորու-
թիւնը, կը շտապէ և պարտքերը վերադարձնել։ Եւ տպա
ինքը իւր կողմից մի քանի հարցեր է անում Ազա-
տեանին. օրինակ. ինչ եղան այն փողերը, որ նա հա-
ւաքել էր բաժանորդագրութեամբ իւր մի շարադրու-
թիւնը տպելու համար, որը սակայն երբէք չտպւեց,
չնայած, որ չորս տարի է անցել, և չի էլ տպւելու երբէք?

Մօտ մի ամիս տևեց Սևումեանի և Ազատեանի մի-
մեանց դէմ արած նետաձգութիւնը։

Աստուած է միայն յայտնի, թէ ով և որչափ ար-
դար էր իւր ամբաստանութիւնների և ինքնապաշտպա-
նութեան մէջ։

Նոքա անխնայ կերպով իրար մտրակում էին, մերկաց-
նում իրար թերութիւնները և դնում հրապարակի վրայ
հասարակութեան ծաղր ու ծանակի համար։

Այս բանակռիւը այն նշանակութիւնը ունեցաւ եր-
կուսի համար, որ նոքա հռչակւեցին, իբրև ժամանակա-
կից հերոսներ, և նոցա անունը և համբաւը հասաւ մին-
չև այն բոլոր անկիւնները, որտեղ կարդում էին «Ժա-
մանակը» և «Ճառագայթը»։

Հասարակութիւնը հաճութեամբ կարդում էր այս
բոլոր խծբծանքը։ Այն անձինք, որոնք սիրում են ըմբը-
շամարտի նման տեսարաններ, հրճւում, հիանում էին և
ծափ զարնում հերոսներին. իսկ նոքա, որոնք պաշտում

են տպագրական խօսքի սրբութիւնը, բեխերը սրելով, մտախոհ մրմռում էին քթի տակ.

—Հը՛, ուրեմն բանը այսպէս է, հա?

## X

Ոսկերչեանի հոգու մէջ յեղափոխութիւն էր կատարւում:

Նորա կենսուրախ հայեացքը տեղի էր տալիս մռայլ աշխարհայեցողութեան: Նախկին սանգւինիկը դառնում էր մելամաղձոտ: Նա դեռ նոր-նոր սկսում էր տեսնել այն անդունդը, որ ընկած էր իրականութեան և իդէալների միջև: Մարդիկ բոլորովին այն չէն ինչ որ նա կարծում էր: Մարդու ներսը աւելի մութ է, քան այդ երեւում է արտաքուստ: Հաւատը թուլանում էր, կասկածում է արտաքուստ: Հաւատը թուլանում էր, կասկածումը արագութեամբ զարգանում էր նորա մէջ:

Այս բոլորը դեռ սկիզբն էր տխուր և անյոյս յուսահատութեան: Ցոյսը դեռ իսպառ մարած չէր նորա սրտում: Կարօտալից աչքերով նա դեռ նայում էր հեռու և ապագայի մառախուղի մէջ նշմարում փառքի դափնին, սիրոյ պսակը և իր միտումների վերջնական յաղթութիւնը: Նորա հոգին յիշեցնում էր այն օրը, երբ երկինքը պատած է ամպերով, բայց տեղ-տեղ բաց է մնացել կապուտակը, և ամպերի ճեղքերից շողում են ճառագայթներ, օրհաց մռայլութիւնը մեղմացնելու համար:

Նորա յարաբերութիւնները խմբի հետ դնալով աւելի և աւելի լարւում էին. գրեթէ մի փորձ չէր անցնում, որ մի անբաւականութիւն տեղի չունենար: Այդ պատահում էր կամ դերերը բաժանելիս, երբ Ոսկերչեանին այնպիսի դեր էին առաջարկում, որ դուրս էր նորա ամպլուայից, կամ այն դէպքերում, երբ ռեժիսորը կամ Զամբազեանը կամ մի ուրիշը ընկերներից մէջ էին ընկնում իրանց շատ անգամ անտեղի նկատողութիւններով և



քծանդրութեամբ—մի բան, որ կրկնւում էր յաճախ: Նորա կարծես նպատակ էր դրել իւր համար կոտրել այդ մեծամիտ երիտասարդի հպարտութիւնը, գարձնել նորա և մի քանիսի խոնարհ պրոտեժէն և կամակատարը: Գանի պլինդ էր պահում Ոսկերչեանը իւր անհատական անկախութիւնը, այնքան աւելի սաստկանում էր շրջապատողների ճնշումը և հալածանքը:

Ոսկերչեանի հետ ունեցած ընդհարումից յետոյ, Սևուհեանը հանգիստ չէր տալիս նորան իւր ռեցենզիաների մէջ. քայլ առ քայլ հետևում էր նորա խաղին, լռութեան էր մատնում այն, ինչ նորան յաջողւում էր, պակասութիւնները չափազանցնում էր և ներկայացնում միանգամայն ծիծաղաշարժ:

Ոչ մի բանից նա այնքան չէր վհատում, որքան լրագրական յարձակումներից: Բանը հասաւ այնտեղ, որ նա ինքն էլ սկսեց կասկածել իւր ունեցած ընդունակութիւնների մասին: Ինքնավստահութիւնը կորցնելով, նա չէր կարողանում իւր ցանկացած տպաւորութիւնը գործել հանդիսականների վրայ:

Այժմ նա իրան նուիրել էր Համլէտի և Օթէլլոյի ուսումնասիրութեանը: Բայց մի ներքին ձայն կարծես ասում լինէր նորան. «Լաւ, սիրելիս, բաւական է. թող այդ պատրանքը և ինքնախաբէութիւնը. Համլէտ և Օթէլլո քո բանը չէ!» Բայց ամեն անգամ նա լռեցնում էր այդ ձայնը և գործը շարունակում: Թող դա պատրանք լինի—ոչինչ: Որն է աւելի դեղեցիկ—պատրանքը թէ իրական աշխարհը?

Նա զգում էր, որ նախկին թափչքների կորովը թուլացել է, առաջւայ ոգևորութիւնը այլևս չկայ: Զգացումները սառչում էին կամաց-կամաց, դորա հետ միասին ձայնն էլ կորցնում էր իւր զգայնութիւնը և ոյժը:

Առաջ, երբ նա արտասանում էր Օթէլլոյի «Ինձ բարով», ձայնը դողում էր, զգացմունքների յորդութիւ-

նից արտասուքով հեղեղուում էին աչքերը: Նա լալիս և հեկեկում էր. և ինչքան քաղցր էր ոգևորութեան արտասուքը!

Այժմ նա ի զուր էր աղաղակում՝ փակած սենեկի մէջ, իզուր էր ցաւեցնում աչքերը, բեխերը ոլորելով և մի կէտի վրայ ամուր դամելով: Ձայնը զուրկ էր զգացմունքից, հայեացքը զուրկ էր բոցից: Եւ, Աստուած, ինչ ոյժ էր գործ դնում, մինչև որ կարողանում էր մի կաթիլ արտասուք երևցնել աչքին!

Ոսկերչեանը նման էր ժայռի խոռոչում մեծացած արծւի ձագի, որը, մեծերի օրինակին հետևելով, կամեցաւ թևատարած սաւառնել երկնքում, բայց թռիչքը վաղաժամ էր. նա վայր ընկաւ գետին և թևերը կոտրեց:

Սակայն չէ կարելի ասել, որ ոգևորութեան հրեշտակը ընդ միշտ երեսը դարձրած լինէր նորանից: Թէև ոչ այնքան յաճախ, ինչպէս առաջ էր, նա վայելում էր երբեմն ամենաբարձր երանութեան պտուղներից:

Ոսկերչեանը ունէր մի տեսր, որտեղ նա արտագրում էր իւր ոտանաւորները մի ընդհանուր վերնագրի տակ («Գուսան»):

Ոտանաւորների մեծ մասը նւէրներ էին օր. Վարթուհեանին, ինչպէս այդ երևում է, օրինակ, հետևեալ վերնագիրներից. «Սիրոյ աստուածուհուն», «Հանդիպումն», «Ծուսատու հայեացք», «Սիրոյ քերկրանքը», «Հրաժեշտ», «Տեսութիւն», «Ոգեւորութեան աղբիւր», և այլն:

Այս բանաստեղծութիւնները Ոսկերչեանի առաջին և մաքուր սիրոյ պատմութիւնն էին պարունակում: Նոցա միջոցով ցանկացողը կարող էր օրէցօր հետևել նորա սիրոյ զարգանալուն:

Ճիշտ է, այդ նիւթից զուրս էլ նա գրում էր ոտանաւորներ, նւէրաւած, օրինակ, բարեկամութեան, իդէալների, հասարակական գործունէութեան, բայց նոցա թիւը սակաւ էր:



Սկսած այն օրից, երբ նորա մէջ կասկած ընկաւ օր. Վարթուհեանի և Գարեգինի փոխադարձ համակրութեան վերաբերմամբ, նորա մուսայի ժպիտը անհետացաւ և նա դարձաւ աւելի մռայլ: Այդ տրամադրութեան տակ նա գրեց իւր յաջողւած բանաստեղծութիւններից մէկը («Կասկած»):

Երբ տպւեց նորա անդրանիկ գործը («Վերան ծաղիկը»), և նա խրախոյս ստացաւ ծանօթների կողմից, գրականական փառքի ախորժակը բացւեց: Մի օր նա վերցրեց իւր տետրը, տարաւ և յանձնեց «Մանկական թերթի» խմբագրութեան, որպէս զի տպեն: Բայց խմբագիրը մի կողմից, աշխատակիցները միւս կողմից սկսեցին յորդորել նորան, որ նա գրի մանկական հասակի համար ոտանաւորներ, որովհետև սիրոյ բանաստեղծութիւնները, որքան էլ յաջող լինին, անյարմար են մանուկների ընթերցանութեան համար:

Ոսկերչեանը, զիջանելով այդ առաջարկութեան, խոստացաւ մանկական ոտանաւորներ մատակարարել «Մանկական թերթին»:

Եւ իրաւ, նա կատարեց իւր խոստումը: Վերջին երկու համարներում արդէն լոյս էին տեսել նորա հետևեալ բանաստեղծութիւնները. «Որը մանուկը», «Աղքատի զատիկը» և «Նոր տարի»: Մի կիրակի օր առաւօտեան Ոսկերչեանը նստած էր սեղանի առաջ և եղունգները կրծելով դէմ էր առել մի յանգի, որ ոչ մի կերպ դուրս չէր գալիս:

Այդ րոպէին եկաւ Գարեգինը և, բարևելով իւր բարեկամին, նստեց նորա մօտ և, կարծես անգիտակցաբար, հարցրեց.

—Այդ ինչ ես անում?

Արուաշէսը բաւարարութիւն տւեց այս հարցին և յետոյ սկսեց գանգատւել իրանից, որ մանկական ոտանաւորները իրան շատ էլ չեն յաջողւում:

Երբ նա խօսում էր, Գարեգինը նորա աչքերին չէր նայում. նա անուշադիր էր երևում. նա ցրած էր. անհանգիստ շարժուձեներ էր անում։ Պապիրոսը ծծում էր ագահութեամբ, մոխրամանի վրայ դնում և էլ իսկոյն վերցնում։ Վեր կենալով, սկսում էր անցուդարձ անել, քաշքշելով մօրուքը և շփելով ճակատը։

Նա լուրջ էր և մտախոհ։

Ոսկերչեանը առաջին անգամն էր տեսնում իւր բարեկամին այսչափ տարօրինակ տրամադրութեան մէջ։ Նա զարմացած հարցրեց.

—Գարեգին, ինչու ես այդպէս?...

—Ինչպէս եմ?

—Չեմ հասկանում! Մի ուրիշ տեսակ ես։ Հօ բան չէ պատահել?

Ոսկերչեանին թւաց, որ Գարեգինը ինչ որ մի լուր է ուզում հաղորդել, բայց չէ վստահանում։ Նա մինչև անգամ վախեցաւ, չլինի նա մի վատ բան է լսել իւր հօր մասին և դժւարանում է իրան յայտնել։ Նա վրդովւած կրկնեց իւր հարցը.

—Աստւած սիրես, Գարեգին, ասա, ինչ է պատահել?

Գարեգինը ժպտաց և, վերցնելով գլխարկը, ասաց.

—Հանգիստ կաց, խնդրում եմ. առանձին մի բան չէ պատահել։

Քանի օր է քեզ չէի տեսել, եկայ առողջութիւնիդ տեղեկանալու։ Ու նա հեռացաւ, միանգամայն շտապած թողնելով իւր բարեկամին։

Երեկոյեան Զառիկեաններից ծառան յանձնեց Ոսկերչեանին հետևեալ գրութիւնը. «Սիրելի Արտաշէս! Խընդրում եմ վաղը երեկոյեան ժամը 7-ին վարժուհեանների տանը լինես. ես նշանւում եմ Մարիամի հետ, և այդ առիթով աշնտեղ մի փոքրիկ հացկերոյթ պիտի լինի։ Վհայոյս եմ, որ դու չես մերժիլ խնդիրքս և



կը գաս մասնակցելու բարեկամիդ ուրախութեան։ Քո Գարեգին»։

Ոսկերչեանը, այդ գրութիւնը կարդալուց յետոյ, ժըպտաց ապուշի պէս և սկզբում ոչ մի ցաւ չզգաց։

Միայն մի խոր հոգոց դուրս եկաւ սրտիցը, և այն հոգոցի հետ դուրս թռաւ ամենափայլուն յոյսերից մէկը։

## XI

Ուրեմն նա այլ ևս չկայ Ոսկերչեանի համար։ Վերջ առաջին սիրոյ ցնորքներին և քաղցր բերկրութեան!

Վիրաւորւածը, ասում են, ֆիզիկական սուր ցաւը սկսում է զգալ վէրքը սառնալուց յետոյ։ Եթէ այդ ճիշտ է, ուրեմն նոյն բանն է կրկնւում և հոգեկան աշխարհում։ Ոսկերչեանը միայն մի քանի ժամից յետոյ զգաց, թէ ինչ խոր և անբուժելի վէրք է բացւել իւր սրտի մէջ։

Նա այժմ ուրիշին է պատկանում։ Նա շուտով պիտի լինի ուրիշի ամուսինը։ Այժմ երազել նորա մասին դաւաճանութիւն կը լինի իւր կողմից, որովհետև այն ուրիշը, որը նորա սրտին և մարմնին պիտի տիրանայ, իւր բարեկամն է։

Ա՛խ, երանի կարելի լինէր խափառ մոռանալ այն եակի պատկերը, որը յոյսերի և ոգևորութեան աղբիւր էր երբեմն!

Թէ Արտաշէսը, թէ Գարեգինը, երկուսն էլ խուսափում էին իրար հանդիպելուց։ Ոսկերչեանը չուզեց յարգանք ցոյց տալ իւր բարեկամին և նշանդրէքին բացակայ էր, ի մեծ զարմանս օր. Աշխէնի։ Քաղաքավարական մի սոկ պարտք կատարելու համար էլ չգնաց Զառիկեանների մօտ և չշնորհաւորեց ոչ իրան Գարեգինին, ոչ մօրը։

Օր. Աշխէնը այնքան զարմացած էր Ոսկերչեանի յանկարծակի փոփոխութեան վրայ, որ ամեն անգամ, երբ խօսք էր բացւում նորա մասին, նա կրկնում էր.

—Ես բոլորովին ապշած եմ... Ես չեմ հասկանում, թէ ինչ պատահեց այդ մարդուն! Խելագարել է—ինչ է?

Ոսկերչեանը դասի էլ չէր գնում այլ եւս: Նա չէր կամենում ամեն օր, օրիորդ Մարիամի երեսը տեսնելով, իւր վէրքը նորոգել:

Բայց ով հասկանար, ով չհասկանար, Գարեգինը շատ լաւ հասկանում էր Ոսկերչեանին: Նա մեծ պահանջ էր զգում մի անգամ ընդ միշտ բացատրելու իւր բարեկամի հետ: Նա անարդար է, նա իզուր է բարկացել, նա հիմք չունի մեղադրելու Գարեգինին: Բայց ինչպէս բացատրել—ահա խնդիրը? Ինչ անյարմար դրութիւն երկու բարեկամների համար!

Սկզբում, քանի որ դեռ եւս թարմ էր նոցա կրած փոխադարձ վիրաւորանքը, նոքա չէին կամենում ոչ իրար երես տեսնել, ոչ միմեանց հետ խօսել: Բայց բարեկամական զգացմունքը այնքան խոր արմատ էր ձգել երկուսի սրտերում, նոքա այնչափ կապուած էին իրար հետ, որ դիւրին բան չէր նախկին յարաբերութիւնները մի անգամից խզել, այն էլ ընդ միշտ:

Տեսնելով, որ երես առ երես դժուար է բացատրել Ոսկերչեանի հետ, Գարեգինը վճռեց գիմել նորան նամակով և, ինչպէս խոստովանող, իւր սիրտը բաց անել նորա առաջ: Եւ ահա պատրաստեց հետեւեալ բովանդակութեամբ մի գրութիւն.

«Սիրելիդ իմ Արտաշէս! Ես գիտեմ, դու ինձ վրայ բարկացած ես. մեզ մօտ այլ եւս չես գալիս, և երէկ դու այնպէս սառն ես բարեւել Աշխէնին, որ նա սաստիկ վշտացել է և շարունակ թախանձում է, որ ես յայտնեմ իրան քո անբաւականութեան պատճառը:

«Ի սէր Աստծոյ, Արտաշէս, ասա, ինչ է իմ մեղքը? Այն, որ ես հրապարակել եմ մի անձնաւորութեամբ, որը ինքը փոխադարձաբար չէր թագցնում իւր համակրանքն զգացմունքը դէպի ինձ? Ես մեղաւոր եմ, որ նա ինձ սիրեց? Մեղաւոր եմ, որ նորան սիրեցի?

«Կարելի է, դու կարծում ես, թէ նա անտարբեր չէ եղել դէպի քեզ, և ես, այսպէս ասած, խլեցի նորան քո ձեռքից? Եթէ այդպէս է, դու չարաչար սխալւում ես, սիրելիս: Ես ստիպուած եմ այժմ խորտակել քո պատրանքը: Ես օրիորդի հետ յաճախ առիթ եմ ունեցել խօսելու քո մասին, և, հաւատա ինձ, նորա զգացմունքը քո վերաբերմամբ ուրիշ բան չէ եղած, եթէ ոչ մի չարգանք:

«Դու ջահել ես, Արտաշէս, և անփորձ: Դու չես ճանաչում հայ օրիորդին: Ուր է այն հայ աղջիկը, որ համաձայնէր թողնել իւր հայրական տան հարստութիւնը, փայլը և շքեղութիւնը՝ մի չքաւոր երիտասարդի եռեւից գնալու և նորա աղքատութեանը ու զրկանքներին մասնակից լինելու համար? Ես այդ թոյլ չեմ տալիս նոյն իսկ սիրահարութեան դէպքում: ուր մնաց, եթէ սիրոյ մասին ոչ մի խօսք չէ կարող լինել?

«Հայ աղջիկը աւելի հեռու մտածել գիտէ, քան դու կարծում ես: Նա աւելի գործնական է, քան թէ դու կարող էիր երեւակայել: Որ նա կարող է սիրել գաղափարը, ես այդ չեմ ուրանում: Բայց հաստատ է և այն, որ նա գաղափարի համար չի զոհիլ և ոչ մէկը իւր կեանքի յարմարութիւններից:

«Ինձ յայտնի էր, որ դու հրապարակած ես. գիտէի նոյնպէս, որ այդ հրապոյրը ժամանակաւոր է և ոչ մի ապագայ չունի: Երիտասարդ հասակում ով չէ սիրահարւել մի քանի անգամ? Ահա ինչու ես երբէք լուրջ նշանակութիւն չեմ տալ այն զգացման, որ դու տածում էիր նորա վերաբերմամբ:

«Եթէ ես յանցաւոր եմ քո առաջ, երեսով տուր իմ յանցանքը: Ես պատրաստ եմ հազար անգամ ներո-

զութիւն խնդրել քեզնից, եթէ դու կարողանաս ցոյց տալ իմ խղճի վրայ մի ամենաչնչին բիծ անգամ։ Իմ խիղճը գոնէ մաքուր է և հանգիստ»։

Այս նամակը անասելի ուրախութիւն պատճառեց Ոսկերչեանին։ Այն անկեղծ և խոստովանական տոնը, որ հնչում էր Գարեգինի ամեն մի բառից, նորա սիրտը լցրեց հոգեզմայլութեամբ։ Արտասուելու չափ զգացուած էր նա։ Երբէք այնքան խորը չէր զգացել նա իւր անարդարութիւնը, որքան այժմ։ Եւ իրաւ, մտածում էր նա ինքն իրան, ինչ կոպտութիւն! Նա ոչ միայն չընդունեց բարեկամի հրաւէրը և չկամեցաւ մանակից լինել նորա ուրախութեան, այլ նոյն իսկ զլացաւ մի հասարակ շնորհաւորութիւն անել նորան։ Նա իրաւունք ունէր արդեօք բարկանալու? Ինչով է մեղաւոր Գարեգինը, որ օրիորդը դերապատուութիւնը իրան է տուել և իրան ընտրել իւր կեանքի ապագայ ընկեր? Ինչու Գարեգինը պիտի զոհէր իւր սէրը? Ում համար պիտի զոհէր և ինչ նպատակով? Չէ որ Արտաշէսի «հրապոյրը ժամանակաւոր էր և ոչ մի ապագայ չունէր?»

Վերջին օրերը Ոսկերչեանը մենակութիւն էր քաշում։ Սաստիկ կարօտ էր զգում բարեկամական շրջանին։ Զառիկեանների տան դուռը ընդ միշտ փակուած էր տեսնում իւր առաջ։ Բայց Գարեգինի նամակը հաշտութեան հրաւէր պէտք է համարել։

Հետեւեալ օրը Զառիկեանը ստացաւ Ոսկերչեանից իւր նամակի պատասխանը։ Ահաւասիկ նորա գրութիւնը։

«Թանկագին բարեկամ! Ստացայ քո նամակը և անչափ ուրախացայ։ Դա մի նոր ապացոյց է ընկերական սիրոյ զգացման, որ դու տածում ես դէպի ինձ։ Ես երկար մտածեցի իմ արածի վրայ, և տեսնում եմ, որ խիստ կոպիտ եմ վարուել քեզ հետ։ Այնպէս որ դու չես իմ առաջ մեղաւորը, այլ ես եմ մեղաւոր քո առաջ։



«Բայց այնուամենայնիւ ես պիտի յիշեցնեմ քեզ քո մի սխալը։ Բարեկամս, ինչու ամիսներ շարունակ դու թագցնում էիր ինձնից քո զգացմունքը նորա նկատմամբ? Ինչու այն օրը, երբ քեզ յայտնեցի սրտիս գաղտնիքը, դու ինձ չհասկացրիր, որ ես պատրանքի մէջ եմ, որ զուր են իմ յոյսերը, որ հայ աղջիկը աւելի գործնական է, քան ես կարծում եմ, որ նա չի գնալ աղքատի եւեւից?... Ինչու այդ ասում ես այժմ?... Ինչու տեղն ու տեղը չհանգցրիր սրտիս կայծը, որ գնալով պիտի մեծանար? Մի՞թէ դու չգիտէիր, որ հրդեհը աւելի դժւար է հանգցնել, քան թէ կայծը? Ինչու թոյլ տուիր, որ կայծը իմ մէջ հրդեհ դառնար?...

«Բայց բաւական է։ Այս խնդրի մասին չխօսենք այլ եւս։ Մոռացութեան տանք այն բոլոր անախորժութիւնները, որոնք ընդհատեցին մեր բարեկամական յարաբերութիւնները։

«Եղիր բախտաւոր և ինձ էլ ցանկացիր նոյնը։ Վերջին ժամանակները այնքան հոգեկան ցնցուղներ եմ կրել, որ ջղերս զգալի կերպով թուլացել են։ Ցաճախ տկարանում եմ, ախորժակս կորել է, քունս խանգարւել։ Այսօր առաւօտ թէյից յետոյ սկսեց սրտիս սաստիկ բաբախումը, որ առաջին անգամն է ինձ պատահում։ Դա վատ նշան է։ Աստած իմ վերջը բարի անի!»։

## XII

—Քախտիս անիւը շուռ է եկել,—ահա այն բառերը, որ յաճախ արտասանում էր Ոսկերչեանը։

Եւ իրաւ, ներհակւել էր բախտը՝ քայլ առ քայլ հետեւում էր նորան, թոյլ չէր տալիս շունչ քաշել, կազդուրւել,—հարւած հարւածի եւեւից։

Մինչդեռ նորա հոգին ձգտում էր միշտ դէպի վեր, դէպի վեր, կեանքը շարունակ գլորում էր նորան դէպի

ցած, դեպի ցած. և չկար մի զօրութիւն, որ նորան պահէր։

Բեմի վրայ—ոչ մի յաջողութիւն։ Նորան ստիպում էին կատարել այնպիսի դերեր, որ նորա ամպլուայից չէին։ Ոսկերչեան—և Ֆաուստ։ Ոսկերչեան—և կոմիկական սիրահար։ Ինչ անհեթեթութիւն։ Հասկացող հանդիսականը միայն մեղքանում էր նորան, տեսնելով, որ խեղճը իրան չարչարում է, հարկադրւած լինելով ծամածռւել, թռչկոտել, պարել, ծիծաղել այն րոպէին, երբ նորա սիրտը պատառւում էր ներքին տանջանքից և արտասուքից խեղդւում էր նա։ Բնականաբար, ամեն բան դուրս էր գալիս կեղծ ու շինծու։

Օ՛հ, ինչ առաս նիւթ Սևուէեանի ծաղրի համար! Եւ իրօք, ինչ կուշտ ծիծաղում էր նա «ժամանակի» էջերում!...

—Ի սէր Աստծոյ, այդ դերը իմ դերը չէ. խնայեցէք ինձ! մրմնջում էր նա համարեա լալագին ձայնով, երբ ռեժիսորը, դերերը բաժանելիս, կապում էր նորա վզին մի բոլորովին անհամապատասխան դեր։ Բայց լսողը ով էր? Կամ հպատակւել անպայման, տոկալ ու համբերել, կամ հրաժարւել և դուրս գալ խմբից—այդ էր միակ Ոսկերչեանին։ Եւ նա սկզբում համբերութեամբ տանում էր, զիջումներ էր անում խմբի պահանջներին, թէև առանց անախորժութիւնների և մանր կռիւների գործ չէր կատարւում։ Բայց զիջումներն էլ չէին օգնում։ Որքան շատ էր զիջանում Ոսկերչեանը, այնքան աւելի զիջումներ էին պահանջում նորանից. քանի շատ էր խոնարհւում, այնքան աւելի էին կամենում նորան նւաստացնել։ Օ, միայն այդ չպահանջէին նորանից—նւաստանալ! Աւելի հեշտ է նորա մէջքը կոտրել, քան թէ ստիպել, որ նա կռացնի իւր մէջքը։ Նա ծնւած է հպարտ և հպարտ կըմեռնի!



Ամբողջ խմբի մէջ նա չունէր մի սրտացաւ ընկեր։ Նոյն իսկ Մուրադեանը, որը համեմատաբար բոլորից կրթւածն էր, նա էլ վերջնականապէս ձուլւեց իւր շրջանի հետ, համակերպւեց այդ շրջանի որամադրութեան, դարձաւ նորա կամակատարը և գաւակիցը։ Առաջ գնալու և տաղանդի զարգացման մասին այլ ևս մտածելը աւելորդ էր։ Դորա համար ոչ մի նպաստաւոր պայման չկար այդ միջնորտի մէջ, ուր ձգել էր նորան վիճակը։ Արդիւնաւոր գործունէութեան ծրագիրը օդը ցնդեց, ինչպէս ծուխ։ Հոդու լաւագոյն ըղձերը թերի ճնացին։ Ոգևորութեան աղբիւրը ցամաքում էր։ Աղնիւ և վեհ զգացումները սկսում էին բթանալ։

—Աստուած իմ! մենախօսում էր Ոսկերչեանը, ձեռքերը գալարելով,—ինչ հոգեմաշ տանջանք է մարդու համար—շարունակ մանր կռիւներ մղել մանր մարդկանց հետ, շարունակ բացատրութիւններ տալ և բացատրութիւններ պահանջել, վիրաւորել և վիրաւորանք կրել, արհամարել ամենքին և ամենքից արհամարւած լինել!

Բարեկենդանը մօտենում էր։ Դարձեալ մի քանի ներկայացում, և թատրոնի ձմեռային սեզոնը պիտի վերջանար։

Բայց շուտով Ոսկերչեանի վիճակը փոխւեց։ Տեղի ունեցաւ մի հանգամանք, որ ստիպեց նորան ձգել բեմը և գործադրել իւր ոյժերը ուրիշ ասպարիզի վրայ։ Եւ ահա այդ ինչպէս պատահեց։

Մի տեղ Ոսկերչեանը խիստ վատ կարծիք էր յայտնել իւր արւեստակից ընկերների մասին։ Մռայլ գոյներով էր նկարագրել մանաւանդ Ջամբազեանին։ Վերջինս, Աստծուն է յայտնի, թէ ինչ ճանապարհով, իմացել էր այդ մասին և, ինչ ասել կ՛ուզէ, սաստիկ կատաղել էր Ոսկերչեանի դէմ։ Նուստով «ժամանակի» մէջ կեղծ ստորագրութեամբ նա տպեց մի յօդւած, որտեղ նա, ի միջի այլոց, ցանկա-

թիւն է յայտնում ապագայում ազատւած տեսնել խումբը անկոչ և անընդունակ դերասաններից։ Իբր այդպիսին յիշւած էր միայն Ոսկերչեանի անունը։ Յօդւածը վերջանում էր հետևեալ բառերով. «պէտք է մաքրել խումբը»։ Դա Զամբազեանի առաջին վրէժն էր, որ նա հանեց իւր թշնամուց։ Բայց դորանով չգադրեց նորա քինասէր ոգին։ Մի անգամ նորա բնակարանում հաւաքւել էին ընկերներից մի քանիսը, որոնց թւում և Մուրադեանը։ Խօսք բաց անելով Ոսկերչեանի մասին, նա ասաց.

—Ես զարմանում եմ, պարոններ, թէ ինչու այդ անշնորք խեղկատակին մենք հանդուրժում ենք մեր խմբի մէջ։ Նա միայն իրան չէ խայտառակում, այլ և մեզ ամենքիս։ Նա կոտրում է խմբի անունը հասարակութեան առաջ։ Ես չեմ հասկանում, թէ ինչի համար ենք նորան պահում մեր խմբի մէջ, երբ մենք դժգոհ ենք, մամուլը դժգոհ է, հասարակութիւնը դժգոհ է...

—Արժէ միթէ? ընդհատեց նորան Մուրադեանը. սեզոնը վերջանում է...

— Ա՛յ, տեսնում ես, Մուրադեան. դու միշտ այդպէս թոյլ ես տւել, և այժմ Ոսկերչեանը ամեն տեղ, ուր նստում է, մեզ ամենքիս վատաբանում, բամբասում է։ Գիտես, նա ինչ է ասել քո մասին? Մուրադեանը—միփալաս է! Իսկ իմ մասին... Օ՛հ, ես աշխարհիս ամենամեծ չարագործն եմ!...

—Ինչ է ասել իմ մասին? հարցրեց Մուրադեանը արհամարհոտ քմծիծաղ տալով։

—Մուրադեանը—փալաս է! կրկնեց Զամբազեանը, շեշտելով վերջին բառը։ Չես հաւատում? Հարցրու Զիլչագեանից։ Սա լսել է։ Զիլչագեան, ասել է, թէ ոչ?

—Այո՛, նա ասաց...

—Մինչև այժմ ես նորան խղճում էի, իսկ այսու-



հետև ես գիտեմ, թէ ինչպէս կըվարւեմ նորա հետ,— ապատնաց Մուրադեանը, գլուխը թափահարելով և իւր մտալի մատներով թմբկահարելով սեղանը։

Հետևեալ օրը փորձի ժամանակ ամբողջ խումբը զինւած էր Ոսկերչեանի դէմ։ Փորձը սկսւած էր, բայց նա դեռ չկար։ Օգտւելով նորա բացակայութիւնից, մի քանիսը սրախօսութիւններ էին անում նորա հասցէին, ի մեծ բաւականութիւն միւսների։ Բայց ահա և Ոսկերչեանը։ Հեռւից նորա ոտնաձայնը լսելուն պէս, Զամբազեանը ասաց.

—Մեր ապագայ Սալւինին գալիս է։

Եւ ամենքը ծիծաղեցին, այնպէս որ, երբ Ոսկերչեանը երևաց բեմի վրայ, շատերի դէմքին նշմարեց զըսպւած ծիծաղի հետքեր։

—Զարմանալի բան է. Ոսկերչեանը ամեն անգամ պիտի ուշանայ! դժգոհութեամբ յանդիմանեց ռեժիսորը, առանց նայելու նորա երեսին։ Ոսկերչեանը կամեցաւ արդարանալ, բայց Մուրադեանը, կիսատ թողնելով նորա խօսքը, դիմեց դերակատարներին և ասաց.

—Շարունակեցէք!

Ոսկերչեանը, դժգոհ ռեժիսորի արհամարհական անուշադրութիւնից, բարձր ձայնով մաքրեց կոկորդը և, կռնակը ցոյց տալով Մուրադեանին, ձեռքերը եռւին դրած՝ հպարտութեամբ սկսեց քայլել դէպի բեմի ճակատը։

Երբ դեր կատարելու հերթը եկաւ Ոսկերչեանին, նորան կանչեցին։ Նա խօսում էր ցածր ձայնով։ Մուրադեանը բարկացած հրամայեց, որ նա բարձր խօսի։ Ոսկերչեանը կատարեց ռեժիսորի հրամանը։ Մի տեղ նա «այստեղ» ասելով՝ ձեռքը դրեց կրծքին։ Մուրադեանը նկատեց, թէ այդ բառը ասելիս ձեռքը մի քանի անգամ հարկաւոր է զարկել կրծքին։ Ոսկերչեանը կատարեց և այդ։

Բայց քիչ յետոյ նա տեսաւ, որ իրան ընդհատում են ամեն մի րոպէում, ուղղում են ինտոնացիան, քննադատում են իւրաքանչիւր քայլը, իւրաքանչիւր շարժուածքը։ Տեղի և անտեղի միջամտութեան նպատակը ուրիշ բան չէր, եթէ ոչ ցոյց տալ զգալի կերպով, որ նորա խաղը ոչ մի բանի նման չէ։ Դա մի չար դիտաւորութիւն էր, որ շուտ հասկացաւ Ոսկերչեանը և թոյլ չտուեց այլ ևս, որ իրան յարձակումների նշանակէտ դարձնեն։

Մի անգամ էլ ռեժիսորը կամեցաւ ուղղել Ոսկերչեանին, բայց սա յայտնեց, թէ, իւր կարծիքով, ինքը ճիշտ հասկացել վիճելի կէտը։

—Այսուհետ մենք ինքնագլուխ չենք, որ անենք այն, ինչ մեր քէֆը կըտայ,—լսեց Ջամբազեանի ձայնը։ Մեզանից ամեն մէկը պարտաւոր է լսել ռեժիսորին։

—Բացատրեցէք, հասկացրէք իմ սխալը, և ես կը հնազանդուեմ,—պատասխանեց Ոսկերչեանը։

—Եթէ ամեն մէկին ամեն բան բացատրեմ, այդ ուր կը հասնի? նկատեց Մուրադեանը։

—Էլ ինչացու է ռեժիսորը, եթէ նա իւր ամենագլխաւոր պարտականութիւնը պիտի անգիտանայ?

—Ուրեմն դուք չէք կամենում հպատակել մեր խմբի կանոններին? հարցրեց Ջամբազեանը։

—Կուրօրէն—ոչ!

—Ուրեմն չէք կամենում մեր խմբի մէջ լինել? հարցրեց կըրկին Ջամբազեանը։

—Ձեր այդ հարցումները—զայրացուցիչ են! բարկացած գոչեց Ոսկերչեանը։

—Զայրացկոտ պարոն, խնդրում եմ, կամաց խօսէք! Այդ ու՞մ վրայ էք գոռում?

Այդ ասելով, Ջամբազեանը սպառնական շարժում արաւ և տեղումը կանգնեց։



Ոսկերչեանը արհամարհոտ ժպիտով նայում էր իւր հակառակորդի աչքերին և լուռ սպասում։ Քիչ յետոյ գլուխը թափահարեց մի քանի անգամ և ասաց.

—Ես դիտեմ, թէ ով է սարքել այս բոլոր կոմեդիան!

Ջամբազեանը, վառօդի պէս բռնկելով, բռնեց Ոսկերչեանի օձիքից և, բռունցքը բարձրացնելով նորա դէմքի վրայ, որոտաց.

—Հ՛ը, ով, ասա, ով?...

Ջամբազեանի այդ վրայ իջաւ Ոսկերչեանի ապտակը այնքան ամուր, որ թատրոնի դահլիճը արձագանքից։ Կռուողները սկսեցին իրար քաշքշել։ Բարձրացաւ ազմուկ։ Մէջ մտան դերասանները։ Ոսկերչեանի և Ջամբազեանի յիշողները, ընկերների յորդորները և յանդիմանութիւնը, ոտների խոխիւնը բեմի տախտակամածի վրայ—բոլորը միախառնուեց իրար։

Կռուողներին հազիւ-հազ բաժանեցին միմեանցից։ Ոսկերչեանը հևում էր, քթածակերը լայնանում և դողում էին. ձախ աչքի շուրջը կապտել էր հակառակորդի բռունցքից։

—Այսօր փորձ չի լինելու,—յայտարարեց Մուրադեանը։ Կարող էք գնալ։

Ոսկերչեանը անմիջապէս հեռացաւ, օդի մէջ շպրտելով իւր դերը այնպէս, որ թերթիկը պոկուելով ընկաւ Մուրադեանի ոտների մօտ։

—Կամ ես—կամ նա! գոչեց Ջամբազեանը, գոյց տալով Ոսկերչեանի հետից։

Մի ժամից յետոյ Ոսկերչեանի սենեակը մտաւ Զիչագեանը, յանձնեց նորան մի փակ ծրար և իսկոյն մեկնեց։

Ոսկերչեանը կարդաց հետևեալը. «Մեծապատիւ պարոն, սորանով յայտնում ենք ձեզ, որ դուք, միաձայն հրաժարեցրած լինելով մեր խմբիցը, այլ ևս նեղութիւն չքաշէք փորձերին գալու։ Ստորագրած էին ամենքը,

առանց բացառութեան։ Թերթիկը ձգելով սեղանի վրայ, նա բացականչեց.

—Ողորմելի արարածներ!...

Ուրեմն ամեն բան վերջացաւ, մտածեց Ոսկերչեանը. պէտք է այժմ խորհել ներկայ դրութեան մասին։ Մի քանի օր նա ոչինչ չէր կարողանում անել. ոչ գրել, ոչ կարդալ։ Ժամերով անցուդարձ էր անում սենեկում, պաշարւած զանազան մտածմունքներով։ Շարունակ ծխում էր, և եթէ մէկը մտնէր նորա սենեակը, նորան պիտի տեսնէր ծխի թանձր մշուշի մէջ։

Խորհրդածութեան ժամերին նորա յիշողութեան մէջ կենդանանում էին աշակերտական տարիները, և նա ակամայ համեմատում էր իւր նախկին վիճակը ներկայի հետ։ Բայց ինչ համեմատութիւն։ Այն ժամանակ նա բախտաւոր էր, մտատանջութեան պատճառ չկար, հոգսեր չգիտէր, սիրտը հանգիստ ու խաղաղ էր, յոյսերի և երազների աշխարհում էր ճախրում հոգին, իսկ այժմ... Ով կը մտածէր, թէ այսպիսի ահռելի վիհ է եղած իդէալների և իրականութեան մէջ?

Նորա ընկերները շուտով կ'աւարտեն, կը ստանան հաստատութեան վկայական, և նոցա առջև բաց են համալսարանի դռները։ Գիտութեան տաճարը կը մտնեն և քանի տարիներ բարձր ամբիոնից կը լսեն ուսուցչապետների քարոզները ճշմարտութեան, գեղեցկի և բարւոյ մասին։ Ա՛խ, ուսանողական երջանիկ տարիներ, որոնք լիքն են աքանչելի պօէզիայով—Ոսկերչեանը նոցա չգիտէ տեանի երբէք! Տարիներ կ'անցնեն, ընկերները կը վերադառնան, տեղեկութիւնների ահագին պաշարով ծանրաբեռնւած, և կեանք կը մտնեն, և կը տեսնեն նորան կեանքի ալիքների մէջ... Առանց հիմնաւոր գիտութեան, նա նման կը լինի մի նաւի՝ առանց առագաստի և առանց նաւավարի։



Ո՛չ. Թող կորչեն տխուր մտածմունքները. ոչինչ չկայ նոցա մէջ միսթիսարական։ Կորուստը դեռ ևս մեծ չէ։ Նորա առաջ դեռ ևս բաց է մի աւելի լայն և ոչ պակաս ազնիւ ասպարէզ, քան թէ բեմն է։ Դա գրականութիւնն է, ուր նա կարող է գործել աւելի անկախ, հեռու ինտրիգների խեղդիչ մթնոլորտից։ Բանաստեղծութիւնն է արդեօք նորա կոչումը, թէ գրաման, թէ ուրիշ բան— այդ դեռ չգիտէ։ Ապագան ցոյց կը տայ, թէ գրականութեան որ ճիւղի համար է նա ստեղծւած։ Բայց որ նա կոչւած է գրականութեան համար, այդ մասին նա ոչ մի կասկած չունի։

Նա արդէն տեսել է ապացոյց, որ զուրկ չէ բանաստեղծական տաղանդից։ «Վերան ծաղիկը» մեծ յաջողութիւն ունեցաւ։ Զաւիկեանների տանը կարդացած ոտանաւորը ծափահարութեամբ ընդունւեց։ Հեղինակաւոր անձինք հաւատացնում են, որ նա ունի «բանաստեղծական անձինք հաւատացնում են, որ նա ունի «բանաստեղծական տաղանդ»։ Իրաւ է, մամուլի մէջ դեռ ևս նորա մասին ոչ մի խօսք չէ եղած. բայց այդ նշանակութիւն չունի։ Մարդկային մտքի քանի քանի գեղեցիկ արտադրութիւններ աշխարհ են եկել առանց աղմուկի, և նոցա իսկական գնահատութիւնը երևացել է հեռաւոր ապագայում։

Մինչև օրս նա նւիրւած էր գրականութեան իւր հոգու, այսպէս ասած, միայն մի մասով։ Այսուհետև նա իւր բոլոր էութեամբ պատկանում է գրականութեան։

Ահա այսպիսի ուխտ արաւ Ոսկերչեանը. և այդ ժամից սկսած իւր հոգու բոլոր եռանդով անձնատուր եղաւ իւր սիրած գործին։

Սկսեց գրագէտի տենդային աշխատանքը։ Ժամերով նստած սեղանի մօտ՝ գրում չնչում էր, մտածում և նորից շարադրում. նորանոր հեղինակութիւնների ծրագիրներ էր կազմում. կարդում էր ժամերով, և երբ ընթերցանութեան ժամանակ մի որ և է նոր գաղափար

լուսաւորում էր նորա միտքը, նա իսկոյն ձգում էր գիրքը և կրկին ձեռքն առնում գրիչը։

Ահա վերջապէս նա գտաւ իր իսկական կոչումը։ Նա պիտի լինի մեր գրականութեան պարծանքը! Հսկայական գործեր նա պիտի կատարի, և ամեն մի հայ պիտի աքանչանայ նորա ստեղծագործութեամբ!

## XIII

Բարեկենդանի տօները եկան։

Մոգնու նկեղեցում գիշերւայ ժամը 12-ին հաւաքւել էր ահագին բազմութիւն։ Կանայք, տղամարդիկ, մեծ ու փոքր—բոլորեքեան խռնւել էին իրար։ Իրարանցում և շարժուձեւ։ Սմենքը ուրախ էին, իրար ականջի փսփսում էին, ժպտում և հետաքրքրութեամբ գլուխները վեր բարձրացնում, որպէս զի աւելի լաւ կարողանային տեսնել պսակադրութեան կարգը և նորապսակներին։

Գարեգին Զառիկեանը և Մարիամ Վարթուհեանը, կանգնած սեղանի առջև և իրար ձեռքից բռնած, կատարում էին այն բոլորը, ինչ որ պատւիրում էր նոցա զգեստաւորւած քահանան։

Երբ բոլոր ծէսերը վերջացան, ժողովուրդը դուրս խուժեց դէպի փողոց, շարժւեցին կառքերը և նորապսակներին և հարսնքաւորներին աղմուկով, դղրդոցով տարան դէպի Զառիկեանների բնակարանը։

Դեռ ևս փողոցի հեռաւոր ծայրից գիշերային մթութեան մէջ փայլեց Զառիկեանների տան ֆասադը բենգալեան կարմիր հրով, որը, տեղի տալով երբեմն կանաչ բոցի, շարունակ լուսաւորում էր կառքերի ճանապարհը մինչև նոցա տեղ հասնելը։

Պատշգամբում, սանդուխքների գլխին, կանգնած էր տիկին Զառիկեանը և սպասում էր անհամբեր թախտաւորը գոյգին։ Երբ նորա երևացին, նա համբուրեց երկուսի



այտերից, և ապա Գարեգինը՝ հարսի թևն առած՝ ջարդեց ոտի տակ դրած ափսէն և, դրան շէմքից անցնելով, մտաւ դահլիճը. այս բոլորը յաջորդւում էր, ի հարկէ, խաչեղբօր ուրախ ու բարձրաձայն գոռում-գոչումներով։

Նորապսակ զոյգը բազմեց կարմիր դիւանի վրայ, որը դրւած էր լուսաւորւած դահլիճի ճակատին, և շուտով մէկը միւսի ետևից նոցա մերձաւոր և հեռու ազգականները ուրիշ հրաւիրւածների հետ հերթով սկսեցին մօտենալ նոցա, համբուրել կամ, շամպանեայով լցրած գաւաթները ձեռներն առնելով, շնորհաւորել և բարեմաղթութիւններ ասել։

Գեղեցիկ և հրապուրիչ էր նորահարսը, այնքան հրապուրիչ, որ նայողի հայեացքը ակամայ կանգ էր առնում նորա վրայ։ Ոտից գ'գլուխ սպիտակ շողշողուն զգեստի մէջ, որի երկայն շլեյֆը բազմաթիւ ծալքերով ընկած էր գորգի վրայ, գլուխը զարդարած պսակով և նուրբ թափանցիկ քօղը ուսերին ձգած, նա բազմած էր, ինչպէս հեքեաթի թագուհի, երջանիկ և հոգով անդորրը, չնայած, որ թերթերունքի մէջ դեռ ևս նշմարւում էին արտասուքի հետքեր, արտասուք, որ նա թափեց իր մօրը, քրոջ և եղբօրը հրաժեշտ տալու միջոցին։

Նոյն երջանկութիւնը և նոյն հոգեկան անդորրութիւնը կարելի էր կարդալ և Գարեգինի դէմքին։

«Ահա միմեանց արժանի ամուսիններ»—այսպէս պիտի մտածեր իրաքանչիւրը, ով ցանկանար հաւեմատել մէկի և միւսի առաւելութիւնները։

Օր. Աչխէնը նոյնպէս սպիտակ էր հագած, և այդ պատճառով նորա երեսի թուխ գոյնը, աչքերի և մազերի սեւութիւնը աչք էին զարնում։ Նա այդ երեկոյի լիսեռ կատար տէրն էր զգում իրան։ Շարունակ շարժման մէջ էր նա, շարունակ հնչում էր նորա մեծաղեայ ձայնը ապ-

մուկի և խօսակցութիւնների միջից սենեակների մերթ այս, մերթ այն ծայրից։

Ընթրիքից առաջ միրգ բաժանեցին։ Աշխէնին, ըստ երեւութին, մեծ բաւականութիւն էր պատճառում ափսէները լցնել զանազան տեսակ մրգերով և քաղցրեղէնով և մատուցանել հիւրերին, անվերջ կատակելով ուրիշների հետ և թափ տալով նոցա առաջ իւր սրախօսութիւնների բոլոր պաշարը։

Սկսեցին պարերը։ Աշխէնը ամենքին սիրեց պարել։ Ով կ'համարձակւէր մերժել? Նա ուժով բռնում էր կամակորի ձեռքիցը, քաշ տալիս, և եթէ այդ էլ չէր օգնում, սկսում էր խնդրել, աղաչել, այնպէս որ, շատերի յամառութիւնը կոտրելով, ստիպում էր պարել և այնպիսի անձանց, որոնք իրանց կեանքումը չէին պարել երբէք։ Պար ածեց Գարեգինին և Մարիամին, պար ածեց մօրը, պար ածեց մի քանի պատաւ կանանց, ի մեծ զարմանութիւն բոլոր հանդիսականների. պարեց և ինքը, յոգնեց, թուլացաւ և հևալով, ձեռքը կրծքին, ընկաւ աթոռի վրայ դադար առնելու։

Ժամը երկուսն էր, երբ սեղանի նստեցին։ Դահլիճում տեղաւորեցին նորապսակները իրանց մօտիկ ազգականներով և բոլոր պատուաւոր հիւրերը, ծանօթ և անծանօթ խառնիխուռն։ Դահլիճը աւելի բազմամարդ էր, բայց ոչ աւելի ուրախ և աղմկալից, քան թէ կից սենեակը, ուր ժողովւած էին երիտասարդներ, գաղափարի այդ մոլեռանդ երկրպագուները, որոնք հոգի են տալիս ճառախօսութեան ու վէճերի համար։ Այստեղ էր սկսւում ուրախութեան աղբիւրը, և չետոյ միայն նորա թարմեցուցիչ ցայտերը անցնում էին դահլիճ բացւած դռնեբով։ Այստեղ էին Ջաւիկեանների բոլոր պաշտօնակիցները, ուսուցիչ և վարժուհի. այստեղ կային և գրչի մարդիկ՝ այստեղ էր և Ազատեանը։ Վերջինս չէր լինիլ այս հան-



դիսում, եթէ Աշխէնը այդ չպահանջէր իւր եղբօրից։ Այն օրւանից, երբ Սեւումեանը մերկացրեց նորա աննախանձելի անցեալը, նորա բոլոր կեղծիքը, նա իւր նշանակութիւնը կորցրեց Գարեգինի աչքում։ Սորա կարծիքով, Ազատեանը ընկաւ այն անձանց շարքը, որոնք իրանց ամբողջ կեանքում կեղծում են, որոնց անունը գրականութեան և մամուլի մէջ մի մեծ թիւրիմացութիւն է։

Բայց մինչեւ դեպի Ազատեանը կասկածով և թերահաւատութեամբ սկսեցին վերաբերւել Գարեգինի նման անձինք, Ազատեանի անունը, ընդհակառակը, աւելի բարձրացաւ մի աւելի ստւար շրջանում։ Եւ ահա ինչու։

«Ճառագայթի» խմբագիրը, արտասահմանից վերադառնալուց չետոյ, հրապարակով շնորհակալութիւն էր յայտնել Ազատեանից այն բանի համար, որ նա երեք ամիս շարունակ կարողացաւ հմտութեամբ վարել այդ թերթը և պահել նորան նախկին բարձրութեան վրայ։ Խմբագրի հրապարակական խոստովանութիւնը շատ դժգոհների բերանը փակեց։ Իսկ երբ Ազատեանը Սեւումեանի հետ կռւի բռնւեցին, խմբագիրը իւր «հաւատարիմ աշխատակցի» պաշտպան հանդիսացաւ. ի հարկէ, եթէ մի բիծ ընկներ «Ճառագայթի» կարևոր աշխատակցի վրայ, այդ բիծը մասամբ պիտի վերաբերէր և այդ թերթին։

Ֆաջալերւած այս պաշտպանութիւնից, Ազատեանը երես առաւ, հակառակորդների նկատմամբ խստացրեց ոճը և սկսեց ջատագովել «Ճառագայթը», խմբագրին, աշխատակիցներին և իւր բոլոր համակրողներին։ Գրիչը դարձաւ բեղմնաւոր։ Համարեա ամեն մի համարում մի որևէ բան երևում էր նորա ստորագրութեամբ։ Գործիչ չկար, որ նա չքննադատէր, մի գործ չէր կատարւում, որ նա կարծիք չյայտներ, խնդիր չկար, որ նա չշօշափէր։ Դպրոց և մանկավարժական հարցեր, հասարակական հաստատութիւններ, թատրոն, բանաստեղծութիւն, լեզւա-

բանական հարցեր, զանազան հիւանդութիւններ, սով, վաշխառութիւն, աղքատութիւններ—բոլորը, բոլորը շօշափում էր ամենագէտ Ֆաուստը, ոչ մի դժւարութեան առաջ կանգ չէր առնում նորա գրիչը և երբէք չէր մոռանում իւր ասածները հաստատելու համար վկայութիւններ բերել հեղինակաւոր անձանց գրւածքներից և երբեմն յօդւածի վերնագիրը զարդարել մի որև է լատինական բնաբանով: Այդ դեռ մի կողմ: Նա արտօնութիւն ստացաւ, որ ամեն մէկին չէր տալիս խմբագիրը. նա գրում էր նաև առաջնորդողներ: Այս հանգամանքների շնորհիւ, ասում եմ, Ազատեանը շուտով ձեռք բերեց մի որոշ հեղինակութիւն մի որոշ շրջանում:

Այս որոշ շրջանին էր պատկանում և Աշխէնը, որը Ազատեանի թերութիւնների առաջ գոցում էր աչքերը, որ չտեսնէ, և լայն բաց անում, որպէս զի հիանայ նորա արժանաւորութիւնների վրայ:

Թամադան Ազատեանն էր: Նա ստիպեց, որ իրան ընտրեն ձայների մեծամասնութեամբ, առարկելով, թէ դուցէ ոմանք չեն ցանկանում, որ նա լինի թամադա: Աշխէնը իսկոյն ոտի կանգնեց, նորան հետևեցին բոլոր պաշտօնակիցները. շատերն էլ, առանց տեղից շարժւելու, սկսեցին գոչել.

—Հա, հա, պարոն Ազատեանը, խնդրում ենք, խնդրում ենք!... Եւ այսպէս Ազատեանը դարձաւ թամադա: Սկսւեց կեր ու խումը, սկսւեցին ճառախօսութիւնները, կենացները և ուրախ երգերը:

Ձայների մեծամասնութիւն ասացի, յիշեցի յանկարծ Սեւումեանին: Մինչդեռ Ազատեանը քիչ էր մնում ուտելու իրաւունքն էլ վճռէր ձայների մեծամասնութեամբ, Սեւումեանը, որը, ի հարկէ, ներկայ չէր հանդիսին, իւր բոլոր էութեամբ դարձել էր այժմ ձայների մեծամասնութեան թշնամի:



—Ձայների մեծամասնութիւն! յաճախ կրկնում էր նա հեգնութեամբ իւր նոր բարեկամների շրջանում. ձայների մեծամասնութիւնը այն մեծ չարագործն է, որ թոյն խմեցրեց Սոկրատէսին և Քրիստոսին խաչեց! Բայց այս մնայ փակագծի մէջ: Շարունակենք մեր պատմութիւնը:

Նորապսակ զոյգի կենացը առաջարկելիս՝ Ազատեանը մի երկար ատենախօսութիւն արաւ. խօսեց ինչ-որ նոր կեանքի մասին, ինչ-որ վեստալուհիների անուն յիշեց, մայրերի կատարելիք դերը պարզաբանեց և վերջումը, մի վարժուհու երգել տալուց յետոյ, խօսքը ուղղեց Ոսկերչեանին, առանց նորա երեսին նայելու.

—Իսկ պ. Ոսկերչեանը, երևի, ներկայ հանդիսի համար մի բանաստեղծութիւն կ՚լինի պատրաստած. թող արտասանէ իւր բանաստեղծութիւնը:

Ոչ ոք չհասկացաւ այն նուրբ հեգնութիւնը, որ թագնւած էր թամադայի խօսքերի մէջ: Հասկացաւ միայն նա, ում վերաբերում էին Ազատեանի խօսքերը:

Ոսկերչեանը սաստիկ կարմրեց նոյնքան ամօթից, որքան և բարկութիւնից: «Ինչ է ուզում ինձնից այս մարդը? մտածեց նա. բայց զսպելով իւր զայրոյթը, որը սակայն զգացւում էր նորա ձայնի մէջ, պատասխանեց խիստ լրջօրէն.

—Ձեր հիանալի ճառը բաւական է: Ես չունիմ «պատրաստի» բանաստեղծութիւն!

Խրախճանի աղմուկի մէջ այս խօսքերը մնացին առանց ուշադրութեան: Միայն Զաւիկեանի պաշտօնակիցներից մի քանիսը խէթ աչքով նայեցին Ոսկերչեանի երեսին, կարծես ցանկանալով իրանց զարմանքը յայտնել, թէ ինչպէս է համարձակւում այդ թշւառականը հեգնութեամբ վերաբերւել Ազատեանի լուրջ առաջարկին, այն Ազատեանի, որի գրիչը կարող է Ոսկերչեանի նման տասին ջախջախել, ինչպէս ջախջախեց Սեւումեանին:

Վաղուց է Ոսկերչեանը ոտ չէր դրել Զառիկեաններէ տանը: Զնայած բարեկամների գրաւոր բացատրութեան, նոքա դարձեալ իրարից խուսափում էին: Զընդունել և այս անգամ Գարեգինի հրաւէրը կ'նշանակէր խզել ընդմիշտ նորա հետ ունեցած վերջին կապերը: Այդ պատճառով նա եկաւ հարսանիքը, բայց ամեն կերպ աշխատում էր աչքի չընկնել, մանաւանդ Աշխէնի աչքին չերևալ: Յաճախ դուրս էր գալիս պատշգամբը և առհասարակ սաստիկ ախուր էր երևում: Նորա շուրջը ամեն ինչ ուրախ ցնծում էր: Ճառախօսութիւն և կեցցէներ, ուռաներ և երգեցողութիւն, բաժակների զարկեր, ծիծաղ ու կատակ —բոլորը միախառնւում էր բազմաձայն աղմուկի մէջ: Միայն Ոսկերչեանն էր, որ սրտով չէր կարողանում մասնակցել ընդհանուր ուրախութեան. թէև արտաքուստ, միայն նորա համար, որ իւր անաեղի ախորժութիւնը ուրիշների ուշադրութիւնը չգրաւէ, երբեմն ժպտում էր, երբեմն խօսում սեղանակից հարևանների հետ և երբեմն մրմռում քթի տակից խմբական երգերի ժամանակ:

Ոսկերչեանին մի բան ևս սաստիկ վշտացնում էր: Աշխէնը, այն Աշխէնը, որին նա քրոջ պէս սիրում էր, այն աստիճան սառը և անտարբեր էր դարձել նորա վերաբերմամբ, որ կարծես իրան բոլորովին օտար էր զգում դէպի նա, կարծես նորա հետ երբէք մտերմութիւն ունեցած չէր: Ոչ մի անգամ նա չմօտեցաւ Ոսկերչեանին, առողջութիւնից չհարցրեց, պարի չհրաւիրեց, չհետաքրքրեց նորա անձով, կարծես նա եղած չեղած մի հաշիւ էր Աշխէնի համար: Ակներև էր, որ օրիորդը իւր կանացի վրէժն էր լուծում Արտաշէսից: Ինչու սա յանկարծ իւրաորը կարեց Զառիկեաններէ տանից և դորանով մատատնջութիւն պատճառեց նորան? Այժմ հերթը Աշխէնինն էր: Թող իմանայ և զգայ Արտաշէսը, թէ ինչ է նշանակում առանց պատճառի մէկին չարչարել: Մինչդեռ նա այնքան անուշադիր էր Ոսկերչեանի նկատմամբ, Ազատեանի դէմի շուրջն էր պտտւում, Ազատեանի հետ կատակում, ժպտում և զրոյց անում tête-à-tête...

Ոսկերչեանին թւում էր, որ իւր առաջին սիրոյ հետ կորցրեց նաև Զառիկեաններէ հետ ունեցած բարեկամութիւնը՝ իւր բոլոր մտերմութեամբ և պօէզիայով:

Լուսադէմին հիւրերը սկսեցին ցրւել, և ամենքից առաջ Ոսկերչեանը:

Դուրսը սաստիկ վատ եղանակ էր. ցուրտ, հողմահառն ձիւն: Ձմեռը, մօտենալով իւր վախճանին, թափում էր իւր վերջին ճիգը և մի անգամ էլ կամենում էր երևալ մարդկանց աչքումը իւր նախկին զօրութեամբ: Զարահմի բուքը, տանիքների վրայից և փողոցներից հաւաքում էր ձեան տարափները, գլուխը կորցրածի պէս ընկնում էր դէս ու դէն, վազվզում, սլանում, պտոյտներ էր անում և, հանդիսելով մարդկանց, զարնում էր նոցա երեսին կոտորակի մեծութեամբ սառը և կծու ձնհատիկները: Ոսկերչեանը փողոց դուրս եկաւ թէ չէ, ստիպւած եղաւ իսկոյն ձեռքով ծածկել երեսը և աչքերը, որովհետև հողմահալած ձիւնը լաւ խայթում և կուրացնում էր:

—Օ, ինչ անտանելի է! մրմռաց նա քթի տակից, խիստ թթւացնելով դէմքը:

Կարուկ ցուրտ քամին ներս թափանցեց մարմնի մէջ. նա լաւ կոճկեց վերարկուն, վեր քաշեց օձիքը և, երկու ձեռքերը մինչև գաւակը ամուր խոթելով գրպանների մէջ, կուչ եկաւ և արագացրեց քայլերը ճերմակած փողոցներով, ուր այս և այն ծայրում հազիւհազ աչքի էին ընկնում ուշացած անցաւորներ:

Բուքը շարունակում էր իւր ճարահմի խաղերը և Ոսկերչեանին աչքից չէր թողնում երբէք: Մի պահ դադար, ու նորից վեր էր կենում նա, վազելազ հասնում էր նորան, ցրիւ էր տալիս ձեան կոյտերը, պտտւում էր,

զարնուում էր տների պատերին, ծառերին, բարձրանում էր մինչև տանիքների ծխնելոյզները և մի պահ անյայտանում՝ քիչ յետոյ կրկին երևալու համար։

Ոսկերչեանը սաստիկ տխուր դուրս եկաւ հարսանքատանից։ Վատ եղանակը աւելի ևս փճացրեց նորա հոգեկան տրամադրութիւնը, և նա այժմ իրան այնչափ մենակ զգաց, կարծես չար բախտի բերմամբ ընկել էր մի լոպան անապատ, ուր անթիւ մղոնների վրայ, բացի իրանից, չկայ այլ ևս ոչ մի կենդանի արարած, ոչ մի մարդկային նշոյլ...

## XIV

Անցաւ մօտ երեք ամիս։ Գարունը փայլում էր իր բոլոր գեղեցկութեամբ։ Այնպիսի ժամանակ էր, երբ իւրաքանչիւր մարդ, մի բաժին ստանալով բնութեան լիառատ պարգևից, որքան նրանութեան մէջ էլ լինի, այնուամենայնիւ աւելի հաշտ աչքով է նայում կեանքի վրայ։ Կայ մի ինչ որ փարատիչ զօրութիւն ջինջ կապուտակի, անուշաբոյր օդի, բուսականութեան փարթամ պճրանքի և թռչունների ուրախ, անհոգ երգերի մէջ։

Ոսկերչեանը, իբրև վերածնուած բնութեան հիւլէներից մէկը, իրան զգում էր այժմ անհամեմատ աւելի լաւ։ Բացի այդ, հէնց այն գիտակցութիւնը, որ նա ամեն օր և ամեն ժամ իրան հարկադրւած չէր տեսնում արթուն և զգաստ լինել անարժան ընկերների խարդաւանանքից, հէնց այդ գիտակցութիւնը նորա հոգուն մի տեսակ անդորրութիւն էր բաշխում։

Հարկաւ, այժմ նա ապրում էր կարիքի և զրկանքի մէջ, շատ անգամ իւր կարևոր պիտոյքներին գոհացում տալ անկարող էր լինում, մարդավայել ապրուստ չունէր։ Միայն մի գաս ունէր, և այդ գասի համար ստանում էր ընդամենը տասնուհինգ ռուբլի, որից եօթը տալիս էր սենեկի վարձ. մի չնչին գումար էր ճնում, որով նա պիտի հոգար իւր ուտելիքը, խմելիքը, ծխախոտը և շորը։ Դա մի խղճալի կացութիւն էր անտէր-անտիրական և ջահել գրագէտի համար։

Բայց մի մխիթարութիւն կար։ Իւր կացարանը վարձել էր մի տան մէջ, որը գտնուում էր Սուրբ Դաւթի ստորոտում։ Դա մի փոքրիկ սենեակ էր, յարմարեցրած տանիքի տակ, և նայում էր դէպի փողոց։ Արևի առաջին ճառագայթները, ս. Դաւթի խաչի վրայ մի քանի վայրկեան շողշողալուց յետոյ, զարնուում էին այդ բնակարանի փոքրիկ երկփեղկ լուսամուտին. և երիտասարդ բանաստեղծը իրան բաղդաւոր էր զգում, երբ յաջողւում էր զարթնել կանուխ և դուրս գալով պատշգամբ՝ հիանալ արևածագի գեղեցիկ տեսարանով։ Լուսաբացի հանդիսաւոր րոպէներին, հոգեզմայլութեամբ լցւած, նա յառում էր աչքերը արևելեան հորիզոնի այն արծաթափայլ տարածութեան վրայ, որտեղից դողդողալով պիտի բարձրանար հրեղէն գունդը։

Մի առաւօտ, հոգու վերացման ժամին, Ոսկերչեանը յօրինել էր մի բանաստեղծութիւն, բնութեան նկարագիր, որի վերնագիրն էր «Արևածագ»։ Հեղինակը, ըստ երևոյթին, աքանչացել էր իւր նոր ոտանաւորով։ Նորան թւում էր, որ այս երկը նոյն ընդունելութիւնը պիտի գտնի, որին արժանացաւ երբեմն «Վերան ծաղիկը»։ Նա հաւատացած էր, որ «Արևածագը» իւր մասին անշուշտ խօսել պիտի տայ բանասէրների շրջանում։ Ձեռքերը եռեւին դրած՝ հպարտ հպարտ նա շրջում էր իւր նկուղի մէջ։ Այդ ժամանակ մէկը սկսեց բարձրանալ աստիճաններով։ Հազի ձայնից նա ճանաչեց հիւրին և, դուրս գալով սանդուխքների գլուխը, խօսեց.

— Օ, Ֆալչեանը! Բարև՛... Արի, արի. ես քեզ մի լաւ բան պիտի կարդամ։

—Դարձեալ բանաստեղծութիւն? արտասանեց այցելուն շնչասպառ և, անփոյթ կերպով նորան ողջունելուց յետոյ, իրան նետեց մահճակալի վրայ և խօսեց հևալով. Թո՛ղ դեռ մի շունչ քաշեմ: Տնաշէն, բաւական չէ, որ սարի ծայրն ես հասել, տան գլուխը ինչու ես բարձրացել?

—Հը, նախանձո՞ւմ ես? կատակեց Ոսկերչեանը:

—Ինչպէ՞ս չէ,—հեգնեց Ֆալչեանը:

—Ի հարկէ, կը նախանձես: Ապա մի համեմատիր իմ բնակարանը քոնի հետ: Վեր կաց: Այստեղ արի: Նայի՛ր: Տեսնում ես, ինչ հրաշալի տեսարան է բացւում առջևդ? Ես ապրում եմ, կարելի է ասել, երկնքումը, իսկ դու գեհենի ամենաստորին յարկում: Ահա որտեղ է քո կացարանը: Նայի՛ր. ահա այնտեղ ֆուրն է. աջակողմեան ափի վրայ մի բարձր շինութիւն կայ, տեսնում ես? նորա հետևում, որ մառախուղի նման բան է երևում. դա ծուխ է և ինչ որ մառախուղի նման բան է երևում. դա ծուխ է և փոշի, որոնք միանալով կարծես ցանկանում են ծածկել այն բոլոր աղտոտութիւնները, որոնցից բլրակներ են գոյացել. բայց իզո՛ւր. անցորդը քթի մօտ թաշկինակ է բռնում այնտեղ և շուռ է տալիս երեսը, որպէս զի չտեսնէ զզելի աղբակոյտերը...

—Այո՛, խոստովանում եմ. բանաստեղծական դիրք ունի կացարանդ: Ասա, օրը քանի ոտանաւոր ես թխում?... Հա՛, իրա՛ւ, քիչ էր մնում մոռանայի: Ուր է այն լաւ բանը, որ ուզում էիր կարդալ? Ոսկերչեանը մօտեցաւ սեղանին, որպէս զի վերցնի թերթիկը: Բայց Ֆալչեանը կամեցաւ ինքը կարդայ: Ձեռքերը եռևին, դունչը վեր քաշած, առանց գլուխը կռացնելու նա սկսեց իր մըտքումը կարդալ՝ աչքերը յառած սեղանի վրայ դրած թերթիկին:

Իսահակ Ֆալչեանը տարիքով երեսնի մօտ մի երիտասարդ էր, միջին հասակից քիչ աւելի բարձր, հիւանդոտ,



գունատ և այնքան նիհար, որ այտերի ոսկորները, կաշի տակից դուրս ցցուած՝ պարզ որոշւում էին: Գլուխը փոքրիկ, իսկ մազերը երկայն. սրածայր քիթը իր սապատի եռև կրում էր հաստաբակ ակնոցներ, որոնց տակ մկան աչքերի պէս արագ շարժւում էին սև և անփայլ բիբերը: Հազ ունէր նա, որը սաստկանում էր աշնան մառախուղների և երկարատև անձրևների ժամանակ, և տարւայ այդ եղանակին աչքերի սպիտակուցի վրայ մանր երակները լցւում էին արիւնով: Հագած էր հնամաշ և աղքատիկ շոր: Դա ծնունդ էր կարիքի, չքաւորութեան և հազար ու մի անյաջողութիւնների: Ուսում առել էր նա Ներսիսեան դպրանոցում, որը սակայն չաւարտեց և, հիւանդութեան պատճառով, դուրս եկաւ հինգերորդ դասարանից:

Նա սիրում էր գրականութիւնը. շարադրում էր դեռ ևս աշակերտական նստարանի վրայ: Ուսումը թողնելուց յետոյ, նա սկսեց աշխատակցել «Ժամանակին», ուր տպեց մի քանի թարգմանական պատկերներ և կիսաթարգմանական յօդուածներ: Բայց խմբագրութեան հետ մի ինչ որ անախորժութիւն ունեցաւ և հեռացաւ այդ լրերթից: Տպեց մի պօէմա, որ ամենքը գզգզեցին: Հրատարակեց ոտանաւորների տեսր, որի վրայ ոչոք ուշադրութիւն չդարձրեց: Դորանից յետոյ նա գրում էր «Ձառագայթի» և «Մանկական թերթի» մէջ: Ուէթ տարուց աւելի էր, որ նա ոտ էր դրել գրականական ասպարիզի վրայ, գրած տողերի թիւը տասնեակ հազարների կ'հասնէր, բայց, չնայած դորան, նա չունէր փոքր ի շատէ արժէք ունեցող գէթ մի հատ գրականական վաստակ:

Իւր անյաջողութեան գլխաւոր պատճառները նա գտնում էր սրտաբին հանգամանքների մէջ, որոնք և կազմում էին շարունակ նորա հոգսերի և մտածմունքների առարկան: Նորա կարծիքով, մեծ կարևորութիւն է ներ-

կայացնում այն, թէ որ լրագրին ես աշխատակցում, և ահա ինչու այսօր նորա անունը երևում է մի թերթի մէջ, վաղը մի ուրիշ տեղ: Նոյնքան ստեպ փոփոխում էր նա գրականութեան ճիւղերը: Պօէման ընդունելութիւն չգտաւ, հրատարակեց մանր ոտանաւորների ժողովածու: Ժողովածուն սառնութեան հանդիպեց. իրան նւիրեց մանկական պատմուածքների: Այդ էլ չօգնեց, քննադատի պաշտօն ստանձնեց: Նոյն խաղը խաղում էր նա և իւր անւան հետ: Մի օր կ'երևայ իւր իսկական անունով, մի ուրիշ անգամ կ'տեսնես Խահակը դարձած Կահ—Ասի, որը կազմւած է անւան տառերի տեղափոխութիւնից. այդ էլ հնացաւ, նա մի նոր անուն կ'հնարի, և մարդ զարմացած էր մնում, թէ որտեղից քըքրեց ու հանեց այդ օտարոտի կեղծանունը, կամ որ սատանան թելադրեց նորան այդ նորութիւնը:

Երկու ամիս չկար, որ նոքա ծանօթացել էին իրար հետ: Առաջին անգամ իրար հանդիպեցին «Մանկական թերթի» խմբագրատանը: Ոսկերչեանի մէջ տեսնելով նոյն բողոքող ոգին, որ Ֆալչեանը զգում էր իւր բոլոր էութեան մէջ, նա փափագ ունեցաւ նորա հետ մտերմանալու: Սկզբում Ոսկերչեանին հեռացրըրեց, նոյն իսկ դրաւեց իւր նոր ծանօթի բնաւորութեան քննադատող, ժխտող գիծը: Բայց վերջին ժամանակները, աւելի մօտ ճանաչելով այդ մարդուն, կամաց-կամաց սկսում էր համոզւել, որ այդ բարձրագոչ բողոքների, մայլ յոռետեսութեան և պեղեցիկ բառերի տակ թաղնւած էր մի ողորմելի հոգու դատարկութիւն:

Երբ Ֆալչեանը կարդաց բանաստեղծութիւնը, Ոսկերչեանը անհամբերութեամբ հարցրեց.

—Հը, ինչպէս էր? հաւանեցիր?

—Ը, այո, վատ չէ, կայ էլի, միջակ բան է:

—Միջակ բան է?... Ուրեմն քեզ դուր չեկաւ, որ



ասում ես միջակ բան է: Իսկ ես կարծում էի, դու կ'հիանաս:

—Գիտես, ինչ կայ, սիրելիս? Ոտանաւորը այնպիսի բան է, որ արժէ կարդալ միայն ամենաւերջում: Իսկ վատը կամ նոյն իսկ միջակը կրակը նետելու է!

—Էհ, բաւական է: Դու այդպէս ես. միշտ և ամեն բանից դժգոհ, դժգոհ: Աշխարհումս բան չկայ, որ դու հաւանես:

—Ո՛չ, ինչու? Այո, օրինակ, Բայրնի բանաստեղծութիւնները...

—Ո՛չ, դու մեր գրականութիւնը վերցրու:

—Թէկուզ հէնց մեր գրականութիւնը: Պատկանեանի, Նալբանդեանի ոտանաւորները ինչ պակաս բաներ են?

—Նե-րե-ցէք! ես քեզ ուրիշ բան կ'ասեմ: ես քեզ հաւատացնում եմ, որ, եթէ Պատկանեանը այժմ լինէր ինձ նման մի երիտասարդ և, իւր «Ընկարիչը» քո մօտ կարդալուց յետոյ, քո կարծիքն ուզենար իմանալ, դու անշուշտ ասելու էիր. «այո, վատ չէ, կայ էլի, միջակ բան է»:

—Սխալւում ես, բարեկամ!

—Ո՛չ, չեմ սխալւում, այլ ուղիղն եմ ասում: Դու ընդունում ես միայն այնպիսիներին, որոնց անունը վաղուց հաստատւած է գրականութեան մէջ: Իսկ նորերին, որոնց գնահատելու համար մի առանձին հոտառութիւն և կիրթ ճաշակ է հարկաւոր ունենալ, դու ժխտում ես, այդպիսիների գրւածքը խորհուրդ ես տալիս կրակը նետել! Ահա դու ինչ տեսակ մարդ ես!

Ոսկերչեանը խօսում էր ամենայն լրջութեամբ: Ֆալչեանը, որ քիչ առաջ կարծում էր, թէ կատակի ձևով ճշմարտութիւններ է ասում, իւր ընկերոջ վերջին յանդիմանութիւնից խոցւած, նմանապէս լուրջ կերպարանք ընդունեց, տաքացաւ և սկսեց իւր կրակոտ Փիլիպպիկան:

Խօսելով գրականագէտների հին սերնդի մասին, նա վերջացրեց իւր ասելիքը այսպէս.

—Նոցա դէմ խօսք չունիմ։ Նոքա տաղանդաւոր մտածողներ և դեղարւեստագէտներ էին, և իւրաքանչիւրը իւր դերը կատարեց կամ դեռ շարունակում է գործել։

Բայց այդ տիտաններըը ահա մեռնում են մէկը միւսի ետևից, ոչ մէկը արժանի ժառանգ չէ թողնում։ Նոցա տեղը մնում է թափուր, ասպարէզը ամայանում է, գրականական հորիզոնը մթնանում։

Յետոյ նա անցաւ գրողների, այսպէս ասած, նոր սերնդին և նոցա գլխին թափեց իւր փղձուկը։ Նոցա մասին խօսում էր բարձրից և կծու արհամարանքով։

—Այդ բոլոր նորելուկները անճաշակ, անկիրթ, ողորմելի գրչակներ են և չանգեր շինողներ։ Դոքա նման են ծաղկի այն կոկոններին, որոնք դեռ չբացած թառամում, ընկնում են։ Զնայած իրանց երիտասարդ հասակին, դոքա ուղեղը արդէն չորացել է, և, ինչպէս անբերրի հողը անզօր է պտուղ արտադրելու, այնպէս են և դոքա գլուխները!

Նա ասաց, որ իւր կարծիքը անհերքելի փաստերով շուտով կ'ապացուցանէ մամուլի մէջ։

—Ժամանակով ես բոլորին կ'դնեմ իմ քննադատական պրէսսի տակ, և ամենքը կ'համոզուեն, որ մի մխալ թարմ հիւթ չկայ այդ չորացած ուղեղների մէջ! Այո՛, ես, ես...

Ֆալչեանի հազը բռնեց, որ նա աշխատեց զսպել իւր խօսքը վերջացնելու համար, բայց չկարողացաւ։ Այս թշուառ անյաջողակը, որի մարմնի ամբողջ շինուածքը կերել, քայքայել էր աղքատութիւնը, իսկ միտքը չարաչար տանջել էին մի կողմից իւր միջավայրի սառը անտարբերութիւնը, միւս կողմից իւր գրականական ընկերներից կրած գրչի հալածանքը, նա, որ իրան համարում էր



չգնահատուած տաղանդ, որ շատերից չէր լսել համակրութեան խօսքեր, որի մէջ հեղինակի ինքնասիրութիւնը խոցուած էր կրած անյաջողութիւններից, այժմ, դառնութեամբ և մաղձով լցուած, աչ ու ձախ հայհոյում էր ամենքին, և փրփրում էր բերանը, և արիւն էր քամւում աչքերի մէջ։

Նորա խօսելու ժամանակ Ոսկերչեանը սաստիկ զայրացած էր և, ցանկանալով հակաճառել, ամեն րոպէ ընդհատում էր նորան։ Բայց երբ նորա հազը բռնեց, և սա տեսաւ, թէ ինչպէս խեղճը կծկւում էր տեղումը և ճիգ էր թափում ախտի դէմ մաքառել, այն ժամանակ սորա բարկութիւնը տեղի տւեց խղճահարութեան, սա երեսը դարձրեց մի կողմ և սկսեց մտախոհ անցուդարձ անել։

Երբ Ֆալչեանը քիչ հանգստացաւ, Ոսկերչեանը դիմեց նորան և ասաց եղբայրաբար.

—Ինչու չես բժշկւում, Իսահակ?

Ի պատասխան այս հարցին, հիւանդ գրականագէտը ձեռքով յուսահատական նշան արաւ, որի խորհուրդը այն էր, թէ նա ձեռք է վերցրել իրանից էլ, բժիշկներից էլ։ Այնուհետև տիրեց կարճատև լռութիւն, և յետոյ նա սկսեց խօսել։ Ամեն կերպ աշխատում էր չյուզւել, շուտ շուտ մաքրում էր կոկորդը և ձայնը չէր բարձրացնում։ Նա դանդատւում էր բժիշկներից, ասելով, թէ նոքա ոչինչ չեն կարողանում անել իւր հիւանդութեան դէմ, թէ մէկը ծաղրում է միւսի դեղատոմսը, թէ ամենքը գրում են թանկագին դեղեր, որոնց գնելու համար հարկաւոր է փող։

—Երկուսից մէկը,—ասում էր,—կամ պէտք է դեղեր ընդունեմ և քաղցած մնամ, կամ դեղեր չընդունեմ, որպէս զի քաղցից չմեռնեմ։ Ես ընտրել եմ երկրորը, իսկ հիւանդութիւնս յանձնել եմ բախտին։

Ոսկերչեանը հարցրեց, թէ ինչու նա գոնէ մի տարի

չէ կամենում ապրել հայրենի գիւղում, ուր կենդանաբար ջուրը և օդը կարող են կազդուրել քայքայուած առողջութիւնը գուցէ աւելի լաւ, քան թէ գեղանկար տուփերի պիլիւլները և սրւակների ներկուած դոյնզդոյն ջրերը։ Ֆալչեանը պատասխանեց, թէ նա փորձել է, բայց անյաջող, որովհետև քաղաքի կեանքին նա այն աստիճան ընտելացել է, որ գիւղումը ձանձրանում է, օրը տարի է թւում, և կեանքը դառնում է անտանելի։

—Ո՛չ,—աւելացրեց նա վճռականապէս. աւելի լաւ է համացկամաց փտել քաղաքումը։

Ոսկերչեանը նայեց ժամացոյցին և գոչեց.

—Օ՛, արդէն տասնեւմէկից անց է, իմ գնալու ժամանակն է։ Այդ ասելով, նա ծածկեց գլխարկը, առաւ ձեռնափայտը և, ձեռքը մեկնելով ընկերոջը, աւելացրեց.

—Ներողութիւն. ես պիտի շտապեմ գասի։

—Գնանք միասին,—ասաց Ֆալչեանը, տեղից վեր կենալով,—ես էլ կը մտնեմ խմբագրատուն։ Այսօրւայ լրագիրները դեռ չեմ կարդացել։

—Դասից յետոյ ես էլ կը գնամ այնտեղ, նոր գրած բանաստեղծութիւնս պիտի յանձնեմ խմբագրին։

Երբ փողոցումը երկու ընկերները ուղում էին միմեանցից բաժանուել, Ֆալչեանը ասաց.

—Գիտես, ինչի համար էի եկել քեզ մօտ?

Ու բացատրեց։ Նա մի քանի մանկէթի պարտք էր խնդրում։ Ոսկերչեանը հանեց պորտմոնէն, որի մէջ կային մի հատ հինգնոց և մի հատ երեքնոց, չհաշուած կոպէկները։ Երեքնոցը դրեց իւր ընկերոջ ձեռքի մէջ և ասաց.

—Յաւում եմ, որ աւելի չեմ կարող։

—Ես շուտով կը վերադարձնեմ։

—Դատարկ բան է,—նկատեց Ոսկերչեանը,—և, ցոյտութիւն ասելով, ծռեց ճանապարհը դէպի աջ։

Մի տասը օրից յետոյ լոյս տեսաւ «Մանկական թեր-



թը», որտեղ զետեղուած էր և Ոսկերչեանի ոտանաւորը («Արեւածագը»)։ Համարը սովորական համարներից էր, լաւն ու վատը, ինչպէս միշտ, խառն։

Անցաւ մի քանի օր ևս, և «Ճառագայթի» մէջ երեւաց յարձակողական բնաւորութեամբ և անստորագիր մի յօդուած, որի մէջ «Մանկական թերթի» վերջին երկու համարները ենթարկուած էին կրքոտ և կարճատես քննադատութեան։

«Ճառագայթը» և «Մանկական թերթը» մինչ այդ հաշտ էին իրար հետ և իրար պաշտպանում էին։ Բայց ինչ ինչ պատճառներով երկու դաշնակից հրատարակութիւնները միմեանց հետ ընկան, և թշնամութիւնը անմիջապէս արտայայտուեց թէ մէկ և թէ միւս օրգանի մէջ, նախ «Ճառագայթի» և ապա «Մանկական թերթի» մէջ։

Յօդուածում Ոսկերչեանի գրուածքի մասին ասուած էր հետեւեալը. «Դա մի աշակերտական վարժութիւն է, որից ուսուցիչը գոհ չէր լինիլ և գուցէ դեռ մի լաւ քաշէր հեղինակի ականջիցը և խրատէր, որ նա իւր ժամանակը աւելի օգտաւէտ բաների վրայ գործադրի, քան թէ անհամ ոտանաւորների շարադրութեամբ զբաղւելն է»։

Այս կծու նկատողութիւնը առաջին խօսքն էր, որ արտասանեց «Ճառագայթը» Ոսկերչեանի մասին, և, իրրև մի օրգանի խօսք, որը իւր ժամանակին բաւական կշիռ ունէր հասարակութեան մէջ, ինչ ասել կ՚ուզէ, խորը վիրաւորեց սկսնակ գրականագէտի սիրտը։

«Ով է այն գաղտնի թշնամին, այն արիւկան, որը յանդգնել է իւր գրչի խաղովը մի տասնեակ անձանց ծաղրի մատնել, բայց համարձակութիւն չէ ունեցել իւր սեփական գրուածքի տակ իւր սեփական անունը ստորագրել?»։ Այսպէս էր մտածում Ոսկերչեանը։

Ու նորա հոգեկան հանգստութիւնը կրկին խանգարւեց։

## XV

Ոսկերչեանը կարօտ էր քաջալերութեան։ Նա փափագում էր լսել վերջապէս մի հեղինակաւոր անձից մի անկեղծ կարծիք իւր գրականական ընդունակութիւնների մասին։ Կարելի է, նա շլացած է մի ֆիկտիւ քանքարով? Կարելի է, միայն իրան է թւում, թէ ունի տաղանդ, կամ գոնէ մի շնորհք, մի ձիրք, բայց իսկապէս զուրկ է միանգամայն աստուածային պարգևից?

Բայց ում մօտ գնայ լաւ է? Այն մէկը, որ ունի արձակ հայեացք, ծերունու մազեր և երիտասարդի հոգի, ներկայ չէր քաղաքումը։ Այն միւսը, որ անյայտութիւնից լոյս աշխարհ հանեց հայ ժողովրդի լեզւի բոլոր հարստութիւնները, նոյնպէս բացակայ էր։ Կեանքի հզօր ալիքները, ով գիտէ, ուր էին տարել ու ձգել նոցա։ Որ նահանգի, որ գաւառի անկիւնում որոնում էին նոքա իրանց օրւայ հացը, որը սակայն այնքան էլ հեշտ չէր տրւում նոցա?...

Արդեօք չգնայ նորա մօտ, այն քարոզիչ-վիպասանի մօտ, որը բոլոր հայերից ամենախորը ըմբռնեց իւր ժամանակի ոգին և իւր բեղմնաւոր ու կախարդական գրչովը աշտանակեց և առաջ մղեց հայութիւնը?

Այո, նորա մօտ!... Վճռած է։ Էլ ումից կարող է լսել մի սկսնակ աւելի խելացի խորհուրդներ և կարծիք, եթէ ոչ այն մարդուց, որը ամբողջ քառորդ դար քրտնաջան աշխատեց գրականական ասպարիզում, շարունակ մարտնչելով գրչակների ահագին բանակի դէմ, և վերջ ի վերջոյ գրականական ճակատամարտից դուրս եկաւ փառաւոր յաղթանակով, ընդհանուր սէր և յարգանք վաստակեց և փակեց ընդմիշտ իւր թշնամիների բերանները?

Ոսկերչեանը ծանօթ էր համբաւաւոր գրողի հետ։ Ընայած դորան, նորա սիրտը սկսեց ուժգին բաբախել,



երբ մի երեկոյ մտաւ նորա բնակարանը։ Նորան թւում էր, որ այնտեղ նոյն իսկ ծաղիկները մի առանձին բուրմունք ունին և կարծես հպարտանում են, որ պատկանում են նշանաւոր մարդու։ Ամեն ինչ այնտեղ մի տեսակ երկիւղածութիւն և պատկառանք էր ներշնչում երիտասարդ գրականագէտի հոգուն։

Դուռը բացւեց, և չահէլ հիւրին ներս հրաւիրեց ինքը վիպասանը։

Տանտէրը խնդրեց Ոսկերչեանին նստել։ Նստեց և ինքը գրասեղանի մօտ և լուռ կացաւ։ Նորան թւում էր, որ այցելուն եկել է մի որ և է գործով և սպասում էր, որ նա կը սկսի խօսել և կը յայտնի իւր գալու նպատակը։ Ոսկերչեանը անյարմար էր գտնում առաջին իսկ վայրկենից իւր անձնաւորութիւնը մէջ խոթել. այդ պատճառով սա ևս լուռ էր և սպասում էր, որ նա բաց կ'անի խօսքի ծայրը։

Վերջապէս տանտէրը ինքը ընդհատեց լռութիւնը, որի ժամանակ երկուսն էլ իրանց անյարմար դրութեան մէջ էին զգում։ Նա ասաց, թէ յիշում է վերան ծաղիկը», թէ նա շատ յաջող բան էր և թէ լաւ կը լինէր, որ նա շարունակէր գրել նոյն ոգով։

Ոսկերչեանը չափազանց ուրախ էր, որ խօսակցութիւնը սկսեց այնպիսի առարկայից, որը ամենակարճ ճանապարհով կարող էր հասցնել նորան իւր այցելութեան նպատակին։

Եւ ահա սկսեց խօսել։ Ձայնը դողում էր, և նորա մէջ լսւում էր մի տեսակ տրտունջ, որ ելնում էր վշտահար սրտի խորքիցը։ Բայց խօսողի աստիճանաբար ոգևորւելու չափով ձայնն էլ դառնում էր աւելի և աւելի համարձակ ու վստահ։ Նորա ազնիւ ձայնը, աչքերի խելօք արտայայտութիւնը, արդարացի բողոքը—միանգամից գրաւեցին լսողի ուշադրութիւնը։ Տեսնելով իւր մօտ մի

արտասովոր անձնաւորութիւն, վիպասանը երկու ձեռքով ուղղեց ակնոցները երկու ծայրերից և, հայեացքը գամելով երիտասարդի դէմքի վրայ, սկսեց լսել նորան կրկնապատիկ հետաքրքրութեամբ։

Ոսկերչեանը գանգատւում էր սկսող գրականագէտի ծանր վիճակի մասին։ Ասում էր, թէ քննադատութիւնը անբարեխիղճ է, կրքոտ է, անճաշակ է։ Յատում էր, որ գրականագէտը կարօտ է ճնում իւր գրւածքի իսկական գնահատութիւնը լսելու։ Ո՛րանք գովում են աւելի, քան հեղինակը ինքը կը ցանկանար, միւսները բռնում են հակառակ ծայրից. հայհոյում, ծաղրում և ոչնչացնում են։

—Մարդ գլուխը կարող է կորցնել,—ասում էր նա,—այս բոլոր ծայրայեղութիւնների խաւսի մէջ։ Այսօր գրում ես մի բան, ուրախանում ես, որ յաջող է, կարդում ես ընկերներիդ,—ընկերներդ ծափահարում են. յետոյ տպում ես,—և ահա ստահակի մկկը, մի թերթի էջի վրայից, Սաթանայէլի նման քրքջում է, ծաղր ու ծանակ է դարձնում ոգևորութեանդ պտուղը!... Դեռ մի կողմ թողնենք այն, որ շատ անգամ հանդիպում ես ապանիչ լռութեան։ Եւ յուսահատւում է մարդ, և ձեռքերը թուլանում են, գրիչը վայր է ընկնում ձեռքից, և վհատում է ու չգիտէ, ինչ անէ! Ճշմարիտ, երբեմն սիրտս ասում է, դէն ձգեմ գրիչս և այլ ևս մի տող չգրեմ!

Երիտասարդ հիւրը լռեց, կարծելով, թէ այժմ կը կամենայ խօսել կեանքի բովից անցած հմուտ գրականագէտը։ Բայց սա շարունակում էր լռութիւն պահպանել։

—Ափսոս,—խօսեց կրկին Ոսկերչեանը,—ես շատ ցաւում եմ, որ մենք չունինք գրականագէտների մի սերտ շրջան. դա մեծ օգուտ կը տար սկսողներին։ Հէնց ես ձեզ օրինակ։ Ես այնքան մեծ կարիք եմ զգում իմ մասին մի կարծիք լսելու, մի խորհուրդ լսելու!...

Տանտէրը արդէն հասկացել էր իւր այցելուի սրտնեղութեան իսկական պատճառը։ Նա տեսնում էր, որ խեղճը մի բան է ուզում ասել, բայց խօսքը ճնում է լեզուի ծայրին։ Ուստի ինքը կամեցաւ հանել նորան դժուար դրութիւնից և հարցրեց.

—«Ճառագայթի» վերջին համարում ձեր բանաստեղծութեան մասին կար մի նկատողութիւն,—կարդացել էք?

—Այո՛, կարդացի, և այնքան վատ ազդեց ինձ վրայ այն նկատողութիւնը, որ ամբողջ գիշերը չկարողացայ քնել!

—Երևում է, դուք շատ բարակ սիրտ ունիք,—նկատեց բազմամեայ աշխատաւորը, հազիւ նկատելի կերպով քմծիծաղ տալով։ Այդ լաւ չէ,—շարունակեց նա,—աւելի քաջ, աւելի սրտոտ եղէք։ Բարակ սիրտը նման է բարակ ապակու և շատ հեշտ կարող է կոտրւել։

Ոսկերչեանին, ըստ երևոյթին, դուր եկաւ այս համեմատութիւնը, և նա ծիծաղելով ասաց.

—Այդ ճշմարիտ է։ Բայց ինչ անեմ, որ այսպէս եմ։ Մի փոքրիկ անյաջողութիւն, և ես յուսահատւում եմ։

—«Արևածագը»,—խօսեց կրկին վիպասանը,—բնութեան մի գեղեցիկ նկարագրութիւն է. միայն ունի լեզւի մի քանի անհարթութիւններ, որոնք, երևի, առիթ են տւել «Ճառագայթի» քննադատին այնքան խիստ, մինչև անգամ անարդար լինելու ձեր վերաբերմամբ։

Այս խօսքի վրայ Ոսկերչեանը հոգոց քաշեց, սիրտը թեթևացաւ, գոհունակութեան ժպիտ փայլեց դէմքին, աչքերը մեծացան, և նա լարեց իւր բոլոր ուշադրութիւնը։

—Եթէ դատելու լինինք,—շարունակեց վիպասանը,—ձեր մի քանի յաջող տողանաւորներից, դուք ունիք գրելու շնորհք։ Միայն ձեր լեզուն, լեզուն մշակեցէք...

—Այո՛, այո՛, իհարկէ, այդ անհրաժեշտ է,—վրայ տւեց երիտասարդ հիւրը։

—Բայց որ ամենից գլխաւորն է—չվհատէք!

—Այո, չվհատել!

—Մի գրող ասել է. հանճարն է համբերութիւն։ Դա ճիշտ է։ Բայց, կարծեմ, աւելի ճիշտ կը լինի ասել, թէ առանց համբերութեան—չկայ հանճար։ Համբերութիւնը մի երկնատուր պարգև է, և այն գրականագէտը, որ զուրկ է դորանից, կորած է։ Դա ամեն մի գրականագէտի հրեշտակ-պահապանն է, դա եղել է իմ հրեշտակ պահապանը։ Իւրաքանչիւր գրող բազմամեայ գործունէութեան ընթացքում, որը տեւում է յաճախ տասնեակ տարիներ, շարունակ գործ պիտի ունենայ հազար-գլխանի և հազար-լեզւանի այն հրէշի հետ, որը կոչւում է նախանձ։ Եթէ ես այժմ ունիմ մի անուն, դուք կարծում էք այդ անունը ինձ էժան է նստել?...

Նա երկար խօսեց այս ուղղութեամբ։ Նա համառօտ կերպով պատմեց իւր կեանքը՝ սկսած գրական ասպարէզ երեւալու առաջին օրից. և երիտասարդը համոզւեց, որ, արդարև, շատ թանկ է նստել հռչակաւոր գրողին իւր անունը։ Ամեն մի քայլում անւանարկութիւն, դաւ, ինտրիգներ, անխիղճ ոտնձգութիւն և ստոր թշնամանք... Այն ինչ կեղտոտ սրտերից են բղխել այն յիշոցները, որ թափւել են խնկելի գործիչի գլխին!... Ո՛հ, ինչ կեանք է այն կեանքը, որ լիքն է անքուն գիշերներով, մշտական սրտնեղութեամբ, մտատանջութեամբ և անվերջանալի հոգսերով! Բայց չնայած այդ բոլոր խոչնդոտներին, նա աճեց հսկայական աճումով, բարձրացաւ, հասաւ փառքի գագաթին, և հայհոյիչ գաճաճներին մնաց միայն պապանձւել և սողալ նորա ոտների տակ!...

Ոսկերչեանը զմայլւած էր այն աստիճան, որ պատրաստ էր ծունկ խոնարհել երկու տասնեակ հատորների հեղինակի առջև և համբուրել այն ձեռքը, որը ամենաձախորդ պայմանների մէջ ամբողջ քառորդ դար շարժել



է գիւթական գրիչը և վայր չէ դրել երբէք։ Նա չէր խօսում այլ ևս։ Նա ուրախ կը լինէր չուտել, չխմել, այլ միայն լսել և լսել։ Այնքան խրատական էր այն ամենը, ինչ որ ասում էր փորձառու և տաղանդաւոր գրականագէտը!

Հրապուրւած երիտասարդը մոռացել էր, որ իւր առջև դրւած թէյի բաժակը դեռ լիքն է, չնայած, որ վաղուց մառուցւած էր։

Տանտէրը յիշեցրեց նորան ըմպելիքի մասին, ասելով.

—Ձեր թէյը բոլորովին սառած կը լինի։ Թողէք տաքացնեն։

—Ո՛չ, խնդրեմ, նեղութիւն չքաշէք։ Այսպէս լաւ է։ Ես կը խմեմ... Դուք սկսել էիք մեր մամուլի մասին...

—Այո՛, սիրելիս,—շարունակեց վիպասանը,—մեր մամուլը այժմ սաստիկ ընկած է և մի աննախանձելի տեսարան է ներկայացնում!...

Երկար ժամանակ նա խօսում էր այս հարցի մասին։ Բայց կարծես իւր ասածը դեռ քիչ էր համարում։ Նա բերեց մի լրագրի հին համարներից մէկը. ֆելիետոնի բաժնում զետեղւած էր նորա յօդւածը, որի մէջ պարունակւում էր նորա ամփոփ կարծիքը մեր լրագրութեան մասին։ Նա կարդաց այդ յօդւածից զանազան կտորներ։ Բայց այնքանն էլ բաւական էր, որպէս զի Ոսկերչեանի նման մի սկսնակը կարողանար փոքրիշատէ ճանաչել այն մթնոլորտը, որի մէջ գործելու իրան կոչւած էր տեսնում։

Ահաւասիկ այն հատւածները, որ անցողաբար կարդաց հեղինակը.

«Գրականական անամօթութիւնը մեզանում այն աստիճան կեղտոտութեան է հասել, որ բաւական է մէկը միւսի հետ մի փոքր թշնամութիւն, մի փոքր նախանձ ունենայ, միշտ պատրաստ է յաջող դէպքում նորան

ցեխի մէջ կոխելու և ամէն անմաքրութիւն նրա գլխին թափելու... Մեր հասարակութեան առանց դրան էլ փճացած ճաշակը աւելի ապականւում է, երբ կարդում է լրագրի մէջ անամօթ հայհոյանքներ միայն... Օգուտ քաղելով մամուլի անամօթութիւնից, իւրաքանչիւր ստահակ կարող է խայտառակել ում որ ցանկանում է, մանաւանդ, երբ նա իրան աջակից է գտնում լրագրի խմբագրին... Ճշմարտութիւնը մանր կրքերի մէջ մեռնում է... Մեզանում չկայ այն բանը, ինչ որ կոչւում է գրականական ազնւութիւն։ Մանրակրկիտ հաւի նման քրքրել մի գրւածք և նրա միջից դուրս բերել աննշան և չնչին հատիկներ—այդ մեր պոլեմիկոսների գործն է։ Բծախնդրութիւնը հասցրած է մեզանում վերին աստիճանի անարգութեան։ Օրինակ, դուք հրատարակել էք մի յօդւած. ձեր հակառակորդը յօդւածի ամբողջ բովանդակութեան հետ գործ չունի. նա ընտրում է նրա միջից միայն մի քանի բառեր և անամօթ իմաստակութեամբ աղաւաղում է, խեղաթիւրում է նրա միտքը և դուրս է բերում ծուռ ու սխալ եզրակացութիւններ... Դա սարսափելի դրութիւն է գրողների համար»...

Ոսկերչեանը խնդրեց թոյլտւութիւն տանել իւր հետ թերթի համարը և տանը ուշադրութեամբ կարդալ յօդւածը ծայրէիծայր։ Չափազանց գոհ և ուրախ էր նա այն ժամւայ համար, որ անցկացրեց ժամանակակից գրականութեան ամենանշանաւոր ներկայացուցչի բնակարանում։ Հրաժեշտ տալու րոպէին նա խորին գոհունակութեամբ սեղմեց տանտիրոջ ձեռքը և ասաց.

—Մեծապէս շնորհակալ եմ, որ ձեր թանկագին ժամերից մէկը ինձ նւիրեցիք։ Այս երեկոն ես չեմ մոռանալ!

—Մի վհատէք—չմոռանաք և այս խօսքերը։

—Օ, երբէք, երբէք! բացականչեց Ոսկերչեանը և, դուրս գալով փողոց, այնպէս արագ թռաւ դէպի իւր կա-



ցարանը, որ կարծես նորա բերնից լսած քաջալերական խօսքերը թևեր էին տւել ջահել գրականագէտին...

## XVI

Զառիկեանների տանը աւելացել էր այժմ մի նոր անդամ, Մարիամը։ Բայց նորա ներկայութիւնը տակաւին չբաժանեց այդ ընտանիքը երկու ներհակ մասերի, ինչպէս յաճախ պատահում է, երբ օտար ընտանիքի մէջ երևում է մի նոր կին-արմատ։ Այդ բարեկիրթ տան մէջ բնաւ տեղի չէին ունենում անախորժ ընտանեկան տեսարաններ, որոնք անխուսափելի են տգէտ հասարակութեան մէջ և բնորոշում են մի կողմից ամուսինների, միւս կողմից՝ սկեսօր, տալերի և տէգրների յարաբերութիւնները, որոնք շատ անգամ անտանելի դժոխք են դարձնում հարսի, ամուսնու և վերջինիս արիւնակիցների կեանքը, նայած, թէ որ կողմն է յաղթում և իւր բռան մէջ առնում ամբողջ ընտանիքը։ Խօսքս այն ներքին, երբեմն լուռ, երբեմն աղմկալից ընդհարումների մասին է, որոնք խանգարում, թունաւորում են ընտանիքի խաղաղ երջանկութիւնը, անբարոյականացնում են տան մէջ ամենքին և, զարգացնելով իւրաքանչիւրի մէջ փոխադարձ ատելութիւն, նենգամտութիւն ու նախանձ, ստիպում են դիմել թէ ստախօսութեան, թէ գաղտագողի ունկնդրութեան։ Տիկին Զառիկեանը, թէև շատ սիրում էր իւր հարսին, բայց և այնպէս երբէք ձեռքից չէր թողնում իւր սկեսրական իրաւունքները. իսկ Մարիամը, իբրև խելօք և խաղաղասէր բնաւորութիւն, մանրակրկիտ կնոջ պէս, ամեն բանի ետևից չէր ընկնում, կամաւ հպատակւում էր իւր ամուսնու մօրը, այնպէս որ, օրինակ, մի որև է տեղ գնալու ժամանակ պէտք է գար և յայտնէր նորան, թէ ուր է գնում։ Աշխէնը և Մարիամը քոյրերի պէս սիրում էին միմեանց, և մտերմանալ աւելի, քան նոքա էին մտերմացել իրար հետ, անկարելի էր։

Գարեգինը, ինչ ասել կ'ուզէ, սիրում, փայփայում էր իւր կնոջը և աշխատում էր ամեն կերպ ազդել նորա զարգացման վրայ: Նա մեծ փափաք ունէր, որ Մարիամը շարունակ հետևէր մեր հասարակական և գրական-լրագրական կեանքի ընթացքին, և այդպիսի ուղղութիւն էր տալիս նորա հարցասիրութեանը: Միևնոյն ժամանակ նա շատ գոհ էր, որ իւր կինը համեմատաբար բաւական կարճ միջոցում կարողացաւ տիրապետել իւր մայրենի լեզուին այն աստիճան, որ ազատ կարդում էր հայերէն և հասկանում:

Առաւօտները Գարեգինը և Աշխէնը գնում էին ուսումնարան: «Մայրիկը», ինչպէս ամենքը անուանում էին այդ տանը տիկին Ջաւիկեանին, շարունակ ել ու մուտ էր անում սենեակներից խոհանոց, խոհանոցից սենեակները, կամ իջնում էր մառանը, որտեղ ձողերի վրայից կախուած պատկերի ու քսակների և ներքև շարեշար դարսուած մոշնակների մէջ պահում էր տնային գործածութեան համար այլ և այլ պաշարեղէն, կրկին բարձրանում երկարաձիգ աստիճաններով, ձեռքին աման՝ լիքը թթու դրած բանջարեղէնով կամ որևէ ուրիշ բանով: Իսկ երբ խոհանոցի գործը վերջանում էր, նորան կարելի էր տեսնել սեղանատանը, ուր նա գահաւորակի վրայ ծալապատիկ նստած՝ զբաղուած էր լինում կար ու կարկատանով: Պարապ ժամ նա չէր սիրում:

Մարիամը գրեթէ մենակ էր ժնում մինչև ժամը երկուսը: Մի ժամի չափ անց էր կացնում դաշնամուրի առաջ: Մէկ կամ երկու ժամ կարդում էր, երբեմն էլ մանկական գրքերից զանազան պատմութիւններ էր անում փոքրիկ Երանդին:

Երբ Գարեգինի և Աշխէնի գալու ժամանակը մօտենում էր, նա սաստիկ անհամբեր էր դառնում: սպասողական դրութեան մէջ շարունակ նայում էր ժամացոյ-



ցին. ամեն մի շշուկից, ամեն մի ոտնաձայնից վեր էր թռչում: քանի անգամ դուռը հանում էր պատուհանից տեսնելու՝ չեն երևում արդեօք Գարեգինը և Աշխէնը: Իսկ երբ սոքա գալիս էին, ինչ կենդանութիւն, ինչ ուրախ ծիծաղ էր բարձրանում Ջաւիկեանների տանը!

Երեկոները, թէյի և ընթրիքի ժամանակ, ընտանիքը հաւաքւում էր սեղանատուն. և ահա կրկին ուրախութիւն, զարճալի պատմութիւններ, ծիծաղ և կատակ... Որտեղ կայ Աշխէնը, այնտեղ կ'լինի և կատակը:

Իսկ երբ Գարեգինը և Աշխէնը գրասեղանի առաջ նստած՝ զբաղուած էին լինում տետրակներ ուղղելով կամ հետևեալ օրւայ աւանդելիք դասն էին պատրաստում, Մարիամը, մենակ մնալով, տաղտկանում էր, մանաւանդ, երբ տրամադիր չէր լինում կարդալու, և ակամայ յամենամում էր իրան իւր ամուսնու և նորա քրոջ հետ: Նորա մէջ բարի նախանձ էր զարթնում թէ մէկի և թէ միւսի վերաբերմամբ: Ցերեկը հինգ ժամ նոքա պարապում են ուսումնարանում, գալիս են տուն, կրկին պարապում են,—աշխատանքից յետոյ օրհնւած է հանգիստը: Ահա թէ ինչու Գարեգինի և մանաւանդ Աշխէնի ուրախութիւնը, ծիծաղը, հանաքը—բոլորն էլ սրտի խորքից է բղխում: Ինչու նա մի որևէ լուրջ զբաղմունք չունենայ, որ աշխատանքից յոգնած՝ ինքն էլ կարողանայ, նոցա պէս, լրիւ վայելել հանգստութեան բոլոր քաղցրութիւնը?

Իսկ երբ պատահում էր, որ անյետաձգելի գործը ամբողջ ժամերով գամած էր պահում սեղանի մօտ Գարեգինին և Աշխէնին, Մարիամը ձանձրանում, տխրում էր և, համբերութիւնը հատած, զգուշութեամբ մտնում էր մէկի կամ միւսի սենեակը, ձեռքը դնում նոցա ուսին և գորովալիր ձայնով մրմնջում:

—Աշխէն ջան, շուտ կ'վերջացնես?

կամ՝

—Գարեգինն, չվերջացրիր?

Այնչափ քնքշութիւն և այնքան կարօտ էր լսում այս կիսահամարձակ կոչի մէջ, որ Գարեգինը առնում էր նորա ձեռքը իւր ձեռքի մէջ և, աչքերը թիրթի վրայից չհեռացնելով, արագացնում էր գրչի շարժուածքը, ասելով.

—Այս րոպէիս, հոգեակս:

Աշխէնը շատ անգամ չէր էլ դիմանում. գրիչը կամ գիրքը նետում էր մի կողմ և մի առ ժամանակ ընդհատում պարապմունքը, ի հաճոյս Մարիամի:

Իսկ երբ գործը վերջացաւ, դահլիճում թնդում էր Գարեգինի խրոխտ ձայնը, դաշնամուրը դղրդում էր Մարիամի մատների տակ, և հնչում էր Աշխէնի ուրախ տրալալան...

Ժամանակը աւելի օգտաւէտ դարձնելու համար, Գարեգինը մի լաւ բան մտածեց. շաբաթւայ մէջ յատուկ մի երեկոյ նշանակեց ընտանեկան ընթերցանութեան համար: Երեքից մէկը կարդում էր որևէ յօդուած, կամ պատմուածք, կամ քննադատութիւն, և միւսները լսում էին: Դա առիթ էր տալիս վիճաբանութեան, որը տեւում էր մինչև ընթրիքը, և սեղանի նստած՝ շարունակում էին վիճել, և այնքան երկար խօսում էին, որ մայրիկը սկսում էր յօրանջել, մի գլուխ երազ էր տեսնում և, քնած տեղից սթափելով, ասում էր՝ հազիւ կարողանալով բանալ աչքերի ծանրացած կոպերը.

—Ձեր կռիւը չվերջացաւ, որդիքս?

Աշխէնի ընկերուհիներից և պաշտօնակից վարժուհիներից մի քանիսը ցանկութիւն էին յայտնել ներկայ լինելու Զառիկեանների մօտ ընտանեկան ընթերցանութիւնների ժամանակ: Առաջարկութիւնը ուրախութեամբ ընդունուեց:

Մի երեկոյ այդ նպատակով ժողովւել էին Զառիկեան-



ների տանը եօթ-ութ հոգի: Բոլորն էլ այդ ժամանակւայ ընտիր, առաջնակարգ օրիորդներից էին, որոնք կազմում էին երիտասարդութեան մի հարազատ մասը, դաւանում էին միևնոյն գաղափարները և երես շուռ տալիս այն ամենից, ինչից նողկանքով հեռանում էր երիտասարդութիւնը: Բոլորն էլ հետաքրքրւում էին հասարակական գործերով և գործիչներով և իրանց սրտին խիստ մօտ էին ընդունում հասարակական կեանքի ուրախալի և տխուր երևոյթները: Նոցա անունները այսպէս թէ այնպէս երեւացել էին լրագրութեան մէջ՝ մէկը՝ իբր օրինակելի ուսուցչուհի, միւսը՝ իբր թարգմանիչ մի որևէ մանկական գրքոյկի, երրորդը՝ իբր նւիրատու և նւէրներ ժողովող սովեալների համար, և այլն:

Գարեգինը առանը չէր: Ձաշից յետոյ նա գնացել էր ծանօթներից մէկի մօտ և դեռ չէր վերադարձել:

Մարիամը, Աշխէնը և հիւրերը նստած էին դահլիճում և խօսք ու զրոյց էին անում:

—Օրիորդներ, լսել էք մի նորութիւն?—Հեղինէն գնում է արտասահման՝ ուսումը շարունակելու:

Խօսողը Զառիկեանների պաշտօնակից վարժուհիներից էր, մի բարձրահասակ, թխադէմ օրիորդ, արծւաքիթ և խոշոր դիմագծերով:

—Մի՞թէ? հարցրեց Աշխէնը զարմանքով, որին խառն էր և նախանձը: Ուրեմն յաջողեցրել է? Տեսնում էք, ինչ ճարպիկն է այդ անպիտանը?

—Իսկ ուր պիտի գնայ? հարցրեց ներկայ եղողներից մի ուրիշը:

—Կարծեմ, Ժընևև,—պատասխանեց լուր հաղորդողը:

—Երանի նորան! բացականչեց օրիորդներից մէկը, որը իւր սաթի նման աչքերով, թաւ յօնքերով և կարի նման սև ու երկայն մազերով յիշեցնում էր մի գնչու-

հու։ Եթէ ես ևս միջոց ունենայի, ծոխ պէս կը թռչէի, կը գնայի...

—Ես ևս, յարեց նորա կողքին նստողը։

—Իսկ ինչ մանագիտութիւն է ընտրել? Հարցրեց Մարիամը։

—Մանկավարժութիւն, եթէ չեմ սխալւում,—եղաւ հարցի պատասխանը։

—Հասկանալի է, որ մանկավարժութիւն կ'ընտրէր,—նկատեց մի օրիորդ, որի սպիտակ երեսի վրայ չորս-հինգ տեղ կարծես թանաք լինէին կաթացրած, այնքան սև էին դէմքի խալերը։—Մեզ համար ամենայարմարը այդ մանագիտութիւնն է։ Ուրիշ ինչ կարելի է ընտրել?

—Ո՛չ, ինչու? Հակաճառեց Աշխէնը։ Իմ կարծիքով, չպէտք է սահմանափակել միայն մանկավարժութեամբ։ Կան բժշկական գիտութիւններ, բնական գիտութիւններ...

—Երաժշտութիւն,—աւելացրեց մի ուրիշը։

Կանանց մանագիտութեան վերաբերմամբ փոքրիկ վէճ ծագեց այս շրջանում։ Մեծամասնութիւնը նայում էր խնդրի վրայ աւելի գործնական տեսակէտով և պնդում էր, թէ կինը կամայ ակամայ պէտք է ընտրի միայն այն մանագիտութիւնը, որ կարող է գործադրել կեանքում, իսկ գիտութիւն գիտութեան համար չէին ընդունում։ Այն ինչ Աշխէնը իւր մէկ թէ երկու կողմնակիցների հետ աշխատում էր համոզել ամենքին, որ կանայք, տղամարդկանց պէս, ընդունակ են սովորելու ամեն տեսակ գիտութիւններ և, ուրեմն, չպիտի սահմանափակեն իրանց ընտրութեան շրջանը։ Ի հաստատութիւն իւր մտքի, նա բերեց Շիլլերի երկտող ասֆորիզմը գիտութեան մասին, այն է թէ՝ ոմանց համար գիտութիւնը մի կթան կով է, իսկ միւսների համար—մի աստուածուհի։

Գաղափարների յարակցութեամբ խօսակցութիւնը մի առարկայից անցաւ միւս առարկայի, և վերջումը իրանք



էլ չիմացան, թէ ինչպէս խօսքը կանգ առաւ Ջաւիկեանին յանձնած պարոցի վրայ։

Մարիամը այլ ևս ուշադրութեամբ չէր կարողանում հետևել ընդհանուր խօսակցութեան։ Նորա ուշք ու միտքը դրանն էր։ Ինչու ուշացաւ Գարեգինը? Ուր մնաց էր? Ինչ է անում? Միթէ նա չգիտէ, որ իրան սպասում են?...

Անցաւ գարձեալ մի քանի րոպէ, մինչև որ եկաւ Գարեգինը։ Մարիամը ուրախ վազեց նորան ընդառաջ։

—Ինչու ուշացար? եղաւ առաջին հարցը։

—Իսկոյն, իսկոյն, սիրելիս,—պատասխանեց Գարեգինը քնքշութեամբ և մի երկու խօսքով բացատրեց ուշանալու պատճառը։

Այս լակոնական հարց ու պատասխանից յետոյ երկուսն էլ նախասենեակից անցան դահլիճ։

Ընդհանուր սիրալիր ողջոյն, բարևներ իւրաքանչիւրի հետ առանձին, ներողութիւններ—այս բոլորը շատ արագ կատարուեց։

Գարեգինը հաղորդեց մի նորութիւն, որը հետաքրքրական էր մանաւանդ Ջաւիկեանի պաշտօնակիցների համար։ Նա ասաց, թէ հետևեալ կիւրակի նշանակւած է պարոցի հոգաբարձական ընտրութիւնը, և, որ զարմանալին է, Սևումեանը մնջ է մնել վաղօրօք ու մտադիր է Ջաւիկեանի խումբը ցրիւ տալ։

Լսւեցին զարմացական բացականչութիւններ և զայրոյթի արտայայտութիւններ Սևումեանի վերաբերմամբ։

Սևումեանին այդ չի յաջողւիլ,—նկատեց Աշխէնը խորին վստահութեամբ և յիշեց մի քանի երիտասարդների անուններ, որոնք ընտրութիւնների ժամանակ միշտ պէտք էին գալիս։ Մեր այդ կարիճները չեն թողնիլ, որ Սևումեաններըը իրանց ոտը առաջ դնեն։

—Բայց դուք կարդացիք այսօր «Ժամանակի» մէջ մի կծու նկատողութիւն իմ հասցէին? Հարցրեց Գարեգինը,

դիմելով մեկին ու միւսին։ Այդ դեռ ազդանշանն է. աւելի լաւը, երևի, յետոյ կը լինի։

Դպրոցի մասին խօսակցութիւնը շատ երկար տևեց, այնպէս որ ընթերցանութեան մասին մոռացան և չիշեցին միայն այն ժամանակ, երբ, ուշ լինելու պատճառով, հիւրերը պէտք է ցրւէին։

Շուտով օրիորդները մեկնեցին Ջաւիկեանների տանից։

Աշխէնը գնաց խոհանոց, որտեղ մայրիկը ընթրիքի համար պատրաստութիւն էր տեսնում։ Նորա ախորժակը առանց այն էլ բաց էր, իսկ երբ տապակած գեռնախնձորի հոտը քթին դիպաւ, աւելի ևս գրգռւեց ախորժակը, և նա ասաց մօրը.

— Մայրիկ, շո՛ւտ արա՛. քաղցած մեռա՛յ!

Յետոյ մի կտոր լաւաշի մէջ փաթաթեց մի գետնախնձոր, տապակած միս և ուտելով դուրս եկաւ խոհանոցից։ Նա գնաց մօր ննջարանը, որտեղ փոքրիկ մահճակալի վրայ պառկած՝ հանգիստ քնած էր կրտսեր եղբայրը։ Վերմակը քաշեց, որովհետև մանուկը իրան բոլորովին բաց էր արել, և անցաւ իւր սենեակը։ Նստեց գրասեղանի մօտ մի կոյտ տետրակների առաջ և, գրիչն առնելով, սկսեց ուղղել մէկը միւսի ետևից։

Գարեգինը և իւր կինը առանձնացան իրանց ննջարանը։ Մարիամը փարւեց իւր ամուսնու վզին, ասելով.

— Քեզ այնպէս կարօտել եմ այսօր!

Գարեգինը սեղմեց կրծքին նորա լիքը, դողդոջուն կուրծքը և շրթունքը շրթունքին՝ նւաղեց երկարատև համբոյրի մէջ։

Ամբողջ տանը թագաւորեց լռութիւն։ Միայն սեղանատան միջից լսւում էին ժամացոյցի չափածոյ զարկերը։



## XVII

Վաղուց է Ոսկերչեանը ոչ նամակ ոչ տեղեկութիւն ունէր իւր հօրից։ Թշւառ Ծերունու լքեալ վիճակը որդու մշտական հոգսերի և մտատանջութեան առարկան էր։ Ինչպէս բարւոքել խեղճի դրութիւնը? Ինչպէս անել, որ նա գոնէ իւր վերջին տարիները հանգիստ անցկացնի, կարիք չզգայ, ապրուստի համար նեղութիւն չքաշի?

Ով է նայում ալևորին? Կայ արդեօք հարևանութեան մէջ մի սրտացաւ անձ, որ չզլանար խնամք տանել նորա մասին? Տեսնես, կարողանում է նա շաբաթը մի երկու-երեք անգամ թէյ խմել, որ նա այնքան սիրում է, կամ տաք կերակուր ուտել, որ այնքան անհրաժեշտ է Ծերունուն? Ով է թեթևացնում նորա տխրութեան ժամերը, մի երկու բերան զրոյց անելով նորա հետ և սիրտը շահելով? Գոնէ ոյժը ներո՞ւմ է, առաջւայ պէս, առաւօտ և երեկոյ գնալ բազար և, գերանի վրայ նստելով, խօսք ու զրոյց անել իւր նման ալևոր և պատկառելի Ծերունիների հետ?

Այս տեսակ հարցերը միտում էին անպատասխան, որովհետև Ոսկերչեանը, ինչպէս ասացի, երկար ժամանակ է նամակ չէր ստանում իւր Ծննդավայրից, կարծես գետնի տակ անցած լինէր այդ գիւղը։

Ահա շուտով երկրորդ ամիսը կը լրանայ, որ հայրը ընդհատել է իւր նամակագրութիւնը որդու հետ։ Արդեօք ինչ է պատճառը? Կարելի է, հայրը բարկացել է, որ իւր զաւակը այլ ևս փող չէր ուղարկում վերջին ամիսները? Կամ գուցէ հիւանդ է խեղճը?... Ա՛խ, ինչ լինում է, թող լինի, միայն թէ հիւանդ չլինի!... Այսպիսի մտքեր էին պաշարում Ոսկերչեանին և սիրտը լցնում մորմոքիչ ցաւով և խղճահարութեամբ։

Նա գրեց մի քանի անգամ, և պատասխան չեկաւ։

Նորա անհանգստութիւնը աճելով աճում էր։ Նա սկսեց նոյն իսկ մտածել, թէ արդեօք մի բան չէ պատահել ծերունուն։ Վերջապէս նա վճռեց հեռագրով տեղեկութիւն հարցնել իր հօրից։ Բայց որովհետև այդ ևս չօգնեց, նա այնպիսի մտատանջութեան մէջ ընկաւ, որ մի քանի օր խելագարի էր նմանում։ Երկու անգամ իրար վրայ դասի չգնաց։ Դիշերները քնում էր շատ ուշ և ժամերով անց ու դարձ էր անում անկիւնից անկիւն։ Յրւած էր այն աստիճան, որ լուցկիների տուփը ձեռքումը բռնած՝ երբեմն լուցկի էր օրոնում պապիրոսը կպցնելու։ Փիչ էր ճիւռում գլխարկը մոռանար և գլխաբաց դուրս դար փողոց։

Վերջապէս մի օր նամակ եկաւ Ռակերչեանի ծննդավայրից։ Բայց նորա հօր ձեռքը չէր. հօր սովորական գրուածք նամակը, և տառերը միացած չէին իրար հետ անընդհատ շղթայով։ Գիրը գրուած էր ծանր, կարծես երկաթեայ ձեռքով, իւրաքանչիւր տառը որոշ, միմեանցից զատ։ Զնայած բոլոր կոպիտ ուղղագրական սխալներին, պարզ երևում էր, որ նամակագիրը ուշադրութիւն է դարձրել ոճի վրայ, որը նա աշխատել է մօտեցնել կիսագրաբար և կիսագեհենիկ գրութեան ոճին։

«Ինչու հօրս փոխարէն ուրիշն է գրել»։ անցաւ Ռակերչեանի մտքով, և սա ամենից առաջ կարդաց ստորագրութիւնը «Աստուր Գիւլեան»։ Դա Ռակերչեանի հարևանն էր։

Գրութիւնը բռնել էր մեծագիր և կապտաւուն թերթի բոլոր չորս էջերը և գրեթէ սկզբից մինչև վերջ միայնակ խրատ ու նախատինք էր։

Ինչու Արտաշէսը մոռացել է իր ծերացած հօրը? Ում խնամքին է նորան յանձնել? Ով է նորան կերակրողը? Որտեղից է փող ճարում նա մի կտոր հաց առնելու համար? Մարդ ունենայ մի չափահաս որդի, և իւր ծերութեան հասակում երեսի վրայ ընկած՝ լացով անց կացնի օրը և մի օգնութիւն չստանայ զաւակից? Վայ նորան, ով խղճմտանք չունի. անխիղճ մարդուն Աստուած պատժում է թէ այս և թէ հանդերձեալ կեանքում։ Ամօթ չէ նորա չահել հասակին? Եատերը որդիք ունին, բայց որն է Արտաշէսի նման? Քանիսը կայ, որ գլխներին խփես, մի կտոր այր չի դուրս գալ, բայց իրանց ծնողներին էլ են պահում, իրանց էլ են պահում ու սև օրւայ համար փողէլ են կարողանում եա զցել։ Իսկ ինչ է շինում Արտաշէսը? Ինչի մի գործի չի կպչում? Երբ պիտի թողնի իւր օյինբազ արեւտուրը? Դա մարդու հաց չի տալ։ Ժամանակ է, որ նա խելքը գլուխը հաւաքի ու խոհեմ հօր նամուսը գեանովը չտայ!...

Եւ այլն և այլն և այլն։

Այս բոլոր հարցական և բացականչական նկատումներից ու խրատներից յետոյ գթասիրտ նամակագիրը աւելացնում է հետևեալը. «Եթէ ես չլինէի, հօրդ ոսկորները հիմա փտած կ'լինէին գերեզմանի մէջ»։ Եւ ապա թէ՝ նա է, որ միշտ ձեռք է հասցնում ծերունուն, իւր մօտ ճաշի կանչում, խանութից հարկաւոր եղած բաները ուղարկում և միշտ սիրտ տալիս ու մխիթարում անտէր աւետրին։

Վերջումը նա խնդրում է Արտաշէսից մի որ և է կարգադրութիւն անել ծերունու խնամատարութեան մասին։

Երբ Ռակերչեանը աւարտեց նամակի ընթերցումը, նորա կրծքի վրայից կարծես մի ծանր քար ընկաւ, չնայած գրւածի պարսաւական ոճին։

Փառք Աստծուն—մտածեց նա—բարի մարդիկ անպակաս են աշխարհիս երեսին։ Հարևանը, ճիշտ է, այնքան էլ լաւ համբաւ չունի գիւղամիջում, բայց, ով գիտէ,

կարելի է նորան նախանձում են, որ այնքան ճարպիկ է և կոպէկ կոպէկ կարողացել է բաւական մեծ հարստութիւն դիզել։ Եթէ նա «քար սիրտ» լինէր, ինչպէս նորան համարում են, ապա ուրեմն ինչ բանից դրդւած այնչափ հոգացողութիւն պիտի ցոյց տար մի ծերուկի վերաբերմամբ, որը, բացի հարևան լինելուց, ուրիշ ոչ մի կապ չունի նորա հետ? Շարունակ հրաւիրում է ճաշի. անհրաժեշտ պիտոյքները միշտ հասցնում է նորան. նորա սրտաշահ խօսակիցը այդ դրացին է։ Օ՛հ, որքան երախտապարտ է Արտաշէսը այդ բարեսիրտ մարդու առաջ!

Ոսկերչեանը անյապաղ պատասխանեց ստացած նամակին։ Արտայայտելով իւր հարևանին խորին շնորհակալութեան զգացմունքը, նա խնդրում է նորանից շարունակել նաև այսուհետև իւր մարդասիրական խնամքը ծերունու մասին. միևնոյն ժամանակ նա խոստանում է ժամանակով կրկնապատիկը հատուցանել նորա բարութեան փոխարէն։

Նոյն այն ժամին, երբ Ոսկերչեանը գրում էր նամակը, ներքևի յարկից լսւում էր աղմուկ, որի մէջ խառն էին երգ և ծիծաղ, խօսակցութիւն և կատակներ։

Ներքև բնակւում էին նորա նախկին դասընկերները։ Վերջնական քննութիւնները աւարտած և հասունութեան վկայականները գրպանների մէջ, նոքա հրաժեշտի քէֆ էին սարքել իրանց մի քանի ընկերների հետ։ Սոքա հրաւիրել էին և Ոսկերչեանին. բայց որովհետև սա ուշանում էր, նոքա սկսեցին ձեռնափայտերով բաղխել առաստաղը։

Ոսկերչեանը հասկացաւ, որ իրան կանչում են, ու արագացրեց գրչի շարժումը։ Երբ նամակը պատրաստ էր, նա իսկոյն տարաւ, ձգեց մօտակայ պոստարկղը և վերադառնալով այլ ևս չբարձրացաւ վերև, այլ գնաց ուղղակի իւր ընկերների մօտ։



Սեղանի շուրջը բոլորել էին չահել երիտասարդները։ Ուտեստը համեստ էր, գինին առատ։

Ոսկերչեանին ընդունեցին ուրախ գոչիւններով։ Պարզ էր, որ բոլորեքեան տաքացել և հիանալի տրամադրութեան մէջ էին։ Խօսքերը խլում էին իրար բերնից։ Մէկի սրախօսութիւնը ընդհանուր քրքիջ էր յարուցանում։ Լուրջ ճառախօսութիւնները յաջորդում էին կատակներով։ Սեղանակը թնդում էր բարձրաձայն խմբերգից։ Վիճաբանութիւնը տաք էր և երբեմն սուր կերպարանք էր ստանում։

Ապագայ ուսանողների թիւը կը հաւասարւէր Քրիստոսի աշակերտների թւին, եթէ Ոսկերչեանն էլ իւր ընկերների տոկունութիւնը և բաղդը ունենար։ Այստեղ կային բոլոր ֆակուլտետների ներկայացուցիչները՝ մի լեզւագէտ, մի մաթեմատիկոս, երկու բնագէտ, չորս բժիշկ և երեք իրաւաբան։

Սկզբում Ոսկերչեանը միայն ուտում, խմում և լսում էր. երբեմն միայն գլորում էր մի սրախօսութիւն, ի մեծ զարմանութիւն իւր դրացիների։ Խօսք ու զրոյցը այժմ վերաբերում էր դպրոցական թարմ յիշողութիւններին։ Ապագայ փիլոլոգը պատմում էր, թէ ինչպէս մաթեմատիկայի դրաւոր քննութեան ժամանակ մի ամբողջ ժամ նրբի վրայ իզուր քրտնելուց յետոյ, արդէն իւր բանը պրծած էր համարում, եթէ հարևան ընկերը իրան շուտ չհասցնէր գրչահատը, որի մէջ խոթած էր վճռած խընդիրը։ Ապագայ բժիշկը ասում էր, թէ պատմութեան քննութեան ժամանակ վերցրեց մի տոմսակ, որից նա մի հատ խօսք չէր կարող հաղորդել ունկնդիրներին, բայց ճարպիկութեամբ տոմսակը փոխեց և ազատուեց վտանգից։ Մի երրորդը, որ դեռ ևս բնական գիտութիւնների հոտը չ՛առած՝ արդէն սիրահար էր այդ գիտութիւնների և որը դեռ այժմ էլ լաւ չէր ըմբռնում oratio recta'ի

oratio obliqua'ի տարբերութիւնը, նկարագրում էր իւր առաջադէն, որ կատարել էր յունարէնի և լատիներէնի քերականութիւնների վրայ: Ոսկերչեանը նկատեց, որ ինքը վաղուց է մի այդպիսի փառաւոր զոհ է մատուցել կրակին, թէև, քերականութիւնների փոխարէն, նետել է հնոցը եռանկիւնաչափութիւնը իւր երկու քոյրերի (այսինքն հանրահաշիւ և երկրաչափութեան) հետ: Դորա դէմ բողոք յայտնեց բնագէտներից մէկը, առարկելով, թէ մաթեմատիկան ամենաճիշտ գիտութիւններից է և բնաւ արժանի չէր այն վիճակին, որին ենթարկել է Ոսկերչեանը: Նորան պաշտպանեց բժիշկներից մէկը, որը մի քանի անգամ թերթած էր փիլիսոփայութեան պատմութիւնը: Ոսկերչեանը կամեցաւ հակառակել, բայց երբ բժիշկը, իւր խօսքերին կշիռ տալու համար, մէջ խոթեց կոնտին և նմաններին, Ոսկերչեանը այլ ևս իրան անզօր զգաց և լռեց:

—Ну, also не деритесь! կատակեց երիտասարդներից մէկը՝ ցանկանալով վերջ դնել վիճաբանութեան:

Այս խօսքերը արտասանեցին այնպիսի առանձնայատուկ ձևով, որ բոլոր ներկայ եղողները մոռաբերեցին իրանց բարի և ծեր գերմանացի ուսուցչին և ուրախ ծիծաղեցին:

Նոր կերակուր եկաւ մէջտեղ, որ աքանչացման բացականչութիւններ խլեց շատերի բերնից. պատառաքաղները իրար զարնուեցին, և ապա իւրաքանչիւրը ախորժակով սկսեց վայելել իւր վերցրած համեղ պատառը:

Փիչ ժամ վեր կացաւ երիտասարդներից մէկը և կարմիր գինով լի բաժակը ձեռքումը բռնած՝ խօսեց.

—Պարոններ, ես մի կենաց պիտի առաջարկեմ...

—Լռութիւն!... լսեցէք!... գոչեցին սեղանի այս ու այն ծայրից:

—Պարոններ,—շարունակեց ճառախօսը,—ուրբ տա-



րուց առաջի մենք ընկերներ ենք եղել, և մեզ միացնողը եղել է գիտութեան ընդհանուր ծարաւը: Որքան քաղցր և անմոռանալի տարիներ! Այն օրից, երբ մեր մէջ ծագեց գիտակցութիւնը, մենք ինչ եռանդով և ինչպիսի սիրով անձնատուր եղանք մեր սեփական անձի կրթութեան գործին: Զարգացնել մեր միտքը և հոգով աղնուանալ—դարձաւ մեր պատանեկան հասակի կէտ նպատակին: Իսկ մեր ասուածութիւնն էր իդէալը, որը մեզ տաքացնում էր և ոգևորում: Այսօրւայ մեր քէֆը մեր անցած տարիների վերջին օրն է, մի ամբողջ պատմութեան վերջաբանը: Այս օրւանից մենք իրար հրաժեշտ պիտի տանք և իրարից բաժանուենք: Մենք պիտի ցրուենք զանազան համալսարաններ. մեր ընտրած մասնագիտութիւնները էլ տարբեր են: Զորհինգ տարուց յետոյ մենք արդէն բժիշկ ենք, կամ փաստաբան, կամ բնագէտ և այլն. կեանքի մէջ տարբեր պիտի լինին մեր պարապմունքները, տարբեր մեր ընտրած ասպարէզները և, գուցէ, մեր բնակութեան տեղերն էլ տարբեր: Կը յաջողի արդեօք այն ժամանակ մեզ մի անգամ էլ այսպէս ընկերաբար մի սեղանի նստել? Ես կասկածում եմ: Բայց որքան տարբեր էլ լինին մեր պարապմունքները, որքան հեռու էլ լինինք իրարից, այնուամենայնիւ, ես կարծում եմ, կայ մի ընդհանուր ասպարէզ, որ անխախտ կը պահէ մեր մէջ ընկերական կապերը: Դա հասարակական գործունէութեան ասպարէզն է: Եկէք ուրեմն մեր այս սեղանակից ընկերների կենացը և ցանկանանք, որ միմեանց կրկին հանդիպենք այդ աղնիւ ասպարիզի վրայ!... Միահամուռ կեցցէները խլացրին ճառախօսի ձայնը, այնպէս որ վերջին բառերը ոչ ոք չլսեց, թէև ամենքը հասկացան ասելիքը: Բաժանները զարնուեցին իրար, շատերը միմեանց հետ համբուրուեցին: Տաքացած ճառախօսը, որի աչքերը փայլում էին հոգեկան յուզմունքից և ոգևորութիւնից, դադարկեց

բաժակը, լուրջ դէմքով իւր տեղը նստեց, և ձեռքն առնելով հաւի բուդը, սկսեց մաքրազարդել մնացորդը։

Ամենքը ուրախ էին։ Մէկը սկսեց կլկլացնել solo, և միւսները ձայնակցում էին։

Տխուր էր այժմ միայն Ոսկերչեանը, և այնքան տխուր, կարծես աշխարհը գլխին սևացաւ։ Երբէք իւր կեանքումը նա այն աստիճան չէր նախանձել մէկին, որպիսի նախանձ զգաց այժմ իւր սրտի խորքումը դէպի այս ընկերական շրջանը։ Նա զղջում էր, որ մասնակցել է այս ուրախութեան։ Ով է ինքը? Նա ինչի համար է եկել այստեղ?... Ինչ էր մնում, որ արտասւէր. բայց իրան զսպեց։ Միայն մէկը նկատեց Ոսկերչեանի տրամադրութեան յանկարծակի փոփոխութիւնը և ասաց.

—Շատ մի՛ մտածիր, Արտաշէս։ Խմի՛ր գինի. in vino veritas!

Ոսկերչեանը ժպտաց շինծու ժպիտով։

—Խմի՛ր, ասում եմ,—կրկնեց ընկերը. եթէ ոչ—տուգանք կը խմես։

Երբ Ոսկերչեանը, չկամենալով ընդհանուր ուշադրութեան առարկայ դառնալ, պարպեց բաժակը, միևնոյն երիտասարդը առաջարկեց նորա կենացը հետևեալ խոսքերով.

—Պարոննե՛ր, լսեցի՛ք, ուշադրութիւն!... Ես Արտաշէսի կենացն եմ առաջարկում... Թէպէտ ես անկեղծ ցաւում եմ, որ մեր ընկերը հնարաւորութիւն չունեցաւ մեզ հետ աւարտելու իւր ուսումը բայց մխիթարական է այն, որ նա ուսումը թողնելով, չկորաւ կեանքի ալիքների մէջ, այլ գործում է այն ասպարիզում, որ մարդուն հաց չէ տալիս, բայց օգտակար է դարձնում հասարակութեան համար։ Միայն ցանկանանք, որ շուտ չվհատի, շուտ չծերանայ, այլ երիտասարդ լինի, քանի երիտասարդ է!...



Ներկայ եղողներից մէկը սկսեց. „gaudeamus igitur, juvenes dum sumus“ յայտնի ուսանողական երգը։ Բայց խմբերգը դուրս եկաւ անկանոն, որովհետև ձայնակցողներից շատերը դեռ չգիտէին խօսքերը կամ գիտէին հատ ու կտոր։

Ոսկերչեանը մի երկու խօսքով իւր շնորհակալութիւնը յայտնեց և աւելացրեց հետևեալը.

—Ես ձեզ երանի եմ տալիս և, եթէ կ'ուզէք ուղիղն ասեմ, մինչև անգամ նախանձում եմ։ Բայց, չնայած դորան, ես ձեզ բոլորիդ սրտանց մաղթում եմ բարի ճանապարհ դէպի alma mater և ձեզ այնպիսի յաջողութիւն եմ ցանկանում, որպիսին ես կը ցանկայի իմ ամենամօտ բարեկամիս!... Թէև իմ յոյսերը ինձ միշտ խաբում են, բայց, եթէ այս անգամ յոյսս չխաբեց, Աստծով, տարիներից յետոյ, մենք իրար կրկին կը հանդիպենք հասարակական ասպարիզում!...

Ահաւասիկ այսպէս էին ուրախանում նորաւարտ երիտասարդները։ Երկար տևեց այս քէֆը, և, երբ սեղանից վեր կացան, շատերի մէջ դեռ ոյժ էր մնացել պար բռնելու, թռչկոտելու և հազար ու մէկ գժութիւնների ու չարաճճի կատակների համար։

Բոլորի արիւնը եռում էր և զօրեղ հոսանքով զարնում էր երեսներին։ Անհանգիստ շարժողութիւնը լրացրից այն, ինչ որ կիսատ էր թողել ոգելից ըմպելիքը։ Ոմանք հազիւ կարողանում էին տի վրայ կանգնել, երևում էին Մի քանիսի ձայնը խզել էր, և կոկորդները քերում էին։ Մէկի գլուխը պտոյտ էր գալիս և սաստիկ ցաւում, այնպէս որ ձեռքը ճակատի վրայից չէր հեռացնում։ Միւսը տարածել էր մահճակալի վրայ և անքում էր։ Մի երրորդը, որը լուրջ ժամանակ խելօք և հեզահամբոյր էր, այժմ այնպէս կատաղել ու վայրենացել էր, որ մօտենալ չէր լինում. հասցնում էր բառնց քը

կամ աքացի էր տալիս։ Մի անօրինակն էլ կար, որ սկսած խօսքը ծամծմելուց յետոյ հազիւ հազ կարողանում էր արտասանել, մտենում էր այս կամ այն ընկերոջ, ցուցամատը խոթում դէպի աչքերը և ասում.

—Դու... դու, չիմ... չիմար ես...

Եւ ընկերը պիտի խոստովանուէր, որ չիմար է, եթէ չէր կամենում նորա ապտակի ոյժը փորձել իւր երեսի կամ ծոծրակի վրայ։

Խելքը գլխին միայն մէկն էր մնացել։ Նա էլ փորը բռնած՝ շարունակ ծիծաղում էր, շարունակ քրքջում։

Ոսկերչեանը այնքան թուլացել և անզգայացել էր, որ դիակի էր նմանում. գոյնն էլ սաստիկ գցել էր։ Մեծ ոյժ գործ դրին ընկերները, մինչև որ կարողացան բարձրացնել նորան աստիճաններով և ներս տանել սենեակը, ձգել մահճակալի վրայ։

Երբ առաւօտեան աչքերը բաց արեց, տեսաւ, որ լաւ մրսած է և պառկելու հիւանդ. գանգը ճաքում էր սաստիկ գլխացաւից, նոյնպէս և աչքերի շրջանակը. ամբողջ մարմինը ջարդուած, վիզը և ուսերը բռնուած. գլուխը ծռուած էր մնացել մի կողքի վրայ։

Նորա հիւանդութեան մասին հարևան ընկերները իմացան միայն երեկոյեան, երբ՝ զարմացած այն արտասովոր լռութեան վրայ, որ թագաւորում էր վերին յարկում, բարձրացան վերև ու դեռ ևս դրան եռևից լսեցին Ոսկերչեանի անքոցը։

Նոքա յանդիմանեցին իրանց ընկերոջը, որ ինքը այս դրութեան մէջ է և իրանց մի կերպ իմաց չէ արել, մինչդեռ բաւական էր մի երկու անգամ ոտը լսիել յատակին։ Յետոյ հարցրին թէ նա, ի հարկ է, այդ օրը ոչինչ չէ դրել բերանը? Հիւանդը պատասխանեց, թէ բոլորովին ախորժակ չունէր։ Երիտասարդներից մէկը վազեց ներքև և բերեց Ոսկերչեանի համար մի բաժակ թէյ։



Հիւանդը մի քանի կում արաւ և ետ դրեց բաժակը։ Ինչ յետոյ ընթրիք բերին նորա համար, ոչինչ չկերաւ։ Նա չէր կամենում ոչ խօսել, ոչ լսել. շարունակ տնքում էր։ Ընկերները ցանկացան բժիշկ բերել, Ոսկերչեանը թթուացրեց դէմքը և ասաց.

—Հարկաւոր չէ... կ'անցնի։

Նորա հիւանդութեան երկրորդ օրը եկաւ Ֆալչեանը և շատ զարմացաւ, երբ տեսաւ նորան անկողնում պառկած։ Նա մի քանի հարցուփորձեր ուղղեց հիւանդին, բայց սա այնքան ակամայից, այնպիսի տհաճութեամբ էր պատասխանում, որ նա բարեաւք համարեց առժամանակ լռել։ Նստեց և ուշի ուշով սկսեց նայել Արտաշէսի դէմքին։ Ստացած տպաւորութիւնը երկիւղ ազդող էր։ Հիւանդի երեսը բաց լեղակի պէս կապտել էր, քիթը սրել, աչքերը ցած ընկել իրանց խորշերի մէջ, իսկ ականջները թաղանթի նման բարակել ու կիսաթափանցիկ էին դարձել։

Նա մտածեց. «Բժշկի օգնութիւնը անհրաժեշտ է, բայց որտեղից փող ճարեմ?

Նորան յայտնի էր, որ Գարեգին Զաւրիկեանը և Արտաշէսը իրար հետ շատ մօտ են եղել և յամենայն դէպս, նա սիրայօժար կը գայ իւր բարեկամին այցելելու։

Առանց մի խօսք ասելու Ոսկերչեանին, Ֆալչեանը գնաց և մի ժամից յետոյ վերադարձաւ Զաւրիկեանի հետ։ Վերջինս չափազանց տխուր և անհանգիստ էր, երբ մտաւ սենեակը։ Երևի, լրատուն վատագոյր էր ներկայացրել նորան Արտաշէսի հիւանդութիւնը։

Երբ Ոսկերչեանի աչքին երևաց Գարեգինը, մի վայրկենի մէջ մի քանի զգացմունքներ վեր կացան նորա սրտում՝ և ուրախութիւն, և ներքին ամօթ, և ջերմ շնորհակալութիւն... Թոյլ ժպիտ խաղաց դէմքի վրայ, և, դաստակը կրծնելով բարձին, կամենում էր նստել և

իւր յարգանքը մատուցանել իւր կարօտած և թանկագին բարեկամին։

Գարեգինը մօտ քաշեց աթոռը, նստեց և, ձեռքի ափը դնելով հիւանդի ճակատի վրայ, քիչ յետոյ հարցրեց.

—Քանի օր է, որ պառկած ես, Արտաշէս?

Ոսկերչեանը բաւարարութիւն տւեց այս հարցին։ Ջառիկեանը կրկին մի քանի ուրիշ հարցեր տւեց, և ապա ոչինչ չխօսեց։ Երեք րոպէ շարունակ սենեկի մէջ այնպիսի լռութիւն էր տիրում, որ պարզ լսւում էր ճանճի ձայնը, որը՝ սարդի ոստայնի մէջ ընկած՝ պարբերաբար ծւում էր և դադարում։

Գարեգինը շտապեց բժշկի եաւիից, չնայած, որ Արտաշէսը աշխատում էր հաւատացնել, թէ աւելորդ է, այնպէս էլ կ'անցնի։

Շուտով բժիշկն էլ եկաւ։ Երբ նա հիւանդին քննեց և մօտեցաւ սեղանին դեղատոմս գրելու, Ջառիկեանը կամաց հարցրեց.

—Վտանգաւոր չէ?

—Ի հարկէ ոչ,—պատասխանեց բժիշկը. միայն հարկաւոր է լաւ պահպանել։

Ջալչեանը խոստացաւ հսկել հիւանդին և մօտիցը չհեռանալ, մինչև որ կը կազդուրւի։ Բժիշկը վերջացրեց իւր գործը և հեռացաւ։ Ջալչեանը վազեց դեղատունն և բերեց դեղերը։ Երկուսով միասին խմացրին դեղը։ Գարեգինը երեք մանէթ փող թողեց սեղանի վրայ (դեղերի փողն էլ նա էր տւել) և խնդրեց, որ Ջալչեանը նեղութիւն կրի առնել հիւանդի համար, ինչ հարկաւոր լինի։ Ջալչեանը կրկնեց, որ ինքը գիշերը պիտի մնայ Արտաշէսի մօտ, որպէս զի լաւ պահպանէ նորան։

—Այո, եթէ այդքան բարի կը լինիք,—ասաց Գարեգինը և, առողջութիւն ցանկանալով հիւանդին, դուրս եկաւ ու գնաց։



Յետոյ երեացին Ոսկերչեանի հարեան ընկերները։ Նոքա ճանապարհորդական շորեր ունէին հագած. երեկոյեան գնացքով պիտի մեկնէին իւրաքանչիւրը իւր հայրենիքը, ծնողների մօտ, որպէս զի ամառը անցնելուց յետոյ՝ ուղեւորւէին Մոսկւայի համալսարանը։ Հրաժեշտ տւին իրանց ընկերոջը, մաղթեցին նորան կատարեալ առողջութիւն և յաջողութիւն ու, առանց աւելորդ բոպէներ կորցնելու, շտապ հեռացան Արտաշէսի մօտից։

Ջալչեանը մնաց Ոսկերչեանի միակ հոգատարը և խնամողը։ Գիշերը քնեց աթոռների վրայ, ճրագը չհանգցրեց, հիւանդի ամեն մի ձայնից զարթնում էր և կանխում ու կատարում նորա ամեն մի ցանկութիւնը։

Այսպէս տևեց երեք-չորս օր։ Այս ժամանակամիջում Գարեգինը մի քանի անգամ այցելեց իւր բարեկամին և խօսք չէր գտնում իւր շնորհակալութիւնը յայտնելու Արտաշէսի անձնւէր ընկերոջը։ Ոսկերչեանը շուտով առողջացաւ։ Հիւանդութիւնից յետոյ նոր եռանդ էր զգում նա իւր մէջ։ Հոգեկան տրամադրութիւնը շատ կարգին էր։ Գրելու և առհասարակ գործելու մեծ փափաք կար ներսը։ Հաւատը դէպի մարդը նոր ջերմութիւն էր ստացել սրտում, և ոգևորութեան րոպէները աւելի ստէպ և աւելի յարատև դարձան։

Նա ուրախ էր, որ իւր տկարութիւնը պատճառ դարձաւ Գարեգինի հետ կրկին մտերմանալու։ Իսկ Ջալչեանի վրայ նա միանգամայն զարմացած էր մնացել։ Ուրեմն այդ թշւառ մարդու սրտում դեռ մնացած է եղել մի անկիւն, ուր թագնւած է ամենաանդին բանը աշխարհիս երեսին—եղբայրական սէրը? Տէր Աստւած, դա այն մարդը չէ, որի շրթունքը աչ ու ձախ հայհոյելու միայն վարժւած էր և փրփրում էր, երբ մարդկանց անիրաւութեանց մասին բերան էր բաց անում?.. Արի այստեղտև ու հասկացիր մարդ ասած արարածին!

Նորա հիւանդութեան ժամանակ եղած դասը ձեռքից դուրս եկաւ։ Բայց դորա փոխարէն, Գարեգինը նորա համար երկու նոր դաս գտաւ, երեսուն և հինգ մանէթ վարձատրութեամբ։ Սաստիկ ուրախ էր Ոսկերչեանը այդ բանի համար, որովհետև յոյս ունէր, որ իւր հօրն էլ իւրաքանչիւր ամիս կարող է փող հասցնել։

Նա արդէն մի նոր երկասիրութիւն էր ծրագրում։ Դա պիտի լինէր պատմական դրամա Արտաշէս Երրորդի որդու կեանքիցը, վերնագիրը՝ «Արտաւազդ II»։ Նա հաւատացած էր, որ զեղեցիկ թատերգութիւն պիտի դուրս գայ, որովհետև սիւժէտը հոյակապ էր։

Բայց շուտով մի դէպք պատահեց, որից ամեն բան տակն ու վրայ եղաւ։

Հեռագիր ստացաւ նա իւր ծննդավայրից հետևեալ բովանդակութեամբ. «Հայրդ ծանր հիւանդ է. շտապիր»։ Հարևանի ստորագրութիւնն էր։

«Գնալ թէ ոչ?» — ահա այն հարցը, որ ծագեց նորա գլխումը, հեռագիրը կարդալուց յետոյ։ Երկար ժամանակ մտատանջութեան ու վարանման մէջ էր նա և չգիտէր, ինչ անէր։ Ծանր էր նորա համար ձեռքից թողնել դասերը, որոնք մի քանի ամսւայ ապահովութիւն էին խոստանում. ծանր էր զրկւել այն յարմարութիւնից, որ ներկայացնում էր բանաստեղծական բնակարանը։ Բայց միևնոյն ժամանակ հայրը «ծանր հիւանդ է». նա ծեր է, և, եթէ նորան անբախտութիւն պատահի, էլ չի տեսնիլ նորան յաւիտեանս յաւիտենից։

Վերջ ի վերջոյ որդիական սէրը և պարտաճանաչութեան զգացմունքը հաղթեցին նորան դժւար դրութիւնից, և նա սկսեց ճանապարհորդութեան պատրաստութիւններ տեսնել։

Բայց ճանապարհածախսի խնդիրը նոր հոգսերի և մտատանջութեան առարկայ դարձաւ նորա համար։ Դիմել



Զառիկեանին նշանակում է ի չարը գործ դնել նորա բարութիւնը։ Ո՛չ, նորան այս անգամ պէտք է հանգիստ թողնել։ Դիմեց ծանօթներին. շատերը մերժեցին։ Միայն երկուսից ստացաւ հնգական ռուբլի։ Գրաւ դրեց ժամացոյցը, որի համար ուին արժէքի երրորդ մասը։ Բայց պիտի կարողանայ արդեօք իւր ժամանակին դրաւը թափել? այդ դեռ հարց է։ «Այսքան չարչարանք, մտածում էր Ոսկերչեանը, այսքան նեղութիւններ մի որևիցէ քսան մանէթի համար?... Խայտառակ կեանք!...»

— Վաղը ես գնում եմ հայրենիք,— ասաց նա, տեսնելով փողոցում Ֆալչեանին։

— Ինչու այդպէս յանկարծ? հարցրեց ընկերը զարմանքով։

— Հայրս ծանր հիւանդ է,— եղաւ Ոսկերչեանի տխուր պատասխանը։

## XVIII

Մայիսի վերջերում Ազատեանի ծանօթները յաճախ պատահում էին նորան Աշխէն Զառիկեանի հետ միասին զբօսնելիս և արդէն խօսում էին որոշ շրջաններում, թէ նոքա նշանուել են։

Այս լուրը ճիշտ չէր, բայց հեռու չէր իսկութիւնից։ Բանը այն է, որ Ազատեանի վաղուցւայ իղձ ու փափագն էր միանալ այդ գաղափարական և վերին աստիճանի աշխոյժ օրիորդի հետ։ Միայն չէր վստահանում առաջարկութիւն անել։ Կը համաձայնեն արդեօք նորա մայրը և եղբայրը—պա ծանր ու բարակ մտածելու խնդիր էր։ Մանաւանդ կասկածաւոր էր նա Գարեգինի վերաբերմամբ։ Նա տեսնում էր, որ Գարեգինը իր հետ սառն է, և, չնայած իւր բուռը ցանկութեան, անկարելի է լինում նորա հետ մտերմութիւն հաստատել։

Բայց ի նկատ առնելով օրիորդի մօր փափուկ բնա-

ւորութիւնը և եղբօր այն գիծը, որը թոյլ չէր տալ նորան բռնանալ ուրիշի զգացմունքի վրայ, Ազատեանը հակւած էր կարծելու, որ իւր առաջարկութիւնը, յամենայն դէպս, զօրեղ արգելքների չի հանդիպելու։ Վերջապէս գարնանային մի գեղեցիկ օր նա բաց արաւ սիրտը օր. Աշխէնի առաջ։

Բուսաբանական այգուհի էին։ Ազատեանը էնդքուհի ունէր մի գեղեցիկ ալ վարդ։ Աշխէնը ասաց, թէ սաստիկ հոտաւէտ է երևում վարդը, որովհետև հեռւից զգում է նորա անուշ բոյրը։ Ազատեանը խնդրեց, որ ընդունէ իրանից այդ ծաղիկը։ Աշխէնը վերցրեց, շնորհակալութիւն առաւ և սկսեց հոտ քաշել։ Ազատեանը ասաց.

—Եթէ իմանամ, որ իմ սիրան էլ դուք նոյնքան ուրախութեամբ կ'ընդունէք ինձնից, ես կը հանեմ սիրտս և ձեզ կը տամ։

Աշխէնը կարմրեց և ոչինչ չպատասխանեց։

Երկուսի սրտերը սկսեցին ուժով բաբախել։ Մի քանի րոպէ երկուսն էլ լուռ էին։ Երբ զբօսնողների աչքից հեռացան և մտան մի սուերաշատ և նեղ ծառուղի, Ազատեանը շարունակեց այն, ինչ որ կիսատ էր թողել։ Նա յայտնեց իւր ջերմ համակրութիւնը, որ տածում է դէպի օրիորդը, և աւելացրեց.

—Զգիտեմ, արդեօք ես էս արժանացել եմ փոխադարձ համակրութեան ձեր կողմից։

Աշխէնը կրկին շառագունեց և, առանց նորա դէմքին նայելու, ժպտալով ասաց.

—Կարող էք վստահ լինել իմ փոխադարձ համակրութեան վրայ։

Այս սիրային բացատրութիւնների ժամանակ նոքա կանգնած էին մի բաղեղապատ կամար հովանու մէջ։ Ազատեանը առաջարկեց նստել այնտեղ։ Եւ առանձնութեան մէջ, հեռաքրքիր աչքերից հեռու, սկսեցին նոքա իրանց



մտերմական խօսք ու զրոյցը։ Ազատեանը երկար խօսեց «ամուսինների հաւասար իրաւունքներից», յայտնեց, թէ ինչպէս է ինքը հասկանում «կեանքի ընկեր» ասածը, և նորա բախտաւոր ունկնդիրը նորա իւրաքանչիւր խօսքը իբր պատգամ էր ընդունում։

Նոյն օրը Աշխէնը հաղորդեց մօրը Ազատեանի առաջարկութեան մասին։ Մայրը ասաց, որ ինքը այդ մասին կը խօսի Գարեգինի հետ։ Բայց ամենից առաջ նորա գործը եղաւ կողմնակի կերպով տեղեկութիւններ ժողովել Ազատեանի վերաբերմամբ. ունի՞ նիւթական ապահովութիւն թէ ոչ, ինչպիսի՞ ծնողների զաւակ է և այլն։ Իւր ձեռք բերած տեղեկութիւնների հիման վրայ նա մի յայտնի կարծիք կազմեց իւր ապագայ փեսացուի մասին և յետոյ միայն խօսեց իւր որդու հետ։

Շատ չզարմացրեց Գարեգինին մօր հաղորդած լուրը։ Նա տեսնում էր, որ իւր քրոջ և Ազատեանի ծանօթութիւնը այն աստիճանի մտերմութեան է հասել, որին յաջորդում են սիրային բացատրութիւններ և առաջարկութիւններ։ Ամենևին անսպասելի չէր այն, ինչ որ հաղորդեց մայրը։

Գարեգինը երկմտութեան մէջ էր և չգիտէր, ինչ պատասխան տալ։ Նա ինքը անձամբ շատ էլ լաւ կարծիք չունէր Ազատեանի մասին։ Նորա աչքում այդ երիտասարդը անտանելի էր, իբր գրչի մարդ։ Բայց միևնոյն ժամանակ մտածում էր. միթէ նա, լինելով անհամակրելի մտածուի և գրականութեան մէջ, անպատճառ անտանելի պէտք է լինի նաև իւր ընտանիքի համար, ամուսնական կեանքի մէջ? Ով կարող է հաստատ ասել, թէ Ազատեանը կը լինի անսէր և անհաւատարիմ ամուսին— նա, որ այնքան յաճախ չատագովել է և չատագովում է կին-մարդու իրաւունքները?

Գարեգինը, մտածելուց յետոյ, երկար խօսեց մօր

հետ, և ահա ինչ ասաց նորան ներկայ խնդրի առիթով։ Աշխէնը կրթուած և չափահաս աղջիկ է և իրաւունք ունի պահանջելու, որ ապագայ ամուսնու ընտրութիւնը իրան և միայն իրան թողնուի։ Հետևաբար արգելել նորան այդ քայլն անելու չպիտի թոյլ տան իրանց ո՛չ մայրը ո՛չ եղբայրը։ Բայց, ի հարկէ, վերջիններիս բարոյական պարտականութիւնն է հոգալ նորա ապագայ վիճակի մասին, և այդ հոգալը կարող է կայանալ միայն և միայն բարի խորհուրդների մէջ։ Աշխէնին հարկաւոր է հասկացնել, որ նորա ընտրած երիտասարդի արժանաւորութիւնները ենթադրական բաներ են, իսկ մի քանի թերութիւնները ակներև են. որ նա արժանի է աւելի լաւ մարդու կեանքի ընկերը լինելու։ Սակայն, եթէ նա հաստատ վճռել է իւր ընելիքը, ոչոք նորա ձեռքը չպիտի բռնի։

—Է՛հ, որդիս, եթէ այդպէս է, լաւ է չ՚ընդունենք, ասաց մայրը, Գարեգինի խօսքերը լսելուց յետոյ։

Բայց Գարեգինը կրկնեց, որ Աշխէնին հարկաւոր է իւր կամքին թողնել և ոչ մի կերպ չբռնանալ նորա զգացմունքի վրայ։

Այդ մասին մայրը առանձին խօսակցութիւն ունեցաւ իւր աղջկայ հետ։ Նա ասաց, որ Գարեգինը այնքան էլ ուրախ չէ նորա արած ընտրութեան վրայ։ Աշխէնը պատասխանեց հեգնութեամբ և զսպուած զայրոյթով.

—Ինչպէս կը բարեհաճէք։

Եւ ուրիշ ոչինչ։ Եւ մի րոպէ աւելի չուզեց մնալ մօր մօտ։ Եւ անմիջապէս հեռացաւ իւր սենեակը։ Մայրը գնաց նորա ետևից, և խօսակցութիւնը շարունակեց այնտեղ։

Մայրը ասաց.

—Դու գիտես, Աշխէն ջան, որ մենք քո լաւն ենք ցանկանում...

—Այդ գիտեմ,—ընդհատեց նորա խօսքը Աշխէնը։



—Խօսք չկայ, այդ Ազատեանը լաւ տղայ է, վատ չէ, անուն էլ ունի հանած, բայց դու արժանի ես աւելի լաւ և աւելի...

—Աւելի հարուստ տղի, այնպէս չէ? Նորից հեգնեց աղջիկը։

—Ոչ թէ աւելի հարուստ, այլ աւելի մեծ ուսումով...

—Կ՚ուզէի իմանալ, թէ այն որ համալսարանականից է նա պակաս? Եւ այսպէս մօր ամէն մի առարկութիւնը ջարդ ու փշուր եղաւ Աշխէնի կտրուկ և լակոնական պատասխաններով։

Դիմադրութիւնը թոյլ էր, և սէրը յաղթութիւն տարաւ։ Առաջարկութիւն անելուց յետոյ շատ չսպասեց Ազատեանը։ Երրորդ օրը քաղաքային պոստով ստացաւ մի նամակ, որով օրիորդը ուրախութեամբ յայտնում էր մօր և եղբօր համաձայնութիւնը։

Շուտով նոքա իրանց նշանի մատանիները փոխանակեցին։

«Աշխէնը նշանուել է Ազատեանի հետ», «Ազատեանը նշանուել է օր. Զառիկեանի հետ»—այս լուրը համարեա նոյն օրը տարածուեց քաղաքում ծանօթ շրջանների մէջ, և սկսուեցին բարի և չար գուշակութիւնները նոցա ամուսնական կեանքի վերաբերմամբ։ Բախտաւոր կը լինին թէ անբախտ? Յարմար զոյգ է դա թէ անյարմար? Այսպիսի հարցեր շատ երիտասարդների գլուխներ էին զբաղեցնում։ Երբ Ոսկերչեանի ականջին հասաւ այս լուրը, նա սաստիկ զարմացաւ, ախ քաշեց և ասաց.

— Ափսոս Աշխէն!

Սևումեանը սրտանց ուրախ կը լինէր, որ օր. Զառիկեանը իւր ամուսնութեան հէնց առաջին ամսից յետոյ հիասթափութիւն կրէր և բաժանուէր Ազատեանից, այդ «շատ համակրելի երիտասարդից», որպէս զի նա քիչ

փորձի և աշխարհիս լաւն ու վատը կարողանայ իրարից զանազանել։

Մի‌ևնոյն օրերում, երբ Զառիկեանների տանը հոգաբարձական ընտրութիւն պիտի կատարէր։ Ընտրութիւնը կատարուեց, բայց ոչ յաջող՝ ուսուցիչարանի շահերի տեսակէտից։ Ընտրածներից մէկը Սեւումեանի մօտիկ ծանօթն էր, իսկ միւսը «սեւահոգու» ազգականը։ Դեռ ևս թեմական առաջնորդից չհաստատուած, նորընտիր հոգաբարձուները սկսեցին հեռուից հետամուտ լինել դպրոցի ներքին գործերի վարչութեան։ Քննութիւնների ժամանակ մէկը կամ միւսը անպատճառ ներկայ էր լինում։ Զառիկեանի համար անկասկած էր, որ իրան յանձնած հիմնարկութեան վրայ ամենայն ուշադրութիւն պիտի դարձնէին։ Նա շուտով համոզուեց, որ իր պաշտօնավարութեան վերջին օրերը եկել են։ Եւ համոզուեց նորան հետևեալ հանգամանքը։

«Ժամանակի» մէջ լոյս էր տեսել մի յօդուած, որի մէջ ամենամեծ գոյներով էր նկարագրուած Զառիկեանին յանձնուած ուսումնարանը։ Այնտեղ, ի միջի այլոց, ասուած էր. «Մի քանի օր շարունակ ներկայ լինելով հարցաքննութիւններին, եկայ այն տխուր եզրակացութեան, որ պատուելի ուսուցիչները ոչինչ չէին արել։ Մանաւանդ թոյլ էին մի քանի ուսուցիչների քննութիւնները։ Եւ հասկանալի է, թէ ինչու։ Եթէ մանկավարժը իր ուշ ու միտքը տայ կեր ու խումի, քէֆերի և թղթախաղի, նորա աշակերտները, բնական է, ոչ մի առաջդիմութիւն չեն կարող անել։ Բացի այդ, մեզ յայտնի է հաստատ աղբիւրից, որ ուսուցիչներից մէկը թոյլ է տալիս իրան ծեծել աշակերտներին և բարբարոսաբար է վարուում աշակերտուհիների հետ. ծեծը նորա մանկավարժութեան մէջ առաջին տեղն է բռնում։ Թուք և ամօթանք թող լինի դոցա վարձատրութիւնը։ Ենորհիւ այդպիսի ծոյլ և անպործ մարդկանց և, երևի, հսկողութեան ու դիսցիպլինայի բացակայութեան, այդ դպրոցը հասել է աննախանձելի դրութեան և կարօտ է արմատական վերանորոգութեան»։ Ստորագրութեան տեղ կար միայն երեք աստղ։

Այս յօդուածի հեղինակը նոյն այն «սեւահոգին» էր, որին Զառիկեանը արձակեց անցեալ տարի և որը այժմ վիայոյս էր, որ իրան տապալողները շուտով իրանք պիտի տապալուին։

Երբ նոր հոգաբարձուները ստանձնեցին իրանց պաշտօնը, նոցա առաջին գործը եղաւ առաջարկել Զառիկեանին «ազատ կացուցանել» ամբողջ խումբը և կազմել նորը, ըստ բարեհաչեցողութեան հոգաբարձութեան և նոցա ցուցմունքների համաձայն։ Աւագ ուսուցիչը կարակի մերժեց այդ առաջարկութիւնը և ներկայացրեց իր հրաժարականը։ Զառիկեանի օրինակին հետևեցին նորա բոլոր պաշտօնակիցները։

«Սեւահոգին» գրաւեց Գարեգինի տեղը, և նորան յանձնարարեցին նոր խումբ կազմել։

Այս քաշեց Զառիկեանը, երբ իմացաւ, որ իր փայփայած հիմնարկութեան գլուխը անցնում է մի խարդախ հոգու և սահմանափակ գլխի տէր մարդու ձեռքը։

Տխուր և մռայլոտ թեք էր ընկած նա գահլիճումը քազմոցի վրայ և ընչացքի ծայրերն էր կրծում։ Աչխէնը և Մարիամը միմեանց թև առած՝ անց ու դարձ էին անում այնտեղ։ Բոլորն է լուռ էին։ Գարեգինի միտքը դպրոցի շուրջն էր պտտւում, քոյրը իր ցնորքներով տարուած էր հեռու իր կեանքի ապագայ ընկերոջ հետ, իսկ կինը մտածում էր այն փոփոխութիւնների մասին, որոնք պիտի կատարէին մօտ ապագայում շնորհիւ երո-

կու հանգամանքների՝ իր ամուսնու դպրոցից հեռանալուն և Աշխենի մարդու գնալուն։

Այդ ժամանակ դահլիճը մտաւ Ազատեանը։ Անփոյթ կերպով գլխարկը նետեց պատուհանի վրայ և սեղմեց Աշխենի ձեռքը, որը նորան տեսնելուն պէս՝ առաջին էր վազել։ Ցետոյ նա բարևեց տիկին Մարիամին, թոթուեց Գարեգինի ձեռքը և ծիծաղելով ասաց.

—Շնորհաւորում եմ, բարեկամ. լաւ են մաքրել ձեր բունը!

—Ինչ արած։ Մեր ամեն բանը այսպէս է։

—Մենք թոյլ վարուեցինք, և մեր հակառակորդները յաղթեցին։ Բայց ոչինչ. հերթը մի օր մեզ կը հասնի։ Թո՛ղ տարին լրանայ, ես ինքս անձամբ ներկայ պիտի լինիմ հարցաքննութիւններին, և այն ժամանակ փոխարէնը կ'աշխատենք հատուցանել։ Այնպէս չախչախեմ այդ տափակ գլուխները!...

—Է՛հ, ինչ որ էլ լինի, դա ինձ ցաւ է պատճառում։ Մենք մրցում ենք, մե՛ք իրար միս ենք ուտում, իրարից վրէժ առնում, բայց չենք մտածում, որ մէջտեղ ձեռաւում է մատաղ սերունդը։

—Ուղղութիւնների մրցումը անհրաժեշտ և անխուսափելի է գիտակցութեան հասած ժողովրդի համար։

—Գիտակցութեան հասած? զարմանքով և շեշտով արտասանեց Գարեգինը։ Հէնց բանն էլ այդ է, որ մենք դեռ ևս գիտակցութեան չենք հասած։ Մենք գտնւում ենք քաղաքակրթութեան այն աստիճանի վրայ, որ գոյութեան կռիւը համարեա միշտ շփոթում ենք ուղղութիւնների և գաղափարների մրցման հետ։

Եւ այսպէս գնալով վէճը սաստկացաւ։ Ազատեանի և Գարեգինի հայեացքները տարբերւում էին երբեմն նոյնիսկ հիմնական կէտերի մէջ։ Առաջինի լաւատեսութիւնը և միւսի յոռետես կարծիքները կարմիր և սև թելերի



պէս որոշւում էին երկուսի ընդդիմախօսութիւնների միջից։ Մարիամը և Աշխէնն էլ մէջ մտան. մէկը պաշտպանում էր իւր ամուսնուն, միւսը իւր նշանածին։

Այս վիճաբանութիւնը երկար չտևեց. մայրիկը եկաւ, և խօսակցութեան նիւթը փոխուեց։ Խօսքը պսակի մասին էր։ Ազատեանը յայտնեց, որ ինքը վաղուց է չէ տեսել իւր հայրենիքը և վճռել է այս ամառ անցկացնել այնտեղ. ներկայացել է յարմար առիթ Աշխէնին իւր ծննդավայրը ցոյց տալու, ուստի առաջարկում է շուտով կատարել պսակը։ Մայրիկը ասաց, որ աւելի լաւ է յետաձգել այդ աշնան սկզբներին։ Բայց Ազատեանը հաստատ էր իւր որոշման վրայ, և Աշխէնն էլ դորան հակառակ չէր։

Խորհուրդ արին, նշանակեցին հարսանիքի օրը, և սկսեցին պատրաստութիւններ տեսնել։

---

Հետևեալ օրը ցերեկւայ գնացքով Ոսկերչեանը մեկնեց Թիֆլիսից դէպի իւր ծննդավայրը։ Միակ անձը, որ բարի ճանապարհ մաղթեց նորան կայարանում, Գարեգինն Զաւիկեանն էր։ Ֆալչեանը չհասաւ։ Երբ նա շնչասպառ երևաց տախտակամածի վրայ, գնացքը արդէն սլանում էր...

## XIX

Օդոստոսի սաք և պարզկայ երեկոներից մէկն էր։ Մադէրի փոքրիկ այգում սեղաններից մէկի մօտ մենակ նստած էր Ֆալչեանը, առաջը դրած մի բաժակ գարեջուր։ Հայեացքը դէս ու դէն էր շրջում. այնտեղ հաւաքւած հասարակութեան և ել ու մուտ անող յաճախորդների մէջ կարծես ծանօթ դէմք և խօսակից էր որոնում։ Այդու մանաւանդ նա հեռու էր նստած, բայց և այնպէս իսկոյն ճանաչեց Ոսկերչեանին, երբ նա՝ մի ձեռքով գլխարկը

բռնած և միւսով կոկելով քրտնած մազերը, ներս մտաւ այնտեղ։ Մի քանի քայլ անելուց յետոյ, Ոսկերչեանը զգաց, որ մէկը թևիցը քաշեց, ասելով.

—Բարև, բարև, Արտաշէս։ Այս երբ?

—Ա, Իսահակ, դու այստեղ ես? Ես այսօր եմ եկել, առաւօտեան։

—Գնանք ինձ մօտ. սեղանս այնտեղ է։

Եւ երկոքեան նստեցին սեղանի մօտ, իրար հանդէպ։ Ոսկերչեանը կանչեց ծառային և, երբ նա եկաւ, մի բաժակ գարեջուր և մի բուտերբրոդ ուղեց իր համար։

—Է՛հ, պատմի՛ր տեսնենք, ինչպէս անցկացրիր ամառը,—խօսեց Ֆալչեանը՝ կզակը դնելով միմեանց վրայ դարսած ձեռքերի վրայ.

—Վատ, շատ վատ,—ասաց Արտաշէսը, շփելով ճակատը և աչքերը։

—Ինձանից էլ վատ?

—Ինչ կար, ինչ չկար այստեղ?

—Ինչ պէտք է լինի այստեղ ամառը—շոգեր, փոշի և անտանելի ձանձրոյթ։ Երբեմն երեկոները գալիս ենք այստեղ, պատահում ենք ծանօթների, ասում լսում ենք, և սա է մեր միակ մխիթարութիւնը։

Ոսկերչեանը ընդունեց մատուցարարի ձեռքից գարեջրի բաժակը, խմեց կէսը և, մէջքը դէմ տալով աթոռին, մտածմունքի մէջ ընկաւ։ Ինչ որ փոփոխութիւն էր նշմարւում նորա դէմքի վրայ։ Ճանապարհին կրած նեղութիւնների և յոգնածութեան հետևանք էր դա, թէ վշտի կնիք—Ֆալչեանը չկարողացաւ հասկանալ, ուստի և հարցրեց.

—Դիտես, ինչ կայ, Արտաշես. դու աչքիս փոխուած ես երևում։

—Ինչս է փոխուած?

—Զգիտեմ, ճշմարիտ. յոգնածութիւն ասեմ թէ



վիշտ, որ նկատում է դէմքիդ, բայց կարծես մի քանի տարով ծերացել ես։ Ասա, խնդրեմ, հո քեզ անբախտութիւն չէ պատահել?

—Ինչպէս չէ,—արտասանեց Ոսկերչեանը, հոգոց քաշելով,—կրկնակի անբախտութիւն։

—Զլինի, Արտաշէս, հայրդ?...

—Այո, դու գուշակեցիր. հայրս մեռաւ, և ես ճնացի բոլորովին որբ, անտուն և անտէր։ Որբ և անտուն—այս խօսքերը դու պիտի հասկանաս բառացի կերպով։

—Մի թէ? Շատ ցաւալի է։ Է՛հ, լաւ. բայց ինչու է կրկնակի անբախտութիւնդ? Դու, կարծեմ, այդպէս ասացիր.

—Տունս էլ ձեռքիցս դուրս եկաւ...

—Ինչպէս? Տունդ? Օ, դա քիչ բան չէ։ Բայց ինչ պատճառով?

—Է՛հ, դա մի ամբողջ պատմութիւն է։

—Պատմի՛ր, խնդրեմ, ինչպէս եղաւ? Մի թէ դա կապ ունէր հօրդ մահուան հետ? Երևի նա պարտքեր ունէր?

Ոսկերչեանը լուռ քմծիծաղ տւեց։

—Լաւ,—խօսեց նա քիչ յետոյ,—կը պատմեմ, եթէ ուզում ես։ Ի դէպ, դու նիւթեր ես փնտռում պատկերների համար։ Ես քեզ իրողութիւնը կ՚ասեմ, դու յետոյ մշակիր։ Պատկերիդ անունն էլ կարող ես դնել Գիշատիչ, որովհետև այն անձը, որը ինձ իմ հայրական տանից վռնտեց և փողոց ձգեց, իւր բոլոր յատկութիւններով գիշատիչների ցեղին է պատկանում։

—Զլինի, վաշխառու պարտատիրոջ ճանկն ես ընկել?

—Երևակայիր իմ դրութիւնը, Իսահակ. երբ ես տեղ հասայ և սայլակը կանգնեց մեր տան դարպասի մօտ, էլ չիմացայ, ինչպէս ինձ ձգեմ գետին, որ շուտ սլանամ հօրս մօտ։ Բայց դուռը փակ էր. հրում եմ—չի բացուում։ Երկաթէ ծանր մուրճով սկսեցի բաղխել—ոչ մի

ձայն, բացի ներսի արձագանքից։ Իսկոյն սիրտս վկայեց, որ արդէն բանը բանից անցել է, և ես հօրս այլ ևս երբէք չպիտի տեսնեմ։ Անմիջապէս հարևանիս մօտ վազեցի։ Իմ բախտիցը, նա տանն էր։ Տեսաւ թէ չէ, «գալուստդ բարի» ասաց, տխուր նայելով երեսիս։ Ես մի ինչ որ բան մրմնջացի, և նա, ինձ ընդհատելով, պատասխանեց. «հա, չմնաց, ազատուեց այս փուճ աշխարհից»։ Արտասուքը ինձ խեղդում էր, և ես շարունակ կրծում էի շրթունքս, որպէս զի չկարեմ հեկեկալ երեխայի պէս։ Երևի, ցաւակցելով վշտիս, հարևանս կամեցաւ ինձ սփոփել, ասելով. «Աստուած իր որդուն մխիթարութիւն տայ։ Մեր մարդ էր, չդիմացաւ։ Աստուած տայ, մենք էլ նրա չափ ապրենք»։ Ես հարցրի, թէ ուր մօտ է տանս բանալին։ Նա մարդ ուղարկեց մելիքի եակից, որ գայ և բանալին ինձ յանձնի։ Մինչև նորա գալը, իմ դրացին շատ բաներ պատմեց հօրս մասին։ Ոչ մի բան նորա խօսքերից ինձ վրայ այնքան չազդեց, որքան հետևեալը։ Նա ասաց, թէ հայրս, իւր մահուան ճգնաժամին, իմ լուսանկարս է խնդրել, համբուրել է և կրծքի վրայ դրած՝ աւանդել է հոգին։

—Թող այդ տխուր պատմութիւնը,—նկատեց Ֆալչհանը, ձեռքով դժգոհ շարժում անելով,—դու ուրիշ բան էիր ուզում պատմել։

—Այս րոպէին,—ասաց Ոսկերչեանը և, վերջացնելով ճեպած գարեջուրը, կանչեց մատուցարարին ու երկրորդ բաժակ պահանջեց։ Մի խօսքով, ինչ գլուխդ ցաւացնեմ, դուռը բաց արին, և ես մտայ իմ տունը։ Զգիտեմ, իրօք թէ ինձ էր դա թէ իմ երևակայութիւնը, բայց ինձ թւաց, որ բակիցը մեռելի հոտ փչեց երեսիս։ Ծերուկիս թաղել էին մի օր առաջ, և հաւանական է, որ սենեկի միջից ծանր օդը անց կացած լինէր բակի մէջ։ Բայց ես կրկին ի չարն եմ գործ դնում քո համբերութիւնը։ Լաւ, այս պատմութեանը վերջ եմ դնում։



—Դու այն ասա, թէ քո ժառանգած անշարժ կայքը ինչպէս ձեռքիցդ գնաց։ Դեռ ևս հայրենիք չգնացած, դու, կարծեմ, ասում էիր, թէ այնտեղ մի բան ունես, որը քեզ կարող է պէտք գալ սև օրերդ համար։ Խօսքդ ի հարկէ, դորա մասին է?

—Այո, ի հարկէ։

Ոսկերչեանը վերցրեց ծառայի մատուցած բաժակը, մի կում խմեց և սկսեց շարունակել.

—Նոյն օրը երեկոյեան իմ ըաղի հարևանը ինձ կանչեց իւր մօտ թէյի։ Ես գնացի։ Բայց կ'ուզես, մի քանի խօսքով նկարագրեմ նորա արտաքինը? Նա կը լինի մօտ վաթսուն տարեկան։ Կարճահասակ է, վոխտ, և ոսկորը պինդ, և, ինչպէս կարծում եմ, կեանք շատ պիտի լինի նորա մէջ։ Բունը անհամաչափ երկայն է, իսկ ոտները աստիկ կարճ և ծուռ։ Այդ տեսակ մարմնի վրայ հագցրու ծալծլած, լայն սև շալւար, կարճլիկ ժիլէտ, որի տակից միշտ դուրս պրծած կը տեսնես շապիկը, և ժիլէտի վրայ մի խղոտած, պսպղուն սև սերթուկ, որի փեշերը, քայլելու ժամանակ, խփւում են ծնկներին,—և աչքիդ առջև է իմ հարևանը, եթէ մի րոպէ ենթադրենք, որ նա առանց գլխի է։ Բայց նա, ի հարկէ, գլուխ ունի։

—Միթէ? կատակեց ունկնդիրը և սկսեց ծիծաղել։

—Այո, մի գլուխ, որ քոնիցն էլ փոքր է...

—Ուրեմն ես բախտաւոր եմ, ապա թէ ոչ ես կարծում էի, թէ աշխարհս երեսին իմ գլխից աւելի փոքրիկ գլուխ չկայ... Բայց գիտես, արդէն ուշ է. մենք չգնանք?

—Ինչ կայ, շտապում ես? Նստիր մի քիչ էլ։ Ես շարունակում եմ։ Կը հաւատաս ինձ, Իսահակ, չնայած նորա ծեր հասակին, գլխիցը ոչ մի մազ է պակասել, ոչ էլ սպիտակել. կարծես, ջահել երիտասարդ լինի։ Դա մի տեսակ ֆենոմէն է, ճշմարիտ։ Մանուկ հասակիցս նորան

այդպէս եմ տեսել։ Զիգ ու Թաւ յօնքերի տակ, որոնց ամեն մի մազի եռեւ, ինչպէս ասում էին, մի-մի սատանայ է թագնւած, արագ շարժւում են և ասես մի բան են որոնում նորա աչ, խորամանկ, խոշոր աչքերը։ Զարհուրելի է, երբ ժպտում է նա. առաջից տեսնում ես բերանի տեղ, մի մութ խոռոչ, որի առաստաղից դէպի ներքև են ցցւած, ատամների տեղ, երկու սևացած ոսկորի կտորներ...

—Երևում է, լաւ գզել են քեզ այդ սևացած ոսկորի կտորները, որ այդպիսի կրքով նկարում ես այդ հրէշի պատկերը։

—Ի հարկէ! Բացականչեց Ոսկերչեանը տաքացած և ձեռքը խփելով սեղանին։ Այդ սրիկան չափշռակեց իմ նիւթական վերջին ապահովութիւնը! Հասկանում ես դու, իմ վերջին ապահովութիւնը! Չէ որ ինձ համար էլ կայ ծերութիւն, կայ հիւանդութիւն, կան թշւառութեան անակնկալ դիպւածներ? Յամենայն դէպս, ես կ'ունենայի մի ծածկ, մի ապաստան, որտեղ գլուխս կը թեքէի։ Վերջապէս, ես կարող էի ծախել այդ տունը, հեղինակութիւնս հետզհետէ կը հրատարակէի. մի խօսքով, նա մեծ օգնութիւն կը լինէր ինձ համար։ Բայց լսեց անիրաւը, իր սեփականութիւնը դարձրեց, և այն էլ ինչքան ինձ չարչարելուց յետոյ, եթէ իմանաս!...

—Էհէ, բարեկամ, ես չեմ կարող նստել այլ ևս. օդը սկսում է զովանալ,—խօսեց Ֆալչեանը, թոթափելով ուսերը և ձեռքի եռևի կողմով շփելով մէջքը, որպիսի շարժում անում են, երբ մթնոլորտի մէջ եղած խոնաւութիւնը զգացւում է մարմնի մէջ։

—Բոլորովին ոչ,—գոչեց Ոսկերչեանը՝ պինդ նստած ճաշով իր տեղում. եղանակը շատ մեղմ է, մինչև անգամ տաք է...

—Ո՛չ, մի՞թէ չես տեսնում, հազս սկսեց,—այս ասելով, մի երկու անգամ նա թեթև հազաց։



—Նատիր, ասում եմ։ Հազդ միշտ կայ ու կայ, դա նորութիւն չէ,—համոզում էր Ոսկերչեանը։

—Դու կարծում ես, ինձ համար նորութիւն է այն, ինչ որ դու սկսել էիր պատմել գիւղական չարչիների և վաշխառուների մասին? Է՛հ, այնքան տեսել և կարդացել եմ, որ այդպիսի արարածներ ինձ չեն էլ հետաքրքրում։ Վեր կաց գնանք։ Տունդ խլեցին? Վարսալամ!

Գարեջրի փողը վճարեցին և գրչի ընկերները դուրս եկան այգուց ու գնացին Միքայէլեան փողոցով։ Արդէն ուշ էր, երթևեկութիւնը սակաւ էր, և հակառակ մայթի անցորդը պարզ կարող էր հեռևել նոցա խօսակցութեան։

—Դու այն ասա, Արտաշէս, մի բան էիր սկսել այստեղ, վերջացրիր թէ ոչ?

—«Արտաւազդ II»-ը? Ո՛չ, ի հարկէ, ո՛չ։ Ինչպէս կարող էի վերջացնել այնպիսի գժոխային պայմանների մէջ?

—Լա՛ւ, ճանապարհածախս որտեղից գտար?

—Ինչ կար չկար տանը, կիսագին ծախեցի եկայ։

—Ուրեմն գրպանդ լաւ չաղացած կը լինի,—այդ ասելով Ֆալչեանը ծիծաղեց և ձեռքը մի քանի անգամ խփեց նորա շալւարի գրպանին։

—Որտեղից? Ինչ էր ճնացել որ? Խղճալի ինքնաեռ, խարխուլ աթոռներ և ուրիշ մի քանի այդպիսի անդրհեղեան առարկաներ, որոնք կազմում էին մեր տան ամբողջ սարքը։

Այսպէս զրոյց անելով, նոքա հասան Ալէքսանդրեան այգու մօտ, որտեղից նոցա ճանապարհները պիտի փոխւէին։

—Բարի գիշեր,—ասաց Ոսկերչեանը, կանգ առնելով և ձեռքը մեկնելով ընկերոջը։

—Որտեղ ես իջել? հարցրեց Ֆալչեանը։

Նա մի քարւանսարայի անուն տւեց և, ձեռքը ազատելով հիւանդոտ երիտասարդից, որ նա ամուր բռնել էր, շտապ քայլերով հեռացաւ։

Հետևեալ օրը Ոսկերչեանը վճռեց այցելել Զաւիկեաններին։

Քանի ամիս է, նա ոտ չէր դրել դռցա տան շէմքին։ Ինչ կը մտածէ մայրիկը? Միթէ իրաւունք չունի Վարդինը նեղանալու? Պէտք է մարդ նորա մեծահոգութիւնը ունենայ, որպէս զի ոչ միայն չվիրաւորուի, այլ նոյն իսկ չզլանայ դժուար հանգամանքներում օգնութեան ձեռք մեկնել իւր ջահել բարեկամին, նորան, որը այնքան անքաղաքավարի, ապերախտ գտնուեց այդ քաղցրաբարոյ ընտանիքի վերաբերմամբ։ Իսկ այն անմիտ սէրը, որ նա տածում էր դէպի նախկին Վարթուհեանը, հո այժմ անցել է, երազի պէս, թէև, ճիշտ է, առաջին և բուռն սիրոյ վէրքը իւր անջնջելի հետքը թողնում է մեր սրտի խորքի մէջ։ Ինչու ուրեմն համարձակութիւն չունենայ ուղիղ նայելու իւր բարեկամի կնոջ երեսին և միևնոյն ժամանակ ինքն իրան մտածելու. «Երանի այս հրեշտակը իմ հարազատ քոյրը լինէր»? Իսկ Աշխէնը... Ա՛խ, ինչպիսի մի անգին բարեկամ կորցրեց նա յանձին մի սիրարժան աղջկայ, որպիսին էր Աշխէնը! Այո՛, կորցրեց, որովհետև Ապատեանի ամուսինը Ոսկերչեանի բարեկամը այլ եւս չէ կարող լինել...

Ահա ինչ էր մտածում մեր երիտասարդը, երբ իւր քայլերը ուղղում էր դէպի Զաւիկեանների տունը։ Վաղուց ընդհատած լինելով իւր այցելութիւնները այդ ընտանիքին, որի սովորական յաճախորդը և միշտ ցանկալի հիւրն էր նա երբեմն, նա իւր խղճի վրայ ծանրացած էր տեսնում մի մեղք, որը պէտք էր քաւել։ Նա հաւատում էր. իրան գրկաբաց կ'ընդունեն այդ տանը և կը սիրեն, ինչպէս առաջ։ Չէ որ նա որբ և մենակ է մնացել? Ա՛խ, որքան փափագում է նա, որ իրան սիրեն, ինչպէս որդու, ինչպէս եղբօր և ինչպէս բարեկամի!

Հասաւ և զանգը քաշեց մի քանի անգամ. բայց



դուռը բաց անող չկար։ Վերին յարկը լուռ և պարապ քնակարանի տպաւորութիւն էր գործում։ Նայեց պատուհաններին—սպիտակ և անթափանցիկ գոյնով ներկուած էին ապակիները։ Խակը մոաւ, որպէս զի ներքևի յարկի կենդանիներից, որոնք նորան անծանօթ չէին, տեղեկութիւններ իմանայ տանտէրերի մասին, և իմացաւ հետևեալը.

Զաւիկեանները դեռ չեն վերադարձել ամարանոցից։ Գարեգինը մի շաբաթ առաջ Թիֆլիս է եղել և շուտով անցել է մի գաւառական քաղաք, որի թեմական դպրոցի հոգաբարձութիւնը հրաւիրել է նորան տեսչի թէ ուսուցչի պաշտօնով, յայտնի չէ։ Այնտեղ նա պիտի բնակարան վարձի, տեղաւորի և յետոյ գայ կնոջը տանի իւր մօտ։ Ինչ վերաբերում է Աշխէնին, նա պահել է Ազատեանի հետ և միասին ուղևորել են վերջինիս ծննդավայրը՝ ամառը այնտեղ անցկացնելու համար։

Կորագլուխ և տխուր վերադարձաւ նա իւր կացարանը։ «Ուրեմն Գարեգինը այստեղ չի լինելու»? Հարցուց նա ինքն իրան։ «Այս շատ վատ եղաւ», եզրակացրեց նա. «նա միայն բարեկամ չէր ինձ համար. նա մեծ եղբայր էր, որ հոգ էր տանում իմ մասին։ Իսկ ես յոյս ունէի, որ նա ինձ համար մի գործ կը գտնի կամ գոնէ դասեր կը ճարի։ Հիմա ձեռքիս դեռ փող կայ. մի քանի շաբաթ կարող եմ քարշ տալ կեանքս։ Իսկ յետոյ, յետոյ ինչ կը լինի?...»

Գլուխը ձեռքերի վրայ դրած՝ նստած էր նա սեղանի մօտ։ Մէկը յանկարծ մատներով ծեծեց դուռը և կանչեց դրան եռևից.

—Արտաշէս!

—Բա՛ց է,—պատասխանեց Ոսկերչեանը՝ առանց տեղից շարժուելու։ Ներս մտաւ Փալչեանը և, իսկոյն կանգ առնելով, երեսը ծռեց ու սկսեց ուշի ուշով դիտել սենեկի ցած առաստաղը, պատերի գունաթափ և գլխուած պաս-

տառները, յատակի ճեղքերը և աղքատիկ կահ կարասիքը։

—Ափսոս քո նախկին բնակարան! Բացականչեց նա, առաջ գնալով։ Սա գոմ է, սա հօ սենեակ չէ! Ի՛նչ մութ էլ է։ Իսկ օդը, օդը. այստեղ խեղդուել կարելի է։ Ասա, խնդրեմ, այստեղ ինչպէս ես կարողանում ապրել? Եւ երկար պիտի մնաս այս գրի մէջ?

—Ո՛չ, շուտով պիտի տեղափոխուեմ։

—Այստեղ կէս ժամ չեմ կարող նստել։ Գնանք Մադէր։

—Օ՛հ, այնտեղ էլ ձանձրալի է!

—Հերիք է քեզ Բայրն երևակայես! Վեր կաց, աստմ եմ. շորերդ հագիր։

—Ինչ աշխոյժ և ուրախ ես այսօր, Իսահակ։

—Ես պատճառ ունիմ ուրախ լինելու և այս բոպէին կ'ասեմ։ Գիտես ինչ կայ, Արտաշէս? Ես արդէն գտել եմ իմ կոչումը!

—Ուրեմն մեծ գիւտ ես արել։

—Ես կատակ չեմ անում։ Երևակայիր, Արտաշէս. այս գիշեր ես բաց աչքով եմ լուսացրել։

—Ինչու?

—Քեզնից բաժանուելուց յետոյ, երբ տուն գնացի, դեռ ճրագը չվառած՝ կայծակի նման մի միտք յղացաւ գլխիս մէջ, և այդ միտքը ինձ չթողեց քնել մինչև արևի ծագելը։

—Ինչումն է կայանում դա?

—Մի այնպիսի բան պիտի գրեմ, որ հռչակելու է իմ անունը։ Հրաշալի բան պիտի դուրս գայ Արտաշէս, մի հիացք!

—Վերջապէս պիտի ասես, դա ինչ բան է թէ ոչ?

—Զգիտեմ, վէպ կը լինի թէ դրամա. այդ մասին կը մտածեմ։ Գլխաւորը սիւժէան է, որ արդէն մտածւած է։ Այս երկասիրութեան մէջ ես պիտի դուրս բերեմ մեր



կուսակցական պայքարները։ Ես կը ներկայացնեմ երկու մարտնչող բանակներ. մէկը—«Ճառագայթի» դրօշի տակ, միւսը՝ «Ժամանակի»։ Ընթերցողների կամ հանդիսականների առաջ ես բաց կ'անեմ ճակատամարտի հետաքրքրական տեսարան, ճակատամարտ, որը, թ հարկէ կատարուում է գաղափարի հողի վրայ, և ցոյց կը տամ այսպիսով նոր և առողջ մտքերի օրհասական մաքառումը հին և փտած նախապաշարմունքների դէմ!...

Ինչ կայ որ. լաւ միտք է։ Բայց բանը իրագործելն է։ Պիտի կարողանաս գլուխ հանել մի այդքան բարդ թեմայից?

—Ես կ'իրագործեմ։ Այո, կ'իրագործեմ, և դու կը տեսնես, թէ ով է Ֆալչեանը! Ֆուրոր պիտի անեմ, բարեկամ, Ֆուրոր!...

—Արդէն սկսել ես?

—Դեռ ոչ։

—Գոնէ ծրագիրը մշակել ես?

—Ո՛չ, բոլորը այստեղ է և դեռ եփւում է,—ասելով «այստեղ է» Ֆալչեանը բաղխեց ճակատը։

—Է՛հ, եղբայր. մեր Ֆուրորը միայն մեր գլխի մէջն է։ Վեր կաց, վեր կաց գնանք։ Ես արդէն պատրաստ եմ։

Երբ դուրս եկան սենեկից և սկսեցին իջնել մութ աստիճաններով, նոքա դէմ առան քարանսարայի մշակներից մէկին, որը՝ հինգ-վեց փութանոց ահագին հակը մէջքին բարձած՝ քրտնաշաղախ ու տնքալով բարձրանում էր վերև։ Ֆալչեանը ասաց, տեղ տալով, որ նա անցնի.

—Տեսնում ես, Արտաշէս? Իրանից մեծ բեռն է շալակած այս թշուառականը։ Ինչ կեանք է այս խեղճերի կեանքը? Սա մի տեսակ տաժանակիր աշխատանք է, ճըշմարիտ։

—Բայց ինչ կ'ասես,—վրայ բերեց Ոսկերչեանը,—որ այս մարդիկ մեզնից բախտաւոր են։ Պէտք է տեսնել, թէ

ինչպէս են ընդհանուր ճաշի նստում գետնին փռած խսիրի վրայ։ Նախանձս շարժւում է, երբ տեսնում եմ, որ այս պանդուխտները իրանց օղաբաշու հետ միասին մի եղբայրական շրջան կազմած՝ բոլորել են մի մեծ ամանի շուրջը և փայտեայ գդալներով ուտում են բրդած համով բոզբաշը, ուտում և զրոյց են անում, իսկ ճաշը վերջացնելուց յետոյ՝ խաչակնքում են երեսները և փառք տալիս Տիրոջը, որ այդ օրն էլ իրանց կշտացրեց։ Հալալ է այս աշխատաւորների հանդստութիւնն էլ, կերածն էլ!...

«Երևանեան հրապարակում» երկու ընկերները նստեցին ձիաքարշը և մի քսան րոպէից յետոյ վեր եկան Մադէրի մօտ ու մտան ներս։

Փոքրիկ այգին, կամ աւելի ճիշտ, պարտէզը լի էր մարդկանցով, այնպէս որ մեր գրագէտները ստիպւած էին բաւականին սպասել, մինչև որ ազատ սեղան կը բացւէր իրանց համար։ Դեռ նոր էին նստել, երբ մի ձայն Ոսկերչեանի անունը տւեց։ Սա գլուխը դարձրեց—Զիլչագեանն էր, որը հեռւից ձեռքը մեկնած՝ մօտենում էր այնպիսի քաղցր ժպիտով, ինչպէս հանդիպում են վաղեմի բարեկամին։ Նա եկաւ, երկուսին էլ բարևեց, հարցրեց Արտաշէսի առողջութիւնը, կամեցաւ իմանալ, թէ որտեղ էր ամառը, որ չէր երևում, ինչ էր անում և երբ է եկել։ Իր նախկին արւեստակցի միավանկ և սառը պատասխաններից նա բնաւ չէր վրդովւում և շարունակում էր իր մտերմական հարցումները։ Շատ ուրախ էր, գուցէ գարեջուրն էր դիպել։ Քիչ յետոյ ցտեսութիւն ասաց, որ գնայ. և օգուտ քաղելով հրաժեշտ տւողի իրաւունքից, նա կրկին վերցրեց Ոսկերչեանի ձեռքը և կարծես սիրտը չէր տալիս բաց թողնել ու հեռանալ։

—Հա՛, քիչ էր մնացել մոռանայի։ Մենք քեզ մի առաջարկութիւն ենք ուզում անել, Արտաշէս...

Ոսկերչեանը ազատեց նորանից իր ձեռքը և ասաց.



—Ինչ առաջարկութիւն?

—Կ'ուզես այս տարի մեր խմբի մէջ լինել? Քեզ ուրախութեամբ կ'ընդունենք։ Ազնիւ խօսք։ Ինչու ես ծիծաղում? Անցած տարի, գիտես, Զամբազեանն էր, որ ամեն բան խառնում էր։ Օ, նա սարսափելի ինտրիգանն է... Ես նրան լաւ ճանաչեցի... Բայց այս տարի նա չկայ։ Կարող ես միամիտ լինել։

Ոսկերչեանը լուռ էր, և դէմքին չէր երևում քմծիծաղը։

—Ես հանաքով չեմ ասում, գիտես? Հէնց այս րոպէիս Մուրադեանի հետ քո մասին էինք խօսում... Նա ասում էր, թէ...

«Ա՛խ, ես չափազանց զգացւած եմ ձեր ուշադրութեան համար»—«Շնորհակալ եմ» ասելով սա ետ ետ էր հրում իրանից անկոչ այցելուին։ Բայց վերջինս, որի պատւի զգացմունքը և չափաւոր ինքնասիրութիւնը իսպառ դադարել էին գոյութիւն ունենալուց, կրկին և կրկին սեղմեց Ոսկերչեանի ձեռքը ու վերջապէս հեռացաւ իր ընկերների մօտ, որոնք՝ եօթ-ութ լի, կիսատ և դատարկ շիշերի և բոկալների շուրջը ժողոված՝ վաղօրօք խորհում էին առաջիկայ թատրոնական սեզոնի ներկայացումների մասին։

—Շա՛տ տարօրոտի է,—խօսեց Արտաշէսը նորա գնալուց յետոյ,—այս մարդու հետ ես վաղուց է ընդհատել էի ծանօթութիւնս։ Յանկարծ ինչ փչեց խելքին?

—Ինչ ես ուզում, եղբայր? Մարդը, երևի, քեզ այնքան յարգում է, որ...

—Բայց դու, Խաչի՛կ, որտեղից ես ծանօթ նորա հետ?

—Դա ծանօթացաւ ինձ հետ այն օրը, երբ օգտաւէտ համարեց ինձ հետ ծանօթ լինել։ Ես դրան մի անգամ գցել եմ «Ճառագայթի» մէջ, չի մոռանում։ Ինձ տեսնում է թէ չէ փողոցում, գտակը մի արշին հեռու է տանում գլխից։

Ահա, հանելուկը պարզուում է։ Ես հասկացայ։ Նա ինձ հետ խօսում էր, բայց իւր քաղցր ժպիտը քեզ էր մատուցանում։

Ներկայ դէպքը Ոսկերչեանի միտը բերեց հերւայ քաշած բոլոր նեղութիւնները և թեթևութիւն զգաց կրծքի մէջ, երբ մտքումը այն տարին համեմատեց մօտ ապագայի ակնկալութիւնների հետ։ Նա ուրիշ պերսպեկտիւ էր տեսնում այժմ իւր առաջ—գրագէտի խաղաղ և ազնիւ աշխատանք և անկապտելի փառք ու պատիւ, իբրև առաջինի բարոյական վարձատրութիւն։ Բայց մի հոգս ունէր նա, որը այժմ աւելի, քան երբ և իցէ, մտատանջութիւն էր պատճառում նորան։ Այդ հոգսը կայանում էր նորա մէջ, թէ ինչպէս պիտի պահի իւր գլուխը։ Մի համեստ ապրուստ—և նա ամենաերջանիկ մարդկանցից մէկն էր։ Այս խորհրդածութեան րոպէին սիրելի էր Ոսկերչեանը։ Անզորր մելամաղձութեան կնիք էր դրոշմւած նորա ամբողջ դէմքի վրայ։ Հայեացքը դադար էր առել դիմացի ծառի տերևների վրայ։ Նորան սթափեցրեց ընկերոջ ձայնը, որ ասաց.

—Նայիր, նայիր, Արտաշէս։ Տեսար?... Ա՛խ, դու փարիսեցի!

Ֆալչեանը իւր ցուցամատով նորա ուշադրութիւնը դարձրեց այն սեղանի վրայ, որի մօտ նստած էին Մելպոմէնայի երկրպագուները։ Ոսկերչեանը նայեց և տեսաւ հետևեալը։ Սևուէանը, որը մինչև այդ ժամանակ աչքի չէր ընկնում այգու հասարակութեան մէջ, կանգնած էր Մուրադեանի մօտ, սորա ձեռքը իւր ձեռքի մէջ բռնած, և ժպտալով խօսում էր նորա հետ, իսկ Զիլչագեանը տեղից վեր էր կացել և, համարեա աղերսելով, ասում էր.

—Պարոն Սևուէեան, խնդրեմ, նստեցէք։ Ես ինձ համար աթոռ կը ճարեմ, պարոն Սևուէեան!...

Իսկ պարոն Սևուէեանը չէր էլ նայում և Զիլչագեանի



երեսը տեսաւ միայն այն րոպէին, երբ փառաւորապէս բազմեց նորա աթոռի վրայ։

Ոսկերչեանը իւր զարմանքը յայտնեց այն պատւի վրայ, որին արժանացնում էին «ժամանակի» բեցենզենտին Զիլչագեանը և նմանները։

Ֆալչեանը նկատեց.

—Ես ամենևին չեմ զարմանում։ Սևուէեանը իւր գրիչը դարձրել էր թշնամիների համար խարազան, իսկ իւր ծանօթ ու բարեկամների համար—բուրվառ։ Այդ անիրաւը վերջին ժամանակներս շատ է երես առել։ Ես դրան մի օր, կարծեմ, լաւ պիտի շշպռեմ։ Այսպէս անպատիժ մնալով՝ նա շատ հեռու կը գնայ...

Յետոյ, ինչպէս եղաւ, երկու ընկերների մէջ խօսակցութիւնը փոխուեց, Ֆալչեանը կրկին իւր կուսակցական պայքարների ծայրիցը բռնեց ու գնաց։ Եւ Արտաշէսը ստիպած էր մի ժամ շարունակ լսել նորա ցնդաբանութիւնը ապագայ հեղինակութեան մասին։ Խիստ վատ եկաւ Ոսկերչեանին։ «Աշխարհիս բաները տեսէք», մտածում էր նա. «երէկ ես իմ իսկական թշուառութեան պատմութիւնն էի ուզում անել, սա չկամեցաւ լսել մինչև վերջ, և ահա այժմ ես, յիմարս, ականջս կախել ու լսում եմ սորա բարբաջանքը»։

Իւրաքանչիւրի առաջ դրւած էր միւմի բաժակ դարեջուր։ Մի քանիսը լաքէյներից, որոնք, ինչպէս յայտնի է, երբէք չեն հանդուրժիլ վատ հագնւած այցելուներին և պատրաստ էին աւելի մեծ յարգանք մատուցանել իրանց նմաններին, քան թէ նոցա, թէկուզ այս վերջիններս երկնքից իջած լինեն, երբեմն խէթ հայեացք էին ձգում մեր երկու երիտասարդների վաղուց կիսատ ճնացած բաժինների վրայ, քաղաքավարութեան համար զսպում էին իրանց ծաղրական ժպիտը և քիչ էր մնում, որ գան ասեն. «էյ, պարոնները, եթէ ոչինչ չպիտի ուտէք և խմէք,

ինչու գոնէ տեղը մի ամբողջ սեղան բռնել էք? Հերիք էր որքան նստեցիք. այժմ գնացէք և տեղ բաց արէք աւելի պատուաւոր հիւրերի համար!» Բայց Ոսկերչեանի և, մանաւանդ, Ֆալչեանի բախտիցը, քանի որ սորա հագուստը աւելի ողբալի դրութեան մէջ էր և կօշիկն էլ մինչև անգամ կարկատած, այդ սեղանի շուրջը հաւաքուեցին մի խումբ երիտասարդներ, և մէջ տեղ եկաւ գարնջրի բաւականին հաստատուր տակառը: Ուշացած եկուորները մեր երկու գրագէտների ծանօթներից էին, բոլորը չահել և տաք գլուխներ—ուսանողներ, ուսուցիչ և լրագրական աշխատակիցներ: Խօսք ու զրոյց բացուեց, որը՝ սկսելով կատակներից և անեկդոտներից աննկատելի կերպով բարձրացաւ մինչև ամենաբարձր նիւթերի գագաթը: Այս ուրախ շրջանի խօսակցութիւնները և ծիծաղը յաճախ գրաւում էին հեռուից Սևումեանի ուշադրութիւնը, որի հայեացքը երբեմն խաչափաքուում էր երիտասարդներից մէկի և միւսի հայեացքի հետ, և այդ հայեացքները, որոնք մի տարի առաջ իրար հանդիպելիս ժպտում էին սիրով, այժմ իրանց մէջ թագցրած պահում էին դրական և բացասական էլեկտրականութիւն: Դժուար է ասել, թէ ինչ կարելի էր կարդալ այդ րոպէներին Սևումեանի աչքերի մէջ—նախանձ թէ բարկութիւն:

Եղանակը սքանչելի էր. օդը ախորժելի և փափուկ: Այգին շատ ուշ սկսեց դատարկուել, և Ոսկերչեանը իր ծանօթների հետ վերջիններից էր, որոնք թողին Մադերը:

Այսպէս գրեթէ ամեն օր նա յաճախում էր այս տեղը, և այդ շարունակուեց այնքան ժամանակ, մինչև որ նորա պորտմոնէն բոլորովին նիհարեց, փորը մէջքին կպաւ, և քաղցած շունը իր բաց բերանով երևաց նորա սարսափած աչքերին:

Դիմել և խնդրել նա չէր սիրում. ամաչում էր, որ գործը իր ոտովը գայ և առ ինքը կանգնի: Բայց երբ



տեսաւ, որ այդ չէ լինում և ոչինչ լաւ բան չէր կարելի յուսալ դատարկ գրպանից, նա մի պահ ամեն բան մոռացութեան տուեց և բոլոր հոգով անձնատուր եղաւ մի հոգսի—ապրուստի միջոց գտնելու: Եւ, պէտք է ասել, այս անգամ նորա բախտը բանեց:

## XX

Այս աշնան Ոսկերչեանի ուշ ու միտքը կլանուած էր ամբողջապէս մի շատ կարևոր հոգսով: Նա վճռել էր անպատճառ յաջողեցնել իր բանաստեղծութիւնների հրատարակութիւնը: Այդ դիտաւորութիւնը, ասենք, նոր չէր: Դեռ ամիսներ առաջ նա լուրջ մտածում էր այդ մասին, բայց միշտ յապաղում էր և այլ և այլ պատճառներով չեռնարկում գործը:

Մեծ յոյսեր էր դրել նա իր ոտանաւորների ժողովածուի վրայ: Լոյս տեսնի թէ չէ, լրագիրները, անշուշտ, իրանց կարծիքները պիտի յայտնեն, և, եթէ մամուլի վերաբերմունքը լինի անաչառ, ու քննադատութիւնը կատարուած լինի ճաշակով և բանիմացութեամբ, նա իրան խրախուսած կը զգայ, և այդ ի՛աւելացնէ նորա եռանդը և ոգևորութիւնը: Բացի այդ, նիւթական շահ էլ է սպասում: Հարկաւ, Ոսկերչեանը փող վաստակելու ախնկալութեամբ չէր, որ գրում էր. նա գրում էր, որովհետև չէր կարող չգրել. դա նորա ներքին պահանջն էր: Հասասա կարելի է ասել, որ նա, եթէ ունենար ապրուստի միջոց, բնաւ չէր ցանկանալ յոգնեցնել իր ուղեղը զանազան հաշիւներով. հարիւրաւոր օրինակները մի ամսում կը սպառէր, ձրիաբար բաժանելով իր ընկերներին, ծանօթների մէջ և ուրիշ շրջաններում: Պօէզիան նորա աչքում աստուածուհին էր: Միթէ վայել է բանաստեղծին շահագործել այդ աստուածուհին? Բայց կարիքը սովորցրեց նորան ուրիշ կերպ նայել իր ստեղծագործութեան վրայ.

բարոյական վարձատրութիւնը մի կողմ, ինչու արհամարել նիւթական վարձատրութիւնը?

Եւ ահա մէջտեղ եկաւ հաշիւը. քանի տպագրական էջերից կը լինի բազկացած գիրքը? Ինչ գիրքով տպւի լաւ է? Ինչքան ծախս կը գնայ ժողովածուի վրայ? Ինչ նշանակել գինը? Որքան օգուտ կ'ունենայ, եթէ տպելու լինի 1200 օրինակ?...

Նա անծանօթ էր հրատարակչական գործին. հարկաւոր էր ունենալ ճիշտ և հիմնաւոր տեղեկութիւններ: Այդ նպատակով նա սկսեց ել ու մուտ անել գանազան տպարաններ, ուր խօսակցութիւն էր ունենում կառավարիչների հետ պայմանների մասին, խանութներ, ուր գանազան տեսակ թղթերի գինն էր հարցնում, փորձառու մարդկանց էր դիմում՝ խորհուրդներ լսելու համար:

Այս բոլորը շատ դեղեցիկ և շատ սիրուն: Գիրքը մի օր լոյս կը տեսնի, նա մի քանի հատ շքեղ կազմել կը տայ, բարեկամներին կ'ընծայէ, լրագիրները մի բերան կը գովեն հեղինակին և նոր բանաստեղծի երևալը կը շնորհաւորեն, ընթերցասէր հասարակութիւնը ագահութեամբ կը ապառէ բոլոր օրինակները, նորա անունը կը թնդայ ամենուրեք, և Ոսկերչեանը կը փառաւորւի ու կը լիանայ: Կուշտ փորով և բեխերը սրած ման կը գայ, նախանձողների լեզուն կը պապանձւի, և ամենքը կ'իմանան վերջապէս, թէ ով է Արտաշէս Ոսկերչեանը:

Այսպիսի յոյսերով էր վառւած մեր բանաստեղծը, երբ կազմած տետրակի մէջ կամենում էր արտագրել իր տոանաւորները: Բայց ինչպէս դասաւորել? Ըստ տարիների թէ ըստ համանման մոտիւների? Նա մտածեց և ընտրեց երկրորդը, այնպէս որ տարբեր բաժիններ պիտի կազմէին սիրոյ երգերը, բնութեան նկարագրութիւնները, հասարակական տենդենցիա պարունակող տոանաւորները: Մի մասը արդէն արտագրւած էր: Բայց յետոյ նորա



խելքը մտաւ Ֆալչեանի տւած խորհուրդը: Նա ասաց, թէ՝ ինչպէս լեռնադաշտի գոյնզգոյն ծաղիկների մէջ չկայ մտացածին դասաւորութիւն, այնպէս էլ բանաստեղծութիւնները աւելի լաւ տպաւորութիւն կը գործեն, եթէ, գոյնզգոյն ծաղիկների պէս, ցրիւ եկած լինեն գրքի մէջ: Ոսկերչեանը էլ երկար չմտածեց: Գնեց մի նոր տետրակ և սկսեց նորից արտագրել:

Գրում էր օրինակելի խնամքով, վերնագիրները համարեա նկարում էր: Առաջին երեսի վրայ շատ գեղեցիկ դուրս բերեց հետեւեալը. «Արտաշէս Ոսկերչեան. Բանաստեղծութիւնները. Թիֆլիս»:

Չմոռացաւ նա և մի յարմար բնաբան իւր գրքի համար: Դա Նադսոնի բանաստեղծութիւնից այն հատւածն էր, որ սկսւում է այսպէս. „Пусть пѣснь твоя кипитъ огнемъ негодованія". Երբ արտագրութիւնը բոլորովին վերջացած էր, նա տարաւ ձեռագիրը և յանձնեց գրաքննիչին:

Այո, այս բոլորը շատ սիրուն է: Բայց գիրքը տպելու համար Ոսկերչեանին երկու հարիւր մանէթի չափ փող է հարկաւոր. որտեղից պիտի ճարի?

Նա յոյսը դրել էր բաժանորդագրութեան վրայ և կարծում էր, թէ այդ միջոցով կարող է ձեռք բերել անհրաժեշտ գումարը: Տարածեց ծանօթների մէջ բաժանորդաթերթեր: Մի-մի օրինակ գրւում էին՝ ոմանք՝ դրւած համակրութիւնից, որ տածում էին դէպի ապագայ խոստացող բանաստեղծը, միւսները՝ խղճալով: Գաղթական Զաւիկեանը պոստով ուղարկեց նորան տասը մանեթի, որ քսան օրինակի դին էր:

Անցաւ մի ամիս: Արդէն ստացել էր գրաքննիչից թոյլտւութիւն: Մնում էր միայն ձեռագիրը յանձնել տպարանին:

Ոսկերչեանը կամեցաւ վերահասու լինել բաժանոր-

դագրութեան հետևանքին և ում յանձնել էր, ետ պահանջեց բաժանորդաթերթերը։ Բայց աւա՜ղ. երբ նա հաշուեց, տեսաւ, որ ժողովւած փողի քանակութիւնը վաթսուն մանէթ է միայն։ Գոնէ կէսը հաւաքւած լինէր. ձեռագիրը կը տար շարելու և ապա հանգիստ սրտով հոգ կը տանէր մնացած կէսի մասին։ Բայց կար և մի ուրիշ ելք։ Երկու դասից նա ստանում էր ամիսը քսան և հինգ ռուբլի։ Եւ ահա նա աչքը տնկեց այդ փողի վրայ։ Նա մտածեց, որ, եթէ գոնէ կէսը կարողանայ ետ գցել, մի քանի ամսում բաւական նշանաւոր գումար խնայւած կը լինի գործի համար։ Վճռեց ու սկսեց ապրել ժլատի պէս։ Ճաշարանում նորա երեսը ամեն օր չէին տեսնում։ Իսկ երբ գնում էր, ուտում էր միայն մի տեսակը։ Թէյը ածում էր թէյամանի մէջ զգուշութեամբ, որպէս զի աւելի չլինի, քան հարկաւոր է երկու բաժակի համար։ Ընթրիք չէր անում։ Գիշերը, թէկուզ մի ժամով էլ հեռանար կացարանից, պիտի հանգցնէր ճրագը և յետոյ դուրս գար։ Փորձեց թողնել ծխախոտը—չեղաւ։ Գինի կամ գարեջուր թոյլ էր տալիս իրան խմել շատ սակաւ։ Շորը մաշւում էր և չէր նորոգւում։ Նա ինքը ծիծաղում էր իւր ապրուստի վրայ, ասում էր կատակով, թէ դարձել է Պլիւշկին։ Բայց հաւատացած էր, որ այս ձևի կենցաղը մազի չափ էլ չի փոխիլ բնաւորութիւնը, քանի որ այս բոլորը ժամանակաւոր բան է։

Երկու ամսից յետոյ Ոսկերչեանի ձեռքին հարիւր մանէթից աւելի փող կը լինէր, որովհետև միաժամանակ առաջ էր տանում և բաժանորդագրութիւնը։ Էլ չսպասեց. տարաւ ձեռագիրը և յանձնեց տպարանին։ Երբ ձեռքերը շփելով ուրախ-ուրախ դուրս էր գալիս այնտեղից, հոգոցով դուրս թռաւ բերնից հետևեալ բացականչութիւնը.

—Վերջապէս մի հոգսից պրծայ!



Այնուհետև նա սկսեց մաշել տպարանի շեմքը։ Օր չէր անցնիլ, որ նա չմտնէր այնտեղ։ Գրաշարը ցոյց տւեց նորան, թէ ինչ ձևով պէտք է կատարել սրբագրութիւնը։ Թերթերը բերում էր տուն և ուշադիր ջանասիրութեամբ ուղղում սխալները։ Պատահում էր, որ նա բանաստեղծութիւնը կարդալու ժամանակ, ոգևորւում էր և, փոխանակ սրբագրութիւն կատարելու, սկսում էր արտասանել դեկլամացիայով, ինչպէս դերասանը արտասանում է բեմից։

Գործը առաջ էր գնում։

Արդէն լրագիրների մէջ սկսել էին երևալ Ոսկերչեանի յայտարարութիւնները գրքի մասին. «Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի «Բանաստեղծութիւններ» —Արտաշէս Ոսկերչեանի։ Գինն է 50 կոպէկ»։ Վաղօրօք բաժանորդ գրւել ցանկացողները պէտք է դիմեն իրան հեղինակին».—հասցէն էլ ի հարկէ որոշւած էր։

Թէև գրքի տպագրութիւնը վերջանալու վրայ էր, բայց Ոսկերչեանը սաստիկ անհանգիստ էր։ Նա գիտէր, որ, մինչև տպարանի հետ հաշիւները չմաքրի, գրքերը բաց չեն թողնելու։ Այդպէս էին պայմանաւորւած։ Հարկաւոր էր մի ելք գտնել։ Նա դիմեց փոխառութեան։ Խնդրեց մէկից, միւսից. բայց որը մերժեց, որը տւեց շատ չնչին բան։ Մնաց ուրեմն Գարեգինին դիմել։ Ուղարկեց նորան մի թախանձալից նամակ, որով աղաչում էր նորանից լրացնել պակասը (քառասուն ռուբլի) և իւր բարեկամին դժւար դրութիւնից ազատել. նա խոստանում էր միևնոյն ժամանակ, գրքերը ծախելուց յետոյ, անմիջապէս վերադարձնել ստացած գումարը։ Շուտով եկաւ նամակի պատասխանը, և Ոսկերչեանը միամտեց։

«Բանաստեղծութիւնները» վերջապէս լոյս տեսան։ Ո՛րքան բախտաւոր զգաց նա իրան այն րոպէին, երբ մի օր, կազմարարի խանութը մտնելով, տեսաւ իւր առջև

գրքի օրինակները իրար վրայ դարսած, մաքուր ու դողորիկ հատորներ! Աչքերը փայլեցին ու մեծացան, կրակ վառուեց բիբերի մէջ։ Մանկան երջանիկ ժպիտով նա վրայ պրծաւ գրքերի մօտ. վերցրեց մէկը, միւսը, երրորդը. բոլորը իրար նման, ինչպէս աղբիւրի ջրի կաթիլները։ Թերթել սկսեց, կարդաց մի քանիսը ոտանաւորներից, որոնց, Աստծուն է յայտնի, թէ քանիերորդ անգամն էր կարդում։ Մի անգամ էլ աչքի տակովն անց կացրեց վրիպակների ցանկը, որոնք, չնայած ամենազգոյշ կատարած սրբագրութեան, այնուամենայնիւ խուսափել էին նորա աչքից։

Տպարանի և կազմարարի հետ բոլոր հաշիւները վերջացնելուց յետոյ, նա մշակ կանչեց, շալակը տւեց գրքերի ահագին հակը և ուղևորուեց դէպի իւր բնակարանը։ Առատ վարձատրեց բեռնակրին, որը «չէն կենաս» ասաց և ամեն բարիք մաղթեց երիտասարդին ու գնաց։

Ոսկերչեանը նստեց սեղանի մօտ, դարսեց իւր առաջ իւր գրքերից մի տասը օրինակ և իւրաքանչիւրի երկրորդ կազմի վրայ սկսեց մակագրել «ընկերական» և «բարեկամական» նւէրներ զանազան անձանց։ Գարեգին Ջաուիկեանի համար վճռեց պատրաստել մի օրինակ՝ փառակազմ և ոսկետառ։ Մի-մի օրինակ նա շտապեց հասցնել Թիֆլիսում եղած բոլոր խմբագրութիւններին։

Այդ ամբողջ օրը նա գերազանց սրամտրութեան մէջ էր. սուլում, երգում էր, անց ու դարձ էր անում, երևակայութիւններ անելով, նստում կամ պառկում էր մահճակալի վրայ՝ դարձնալ երևակայելու համար։

Փառքի տենչանքը նորից զարթել էր նորա հոգում և, իւր ցնորքներով հեռու-հեռու տարուած, ինչեր ասես, չէր երազում! Անցեալի դառը փորձը ղեռ նս խելքի չէր բերել նորան։ Կարծես մինչև անգամ մոռացել էր, թէ որքան անխիղճ կերպով, ինչպիսի մեծ սրամտրութեամբ



խորտակեցին նորա առաջին յոյսերը։ Այն դեռ քիչ էր։ Հարկաւոր էր մի աւելի ծանր, աւելի անգութ հարուած, որպէս զի նա կարգին սթափուէր և աշխարհիս բաները լաւ ճանաչէր։

Բայց այս էլ պէտք է ասել։ Երբեմն նորա դէմքի ինքնագոհ և խնդալի արտայայտութիւնը փոխւում, տեղի էր տալիս լուրջ, նոյն իսկ մռայլ թախծութեան. յօնքերը մօտենում էին իրար, և ճակատի վրայ ծալւում էին կնճիռները։ Եւ այդ րոպէներին անցնում էր նորա մտքով. «Ինչ կը լինի, եթէ իմ այս գրականական դեբիւտն էլ նոյն այն թշուառ վիճակին ենթարկւի, որին ենթարկւեց իմ բեմական չարաբաստիկ դեբիւտը?» Այս խորհրդածութիւնը սարսուռ էր բերում նորա վրայ, և նա, գլուխը սեղմելով, կարծես խեղդել էր կամենում այդ միտքը ուղեղի մէջ։

## XXI

Այն գրքոյկը, որ հրատարակեց Ոսկերչեանը, բաղկացած էր մօտ վաթսուն ոտանաւորներից։ Սոցա ուղղութեան և մոտիւներին մասամբ ծանօթ պիտի լինի իմ ուշիմ ընթերցողը։ Ոչ բոլորը, ի հարկէ, միևնոյն արժանաւորութիւնը ունէին։ Նոցա միջից կարելի էր ընտրել 12—15 հատ բաւական յաջող բանաստեղծութիւններ։ Ինչպէս էք հաւանում, օրինակ, հետևեալը, որ ես կը բերեմ ամբողջապէս? Վերնագրի տեղ մենք կարդում ենք ահա այս տողը. «Ընէր մեր մեծ դերասան Աղամեանին»։

Բացւեց վարագոյր.։. Եւ բեմի վերայ,
Ուր հազարաւոր գամւած են աչքեր,
Շուտով գլուխիկոր պիտի երևայ
Վըսեմ Համլետի սըգաւոր պատկեր։
Ա՛խ, հէգ գոյութեան անվերջ հոգսերում

Մարեցին ազնիւ մեր զգացումներ.
Ուրախ անցեալը—երազ է թւում.
Կորան, չըքացան սուրբ խղճալներ!...
Բայց վայրենացած և բիրտ սրտերին
Հարկաւոր է ձայն մարգարէական,
Որպէս զի փափկած՝ ըսթափւեն կրկին
Եւ իրանց անարգ անկումը ողբան!

---

Տո՛ւր արա, արտիստ. եղիր մեզ համար
Մի Նոր Պրոմեթեւս! սառ դիակներին
Ներշընչիր կեանքի սուրբ հուր բոցավառ,
Երկնքի տենչանքով վառիր մեր հոգին!
Խօսիր. կըրակոտ քո սրտի խորքից
Թո՛ղ հընչի սիրոյ լալագին գոչիւն,
Մեզ յարուցանէ մեր թըմրութիւնից,
Ինչպէս քընածին՝ ամպերի ճայթիւն!
Խօսիր—և դիւթիչ ձայնըդ թո՛ղ դողայ
Մեր հոգու բոլոր լարերի վերայ!
Թո՛ղ ողջ թատրոնը՝ մի հոգի դարձած՝
Հալւի մոմի պէս... Թո՛ղ լայ, հեծկլտայ,
Եւ արտասուքը, անձրևի նըման,
Բոլոր չորս կողմից գետի պէս տեղայ!...

Միջակ բաներ էլ շատ կային, որոնց կարելի էր կարդալ և անցնել առանց ձանձրոյթ զգալու. եթէ ոչ ներքին իմաստով, նոքա գրաւում էին գոնէ իրանց պարզ և պատկերաւոր ոճով և տաղաչափութեան սահունութեամբ։ Բայց կային և այնպիսիները, որոնք, բացի գրքի երեսների թիւը աւելացնելուց, ուրիշ ոչ մի նշանակութիւն չունէին։ Եթէ այդ բալլադը չլինէր ժողովածուի մէջ, գիրքը ոչ միայն ոչինչ չէր կորցնի, այլ դեռ մի բան կ'վաստակէր։ Այդ թոյլ, շաբլոնական մոտիւները, որոնք



նման էին աշակերտական վարժութիւնների, միայն վատ ծառայութիւն կարող էին մատուցանել հեղինակին։ Նոքա շատ հեշտ կարող էին ծառայել իբր զէնք այն պարոնների ձեռքին, որոնց համար դատարկ բան է մի լաւ գիրք տեղն ու տեղը սպանել։

Ոսկերչեանի բախտից էր դա թէ անբախտութիւնից, բոլոր պարբերական թերթերը ուշադրութեան արժանացրին նոր լոյս տեսած ժողովածուն և շտապեցին իրանց կարծիքները յայտնել «Բանաստեղծութիւնների» մասին։

Նախ և առաջ խօսեց «Ժամանակը»։ Գրախօսութեան տակ ստորագրւած էր Ս., և ամենքի համար պարզ էր, որ դա Սեւումեանն է։ Հեղինակի գլխին Թերսիտէսի հայհոյանք թափելուց յետոյ, քննադատը կարծես խղճի խայթոց է զգում, որը թելադրում է նորան հետևեալ տողերն ուղղելու «ինքնակոչ» բանաստեղծին.

«Սակայն, արդարութիւնը չուրանալու համար, մենք պէտք է խոստովանենք, որ պ. Ոսկերչեանի ժողովածուի մէջ մենք գտանք մի քանի սիրուն, մինչև անգամ շատ սիրուն ոտանաւորներ. բայց, դժբախտաբար, այդպիսիների թիւը այնքան քիչ է, որ դիւրաւ կորչում են բազմաթիւ ցնդաբանութիւնների կոյտի մէջ։ Եւ այդ, ի հարկէ, շատ բնական է։ Իւրաքանչիւր գրող, նոյն իսկ ոչ գրող, որ իւր ջահել ժամանակ յանգեր շինելու վրայ եղունգներ է կրծոտել, եթէ համբերութիւն ունենայ շարադրել վաթսուն ոտանաւոր, այդ պատկառելի քանակութեան մէջ անշուշտ կը գտնէին մի քանիսը, որոնք ոչ պակաս յաջողւած կը լինէին, քան թէ մեր պատանի հեղինակի ամենաընտիր տաղերը»։

Դորանից յետոյ քննադատը սկսում է իւր լեզւի դասը, որ, առանց խնդրելու որևէ մէկի կողմից, այնքան սիրում էին և այժմ էլ սիրում են տալ հայկաբան և

ոչ հայկաբան մատենախօսները, մամուլից դուրս և մամուլի մէջ՝ սկսած Կովկասից մինչև Իտալիա և Պոլսից մինչև Վիէննա. դասեր եմ ասում, որոնցով մեզ կամենում են սովորցնել, թէ փոխանակ ասելու «ինտելլիգենտ» պէտք է ասել «հասկացող». թէ օտարաբանութիւն է ասել «ծանօթ լինել ում հետ», այլ պէտք է ասել «ծանօթ լինել ումի». թէ հայերէն չէ «անդորրութիւն էր բուրում». թէ սխալ է ասել «գրական», այլ պէտք է ասել «գրականական». կամ հետևեալ քմահաճութիւնների նման բաներ. «ինչո՞ւ բարևել և ոչ ողջունել» և այլն և այլն և այլն:

Համեմատաբար աւելի մեղմ էր «Մանկական թերթի» կարծիքը: Սա էլ հաւանել էր միայն այն ոտանաւորները, որոնք տպւած են եղել այդ թերթի մէջ: Իսկ մնացածը «չարժէր տպել»: Բացի այդ, գրախօսը ափսոսում է, որ ժողովածուի մէջ, անհասկանալի պատճառով, տեղ չեն գտել մի քանի շատ գեղեցիկ մանկական ոտանաւորներ, որոնք լոյս են տեսել «Մանկական թերթի» մէջ: Վերջումը մի առանձին ինքնագոհութեամբ նա յայտնում է իւր հետևեալ գիւտը. «պ. Ոսկերչեանի բանաստեղծութիւններից շատերը գրւած են նմանողութեամբ օտար հեղինակների». և, իբր ապացոյց, բերում է մի օրինակ, որը, սակայն, ջահել բանաստեղծի ինքնուրոյն գործերից մէկն էր:

«Ծառազայթի» մէջ և երևաց չարաբաստիկ գրքի քննադատութիւնը, որը պատկանում էր Ազատեանի գրչին: Յօդւածի սկիզբը մի շինծու ողբ էր բանաստեղծութեան անկման մասին: «Վերջին ժամանակներս,—սկսում էր այնտեղ,—սկսել են երևալ մեր գրականութեան մէջ զանազան «բանաստեղծներ» և «բանաստեղծութիւններ»: Բայց երանի այդ կոչման արժանի լինէին դրանք: Մի տեսակ ցաւ է մտել մեր մէջ, մի ախտ, որով վարակւած երիտասարդը վճռում է անպատճառ բանաստեղծ դառնալ: Այդ ախտի անունն է քանաստեղծամոլութիւն: Բայց այդ ողորմելիները չգիտեն մի շատ հասարակ ճշմարտութիւն, այն է՝ եթէ չկայ աւիւն, բոլոր ջանքերը աւելորդ են: Սակայն ուր. մենք աւելին կ'ասենք: Բանաստեղծական աւիւնն էլ բաւական չէ մեր օրերում բանաստեղծ հռչակւելու համար: Մեր դարը և մանաւանդ մեր սերունդը աւելի խստապահանջ է: Անցան այն երանելի ժամանակները, երբ՝ կարմիր վարդ, պայծառ գարուն և քաղցր սէր երգելով՝ աճում բազմանում էին սալոնական պօէտները և քնքոյշ տիկինների ու նազելի օրիորդների ուշադրութեան արժանանում: Այժմ ուրիշ բան է պահանջւում: Երգեցէք մեզ համար ժողովրդի ցաւերը, հասարակական մտահոգները շաւացրէք և, եթէ ձեր մտքերը կամենում էք անպատճառ չափական ձևերով և յանգերով արտայայտել, յայտնեցէք, ինչպէս կ'ուզէք, միայն, մի սէր Աստուծոյ, ոչ ձեր վարդն ենք ուզում, ոչ ձեր գարունը, այլ լուսամիտ առողջ գաղափարներ տւէք մեզ: Ահա թէ ինչ է պահանջւում ժամանակակից բանաստեղծից...

«Նորերս լոյս է տեսել «Հանաստեղծութիւններ» վերնագրով մի գիրք, որի հեղինակն է մի ոմն Արտաշէս Ոսկերչեան: Սա մի ժողովածու է մի քանի յաչդող և բազմաթիւ անյաջող և անպիտան ոտանաւորների: Ուշադրութեամբ թերթեցէք գրքոյկը և կը տեսնէք, որ համարեա ամեն մի երեսի վրայ վարդեր են բուրում, սոխակներ են երգում, և սէրը երկրային դրախտ է խոստանում: Եթէ ժողովածուի մէջ չլինէին մի չորս-հինգ հատ ընտիր երգեր, որոնց մէջ կայ և զգացմունք և միտք, այն ժամանակ գրքոյկը առանց խղճահարութեան կարելի էր դէն շպրտել, իբր անպէտք ապրանք: Հետևապէս հարց է ծագում. ինչի՞ համար և ո՞ւմ համար է հրատարակել այս գիրքը: Ես չեմ հասկանում: Ով կարող է ասել, թէղ նա

պատասխանի։ Գուցէ պ. Ոսկերչեանը փութաք է երազել բայց փառքը ամեն մէկին չեն տալիս։ Գուցէ հեղինակը յոյս է ունեցել, թէ գիրքը ապրուստի միջոց կը տայ. բայց ամեն մի գիրք ապրուստի միջոց չէ տալիս, որովհետև հասարակութիւնը յիմար չէ, որ, ինչ ձեռքը տաս, փողով առնի։ Եթէ լրագրի էջերը չափսոսայի, ես կարող էի իմ ասածները փաստերով ապացուցանել։ Բայց այնուամենայնիւ ես կը բերեմ ներքև մի նմուշ՝ ընթերցողին ճաշակ տալու համար պ. Ոսկերչեանի «բանաստեղծութիւնների» մասին։ Ահա բարեհաճեցէք կարդալ հեռևեալ տողերը, որոնք գրւած են «յուսահատութեան րոպէին», ինչպէս այդ երևում է վերնագրից.

Ա՛խ, իմ դաժան վըշտի ձեռքին
Սիրտըս ինչեր չը տեսաւ.
Կորաւ աշխոյժ, թարմ հասակըս
Դեռ չը ծաղկած՝ խամրեցաւ։

—

Կարճ է կեանքը, և վըշտիցը
Նա մաշւում է, կէս լինում.
Ուրախութեան լի բաժակը
Անձեռնամուխ է մընում։

«Ուրեմն ինչ պէտք է անել վշտից ազատւելու համար։ Լսեցէք բանաստեղծին.

Էլ ճար չը կայ. արի, ընկեր,
Մէջ տեղ դընենք լաւ գինի.
Խըմենք, երգենք և պար բռնենք —
Ինչ լինում է, թո՛ղ լինի!...

«Համաձայնեցէք ինձ հետ, պ. հեղինակ, որ այս տոնաւաճառի մէջ ոչ մի պօէզիա չկայ։ Սա բանաստեղծութիւն չէ, այլ արբեցողի վայրենի աղաղակ։



Այսքանն էլ բաւական էր, որպէս զի Ոսկերչեանի նման դիւրաբեկ երիտասարդը բոլորովին վհատեր և ընկճէր։ Բայց ամեն բան սորանով չվերջացաւ։ Փիլիսոփայ ժամանակից յետոյ լոյս տեսաւ «Հոսանք» կիսամեայ հանդէսը, որի խմբագիր-հրատարակիչն էր «ժամանակ» լրագրի խմբագրութեան ըմբռնուացած հրեշտակներից մէկը։ Ահա այս հանդիսի մէջ, ի միջի այլոց, կար նաև Ոսկերչեանի բանաստեղծութիւնների քննադատութիւնը, յօդուած մի անյայտ պարոնի։ Սա իր տեսակի մէջ եղած-ների գլուխ-գործոցն էր։

Ես այստեղ արտագրում եմ այդ յօդուածը բառ առ բառ։

«Դժբախտ օրերի հասանք», ասւած էր այնտեղ. «իւրաքանչիւր համբակ իրան գրող է երևակայում և ամբողջ մաքուր ոտներով կոխկըրտում է գրականական ասպարէզը, և այսպիսով մեծ վնաս է հասնում մեր գրականութեան, որովհետև սա վիճակում է այս տեսակ գրչակներով։ Բայց ցաւօք սրտի պէտք է խոստովանել, որ մինչև օրս չէր լսւում քննադատի զօրեղ ձայն, որ սարսուռ բերէր այսպիսի մոլորւածների վրայ և խելքի բերէր այդ մանկամիտ տղաներին, ինչպէս այդ անում են օտարազգի քննադատները»։

Օգուտ քաղելով հանգամանքից, յօդուածի հեղինակը ընթերցողի աչքի առաջ շարում է մի քանի ռուս ու եւրոպական կրիտիկոսների անուններ և յետոյ շարունակում է.

«Մեր քննադատութիւնը, կարելի է ասել, դեռ ևս օրօրոցի մէջ է։ Շատ անգամ նա ոչ միայն չէ կարողանում բարձր լինել իր քննադատութեան առարկայից, այլ նոյն իսկ ստոր է լինում նրանից։ Եթէ կ'ուզէք իմանալ, իսկական քննադատութիւն սկի չկայ էլ, մինչև մի լուրջ քննադատի մէջ մեծ պահանջ է զգաց-

ռում: Անաչառութիւնը և արդարասիրութիւնը, միացած խելքի և ճաշակի հետ, կազմում են իսկական քննադատի անպայման յատկանիշները, որոնցից զուրկ են մեր quasi քննադատները, որովհետև սրանք գրում են և կողմնապահութեամբ: Կրիտիկայի բացակայութիւնը մեր գրականութեան դատարկ տեղերից մէկն է: Մենք մեզ համար նպատակ ենք դրել, որքան, ի հարկէ, թոյլ կը տան մեր համեստ ոյժերը, այդ պակասը լրացնել»:

Այս յառաջաբանն էր: Դորանից յետոյ քննադատը անցնում է Ոսկերչեանի գրքի տեսութեան, և ընթերցողը զգում է, որ նորա ատամները սկսեցին կրճտալ: Բայց նա առաջ անհրաժեշտ է համարում մի քանի կենսագրական տեղեկութիւններ հաղորդել հեղինակի մասին: Եւ ահա ինչ է ասում:

«Պր. Արտաշէս Ոսկերչեանը մի դեւահաս պատանի է, երեկւայ աշակերտ, որին, ինչպէս երևում է, Բայրնի դափնիքը թոյլ չի տւել, որ նոյն իսկ մէջնակարգ ուսումը աւարտի: Դա նոյն այն Ոսկերչեանն է, որը անցեալ տարի դերասանական խմբի մէջ էր, դուրս էր գալիս զանազան դերերի մէջ, և, թէ ինչպէս էր կատարում իւր դերերը, այդ կ'իմանան նրանք, որոնք հետևում էին մեր տաղանդաւոր հրապարակախօս պ. Սևումեանի բեցենզիաներին, որոնք երևում էին մի... լրագրում»:

«Աչքի առաջ ունենալով մեր հեղինակի ջահել հասակը,—շարունակում է նա,—մենք կ'ուզէինք նրան խնայել, բայց ճշմարտութիւնը—նախ և առաջ:

«Բանաստեղծութեան մէջ նախ և առաջ մենք փընտռում ենք գողտրիկ տաղաչափութիւն, կանոնաւոր և ճկուն լեզու, պատկերաւոր ոճ: Բայց պ. Ոսկերչեանի ոտանաւորները այս պահանջներից ոչ մէկին բաւարարութիւն չեն տալիս: Զէ՞ որ դուք, պ. հեղինակ, որ յաւակնութիւն ունիք «բանաստեղծ» դառնալու, ուսումնարանում սովորած պիտի լինիք տաղաչափութեան կանոնները: Ինչո՞ւ ուրեմն չէք օգտւել ձեր սովորածից: Երևի դուք կարծել էք, թէ ոտանաւոր գրելու համար բաւական է բառերը շարել իրար եւևիջ, տողերը բաժանել հաւասար վանկերի, յանգերը դրսեել—և «լմնցաւ»: Ո՛չ, դրա համար երաժշտական նուրբ լսողութիւն էլ հարկաւոր է ունենալ: Ինչի՞ նման են, օրինակ, հետևեալ տողերը.

«Ինձ թողիր միայնակ, հեռացար
Յաւիտենական քո օթևանը.
Ա՛խ, հայր իմ, հայր *, երանի իմանամ,
Որտեղ է շնչում քո ուրւականը:

Խաւարեց, սևացաւ որբիդ կեանքը,
Սիրոս մաշեցին ծանր հոգսերը.
Հայր*, լսո՞ւմ ես իմ հառաչանքը.
Հայր*, տեսնո՞ւմ ես իմ արցունքները *)»...

«Իսկ լեզուն, լեզուն... Դա այն փորձաքարն է, որի վրայից անցնելիս շատերն են սայթաքում և վայր ընկնում: Նոյն իսկ ջերմ զգացմունքները և յաջող մտքերը չեն օգնիլ, եթէ բանաստեղծի լեզուն վատ է: Էլ ինչ

---

*) Ոսկերչեանի գրքի մէջ այս երկու տունը գրւած է այսպէս.

Ինձ թողիր մենակ և դու հեռացար
Յաւիտենական քո օթևանը.
Ա՛խ, հայր իմ, երնէկ իմանամ,
Որտեղ է չրջում քո ուրւականը:

—

Խաւարեց, սևացաւ որբիկիդ կեանքը,
Սիրտըս մաշեցին ծանրը հոգսերը.
Հայր իմ, լսո՞ւմ ես իմ հառաչանքը?
Հայր իմ, տեսնո՞ւմ ես իմ արցունքները?...

բանաստեղծութիւն, երբ ամեն մի քայլում մենք պիտի հանդիպենք այնպիսի տգեղ բառերի, որոնցից մինչև անգամ արձակ գրողները աշխատում են ծողոպրտել, ուր միայն պօէտները։ Գիտէք, ընթերցող, ինչպիսի բառեր են պատահում պ. Ոսկերչեանի ոտանաւորների մէջ. «ճամարտակ», «նկրտում», «ափեղդիեղ», «աղջամուղջ» և այլն։

«Եթէ այս բոլոր արժանաւորութիւններից միանգամայն զուրկ են մեր «բանաստեղծի» երգերը, գոնէ իրանց խոր զգացմունքներով և հարուստ մտքերով իրաւունք ունենայինն պարծենալու։ Զգացմունքները թոնդ են, բայց ոչ խոր և ոչ անկեղծ։ Ես սարսափում եմ, օրինակ, մի այսպիսի հրաբխային զգացմունքից.

«Իմ յոյզերը քեզ օտար են,
Սիրտս լաւա է ժայթքում.
Սէրըս, յոյսս բոցավառ են.
Ես այրւում եմ, կըրակւում!»...

«Թողնենք այրի, ինչքան քէֆը կը տայ, իսկ մենք շարունակենք։ Սէրը քաղցր զգացմունք է. նա ոչ այրում է, ոչ կրակում։ Այս բոլորը դեռ մի կողմ։ Բայց ինչ կ'ասէք այն ջահել երիտասարդին, որը դեռ նոր է սկսում ապրել, աշխարհիս բարւոյ և չարի մասին հազիւ մի աղօտ հասկացողութիւն ունի և յամենայն դէպս այնքան նեղութիւններ քաշած չի լինիլ կեանքումը, որ իրան թոյլ տայ յոռետես ձևանալ և à la Շոպենհաուէր հետեւեալ մտքերը վիժել.

«Աշխարհն ինձ համար դարձաւ օձի օղ։
Նա սեղմում է ինձ, նա ինձ խեղդում է...
Հոգուս տիրել է մահւան ահ ու դող.
Ամբողջ մարմինըս փշաքաղւում է!»

«Դուք չէք զգում, ընթերցող, թէ որքան կեղծ են հնչում այս խօսքերը։ Ինքը հազիւ քսան տարեկան, և



աշխարհը նրա համար դարձել է արդէն օձի օղ, որ նրա վզից փաթաթւած՝ սեղմում խեղդում է։ Հօ տեսնում էք։

«Զարմէր, ճշմարիտ, երկար կանգ առնել այս գրքի վրայ։ Եթէ մենք ուշադրութեան արժանացրինք նրան, դրա պատճառը այն է, որ մենք վճռել ենք մի անգամից վերջ դնել գրականական այն անմիտ հոսանքին, որ սկսել է վերջին ժամանակներս «բանաստեղծութեան» անունով և միւս կողմից ըստ ամենայնի խորհուրդ տալ պատանի հեղինակին, որ նա ձեռք վերցնի ոտանաւորներ գրելուց և ուրիշ բանի մէջ որոնի իւր կոչումը, եթէ կամենում է օգտաւէտ լինել թէ իրան թէ հասարակութեան։

«Հա, մենք մոռացանք ասել, որ գիրքը արտաքուստ լաւ տպաւորութիւն է գործում՝ թուղթը ընտիր, տիպը գեղեցիկ, թէև վատ չի լինիլ, որ պ. Ոսկերչեանը մի քիչ սովորէր հայերէնի ուղղագրութեան կանոնները, որովհետև սակաւ չեն այսպիսի սխալներ. «ասպարեզ» – եչով, «խօստումն»—օյով, «բախտ *)» և այլն։ Գրքի գինը 50 կոպէկ է, մեզ թանկ է թւում։

Վերև բերւած յօդւածները խլացուցիչ հարւածների նշանակութիւն ունեցան Ոսկերչեանի համար, և նորա սրտի մէջ չորս վէրք բացւեց, մէկը միւսից աւելի խոր։ Այն օրերը, երբ այդ յօդւածները երեւում էին, նորա համար խաչելութեան օրեր էին։ Նա փակւում, առանձնանում էր, ինչպէս վիրաւոր գազան, հառաչում և անքնում էր, ինչպէս ծանր հիւանդ։ Նա ցնցւում, կուչ ու ձիգ էր լինում իւր սենեակում, ինչպէս թունաւորւած մուկը իւր բնի մէջ։ Մի հատիկ հայհոյական բառ դուրս չէր թռչում նորա բերնից, որովհետև համապատաս-

*) Վրիպակների ցանկում այդ սխալները նշանակւած էին, բացի վերջինից։

Ծանօթութիւն հեղինակի։

խան խօսք չէր գտնում, որ ասէր և սիրտը հովացնէր։ Գրականական դասատուների կարծիքները սոսկալի էին թւում, աղաւաղումները—զարհուրելի, դասավճիռները —անխիղճ և անարդար։ Նա պատրաստ էր մեծամարտութեան կանչել ամբողջ հայ մամուլը, բայց միևնոյն ժամանակ զգում էր, որ մի այդպիսի հերոսական քայլի համար նա անզօր է, ինչպէս կատաղի տարերքի առաջ։ Նա երևակայում էր, թէ ինչպիսի փոթորիկ կը բարձրանայ իր դէմ։ Նա տեսնում էր իր թուլութիւնը, և հոգին դուրս էր գալիս հոգոցներով և հառաչներով։ Անյաջող սիրոյ վէրքը, բժշկական ֆիասկօն —ոչ մէկը այս հոգոցների կէսը չը խլեց նորա կրծքից։ Միևնոյն է, թէ նորա մէջքը կապտացնէին մտրակներով, ոտներով կոխկրտէին, հողաթաղ անէին և կիսամեռ, կիսակենդան հանէին գերեզմանից...

—Ինձ խեղդեցին, խեղդեցին, Խահակ, ինձ չան պէս սպանեցին! ողբաց նա հեծկլտալով և իրան նետելով Ֆալչեանի դիրկը, երբ սա մի անգամ նորա սենեակը մրցանելով յուսահատ դրութեան մէջ տեսաւ իր ընկերոջը։

## XXII

Կրկին յուսահատութեան և դառն աղքատութեան օրեր եկան Ոսկերչեանի համար։ Ապրուստի միջոց չկար։ Պարտք պարտքի վրայ էր բարդւում։ Գրքերի վաճառումը, որ սկզբում յաջող էր գնում, կանգ առաւ։ Մեղաւոր էր մասամբ ինքը։ Չէր աշխատում, որ գրքերը տարածուեն։ Գրավաճառանոց մտնում էր շատ սակաւ, որովհետև հպարտութիւնը թոյլ չէր տալիս «կոպեկանոց» հաշիւներին համար օրը մի անգամ խանութ մտնել և գրավաճառներին ձանձրացնել։ Բայց և այնպէս, կարիքը սաստիկ էր նորան երբեմն գնալ և վերահասու լինել իր գրքերի վաճառման գործին։



Անբաւարար սնունդը, ամեն տեսակ զրկանքները և, որ գլխաւորն է, բարոյական անգոհութիւնը կամաց կամաց քայքայում էին նորա կազմածքը և առողջութիւնը։

Աղքատութեան և անյաջողութիւնների դրոշմը պարզ երևում էր նորա բոլոր էութեան վրայ։ Մարմնի և հոգեկան ոյժերի բնական աճումը ոչ միայն կանգ էր առել, այլ կարծես նոյն իսկ ետ-ետ էր գնում։

Նորա իւրաքանչիւր խօսքը, որ արտասանում էր զանգատ էր և արտունչ։ Նա ժժգոհ էր ամենքից, մանաւանդ իրանից։ Նա ատում էր իրան իւր թոյլ և բեկուն բնաւորութեան համար։ Այդ զգացմունքը նորա մէջ աւելի մեծանում էր, երբ նա իրան համեմատում էր Սևումեանի, Ազատեանի նման անձանց հետ։ «Այդ մարդիկ, մտածում էր նա, ինչով են ինձանից առաւել? Ոչ աւելի մեծ ուսում ունին, ոչ աւելի ընդունակ են, ոչ աւելի ազնիւ։ Ինչու ուրեմն այդպիսիները միւում են կանդուն, իսկ ես, բարձրանալու փոխարէն, օրըստօրէ ընկնում եմ?...

Այսպէս նա մտածում էր, բայց երբէք չէր կարողանում հասկանալ, թէ ինչումն է կայանում իւր կեանքի ամբողջ տրագիզմը։

Աղքատութիւնը մի կողմ։ Ոսկերչեանը ղուրխ էր և բարոյական մխիթարութիւնից։ Սկզբում, քանի որ նա դեռ նոր էր ոտ գնում գրական ասպարիզի վրայ, նորա մասին խօսում էին ընթերցող հասարակութեան մէջ, նորանով հետաքրքրւում էին։ Այժմ ամենքը սառել էին։ Ոչոք նորա վրայ ուշադրութիւն չէր դարձնում։ Մի խօսքով, Ոսկերչեանը հասել էր այն շրջանին, երբ ամեն մի գրագէտ, առաջի քայլն անելուց յետոյ, մի պահ կանգ է առնում իւր գարգացման ճանապարհի վրայ։ Դա հասարակութեան ծնշող անտարբերութեան և սեփական զգացմունքների տեղատուութեան ժամանակն է։ Այս միջոցին է

կատարւում տաղանդի փորձութիւնը. լռութեան մէջ զօրեղը նոր ոյժ է հաւաքում ապագայ ստեղծագործութեան համար, իսկ թոյլը մոռացւում և ընկնում է վերջնականապէս։

Երբէք Ոսկերչեանը այնքան մենակութիւն չէր քաշել, որքան այս ձմեռ։ Գարեգինը գաւառումն էր, նախկին ընկերներից շատերը համալսարաններում ուսանում էին։ Աշխէնին գրեթէ երբէք չէր տեսնում։ Զառիկեանների տունը այլ ևս հետաքրքրութիւն չէր ներկայացնում։ Իսկ Ցալչեանի թօքախտը գարնան սկզբներում այնչափ սաստկացաւ, որ ազգականներից մէկը համարեա մահւան մահճի մէջ նորան տարաւ հայրենիք։ Ամառը մօտենում էր, և Ոսկերչեանը իրան մխիթարում էր այն մտքով, թէ ահա շուտով կը գայ Գարեգինը, նորան կը պատմի իւր կրած նեղութիւնները և սիրտը կըթեթևանայ։

Բայց մինչ այդ, նորան վիճակւած էր դեռ ևս շատ դժւար օրեր տեսնել։

Մի անգամ իրիկնադէմին նստած էր նա գրավաճառանոցի մօտ նստարանի վրայ։ Երեսին նայողը, եթէ նոյն իսկ անծանօթ լինէր, անշուշտ պիտի մտածէր, որ մի ինչ որ ծանր հոգս կամ ծածուկ վիշտ կորացրել է այդ երիտասարդի գլուխը։

Այդ միջոցին գրախանութից դուրս եկաւ մի երիտասարդ և, նկատելով Ոսկերչեանին, քայլերը ուղղեց դէպի նորա կողմը։ Դա Մոսկւայի համալսարանի ուսանող էր, երկրորդ կուրսի բնագէտ, Ոսկերչեանի նախկին դասընկերներից։ Ինքը միջահասակ, վտիտ և թխադէմ, իւր կտրուկ դիմագծերով և վառվռուն աչքերի արտայայտութեամբ իսկոյն և եթ ակնյայտնի էր կացուցանում իւր տաք և հրապուրող բնաւորութիւնը։ Հագնւած էր մաքուր։ Գլխարկը միայն ուսանողական էր։

Ընկերները միմեանց սիրով բարևեցին, ուսանողը



նստեց, և սկսեցին զրոյց անել։ Վերջինը պատմում էր ուսանողական կեանքից, աշխատելով պարզ նկարագրել նորա բոլոր գրաւիչ կողմերը, պատկառանքով յիշում էր մի քանի պրոֆեսորների անունները և նոցա դասախօսութիւնները գովաբանում, խօսում էր իւր ունեցած հասարակական իդէալներից և ապագայ գործունէութեան ծրագիրներն էր բաց անում խօսակցի առջև։ Ինչ վարդագոյն յոյսեր և որքան ջերմ հաւատ դէպի գիտութիւնը և հրապարակական փրկարար խօսքը!... Բայց միևնոյն ժամանակ ինչ ողբալի հակապատկեր այս երիտասարդ էնթուզիաստի և այն հիասթափւած երիտասարդի մէջ!

Խօսակցութեան առաջին րոպէներում Ոսկերչեանը ուրախ էր կամ գոնէ այդպէս էր ձևանում. բայց քիչ յետոյ ժպիտը դէմքի վրայից հեռացաւ, և յօնքերը իրար մօտեցան։ Նորա բարկութիւնը գալիս էր, որ ընկերը իրանով չէ հետաքրքրւում։ Միթէ նա այնքան ընկել է, որ նորա վիճակը ոչ-ոքի ուշադրութեան այլ ևս չպիտի արժանանայ?

Պատեհ րոպէից օգտւելով, Ոսկերչեանը հարցրեց.

—Այս ինչ գիրք ես գնել?

Բաւարարութիւն տալով այս հարցին, ուսանողը բաց արաւ թղթեայ փաթթոցը և գիրքը ցոյց տւեց նորան։

Ոսկերչեանը առաւ, թերթեց, նայեց սկիզբը և վերջը առանց մի խօսք ասելու վերադարձրեց ընկերոջը։ Քիչ յետոյ միայն ասաց.

—Ես կարծեցի, իմ հեղինակութիւնն ես գնել։ Գիրքը նոյնն է...

—Ինչ հեղինակութիւն? Զարմացած հարցրեց ուսանողը։

—Իմ «Բանաստեղծութիւնները»։ Չէ որ ես տպել եմ?...

—Միթէ? Ես չգիտէի,—ասաց նա, միանգամայն անտարբեր:

—Այնքան քննադատեցին լրագիրները, և դու չգիտես? Դու ուրեմն չէիր հետևում մեր լրագրութեան?

—Ինչպես չէ: Միշտ կարդում էի:

—Զարմանալի է, որ աչքիդ վրիպել են այդ յօդուածները:

—Այո, այո, հիմա, կարծեմ, յիշեցի: Ազատեանն էր քննադատել, այնպես չէ?

—«Ճառագայթի» մէջ Ազատեանն էր գրել, իսկ միւս թերթերում...

—Հա, հիմա յիշում եմ... Բայց ես չէի կարդում: Ինձ առհասարակ պօէզան ամենևին չէ հետաքրքրում:

—Այո?

—Այո:

Երկուսն էլ լռեցին: Ոսկերչեանը, կարծես վիրաւորուած, գլուխը կախեց: Ուսանողը հարկ տեսաւ յայտնելու իր հայեացքը, որ ունէր բանաստեղծութեան մասին:

—Ես սկզբունքով դէմ եմ բանաստեղծութեան,—այսպէս սկսեց նա: Դրականութեան այդ ճիւղը համարում եմ միանգամայն անօգուտ և աւելորդ, և, իմ կարծիքով, նա պիտի վռնտւի դրականութիւնից: Եւ նա արդէն իր վերջին հոգևարքի մէջ է: Միթէ ինքդ չես տեսնում, թէ հիմա Եւրոպայում ծրքան ընկել է պօէզիան? Նա չունի այնտեղ գոնէ մի հատ տաղանդաւոր ներկայացուցիչ: Առաջ էր, որ պօէտներին տասուածացնում էին, իսկ այժմ նոքա համահաւասար են արհամարհած գրչակներին...

—Պօէզիան վերջ չունի, ինչպես մարդկային զգացմունքը չունի վերջ! արտասանեց Ոսկերչեանը այնպիսի եղանակով, կարծես նորա պատիւը վիրաւորեցին: Դու սխալւում ես, սիրելիս: Եւ գիտութեան երկրպագուն ու գեղարւեստի սիրահարը թոյնդ վէճի բռնեցին: Ուսանողը աշխատում էր ստորացնել գեղարւեստը, խլում էր նորանից որ և է կուլտուրական դեր և մարդկային ազգի փրկութիւնը ակնկալում էր գիտութիւնից: Բայց ոչ Պիսարևի գեղարւեստական հայեացքները, ոչ Լոմբրոզոյի «Հանճար և խելագարութիւնը» և ոչ ուրիշ մի առարկութիւն չկարողան խախտել Ոսկերչեանի համոզմունքի յեղնակէտը:

—Պօէզիան,—խօսեց կրկին ուսանողը, որը, ըստ երևութին, ցանկանում էր անպատճառ համոզել խիստ տրամաբանական հիմունքներով, պօէզիան սերտ կապւած է ոգևորութեան հետ. ոգևորութիւնը խելագարութեան արտայայտութիւններից մէկն է. հետևաբար բանաստեղծութիւնը, իբրև հիւանդ հոգու ծնունդ, չպէտք է ունենայ իւր profession de foi'ն: Ես ժխտում եմ այն, ինչ որ չէ նպաստում մարդկային մտքի զարգացման, ինչ որ...

—Աա, խնդրեմ. ինչ ես ուել այս փողպատիկ? հարցում արաւ յանկարծ Ոսկերչեանը, ընդհատելով իւր ընկերոջը և բռնելով նորա շքեղ փողպատի ծայրից, որ զարդարում էր կուրծքը:

Ուսանողը զարմացաւ այս տարօրինակ վարմունքի վրայ, չը հասկացաւ նորա դաւը հեգնութիւնը, որ գրեթէ արհամարանքի էր հաւասար, ներքուստ վիրաւորւած, բայց շինծու ժպիտով պատասխանեց.

—Ձեմ յիշում: ենթադրենք, մի մանէթ եմ ուել: Բայց ինչի համար ես հարցնում?

—Մի մանէթ!... գոչեց Ոսկերչեանը, վերին աստիճանի վրդովմունքը զսպելու անկարող: Մի մանէթ, ասում ես? Իսկ իմ գիրքը—միայն դրա կէսը արժէ!... Մնաս բարով!

Այդ ասելով, նա արագ քայլերով հեռացաւ, թողնելով իւր խօսակցին շւարած դրութեան մէջ: Այս բոլորը

այն աստիճան օտարոտի էր, որ ուսանողը ակամայ մտածեց, մի գուցե Ոսկերչեանի ուղեղը միասեռած է։

Բանը այն է, որ այս հիասթափուած երիտասարդի կասկածամտութիւնը ծայրայեղ աստիճանի էր հասել և դեռ օրէցօր աճում էր։ Ինչպէս հին հիւանդութիւնը, շարունակ կրկնուելով, աւելի և աւելի վտանգաւոր է դառնում, այնպէս և մեր հոգեկան ախտը, պարբերաբար նորոգուելով, աւելի և աւելի մռայլ կերպարանք է ստանում։

Եւ ահա ինչու իւր ընկերոջ անկեղծ խօսքերի մէջ նա տեսաւ եաին նպատակ։ Նորան թւաց, որ ընկերը խնայում էր մի յիսուն կոպէկ տալ իւր դրքին, և այդ ամօթալի ժլատութիւնը քօղարկելու համար էր, որ նա մի արշաւանք էր սկսել պոէզիայի դէմ և բանաստեղծութիւնը հիւանդ հոդու ծնունդ էր հռչակում։

Բայց հանելուկը աւելի կը պարզուի, եթէ ես այստեղ յայտնեմ, որ Ոսկերչեանը այդ ամբողջ օրը քաղցած էր և ընկերոջ տեսնելու րոպէին ինքն իրան մոռացել, որ երեկոյեան անպատճառ հացի և ծխախոտի փող կ'ունենայ։

## XXIII

Ուսանողից բաժանուելուց յետոյ, նա շտապեց դէպի իւր բնակարանը։ Դա մի սենեակ էր, որի համար վճարում էր չորս մանէթ։ Կարելի է երևակայել, թէ ինչպիսի տան մէջ և ինչպիսի սենեակ պիտի լինէր չորս մանէթանոց կացարանը։

Երբ կամենում էր ներս մտնել, նորա առաջը կտրեց տանտիկինը և հարցրեց այնպէս բարկացած, կարծես սպասում էր, որ բացատական պատասխան պիտի լսէր.

—Հ'ը, հիտդ փուղ բերիլ իս?

—Ա'խ, որտեղից է փող, որ պահանջում էք? խօսեց Ոսկերչեանը սրտնեղութեամբ և մտաւ սենեակը։



Պառաւ կինը աւելի ևս չարացաւ, սկսեց սպառնալ դատարանի անունով և պահանջում էր, որ նա վաղը և եթ թողնի իւր սենեակը։

Այն միջոցին, երբ տանտիկինը՝ դրան շեմքին կանգնած՝ շարունակ վրայ էր տալիս, Ոսկերչեանը նստած էր սեղանի մօտ, գլուխը ձեռքին կրթնած, և լսում էր պառաւին այնպիսի անտարբերութեամբ, կարծես ներկայ էր մի շատ սովորական տեսարանի։

Կնոջ պահանջը արդար էր, որովհետև, ինքը չքաւոր լինելով, իւր կենդանների ամենավճարներովն էր իւր ապրուստը հայթհայթում երկու ամսւայ վարձը դեռ չէր տացել Ոսկերչեանից և այնքան սպասել էր, որ համբերութիւնը հատել էր։ Այդ է պատճառը, որ նորա կենդանը լուռ էր մնում վիրաւորիչ նախատինքի առաջ և մրտքումը ժլատ աստիճ որդու բացականչութիւնն էր կըրկնում։

—O, бѣдность, бѣдность! Какъ унижаетъ сердце намъ она!

Տանտիկինը խօսեց, խօսեց ու քաշուեց իւր սենեակը։

Կէս ժամ չափ Ոսկերչեանը մնաց միևնոյն դիրքի մէջ՝ անշարժ, ինչպէս քարացած նիւթէ։

Վիշտը առժամանակ կորում է մարդու ախորժակը։ Բայց այդ երկար չէ տևում։ Ստամոքսը, ինչպէս յայտնի է, շատ համբերել չգիտէ։ Եւ Ոսկերչեանը տեսաւ, որ քաղցը արդէն սկսում է նեղացնել։ Հանեց պորտմոնէն, բոլոր արանքները նայեց, թափահարեց, բան չդուրս եկաւ։ Փանիերորդ անգամն էր կատարում այս միևնոյն գործողութիւնը այդ օր, այդ էլ միայն ինքը գիտէր և Աստուած։ Ցետոյ նա բոլոր գրպանները խուզարկեց, շուռ տւեց— այդ էլ անօգուտ. մի հատ սև կոպէկ չկամեցաւ ձայն հանել և քաղցածի սիրտը շահել։

Ոսկերչեանը իւր մտքերի կապը կորցրել էր, ուղեղը

ամենախառն ու շփոթ դրութեան մէջ էր։ Եթէ կար լուրջ մտածելու մի առարկայ, այդ բուսական պահանջն էր, որին հարկաւոր էր բաւականութիւն տալ։ Նորա բոլոր էութեան վրայ կարծես գրւած էր այդ երեկոյ. «Ես ուտել եմ ուզում»!

Թէյը կարող էր, գուցէ, սակաւ փարատել քաղցածութիւնը. բայց շաքար չըկար։

Ո՛չ, այդ էլ աւելորդ է։ Նա ուտել է կամենում և ուրիշ ոչինչ։ Գոնէ մի չորացած հացի կտոր լինէր! Սեղանի արկղի մէջ կարող է ճեպացած լինել. հարկաւոր է տեսնել։

Ո՛չ. չըկայ։

Քիչ յետոյ միտն եկաւ ծխախոտը, և, ինչպէս առաջ հացի համար էր դէս ու դէն ընկել, այնպէս էլ այժմ սենեկի անկիւններում էր փնտրում պապիրոսի ճնճղորչներ։

Բայց իզուր։

«Ինչ անեմ ես»? հարց էր տալիս նա ինքն իրան։ «Այս դրութիւնը անտանելի է։ Ում դիմեմ? Ումից պարտք վերցնեմ? Էլ ձվ ճնաց, որից պարտք առած չլինեմ?... Ա՛խ, ինչ անեմ ես»? Յանկարծ կարծես մի յաջողակ միտք յղացաւ գլխումը, թւաց նորան, որ ճանապարհորդական պայուսակի մէջ փող պիտի լինի. այնտեղ նա երբեմն շահանոցներ էր ձգում սև օրերի համար։ Բայց բոլորովին դատարկ էր պայուսակը և միջին եղած դրամը վաղուց մսխւած։

Երանի կարելի լինէր մի բան գրաւ դնել. բայց գրաւ դնելու ոչինչ չունի։

Ինչ լաւ էր պատահել ընկերը, այն ուսանողը։ Բայց նորան ձեռքից թողեց։ «Ինչու նորանից չըվերցրի»? նախատում էր նա ինքն իրան. «Ինչ անտեղի հպարտութիւն էր իմ կողմից. նա ինձ կարող էր օգնել, բայց ես—չօգտըւեցի, չուզեցի օգտւել ընկերոջս ծառայութիւնից։ Այս մտածմունքը թելադրում էր նորան անելանելի դրութիւնը։ Բայց նոյն րոպէին պատւի զգացմունքը և ինքնասիրութիւնը զարհնում էին նորա հոգու մէջ, և նա իրան այլ ևս չէր մեղադրում, որ այնպիսի կոպտութիւն թոյլ տւեց իրան նորա վերաբերմամբ։ «Նա սոփեստութիւն էր անում, որպէս զի իմ գիրքը չըգնէր։ Այդպիսի ընկեր ես չեմ ճանաչում։ Նորա օգնութիւնը ինձ հարկաւոր չէ։ Աւելի լաւ է—քաղցած մեռնել»!...

Երկար ժամանակ նա դադար չունէր։ Սիրտը կարծես կամաց կամաց հալւում էր, ինչպէս շաքարը թէյի մէջ։ Կարծես անհամբերութեամբ սպասում էր մի բանի, բայց ինքն էլ չըգիտէր ինչի։ Մենակութիւնը գնալով անտանելի էր դառնում։ Նա կրում էր այն զգացմունքը, ինչ կը կրէր բանտարկեալը, որին մոռացել են իւր ժամանակին ազատել։

Նա դուրս եկաւ, չափչփեց փողոցները և, մի ժամ աննպատակ շրջելուց յետոյ, տեսաւ, որ կանգնած է Միքայէլեան կամուրջի վրայ։

Կանգ առաւ, կրծնեց երկաթապատին և սկսեց ներքև նայել։ Գետի ջուրը բաւական բարձր էր, ծածկել էր բոլոր կղզեակներն ու ձանձաղուտները, և խփւելով կամուրջի վիթխարի յենարաններին, աղմուկով հոսում էր։

Կը լինէր, երևի, կէս գիշեր։ Կառքերի անց ու դարձը սակաւ էր, ինչպէս և անցւորների երթևեկութիւնը։

Ոսկերչեանը երբեմն բարձրացնում էր գլուխը և աչքերը դարձնում դէպի երկինք։ Այնքան մաքուր էր երկնակամարը, ինչպէս նա լինում է միայն յորդառատ անձրևից յետոյ։ Անթիւ անհամար աստղերից և ոչ մէկը չէր շողշողում գետի պղտոր մակերևոյթի վրայ։

Ներքև կամուրջի տակ բոլորը խորհրդաւոր էր և

սարսափելի. իսկ այն, ինչ որ հանդիսաւոր կերպով վըռւաած էր վերև, որքան փառահեղ և դեղեցիկ էր:

Այն ինչ ոյժ էր, որ գիշերւայ կիսին մղեց նորան այնտեղ?

Ոսկերչեանը հազիւհազ, աղօտ կերպով այդ կարողանում էր հասկանալ: Արդեօք ինքնասպանութեան դիտաւորութիւն? Բայց նա տեսաւ, որ դորա համար ոչ միայն կամքն է պակասում, այլ նոյն իսկ ցանկութիւն էլ չունի մի այդպիսի քայլ անելու: Մեռնել? Եւ ինչի համար? Ո՞վ կարող է հաստատ ասել, թէ ինչ է սպասում նորան ապագայում? Արդարև, կեանքը խորտակեց նորա ամենավայելուն յոյսերը, նորա իղձերից ոչ մէկը չիրագործուեց, ոչ մեծ արտիստ, ոչ մեծ գրող նա չըպիտի դառնայ, նորա սրտի ամենազգայուն տեղերը վիրաւորուած են, բայց այսու հանդերձ ինչը պիտի խանգարի նորան լինել ազնիւ մարդ և հասարակութեան անդամ? Մթէ մարդ իւր անձնական բախտաւորութիւնը փառասիրական ձգտումներից միայն պիտի ակնկալի? Ո՛չ, դորանից դուրս էլ կարող է լինել երջանկութիւն:

Յամենայն դէպս հարկաւոր է փորձել:

Այս մտքերը մի կողմից, միւս կողմից դրսի թարմ և կազդուրիչ օդը սթափեցուցիչ նշանակութիւն ունեցան Ոսկերչեանի համար: Նա ժպտաց, երբ մի անգամ էլ իւր շուրջը նայելով, տեսաւ, որ գիշերւայ կիսին կանգնած է մենակ Միքայէլեան կամուրջի վրայ, և հարցը ինքն ըստ ինքեան ծագեց նորա գլխումը.

—Այս ժամանակին ես ինչ եմ շինում այստեղ?

Երբ այնտեղից Ոսկերչեանը վերադարձաւ տուն, վըճռեց, հեռանալ օրւանից, իւր բոլոր ոյժերը լարել և հոգալ իւր ապրուստի մասին:

Ասում են, մարդը ինքը իւր բախտի տէրն է: Եթէ այդ ճշմարիտ է, ուրեմն Ոսկերչեանի թշուառութիւնը



այնքան էլ մեծ չէ: Միայն հարկաւոր է ընտրել գործունէութեան մի նոր ասպարէզ:

## XXIV

Ամառւայ սկզբին, մի կիւրակէ օր առաւօտեան տիկին Զառիկեանը և Աշխէնը՝ կառք նստած՝ շտապում էին դէպի կայարան, որպէս զի վաղօրօք հասնէին Թիֆլիս ժամանող գնացքին:

Երբ կայարանի դահլիճից դուրս եկան տախտակամածի վրայ, հեռւից արդէն լսւում էր սուլոցը, և շուտով երևաց վագոնների շարքը:

Մայր և աղջիկ սրտատրոփ սպասում էին: Քանի մօտենում էր գնացքը, այնքան աւելի մեծանում էր հասարակութեան իրարանցումը տախտակամածի վրայ: Ահա և վիթխարի մարդատարը, կարծես յոգնածութիւնից ծանր շնչալով ու հևալով, անցաւ սրընթաց և ետ տարաւ իւր հետ զուգահեռաբար կայարանի բազմութեան հոսանքը:

Մայրիկը և Աշխէնը աչքները չէին հեռացնում վագոնների պատուհաններից, որոնց միջից գլուխները հանած՝ նայում էին եկւորները:

—Մարիամը, Մարիամը! Տեսար? գոչեց Աշխէնը և վազվազ առաջ գնաց, շարունակ ետ ետ նայելով և ձեռքի նշանով կանչելով մօրը:

Սիրելիները իրար տեսան և գրկախառնուեցին՝ գրեթէնը մօր հետ, Մարիամը Աշխէնի հետ: Համբոյրների չփչփոցը կայարանը բռնեց: Մի տարւայ կարօտը կարծես մի րոպէի մէջ կամենում էին առնել: Մայրիկը ուրախութիւնից լալիս էր: Աշխէնը և Մարիամը չըրակալած աչքերով բարձր ծիծաղում, խօսում էին, խօսքը իրար բերնից խլում:

—Իմ Թոռս, իսկ իմ Թոռս ուր է? Մի տեսնեմ,— խօսում էր մայրիկը, դէս ու դէն նայելով:

— Ահա, այս էլ քո թոռը,— ասաց Գարեգինը մանկանը վերցնելով դայեակի ձեռքից և մոր գիրկը տալով:

Դա մի առողջ և սիրուն երեխայ էր, իր շուշանագոյն երեսով մոր հատուկտորը: Աչքերը միայն Գարեգինի աչքերն էին՝ սև ու խելացի:

Իր տատի և հօրաքրոջ ձեռքին բաւական չարչարուեց խղճուկը, որովհետև այնքան պաչպչեցին նորա աչքերը, այտերը և շրթունքը, այնքան իրար ձեռքից խլեցին ու առան, որ նա սկսեց ճչալ ու բողոքել: Մինչ այս մինչ այն, Գարեգինը արդէն վարձել էր կառքեր, տեղաւորել էր մէկի մէջ իրեղէնները և, երբ ամեն բան պատրաստ էր, ուղևորուեցին դէպի իրանց բնակարանը:

Զառիկեանների տունը նորից կենդանութիւն առաւ:

Մարիամը բոլոր սենեակները մի առ մի ոտի տակն առաւ: Նորա և Աշխէնի ուրախ քրքիջը բռնել էր դահլիճը: Մայրիկը տասը տարով ջահիլացել էր. թևերը կշտեց ու մտաւ խոհանոց: Գարեգինը լուացուելու գնաց: Փոքրիկ Երանդը գեղեցիկ մանկան գլխի շուրջն էր պտտւում, համբուրում էր, համբուրում և չէր կշտանում:

Աշխէնը սրտումը նեղացած էր իր ամուսնու վրայ այն պատճառով, որ նա չուզեց գնալ կայարան Գարեգինին հանդիպելու, և այժմ էլ չէր գալիս այցելութեան, կարծես սպասում էր, որ իր եաևից մարդ ուղարկեն: Նա վճռեց ինքը անձամբ գնալ, մի լաւ կշտամբել ամուսնուն և իր հետ բերել: Բայց հարկաւոր էր յայտնել, որ մի կէս ժամով գնում է տուն:

Երբ նա մտաւ խոհանոց, տեսաւ, որ Գարեգինը նոյնպէս այնտեղ է և գլուխը սանրելով զրոյց է անում մոր հետ: Նորան տեսնելուն պէս, երկուսն էլ ժպտացին, և մայրիկը ասաց.

— Ախչի, քո բամբասանքն էինք անում:— Հը, այդ ուր?

— Տուն եմ գնում, մայրիկ. ես շուտով կը գամ:



— Դէ մեր փեսին էլ հետդ բերեա:

— Շատ լաւ, շատ լաւ:

— Եթէ սկեսուրդ գայ, նրան էլ...

Աշխէնը հեռացաւ, և մայր ու որդի շարունակեցին իրանց ընդհատած խօսակցութիւնը:

Մայրիկը պատմում էր Աշխէնի նոր կեանքիցը նոր ընտանիքի մէջ, և բոլորը, ինչ որ նա ասում էր, նորութիւն էր Գարեգինի համար: Ուրեմն բանից դուրս է գալիս, որ Ազատեանի մայրը, ինքը մի ոգեշ պառաւ, մի շատախօս ու կուսարար կին լինելով, իրաւունքներ է կամենում բանեցնել Աշխէնի նման կրթուած, ազատ մտածող հարսի վրայ: Ահա որտեղից է ծագում Ազատեանի տան ընտանեկան անհամաձայնութիւնների պատճառը:

— Ախսոս!... Շատ ցաւալի է, ճշմարիտ! Բացականչում էր Գարեգինը, մայրիկի պատմածները լսելով:

— Թէպէտ մեր Աշխէնը ուրիշի խօսքի տակը ճնապղաղ չէ և լաւ էլ իր սկեսրի հախից գալիս է, բայց, էհ, ինչ օգուտ, որ ընտանիքի մէջ, բան ու գործը թողած, միշտ իրար միս պիտի ուտեն, էլ ինչ օր պիտի տեսնի հարսը իր մարդու տանը? Դա հօ կեանք չէ, նա հատակութիւն է: Էհ, որդիս, ես որ այնքան հարց ու փորձ էի անում մեր փեսի ծնողներից, ազգականներից, դու ինձ ասում էիր. «Ի՞նչ բան ունիս, մայրիկ, նորա ծնողների և ազգականների հետ. դու սան—տղան լաւ լինի»:

Մայրիկը Ազատեանի մասին ոչ լաւ էր ասում, ոչ վատը, բայց նորա մի քանի ակնարկներից Գարեգինը եզրակացրեց, որ իր քոյրը իր ամուսնական կեանքից շատ էլ գոհ չպիտի լինի:

Այդ միջոցին լսեց Աշխէնի ձայնը: Գարեգինը խօսքն հեռացաւ խոհանոցից և քրոջը հանդիպեց պահլճում:

—Սմբատը, երևի, զբաղած է, հա՞, Աշխէն? հարցրեց եղբայրը առանց հեգնութեան կամ ետին մտքի։

—Ես չգիտեմ, ճշմարիտ... Զարմանալի մարդ է...

Աշխէնը ցանկանում էր հանգիստ ձևանալ, բայց նորա ձայնը և դէմքի արտայայտութիւնը մատնում էին ներքին վրդովմունքը և անբաւականութիւնը։

—Ի հարկէ, ճաշին այստեղ կը լինի?

—Անպատճառ!

—Շատ լաւ։ Դէ այժմ նստիր, նստիր Աշխէն, մի քիչ խօսենք դէսից դէնից։ Է՛հ, ասա տեսնեմ, հօ առողջ ես? Կատարեալ առողջ?

—Ինչպէս տեսնում ես։

—Շատ գեղեցիկ։ Բայց ինձ թւաց, թէ մի փոքր նիհարել ես։

—Միթէ? Իսկ դու լցնել ես, Գարեգին։

—Այն քաղաքի օդը և ջուրը ինձ վրայ գալիս են... Է՛հ, յետոյ? Մի ասա, տեսնեմ, ինչպէս է անցնում ժամանակդ? Ի հարկէ, միշտ ուրախ, միշտ...

—Ոչ այնքան...

—Միթէ? Այո, ի հարկ է, այդ հասկանալի է։ Գըպրոցում շատ լաւ էր մեզ համար։ Հէնց միայն այն գիտակցութիւնը, որ հարիւրից աւելի անմեղ մանուկներ քեզ սիրում են, ինչքան մեծ բախտաւորութիւն է մանկավարժանի համար! Եւ արդեօք չես ափսոսում, որ այդ ասպարէզը թողիր?

—Ես—թողնեմ այդ ասպարէզը? Հա, հա, հա։ Երբէք, երբէք, Գարեգին!

—Ուրեմն պիտի շարունակես դարձեալ?

—Միթէ դեռ կասկածում ես? Առաջիկայ սեպտեմբերից ես կրկին վարժուհի եմ! Ինչու ժպտացիր? Չես հաւատում? Այ, կը տեսնես։

—Յետոյ, Սմբատը ինչ է մտածում այդ մասին?



—Ինչ ուզում է, մտածի։ Եթէ ես կամենամ, միթէ նա ինձ կարող է խանգարել? Էլ ո՞ւր կը մնան նորա ամուսինների հաւասար իրաւունքները? Դու անշուշտ յիշում ես այդ յօդւածը, որ տպեց «Ճառագայթի» մէջ մեր նշանւելուց յետոյ?

—Ես այդ մտքով չասացի։ Ուրիշ հանգամանք կարող է խանգարել...

—Ո՛չ, Գարեգին, այդ ինձ մի՛ ասիր։ Ես սիրում եմ մանկավարժութիւնը և ինձ պիտի նուիրեմ այդ ազնիւ գործին։

—Բայց դու քեզ մի րոպէ երևակայիր, Աշխէն, Մարիամի ներկայ դրութեան մէջ։ Ինչպէս կը լինի այն ժամանակ? Ինչ ես կարծում? Ես թոյլ կը տամ, որ այժմ, երբ Մարիամը արդէն մայր է դարձել, գնայ և վարժուհու պաշտօն վարի? Կամ հէնց նա ինքը այդ բանը կ՚անի? Չեմ կարծում։ Եւ ինչ հարկ կայ, երբ ինքը մայրը մի տեսակ վարժուհի է իւր ընտանիքի մէջ, իսկ որդիքը—նորա սիրասուն աշակերտները և աշակերտուհիները...

Աշխէնը ծիծաղելով գոչեց.

—Օ՛հ, Գարեգին, քանի գնում է, դու եսասիրմում ես! Ուրեմն քո կարծիքով, կինը միայն մայր կարող է լինել և ուրիշ ոչինչ?

—Ո՛չ, ո՛չ։ Բայց ես ասում եմ, թէ մայրը միայն մայր կարողէ լինել, և ուրիշ բան չպէտք է լինի։ Այդ համոզմունքը ամրացաւ իմ մէջ նոյն այն օրը, երբ Մարիամը դարձաւ մայր!

Քրոջ և եղբօր վէճը տաքացաւ։ Սակայն Գարեգինը շուտով մի քանի զիջումներ արաւ իւր կարծիքներից և կամաց կամաց, աննկատելի կերպով, խօսակցութեան առարկան փոխեց։ Նա մի քանի հարցեր տւեց Աշխէնին սկեսրի մասին, և քոյրը զարմանալի կերպով ներկայացրեց երբօր

առաջ իւր ամուսնու մօր բարոյական և մտաւոր պատկերը։

Տգէտ վերին աստիճանի և նախապաշարուած, նեղսիրտ և մանրակրկիտ, նախանձոտ և նենգամիտ—ահա սկեսուրը իւր հարսի նկարագրութեամբ։

—Նա կամենում է ինձ դարձնել մի անլեզու արարած, մի ստրուկ, որ կամք չունի։ Եւ դորա համար ինչեր չէ անում! Որդուն գրգռում է իմ դէմ։ Ծառային ստիպում է ինձ ականջ չդնել։ Քանդում է արած կարգադրութիւնները։ Օրերով խռով է մնում ինձ հետ, երբ հիւրերի առաջ իրան չեմ մատուցանում այն յարգանքը և պատիւը, որ նա իւր խելքը կարծի պէս է հասկանում։ Ամենահարկաւոր բաներ էլ որ առնում եմ ինձ համար, նա պիտի փնթփնթայ և քիթը կախ անի... Մի խօսքով—դա մի պատիժ է, որ Աստուած ինձ տւել է ինձ չարչարելու համար։ Դու չես կարող երևակայել, Գարեգին։ Օրն ի բուն կռիւ, անհամաձայնութիւն... Անտանելի է!

Գարեգինը հետաքրքրւեց իմանալու, թէ ինչ դեր է կատարում ինքը Ազատեանը, իւր փեսան, մօր և կնոջ մշտական ընդհարումների ժամանակ։

—Ի՞նչ դեր պիտի կատարի,—հեգնեց Աշխէնը. ասում է «յարմարւեցէք իրար»։ Երբեմն ինձ է մեղադրում, երբեմն մօրը։ Ինձ ասում է, թէ ես պէտք է աւելի ներողամիտ լինեմ, որովհետև նա տգէտ կին է, և այլն, այսպիսի բաներ։

«Ահա ուրեմն—մտածում էր Գարեգինը—ինչ մնաց Աշխէնի անցեալ տարւայ հրապոյրներից—հեգնութիւն! Մի հեգնութիւն, որ ոչինչ լաւ բան չէ խոստանում ապագայի համար»...

Այս միջոցին եկաւ Մարիամը և տխուր ձայնով ասաց.

—Գարեգին, երեխան շատ անհանգիստ է։



—Ինչ է որ? հարցրեց ամուսինը, վերկենալով։

—Չըգիտեմ, բոլոր ժամանակ ճչում է, ծիծ չէ բռնում...

—Զարմանալի է. ինչու պէտք է այդպէս լինի։ Ինքը առողջ երեխայ...

—Երևի ճանապարհին շատ է նեղացել,—նկատեց Աշխէնը. քանի վերստ ճանապարհ է եկել!

Երեքն էլ գնացին ննջարան մանկանը տեսնելու։

Վերջապէս, եկաւ Ազատեանը։

Բայց այստեղ հարկաւոր է բացատրել նորա դիտաւորեալ սառնութիւնը, որ նա ակնյայտնի կերպով ցոյց տւեց Զառիկեանների վերաբերմամբ։ Դա հին հաշիւ էր, որ նա այժմ տեսնում էր Գարեգինի հետ։ Անցեալ տարի, երբ նա առաջարկութիւն էր արել Աշխէնի համար, մայր ու որդի դեռ տատանւում էին, դեռ նազ էին անում։ Մօրը կարելի էր ներել. նա տգէտ կին է։ Իսկ Գարեգինը, նա հօ լաւ ճանաչում էր Ազատեանին? Նա ինչու վարանում էր? Ազատեանը Զառիկեաններին լայեղ չէր? Ազատեանը արժանի երիտասարդ չէր? Այն ժամանակ հարկաւոր էր համբերել, և նա համբերում էր և լռեցնում իւր մէջ վիրաւորուած ինքնասիրութեան ձայնը։ Այժմ հանգամանքները փոխւել են։

Հիմա Աշխէնի տէրը ինքն է, և ոչ ոք չէ կարող արգելել, որ նա օրը տասը անգամ սեղմի նորան իւր կրծքին։ Հիմա կարելի է հատուցանել հին վիրաւորանքի փոխարէն։ Առաջ Զառիկեաններն էին իրանց մեծ բանի տեղ դնում, այժմ Ազատեանը իրան մեծ բանի տեղ կը դնի։

Բայց չնայած այս նեղսիրտ քաղաքականութեան, որ նա կամենում էր մտցնել բարեկամութեան մէջ, Գարեգինը, իւր քրոջ ամուսնուն տեսնելուն պէս, ուրախ առաջ վազեց և, համարեա գրկի մէջ սեղմելով նորան, սկսեց համբուրել հետը։

Մի այսպիսի սիրալիր, եղբայրական ողջագուրանքի առաջ օդը ցնդեց Ազատեանի փքուած, շինծու հպարտութիւնը։

—Ես ներողութիւն եմ խնդրում, որ այսքան ուշացայ,—սկսեց արդարանալ Գարեգինի փեսան,—ես կարող էի և մի քիչ առաջ...

—Դատարկ բան է,—ընդհատեց նորան Գարեգինը.—դու ասա տեսնեմ, ինչպէս է առողջութիւնդ? Գործերդ ինչպէս են գնում? Սևումեանի հետ կրկին բռնեցիք, հա?

—Առողջութիւնս—ինչպէս տեսնում ես։ Տիկինը ինչպէս է?...

Օհօ, այն ով է ճչում? Ժառանգդ է, այո? Շնորհաւորում եմ, Գարեգին, շնորհաւորում եմ։ Ի՛նչ առողջ էլ ձայն ունի!

— Ա՛, Սմբատը վերջապէս բարեհաճել է շնորհ բերել,—խօսեց Աշխէնը, ներս մտնելով դահլիճ։ Այս որտեղ էիր? Ինչու այսքան ուշացար? Զարմանալի մարդ ես, Սմբատ!...

—Զարմանալին դու ես, Աշխէն, միթէ չէիր գիտես, որ մինչև ժամը 12 կամ մէկը զբաղուած եմ լինում...

—Կ՚ուզէի մի իմանալ զբաղմունքիդ անունը,—նկատեց Աշխէնը ակնարկ հեգնութեամբ և երեսը դարձնելով իւր ամուսնուց։

Ընչին պատճառով վէճ պիտի ծագէր ամուսիններիմէջ, բայց Գարեգինը, մէջ մտնելով, հաշտեցրեց երկուսին էլ։

Այդ ժամանակ երևաց մայրիկը։ Ազատեանը նորա աչքը լոյս արաւ։

—Իսկ մօրդ ինչու չբերիր? հարցրեց Ազատեանի զրքանչը։ Ինչ կը լինէր, որ գար? Մենակ ինչ է շինելու տանը? Հօ մենք օտարներ չենք...

—Ինչ ես ասում, մայրիկ? ասաց Աշխէնը ուրախ կատակով, բայց ոչ առանց հեգնութեան։ Իմ սկեսուրը ինչի համար կը թեթևացնի իւր ծանր տեղը? Առաջ Գարեգինը պարտաւոր է գնալ նորան տեսնել և յետոյ...

—Մայրս փոքր ինչ ծեր էր, ապա թէ ոչ՝ կը գար,—պատասխանեց Ազատեանը իւր զրքանչի ուռած հարցին։

Այս խօսակցութեան ժամանակ Գարեգինը հեռացաւ և քիչ յետոյ կրկին եկաւ իւր կնոջ հետ։ Ազատեանը մի երկու քայլ առաջ գնաց և բարևեց տիկնոջը։

Մարիամի դէմքը այժմ հոգեկան հանգստութիւն էր արտայայտում։ Երեխային քնացնելուց յետոյ, մայրը միամտել էր։

—Տիկին Մարիամ, ինչպէս հաւանեցիք գաւառական կեանքը? հարցրեց Ազատեանը, ցանկանալով մի խօսք ասած լինել Գարեգինի կնոջը։

—Ոչինչ, տանելի էր,—պատասխանեց Մարիամը։

—Հօ չէիք ձանձրանում?

—Ո՛չ, ինչու? Մենք ունէինք մի համակրելի շրջան, և դա փոքրիկ մխիթարութիւն չէ գաւառական միօրինակ կեանքում։ Գարեգինի պաշտօնակիցները շարունակ մեր տունը յաճախում էին, տեսչի ընտանիքի հետ նոյնպէս շատ մօտ էինք։ Տեսչի կինը... դուք ծանօթ էք տեսչի հետ?

—Այո, բայց ոչ այնքան մօտ։

—Տեսուչը ինքը, իհարկէ, լաւ կը լինէք, շատ խելօք և գործունեայ երիտասարդ է, բայց կինը, օ, նա ամեն տեսակ դովասանքից բարձր է։ Միայն գիմնազիական կրթութիւն ունի, բայց այնքան կարգացած է, այնքան տեղեկութիւններ ունի գիտութիւններից, որ առանց ամաչելու կարող է երկար վիճել համալսարանականի հետ և երբեմն նոյն իսկ յաղթել։

—Ինչ էք ասում, տիկին? Այդքան հրապուրած էք?

—Այո, ես հիացած էի։ Նորա թարգմանութեամբ

այս նորերս մի մանկական գրքոյկ լոյս տեսաւ, կարդացել էք?

—Ես կարդացել եմ,—մէջ մտաւ Աշխէնը։

—Աշխէնը ինձ ասաց այդ մասին, հաւանել էր։ «Ճառագայթիկ» խմբագրատանը մի օրինակ ստացած է, բայց դեռ մէջոց չեմ ունեցել կարդալու։

—Նա շատ սիրուում է մանկական գրականութիւնը, այնպէս որ ինձ էլ վարակեց այդ սիրով։

Այդ րոպէին եկաւ մայրիկը և կանչեց ճաշելու։

Շուտով ամենքը հաւաքուեցին սեղանի շուրջը, և մի երջանիկ, ուրախ շրջան կազմուեց։

Խօսք բացուեց այն հիմնարկութեան մասին, որտեղ ծառայում էր Գարեգինը, և սա, գինու երրորդ բաժակը դցելուց յետոյ, սրեց բեխերը և սկսեց պատմել հետևեալը։

—Այն տեղը, ուր մենք էինք այս տարի, ես և Մարիամը, նոր կիկլոպների երկիր է, որոնք, եթէ նոմերի խօսքով ասեմ, չըգիտեն ոչ օրէնք, ոչ արդարութիւն։ Բայց տարբերութիւնը միայն մի բանի մէջ է. նոմերի կիկլոպները պահանջ չէին զդում քաղաքակրթելու, մինչդեռ այս նոր կիկլոպները մեծ ձգտում են ցոյց տալիս լուսաւորելու և քաղաքակրթի մարդկանց շարքն ընկնելու։

Աշխէնը ծլիծաղելով նայեց Մարիամին և ասաց.

—Այս երբւանից է Գարեգինը այսպէս զարճախօս դարձել?

—Ահա այդ երկրում,—շարունակեց պատմողը,—կիկլոպները իրանց համար հաստատել են մի հիմնարկութիւն, որպէս զի այնտեղ կրթեն իրանց մանուկներին։ Եւ կայ այնտեղ մի բուռը հասարակութիւն, որը սիրով յանձն է առել երեխաների կրթութեան գործը։

—Հրաշալի է, Գարեգին,—գոչեց Ազատեանը հըրճւանքով. շարունակիր։



—Բայց այդ աստուածապահ հիմնարկութեան դժբախտութիւնը այն է, որ նա խճճուած է ինարիգների մի այնպիսի սոսկալի ցանցի մէջ, որ այդ ցանցի ոչ սկիզբն է երևում, ոչ վերջը։

—Բուաւ! Գարեգինի կենացը! գոչեց Ազատեանը և պարպեց բաժակը։

—Տեսնում էք? Գարեգինը կարգին երգիծաբան է դարձել!

—Ինչպէս ասացի, այդ կրթարանը խճճուած է ինարիգների, կամ, հայերէն ասեմ, բանսարկութիւնների ցանցի մէջ։ Ցանցի թելերը ձգուած են այնպիսի հնարագիտութեամբ և այն աստիճան նրբութիւն ունին, որ միայն սրատես աչքը կարող է նկատել, թէ ինչպէս, հեռախօսի թելերի նման, մի տեղից մտնում են, մի այլ տեղից դուրս գալիս։ Է՛հ, փառք Արարչին, ես իմ աչքերից գանգատուելու տեղիք չունիմ, ուստի և, առանց արհեստական միջոցների դիմելու, ես պարզ տեսնում էի ինարիգների ամբողջ ցանցը։

Գարեգինը ընդհատեց իւր խօսքը, և այդ բողոք յարուցեց Աշխէնի կողմից, որը, դիմելով մօրը, նկատեց.

—Մայրիկ, մի՛ խանգարիր, խնդրում եմ։ Դու շարունակ «համեցէք» «համեցէք» ես անում, գանգատում ես, որ քիչ ենք ուտում, և այդպիսով խանգարում ես մեզ...

—Ինչ անեմ, որդիքս, խօսում էք և ուտելը մոռանում։

—Մայրիկը ճիշտ է ասում։ Ես ճանապարհ եկած մարդ եմ, յոգնած եմ։ Շարունակութիւնը հետևեալ համարում։

—Լաւ, խնդրեմ, այդ նազը թողնես։ Պատմի՛ր, լսում ենք։

Գարեգինը չըհակառակեց իւր քրոջ խնդիրքին, որ հաւասար էր պահանջի, և շարունակեց իւր սկսած պատ-

մուրթիւնը։ Որքան երգիծական կողմեր մի գաւառական քաղաքի հասարակութեան բարքու վարքի մէջ! Ինչպիսի ճահիճ, որի բոլոր կեղտերը դուրս են պրծնում յատակից միայն այն ժամանակ, երբ ջուրը պղտորւում է! Արտաքուստ՝ ծիծաղելով, բայց միևնոյն ժամանակ ներքին ցաւով էր շեշտում Գարեգինը գաւառական կեանքի բացասական կողմերը։ Եւ ուննկդիրը կամայ ակամայ հարց էր տալիս ինքն իրան. «մի՞թէ, ճշմարիտ, այս լուսաւորութեան փայլի տակ, որ այնքան շլացուցիչ է մեզ համար, դեռ ևս անձեռմխելի են մնացել հայի դարաւոր արատները»?...

Ամենագոհ և ուրախ տրամադրութեան մէջ վեր կացան ճաշի սեղանից և, սև կաֆէ ընդունելուց յետոյ, որը մատուցեց դահլիճում, ամենքը պահանջ զգացին թեք ընկած մի քիչ հանգստանալու, որովհետև ոչ ոք չէր կարող չընդունել, որ մայրիկի եփած կերակուրները շատ համով էին, և որ ամեն մկկը կերաւ աւելի, քան ստամոքսը կարող է տանել։

---

Առաջին օրերը Գարեգինը իւր կնոջ հետ զբաղած էին այցելութիւններով։ Բացի այդ, շատ տեղերից հրաւէրներ էին ստանում, և մերժել մկկն ու մկկի հրաւէրը անկարելի էր։ Ամենից առաջ եղան Մարիամի հօրանց տանը ճաշի, յետոյ Ազատեանի մօտ և այլն։

Իւր բարեկամի գալու մասին Ոսկերչեանը իմացել էր, բայց հազի շորը այնքան հնացել, ձեռքից գնացել էր, որ չընայած իւր սաստիկ ցանկութեան, ամաչում էր լինել Զառիկեաններին տանը։ Նա յոյս ունէր, որ փողոցում կը հանդիպի Գարեգինին, և, իրաւ, մի օր նոքա իրար պատահեցին։

— Արտաշէս,— գոչեց Զառիկեանը, կանգ առնելով,—



այս դու ես? Ինչքան նիհարել ես! Ոսկորդ ու կաշիդ է մնում։ Ես քեզ հեռուից մինչև անգամ չըճանաչեցի։ Դու հո հիւանդ չես?

Ոսկերչեանի դէմքին մելամաղձոտ ժպիտ երևաց, նա թոյլ ձայնով պատասխանեց.

— Ոչ հիւանդ եմ և ոչ առողջ։ Ես ինքս էլ չըգիտեմ, թէ ինչ եմ։

Արտաշէսի յուսահատութեան ձայնը Գարեգինի հետաքրքրութիւնը շարժեց, և նա ցանկացաւ դորա պատճառն իմանալ։

Ոսկերչեանը սկսեց խօսել կեանքի ունայնութիւնից, իւր կրած հիասթափութիւններից. գանգատւում էր հասարակութեան անտարբերութիւնից. ցաւ էր յայտնում, որ ինքը ոչ տալրել է կարողանում, ոչ էլ այնքան կամքի ոյժ ունի, որ միանգամից վերջ տայ իւր «անպէտք գոյութեանը»։

— Է՛հ, բարեկամ,— արտասանեց Զառիկեանը ափսոսանքով,— դու կեանքից և հասարակութիւնից ես հիասթափւել, իսկ ես քեզնից հիասթափւեցի!... Ուրեմն դու այդ ասոիճան փոքրոգի ես եղել? Հիասթափւել և ծերանալ հոգով համարեա կեանքի շէմքին, ծաղիկ հասակումդ, այն տարիներում, երբ մեր արիւնը պիտի եռ գայ, մեր աչքերը փայլփլեն ոգևորութեամբ, մեր բոլոր էութիւնը բորբոքւի գործունէութեան համար? Զայրոյթս գալիս է քեզ վրայ, Արտաշէս, ազնիւ խօսք եմ ասում! Դու այդ ինչ ես դարձել? Ինչի ես նման? Ափսոս իմ յոյսեր!

Ոսկերչեանը գլուխը կախել էր իւր բարեկամի արդար կշտամբանքի առաջ և ոչինչ չէր խօսում։

— Եւ ինչի համար ես այդպէս վհատել, ասա խնդրեմ? Մի գուցէ նորա համար, որ քեզ գցեցին լրագիրների մէջ? Մի քանի գրչականներ քեզ կարողացան այդ օրին հասցնել? Ամօթ է, Աստուած վկայ, ամօթ է, Արտաշէս!

—Ա՛խ, Գարեգին,—մրմնջաց Ոսկերչեանը համարեա լալագին ձայնով,—դու ինձ չես խղճում։ Հաւատա՛ ինձ, որ մի ցաւը մարդ չի սպանիլ։ Դու չգիտես, թէ ես ինչ օրեր եմ քաշել!

Զաւիկեանը հասկացաւ նորա ակնարկը և մի անգամ էլ տնտղեց նորա հագուստը ոտից մինչև գլուխ. մի անգամ էլ ուշի ուշով զննեց նորա փոքրացած, ոգեղացած մարմինը, ճակտի վազաժամ կնճիռները և յոգնած, մարած հայեացքը։

Երկուսն էլ լուռ քայլում էին պրոսպեկտի ծառուղիով։ Զաւիկեանը մտածում էր. «սորան կարելի է փրկել, քանի դեռ ուշ չէ։ Մարդ ունենայ և բնական խելք, և ընդունակութիւն, և ազնիւ ձգտումներ, ու յանկարծ մի այսպիսի դրութեան հանի! Սարսափելի է! Ուրիշ բան չէ, գոնէ հասարակութեան օգտաւէտ անդամներից մէկը կարող էր լինել. բայց ահա կորչում է, կարծես հեռանում է աշխարհից։ Այո՛, սորան պէտք է փրկել!»։

Եւ այսպիսի մտածողութեան հետևանքն էր այն, որ նա ասաց.

—Արտաշէս, կ՚ուզես ինձ հետ ծառայել մեր գործում?

—Յաւիտեան պարտաւոր կը դարձնես ինձ, եթէ այդ կարողանաս յաջողեցնել,—յուզմունքով պատասխանեց Ոսկերչեանը»։

—Ինձ յանձնարարուած է վարձել մեր գործարանի համար մի վերակացու։ Կ՚ընդունես այդ պաշտօնը?

—Ամենայն յօժարութեամբ։

—Գուցէ դորա հետ և մի քանի դասեր։

—Աւելի լաւ։

—Ուրեմն համաձայն ես?

—Այո՛։

—Ձեռքդ տո՛ւր։



Եւ բարեկամները ձեռք ձեռքի զարկեցին։

Բայց Գարեգինը միևնոյն ժամանակ իւր բարոյական պարտքը համարեց ծանօթացնել նորան իրերի իսկական դրութեան հետ։

—Այն հաստատութիւնը,—ասաց նա,—որի յարկի տակ դու պիտի ծառայես ինձ հետ, շարունակ ենթակայ է եղել փոթորիկների։ Իմացիր ուրեմն. դու պիտի գնաս բնակուելու մի հրաբուխի վրայ, որը թէպէտ և այժմ հանգած է թւում, բայց մի քանի նշաններից երևում է, որ դիւրաւ կարող է վերստին բռնկուել։

—Ոչինչ,—գոչեց Արտաշէսը վճռորոշաբար. թող ես էլ ղոհ գնամ այն հրաբուխին, որը սպառնում է և քեզ նման բարեկամիս!

—Շատ լաւ։ Ուրեմն ամեն բան վերջացած է։ Յիտեսութիւն։ Մենք դարձեալ կը տեսնուենք։ Արի, արի մեզ մօտ։ Դու մեզ բոլորովին մոռացար։

—Կը դամ անպատճառ,—արտասանեց Ոսկերչեանը և, նոր բախտաւորութեան յուսով լցուած, շտապեց դէպի տուն։

Ուրեմն կրկին յոյսեր...

## XXV

Ուսումնական տարւայ սկզբում Ոսկերչեանը արդէն այն քաղաքումն էր, որտեղ պիտի ծառայէր այնուհետև։ Տեղի դիրքը, գլխաւոր փողոցները, հրապարակը, հիւրանոցներից ամենամատչելին, մի քանի հասցէներ—այս բոլորը նորան վաղօրօք յայտնի էր Զաւիկեանի նկարագրութեամբ։

Նորա շորերը, ինչ ասել կ՚ուզէ, նոր էին այժմ, և այն հագուստով պարզերես կարելի էր ներկայանալ ում կամենաք։

Տեղ հասնելու օրը, երեկոյեան ժամը 6-ին Ոսկեր-

չեանը գնաց ներկայանալու Թեմական դպրոցի տեսչին։ Նորա սրտի բաբախումը արագացաւ, երբ դրան վրայ կարդաց տեսչի ազգանունը—Շահնաբաթեան—և զանգը քաշեց։

Երբ ծառան բաց արաւ դուռը, Ոսկերչեանը հարցրեց, թէ տանն է տեսուչը և ընդունում է արդեօք։ Ծառան բարձրացաւ վերև և մի րոպէից յետոյ պատասխանեցրեց.

—Խնդրում է,—ասաց նա և տեղ տուեց, որ այցելուն առաջ ընկնի։

Ոսկերչեանը մտաւ դահլիճ, ուր ոչ ոք չկար։ Հեռու սենեակներից լսւում էին մանկական ձայներ։

Մինչև տեսչի գալը՝ այցելուն կանգնած դիտում էր իւր շուրջը։

Դահլիճի պատերը զարդարւած էին մի քանի երևելի անձանց պատկերներով, գեղեցիկ շրջանակների մէջ։ Մի անկիւնը ամբողջապէս բռնել էր դաշնամուրը։ Առաստաղից կախած փոքրիկ, բայց սիրուն ջահը ցոլացել էր մաքուր հայելանման պարքէտի վրայ։ Առանձնասենեակի դրան փեղկերը բաց էին, և կիսով չափ երևում էր գրքերի պահարանը։ Ոսկերչեանը յուզւած դրութեան մէջ էր, բայց էլ աւելի շփոթւեց, տեսնելով իւր առջև մի իսկական տղամարդ, առնական հասակով և առողջ կազմւածքով, որի դուրս ընկած մեծ ճակատը, վառվռուն աչքերը, արծւի քիթը և փառաւոր մօրուքը աչք էին զարնում ամենից առաջ։ Նորա պայծառ, ուրախ դէմքի վրայ իսկոյն կարելի էր կարդալ նորա բնաւորութեան մի քանի գծերը—խիստ, եռանդոտ և բարի։

—Պատիւ ունեմ ներկայանալու, Արտաշէս Ոսկերչեան,—ասաց նորեկը, ձեռքի խոնարհ շարժումով ողջունելով տեսչին։

Շահնաբաթեանը բարևեց իւր այցելուին և խնդրեց նստել։ Նստեց և ինքը։



—Ձեր մասին, խօսեց տեսուչը,—ինձ գրել էր պ. Զաուիկեանը։ Ցուսով եմ, որ դուք կ'արդարացնէք այն յոյսը, որ ես դրել եմ ձեզ վրայ, իմ ամենաընտիր ուսուցիչներից մէկի խօսքով։

—Կ'աշխատեմ արդարացնել ձեր յոյսերը,—պատասխանեց Ոսկերչեանը։

—Վերակացուի գործը, ինչպէս ես եմ հասկանում այդ պաշտօնը, աւելի հեշտ չէ, քան ուսուցչինը։ Լաւ վերակացուն միևնոյն ժամանակ և դաստիարակ է։ Նա պիտի ունենայ նախ և առաջ հարուստ սիրտ, որպէս զի կարողանայ տեղաւորել իւր մէջ հարիւրաւոր աշակերտների սէրը։ Ով չէ կարող, ով ընդունակ չէ սիրելու իրան յանձնւած սաներին, նա չըպէտք է լինի ոչ վերակացու, ոչ դաստիարակ։

—Այո, իհարկէ, ես էլ կարծում եմ...

—Բայց այդ չէ նշանակում, պ. Ոսկերչեան, որ ես պահանջում եմ թոյլ տալ աշակերտներին անել այն ինչ կամենում են։ Դուք պիտի լինիք անսպառման կարգապահ և, երբ հարկը պահանջում է, նաև խիստ, մինչև անգամ անդրդուելի։ Սակայն չըպէտք է մոռանալ, որ ամեն բանի մէջ կայ չափ ու սահման։ Այս էլ հարկաւոր է նկատել, որ դաստիարակը պիտի լինի նաև սրտագէտ, մարդ ճանաչելու հոտառութիւն պիտի ունենայ, որպէս զի իմանայ իւրաքանչիւր աշակերտի հետ ինչպէս վարւել։ Դուք պիտի սովորէք յարգել սաների անհատականութիւնը։ Դա շատ կարևոր է։ Անցեալ տարի մենք ունէինք մի վերակացու, որը մի կատարեալ ժանտախտ էր մեր դպրոցի համար, և, թէ ինչ դեր էր կատարում, այդ մասին ձեզ կարող են պատմել մեր ուսուցիչները։ Ես նորան ստիպւած էի հեռացնել։ Դուք հրաւիրւած էք նորա տեղը։

Ոսկերչեանը ցանկացաւ իմանալ, կ'ունենայ արդեօք նաև դասեր, ինչպէս յուսադրել էր Զաուիկեանը։ Տեսուչը

յայտնեց, որ հաւանական է լինի նաև դաս. բայց այդ դեռ որոշուած չէ։

—Պարոն տեսուչ,—ասաց ապագայ դաստիարակը մեկնելուց առաջ, ես մի խոնարհ խնդիրք ունիմ։

—Ցայտնեցէք։

—Ինձ հարկաւոր է... Ես կարիքի մէջ եմ... եթէ կարողանայի ստանալ նախավճար, ես շատ ուրախ... ուրախ կը լինէի։

—Դուք աւանս էք կամենում, այո՞ Շատ լաւ, ես կ'ասեմ դանձապահին, և դուք կը ստանաք։ Վաղը կիւրակի է։ Երկուշաբթի կը սկսին վերաքննութիւնները. այդ օր դուք, անկասկած դպրոցում կը լինիք...

—Այո, անշուշտ։

—Երկուշաբթի կը ստանաք, որքան հարկաւոր է։

Ոսկերչեանը շնորհակալութիւն առաւ և գնաց։ Աքանչելի մարդու տպաւորութիւն էր գործել Շահնազարեանը նորա վրայ։ Նա իրան բախտաւոր էր համարում, որ պիտի ծառայէր մի այնպիսի տեսչի ձեռքի տակ։ Շատ բաներ էր պատմել նորան Գարեգինը այդ նշանաւոր գործիչի մասին, և այն, ինչ միայն լսել էր, այժմ աչքովը տեսաւ և հաւատաց։ «Ես մի այսպիսի անձնաւորութիւն,—մտածում էր Ոսկերչեանը,—դեռ թշնամիներ էլ ունի ոչ միայն հասարակութեան, այլ և մամուլի մէջ։ Ինչի համար «ժամանակ» լրագիրը օգուտ է քաղում ամեն մի հանդամանքից՝ քար շպրտելու այս պատկառելի մանկավարժի վրայ»։

Երկուշաբթի օր Ոսկերչեանը առաջին անգամ եղաւ դպրանոցում և ծանօթացաւ իւր բոլոր պաշտօնակիցների հետ։ Ստացաւ նոյնպէս իւր առձկի կէսը, իբրև աւանս։ Ուսուցիչներից մէկը առաջարկեց նորան մի սենեակ իւր քնակարանում։ Ոսկերչեանը ուրախութեամբ համաձայնեց այդ առաջարկութեան, մանաւանդ որ ամսավճարը



շատ չափաւոր պիտի լինէր։ Նոյն օրը նա տեղափոխուեց իւր պաշտօնակցի մօտ։ Բնակարանը նորա սրտովը եղաւ։ Պատշգամբի առաջ բարձրանում էին խնձորենի և տանձենիներ, և գրեթէ օրնիբուն ախորժելի ստուերի մէջ պարուրած էր լինում պատշգամբը։ Երբ Ոսկերչեանը առաջին անգամ տեսաւ այդ բնակարանը և իմացաւ, որ իւր սենեակը ուղիղ դէպի այն փոքրիկ ծառաստանն է նայում, հրճուանքով բացականչեց.

—Այստեղ կարելի է բոլորովին նոր կեանքով ապրել և վերածնուել հոգով!

Կացարանի հրապոյրը աւելացաւ մանաւանդ այն պատճառով, որ, երբ պատշգամբում կանգնած՝ նայում էր դէպի պարտէզը, ծառերի տակ նորա աչքին ընկաւ մի սպիտակազգեստ օրիորդ, որի երկայն սեւ մազերը, ծով ծով աչքերը, խիտ յօնքերը և խնձորի նման կարմիր այտերը՝ նեռների պէս դիպան Ոսկերչեանի սրտին...

Երեկոյեան հարևան տներից սկսեցին լսել թառի ձայներ, և դորա հետ միասին հնչում էին զանազան թրքական եղանակներ։

Ոսկերչեանի հարցին, թէ արդեօք շարունակ պիտի բախտ ունենայ այն երաժշտութեամբ զբաղեցնելու, պաշտօնակիցը պատասխանեց, թէ այո, որովհետև քաղաքումը սաստիկ տարածած է թառի գործածութիւնը։ Գիշերը երկար ժամանակ Ոսկերչեանը նստած էր պատշգամբում՝ խորասուզուած նոր երազների աշխարհում։ Թեթև հովը պատահաբար շարժում էր ծառերի տերևները, և լուսնի շողերը սկսել էին չորս կողմ լուսոյ և ստուերի կախարդական ցանցեր։ Այն ողբալի վիճակից յետոյ հասնել մի այնպիսի նախանձելի դրութեան,—դա փոքրիկ երջանկութիւն չէր Ոսկերչեանի նման թշուառ երիտասարդի համար, և ահա, համեմատելով իւր նախկին դրութիւնը ներկայի հետ, կամացուկ լալիս էր ուրախու-

թիւնից, և նորա արտասուքը քաղցր զգացումների արտասուք էր։

Իսկ այդ գիշերուայ քունը որքան հանգիստ էր!...

Վեր կացաւ նա առաւօտեան կանուխ և, թէյը ըմպելուց յետոյ, շտապեց դէպի ուսումնարան։

Այդ օրը եկել էր և Զաւրիկեանը և դպրոցի բակում հանդիպեց Ոսկերչեանին։ Կարելի է երևակայել վերջինիս զգացմունքը, երբ սա մի օտար քաղաքում, օտար հասարակութեան մէջ տեսաւ վերջապէս իւր նախկին բարեկամին։

—Օ՛հ, Գարեգինը! գոչեց Արտաշէսը և թռաւ նորա մօտ։

—Բարև, բարև, Արտաշէս, ինչպէս ես? Հաւանում ես?...

—Եթէ իմանաս, որքան ուրախ եմ այստեղ գալուս համար!...

—Երևի, հարցաքննութիւնները արդէն սկսած են, որ այսքան լուռ է?

—Այո, մի տասը րոպէ չկայ։

—Ես ուրեմն շտապեմ... Հա, որտեղ է բնակարանդ?

Ոսկերչեանը բաւարարութիւն տւեց այդ հարցին և ինքն էլ ցանկացաւ իմանալ իւր բարեկամի հասցէն։

—Այդ աւելորդ է,—պատասխանեց Զաւրիկեանը. այսօր մեզ մօտ կը լինիս ճաշին, միասին կը գնանք։

Այդ ասելով, նա սկսեց բարձրանալ վերև։ Ուսուցչական սենեակում ոչոք չկար։ Տեսչի կաբինետում—նոյնպէս։ Բայց այն րոպէին, երբ նա կամենում էր անցնել դասարանները, նորա հանդէպ երևաց ինքը տեսուչը։ Երկուսն էլ իրար սիրով բարևեցին։ Տեսուչը շարունակեց առաջ քայլել դէպի իւր առանձնասենեակը և խնդրեց Զաւրիկեանին իւր մօտ գնալ։

—Նախ և առաջ, ասացէք ինձ, պարոն Շահնա-



բաթեան, ես հօ այժմ ազատ եմ? Իմ առարկայից հարցաքննութիւնները...

—Ձերը վաղն է նշանակւած։ Կարող էք հանգիստ լինել։ Ես կամենում եմ ձեզ հաղորդել մի քանի դէպքեր, որ տեղի ունեցան այստեղ ամառը։

—Ինչ դէպքեր? հետաքրքրութեամբ հարցրեց Զաւրիկեանը։

—Նստեցէք խնդրեմ։

Տեսուչ և ուսուցիչ նստեցին սեղանի մօտ իրար դիմաց, և առաջինը վրդովւած պատմում էր հետևեալը։ Խօսքը վերաբերում էր երկու արձակւած ուսուցիչներին, որոնցից մէկը նաև վերակացու էր, և չորս՝ նոյն դպրոցից արտաքսւած աշակերտներին։ Բանից երևում էր, որ առաջին երկու պարոնները, իրանց ձեռքի գործիք դարձնելով վերոյիշեալ սաներին, ամառւայ ընթացքում մի ամբողջ դաւադրութիւն են եղել կազմած նախկին պաշտօնակիցների և գլխաւորաբար տեսչի դէմ։ Էլ խանութների մէջ իրանց գլխի շուրջը հաւաքել զանազան մութ մարդկանց խմբակներ, էլ անստորագիր նամակներ ուղարկել Շահնաբաթեանի հասցէով, օժտելով այն գրութիւնները այլ և այլ սպառնալիքներով, էլ կապկային ծամածռութիւններ անել և փողոցային յիշոցներ ու երկդիմի խօսքեր ուղղել տեսչի և նորա կնոջ ետևից, էլ շարադրել խայտառակ պարսաւագրութիւն և ժողովրդի մէջ տարածել, ամեն բան, ամեն բան, ինչ կարող էին թոյլ տալ իրանց կոպիտ և միանգամայն փճացած, աղաւաղւած բնաւորութիւնները, նոքա կատարել են և դեռ շարունակում են կատարել։

—Միթէ այդ բոլորը ճիշտ է, միթէ այդ բոլորը ճիշտ է? հէնց այն է, որ զարմացած կրկնում էր Զաւրիկեանը։

—Գուցէ դուք իրական ապացոյց էք ուզում, որ հաւատաք? Ահաւասիկ! Նայեցէք!

Այդ ասելով, Շահնաբաթեանը հանեց ծոցի գրպանից մի ծալծլուած բրոշիւր և դրեց խօսակցի առաջ։

—Կարդացէք, խնդրեմ, և տեսէք, թէ ինչ բաներ ընդունակ են այդ պարոնները! Մարդ պէտք է լինի բարոյական հրէշ, որպէս զի կարողանայ հնարել այնքան սուտեր և զրպարտութիւններ, որոնցով լիքն է այս ամբաստալի գրքոյկը! Մինչդեռ տեսուչը տաքացած խօսում էր այս ոգով, Զառիկեանը թերթում էր պասքիլը, և նորա դէմքը այդ միջոցին արտայայտում էր—նողկանք։

—Ֆա՛, մարդու զզւանք է գալիս!—բացականչեց Գաբրիէլինը և գրքոյկը նետեց մի կողմ։—Եւ ով է սորա հեղինակը?

—Այդ երկու հրէշներից մէկն ու մէկը!

—Աւելի սուր վրէժխնդրութիւն դժւար է երևակայել!

—Ես պիտի պահեմ այս պասքիլը, պիտի պահեմ! Սա մի դոկումենտ է! Սա պէտք է ծնայ, իբր ապացոյց, որպէս զի իմանան ապագայում, թէ ինչպիսի մթնոլորտի մէջ էին գործում մի ժամանակ մեզ նման մարդիկ! Սա մի անգնահատելի գանձ է մեր քաղաքակրթութեան պատմաբանի համար!

Այդ խօսքի վրայ պատի ժամացոյցը զարկեց իններորդ ժամը։

Քիչ յետոյ տեսուչը գնաց վերահասու լինելու հարցաքննութիւններին, իսկ Զառիկեանը իջաւ բակը և, Արտաշէսի թևն առնելով, սկսեց շրջել այնտեղ և զրոյց անել հետը։ Ոսկերչեանի խօսքերից երևում էր, որ նա շատ գոհ է իւր վիճակից, որ նորա վրայ խիստ լաւ տպաւորութիւն են գործում տեսուչը և ուսուցիչները. ասում էր, թէ անչափ սիրեց մանկավարժական ասպարէզը, թէ իրան մի առանձին բաւականութիւն են պատճառում աշակերտների վազվզելը, խաղերը, աղմուկը.



իւր հիացքն էր յայտնում դպրանոցի բարեկարգութեան վրայ։ Գարեգինը նկատեց, որ քաղաքի հասարակութիւնը պիտի պարծենայ, որ ունի Շահնաբաթեանի նման տեսուչ, որովհետև սորա օրով և սորա նախաձեռնութեամբ են կատարւել բոլոր բարեփոխութիւնները, և ապա մի առ մի թւեց, թէ ինչումն էին կայանում այդ բարեփոխութիւնները։

—Բայց ուր է այն հրաբուխը, որի համար ինձ զգուշացնում էիր մեր թիֆլիսում եղած ժամանակ? Ինձ թւում է, ընդհակառակը, այստեղ ամեն բան խաղաղ է...

Զառիկեանը Արտաշէսի այս միամիտ նկատողութեան վրայ ժպտաց, ասելով.

—Աստւած տայ, այդպէս լինի։

Այդ նիւթի մասին այլ ևս նա ոչինչ չբխօսեց, տեսնելի պատմածներից ոչ մէկը չը հաղորդեց նորան, չը կամեցաւ սկզբից և եթ իւր բարեկամի սիրտը պղտորել չարագուշակ լուրերով։ Նա գնաց տուն, խոստանալով մի երկու ժամից յետոյ, կրկին վերադառնալ։

Ոսկերչեանը ճաշին Զառիկեանի տանն էր։ Վաղուց, շատ վաղուց է, որ նա այդ ընտանիքի հետ մի սեղանի չէր նստել։ Հասկանալի է, թէ որքան նա պիտի քաշւէր, մանաւանդ տիկին Մարիամի ներկայութեամբ, և միևնոյն ժամանակ որքան ուրախ պիտի լինէր վերականգնած նախկին բարեկամութեան համար։

Սեպտեմբերի 12-ին, երբ արդէն վերջացել էին բոլոր վերաքննութիւնները և նոր աշակերտների ընդունելութիւնը, և հեռևեալ օրը պիտի սկսւէր ուսումը, նորին արբազնութիւնը եկաւ դպրանոցը այցելելու։

Թեմական հովիւը մի վիթխարի, յաղթանդամ ծերուն էր, ինչպէս լինում են մեծ մասամբ մեր հայ եպիսկոպոսները։ Վեղարը ծածկել էր նորա ամբողջ գլուխը և ազատ էր թողել ճակատի վրայ միայն երկու խոշոր, դուրս

պրծած կնճիռների տեղ. թաւամազ, սև ու կախ ընկած յօնքերի տակ դադար էին առել ահագին մեծութեան աչքերը՝ մռայլ և պղտոր, ինչպէս մրրկայոյզ ծովը. չընայած առնական յօնքերի սևութեան, մօրուքը անխառն սպիտակ էր և գրեթէ մինչև գօտին էր հասած։

Անմեկնելի սարսուռ բերեց Ոսկերչեանի վրայ այս հուժկու ծերունին, երբ նա, մտնելով ուսուցչանոցը, կանգնեց դրան մօտ և գլխի ծանր շարժւածքով ընդհանուր ողջոյն յղեց աջ ու ձախ ամենքին։ Մի քանի պատշաճ խօսքով բարեմաղթութիւններ արաւ ուսումնական հաստատութեանը, տեսչին ու ուսուցիչներին պատուիրեց խստագաստիրութեամբ առաջ տանել դպրոցի գործերը, աստւածային ահ ու երկիւղ ներշնչել սանիկներին, ոտիղ ճանապարհից չըշեղուել և խստիւ հետևել ուսումնարանի նախագծած կարգ ու կանոնին։ Յետոյ նա անցաւ դասարանները և, մի հինգ րոպէ տեսչի առանձնասենեակում հանգստանալուց յետոյ, հրաժեշտ տւեց։

Ոսկերչեանը զարմացաւ այն առնութեան վրայ, որ նկատելի էր տեսչի և սրբազանի յարաբերութեան մէջ, և իւր այդ զգացումը նա յայտնեց Զաւիկեանին։ Եւ ահա ինչ բացատրութիւն տւեց Գարեգինը այդ առիթով.

—Այդ երկու անձանց մէջ կայ միայն մի ընդհանուր գիծ՝ երկուսն էլ փանատիկոսներ են՝ մէկը գիտութեան, միւսը՝ կրօնի, և երկուսն էլ կամակոր, անընկճելի են իրանց համոզմունքների մէջ։ Դորանից դուրս, ամեն բանով նոքա հակառակ ծայրեր են։ Մէկը մարդկութեան փրկութիւնը տեսնում է գիտութեան և առհասարակ յառաջդէմ զարգացման անընդհատ նւաճումների մէջ, միւսը ծիծաղում է քթի տակ, երբ այդպիսի փրկարար գիր են յատկացնում գիտութեան։ Մէկը իւր դաստիարակչական սիստեմը հիմնել է անհատականութեան յարգանքի վրայ, միւսը դորա մէջ տեսնում է բարք ու վարքի



անկման ամենամեծ վտանգը։ Մէկը՝ ովքերիմ թշնամի զանազան նախապաշարմունքների, միւսը իւր բոլոր էութեամբ մի մարմնացած նախապաշարմունք։ Հասկանալի է, թէ ինչու դոքա իրար հանդուրժել անկարող են։

—Իսկ ընդհարումներ եղել են՞ հարցրեց Ոսկերչեանը։

—Այդ երկուսի մէջ՞ Քանի՛ քանի անգամ! Բարեբախտաբար, հոգաբարձութիւնը տեսչի հետ համերաշխ է, և այդ մի քիչ սանձահարում է նորա հակառակորդին, ու մաքառումը մեր կերպարանք չէ ստանում։ Եթէ այդ հանգամանքը չըլինէր, օ, քար քարի վրայ չէր ճնալ...

—Ահա ուրեմն որտեղ է թագնւած քո ասած հրաբուղխը! գոչեց Ոսկերչեանը, գլուխը թափահարելով։ Այդօր միայն նա զգաց, որ իւր ուրի տակ հողը այնքան էլ հաստատ չէ։

Բայց և այդ անախորժ կասկածը երջանիկ վիճակի յարատևութեան մասին շուտով մոռացւեց։

Ուսումը սկսւած էր։ Ոսկերչեանը ունէր նաև դասեր, և դորա համար նա անչափ ուրախ էր. որովհետև ուսուցչական պաշտօնի հետ միացած էր մեծաւոր աշխատանքը։ Այժմ նա զգում էր, թէ որքան մեծ հոգեկան գոհացում է ստանում մարդ, երբ տեսնում է, որ իւր գործունէութեան, իւր կեանքի մի մասով ապրում է ուրիշների համար, և այն՝ մի մատաղ սերնդի համար! Ներկայի հետ համեմատած՝ ինչ զարհուրելի էգոիզմ, ինչ ոստրէի մենակեցութիւն—անցեալի մէջ!...

Դա առնական հասակի յեղափոխութիւն էր, որ կատարւում էր Ոսկերչեանի հոգումը։

Լաւ եղանակներին, երբ նա ազատ էր լինում, իւր պաշտօնակիցներից մէկն ու մէկի հետ կամ, աւելի յաճախ, մեն մենակ շրջում էր մօտակայ սար ու ձորում—կենդանարար դրօսանք։ Պարտէզն էր իջնում երբեմն և

երբեք չէր կորցնում իւր յոյսը, որ մի գեղեցիկ օր կը ծանօթանայ վերջապէս այն «սեւաչեայ հիւրին» հետ։

Մտերմութիւն էր հաստատւում նորա և իւր պաշտօնակցի մէջ, որի գիշերօթիկն էր նա։ Փոքրիկ զւարճութիւն չէր երկուսի համար, ճաշերից յետոյ, նստել միասին պատշգամբում և ծառերի անուշ շւաքի տակ նարդի խփել։ Իսկ երբ պատահում էր, որ այդ ժամանակ այս կամ այն ճիւղի վրայից գետին էր կաթում հասած խնձորը կամ տանձը, ինչ ուրախ բացականչութիւն էր ելնում երկուսի բերնից!

Քունը և ախորժակը բոլորովին կանոնաւորուել էին։ Քնում էր մեռածի պէս, ուտում էր, «ինչպէս գաղան»։ Կորցրած ույժերը կամաց կամաց վերադառնում էին։

Ոսկերչեանը կազդուրւում էր հոգով և մարմնով։

Միայն մի հոգս էր մնացել—պարտքերը։ Դա նորա համար մի բարոյական ծանրութիւն էր, որ ճնշում էր նորա սիրտը և ուղեղը։ Սակայն այսուհետև հնարաւորութիւն կայ կամաց կամաց դորանից էլ ազատուելու։

Դէպի անցեալի երազները, իրաւ է, նա սառած էր։ Բայց ժամանակով, յոյս ունէր, կարելի էր վերադառնալ նախկին գրականական պարապմունքներին և նոյն իսկ մասնակցել սիրողների հետ թատրոնական ներկայացումներին։

Բայց շուտով ամեն ինչ փոխւեց, տակն ու վրայ եղաւ, և կեանքի նոր մրրիկը վրայ հասաւ, ու օդը ցնդեցին Ոսկերչեանի ծրագիրները և յոյսերը...

Սա համոզւեց, որ տիրող խաղաղութիւնը առերևոյթ էր միայն. դա փոթորկի նախընթաց լռութիւն էր։

Ուսումը սկսւելուց անցել էր հազիւ մի երկու շաբաթ։

Մի օր, մեծ դասամիջոցին, Շահնաբաթեանը եկաւ ուսուցչանոց և յայտարարեց, որ երեկոյեան պիտի գումարւի մանկավարժական ժողովի արտակարգ նիստ՝ կարդալու համար մի թուղթ, որ ստացւել է սրբազնութիւնից։



Նշանակւած ժամին բոլոր ուսուցիչների ներկայութեամբ նախագահը բաց արաւ նիստը և անմիջապէս կարդաց վերև յիշւած գրութիւնը։ Սրբազանը առաջարկում էր կրկին ընդունել հեռացրած ուսուցիչներին և աշակերտներին։

Նիստը երկար չտևեց։ Վիճաբանութիւններ չեղան։ Խօսքը միայն պատասխանը ձևակերպելու մասին էր. ամենքի համար բոլորովին պարզ էր, որ անհնար է այդ առաջարկութիւնը ընդունել։

Հետևեալ օրը ժողովի վճիռը ուղարկւեց, ուր հարկն է։

Տեսչի հակառակորդները, տեղեկանալով այդ մասին, կատաղեցին և իրար անցան...

Դարձեալ սկսեցին պտտել քաղաքի ամենաստւար և անկիրթ խաւերի մէջ հազար ու մէկ հրէշաւոր լուրեր, որոնց նպատակն էր վայր գցել տեսչի և ուսուցչական խմբի պատիւը և ներկայացնել նոցա, իբրև վնասակար տարրեր։ «Սա անաստւած է, նա չէ ընդունում սատանայի գոյութիւնը. այս մէկը սխալներ է գտնում ս. գրքի մէջ, այն միւսը վիրաւորում է հոգևորականների պատիւը»... և այլն և այլն։ Եւ ամենից ցաւալին այն էր, որ սա-ներից մի քանիսը, բարեբախտաբար միայն մի քանիսը, մասնակից էին այս խլրտումներին...

Կրկին թուղթ եկաւ սրբազանից, այս անգամ գրըւած աւելի խիստ ոճով։ Դա առաջարկութիւն էր—անպայման ընդունել վերոյիշեալ անձանց։

Էլ մանկավարժական, էլ բարոյական, էլ ոչ մի հիմք չմնաց, որին չյենւէր ժողովը իւր մերժումը պատճառաբանելու համար։ Ոչինչ չօգնեց։

Մնաց միայն մի հատ եղք—ներկայացնել սրբազանին միահամուռ հրաժարական։

Եւ այդ կատարեց։

Ամբողջ կէս ամիս շարունակւում էին գրաւոր բանակցութիւնները, և թէ որքան հոգեկան անհանգստութիւններ կրեցին տէսուչը և ուսուցիչները, այդ գիտէին միայն իրանք և վերև—Աստուած։

---

Ամէն բան վերջացած էր։ Դպրոցի համար կազմըւեց ժամանակաւոր վարչութիւն, իսկ նախկին խումբը ցրիւ եկաւ զանազան տեղեր։

Զառիկեանը և Շահնաբաթեանը իրանց ընտանիքներով ուղեւորւեցին Թիֆլիս, որտեղ կարդացին մի լրագրի մէջ դպրոցական անցքերի խեղաթիւրւած նկարագիրը, որի մէջ Շահնաբաթեանը իւր խմբի հետ ամենագռեհիկ ծաղրի էին մատնւած։

Իսկ Ոսկերչեանը...

Բայց բաւական է։ Այստեղ ընդհատում եմ իմ պատմութիւնը։ Առանց այն էլ ես շատ զբաղեցրի ընթերցողիս մի հատարակ մահկանացուի կեանքով։ Թողնենք ապրի և մի առժամանակ անյայտանայ կեանքի ծովի մէջ։

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻ

# ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

## ԿԵՍՆ-ՔԻ ՈՅԺԸ

### I

Թիֆլիսի երկնակամարը ծածկւած էր ամպերով, որոնք, սկզբումը թանձր, մռայլ և կոհակների պէս, գնալով հաւասարւում և միապաղաղ-մխրագոյն կերպարանք էին ստանում։ Գրեթէ անընդհատ կայծակները յաջորդւում էին նմանապէս անընդհատ որոտումներով։ Փողոցներում երթևեկողների մէջ մի առանձին իրարանցում էր նկատւում։ Կառապանները իջնում էին և կառքերի հովանիները վեր քաշում։ Մտերը սրընթաց կարում էին օդը և աչքից անհետանում։ Իւրաքանչիւր ոք շտապում էր փոթորկից պատսպարւելու։

Օրը մթին էր, և երեկոն վրայ էր հասել վաղաժամ։

Մի այսպիսի եղանակին Պրոսպեկտի վրայ ծանրաքայլ շարժւում էր մի պատկեր, որը հեռուից նայողին կարող էր թւալ, իբրև թափառաշրջիկ և անապաստան մէկը։ Ոչ մի առարկայ չէր գրաւում նորա ուշադրութիւնը։ Գլխակախ, հայեացքը գետնին, նա քայլում էր մի այնպիսի անտարբերութեամբ, կարծես փոթորիկը նորա համար չէր։ Երևում էր, որ ինքնապաշտպանութեան զգացմունքը բթացած պիտի լինէր այդ անձի մէջ։

Հեշտ բան չէր որոշել նորա տարիքը։ Մազերին նայես, երիտասարդ էր, բայց աչքերը այն աստիճան յոգնած և մարած էին, այնքան անհաստատ և դանդաղկոտ էր քայլափոխը, և մէջքը, գետնին նայելու սովորութիւ-

նից, այնչափ կորացած, որ նա ծանր կեանքի շատ տասնեակ տարիներ գլորած ծերունու էր յիշեցնում։

Հագուստը խղճալի էր։ Մոխրագոյն գլխարկը, իւղոտած և տեղ տեղ պատած խոշոր բծերով, ծածկել էր մի գլուխ, որը մի եօթ տարի առաջ զարդարած էր սիրուն գանգուրներով։ Հնամաշ պիջակի վեր քաշած օձիքի արանքից երևում էր, շապկի փոխարէն, մերկ մարմինը։ Շարւարը մի ոտին աւելի երկար էր, միւսինը կարճ, երկու կողմն էլ հաւասարապէս ծղոտած։ Կօշիկն էր միայն, որ բանի նման էր, այն էլ, իհարկէ, մի բարի մարդու նէր կը լինէր։

Այն րոպէին, երբ նա, ծռելով ճանապարհը, անցնում էր Կովկասեան Թանգարանի մօտով, հակառակ մայթի վրայ երեացին երկու ջահել երիտասարդներ, որոնք, նորան տեսնելուն պէս՝ կանգ առան, և մէկը, մատով ցոյց տալով, ասաց.

—Նայիր, նայիր, Գէորգ, սա նա է, որին ուզում էիր տեսնել։

—Ուրեմն սա է... Ես անպատճառ պիտի ծանօթանամ հետը։

Բայց անձրևը յորդ թափւում էր, և էլ ժամանակ չէր ծանօթանալու։ Երիտասարդները մօտակայ կամարատունը գնացին և, մի մի բաժակ թէյ պատնջելով, սկսեցին զրոյց անել այնտեղ նորա մասին։

Ջահել երիտասարդներից մէկը մի 18 տարեկան պատանի էր, մաքուր և կոկ հագնւած, կրակոտ աչքերով, դիւրաշարժ և անհանգիստ։ Թատրոնի սէրը, որ ծագել էր նորա մէջ դեռ ևս մանուկ հասակից, այն աստիճան կլանել էր նորա ուշ ու միտքը, որ նա երբորդ դասատան նստարանի վրայից ոտը դրել էր բեմի վրայ, ձգել ուսումը և այժմ դերասանական խմբի հետ ներկայացումներ էր տալիս։



Իսկ միւսը, Գէորգ Սագաթեանը, որը ներկայ պատմութեան մէջ պէր պիտի խաղայ, հասակով փոքր ինչ աւելի մեծ էր առաջինից, աւելի ծանրաշարժ, խոշորադէմ և հպարտ, երկայն գանգրահեր մազերով, կապոյտ ակնոցներով և կարճ, բայց թաւ մօրուքով։

Սա նոր էր աւարտել հոգևոր դպրանոցը, նոր էր հրատարակել «Փոքրիկ պատմութիւնների» ժողովածուն, որի մասին մի շատ նպաստաւոր գրախօսութիւն երևաց «Խօսք և Գործ» պարբերական հրատարակութեան մէջ։ Այժմ նա այս օրգանի աշխատակիցն էր, և նորա առաջնակարգ միակ հոգսն էր գտնել մի բարերար, որը համաձայնէր միջոց տալ նորան բարձրագոյն ուսում ստանալու արտասահմանում։

—Ես լսեցի—խօսեց Սագաթեանը—որ այսօրւայ մի լրագրում լուր է եղել տպւած նորա մասին։

—Այո, կար, միթէ չես կարդացել։ Այս րոպէին։

Եւ Սեդրակը (Սագաթեանի խօսակից ընկերը), սեղանների վրայ թափթփւած լրագրների միջից ընտրելով իւր ուզածը, կրկին տեղը եկաւ, նստեց և, ոտը ոտի վրայ դնելով, սկսեց կարդալ հետևեալը. «Վերջին օրերս Պրոսպեկտի վրայ կարելի է հանդիպել մի երիտասարդ հայի, որի հիւանդոտ, խղճալի դէմքը և աղքատիկ, գծուծ հագուստը ակամայ գրաւում են անցորդների ուշադրութիւնը։ Նորա անունն և ազգանունն է Արտաշէս Ոսկերչեան։ Տարիներ առաջ նա մեր դերասանական խմբի անդամներից մէկն էր և մասնակցում էր ներկայացումներին։ Նա ունի հրատարակած նաև «Բանաստեղծութիւններ» ժողովածու։ Աստմ են, պարապել է և ուսուցչութեամբ հայոց դպրոցներում։ Մի այսպիսի անցեալի տէր մարդը ստիպւած է այժմ ձեռքը մեկնել և ողորմութիւն խնդրել անցւորներից։ Ամօթ կ'լինի դերասանների համար, եթէ օգնութեան ձեռք չկարկառեն իրանց նախկին արեւստակից ընկերոջը և չթեթևացնեն նորա վիճակը»։

Սադաթեանը, ընթերցումը լսելուց յետոյ, քմծիծաղ տւեց և գլուխը թափահարելով ասաց.

—Ես զարմանում եմ, ճշմարիտ, և չեմ հասկանում, թէ ինչու անպատճառ դերասանները պիտի օգնեն այս մարդուն: Իսկ իրանք, գրագէտները և լրագրական աշխատակիցները, ես պիտի քաշուեն? Նոյնպէս և ուսուցիչները: Ուրեմն սրանք ևս ազատ են բարոյական պարտականութիւնից? Չէ որ Ոսկերչեանը նոյնքան է դերասան, որքան գրագէտ է և ուսուցիչ?

—Ես քեզ հետ բոլորովին համաձայն եմ, Գէորգ: Առաջինը, հէնց մենք ինքներս կարօտ ենք ուրիշների օգնութեան, էլ ուր մնաց, որ...

—Ո՛չ,—վրայ բերեց խօսակիցը,—ասենք, այդ էլ ճիշտ չէ: Դուք, եթէ ուզենաք, կարող էք...

—Բայց ինչպէս կարող ենք, որ ասում ես? Ինչքան է լինում մեր ներկայացման եկամուտը? Դու գիտես, թէ քանի մաս ենք անում մի հասոյթը, և որքան է ընկնում ամեն մէկիս? Մի ընչին, մի ողորմելի գումար! Հաւատա ինձ, որ մենք պարտքերով ենք ապրում: Մայրը ծայրի չի հասնում երբէք! Խաչը վկայ!

—Շատ կարելի է: Բայց իմ խօսքը ձեր մասին չէ միայն: Իմ ասածն էլ հէնց այն է, որ մարդասիրական գործը այս կամ այն դասակարգի յատուկ պարտականութիւնը չէ, այլ նա վերաբերում է ամբողջ հասարակութեան: Մանաւանդ ներկայ դէպքում: Եթէ Ոսկերչեանը գոյութիւն ունի մեր մէջ, նշանակում է, որ մեր կեանքի պայմանները այնքան էլ նախանձելի չեն: Եթէ ճիշդ է, որ այդ երիտասարդը եղած է խելօք, ազնիւ և ընդունակ, և այնուամենայնիւ այնպիսի թշուառ դրութեան է հասել, անշուշտ պէտք է եղրակացնել, որ մեր կեանքը իւր զոհերը ընտրում է ազնիւների միջից: Այո, մեր հասարակութեան պարտքն է ընկածներին բարձրացնել



քանի որ այդ ընկածները ազնիւների միջից են ընտրուած:

Այսպէս էր դատում Սադաթեանը, և ինչպէս նորա արտաքինը, նոյնպէս և լրջամտութիւնը ցոյց էին տալիս, որ այդ երիտասարդը շատ կարդացել է, շատ խորհել է և իւր հասակից շատ առաջ է գնացել, մի երիտասարդ, որը միանգամայն արժանի էր բարձրագոյն կրթութեան:

Երբ դուրս եկան կաթնատնից, զով քամի փչեց երեսներին: Արդէն մթնել էր: Անձրև չկար այլ ևս, թէև երկինքը դեռ ամպամած էր: Լապտերները վառուած էին փողոցում, և ճառագայթները խաղում էին լճացած ջրերի և կառքերի անիւների տակից ցատկտող կաթիլների վրայ: Քահել երիտասարդները գնում էին զրոյց անելով և նորա խօսքը կրկին նորա մասին էր:

## II

Հետևեալ օրը, իրիկնադէմին, Ոսկերչեանը նստած էր Փառաց տաճարի առջև նստարանի վրայ: Գլուխը կախ էր ընկել մի ուսի վրայ, կիսախուփ. սառած հայեացքը, գրեթէ առանց թարթելու, յառած էր մայթի սալայատակին: Մարմինը անշարժ էր անզգայութեան չափ:

Մի ձայն, որ նորա անունը արտասանեց, ստիպեց նորան գլուխը բարձրացնել և սթափել քնէած գրութիւնից:

Նորա առջև կանգնած էր մի թխադէմ երիտասարդ լայնեղր գլխարկով, գանգուր մազերով, կապոյտ ակնոցներով, ձեռքին մի չէչոտ սև գաւազան:

—Կրնաբերէք համարձակութեանս համար,—խօսեց անծանօթը. դուք չէք պարոն Ոսկերչեանը?

Դրական պատասխանը լսելուց յետոյ, երիտասարդը շարունակեց.

—Թոյլ կըտաք ինձ ձեզ հետ ծանօթանալ?

—Խնդրեմ, խնդրեմ,—պատասխանեց Ոսկերչեանը հեզահամբոյր ձայնով, քաղաքավարութեամբ վեր կենալով տեղիցը և մեկնելով իւր դողդոջուն ձեռքը, որի վրայ մատները ծառի չորացած ճիւղերի էին նմանում:

—Շատ ուրախ եմ: Սադաթեան: Գէորգ Սադաթեան: Իմ ազգանունը գուցէ ձեզ յայտնի է?

—Ներեցէք, ինչպէս ասացիք?

—Գէորգ Սադաթեան:

—Սադաթեան?... Սադաթեան?... Այո, կարծեմ, ես ձեզ մի տեղ... Բայց ո՛չ, նա չէր կարող լինել... Ես մոռացել եմ, ճշմարիտ, գուցէ և...

Ձեռքը ճակատի վրայ շփելով, Ոսկերչեանը, ըստ երեւութին, կամք և ոյժ էր գործ դնում լաւած անունը մտաբերել և կրկնում ու երեքկնում էր կամացուկ. «Սադաթեան, Սադաթեան»... Երիտասարդը, կամենալով ազատել նորան մի աւելորդ աշխատանքից, ասաց.

—Է՛հ, այդ միևնոյնն է: Զարժէ դորա համար գլուխ կոտրել: Բան է, ասացի: Վայրկենական լռութիւնից յետոյ, Սադաթեանը խնդրեց նորան գնալ իւր մօտ: Անապատելի էր այս հրաւէրը, և Ոսկերչեանը չգիտէր, ինչ պատասխանել, ու լուռ մնաց:

—Լռութիւնը համաձայնութեան նշան է, գնանք ուրեմն:

Այս առաջարկի, նոյն իսկ այս ձայնի մէջ, բնաւորութեան մի այնպիսի վճռականութիւն էր զգացւում, որ Ոսկերչեանը կամայ ակամայ հպատակեց: Բայց միևնոյն ժամանակ մտածում էր. «Ով է այս պարոնը? Ինչու ծանօթացաւ ինձ հետ? Ինչով արժանացայ մի անցորդի ուշադրութեանը? Ուր է ինձ տանում և ինչի համար?

Կէս ժամ անցաւ, մինչև որ տեղ հասան: Այնքան դանդաղ էր քայլում Ոսկերչեանը:

Սադաթեանը հանեց պիջակը և, ներողութիւն խնդրելով, որ ժիլետով է, նստեց սեղանի մօտ հիւրի դիմաց: Վերջինս համարեա բոլոր ժամանակ ձեռքը օձիքի մօտից չէր հեռացնում: Բայց ինչքան էլ աշխատէր նա ծածկել իւր ողբալի մերկութիւնը, տանտէրը վերջ ի վերջոյ տեսաւ:

Տեսաւ, և մի այնպիսի խղճահարութեամբ լցւեց, որ հարկադրւած էր շրթունքը կրծել, յուզումը թագցնելու համար: Նա տեսել էր կանանց, որոնք, ցնցոտիների մէջ կորած, ձմեռւայ սառնամանիքին, ձիւնի տակ, մի ձեռքով կաթնակերին էին կերակրում, միւսը պարզել էին ողորմութիւն խնդրելու: Տեսել էր անդամալոյծներ, որոնք մարդկային կերպարանքի տեղ, մնեղէն զանգւածի նմանութիւն ունէին, և մարդիկ փուռած թաշկինակի վրայ ձգում էին իրանց լումաները, որպէս զի գունդ միսը առնեն: Տեսել էր անտիրական մանուկներ, որոնք համարեա մերկանդամ, գայլի պէս քաղցած, վերցնում էին գետնից կերւած ու ձգւած խնձորի մնացորդը և լափում իսկական գազանի ախորժանքով: Բայց երբէք մարդ-էակի անկումը այնքան ողբալի չէր երեւացել նորան, որքան այժմ:

Թէյ արդէն պատրաստ էր:

Ռուս աղախինը, մատուցարանը ձեռքին, ներս եկաւ, բայց հէնց որ նկատեց իւր պարոնի մօտ նստած օտարական հիւրին, իսկոյն ծիծաղը բռնեց: Ծիծաղում էր անձին, սրտումը, ցնցւում էր մարմնով, դողում էր ձեռքը և մատուցարանը: Զարմանքով նայեց նա գիշերաթիկի աչքերին, կարծես կամենում էր հարցնել, թէ որտեղից է ճարել այս հազւագիւտ արարածին և ինչի համար է բերել իւր մօտ: Սադաթեանի լսէթ հայեացքը չաղդեց: Դրան մօտից նա կրկին գնաց այցելուին, շրթունքը ծռացրեց, թափահարեց ուսերը, և, երբ դուրս եկաւ, փրթկոցի ձայնը բարձրացաւ: Պարոնը, բարկութիւնից կարմրած, ակռաները կրճտացնելով, անմիջապէս վազեց եռեկը:

Ոսկերչեանը ինձ մենակ, արմունկը սեղանին, գլուխը ձեռքի վրայ, աչքերը խփած։ Նա լաւ հասկացաւ իւր ներկայութեամբ կատարած ինջախաղի բոլոր նշանակութիւնը, բայց դա առաջին և վերջին անգամը չէր, որ իրան ծաղր ու ծանակի առարկայ էին շինում։

Ջիչ յետոյ Սապաթեանը եկաւ։

—Ձեր թէյը կըսառչի, պարոն Ոսկերչեան,—ասաց նա, նստելով տեղը։

Ոսկերչեանը մի երկու կում խմեց և ապա սկսեց աչքերը դէս ու դէն պտտեցնել, կարծես մի ինչ որ բան էր որոնում։

—Դուք սովորութիւն չունիք թէյի հետ հաց գործ ածել? Դիմեց նա բարի երիտասարդին, երկարատև սովածութիւնից վերջնականապէս յաղթահարուած։

—Ո՛չ,—պատասխանեց Սապաթեանը։ Բայց այս րոպէիս ազախին կ'ուզարկեմ...

—Ո՛չ, ոչ, հարկաւոր չէ, խնդրեմ չանհանգստանաք,—շուտափոյթ վրայ բերեց հիւրը, երկիւղ կրելով, որ մի՛ գուցէ անհամեստ աղջիկը կրկին երևայ իւր աչքին։

—Այո, ես էլ կարծում եմ, աւելի լաւ է ախորժակ պահէք։ Այս երեկոյ մենք միասին ընթրիք կ'անենք։

—Դուք տանն էք ճաշում? հարցրեց Ոսկերչեանը, որպէս զի ըստ այնմ իւր համաձայնութիւնը տայ կամ չտայ։

—Ո՛չ, շատ թանկ են վերցնում։ Ճաշարանը էժան է նստում։

Այդ խօսքի վրայ հիւրը միամտեց և սրտումը ուրախացաւ։

Սապաթեանը մտքումը դրել էր մօտիմօտոյ ծանօթանալ այս խորտակուած մարդու անցեալին և աշխատում էր նոյն այդ ուղղութեամբ վարել խօսակցութիւնը։



Բայց Ոսկերչեանի միամանակ պատասխանները նորան չէին գոհացնում. չգիտէր, ինչ միջոց պէտք է գործ դնել, որ նա թողնի իւր ծածկամտութիւնը և սիրտը բաց անի վերջապէս, ինչպես բարեկամը բարեկամի առաջ։

—Դուք, կարծեմ, դերասան եղած էք, չէ՞, պարոն Ոսկերչեան? կրկին սկսեց նա իւր հարց ու փորձը, ցանկանալով նորան խօսեցնել։

—Այո՛,—պատասխանեց թատրոնի նախկին սիրահարը, և նորա հայեացքը, մտամոլոր մարդու աչքերի պէս, կանգ առաւ անորոշ կէտի վրայ։

—Բայց, ասացէք, խնդրեմ, ինչու՞ ձգեցիք բեմը?

Հարցումը ինձ անպատասխան։

—Ինձ յայտնի չէ, թէ որքան մեծ է եղել ձեր արտիստական ձիրքը, բայց ես ափսոսում եմ, որ դուք հեռացել էք գրականական ասպարիզից։ Ես պատահմամբ գտայ իմ մի ծանօթի գրքերի մէջ ձեր «բանաստեղծութիւնները»։ Կարդացի։ Մի քանիսը ինձ այնքան դուր եկան, որ անգիր եմ արել։

Մի գոհ ժպիտ խաղաց նախկին բանաստեղծի դէմքին և էլ խօսքն անցաւ։

—Մանաւանդ յաջողած է այն մէկը, որը այժմ երգւում է ժողովրդի մէջ։

—Երգւում է? Զգիտէի...։

—Մի՞թէ? Այդ զարմանալի է։ Կ'ուզէք, երգեմ, լսեցէք։

Պատասխանի փոխարէն, Ոսկերչեանը ժպտաց։

Սապաթեանը սկսեց եղանակել։ Ձայնը այնքան լաւ չէր, բայց երգում էր զգացմունքով։

Հեղինակը ձեռքով ծածկեց աչքերը, այտերի ծալծլած կաշին աւելի ևս կծկեց, բայց նորա արտասուքը երգիչը չտեսաւ։ Թէ ինչ աշխարհ բացեց Ոսկերչեանի առջև, այդ գիտէր միայն ինքը։

Վաղուց, շատ վաղուց է, որ նա լաց չէր եղել։

—Բայց դուք կը հաւատաք, պարոն Ոսկերչեան? Ես կարծում էի, թէ այս երգի հեղինակը կենդանի չէ և...

—Եւ չէք սխալւել...

—Ինչպէս?

—Ես—մի կիսակենդան դիակ եմ և մեռելից զանազանւում եմ նորանով, որ դեռ շնչում եմ և թաղւած չեմ։

—Երեւում է, դուք շատ յուսահատւած էք?

Ոսկերչեանը ոչինչ չպատասխանեց։

—Բայց դուք դեռ կարող էք վերակենդանանալ...

Ոսկերչեանը գլուխը թափահարեց։

—Այո, այո, ես համոզւած եմ, որ դուք կարող էք հոգով վերածնւել։

—Ո՛չ, ո՛չ,—պատասխանեց թշւառ մարդը, գլուխը թափահարելով։

—Այնուամենայնիւ ես կրկնում եմ. այո, կարող էք։

Ոսկերչեանը այլ ևս չհակառակեց։

—Աշխարհում կը գտնւեն բարի մարդիկ, որոնք չեն թողնիլ, որ դուք կորչէք։—Դուք չէք հաւատում, որ կան բարի մարդիկ? Գուցէ դուք նոյն իսկ ատում էք մարդկանց?... Այո?

—Ամենից շատ ես ինձ եմ ատում։

—Իզուր, իզուր։ Եթէ ձեր կեանքի պայմանները փոխւեն, դուք կը լաւանաք, բոլորովին ուրիշ մարդ կը դառնաք։ Զախորդութիւնները անցողական բաներ են։ Կեանքի կռւի մէջ... Սարգաթեանը դեռ երկար կը շարունակէր այս ոգով, եթէ ունկնդիրը բացէիբաց ցոյց չտար իւր անհանգստութիւնը։ Սա հոգոց էր քաշում, ինչպէս մի մարդ, որի սիրտը հատնում է վշտից կամ անհամբերութիւնից. ձեռքով բռնում էր գլուխը, ճակատը և էլ իսկոյն թողնում. կորացնում էր մէջքը և էլ կրկին ուղղւում ծանր շնչարգելութեամբ։ Նա նման էր հիւանդի,



որը նեղանում է մարմնի վրայ անյարմար տեղում բացւած վէրքից։

Սարգաթեանը ընդհատեց խօսքը, նայեց ժամացոյցին և ասաց.

—Մի քիչ վաղ է, բայց ոչինչ, կարող ենք գնալ։ Կընստենք ճաշարանում, առաջներս կը դնենք գինի կամ գարեջուր և կը շարունակենք մեր խօսք ու զրոյցը։

Ու գնացին։

Սարգաթեանը ընտրեց ճաշարանի մեկուսացած սենեակը և, կանչելով ծառային, պատւիրեց, ինչ հարկն էր։ Յետոյ հանեց վերարկուն, կախ արաւ, գլխարկը նետեց աթոռի վրայ և, ձեռքերը ետևին, կամացուկ սուլելով սկսեց նայել պատից քաշ արած նկարը, որը այնքան էլ համեստ բովանդակութիւն չունէր։

Քիչ յետոյ պատւիրւած կերակուրները բերին մի շիշ գինու հետ։ Ոսկերչեանի բաժինը արագութեամբ կլանւեց։ «Ինչպէս երեւում է, այս թշւառականը գայլի պէս քաղցած է», անցաւ հիւրասիրողի մտքով, սա անմիջապէս պահանջեց երկրորդ բաժինը, և հիւրը չընդդիմացաւ։

Սարգաթեանը ածեց գինին, ձեռքն առաւ իւր բաժակը և, մտաբերելով Ոսկերչեանի ոտանաւորներից մի հատւած, արտասանեց.

«Էլ ճար չկայ. արի, ընկեր,
Մէջ տեղ դնենք լաւ գինի.
Խմե՛նք, երգե՛նք և պար բռնենք—
Ինչ լինում է, թո՛ղ լինի!...»

Այս հարազատ հնչիւնները Ոսկերչեանին անցեալը միտը բերին, այն անցեալը, երբ նա դեռ ևս յոյսերի դիւթական աշխարհումն էր, երբ նա գիտէր զգալ, սիրել, ոգևորւել...

Նորա գլուխը ինքն իրան թեքւեց ուսի վրայ, և աչքերը հեռու հեռու նայեցին։

Բայց սեղանակիցը իսկոյն նորան սթափեցրեց, առի-
պելով բաժակը զարկել բաժակին և խմել:

Գինու երկրորդ բաժակից յետոյ, Ոսկերչեանի դէմքի
մռայլ արտայայտութիւնը մեղմացաւ, թոյլ ժպիտ խա-
ղաց շրթունքի անկիւններում, և նա իւր պատասխան-
ների նկատմամբ առաջուայ պէս անմատչելի չէր երևում
Սադաթեանին: Եւ սա այս պատեհ հանգամանքը ձեռքից
չտւեց:

Ու տեղացին հարցերը. «որտեղ է ստացել նա իւր
կրթութիւնը, ինչու ուսումը կիսատ է թողել, ինչ յա-
ջողութիւններ կամ ինչ ձախորդութիւններ է կրել նա
իւր կեանքումը, ինչն է նորան հասցրել ներկայ դրու-
թեան, ովքեր են եղել ընկերները» և այլն:

Ոսկերչեանը խօսում էր շատ դանդաղ և ցածր ձայ-
նով: Յիշողութիւնը սաստիկ թուլացել էր: Շատ անգամ
դէմ էր առնում առօրեայ ամենագործածական բառերին,
այնպէս որ խօսակիցն էր շտապում վրայ գցել, երբեմն
նախադասութիւնը յանկարծակի ընդհատւում էր, և նա,
մոռանալով, թէ ինչ էր ասում և ինչ պիտի ասէր,
լռում էր և, ոչխարի նման, ապուշ կտրած՝ նայում ան-
շարժ մի կէտի վրայ:

Բայց նորա հաղորդած կցկտուր տեղեկութիւններից
Սադաթեանը այնուամենայնիւ կարողացաւ մի յայտնի
գաղափար կազմել «կիսակենդան դիակի» անցեալի մասին:
Երբեմն մի սուր միտք, մի առողջ գաղափար, մի երգի-
ծական դիտողութիւն, ինչպէս կայծեր, ցատկում էին
այս ծեր երիտասարդի պատմութիւնից և նորա երեսը
վայրկենաբար լուսաւորում: Շնորհիւ թշւառութեանց և
քաշած դառը նեղութիւնների, ամեն բան կեանքի մէջ
նորա աչքում մռայլ գոյն էր ստացել, և շրջապատող
մթնոլորտը թւում էր աւելի անտանելի, քան թէ իս-
կապէս նա էր: Բայց և այնպէս, չնայած միակողմանիու-



թեան, որքան ճշմարտութիւն կար այս անյաջողակի
դժնեայ քննադատութեան մէջ!

—Ինձ խեղդեց այն մթնոլորտը, որի օդը ես ծծում
էի,—այսպէս վերջացրեց նա իւր պատմութիւնը:

Երկրորդ բաժին կերակուրը Ոսկերչեանը կերաւ այն-
պիսի ախորժակով, կարծես նոր էր նստել սեղանի: Մինչ-
դեռ Սադաթեանը դէմ էր առել նոյն իսկ առաջի բաժ-
նին, նա պատրաստ էր երրորդ ափսէն էլ մաքուր սրբել,
եթէ միայն չամաչէր իւր ծանօթից:

Եւ, իհարկէ, այս զարմանալի չէ: Երկու օրւայ
քաղցածութիւնից յետոյ, ով կարող է իրան աւելի քա-
ղաքավարի պահել? Սադաթեանը առաջարկեց դարձեալ
մի բաժակ գինի: Ոսկերչեանը ասաց, թէ ոգելից ըմպե-
լիքը իրան վնասում է, և աւելի չէ կարող:

—Մի շիշը երկու հոգու,—ինչ պիտի անի? Համո-
զում էր առաջինը: Դեռ կիսից աւելին ես եմ խմել:
Վերջին բաժակն է, խմե՛նք ընկերաբար!

Եւ ընկերը այլ ևս չհակառակեց:

Բայց մի րոպէ անցաւ չանցաւ, գոյնը գցեց, ինչպէս
դած: Ոտ ու ձեռքը թուլացաւ, և գլուխը, ինչպէս մեռե-
լի գլուխ, ինքն իրան կախ ընկաւ ուսի վրայ:

—Ինչ պատահեց, պարոն Ոսկերչեան? գոչեց Սադա-
թեանը՝ գունաթափ և, մօտ գնալով, բարձրացրեց նորա
գլուխը և նայեց ուղիղ աչքերի մէջ:

—Ոչինչ, սիրտս է միայն... Սիրտս...

—Երևի, գինին ազդեց?

—Գուցէ...

—Ա՜խ, ինչ յիմարութիւն էր իմ կողմից! Բացա-
կանչեց նա վախեցած ձայնով և, ձեռքը դնելով նորա կըր-
ծքի ձախ կողմի վրայ, զգաց սրտի անախորժ թրթռոցը:
Կարծես կեանքը բաղխում էր կուրծքը, որ տեղ բացւի, և
կարողանայ դուրս գալ ու ազատւել փլատակւած մարմնից:

—Զանցաւ? հիմա չանցաւ? անհանգստութեամբ հարցնում էր Սադաթեանը։

Ջուր խմեցնելը չօգնեց, պիջակը ետ արաւ, և այժմ, եթէ կասկած ունէր, իւր աչքովը տեսաւ, որ խեղճի հագին շապիկ չկար։ Մերկ մարմնի վրայ բաճկոնակն էր։

Երբ Ոսկերչեանը մի քիչ հանգստացաւ, Սադաթեանը նկատեց.

—Ձեզ անհրաժեշտ է հիմնաւոր կերպով բժշկուել։ Ինչպէս երեւում է, ձեր կազմածքը սաստիկ թուլացել է։

—Ես կամենում եմ գնալ... Ներողակալ եմ,—խօսեց հիւանդը վեր կենալով տեղից և ձեռքը մեկնելով իւր բարեսիրտ ծանօթին։

—Այո, գնանք։ Ես էլ կըգամ ձեզ հետ։ Ես կ'ուզէի տեսնել ձեր կացած տեղը։ Կարելի է?

Սորա այս դիտաւորութիւնը կարծես դուր չեկաւ Ոսկերչեանին, և սա դժկամակութեամբ պատասխանեց.

—Նեղութիւն մի՛ քաշէք, խնդրեմ։ Ես կ'երթամ։

Սադաթեանը այնուամենայնիւ գնաց նորա հետ՝ թշւառ մարդու օթեւանը անձամբ անձին տեսնելու։

Դա մի նկուղ էր մի կիսաւեր տնակի մէջ և աւելի նման էր հաւաքնի, քան թէ սենեակի, մութ, նեղլիկ, ցածր և կեղտոտ։ Օդը խոնաւ էր այնտեղ և բորբոսի հոտ էր փչում։

—Դուք այստեղ էք բնակւում? հարցրեց երիտասարդը, տրտնջալով աչքերը ակնոցի տակից։

—Այո։

—Այստեղ առողջը կարող է հիւանդանալ, իսկ հիւանդը... Իսկ ուր է ձեր անկողինը?

—Չկայ։

—Ուրեմն գետնին էք պառկում?

—Այս խսիրի վրայ։

—Ուր է այստեղ խսիրը?... Հա, այդ?... Բայց վերմակ չունիք?



—Մի վերարկու ունիմ, այն եմ գցում վրաս։

—Հըմ,—արտասանեց Սադաթեանը, մեծախորհուրդ կերպով թափահարելով գլուխը։

«Սա ուրեմն այն մարդկանցից է, որոնք տնային կենդանիների ապրուստին ամենայն իրաւամբ կարող են նախանձել», մտածում էր նա։ «Անպիտաններից ամենապիտանը լինեմ ես, եթէ չաշխատեմ սորան օգնել»։

Այսպիսի ուխտ արաւ աղնւասիրտ երիտասարդը և դուրս եկաւ Ոսկերչեանի մօտից։

## III

Սա վճռեց դիմել ամենից առաջ Գարեգին Ջաւիկեանի օգնութեանը, որովհետև Ոսկերչեանը իւր անցեալի մասին խօսելիս, երախտապիտութեամբ և յարգանքով էր յիշում այդ մարդու անունը։

Ջաւիկեանը այժմ կատարելապէս առնական հասակումն էր, երեք, մէկը միւսից սիրուն, երեխաների հայր, բայց, չնայած իւր տարիքին, դեռ նոր էր յայտնւում գրականութեան մէջ։ Նորա առաջին փորձը, որը մի վէպ էր ուսուցչական կեանքից, յաջողութիւն չունեցաւ և հետք ու յիշատակ չթողեց իւր եռւից։ Ցետոյ նա ինքն էլ տեսաւ, որ իւր գրուածքը աւելի լաւ վիճակի արժանի չէր։ Այն ինչ նորա մէջ ոչ մեկն չէին նւազում գրականական հակումները, այլ ընդհակառակը, աճում զարգանում էին։ Իսկ երբ նա գտաւ իւր իսկական կոչումը, խորապէս զգաց, որ իրան շատ բան է պակասում։ Միջնակարգ ուսումը բաւական չէ, որ մարդ քննադատ դառնայ. անհրաժեշտ էր հիմնաւոր գիտութիւն ձեռք բերել։ Ահա այդ պահանջն էր, որ դրդեց նորան դէպի բարձրագոյն կրթութիւն։ Եւ իրաք, թեմական դպրոցի վերջին դէպքից յետոյ, որի մասին խօսք եղաւ ներկայ պատմութեան մէջ, առանց տատանումների, իւր կնոջ և նո-

բածնի հետ ճանապարհ ընկաւ դէպի արտասահման— Գերմանիա։ Զորս տարուց յետոյ նա վերադարձաւ Կովկաս։ Երկու տեղից նորան հրաւիրեցին տեսչի պաշտօնով—նա չընդունեց և գերադասեց լինել ուսուցիչ Ներսիսեան դպրանոցում, քան թէ տեսուչ Երևանում կամ Շուշայ մէջ։ Նոյն այդ միջոցին հիմնուել էր մի նոր օրգան, որի մօտ աշխատակիցներից մէկը դարձաւ նա։ Այս պարբերական հրատարակութեան անունն էր—«Խօսք և գործ»։

Զառիկեանին տեսնելու համար, հետևեալ օրը Սադաթեանը գնաց Ներսիսեան դպրանոցը։ Մեծ դասամիջոց էր, աշակերտները վազվզում, խաղում, աղմուկ էին անում փոքրիկ բակի մէջ և պատշգամբների վրայ։

Սադաթեանը մնաս ուսուցչանոցը և տեսնուեցաւ Զառիկեանի հետ։

—Դուք գիտէք նորա տեղը? հարցրեց վերջինս, երբ իմացաւ, որ խօսքը Ոսկերչեանի մասին է։

Յետոյ աւելացրեց.

—Լրագրից ես տեղեկացայ, որ նա այստեղ է և շատ խղճալի դրութեան մէջ է, բայց, դժբախտաբար, ոչ ինձ է յաջողւում նորան տեսնել, ոչ նա ինքն է գալիս ինձ մօտ։

—Նա ինձ ասաց, որ իբր դուք նորան լաւ ճանաչում էք և մի ժամանակ մօտ ընկերներ էք եղած։

—Այո, այո, այդ ճշմարիտ է։

—Բայց գիտէք, պարոն Գարեգինն, նա կարօտ է շուտափոյթ օգնութեան, ապա թէ ոչ—կորած է։

—Իմ բարոյական պարտքս կ'լինի հոգ տանել նորա մասին։

—Ես էս պիտի աշխատեմ...

—Եթէ այդպէս է, ուրեմն ահա ինչ։ Այս երեկոյ դուք կարող էք գալ ինձ մօտ, իմ բնակարանը? Միասին կըգնանք նորան տեսնելու։



—Որ ժամին?

Զառիկեանը նշանակեց ժամը, և Սադաթեանը անմիջապէս հեռացաւ։

Երեկոյեան նորա գնացին։

Երբ Գարեգինը, իւր նախկին բարեկամի, իւր Արտաշէսի փոխանակ, տեսաւ իւր առջև մի ընկճուած, փոքրացած և հիւանդոտ մարմին, աղքատի շորի մէջ փաթաթուած, նա անկարող եղաւ այլևս իւր յուզմունքը պահել, կսկիծը այրեց աչքերը, և թերթերունքի վրայ փայլեց արտասուքը։ Նորան թւաց, որ այս մութ և խոնաւ նկուղը մի գերեզման է, որտեղ կենդանի թաղուած է իւր ընկերը, նա, որ երբեմն խելօք գլուխ ունէր, ազնիւ սիրտ և հարուստ ընդունակութիւններ, որը իւր անզուսպ երևակայութեամբ մեծութիւն էր երազում և այսօրւայ օրը բնաւ մտքովն էլ չէր անցկացնում։

—Արտաշէս! գոչեց նա, գրկաբաց մօտենալով Ոսկերչեանին, բայց սորա թեթև ժպիտը եղաւ միայն ողբալի քական ողջագուրանքի պատասխանը։

Միևնոյնն է թէ Գարեգինը մի մանկկէն գրկած լինէր։

—Ես էլ չեմ հարցնում, թէ ինչպէս է առողջութիւնդ, որովհետև աչքովս տեսնում եմ... Բայց դու այն ասա, Արտաշէս, ինչու չես եկել ինձ մօտ?

—Անյարմար էր,—պատասխանեց Ոսկերչեանը, ակնարկելով իւր գծուծ հագուստի վրայ։

—Այս շորերով, երևի, ամաչել է,—նկատեց Սադաթեանը։

—Այդ դատարկ բան է, վրայ բերեց Գարեգինը։ Վաղը քեզ համար շորեր կ'առնենք, կ'զուգենք ոտից մինչև գլուխ, և դու կ'դառնաս էլի մեր առաջւայ Արտաշէսը։

Այդ ասելով, նա բարեկամաբար մի քանի անգամ քաշեց նորա ուսերը։

—Ես կ'ուզէի, որ այս տեղս նորոգուէր և ահա այս տեղս,—խօսեց Ոսկերչեանը, բաղխելով կուրծքը և ճաշակատը։

—Ա՛յդ էլ կ'անենք։ Փառք Աստծու, բժիշկների պակասութիւն չ'կայ այս քաղաքում... Բայց ի սէր քո բարեկամի, մի ուրախ ծիծաղիր, տեսնենք։ Միթէ ծիծաղելու ընդունակութիւնդ էլ կորցրել ես?

Իզուր էր Գարեգինը, իւր սրտի մէջ կուտակուած դառնութեան հակառակ, ուրախ ծիծաղում և կատակներ անում։ Հազիւ մի թոյլ ժպիտ մեղմացնում էր նորա դէմքի մռայլը, էլ իսկոյն անցնում էր, և ճակատի կընճիռները իրանց նախկին տեղն էին բռնում։

Զառիկեանը առաջարկեց նորան մի առժամանակ տեղափոխել իւր մօտ։ Ոսկերչեանը ոչ մի կերպ չէր համաձայնում։ Գարեգինը մտածեց, որ, եթէ շորը փոխէ, նա այնքան չի ամաչիլ և կ'ընդունի իւր առաջարկութիւնը։

—Էլ ինչու վաղը? ասաց նա. հէնց այս րոպէիս գնանք միասին խանութ և քեզ համար շոր առնենք։ Լաւ չեմ ասում, պարոն Սադաթեան?

—Ես ինքս կամենում էի այդ առաջարկել, բայց մօտս փող...

—Ինձ մօտ էլ ասենք քիչ է։ Բայց ես ծանօթ խանութպան ունիմ, որ ինձ կ'հաւատայ։ Գնանք։

Ոսկերչեանը, անհանգստանալի պատճառով, կամակորութիւն էր անում։ Նորան համարեա զօռով տարան։ Խանութումն էլ նա ոչ մի կերպ չհամաձայնեց հանել հին շորը և նորը չափել իւր վրայ։

—Վրաս կ'գայ,—կրկնում էր նա այնտեղ, չափել հարկաւոր չէ։

Բայց նոր հանդերձն էլ չօգնեց։ Երբ խանութից դուրս եկան, Զառիկեանը ասաց.



—Դէ այժմ գնանք մեր տուն։

Բայց Ոսկերչեանը, ընդհակառակ լինելու փոխանակ, դժգոհութեամբ ասաց.

—Ինձ հանգիստ թողէք. գլուխս արաքում է ցաւից!...

Եւ, առանց ձեռք տալու, ճանապարհը ծռեց դէպի իւր բնակարանը։

—Ինչքան վայրենացել է,—բացականչեց Գարեգինը նորա ետևից։

—Միթէ նա այսպէս էր և առաջ? Հարցրեց Սադաթեանը։

—Մի հօթ-ութ տարի առաջ սա բոլորովին ուրիշ մարդ էր! պատասխանեց Զառիկեանը։

## IV

Կիւրակէ օրը նա պատահեց Ոսկերչեանին վանքի գաւթումը և տարաւ իւր մօտ ճաշի։ Գարեգինը ինքն էլ զարմացաւ, որ նա չօժար կամքով եկաւ և չսպասեց, որ իրան խնդրեն։

—Ահա, մայրիկ, մի թանկագին հիւր եմ բերել։ Ճանաչեցիր? Այսպէս ներկայացրեց նա վաղեմի բարեկամին իւր մօրը։

—Սա մեր Արտաշէսը չէ? Հարցրեց վերջինս տարակուսանքով։

—Այո, մայրիկ, սա մեր Արտաշէսն է,—պատասխանեց Գարեգինը, դլուխը խորհրդաւոր կերպով թափահարելով։

—Տէր Աստուած! Բացականչեց մայրիկը, մօտ գնալով դէպի հիւրը։—Ու այդ ինչ օրն ես ընկել, որդիս? Սկզբումը քեզ չճանաչեցի։ Բարով, բարով ես եկել մեզ մօտ։ Ինչու ես կանգնած? Նստիր, որդիս, նստիր։

Ոսկերչեանը նստեց պատի մօտ աթոռի ծայրին։ Նա, ըստ երևոյթին, աւտուկ ամաչում էր մայրիկից,

ուղիղ նորա երեսին նայել չէր համարձակւում և միշտ իւր աչքերը փախցնում էր նորա հայեացքից։

—Երբ ես եկել? Որտեղ էիր այսքան տարի? Ինչով էիր պարապում? Հարցնում էր մայրիկը։

Այդ միջոցին սենեկի դուռը կամացուկ բացւեց, շէմքում երևաց երկու տարեկան մի հրեշտակ-աղջկայ պատկեր, որը, նկատելով անսովոր հիւրին և աչքերը նորա դէմքին յառած, կոկոտալով մօտեցաւ իւր հօրը։

Գարեգինը վերցրեց երեխային, դրեց ծնկան վրայ, համբուրեց երեսը և ապրեշում-մազերը, գլուխը կրծքին սեղմեց և ասաց.

—Դու այս պարոնին ճանաչում ես?

Երեխան, առանց պատասխանելու, գլուխը դարձրեց և սկսեց հետաքրքրութեամբ նայել պարոնին։

—Ձեր աղջիկն է? Հարցրեց Ոսկերչեանը, սիրալիր հայեացք ձգելով փոքրիկի վրայ։

—Այո, և ինչպիսի աղջիկ,—պատասխանեց հայրը հիացքով և երեխայի մազերը քնքշաբար շոյելով։

—Խօսում է?

—Այո, կարգին գրականական լեզուով։ Ապա մի ասա, աղջիկս, հայրիկին սիրում ես?

—Սիրում եմ,—թոթովեց երեխան։

—Մայրիկին էլ սիրում ես?

—Սիրում եմ։

—Իսկ տատին չես սիրում?

—Սիրում եմ,—պատասխանեց աղջիկը և ժպիտով նայեց իւր տատին։

Քիչ յետոյ աղմուկով ներս եկան Գարեգինի միւս երկու որդիքը, մեծը եօթամեայ, միջնակը չորս տարեկան, երկուսն էլ մկկը միւսից առոյգ և ժիր մանուկներ։

—Հը, ինչ կայ, ինչ կայ, չարաճճիներս?



Անդրանիկը մօտեցաւ և մի ինչ որ բան շշնջաց հօր ականջին։

—Աղքատ է եկել? հարցրեց Գարեգինը։ Է՛հ, ինչ անենք եկել է։

—Փող տուր տանենք տանք։

Երբ հայրը կամենում էր փող տալ մեծին, միջնակը, ձեռքը բարձրացրած, ոտի մատների վրայ թռչկոտելով, ասում էր.

—Հայրիկ, ինձ տուր, հայրիկ, ինձ տուր...

—Այո, այս անգամ հերթը քոնն է։ Ա՛ռ տար։

Երեխան առաւ փողը և մի ակնթարթում անդիկ պէս անհետացաւ։

Գարեգինը սկզբունք էր դարձրել իւր տանը—աղքատներին փող և հաց տալ երեխաների ձեռքով։ Նա այն կարծիքի էր, որ մանուկ հասակից պէտք է մարդու ձեռքը վարժեցնել բարեգործութեան։

Շուտով երևաց և տիկին Մարիամը, որը, շնորհիւ իւր պղպատի առողջութեան, երեք անգամ ծննդաբերութեան երկունք կրելուց յետոյ, այնուամենայնիւ պահպանել էր իւր նախկին թարմութիւնը, տեսքը և հրապոյրը։ Դա այն կանանցից էր, որոնց խնայում է ծերութիւնը և թողնում է դեռ երկար տարիներ ծաղկելու փթթելու։

Սորան տեսնելուն պէս, Ոսկերչեանը ոտի կանգնեց և գլխի խոնարհ շարժումով ողջունեց, առանց համարձակւելու առաջինը մեկնել ձեռքը։

Տիկինը ձեռք տւեց նորան, առողջութիւնը հարցրեց և նստեց ամուսնու կողքին։

—Որքան փոխւել է! շշնջաց նա գերմաներէն։

—Իսկ եթէ մի երկու օր առաջ տեսնէիր,—նկատեց Գարեգինը նոյնպէս գերմաներէն։

Տիկնոջ ներկայութեամբ Արտաշէսը աւելի ևս ամաչ-

կոտ դարձաւ, սկսեց աւելի յաճախ շփոթուել և աւելի աշկարա երևցնել բառամոռացութեան ախտը, որովհետև ամենատոկ բառերը մտաբերելու համար՝ նա կանգ էր առնում, ապուշ կորում և խիստ անյարմար դրութեան մէջ թողնում լսողներին:

Բայց մայրիկը և Մարիամը շուտով հեռացան, և Արտաշէսն ու Գարեգինը մնացին մենակ:

—Դէհ, այժմ մենք առանձին ենք, և ես կարող եմ լսել քո խոստովանանքը,— խօսեց վերջինը, ձեռքերը իրար շփելով:

—Ես չգիտեմ, ճշմարիտ, ինչ ես կամենում, որ պատմեմ:

—Պատմի՛ր կեանքդ:

—Միթէ դա հետաքրքրական է?

—Այո՛, այո՛, Արտաշէս, դա ինձ հետաքրքրում է: Կան որոշ տեսակի մարդիկ, որոնց կեանքը ոչ պակաս հետաքրքրական է, քան թէ իսկական հերոսներինը: Հերոսը միակ է, իսկ ինձ ու քեզ նման հասարակ մահկանացուները— բազմաթիւ: Սրտիօք շատերին դիտես մեր գործիչներից, որոնք քո քաշած օրերը տեսած չլինին իրանց կեանքում? Տարբերութիւը այն է, որ դու այդ թշուառներից ամենաանբախտը և ամենաանյաջողակն ես եղել: Դու ինձ հասկանում ես? Վերջապէս, դու իմ պատանեկութեան բարեկամը և ընկերն ես եղած. կարծեմ, իրաւունք ունիմ մի այսպիսի պահանջ անելու: Վերջին տխուր դէպքից յետոյ, երբ մենք իրար հրաժեշտ տուինք, ես գնացի արտասահման, չորս տարի օտարութիւն քաշեցի, վերադարձայ, ահա շուտով երրորդ տարին կ'լինի, որ ուսուցիչ եմ այստեղ, և այդքան միջոցում ոչ մի տեղեկութիւն չունէի քո մասին:

Ոսկերչեանը սկսեց: Բայց նա խօսում էր ակամայ: Կարծես ցաւում էր, որ ստիպուած էր կրկին մտաբերել



իւր կեանքի տխուր էջերը, այն էջերը, որ նա ուրախութեամբ կ'մոռանար, եթէ մի հնար լինէր: Պատմելիս նա յաճախ դադար էր առնում, բռնում էր գլուխը և մտամոլոր խորասուզւում անցած գնացած օրերի հին յիշողութիւնների մէջ: Խօսում էր ցածր ձայնով, դանդաղ, ինչպէս անկողնում նստած հիւանդը, որի դէմքը տանջանք է արտայայտում, և գլուխը թոյլ պարանոցի վրայ այս ու կողմն է թեքւում:

Ահաւասիկ այն տեղեկութիւնները, որ Գարեգինը կարողացաւ կորզել իւր ծածկամիտ խօսակցից, պակասը լրացնելով իւր երևակայութեամբ:

Զառիկեանին հանապարհ դնելուց յետոյ, Ոսկերչեանը մնացել էր նոյն այն քաղաքում և չգիտէր, ուր գնայ և ինչի համար գնայ: Անցաւ երկու ամիս, և թեմական կոնսիստորիայից նորան առաջարկեցին գրագրի պաշտօն, որ մինչև այդ ժամանակ վարում էր մի ծեր մարդ և նոր էր վախճանել: Ծայրայեղ կարիքից հարկադրուած՝ նա ընդունեց այդ պաշտօնը: Ռոճիկը մի չնչին բան էր. ծայրը ծայրի հասցնելու համար մեծ հունար էր հարկաւոր: Նորանով չէր կարելի հոգալ ոչ միայն վայելուչ հագուստը, այլ նոյն իսկ համեստ ճաշը: Բայց Ոսկերչեանը յոյս ունէր, որ մասնաւոր դասեր էլ կ'պատահէին: Եւ բացի այդ, այնտեղի ծխական դպրոցի աւագ ուսուցիչը յուսադրել էր նորան, որ առաջին յարմար դէպքում տեղ կ'տայ իրան յանձնուած ուսումնարանի մէջ: Նա վարում էր իւր ձանձրալի, անշնորհակալ պաշտօնը ամենայն բարեխղճութեամբ, չնայած, որ յաճախ տարաբնում էր: Սեպտեմբերին աւագ ուսուցիչը իւր խօսքը կատարեց և նորան առաջարկեց դասեր: Բայց այդ չյաջողեց, որովհետև եղան մարդիկ, որոնք Ոսկերչեանին անյարմար համարեցին այդ պաշտօնի համար, քանի որ նա Շահնաբաթեանի «ըմբոստ» խմբից էր: Նա մնաց իւր նախկին պաշ-

ասենի մէջ և երկու ամբողջ տարի համբերեց։ Նա ձանձրանում էր, զայրանում էր, և օր չէր անցնում, որ չկրկնէր.

—Այս արտագրութիւնները ինձ վերջ ի վերջոյ բոլորովին կը բթացնեն!

Միօրինակ, տաղտկալի կեանքը ձգեց նորան դիւանատուն։

Բայց ամեն անգամ, երբ հարբում էր, հասնում էր մահուան դուռը և ետ դառնում։ Թուլացած կազմուածքը խմիչք չէր վերցնում, և այդ, իհարկէ, նորա բախտին էր։ Մարմնի տկարութիւնը ազատեց նորան գինեմոլութիւնից։ Գրականական պարապմունքների համար այլևս սիրտ չէր մնացել՝ ճիշտ է, փորձում էր գրել, յանգիր էր շինում, վէպերի և դրամաների ծրագիրներ էր կազմում, բայց շնորհիւ ոգևորութեան բացակայութեան, ամեն ինչ դուրս էր գալիս բռնազբօսիկ, շինծու, անկենդան։ Մէկը չաւարտած սկսում էր միւսը, և բոլորը կիսատ էր մնում։

Նա կամենում էր ուժով վերադարձնել այն, ինչ որ կեանքը անպատնալի կերպով յափշտակել էր նորանից։ Նորա մէջ ապրում էր անցած երազների, մարած սիրոյ և ոգևորութեան կարօտը, և նոցա մասին նա մտածում էր այնպիսի վշտով, ինչպէս մերժուած հրեշտակը իւր նախկին երանութեան մասին։

Նա սկսեց մտածել, որ գուցէ դեռ ուշ չէ, և կարելի է սթափուել նոր կեանքի համար։

Նա ձգեց իւր պաշտօնը և գնաց Բաքու, որը այդ ժամանակ օր օրի վրայ աճում, հարստանում էր և, ինչպէս մի վիթխարի մագնիս, դէպի ինքն էր քարշում Կովկասի բոլոր ծայրերից ամեն դասակարգի, սեռի և հասակի մարդկանց։ Սկզբումը նա նպատակ էր դրել իւր համար գտնել մի բարերար, որը համաձայներ ուղարկել նորան Ռուսաստան կամ արտասահման բարձրագոյն ուսում ստանալու։ Եղաւ հարուստներից մէկի, միւսի մօտ։ Բայց մէկը



մերժեց, որովհետև Ոսկերչեանի դէմքը դուր չեկաւ, իսկ միւսը, որովհետև «ազատ տեղերը արդէն բռնուած են»։ Դա նշանակում էր, որ, եթէ մի հատ աւելի լինի թոշակաւոր ուսանողների թիւը, նա կը քանդուի։

Մերժում ստանալուց յետոյ, Ոսկերչեանը սաստիկ ամօթահար, թէև ինքն էլ չէր հասկանում, թէ ինչ մի ամաչելու բան կայ իւր խնդիրքի մէջ, շտապում էր անհետանալ այն հոյակապ դահլիճներից, որոնց փարթամ հաւատարութեան գնի մի տասերորդ մասով տասը Ոսկերչեան կարող էր բարձրագոյն ուսում ստանալ... Երբ նա դուրս էր գալիս փողոց, ինքն իրան ժպտում էր և քթի տակից արտասանում.

—Ես գիտէի, որ այսպէս էլ կը լինի։

Այնուհետև նա սկսեց մի որևէ «համապատասխան գործ» փնտռել։ Դիմեց ծանօթների, դիմեց և այնպիսի անձանց, որոնք ծանօթների ծանօթներն էին։ Ամենքը ասում էին.

—Եթէ պատահի, ուրախութեամբ։

Հետևեալ օրը կամ մինչև անգամ հէնց միևնոյն օրը ամենքը մոռանում էին իրանց ուած խոստումը (այս քաղաքում ամենքի գլուխը խառն է) և բնաւ մտքներն էլ չէին անցկացնում, որ Պարապետի վրայ շլինքը կռացրած, պատառոտուած շորով, քաղցած փորով շրջում է մի երիտասարդ, որի աղքատիկ զգեստի տակ հազար գիւտ-մտքեր սիրտ է բաբախում, որը աւելի լաւ վիճակի է արժանի, որը «մի գործ» է փնտռում։

Իսկ երբ Ոսկերչեանը կրկին գիմում էր, նորան պատասխանում էին.

—Չի պատահել։ Ապա թէ ոչ, ուրախութեամբ։

Կամ՝

—Մի երկու օր առաջ մեր գրասենեակում տեղ էր բացուել, բայց ձեր հասցէն մոռացել էին, ստիպուած էինք ուրիշ մարդ վարձել։

Չնայած այս բոլորին, Ոսկերչեանը այնուամենայնիւ մի տեղ գտաւ։ Թէև ուշ, բայց գտաւ։

Նաւթային ծուխ ու մուր, վիշկաների սև անտառում էր այդ տեղը։ Առանց դէս ու դէն ընկնելու, նա աճապարեց կայարանը և առաջիկայ գնացքով խենթի պէս թռաւ դէպի Բալախանի։

—Ահա պօէզիայի իսկական աշխարհը! հեգնօրէն արտասանեց նա, երբ գնացքը մօտենում էր կայարանին։

Ոսկերչեանին տուին մի ընդարձակ սենեակ ներքին յարկում։

Մի գրասեղան, մի քանի աթոռ, մահճակալ—ահա նորա կացարանի բոլոր կահ-կարասիքը։ Ռոճիկը քառասուն մանէթ էր։ Նորա գլխաւոր գործն էր—վարել հում նաւթի ելումուտի հաշիւը։ Պաշտօնը նորա սրտովը չէր։ Թւեր, թւեր և շարունակ թւեր. ի՞նչ կարող էր լինել աւելի տաղտալի մի մարդու համար, որը բոլորովին ուրիշ ասպարէզ էր երազում?...

Բայց և այնպէս նա ցանկանում էր մոռանալ իւր անցեալը և նմանւել ուրիշներին, որոնք կլանւել են տենդային աշխատանքով։ Աշխատում էր ընտելանալ իւր նոր կենցաղին և իւր պաշտօնից դուրս ուրիշ ոչնչով չզբաղեցնել միտքը։ Մի անգամ ընդ միշտ նա շեղւել էր ճանապարհից, թո՛ղ ուրեմն գնայ այն շաւղով, որով նորան տանում էր ճակատագիրը։ Դա, անտարակոյս, մի բռնութիւն էր, որ յուսահատուածը կամենում էր կատարել իւր հոգեկան ձգտումների վրայ, բայց մի բռնութիւն, որին չպիտի կարողանային դիմանալ նորա խախտուած առողջութիւնը և թուլացած ջղերը։

Արհեստանոցներում մեքենաների դղրդոցը և գեհենհնոցների դրնդիւնը, սևացած փայտեայ բուրգերի վրայ անիւների ճռռոցը, որ չէ դադարում ոչ գիշեր, ոչ ցերեկ, հսկայ շնչառութիւնը խողովակների, որոնք թքում են



անցորդների երեսին և երկնքի վրայ, օդի մէջ լցուած ծուխը, մուրը և նաւթային հոտը, որոնցով ծծւում են մարդկանց թոքերը, ոտի տակ և ամենուրեք թափթփւած նաւթային կեղտը, զարշելի տիղմը և դեղնագոյն փրփուրը—ահա երկրի այն սարսափելի անկիւնը, ուր ձգեց Ոսկերչեանին կեանքի ալիքը։

Նա վճռել էր տոկալ և համբերել, թէկուզ մահը հէնց այնտեղ վրայ հասնէր։

Բայց մի ձմերային գիշեր, երբ Կասպեան ծովը մռմռում էր ափերի մօտ, և հիւսիսային քամին (Նորդը) իւր դառը շնչով մարդու մարմին էր ճաքեցնում, Ոսկերչեանը, մինչև որ կայարանից իւր սենեակը կհասնէր, սաստիկ մրսեց, ստացաւ թոքերի բորբոքում և երկար ժամանակ ծառայում էր անկողնին։

Նորա կեանքը մազից էր կախուած, բայց և այնպէս վտանգն անցաւ։ Երբ դուրս եկաւ հիւանդանոցից, նա այլ ևս ոչ ոյժ, ոչ ցանկութիւն ունէր իւր նախկին պաշտօնը շարունակելու։ Աննպատակ և անգործ նա սկսեց թափառել փողոցներում և, աւելի յաճախ, շրջել ծովափին, ուր ալիքների չափաւոր ճողփիւնը օրօրում էր նորա մտածմունքը...

Նա տեսնում էր, որ իսկապէս յոգնած է, ջախջախւած է և հանգստանալ է ուզում։ Բայց ուրիշ տեսակի հանգստութիւն էր նորա ցանկացած հանգիստը։ Նա փափագում էր մի տարի, գոնէ մի հատ ամառ, ապրել քաղաքային աղմուկից հեռու, իւր ծննդավայրում, հայրենական տան յարկի տակ, այնտեղ, ուր նա այնքան երջանիկ օրեր էր տեսել։ Այո, վերածնւել կարելի էր միայն այնտեղ, գիւղական անդորրութեան մէջ, մայր բնութեան ծոցումը, ուր անմահական ջուրը, օդը, ստւերաշատ այգիները և թաւիշ խոտը կեանք են խոստանում, կեանքի են կոչում։

Բայց աւա՜ղ. դա մի ցնորք էր։ Նորա հայրենական տան հետքն էլ չէր մնում, և նորա տեղը հպարտ բարձրացել էր այժմ իւր «բարի դրացու» երկյարկեայ շինութիւնը երկյարկեայ սպիտակ պատշգամբով։ Այնտեղ նա գլուխը թեքելու անկիւն չունէր։ Նոյն իսկ ծնողների գերեզմանները ինչ դրութեան մէջ կը լինէին այժմ? Առանց տապանաքարի, անձրևից և ձիւնից մաշուած, հողի հետ հաւասարուած...

Նորա սիրտը փուլ էր գալիս, երբ մտածում էր, և իւր երեսը սառը պատին կպցնելով, արտասուքի միջից մրմնջում էր.

—Հայրիկ ջան!... Մայրիկ ջան!...

Վերջին ամբողջ տարին նա պարապ էր, ոտի վրայ հիւանդ, հոգեպէս և ֆիզիկապէս ջարդ ու փշուր եղած։ Նա կատարելապէս գիտակցում էր իւր անպէտքութիւնը։ Նա բոլորովին զրկուած էր կամքից։ Այլ ևս ոչինչ նորան չէր հետաքրքրում։ Նա անտարբեր էր դարձել դէպի կեանքը և դէպի մահը։ Նա նման էր մի նաւի, որի առագաստները պատառոտուել էին փոթորիկների ժամանակ, կայմերը կոտրատուել և ընկել և ալիքների խաղալիք դարձած՝ տարուբերւում էր այս և այն կողմ, առանց մի որոշ ուղղութեան, առանց մի նպատակի։ Նա մինչև անգամ չէր կարող ասել, թէ ինչու եկաւ Թիֆլիս։ Գուցէ դա մի բնազդական դրդում էր, որ մղեց նորան դէպի Կովկասի մտաւոր կենդրոնը։ Չէ որ նա ծնուած էր մտաւոր աշխատանքի համար?

Պատմութեան վերջումը Զաքիկեանը չէր լսում Արտաշէսին։ Նա տարուած էր մտքերով, և աւելի մռայլ լրջութիւն չէր կարող արտայայտել նորա դէմքը։ Նորա աչքի առջև երևում էր թշուառների մի բազմութիւն, ուր իւրաքանչիւրը, իսկ և իսկ նման Ոսկերչեանին, կոծում է բախտաւոր մարդկանց առաջ և իւր անօգուտ



թաղած ույժերի և խորտակուած յոյսերի պատմութիւնը անում։ Ոսկերչեանը նորան թւում էր, իբրև մէկը այն հազարաւոր բեկորներից, որոնք ցատկոտում են այս ու այն կողմ, ինչպէս շիկնած երկաթի կտորտանքը կռանի տակին, կործանիչ և սոսկալի ույժի հարուածներից։

Գարեգինը այն աստիճան խորասուզուած էր մտածմունքի մէջ, որ նա մայրիկին չլսեց, երբ սա եկաւ ճաշի կանչելու, այնպէս որ վերջինս երկրորդ անգամ և բարձր ձայնով կրկնեց.

—Գարեգին, եկէք ճաշ անենք։

Ճաշը լուռ անցաւ։ Գարեգինը լսածների տպաւորութեան տակ էր։ Մարիամը երեխաներին էր նայում։ Մայրիկը յաճախ վեր էր կենում սեղանից։ Երուանդը, որ այժմ երրորդ դասարանի գիմնազիստ էր և շնորհքով նկարում էր, իւր մտախոհ աչքերով շարունակ ամաչկոտ հիւրին էր նայում։ Սորա դիտողութիւնից չվրիպեց այն, թէ ինչպէս էր դողում նորա ձեռքին գինու բաժակը, երբ խմում էին նորա կենացը, և նա վեր էր կացել շնորհակալութիւն յայտնելու։

Զարմանալի բան։ Ոչ ճաշից առաջ և ոչ յետոյ Ոսկերչեանը չկանչեց իւր մօտ սիրուն մանուկներից մէկնումէկին՝ կատակ անելու հետը և գլուխը փայփայելու։ Միթէ նորա սրտի մէջ մի փոքրիկ անկիւն չէր մնացել նոյն իսկ մանկական սիրոյ համար? Կամ գուցէ նա չէր համարձակւում իւր ձեռքը դնել այն յստակ մազերի վրայ? Բայց աւելի զարմանալին այն է, որ նա մի անգամ էլ է չհարցրեց.

—Ինչպէս է Աշխէնի առողջութիւնը և որտեղ է այժմ?

## V

Գարեգինի դրդմամբ, Ոսկերչեանը փոխեց իւր կացարանը, և նոր վարձած սենեակը բաւական տանելի էր։

Զառիկեանը նորա համար շուտով մի ժամանակաւոր պարապմունք էլ գտաւ։ «Խօսք և գործի» աշխատակիցներից մէկը, որ լսել էր «Շշուառ երիտասարդի» մասին և մօտ ծանօթ էր Գարեգինի հետ, սորա միջոցով յանձնեց Ոսկերչեանին արտագրելու իր մի ընդարձակ շարադրութիւնը, որ պատրաստում էր տպագրութեան համար, և խոստացաւ թերթին 20 կոպէկ վարձատրութիւն, թուղթը, թանաքը, գրիչն էլ իւր կողմից։

Առաջին օրը, գլխացաւի և մարմնի ընդհանուր թուլութեան պատճառով, նա մի հատ տող էլ չգրեց։ Հետևեալ օրը միայն նա նստեց սեղանի և կսկաւ գործի։ Սկզբում ձեռքը դողում էր, թանաք էր կաթում, և մինչև որ կըվարժւէր, երեք թերթ փչացրեց։ Իսկ երբ վրայ ընկաւ, երկու ժամ, առանց դադար առնելու, արտագրում էր։ Բանը հասաւ այնտեղ, որ նա այնքան յոգնեց, որ ձեռքը թուլացաւ, գրիչը վայր ընկաւ, և թանաքը ապականեց մաքուր և խնամքով արտագրած թերթը։ Մէջքը, կռացած պահելուց, սաստիկ ցաւում էր, և, երբ կամեցաւ ուղիղ նստել, նորան թւաց, թէ ողնաշարը մէջ տեղից կոտրւել է։

Դորանից յետոյ մի ամբողջ ժամ պառկած ճնաց մահճակալի վրայ։ (Անկողինը ուղարկել էին Զառիկեանները)։

Հանգստացաւ և կրկին սկսեց Սիզիֆի աշխատանքը։ Այս անգամ բարկութիւնն էր շարժում նորա ձեռքը, և նա կրքով արտասանում էր.

— Դու ինձ չես կամենում հպատակւել?... Հպատակւիր։

Եւ դժւար է ասել, թէ ինչ առարկայի էին ուղղւած այս խօսքերը։

Այսպէս երկար ժամանակ նա արտագրում էր։ Յետոյ նա սկսեց իրան վատ զգալ։ Գրիչը մի կողմ դրեց և, հնչարգել եղածի պէս, ձեռքը կրծքին՝ ոյժ էր զորձ դնում



շունչ քաշել։ Սիրտը ուզում էր խառնել։ Ականջների մէջ անախորժ սուլոց սկսւեց։ Աչքերը սևացան։ Գլուխը պտոյտ եկաւ, և այն րոպէին, երբ նա երերւելով քայլում էր դէպի անկողնակալը, վայր ընկաւ ուշաթափ և երեսնիվեր տարածւեց յատակի վրայ։

Նորա բախտիցը, լաւ ժամանակին հասաւ Սադաթեանը, որ արդէն իմացել էր նորա տեղը և եկել էր նոր կացարանը տեսնելու։

— Վահ! Դուչեց նա սարսափած և, մի քայլ ետ գնալով, տեղումը քարացաւ։

Նորան թւաց, որ իւր առջև ընկած է մի անշնչացած դիակ, և մոռածեց, թէ յուսահատւած երիտասարդը անձնասպանութիւն է գործել։ Բայց սորա մօտ տարձանակ չկար, և տեղանի վրայ եղած առարկաները գոյց էին տալիս, որ նա մի քիչ առաջ գրաւոր աշխատանքով է եղել զբաղւած։ Այցելուն սրտապնդւեց և առաջ եկաւ։ Կռացած նայեց ուշիուշով — Արտաշէսի կուրծքը հազիւ նկատելի կերպով բարձր ու ցած էր լինում։ Այն ժամանակ նա գլխի ընկաւ որ «խեղճը» ուշաթափւել է։ Սկսեց նորան թափահարել, ջուր սրսկեց երեսին և ճակատին, և անհանգիստ ձայնով գոչում էր.

— Արտաշէս!... Ա՛ր-տա-շէս!...

Հեշտ է երևակայել Սադաթեանի ուրախութիւնը, երբ սա նկատեց, որ նորա աչքերի կոպերի տակ բիբերը շարժւեցին, և ուշաթափւածը կամաց կամաց ուշքի է գալիս։ Սորա օգնութեամբ, Ոսկերչեանը վեր կացաւ և, որովհետև շատ թոյլ էր, պառկեց անկողնում։

Տեղեկանալով գործի հանգամանքներին, բարի այցելուն նկատեց։

— Ես խորհուրդ կըտամ առայժմ չծանրացնէք ձեզ և ոչ մի աշխատանքով։

— Հապա ում աշխատանքով պահպանեմ այս անպէտք

գոյութիւնո՞ւ գոչեց հիւանդը սրտնեղութեամբ և ձեռքը ճակատին տալով։

— Փողի մասին մենք կը հոգանք, մինչև որ դուք փոքր ինչ կրկազդուրւէք։

Սադաթեանը առաջ էլ մտածել էր Ոսկերչեանի համար ժողովարարութիւն անելու մասին, բայց միայն այժմ հաստատապէս վճռեց, առանց այլ և այլևի, ձեռնամուխ լինել գործին։

Այսօրւայ դէպքը նա հանգամանօրէն պատմեց Զաւրիկեանին, որը, ինչ ասել կ՚ուզէ, մեծ անհանգստութիւն կրեց, քանի որ ինքն էր աշխատանք յանձնել Ոսկերչեանին և թոյլ էր տւել մի անհեռատեսութիւն հիւանդ մարդու վերաբերմամբ։ Սխալը պէտք էր ուղղել, և նա շտապեց Արտաշէսի մօտ։ Բայց ո՛րքան մեծ եղաւ նորա զարմանքը և բարկութիւնը, երբ տեսաւ վերջինիս սեղանի մօտ նստած, գրիչը ձեռին, արտագրութեան թերթի վրայ կռացած։

— Դու դեռ գրում ես, Արտաշէս? գոչեց նա զրանշէմքից և, մօտենալով, ձեռքը դրեց թղթի վրայ ու շարունակեց.

— Բաւական է, դադարիր! Այսօրւայ ուշաթափութիւնից յետոյ դեռ խելքի չես եկել? Դու քեզ սպանել ես ուզում?...

— Ես քիչ քիչ կ՚արտագրեմ...

— Եւ ո՛չ մի ոտղ! Ամենից առաջ դու պէտք է բժշկւես։

Զարեգինը խոստացաւ գնալ նորա հետ ծանօթ բժշկի մօտ, նշանակեց մինչև անգամ օրը և ժամը և, երբ ուզում էր հեռանալ, յիշեց ձեռագրի մասին և ասաց.

— Իսկ այս ես կը վերադարձնեմ տիրոջը։

Ըստ իւր խոստման, որոշւած ժամանակին Զաւրիկեանը վերցրեց «հիւանդ մարդուն» և տարաւ բժշկի մօտ։ Սա մի քսան և ութ տարեկան երիտասարդ էր, որ աւարտել էր համալսարանը երեք տարի առաջ, առաջին յա-



ջողութիւններից յետոյ անուն էր հանել քաղաքում և այսպիսով դարձել էր անօժիտ և մանաւանդ օժիտաւոր հարևանցուների համար ցանկալի փեսացու։

Երբ Զարեգինը և Արտաշէսը մտան նորա բնակարանը, որը մի շիկ կահաւորութիւն ունէր, վերջինս այնքան փոքրիկ և չնչին զգաց իրան, այնպէս կուչ եկաւ, որ կարծես ուրախ կըլինէր, եթէ այդ րոպէին ցնդէր և անհետանար օդի մէջ։

Բժիշկը ընդունեց իւր կաբինետում՝ նստած en face դէպի այցելուները։

Բանից երևաց, որ նա Ոսկերչեանին ճանաչում է դեռ ևս գիմնազիոնից, երբէք նորան տեսել է փողոցում և «մի քանի բաներ» է լսել նորա մասին։

Նա քննեց հիւանդին, բաղխեց նորա կուրծքը, լսեց մինչև անգամ մէջքի կողմից, հարցեր տւեց, յետոյ վառեց սիգարը, մտախոհ դիրք ընդունեց և րոպէական լռութիւնից յետոյ ասաց.

— Չեզ բժշկել կարելի է, միայն մի պայմանով։

Այցելուները խորին լռութեամբ սպասում էին, թէ ինչ պայմանի մասին է խօսքը։

— Դուք պիտի թողնէք ձեր վատ սովորութիւնը,— շարունակեց բժիշկը, դիմելով հիւանդին։

— Այսինքն? զարմացած հարցրեց Զարեգինը, մտածելով, թէ մի նոր բան պիտի իմանայ։

— Դուք պիտի թողնէք խմելը։

— Ինչպէս? բացականչեց Զաւրիկեանը։ Արտաշէս, դու ուրեմն...

— Սարսափելի ալկոհոլիկ է,— կամացուկ նկատեց բժիշկը, նայելով Զաւրիկեանին։ Ինձ ասել էին, որ սա խմում է, և ես այժմ համոզւեցի։ Ուղեղը ամբողջապէս ծծւած է ալկոհոլի թոյնով։ Սորա վերջը կըլինի խելագարութիւն կամ...

— Բայց, պարոն բժիշկ, որքան ինձ յայտնի է, սա գործ չէ աճուրդ ոգելից ըմպելիք...

— Ո՛չ, դուք չգիտէք: Նոյն իսկ երկկ սորան տեսայ փողոցումը, ոտի վրայ հազիւ էր կանգնում:

— Երկկ?... Ո՞ր ժամին? Մօտաւորապէս?

— Ինչպէս ասեմ? կըլինէր մէկը:

— Աստւմ էք, հարբած էր?

— Մանգալ չէր կարողանում, տըմբաըմբում էր: Վատս եկաւ, երբ տեսայ: «Խէղճ մարդ, մոտածեցի ինքս ինձ. ինչ օրի է հասել. չգիտէ, որ ինքն իրան կամաց կամաց թունաւորում է»:

Զառիկեանին թւում էր, որ բժիշկը սխալւում է, և յայտնեց իր առանձին կարծիքը:

— Ո՛չ, ո՛չ,—ձեռքով արաւ վերջինը,—դուք նեղը գցեցիք, նա կըխոստովանի:

Ոսկերչեանը չէր աշխատում լսել այս խօսակցութիւնը: Զաշխատեց մինչև անգամ արդարանալ:

— Ես չեմ խմում,—ասաց նա և լռեց:

Իսկ բժիշկը դիւրահաւատներից չէր:

— Դուք ուրեմն կըլծողնէք? Այո? Խօսք էք տալիս? Հակառակ դէպքում, ես կըհրաժարւեմ ձեզ բժշկելուց, իմացէք:

— Ես չեմ խմում,—կրկնեց հիւանդը անհամբերութեամբ և այնպիսի եղանակով, որ բժիշկը վիրաւորական համարեց:

— Ես ուրեմն ձեզ չեմ կարող բժշկել,—եզրափակեց նա և սկսեց մատներով թմբկահարել սեղանը:

Զառիկեանը վեր կացաւ, ներողութիւն խնդրեց և դուրս եկաւ: Նորան հետևեց Ոսկերչեանը, առանց ներողութիւն խնդրելու: Ճանապարհին Գարեգինը ազնիւ խօսքով երդւեցրեց նորան, որ խոստովանի, ճմում է թէ ոչ: Նա պատասխանեց, որ չէ ճմում:



Գարեգինը կատարեալ հաւատաց նորա խօսքին, որովհետև նա նոյն իսկ իւր անկման մէջ պահպանել էր ազնւութիւն, որը, տարիներ առաջ, նորա բնաւորութեան ամենալուսաւոր կէտն էր կազմում: Այդ հոգեկան գանձը նորա մէջ մնացել էր անարատ, այն ինչ նա կորցրել էր բոլորը, ինչ ունէր:

Հարկաւոր էր նորան ցոյց տալ մի ուրիշ բժշկի: Զառիկեանը մոտածեց և կանգ առաւ այնպիսի մէկի վրայ, որը յայտնի էր իւր փորձառութեամբ, թեթև ձեռք ունէր և անշահասէր էր: Երբ նա իւր հիւանդի հետ գնաց բժշկի մօտ, վերջինս սիրալիր ընդունելութիւն ցոյց տւեց երկուսին, փակեց իւր առանձնասենեակի դուռը և խնդրեց նստել: Յետոյ նա սկսեց մանրամասն հարց ու փորձը, ծանօթացաւ հիւանդի անցկացրած կեանքին, լաւ քննեց և, ըստ երևութին, եկաւ տխուր եզրակացութեան: Լուռ նայում էր Ոսկերչեանին, որը կծկւածի պէս անշարժացել էր իւր տեղումը, և նորա դէմքը այդ ժամանակ արտայայտում էր կարեկցութիւն: Իւր եզրակացութիւնները նա խորհրդաբար յայտնեց Զառիկեանին:

— Դուք տեսած կըլինիք,—ասաց նա,—մի այնպիսի բարդ մեքենա, որը ամբողջապէս խանգարւած լինի՝ սկսած ամենամեծ անիւից մինչև ամենամանր ճախարակները: Իսկ և իսկ մի այդպիսի դրութեան մէջ է և այս թշւառ մարդու կազմւածքը: Կատարեալ նէրւայնութիւնից իւր բոլոր հետևանքներով: Մի կողմից՝ ուղեղի չորացում, միացած բուռն գլխացաւի հետ, յետոյ սրտի թրթռոց, շընչարգելութիւն և թոքախտի նշաններ. միւս կողմից՝ ամէնպիսի միացած բառամոռացման հետ, լսողութեան և տեսողութեան պատրանք, կամքի բացակայութիւն և ապաթիա: Սորա կեանքը հիմքից փորփորւած է:

— Ուրեմն ինչ խորհուրդ կըտաք անել, պարո՛ն բժիշկ? հարցրեց Գարեգինը:

Բժիշկը ասաց բոլորը, ինչ որ հարկաւոր էր ասել, դեղատոմսերը գրեց և յայտնեց իւր պատրաստակամութիւնը ամէն կերպ օգնել Թշւառին:

## VI

Քնած չէր և Սադաթեանը: Դրդւած ջերմ համակրութիւնից դէպի ընկած մարդը և վերջինիս ոտի կանգնեցնելու փափագով լցւած, եռանդով աշխատում էր նորա համար: Առաջ նա փորձեց մի Թատրոնական ներկայացում կազմակերպել նորա օգտին, բայց, տեսնելով, որ այդ չէ յաջողւում, քանի որ Ոսկերչեանի նախկին արւեստակից ընկերները ուրանալով ուրացան նորան, վճռեց հանգանակութիւն բանալ:

Պատրաստեց ստորագրութեան Թերթը, որի ճակատին գրւած էր մարդասիրական մի կոչ, և գնաց ամենից առաջ իւր նախկին ուսուցիչներից մէկի մօտ: Սա համալսարանաւարտ էր, մի չոր ու ցամաք բնաւորութիւն, որը երեք տարւայ մէջ հասարակական գործերից յոգնել էր, կորցրել էր ամէն մի հարցասիրութիւն, և նորան այլ ևս ոչինչ չէր հետաքրքրում շրջապատող կեանքի մէջ, «որովհետև այդ կեանքում ամէն բան ձանձրալի է, մանրացած է». միակ բանը, որ քիչ Թէ շատ կարողանում էր նորա հետաքրքրութիւնը շարժել, նոյն իսկ ժպիտ յարուցանել դէմքին, դա քաղաքական կեանքի նորութիւններն էին, որոնց նա հետևում էր գլխաւորաբար լրագրական հեռագիրների միջոցով: Այդպիսի խնդիրների մասին նորա հետ կարելի էր մինչև անգամ տաք-տաք վիճել: Դորանից դուրս, նա ոչ միայն տարեցտարի, այլ և օրէցօր ետ էր մնում իւր ժամանակից: Կեանքը իւր քայլով առաջ էր գնում: Գիտութիւնը ծաղկում էր: Գրականական հորիզոնի վրայ մինը միւսի ետևից երևում էին նորանոր աստղեր: Նա ճանաչել չէր ուզում և ոչ



մէկին: Նա Թքել էր ամէն բանի վրայ: Նա գոհ էր իւր գիտցածով:

Բայց սա ճանաչւած էր, իբր լաւ դասատու: Սադաթեանը վերաբերւում էր նորան ամենայն յարգանքով, բայց չգիտէր, Թէ, իբրև մարդ, որպիսի անձնաւորութիւն է: Նորան յայտնի էր, որ սա Ոսկերչեանի նախկին դասընկերներից մէկն է: Հասկանալի է, Թէ ինչպիսի վստահութեամբ և ինչ յոյսերով ներկայացաւ նա իւր ուսուցչին:

Մի քանի խօսքով բացատրեց իւր այցելութեան նպատակը և ստորագրութեան Թերթը դրեց նորա առջև.

Ի պատասխան այս առաջարկութեան, պարոնը ժըպտալով ասաց.

—Գիտես, ինչ կայ, սիրելիս (նա շարունակում էր դու՛ով խօսել իւր նախկին աշակերտի հետ). դու, երևում է, բարի սիրտ ունիս և կամենում ես բարի գործ կատարել. բայց դեռ անփորձ ես: Ներկայ դէպքում բարութիւնը բանի տեղ չի անցնիլ: Այդ մարդուն, որի մասին դու յափշտակւած խօսում էիր, ես լաւ ճանաճում եմ. դա իմ դասընկերս է եղել, ընդունակ էր, ազնիւ էր, բայց իրան չկարողացաւ պահել և փճացաւ: Առաջին անյաջողութիւնից յուսահատւել է, երկրորդ անյաջողութիւնը նորան ձգել է գինետուն, և այժմ իմ աչքին դա նոյնքան է արժանի կարեկցութեան, որքան ետին արբեցողը, որը քնում է փողոցներում իւր Թափած փսխուկի վրայ... Խօսողը իւր բերանը այնպէս ծռեց, որ կարծես նողկանքից սիրտը պիտի խառնէր:

Սադաթեանը կամեցաւ խօսել յօգուտ զրպարտւած և անարգւած մարդուն, բայց նա մի այնպիսի սպանիչ հեգնութեամբ սկսեց լսել, որ ջահէլ երիտասարդը շփոթւեց և, խօսքը փոխելով, ասաց.

—Սակայն դուք գիտէք։ Ես չեմ սխալւում։ Կըներէք, որ ձեզ անհանգստութիւն պատճառեցի։

Մնում էր միայն գլխարկը վերցնել և հեռանալ։

Սադաթեանը գնաց մի այլ պարոնի մօտ, որին նոյնպէս աշակերտ էր եղած։ Նա ընդունեց սիրով, քաղցր ժպտաց, հարցրեց առողջութիւնը։ Գիտէր, որ գրում է «Խօսք և Գործ» պարբերական հրատարակութեան մէջ, և հարցրեց, թէ ինչ նոր բան ունի գրած։ Յետոյ խորհուրդ տուեց, որ դասական հեղինակութիւններ շատ կարդայ, գրական ճաշակը զարգացնի։

—Իսկ ձեր ուսումը պիտի շարունակէք թէ ոչ? ցանկացաւ իմանալ նախկին ուսուցիչը։

—Անպատճառ, —պատասխանեց Սադաթեանը և, առանց հերթ տալու, որ նա կրկին սկսի շատախօսել, ցոյց տուեց ստորագրութեան թերթը։

—Այդ ինչ թուղթ է?

—Փող եմ հաւաքում։

—Ում համար?

Ուսուցիչը կարդաց ստորագրութեան թերթի վրայ գրածը և ասաց.

—Բայց ես ձեզ պէտք է ասեմ, որ ինքս անձամբ դէմ եմ այդ ձևի օգնութեան... Ես սկզբունքով դէմ եմ...

—Ինչպէս? Ուրեմն հաց չտալ մէկին, երբ նա քաղցած է և միջոց չունի? Շոր չտալ, երբ մերկ է? Չբժշկել, երբ հիւանդ է?..

—Ո՛չ, ո՛չ, ո՛չ, դուք ինձ լաւ չհասկացաք։ Ես հակառակ եմ այդպիսի մանր նուիրատուութիւններին։ Կոպէկանոց օգնութիւնը վէրքին դարման չի անիլ։ Խոշոր օգնութիւն է պէտք։ Եթէ ես միջոց ունենայի, ես չէի խնայիլ ոչինչ։

Սադաթեանը կարծեց, որ այս խօսքերը ուրիշ բան



չէին, եթէ ոչ քաղաքավարի «հրաժարիմք», և կամեցաւ վեր կենալ գնալ։ Բայց ուսուցիչը նոյն այդ րոպէին շարունակեց.

—Բայց այդ երիտասարդը ինքը չէ կամենում աշխատել?

—Այժմ նա անընդունակ է աշխատելու։

—Անընդունակ? Անդամալոյծ է?

—Ո՛չ, անդամալոյծ չէ, —պատասխանեց աշակերտը, պահպանելով իւր նախկին ուսուցչի կիսահեգնական եղանակը. —կան անդամալոյծներ, որոնք առողջներից աւելի շատ գործ են կատարում։ Բայց Ոսկերչեանը անդամալոյծից աւելի վատթար է։

Սադաթեանը ձեռք տուեց, որ գնայ։ Բայց ուսուցիչը թօթուեց նորա ձեռքը և ասաց.

—Սպասեցէք, սպասեցէք։ Ես մի քիչ կարող եմ տալ։

—Որքան ձեր սիրտը կը տայ։

—Երեք ռուբլի։

—Շնորհակալ եմ։

—Ազգանունս հարկաւոր չէ։ Գրեցէք մի պարոնից...

Երբ այցելուն ուզում էր հեռանալ, լսեց իւր ետեւից հետեւեալ խօսքերը.

—Ես տուի, որովհետև ձեզ չկամեցայ մերժել։ Բայց ես դարձեալ կրկնում եմ, որ այդպիսի ժողովարարութիւնով նպատակի չէք հասնիլ։ Այն օգնութիւնն է միայն իսկական օգնութիւն, որ հաստատուն հիմքի վրայ է դրուած։

Խօսքի և գործի այս փառաւոր հակասութիւնը զարմացրեց ջահել երիտասարդին, բայց այդ մասին նա երկար չմտածեց։ Նա ուրախ էր, որ հանգանակութեան ակերդը դրւեց, և, երբ դուրս եկաւ փողոց, ինքն իրան ասաց.

—Ուրեմն արդէն երեք ռուբլի կայ։

Եռանդով աշխատեց Սաղաթեանը, և մի շաբաթից յետոյ նորա ձեռքին եղած գումարը հասնում էր մօտ երեսնի։

Ոսկերչեանին ոչինչ յայտնի չէր այս ժողովարարութեան մասին։ Երբ Սաղաթեանը յանձնեց նորան գումարը, նա զժգոհութեամբ ասաց.

—Ով էր խնդրել ձեզնից?

Երիտասարդը նկատեց, որ, եթէ չընդունի, ինքը սաստիկ վիրաւորուած կըզգայ իրան։

Արտաշէսը աչքի անցրեց ստորագրողների անունները։ Արհամարհոտ հեգնութիւն երևաց դէմքին. մատիտ խնդրեց, սկսեց ջնջոտել «տուկլ» անունները և վերջումը աւելացրեց.

—Երբ ինձ տեսնում են փողոցում, երեսները դարձնում են ինձնից։ Սրանց օգնութեան ես կարօտ չեմ։

Այս խօսքերը վերաբերում էին այնպիսի անձանց, որոնց մօտ ծանօթը և ընկերը եղած էր նա տարիներ առաջ ուսումնարանում, բեմի վրայ, դրական ասպարիզի վրայ և առօրեայ կեանքում։

Սեփական արժանապատուութեան այս հպարտ զգացմունքը, որ դեռ կենդանի էր մնացել ջախջախուած մարդու հոգում, հիացրեց Սաղաթեանին, և սորա աչքում Ոսկերչեանը մի աստիճան բարձրացաւ։

## VII

Վերջին օրերը Զաւիկեանի գլուխը խառն էր, և ոչ մի կերպ չէր յաջողւում Արտաշէսին տեսնել։ Նա զբաղուած էր դպրոցական քննութիւններով, թէ իբր ընթերակայ, թէ իբր հարցաքննող, և այն ոչ միայն ցերեկները, այլ և երեկոները մինչև ժամը 11-ը, դեռ աւելի։

Բայց ահա հազիւ աչք բաց արեց մանկավարժական պարապմունքներից, ամարանոց գնալու հոգսերը վրայ



հասան, քոյրը եկաւ Բաքուից՝ հօրանց հետ միասին ամառը անց կացնելու։

Աշխէնը, ինչպէս յիշում է ընթերցողը, ամուսնանալուց յետոյ, մտադիր էր շարունակել իւր վարժուհութիւնը և երբէք չթողնել մանկավարժական սիրած ասպարէզը։ Նա իւր իղձը կատարեց։ Բայց ուսումնական տարւայ վերջը նորա պառկելու ժամանակն էր—անախորժ զուգադիպութիւն։ Ազատուեց, և այն սէրը, որ նա տածում էր դէպի մանուկները, վերափոխուեց մի մայրական սիրոյ. նորա բոլոր գորովը կենտրոնացաւ մի թզաչափ, ճչուն, քաղցր էակի վրայ, որպիսին էր նորա անդրանիկը։

Այնուհետև—զարմանալի բան—նորա մէջ եղած սէրը դէպի մանկավարժական պարապմունքը միևնոյնն է թէ կացինով կտրեցին։ Ինքն էլ չիմացաւ, թէ ինչպէս սառեց դէպի դպրոցը։ Սրանց վարժելու նա ձգեց ուսումնարանը, երևի, եւ չմնալու համար այն պաշտօնակիցներից, որոնք, մայր դառնալուց յետոյ, ձգում էին ամէնը, ինչի կպած էին իրանց կանացի բոլոր ուժերով, և սառբէի պէս խորասուզւում ընտանեկան հոգսերի մէջ։

Գալով ամուսնական կեանքին, պէտք է ասել, որ նորա և ամուսնու յարաբերութիւնները գնալով լարւում և լարւում էին։ Աշխէնը կարծում էր, որ չէ գտել իւր ակնկալածը։ Ազատեանի խօսքի և գործի մէջ նա տեսնում էր մի ամբողջ վիհ։ Նա ծայրայեղ էգօյիզմ էր նշմարում նորա իւրաքանչիւր արարքի մէջ, մինչև անգամ առօրեայ ամենամանր դէպքերում։ Նա ատեց նոյն իսկ այն գաղափարը, որով ամուսինը «թոզ էր փչում մարդկանց աչքին»։ (Չակերտների մէջ Աշխէնի խօսքերն են)։

Ազատեանը իւր կողմից չէր սիրում իւր կնոջ անհաշտ և կռւարար բնաւորութիւնը։

Ահա այսպիսի պայմանների մէջ սկսեց վերջինիս

մեռաւոր անկման շրջանը։ Սառեց դէպի հասարակական գործերը, կարդում էր սակաւ, թողեց և մանկական դէպքերի թարգմանութիւնը։ Երբեմն միայն, այն էլ ուրիշների դրդմամբ, նա մասնակցութիւն էր ցոյց տալիս բարեգործական ձեռնարկութիւնների մէջ։

Դժուար է ասել, թէ ինչով կլուծէր ամուսինների անընդհատ կռիւները, եթէ նախախնամութիւնը նոցա մէջտեղը չգնէր մի հաշտեցնող էակ, յանձին մի սիրուն զաւակի, որի ծնելուց յետոյ միայն մարդ ու կին իրար սկսեցին հանդուրժել։

Նոյն այս ժամանակ Ազատեանի կեանքում տեղի ունեցաւ մի խոշոր դէպք, որ հիմնովին փոխեց նորա վիճակը։ «Ճառագայթը» դադարեց ընդ միշտ, և, որովհետև նորա առջև փակ էին միւս լամբագրութիւնների դռները, նա ստիպուած էր թողնել լրագրական ասպարէզը, կամ, ինչպէս ինքն էր ասում, իւր հրապարակախօսական գործունէութիւնը։

Էլ գլուխը ցաւեցնել պէտք չէր։ Մի գեղեցիկ օր նա վերցրեց ընտանիքը և ուղիղ—դէպի նաւթային աշխարհը։ Այո, ուղիղ դէպի Բաքու, չնայած, որ «Ճառագայթի» մէջ նա զայրացկոտ ֆիլիպիկաներ էր գրում այն ինտելիգենտ պարոնների դէմ, որոնք,—Ազատեանի խօսքը բռնեցնենք,—«տոպրակ էին տալիս իրանց սուրբ իդէալները և գնում էին ծառայելու Ռակի Հորթին»։ Նա ճարպիկ էր և կեանքի դամարը գիտէր. շատ շուտ տեղ գտաւ և արագ բարձրացաւ պաշտօնի մէջ։ Ինչպէս շատերին, նորան ևս գիշեր ցերեկ հանգիստ չէր տալիս այն միտքը, թէ ինչպէս անի, որ շատ էժան գնով հողեր առնի և շատ թանկ գնով ծախի, որպէս զի ինքն էլ հարստանայ։ Եւ նա իրօք սպասածից աւելի շուտ կըհարստանար, եթէ կինը այնքան չըհոգար անմիջապէս տեղ անել ամուսնու աշխատածը, որովհետև, թող հաւատայ իմ ընթերցողը,



Աշխէնը սասիկ փոխել էր՝ շատերի իդէալը դարձել էր և նորա իդէալը. իսկ այդ իդէալը ուրիշ բան չէր, եթէ ոչ մի անոտի, մի անխորհուրդ փարթամութիւն, սկսած քնաքարանի կահաւորութիւնից մինչև իւր հագի զգեստները, մի անլուր փարթամութիւն, որի նմանը առաջին անգամն է տեսնում Կովկասը։

Բայց հերիք է։ Շարունակենք մեր պատմութիւնը։

Աշխէնը բերել էր հետը իւր երկու երեխին, որոնք եկած օրը մտերմացան Զաւիկեանների մանուկների հետ, իսկ հետևեալ օրը չարաճճի մանուկների բանակը մի այնպիսի աղմուկ բարձրացրեց, որ Գարեգինը ծալեց իւր առջևը դրած գիրքը և, ականջները խցելով, գոչեց.

—Օհօ, այս չեզաւ։ Սրանց բոլորին պէտք է հաւաքել տանել ու անտառը ձգել. թող այնտեղ գժութիւններ անեն, ինչքան սիրտները կըտայ։

Զաւիկեանը վերջին անգամ գնաց այցելելու իւր հիւանդ բարեկամին. հետևեալ օրը ընտանիքով պիտի մեկնէր դէպի ամարանոց։

Դեռ սենեակը չմտած՝ նորա ականջին դիպաւ կանացի բարձր ձայն։ Բանից երևաց, որ ներսը Սրապիէսի տատիկին էր բարկացած խօսում։

—Ինչ է պատահել? հարցրեց Գարեգինը, բարևելով Սաղաթեանին, որը նոյնպէս այնտեղ էր։

—Պահանջում է, որ գուրս գայ,—պատասխանեց երիտասարդը։ Գիշերները, ասում է, քնած տեղը այնպէս է ճչում, որ երեխաները վախից վեր են թռչում։

—Բայց արդեօք այդ չաճախ է պատահում? ցանկացաւ իմանալ Զաւիկեանը։

Տանտիկինը ասաց, որ երկու անգամ նա վախեցրել է երեխաներին։

—Իսկ այս գիշեր,—աւելացրեց նա,—մի այն տեսակ ձայն հանեց, որ ամենքս կարծեցինք, թէ խեղդում են։

Երիտասարդները միասին խորհուրդ արին և վճռեցին ուրիշ տեղ սենեակ վարձել Արտաշէսի համար։ Տանտիկինը միամուռեց այդ մասին և հեռացաւ։

Ոսկերչեանի տաճ բացատրութիւնից երևաց, որ նա ենթակայ է նաև կաշմարի, այն սոսկալի տեսիլներին, որոնք թունաւորում են մարդու հանգիստը նոյն իսկ այն ժամանակ, երբ մենք կորցնում ենք մեր գիտակցութիւնը։

Զառիկեանը յայտնեց, որ ինքը վաղը առաւօտեան կանուխ մեկնում է քաղաքից. ներողութիւն խնդրեց, որ իր հիւանդ բարեկամի մասին հարկաւոր եղած բոլոր հոգսն ու խնամքը Սագաթեանին է թողնում, որի բարութեանը և ազնուութեանը անպայման հաւատում է. սեղմեց նորա երկու ձեռքը և աղաչելով աղաչեց, որ անահմանի թշուառութեան հասած մարդուն նա աչքից չթողնի։

Բարի Սագաթեանը ամեն մի հոգս յանձն առաւ՝ նոր սենեակ վարձել, բժշկի մօտ տանել, կրկին ժողովարարութիւն անել և այլն և այլն։

—Բայց այս բոլորը,—աւելացրեց նա,—ես կ'անեմ մինչև այն ժամանակ, երբ իմ արտասահման գնալը կը յաջողուի։ Այնուհետև ես էլ ճանապարհորդ եմ։

—Սրտանց յաջողութիւն եմ ցանկանում։ Իսկ քեզ, Արտաշէս, առողջութիւն, և առայժմ միայն առողջութիւն։ Դու պիտի վերածնուես նոր կեանքի համար։

Երբ Գարեգինը հեռացաւ, Ոսկերչեանը մի երկու անհաստատ քայլ արաւ դէպի դուռը, կարծես բան էր ուզում յայտնել, բայց էլ իսկոյն ետ դարձաւ և, զգալով, որ գլուխը պտտւում է և աչքերը սևանում, նստեց մահճակալի վրայ։ Մի անգամ հազաց, և Սագաթեանը սարսափով տեսաւ, որ հիւանդը մի կում արիւն թքեց, և յետոյ արեան շիթը սկսեց ծորալ բերանից յատակի վրայ։



## VIII

Ամարանոցում Գարեգինը սկսեց իւր մի կարևոր աշխատութիւնը, որի համար նա մի քանի տարի է նեբ-թեր էր ժողովում, ուսումնասիրում և պատաւորում ըստ ծրագրի։ Նոր հեղինակութիւնը պիտի ընդգրկէր մեր մտքի զարգացման մի ամբողջ կէս դարի պատմութիւնը, որի մի ծայրը կորչում էր քառասնական թուականների մէջ, իսկ միւս ծայրը հասնելու էր մինչև իւր ժամանակը։ Գործին ձեռնարկելու րոպէին՝ նա մի տեսակ երկիւղածութիւն զգաց, ինչպէս միջնադարեան բարեպաշտ մատենագիրը, որը, ջերմ հաւատով լցուած, խաչ էր հանում երեսին, Տիրոջ անունը տալիս և ապա միայն սկսում իւր տարեգրութիւնը կամ «Վարք սրբոցը»։

Նորան թուում էր, որ արդէն գտել է բանալին՝ ըմբռնելու համար այն ժողովրդի հոգեբանութիւնը, որի մտաւոր զարգացման պատկերը կամենում էր ներկայացնել։ Երկու գաղափար պիտի առաջնորդէր նորան ամբողջ երկասիրութեան մէջ, երկու կարմիր գիծ, որ պիտի անցնէր հեղինակութեան սկզբից մինչև վերջը։ Մի կողմից կուլտուրական ոյժերի մի ահագին պաշար, որով կարելի էր նոյն իսկ ոգևորել, և միւս կողմից՝ խաւարի և տգիտութեան դարերից ժառանգած մի բազմանուն չարիք, միս և արիւն դարձած, որը դանդաղեցնում էր քաղաքակրթութեան կանոնաւոր ընթացքը — քաջալերելու և յուսահատեցնելու երկու աղբիւր։

Զառիկեանը գերազանց տրամադրութեան մէջ էր։ Գրիչը թեթև սահում էր, ոչնչ չէր խանգարում, որովհետև տանեցիք մեծ մասամբ ժամանակը անց էին կացնում անտառումը։

Բայց երբեմն, և այդ գլխաւորապէս այն րոպէներին, երբ նա իրան չափազանց բախտաւոր էր զգում, բոլորովին անակնկալ կերպով, նորա աչքի առջև ներկայանում

էր հիւանդ բարեկամի պատկերը՝ անժպիտ, կորագլուխ, աչքերը գետնին յառած։ Նորան թւում էր, որ դա մի լուռ կշտամբանք է, որ յղում էր հեռուից Ոսկերչեանը՝ իւր խիղճը շարժելու համար։ Այսպէս էր պատահում, որ Գարեգինը, դեռ ևս նախադասութիւնը չաւարտած, ձգում էր գրիչը, մէջքը կրթնում նստարանի թիկունքին և, ձեռքերը կրծքին ծալած, խորասուզւում իւր սեփական անձի դատափետութեան մէջ։

«Ես լաւ չարի մտածում էր նա,—որ նորան ձգեցի։ Եթէ ես միջոց տայի նորան այս երեք ամիսը այստեղ ապրելու, որ նա ծծէր այստեղի մաքուր օդը, խմէր այստեղի անխարդախ կաթն ու ջուրը, վայելէր այստեղի անդորրութիւնը, նա, եթէ չառողջանար, գոնէ փոքր ինչ կըկազդուրուէր։ Ինչ պիտի աւելացնի նա քաղաքի փոշու, կեղտոտութեան և աղմուկի մէջ? Բայքայւած ջղերին և արեան պակասութեան ուրիշ ինչ էր հարկաւոր?.. Մանր զոհաբերութիւններ անելը հեշտ է, և շատերն են անում։ Բայց երբ պահանջւում է սովորականից դուրս զոհաբերութիւն, մենք աշկարայ ենք դարձնում մեր կատարեալ ոչնչութիւնը, մեր բարոյական սնանկութիւնը։ Ես դեռ «լաւերից մէկն» եմ... Հա, հա, հա...

Ութ օրւայ մէջ նա երկու նամակ ստացաւ Սաղաթեանից։ Առաջինի մէջ ասւած էր, թէ Զաւէնեանների գնալուց դէսը ամէն օր անձրև է գալիս, եղանակը ցուրտ է և խոնաւ, չնայած, որ յունիսի 19-ն է արդէն, իսկ Արտաշէսը տկար պառկած է։ Երկրորդ գրութիւնը մեծ անհանգստութիւն պատճառեց Գարեգինին։

Ահա վերջինի բովանդակութիւնը։

«Մեծապատիւ պարոն Գարեգին, հիւանդի դրութիւնը գնալով վատթարանում է։ Անցած օրը բժիշկը յայտնեց, որ նա ծածուկ թոքախտ է ունեցել, որը այժմ սուր և վտանգաւոր կերպարանք է ստացել։ Առաջ հօ մի դլակ էր,



հիմա մնացել է կաշին ու ոսկորը։ Աչքերը խորացել են, քիթը սրւել, ականջները կիսաթափանցիկ են դարձել։ Գիշերները, իւր ասելով, այնքան քրտինք է վրայ տալիս, որ ինքը լողանում է իւր սեփական քրտինքի մէջ։ Բայց մի բան ինձ սաստիկ զարմացնում է։ Շարունակ ուշքը վրան է և երբէք գիտակցութիւնը չէ կորցնում։ Կասեմ աւելին։ Բնութիւնն էլ փոխւել է։ Երէկ, օրինակ, նա շատ ուրախ էր, ժպտում էր, խօսում էր ոգևորւած, և աչքերը կայծկլտում էին, ինչպէս սաթը ճրագի լուսով։ Նա հաւատացած է, որ պիտի լաւանայ, և ապագայի ծրագիրներից էր պատմում։ «Վեր կենամ թէ չէ, ասում էր նա,—պիտի շարունակեմ գրականական պարապմունքներս. Համլէտի դերը պիտի կատարեմ և վստահ եմ, որ մեծ յաջողութիւն կ'ունենամ»... Հին ծանօթներից և ընկերներից էր հարցնում, որոնցից շատերը այժմ յայտնի դիրք են ստեղծել իրանց համար զանազան ասպարէզներում. միայն մի քանիսը ինձ համար անծանօթ անուններ էին։ «Դոքա բոլորը ողորմելի միջակութիւններ էին, բայց ապրել իմացան և իմ առաջը ուրին»! բացականչում էր Արտաշէսը։ Խնդրեց, որ իւր կողմից Ձեզ բարև գրեմ և հետևեալ խօսքերը աւելացրեց. «Եթէ չլինէին Գարեգինի նման մարդիկ, չարժէր ապրել աշխարհում»։ Այսպէս էր նա երէկ։ Բայց այսօր այնքան վատ էր, որ երկիւղ էր ազդում։ Բժիշկը պահանջեց, որ անպատճառ տանենք հիւանդանոց։ Այսօր չեղաւ, մնաց վաղը։ Ձեր գալը, պարոն Գարեգին, անհրաժեշտ է։ Ես մենակ եմ և իմ ձեռքը ամէն բանի չի հասնում։ Իմ արտասահման գնալու խնդիրն էլ վճռւած է, և ես սպասում եմ միայն անցագիրը ստանալուն։ Ստացայ, պիտի ճանապարհւեմ։ Յարգանօք Գ. Սաղաթեան»։

Երբ Գարեգինը նամակը կարդում էր, դէմքը այն աստիճան այլայլւած էր, որ մայրիկը, Մարիամը և Աշ-

խէնը խսկոյն նկատեցին և անհանգստութեամբ համարեա միաբերան հարցրին.

—Ումի՞ց է նամակը?... Ինչ են գրել?...

Գարեգինը նամակը տուեց նոցա կարդալու և ինքը սկսեց հագնուել:

—Այդ ինչ ես անում? հարցրեց մայրիկը:

—Թիֆլիս եմ գնում,—եղաւ որդու կտրուկ պատասխանը:

—Մենակ?... Գիշերով?... Անկարելի է!.. լսեցին բացականչութիւններ այս ու այն կողմից:

Եւ արդարև օրը տարաժամ էր, ճանապարհը երկիւղալի, որովհետև լուր էր շրջում աւազակային խմբի մասին, որը իբր թէ մտադիր էր ամարանոցի վրայ յարձակում գործելու:

Գարեգինը սկզբումը պինդ էր կանգնած իւր վճռի վրայ, բայց յետոյ, զիջանելով կանանց թախանձանքին, գնալը յետաձգեց հետևեալ առաւօտը:

Օրը լուսացաւ, և այն ժամին, երբ Զաւիկեանը շտապում էր պոստատան կայարանը, ծառան վազեվազ ետեւիցը հասցրեց մի հեռագիր, որի բովանդակութիւնը նա գուշակեց դեռ չկարդացած:

«Ոսկերչեանը վախճանուեց:—Սաղաթեան»:

Գարեգինը անմիջապէս կառք նստեց և թռաւ դէպի Թիֆլիս:

Տեղ հասաւ երեկոյեան: Սաղաթեանը նորան տարաւ նոր կացարանը, որտեղ կենում էր հանգուցեալը: Արդէն վարձուած էին մարդիկ, որոնք պիտի հոգային թաղման պատրաստութիւնները: Այդ նպատակով եռանդոտ երիտասարդը կրկին ժողովարարութիւն էր արել, պակասը խոստացաւ լրացնել Գարեգինը: Միւս օրը թաղումն էր, որի մասին յայտարարուած էր լրագրում:

Յուղարկաւորութեան օրը եկեղեցու դրան առջև փողոցում կանգնած էր մի անշուք դիակառք, որի ձիաները իրանց ցից-ցից ոսկորներով և հնամաշ սգաշորով արժանի էին դիակառքին:



Եկեղեցում սակաւ մարդիկ կային: Դագաղը մի շատ հասարակ բան էր: Մեռելի գլխի մօտ դրուած էր բնական ծաղիկներից հիւսուած մի պսակ՝ Զաւիկեանի և Սաղաթեանի կողմից:

Վերջինը շապիկ հագաւ և արտասանեց ճառ, որի համար վաղօրօք պատրաստուել էր: Ջահիլութեան յատուկ յափշտակութեամբ նա գրուատեց հանգուցեալի մարդկային արժանիքը և տուեց նորա կեանքի հակիրճ պատկերը:

Զգացմունքով արտասանեցին մանաւանդ հետևեալ խօսքերը.

—«Ոսկերչեանը անպայման ազնիւ մարդ էր և անպայման տաղանդաւոր: Ես հաստատ ասում եմ, որ բարեյաջող հանգամանքների մէջ սա կարող էր դառնալ մի ընտիր գործիչ մի որև է ասպարիզում: Բայց ահաւասիկ, հազիւ 32 տարեկան, այն հասակում, երբ մարդու ստեղծագործող ոյժերը մօտենում են իրանց գագաթնակէտին, խեղճը մեռաւ ամենաանփառունակ կերպով: Ո՛չ, ինչ եմ ասում, սա չմեռաւ: Սորան ջախջախեց, խորտակեց, սպանեց կեանքը! Ես սորան չեմ ասիլ բնական մահով մեռնել, երբ մարդ, իւր կենդանութեան օրով հասնում է աւելի վատթար դրութեան, քան անդամալոյծը: Հիւանդութիւնը սորա վաղաժամ մահուան բազմաթիւ պատճառներից մէկն էր. նա միայն վերջին ցնցումը գործեց: Ես սարսուռ եմ զգում, երբ մտածում եմ, թէ սորա նման քանի քանի ազնիւ և ընդունակ երիտասարդներ անանուն և անհետ կորչում են ժամանակից շատ և շատ առաջ!...»

Երբ բոլոր ծիսակատարութիւնները վերջացան, Գա-

բեգինը և Սադաթեանը ուրիշների օգնութեամբ վեր բարձրացրին դագաղը և դուրս բերին եկեղեցուց։

Դիակառքը շարժւեց։ Ծանօթ երիտասարդների մի փոքրիկ խումբ գնաց մեռելի եռւից։

Հանգստարանում անձրև սկսեց մաղել։ Գերեզմանը փորւած էր մի հեռաւոր անկիւնում, կողքին թափւած հողակոյտը բոլորովին խոնաւ էր։

Գարեգինը շիրիմի մօտ կանգնած՝ տխուր հայեացքը չէր շեղում մեռելի երեսից. սորա աչքերը յիշեցնում էին մորթւած ոչխարի աչքերը՝ սառած, անփայլ, բիբերը վերև թռած։

Երբ մարմինը կամենում էին ամիոփել գերեզմանի մէջ, անյարմար շարժողութիւնից դագաղը ծռւեց, մեռելի գլուխը դիպաւ դագաղի պատին և էլ ետ չընկաւ, և այդ այնքան լզծալի տպաւորութիւն գործեց նայողների վրայ, որ կարծես հանդուցեալը, եթէ լեզու ունենար, պիտի ասէր,

—«Այս ինչ էք անում ինձ հետ»?

Զառիկեանը, որը մինչև այդ րոպէն լուռ հանդիսատես էր իւր բարեկամի թաղման, վերջին սրտաճմլիկ տեսարանի առաջ անկարող եղաւ զսպել արտասուքը։

Նոյնպէս և Սադաթեանը հանեց թաշկինակը և աչքերը սրբեց։

Մի-մի բուռն հող ևս, և գերեզմանափորի թիակը բանեց։

Ամեն ինչ վերջացաւ։ Անձրևը շարունակ մաղում էր։





## ՎՐԻՊԱԿՆԵՐ

| Էջ | տող | տպւած է | պէտք է լինի |
|---|---|---|---|
| 19 | 15 վ. | դէպքէր | դէպքեր |
| 67 | 1 ն. | լեզիւ | լեզւի |
| 102 | 3 ն. | երևալ | կ'երևալ |
| 207 | 10 վ. | լեռոլ | քիչ լեռոլ |
| 274 | 15 վ. | այդ | դրանց |
| 305 | 6 ն. | Ա'խ հալր իմ | Ա'խ հալր իմ, հալր իմ, |
| 322 | 9 ն. | մանկավարժանի | մանկավարժի |
| 328 | 16 վ. | Նամերի | Հոմերի |
| 328 | 18 վ. | Նամերի | Հոմերի |
| 389 | 5 վ. | մի անլուր | Բաքւայ մի անլուր |



19/I
1761
1762

Գինն է 1 ռուբլի

Վիմել գրավաճառներին կամ Մուրճի խմբագրութիւնը
— Тифлисъ. Въ Редакцію журнала „Мурчъ“.

2013